



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

CHÂTEAUX ET PLACES-FORTES
de la
CILICIE ARMÉNIENNE


par le
P. MIKAËL HOVHANNESIAN
MEKHITARISTE

VENISE - S. LAZARE
1989

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՆԿԻՈՅ
ԲԵՐԴԵՐՆ ՈՒ ԲԵՐԴԱՓԱՂԱՔՆԵՐԸ

ԳՐԵՑ
Հ. ՄԻՔԱՅԷԼ Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
ՄԻՒԹԱՐԵԱՆ

ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ
1989



Հ. ՄԻՔԱՅԷԼ ՎՐԴ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
ՄԵԻԹԱՐԵԱՆ

Մեր այս աշխատութիւնը կը նուիրենք Ապրիլեան
եւ մասնաւորաբար Կիլիկեցի բոլոր նահատակներու յիշատակին,
որոնք ամբացած, իրենց նախնիքներէն աւանդ թողուած
այս բերդերու կատարին, պայքարեցան բռնութեան դէմ
եւ ինկան պատուով ու փառքով:

ԱՆՄԱՀ ԹՈՂ ՄՆԱՅ ԱՆՈՆՑ ՅԻՇԱՏԱԿԸ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԴԵՐ» հատորին ներածութեան մէջ խոստացած էինք հրատարակել աւելի ուշ, առանձին հատորով, նաեւ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ րեքդերու եւ քաղաքներդերու տեղագրութիւնը, մեր պատմագիրներու եւ այդ գաւառները այցելող ուսումնասէր աշխարհագետներու մեզի ընծայած ծանօթութիւններուն լոյսով:

Ահա՛, շատ տարիներ ետք, մեր այդ խոստումն է որ այսօր կը կատարենք. տեղագրութիւնը՝ հին եւ մերք կիսակործան կամ աւերակ քաղաքաւայրերու, դղեակներու կամ պաշտպանողական շինութիւններու, որոնք իրենց գոյութենէն դարեր վերջ՝ ժամանակի ընթացքին ենթարկուած ըլլալով ռազմական կործանիչ արարքներու, հասած են մեզի կիսաւեր կամ ամբողջապէս կործանած վիճակի մէջ:

Արդ, այս ամէնը քննարկու առին կը ներկայացնէ բազմատեսակ դժուարութիւններ: Ընդհանրապէս մեր պատմագիրները շատ ախշտ եղած են իրենց ընծայած տեղեկութիւններով, եւ կամ արտայայտուած են անորոշ, մինչ՝ այդ պատմական շրջաններուն ապրող գրողներու վկայութիւնը յանախ վաւերագրի մը հեղինակութիւնը կրնայ ըլլալ: Մենք ջանացինք կարելիին չափ մօտենալ իրականութիւններու եւ դէպքերու՝ առարկայական տրամադրութեամբ քննարկելով իրականութիւնը, ինչպէս որ մեզի կը ներկայացուի այսօր, այցելող աշխարհագիրներու կատարած հետազոտութիւններուն եւ աւանդած տեղեկութիւններուն, մանաւանդ պատահած դէպքերու ժամանակակից գրողներու հաղորդած նկարագրութեան համաձայն:

1800էն սկսած, Կիլիկիոյ մասին կատարուած են բազմաթիւ ուսումնասիրութիւններ՝ պատմական, աշխարհագրական, տեղագրական տեսակետներէ առաջնորդուած, ու հրատարակուած են հատորներ, միշտ աւելի ընդարձակելով մեր ծանօթութիւններուն հորիզոնները, ու միշտ աւելի լուսարանելով պատմական իրողութիւններ, ջանալով նաեւ աւելի հետաքրքրութիւն ցոյց տալ հոն բնակող ժողովուրդին կեանքին, կենցաղին, հոգեբանութեան, սովորութիւններուն, նկարագրին: Այս տեսակետներով՝ 1800ի յետին քառամեակին

Եւ 1900ի սկզբնաւորութեան շրջանին, Կիլիկիոյ մասին հրատարակուած ուսումնասիրութիւններուն մէջ, տակաւին ամէնէն գնահատելին եւ ամէնէն կատարեալը կը ներկայանայ Հայր Ղեւոնդ Ալիշանի պատկառելի հատորը, գոր հեղինակը կը ներկայացնէ «Սիսուան»ի մէջ, «Համազրուութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ» տիտղոսով. հատոր մը՝ 592 մեծածաւալ էջերով, պատկերազարդ ու նոխացած բնագրէն դուրս փարտէսներով ու կենդանագիրներով. գրուած է գրաբար ու կը ներկայացնէ Կիլիկիոյ տեղագրութիւնը, աշխարհագրութիւնը, պատմութիւնը եւ գրականութիւնը:

Ալիշան այդ գործով՝ ծնունդ կու տայ ապրող, խօսող, մտածող, զգացուած Սիսուանի մը, եւ կ'ուզէ որ այդ հատորը ըլլայ իր փառապանծ տուրքը Մայր Հայրենիքի փառքերուն եւ Հայ Կիլիկեան վերջին Հարստութեան յիշատակին: Իրեն համար Սիսուան ու Լեւոն Մեծագործ անմահներ են ու Հայութեան հոգին:

1885էն վերջ ունեցանք դարձեալ Կիլիկիոյ մասին ուղեւորութիւններու նկարագրութիւններ եւ աշխարհագրական ուսումնասիրութիւններ, ինչպէս նաեւ հնախօսական եւ ազգագրական գրութիւններ, սակայն սովորաբար ամէն գրող ջանացեր է զանոնք Ալիշանէն ֆազելի, ֆալելով անոր ցոյց տուած ուղիներու վրայէն, դնելով նաեւ երկրին հնութիւններու ուղղակի տեսութենէն ծագած նոր գիտելիքներ, մանաւանդ հնախօսական եւ ազգագրական տեսակէտներով, որոնք ունին երբեմն իրենց մեծ կարեւորութիւնը: Նկատենք նաեւ ձեռագիր մատենաներու նոր յայտնութիւնը, ինչպէս նաեւ անոնց բազմաթիւ յիշատակարաններուն մեզի ընծայած տեղեկութիւնները՝ պատմական եւ ազգագրական նիւթերու շուրջ. հետեւաբար՝ «Սիսուան»էն վերջ հրատարակուած այդ հատորները մեծապէս կը ծառայեն, գոնէ մասնական նիւթի շուրջ, աւելի լաւ տեղեկացնելու եւ լուսարանելու հարցեր կամ պատմական դէպքեր:

Մենք եւս Ալիշանի գրածներուն վրայ բան մը աւելցուցած պիտի չըլլայինք, եւ կրկնութիւն մը պիտի ըլլար, եթէ մեր առջեւ ունեցած չըլլայինք «Սիսուան»էն գատ նաեւ Կիլիկիոյ մասին գրուած այդ նոր մատենագրութիւնը: Այսինքն՝ եթէ նկատի առած չըլլայինք «Սիսուան»էն վերջ լոյս տեսած եւ հրատարակուած բազմաթիւ հին եւ նոր աղբիւրները՝ մեր փոքր պատմագիրներուն եւ յիշատակարաններուն միջոցաւ. ինչպէս նաեւ «Սիսուան»ի հրատարակութենէն վերջ, հնախոյզ ուղեւորներու հրատարակած բազմաթիւ տեղագրութիւնները եւ ուսումնասիրութիւնները՝ Կիլիկիոյ աշխարհագրութեան եւ պատմութեան մասին: Այս ամէնը մենք ջանացեր ենք օգտագործել մեր գրքին մէջ, ու չենք կարծեր թէ աւելորդ աշխատութիւն մը ըլլայ Կիլիկիոյ բերդերու և բերդաֆառակներու մասին մեր այս նոր տեղագրութիւնը, քանի որ

ա) Ալիշան իր «Սիսուան» տեղագրութիւնը գրած է *գրաբար լեզուով*, հետեւաբար այդ գործը անմերձեմալի է շատերուն:

բ) «Սիսուան» հսկայ հատոր մըն է 590 էջոց, երկսիւն մեծդի էջերով. դարձեալ անմերձեմալի շատերուն եւ դժուարագիւտ, հրատարակուած ըլլալով 1885ին:

գ) Կարեւոր կէտ մը եւս նկատողութեան առնելիք. Ալիշան, որքան որ իր առջեւ ունեցեր է մեծ մաս մը մեր մատենագիրներէն եւ անոնցմէ ֆազած է Կիլիկիոյ վերաբերեալ բոլոր մանրամասն տեղեկութիւնները եւ զանոնք ազուցած է իր տեղագրութեան մէջ, սակայն դարուն մտայնութեան համաձայն՝ *նշանակած չէ իր գործածած աղբիւրներու հեղինակներն ու գիրքերուն էջերը*, ինչ որ ունի անպատեհութիւն մը ընթերցողին համար, երբ ուզէ գիտնալ նաեւ աղբիւրը:

դ) Նկատել նաեւ՝ որ Ալիշան «Սիսուան»ի մէջ տուած է շուրջ 115 բերդերու անունները, որոնցմէ 50 հատը միայն կրցած է տեղագրել, 15 հատը ընդարձակ եւ 35ը համառօտ, իսկ մնացեալները կը բաւականանայ յիշատակելով. խորհիմք, սակայն, որ իր դիտումը միայն բերդերը նկատելի չէր:

ե) Մենք մեր աշխատութեան մէջ յիշատակած ենք 150է աւելի բերդերու անուններ, որոնցմէ 100ի մասին տուած ենք *ընդարձակ տեղագրութիւն* եւ պատմական ծանօթութիւններ, իսկ 50 հատի մասին՝ աւելի համառօտ տեղագրութիւն, որչափ որ կրցած ենք անոնց մասին պատմագիրներէն եւ աշխարհագիրներէն տեղեկութիւններ ֆազել:

Ասոնցմէ գատ՝ մենք ընդարձակ տեղագրութիւն տուած ենք մասնաւորապէս քանի մը մեծ բերդաֆառակներու՝ Սիսի, Ատանայի, Տարսուսի, Այասի, Սելեւկիոյ եւ Կոռիկոսի մասին:

զ) Ալիշանի «Սիսուան»ը նոյն չէ պատկերներով, ու անոնք ալ մեծ մասով աւանուած են անցեալ դարու ճանապարհորդ Վիլքոնը Լանկուայէն եւ ուրիշ ճանապարհորդներէ, եւ որոնք լուսանկար չեն եւ ոչ ալ այնքան հարազատ: Մենք մեր Կիլիկիոյ տեղագրութեան գուզընթաց պիտի տանք բազմաթիւ նոյն պատկերներ, լուսանկարուած արդի ճանապարհորդներէ, այցելուներէ եւ հնախոյզներէ. այս լուսանկարներէն մաս մը *գունաւոր են*, եւ շատ որոշ ցոյց կու տան Հայկական Կիլիկիոյ բերդերու ներկայ վիճակը, ինչպէս որ կը մնան դարեր վերջ, վառվռուն գոյներով եւ նիշտ տեղափոխութեամբ:

է) Ալիշան որքան որ բաւական խնամուած փարտէս մը գետեղած է իր «Սիսուան»ին սկզբնաւորութեան, հոն նշանակելով բերդերն ու բերդաֆառակները, գետերն ու լիճները, սակայն միագոյն է եւ նուազ նշգրիտ տեղագրութեամբ:

Մենք ջանացինք լրացնել այդ պակասը, մեր առջեւ ունենալով հնախօսական Կիլիկիոյ արդի նոր փարտէսներ, եւ անոնցմով որոշել բերդերու նըշգրիտ տեղագրութիւնը:

Այսպէս՝ մեր ընթերցողները այս գործին մէջ պիտի գտնեն երկու փարտէսներ, առաջինը՝ ամբողջութեամբ *Հայկական Կիլիկիոյ*, իսկ երկրորդը՝ *Եփրատական շրջանի* եւ *Միջագետք Հայոց-ի բերդերուն եւ բերդաֆառակներուն*, որոնք ատեն մը, Կիլիկեան իշխանութեան սկզբնաւորութենէն առաջ, հայ իշխաններու պատկանած են, եւ մեծ մասով հայաբնակ ֆառակներ են:

Մենք բերդերու եւ բերդաֆաղաֆներու տեղագրութեան մէջ՝ ֆարսէս-ներուն վրայ աւելցուցինք նաեւ Հայկական կիլիկոյ վանքերուն տեղերը, իրենց նշանակներով. այսու՝ մեր ընթերցողները այս ֆարսէսներուն վրայ պիտի գտնեն նաեւ մեր վանքերուն որոշ տեղերը, ինչ որ առաւելութիւն մըն է:

Մեր այս աշխատանքը արդէն աւարտած էր եւ պատրաստ՝ մամուլի յանձնուելու, երբ մեր ձեռքը հասաւ կիլիկեան բերդերու մասին բոլորովին նոր եւ արժէքաւոր ուսումնասիրութիւն մը. HANGERD HELLENKEMPER, **Burgen der Kreuzritterzeit in der Grafschaft Edessa und im Königreich Kleinarmenien**, շաբ՝ Geographica Historica 1, Rudolf Habelt Verlag GMBH - Bonn, 1976: Հեղինակը պատմական-տեղագրական ուշադիր ֆննութենէ կ'անցընէ 26 կիլիկեան եւ 16 հաս Եդեսիոյ կոմսութեան պատկանող բերդեր, կատարելով նաեւ ընդհանուր վերլուծումը բերդերուն ռազմավարական, ճարտարապետական, ֆաղաֆաշինական եւ խորհրդանշական կառոյցներուն, դերին եւ նշանակութեան: Զանազան ենք, ըստ կարելոյն, օգտագործել այս կարեւոր աշխատութիւնը, երբ հոն հանդիպած ենք մեր տուեալներուն նկատմամբ կարեւոր նորութեան մը:

Ուստի, վստահ ենք որ մեր ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻԼԻԿԻՈՅ ԲԵՐԴԵՐԸ ԵՒ ԲԵՐԴԱՔԱՂԱՎՔՆԵՐԸ հատորին հրատարակութիւնը, իր վերոյիշեալ բազմաթիւ առաւելութիւններով, իր արժանի տեղը պիտի ունենայ հայ պատմա-ֆննական բանասիրութեան մէջ, եւ օգտակար պիտի ըլլայ ֆննասէր ու ընթերցասէր հանրութեան:

Կիլիկեան բերդերը, իրենց դիրքին եւ տեղւոյն համաձայն, կը բաժնուին վեց շրջաններու. Ա) *Լեռնային Կիլիկիոյ բերդեր*, Բ) *Քարային Կիլիկիոյ բերդեր*, Գ) *Դաշտային Կիլիկիոյ բերդեր*, Դ) *Մովսային Կիլիկիոյ բերդեր*, Ե) *Եփրատական բերդեր*, Զ) *Միջագետք Հայոցի բերդեր*:

Հայկական կիլիկիոյ բերդերն ու բերդաֆաղաֆները շրջաններու բաժնելով, անոնց տեղագրութիւնը սկսանք նախ Լեռնային կիլիկիոյ վանքով. սակայն գիտակցօրէն մեր գիրքը կը բացուի ՍիՍով, նկատի առնելով անոր Հայկական կիլիկիոյ մայրաֆաղաֆ ըլլալու հանգամանքը, եւ շատ մօտ Լեռնային կիլիկիոյ. անոր յարեցինք մօտակայ Անարգարա ֆաղաֆը. ասոնք մեր կիլիկեան պատմութեան մէջ առաջնակարգ դեր կատարած են:

Հոս՝ ընթերցողին բնական հարցում մը կու գայ ընել. Որո՞նք շինած են այս բազմաթիւ բերդերը լեռներու կատարին՝ մեծ դժուարութիւններով, կիրներու եւ անանցանելի տեղերու վրայ ֆարքեր կտրելով, եւ հուսկ ծովերու մէջ եւ ծովերուն վրայ, ջուրերուն մէջ հիմեր հաստատելով եւ ալիքներուն դէմ պատուարներ:

Առանց շատ հին ժամանակներու երթալու, կրնանք ըսել թէ կիլիկեան բերդերէն մեծ մաս մը շինուած են Հռոմէական կայսրութեան շրջանին, երբ անոնք առաջին անգամ ռաբ դրին կիլիկիոյ արեւմտեան վրայ. ապա եկան Բիզանդացիները, տիրեցին կիլիկիոյ եւ անոնք ալ իրենց կարգին բազմաթիւ բերդերով օժտեցին երկիրը. հուսկ՝ Հայերը: 1054-1065ին, Անիի գրաւումէն վերջ, Սելյուքներէն խոյս տուին շատ մը հայ իշխաններ եւ հաստատուեցան Տարսուսեան լեռներու անմերձեանի բարձունքներուն վրայ, հոն Յոյներէն

շինուած, լճուած եւ ամայացած բերդերը առին, նորոգեցին եւ ամրացան: Անշուշտ Հայերն ալ իրենց կարգին շինեցին ուրիշ բազմաթիւ բերդեր Տարսուսեան լեռներու կատարին եւ խոր ձորերու անցքերուն: Արդ, որո՞նք եղած են բուն հայաշէն բերդերը, մենք պիտի տեսնենք զանոնք՝ երբ յաջորդաբար խօսինք եւ գրենք առանձին առանձին այս բերդերու մասին:

Կան բերդեր որոնց մասին շատ աւելի երկար եւ մանրամասն գրած ենք, ուրիշներ՝ աւելի համառօտ, ինչպէս մեր պատմիչները մեզի աւանդեր են: Մեր ազնիւ ընթերցողներէն շատեր գուցէ չգտնեն իրենց ծանօթ բերդերու անունները, մեր գրքին ետեւը եղող անուններու ցանկին մէջ. ասիկա ըսել է թէ մենք այդ անուններուն հանդիպած չենք մեր պատմագիրներուն ֆով, եւ կամ շատ մը բերդեր ալ դարերու ընթացքին իրենց անունները փոխեր են, եւ կիլիկիոյ երկրին տիրապետողներէն շատ անգամ իրենց հանելի անուններով մկրտուած են. ուստի երբ բերդի մը անունը չենք գտներ ցանկին մէջ, պէտք է նայիլ թէ հին ատեն այդ բերդը ի՞նչ անուն ունէր: Այդպէս մենք կը ֆանջնանք Ատանայի դաշտին Սիւուն գետի արեւմտեան բարձրագոյն բերդը՝ *Լեւոնի բերդ* անունով, Թուրքերը գայն կոչած են *Երլահ քալէսի*, եւ այսպէս ուրիշ բերդեր, ինչ որ շփոթութիւն ստեղծած է եւ դժուարացուցած մեր աշխատանքը. մենք ջանացինք զանոնք ճշտել եւ իրենց նոր անունին կից դնել նաեւ հին անունը: Այլշան այս մասին կը գրէ. «Եւ են եւ ի պարգեւագիրս Լեւոնի Մեծի, գրեալք անուանք գիւղից եւ բերդից յիսունի չափ. այլ զի կորուսեալ են հայերէն բնագիրքն, լատինականին պատճէնք մնացեալք՝ յոյժ օտարացեալք են յազգայնոցս ձայնից»:

Անշուք անցաւ մեր «Հայաստանի Բերդերը» աշխատութիւնը՝ նկարագրողումի տեսակետով, այդ ժամանակ մենք չկրցանք պէտք եղած լուսանկարները գտնել եւ ամէն բերդի առաջին էջին տալ բերդէն նկար մը. այդ պակասը լրացուցինք մեր «Հայկական կիլիկիոյ բերդերու եւ բերդաֆաղաֆներու» աշխատութեան մէջ: Մենք մեր այս գործը կ'օժտենք, ինչպէս ըսինք, բազմաթիւ լուսանկարներով, ինչ որ չէին կրցած ընել անցեալի տեղագիրները. կը կարծենք թէ ասով մեծ առաւելութեամբ մը կ'օժտուի մեր այս գործը, որովհետեւ լուսանկարները խօսուն եւ շօշափելի վկաներն են մեր բերդերու անցեալին: Այս տեսակետով, մեր շնորհակալութիւնները կը յայտնենք Իտալիոյ Միլանոյի Հայ Մշակոյթի Ուսումնասիրութեան եւ Վաւերագրումի կեդրոնի (ՄՀՄՈՎԿ) վարիչ Փրոֆ. Ալիսկայ Նովելլոյի, որ մեզի սիրով տրամադրեց կիլիկեան բազմաթիւ բերդերու նկարներ. նոյնպէս Հ. Հելլենֆելմիլերի եւ Ռ. Էտուրրոսի՝ որոնք առաջին անգամ հոս լոյս տեսնող անտիպ նկարներով նոխացուցին մեր Հայկական կիլիկիոյ աշխատութիւնը: Մեր մասնաւոր շնորհակալութիւնները կը յայտնենք նոյնպէս Գերպոյ. Ներսէս Եպ. Սեթեանի, որ անձամբ երթալով կիլիկիա, մինչեւ Հռոմկլայ, լուսանկարած է այդ հայրապետական բերդէն շատ մասեր. ան սիրով մեզի տրամադրեց այդ հագուազիւտ սալիկները: Մեր շնորհակալութիւնները նոյնպէս Պր. Ք. Արմէն Մուքաֆեանին, Պր. Գրիգոր Մազումեանին, Պր. Միլաս Լուրեանին, եւ ամէն անոնց՝ որոնք ֆաջալեր եղան եւ օժանդակեցին մեր այս դժուարին աշխատութեան:

Պարտք կը զգանք հոս յայտնել մեր սրտագին եւ մասնայատուկ շնորհա- կայութիւնները Հ. Լեւոն Զէֆեանին, որ յօժարութեամբ յանձն առաւ այս աշխատութեան ձեռագրին վերաբնութիւնը, անձամբ հսկելով նաեւ անոնց տպագրութեան՝ մինչեւ Լեւոնի բերդը (էջ 258), եւ զգալիօրէն նոխացնելով մատենագիտական տուեալները, մանաւանդ օտարալեզու հրատարակութիւն- ներու:

Հոս չենք կրնար մոռնալ այն աշխատանքը, զոր տարաւ մեր գործին ան- խոնջ գրաշար եւ էջերուն կազմող՝ Պր. Գէորգ Շէրեանը, որ համբերատար աշխատութեամբ ի կատար հասցուց զայն:

Այս առթիւ մենք հոս կ'ուզենք, ընդառաջելով՝ մեր նախկին «Հայաս- տանի Բերդերը» հատորի մասին բանասէր-հնախօսի մը իրաւացի դիտողու- քեան, բացատրութիւններ տալ մեր աշխատութեան մէջ ստեղծ գործածուած տեղագրական քանի մը բառերու իմաստին եւ առումին շուրջ, ինչ որ մեր առաջին գործին մէջ զանց ըրած էինք, մեր ուշադրութենէն խուսափած ըլ- լալով. այսինքն է՝ ի՞նչ իմաստ եւ իրարմէ ի՞նչ տարբերութիւն ունին Աժուր, Աժրոց, Բերդ եւ Դղեակ բառերը:

Առնենք Աժուր կամ Աժրոց բառը. Աժրոց բառը առաջ կու գայ Աժուր բառէն եւ ցոյց կու տայ պաշտպանուած ամուր եւ անմերձեանի տեղ. յու- նարէն *δύσρωμα*, լատիներէն *Munitio*, որ է ամրանալու տեղ. եւ սովորաբար ամուր տեղ կ'ըսուի, ուր կ'ամրանային կամ կը պաշտպանուէին քաղաքի մը կամ գիւղի մը բնակիչները՝ թշնամիներու յարձակումի ժամանակ: Այս ի- մաստով կը գործածեն մեր պատմագիրները Աժուր եւ Աժրոց բառերը. այս- պէս՝ «Երանան տայ Սմբատայ՝ Երթալ յամուրն Բագարան, որ հուպ ի քա- ղաքն Երուանդայ ի վերայ Ախուրեան գետոյ» (*Պորեհացի, Բ, գլ. ԽԸ*):

Հոս, ինչպէս կը տեսնուի, հորեմացի Աժուր բառը կը գործածէ իբրեւ *սպահով տեղի* իմաստով, որ կրնայ ըլլալ բնական կամ արուեստական. սա- կայն ամուր կը հասկցուի այն տեղը՝ որ բնականէն ամուր է, այսինքն՝ բը- նութենէն շինուած ամուր եւ անմերձեանի տեղ մը, լեռան մը գագաթին կամ ժայռի մը կողմին, ուր կ'ապաստանէին վտանգներու պարագային: Այս իմաս- տով կը գրէ Կիրակոս պատմիչ. «բայց յուզվ ար ին՝ որ ամրացեալ կային յանկասկած վայրսն, զոր վասն դժուարութեան տեղւոյն Հաւախաղաց կո- չէին, որք ապաստանեալ յամուրսն անկասկած կային» (*Կիրակոս, ԻԸ (Ը), էջ 145*): Հոս պատմիչը կ'ուզէ մեզի ներկայացնել բնական ամուր տեղ մը, ու կ'ըսէ թէ թռչունները հազիւ կրնային մօտենալ:

Երկրորդ բառը՝ զոր մեր պատմագիրները կը գործածեն համագոր Աժ- րոցին՝ է *Բերդ* բառը: Բերդ եւ կը հասկցուի պաշտպանուելու գորաւոր եւ ամուր տեղ, անմերձեանի՝ թշնամիէն. սակայն բերդ իբրեւ ամուր տեղ, բնա- կան ամրութիւն մը ցոյց չի տար, այլ *արուեստական ամրութիւն* մը՝ որ մար- դոցմէ շինուած է, բլուրի մը կամ լեռան մը կատարին վրայ, զայն շրջապա-

տելով պարիսպներով ու աշտարակներով. եւ ասիկա կը շինուի, երբ քաղաքին կամ գիւղին մօտիկ չկան բնական ամրութիւններ կամ լեռներու կատարներ, ուստի մարդիկ ստիպուած են արուեստով, պատերով շրջապատել դիրք մը եւ զայն անմերձեանի դարձնել թշնամիին. ասիկա *Բերդ* կը կոչուի: Օրի- նակի համար հորեմացին կը գրէ այս մասին. «Շապուհ տայ տանել յերկիրն հուժաստանի յԱնուշն կոչեցեալ բերդ» (*Պոր. Ե, ԼԵ*): Արուեստով շինուած բերդ էր նաեւ Արտագերս բերդը, «որք եկեալ նստան շուրջ գրեթէ ան Արտա- գերից» (*Պոր., տեղ*): Բերդին մէջ կ'ըլլար ընդհանրապէս նաեւ բանտը:

Իսկ *Դղեակ*, դարձեալ ուրիշ իմաստ ունի. ասիկա ալ ամուր տեղ մըն էր, երբեմն բնական, երբեմն արուեստով շինուած ամուր տեղ, բայց դղեակը ընդհանրապէս կ'ըլլար բերդին մէջ, մանաւանդ թէ բերդին մէջ բարձր ան- կիւնին վրայ, որ շատ աւելի անառիկ էր. այսպէս Ագաթանգեղոս կը գրէ Ս. Գրիգոր Լուսաւորչի մասին, «եւ տալ գնա ի դղեակ բերդին Արտաշատ քա- ղաքին» (*Աղաթ., ԺԱ, 122, էջ 71*):

Հոս, ինչպէս որոշ կը տեսնուի, դղեակը բերդին մէջ էր, այսինքն՝ կրկնա- կի գորաւոր դիրքի մը վրայ. դղեակը նաեւ շրջապատուած էր կրկնակի պա- րիսպներով եւ պաշտպանութեան հզօր միջոցներով, որովհետեւ դղեակին մէջ կը նստէին ընդհանրապէս թագաւորական կամ իշխանական ընտանիքի ան- դամները, եւ շատ դժուար էր դղեակ մը գրաւելը: Երբ դղեակ մը կ'իյնար, կորսուած էր ամբողջ քաղաքի մը պաշտպանութիւնը. այս իմաստով՝ դղեակ- ներ ունէին շատ մը բերդաքաղաքներ: Այս տեսակ դղեակները Յոյները *ἀκρόπολις* կը կոչէին. նման դղեակներ այսօր իսկ կը տեսնուին հին քաղաք- ներու մէջ, ինչպէս Աթէնքի *Ակրոպոլիս*, որ քաղաքին ամուր պարիսպներէն ներս, բլուրի մը կատարին՝ պարսպապատ վայր մըն է, ուր կը պահէին նաեւ իրենց աստուածներու տաճարները եւ անոնց շէնք արձանները:

Համառօտելով մեր ըսածները, կրնանք հետեւեցնել.

Աժուր, ամրոց. հզօր տեղ՝ բնութենէն շինուած:

Բերդ. ամուր տեղ՝ արուեստով շինուած, շրջապատուած պարիսպներով:

Դղեակ. բերդին մէջ, բարձունքի մը վրայ արուեստով շինուած տեղ մը, ուր կ'ապաստանէին թագաւորական ընտանիքի անդամները՝ պատերազմի ժա- մանակ:

Այս երեք իմաստներով ալ, մենք ամրութիւններ կը գտնենք մեր Հայ- կական Կիլիկիոյ տեղագրութեան մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԴԵՐՈՒ 1970ին լոյս տեսած մեր հրատարակութիւնը հայերէն լեզուով ըլլալով՝ օտար ուսումնասէրներուն անմերձեանի մնաց- շատեր մեզի թելադրեցին զայն ամբողջութեամբ ֆրանսերէնի կամ անգլիե- րէնի թարգմանել, ինչ որ կարելի չեղաւ իրագործել, դժուարին եւ մեծածախս գործ մը ըլլալուն համար:

Այս պակասը մասամբ լրացնելու եւ Եւրոպայի հմասերմերում գոհացում տալու համար, ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԼԻԿԻՈՑ ԲԵՐԴԵՐՈՒՆ ԵՒ ԲԵՐԴԱՔԱՂԱՔՆԵՐՈՒ Գլխաւորներում մասին տուած եմք համառօտ ամփոփոյքներ, ֆրանսերէն լեզուով, գոր սիրով կատարեց Փրոֆ. ԺԻՐԱՅՐ ՏԷՏԷՆԱՆ, որում խորին շնորհակալութիւն կը յայտնենք: Այսպէս կը յուսանք գոնէ մասամբ գայն մերձեմալի դարձնել օտար ուսումնասերներում:

ՀԵՂԻՆԱԿԸ

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԼԻԿԻԱ

Դ Ի Ր Ք Ը

Միջերկրական ծովուն արեւելեան եզերքին վրայ տարածուող հողամասը յոյն եւ հռոմէացի աշխարհագիրներ ԿԻԼԻԿԻԱ կը կոչէին, որ կը սկսէր Աղեքսանդրեակի ծոցէն եւ կ'երթար մինչեւ Պամփիլիոյ ծոցը եւ Ատալիա քաղաքը:

Կիլիկիա իր բնական գեղեցկութեամբ, Տաւրոսեան ձիւնազազաթ լեռնաշղթաներով եւ ընդարձակ ծաղկազարդ դաշտադէտիններով, Փոքր Ասիոյ մէկ լաւագոյն հողամասն էր, հինէն ի վեր ծանօթ բազմաթիւ ազգերու եւ ժողովուրդներու, որոնք դարերու ընթացքին հոն եկած, հաստատուած, ապրած եւ անցած գացած էին:

ԿԻԼԻԿԻՈՑ ՏԱՐԱՄՈՒԹԻՒՆԸ

Կիլիկիա ուղիղ գիծով, Աղեքսանդրեակէն սկսելով, աղեղնաձեւ մինչեւ Ատալիա՝ 500 քիլոմետր երկարութիւն մը ունի, իսկ լայնութեամբ՝ ծովէն մինչեւ Տաւրոսեան լեռները, 100 քիլոմետրնոց տարածութիւն մը:

Այս երկիրը, հինէն ի վեր, իր բնական կազմին համաձայն վը բաժնուէր իբրեւ՝ ա) Լեռնային Կիլիկիա, բ) Դաշտային Կիլիկիա, գ) Քարային Կիլիկիա, դ) Ծովային Կիլիկիա: Քարային Կիլիկիա կը կոչուէր ընդհանրապէս Կալիսկադոնսի կամ Սելեկիոյ գետահովիտը, որ առապար բնութիւն մը կը պարզէ եւ միջակ բարձրութիւն մը ունի ընդմէջ լեռնային եւ դաշտային Կիլիկիոյ:

Հին ժամանակներէ ի վեր, ինչպէս պիտի տեսնենք, եւ մասնաւորապէս ԺԱ. դարուն սկիզբները, այս երկրին մէջ եկեր են Արեւելքէն Հայեր եւ հոն հաստատուեր: Անոնք նախ տիրած ու ապրած են լեռնային Կիլիկիոյ մէջ, ապա իջած են դաշտային Կիլիկիա, եւ իրենց ճարտարութեամբ ու քաջութեամբ սեփականացուցած են հիներէն լեռնած շատ մը բերդեր, եւ այսպէս կամաց կամաց ընդարձակած են իրենց սահմանները: Այս մասին կը գրէ Կի-

րակոս պատմիչ. «սոքա ընդարձակեցին զսահմանս իւրեանց քաջութեամբ, տիրելով բազում քաղաքաց եւ գաւառաց, եւ այլոց բազմաց»¹:

Հայկական Կիլիկիա, իր հողային ամէնէն ընդարձակ տարածութիւնը ունեցեր է Լեւոն Ա. Մեծի օրով. այդ շրջանին Կիլիկիա ամբողջութեամբ ծայրէ ծայր Հայոց ձեռքն էր: Լեւոն Ա. ի մասին կը գրէ Ս. Ներսէս Լամբրոնացի. «ընդարձակեաց նովաւ զՀայաստանեայս թագաւորի Լեւոնի ձեռն, որ ի Կիլիկիայս եւ Ասորոց գաւառացն տիրէ, եւ նովաւ կարողացաւ Երկրորդ Կապադովկիոյ՝ յորում մայրաքաղաք Տիանայ»: Այս յիշատակարանէն տասը տարի առաջ դարձեալ կը գրէր Ս. Ներսէս Լամբրոնացի, Լեւոն Մեծի հողային գրաւումներու մասին. «ի սոյն ժամանակս էր իշխող Կիլիկիայ եւ Սաւրիոյ եւ լեբանց նոցին»²:

Իսկ Անարզարայի բերդին արձանագրութիւններէն մէկուն մէջ, գրուած՝ 1187ին, կը կարդանք թէ 1187ին կը վախճանի Ռուբէն՝ Ստեփանէի որդին. «եւ նստաւ յաթոռ նորին բարեպաշտն Լեւոն (Ա.), ունելով զԿիլիկիա Տորոս լեռամբ եւ Սեաւ լեռամբ ծովեղերքն մինչեւ յԱտալիա»³:

Կիլիկիոյ Հայկական պետութեան ծաղկումի այս շրջանին՝ անոր մակերեւոյթը կը հասնէր 40.000 քմ. քառակուսի տարածութեան, փսկ բնակչութեան թիւը, հաւանական հաշիւի մը համաձայն, կը գերազանցէր մէկ միլիոնը⁴:

Լեւոն Մեծի այս հողային ընդարձակումները, սակայն, իր յաջորդները չկրցան իրենց ձեռքը պահել, եւ հետեւաբար դարերու ընթացքին փոփոխութեան ենթարկուեցան: Լեւոն Մեծի յաջորդ՝ Հեթում Ա. ի օրով Կիլիկիոյ սահմանները դէպի Արեւելք ընդարձակուեցան եւ հասան մինչեւ Եփրատ գետը, այնպէս որ Հոռոմկայ բերդը, Եփրատի ափին, ժամանակ մը Հայկական Կիլիկիոյ մաս կը կազմէր. ասկից դուրս կը մնային Հիւսիսային մասը, Զահան գետի հովիտէն մինչեւ Մարաշի դաշտագետինը, որ առանձին նահանգ մըն էր, եւ քիչ ժամանակ՝ Ռուբինեան այս կամ այն իշխանին տէրութեան մաս կազմած է: Իսկ Կիլիկիոյ Հիւսիս-արեւմտեան սահմանները կը հասնէին մինչեւ Տաւրոսեան լեռնաշղթան, որ հիմա Պուլղար Տաղ կը կոչուի. թէեւ եղած է ժամանակ մը որ Հայկական Կիլիկիոյ սահմանները այս լեռներէն անդին ալ անցած են, մինչեւ Սարոսի եւ Զիհունի նեղ հովիտները, ուր այսօր կը տարածուի Զէյթունի նահանգը, իր նշանաւոր համանուն քաղաքով: Ոչ միայն Զէյթուն, այլ եւ անոր արեւելեան մասերը մինչեւ Եփրատ, ինչպէս ըսինք, եկեղեցական գետնի վրայ Հայկական Կիլիկիոյ մաս կը համարուէին, Սիսի կաթողիկոսութեան ենթակայ հողամասեր ըլլալով:

1. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, էջ 62:
2. Յիշատակարան Թարգմանութեան Գրոց Օրինաց (1198), ՅՈՎՍԷՓԵԱՆՑ, սիւն. 599: Հայաստան, ՅԶ-Ժ, էջ 432: Յիշատակարան Թարգմանութեան Գրոց Կարգաց Լատին Իկեղեցւոյ (1190?), ՅՈՎՍԷՓԵԱՆՑ, սիւն. 535-6:
3. Հայաստանում, ՄՀԱ, էջ 344. այս յիշատակարանը կը պատկանի 1286ին օրինակուած ճաշոցի մը:
4. ԶԶ., Պատմ., Գ., էջ 672-673:

Ուրեմն, վարելի է Կիլիկիոյ սահմանները գծել՝ Պուլղար Տաղէն մինչեւ ծովեղերք. սակայն հիներու քով ասիկա վէճի առարկայ էր. ոմանք Կիլիկիոյ սահմանները կը հասցնէին մինչեւ Կոռիկոսի եւ Սելեւկիոյ միջեւ, ուրիշներ՝ մինչեւ Անամուռի հրուանդանը, իսկ ոմանք ալ մինչեւ Կոռակեսիոն, Սելճուքներու՝ Ալայէ (Ներկայի՝ Ալանեա) քաղաքը:

Կիլիկիոյ մաս կը համարէին ոմանք նաեւ Իսաւրիան եւ Լակայոնիան – Լարանտա (Քարաման) քաղաքը, զոր Մեծն Լեւոն խոստացեր էր նուաճել եւ յանձնել իրեն զաշնակից խաչակիր ասպետներուն: Այս սահմանային զանազանութիւնը անկից առաջ կու գայ՝ որ մեր պատմագիրները Կիլիկիոյ թագաւորութեան որոշ սահմաններ չեն գծեր. ինչպէս ըսինք, դարերու ընթացքին ան փոփոխական եղած է, իսկ ԺԴ. դարուն արաբ աշխարհագիր Ապուլ-Փէտա կը գրէ՝ թէ Հայոց Կիլիկիոյ սահմանները կը հասնէին Աղեքսանդրեակէն մինչեւ Կոռիկոս քաղաքը եւ Կալիսկազնոս գետը⁵:

ԿԻԼԻԿԻՈՅ ՀԻՆ ԲՆԱԿԻԶՆԵՐՈՒՆ ԾԱԳՈՒՄԸ

Հին աշխարհագիրներու, ինչպէս ըսինք, ծանօթ էր Կիլիկիան. զայն կը յիշեն նաեւ յոյն եւ հռոմէացի աշխարհագիրներ. սակայն արդի հնախոյզներ եւ աշխարհագէտներ համաձայն չեն հոն ապրող հին ժողովուրդներու ծագման եւ Կիլիկիա անունի մասին:

Սուրբ Գրքին մէջ քանի մը անգամ կը յիշուի Կիլիկիա անունը, ինչպէս ստորեւ պիտի տեսնենք: Յոյն հին հեղինակներ ալ կը յիշատակեն զայն. Հոմերոսի քերթուածներուն մէջ եւս կը յիշուի Կիլիկիա անունը, եւ հոն բնակող ժողովուրդը կոչուած են Κίλικες = Կիլիկես (Կիլիկեցիներ):

Կիլիկիոյ ամէնէն հին բնակիչները, ըստ յոյն աւանդութեան եւ առասպելներուն, կը համարուին Կիլիկ կամ Կիլիկս, Փիւնիկիոյ թագաւորութեան Ադենովր դիւցազի որդիին սերունդը. ասոր եղբայրներն էին Կադմոս եւ Փիւնիկ, որոնք իրենց հօր կողմէ գացին Եւրոպա՝ կորսուած քոյրերնին գըտնելու եւ բերելու: Դարձեալ ըստ նոյն առասպելներուն, անոնք իրենց քոյրը չգտնելով, զոր առեւանդած էր Արամազդ, կու գան Միջերկրական ծովուն եզրերը, հոն բնակութիւն կը հաստատեն եւ այդ երկիրը իրենց անունով Կիլիկիա կը կոչեն:

Սակայն Յոյներու այս առասպելներուն հակառակ, եւրոպացի գիտնականներ կը համարին որ Կիլիկիա անունը առաջ եկած է երբայցեքէն Խիլիս բառէն, որ քար կամ քարեր կը նշանակէ, երկրին կազմին համաձայն՝ որ մեծ մասամբ քարուտ եւ լեռնային էր⁶:

ԿԻԼԻԿԻՈՅ ԱՌԱՋԻՆ ՏԵՐԵՐԸ

Կիլիկիոյ առաջին տիրապետողները եղած են, Քրիստոսէ շատ դարեր առաջ, Հիթիթները, ինչպէս որ ցոյց կու տան այսօրուան երկրախոյզները եւ

5. Սիսուան, էջ 2, ծն. 1.:
6. Հմմտ. Անդ, էջ 38:

հոն յայտնաբերուած Հիթիթեան հսկայ կոթողային յուշարձանները, վերագտնուած՝ Փոքր Ասիոյ, Կիլիկիոյ մօտիկ՝ ինչ ինչ շրջաններուն մէջ: Յետոյ եկած են Ասորեստանցիները եւ ապա Եգիպտացիները, սակայն անոնց տիրապետութեան ժամանակաշրջանը անորոշ է: Քրիստոսէ գոնէ 1000 տարի առաջ ըլլալու է, օրինակի համար, Ասորեստանի Սարգանաբալ թագաւորին հոն հաստատուելը: Ըսուած է թէ Քրիստոսէ առաջ Թ. դարուն, Սարգանաբալ կը բնակէր Տարսոնի կողմերը, եւ ըստ ոմանց ան հիմնած է Տարսոն քաղաքը. սակայն ասիկա հաստատող որոշ փաստեր չկան: Ուրիշներու համաձայն Սարգանաբալ Տարսոն քաղաքը զարդարեր եւ շէնցուցեր է՝ քան թէ հիմներ, որովհետեւ ըստ նոյն հնարիտի գիտնականներուն՝ Տարսոն Արգիտացիներէն շինուած է, իսկ ըստ ուրիշներու, Քրիստոսէ առաջ ԺԴ. դարուն՝ Պերսէոսէն:

ԿԻԼԻԿԻԱ Ս. ԳՐԳԻՆ ՄԵՁ

Ս. Գիրքը եւ ուրիշ պատմիչներ կը յիշեն Ասորեստանի թագաւորներու աշխարհակալութիւնները եւ անոնց կատարած գործերը Կիլիկիոյ մէջ. այս թագաւորներէն էին, օրինակի համար, Սաղմանասար, Սենեքերիմ, Նարուգոթոնոսոր եւն.: Նարուգոթոնոսոր իր Հողոփեռնէս զօրավարը կը ղրկէ դէպի Արեւմուտք. Սուրբ Գիրքը կ'ըսէ՝ «եւ բանակեցան նոքա մերձ առ լեռինն ի ձախակողմն վերին Կիլիկիայ... եւ դնաց նա անտի փ լեռնակողմն, եւ եհար նա զՓուռը եւ զԼուդ... եւ հասանէր ունէր զսահմանս Կիլիկիացոց»⁷: Այս մէջբերումէն կ'երևի որ Հողոփեռնէս անցած է Ամանոսեան լեռներէն եւ մտած Կիլիկիա, ճնշելով տեղւոյն բնակիչները սուրով եւ գերութեամբ:

ԿԻԼԻԿԻՈՅ ԱՅԼ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Ասորեստանցիներու Կիլիկիոյ տիրապետութեան կը յաջորդէ Մարերու եւ Պարսիկներու տիրապետութիւնը, որոնց օրով Նինուէի դէմ կ'ապստամբին Կիլիկեցիները, եւ Դարեհ Վշտասպեան իր բանակներով կու գայ եւ կը տիրէ Կիլիկիոյ դաշտերուն ու լեռներուն, ընելով զայն իր չորրորդ նախարարութիւնը. ասկէ ետք Կիլիկիա պարտական էր ամէն տարի Պարսից թագաւորին վճարել 500 տաղանդ արծաթ, եւ 360 հատ ալ նժոյգ:

Քսերքսէս, Քրիստոսէ առաջ 484ին, կը տիրէ Կիլիկիոյ եւ անոր ծովագերեայ բնակիչներէն կ'առնէ 100 նաւեր ու զինուորական գունդ մը: Ատկէ շուրջ 150 տարի վերջ, 333ին, Մեծն Աղեքսանդր կ'արշաւէ դէպի Պարսկաստան եւ Կիլիկիոյ Իսոսոս քաղաքին մօտակայ դաշտին մէջ փառաւոր յաղթանակ մը կը տանի Պարսիկներուն վրայ եւ զանոնք դուրս նետելով Կիլիկիայէն՝ հոն կը հաստատէ յունական տիրապետութիւն մը:

Սակայն Աղեքսանդրի փառքը Կիլիկիոյ մէջ կարճատեւ եղաւ: Անոր մահէն ետք, Կիլիկիա՝ Անտիոքոս զօրավարին բաժին ինկաւ, որմէ անցաւ Սելեւեան թագաւորութեան, եւ ասոր գլխաւոր առաջնորդը եղաւ Սելեւոս:

7. Յուդիթ, Բ, 12-15:

245ին Պտղոմեանները գրաւեցին Կիլիկիան, մինչեւ որ Մեծն Անտիոքոս 233ին անոնց ձեռքէն առաւ զայն եւ հոն բերաւ բնակեցուց հրեայ գաղթականներ. ասոնց սերունդէն էր Պօղոս առաքեալ, որ ինքզինքը Տարսոնցի կը կոչէ, հրեայ ծնողաց զաւակ:

Հռոմէացիները Ն. Ք. 103 թուականին գրաւելով Կիլիկիան՝ զայն հռոմէական նահանգի վերածեցին: 93ին՝ Կիլիկիա եկաւ հռոմէացի Միլլա զօրավարը. ասոր դէմ ելաւ Պոնտոսի Միհրդատ թագաւորը, իրեն օգնական ունենալով Մեծն Տիգրան Հայոց թագաւորը: Ասիկա ցոյց կու տայ թէ Հռոմէացիներէն առաջ Կիլիկիա Պոնտոսի իշխանութեան ենթակայ էր: Մեծն Տիգրան 69ին իր բանակներով մտաւ Կիլիկիա, դուրս քշեց հռոմէական բանակները, գրաւեց ամբողջ Կիլիկիան, եւ ծովեզերքին վրայ դնուող Սուլի քաղաքը քանդելով՝ դերի տարաւ անոր բնակիչները եւ բնակեցուց իր շինած Տիգրանակերտ քաղաքին մէջ:

Մինչ Մեծն Տիգրան գրաղած էր Հռոմէացիներուն դէմ պատերազմով, անոր դէմ ապստամբեցան կիլիկեցի ծովահնները եւ սկսան նեղել Տիգրանի բանակը: Տիգրան ճզմեց անոնց ապստամբութիւնը մեծ յաղթանակ մը տանելով Հռոմէացիներու վրայ, որոնք շուտով չմոռցան հայ կայսրէն իրենց կրած պարտութիւնը, եւ Արեւելք ղրկեցին Պոմպէոս զօրավարը, 67 թուականին: Տիգրան չկարենալով դիմանալ Պոմպէոսի զօրութեան, քաշուեցաւ Կիլիկիայէն, եւ Պոմպէոս առանց դժուարութեան մտաւ ու գրաւեց զայն: Ապա իր 120·000 բանակով եւ 500 նաւերով ելաւ ծովահններուն դէմ, ջախջախեց անոնց ոյժը, ցրուեց զանոնք՝ գրաւելով անոնց 1000 նաւերը եւ վերջնականապէս տիրացաւ Կիլիկիոյ:

Պոմպէոս՝ Տիգրանի կործանած Սուլի քաղաքը վերաշինեց եւ Պոմպէոպոլիս կոչեց զայն, ինչպէս կը գրէ Պլուտարքոս. «Իսկ ինքն Պոմպէոս, նորոգեաց զքաղաքն Սողիացոց այն ինչ եղեալ ամայի ի Տիգրանայ արքայէն Հայոց...»⁸:

Պոմպէոս Կիլիկիան կառավարեց փոխ-հիւպատոսներով (Proconsul) մինչեւ Օգոստոս կայսեր ժամանակ: 30 թուականին (Ն. Ք.) Կիլիկիա մասնաւորապէս Օգոստոսի միահեծան կայսրութեան եւ երկիրը շատ զարգացաւ իմաստասիրական ուսումներով: 117ին՝ Տրայիանոս կայսրը Հայոց եւ Պարթեաց դէմ արշաւանքէ դարձին՝ մեռաւ Կիլիկիոյ Սելինոնդ քաղաքին մէջ, որ այս պատճառով կոչուեցաւ նաեւ Տրայիանոպոլիս:

Կոստանդիանոս կայսեր ժամանակ Կիլիկիա երեք նահանգներու բաժնուեցաւ. Առաջին Կիլիկիա, որու մայրաքաղաքն էր Տարսոն, եւ վարիչը՝ հիւպատոս մը. Երկրորդ Կիլիկիա, որու մայրաքաղաքն էր Անարդարա, եւ վարիչը կը կոչուէր Նախագահ (Praeses). Երրորդ Կիլիկիա կամ Քարուտ Կիլիկիա, որու մայրաքաղաքն էր Սելեւկիա, եւ վարիչը նոյնպէս Նախագահ:

8. ՊԼՈՒՏԱՐՔՈՍ, Ջուզալիչիւք, հտ. Դ, էջ 274: Կիլիկիոյ մասին իբրեւ հռոմէական գաւառ՝ տե՛ս SYME, Cilicia.

Հոներու՝ Եւրոպա կատարած արշաւանքներու շրջանին, Հռոմէական կայսրութիւնը կը տկարանայ, ու այս առիթէն օգտուելով լեռնային Կիլիկիացիները կ'ապստամբին անոնց դէմ եւ շատ նեղութիւն կու տան:

Յուստինիանոս կայսեր ժամանակ, Ոոսրով Անուշեւոյան Պարսից թագաւորը կը յարձակի Կիլիկիոյ վրայ, ինչպէս կը գրէ Սերէոս պատմիչ. «գրաւեաց ասպատակաւ զկողմանս Կիլիկեցւոց»: Բելիսարիոս, սակայն, կու գայ եւ զանոնք դարձեալ Կիլիկիայէն դուրս կը վանէ 543ին:

Է. դարուն, Անուշեւոյանի թոռը՝ Ոոսրով Ապրուէզ, կրկին կը յարձակի Կիլիկիոյ վրայ, զոր կը յիշատակէ դարձեալ Սերէոս պատմիչ ըսելով. «եւ եղև միւս եւս այլ պատերազմն մօտ ի նեղուց՝ մտին ի Կիլիկիայ, եհար Յոյնն զՊարսիկն ի ճակատու ութ հազար արանց սպառազինաց... ապա զօրացեալ զօրն Պարսից... եւ անցեալ կալաւ զՏարսոն քաղաք եւ զամենայն բնակիչսն Կիլիկեցւոց գաւառին...»⁹:

Ասոր դէմ կ'ելլէ Հերակլ կայսրը 622ին, Աղեքսանդրեակի ծոցին մէջ ցամաքահանում ընելով, եւ 625ին վճռական պատերազմով մը կը խորտակէ պարսկական բանակը. Պարսիկները վերջնականապէս կը հեռանան Կիլիկիայէն:

Այսպէս՝ Կիլիկիա կ'անցնի Բիւզանդացիներու ձեռքը, որոնք երկար տարիներ կ'իշխեն եւ վերջնականապէս հոն կը հաստատուին, շինելով քաղաքներ ու բերդեր, եւ ասկէ վերջ Կիլիկիա Բիւզանդական Վայսրութեան մաս կը կազմէ, մինչեւ Արաբներու երեւումը:

ԱՐԱՐՆԵՐՈՒ ՄՈՒՏՔԸ ԿԻԼԻԿԻԱ

Բիւզանդական կայսրութեան ամէնէն մեծ թշնամիները Արաբները եղան, որոնց դէմ անոնք գրեթէ երկու դար կռիւներ մղեցին, եւ ի վերջոյ Յոյները տեղիք տուին Արաբներուն:

Անոնք Թ. դարուն սկիզբները, էլ Մամուն ամիրապետի առաջնորդութեամբ, 829ին Կիլիկիա մտան, եւ կռուելով բիւզանդական հզօր բանակներուն դէմ՝ ջախջախեցին զանոնք, գրաւելով շատ մը քաղաքներ: Էլ Մամուն, սակայն, վճռուի թէ խմելով Կիւղնոս գետի պաղ ջուրէն՝ հիւանդացած եւ մեռած ըլլայ:

Ասոր եղբայրը՝ Մուղասսիմ, շարունակեց իր եղբօր գրաւումները եւ ոտնակոխ ընելով ամբողջ Կիլիկիան՝ գրաւեց Տարսոնը, եւ այսպէս Կիլիկիա Արաբներու ձեռքը մնաց մինչեւ Ժ. դարու կէսը: Յովհաննէս Չմշկիկ կայսրը 971ին մեծ բանակով մը եկաւ Կիլիկիա, պաշարեց Ատանան եւ առանց մեծ դժուարութեան գրաւեց զայն, ապա գնաց Տարսոն եւ երկար պաշարումէ վերջ այս քաղաքն ալ անձնատուր եղաւ եւ բացաւ իր դռները:

Այս դէպքերէն ետք, Կիլիկիա դարձեալ դար մը Բիւզանդացիներու ձեռքը մնաց. մինչ այդ Արաբական կայսրութիւնը կամաց կամաց տկարացաւ, բաժան բաժան եղաւ եւ կորսնցուց իր զօրութիւնը. այս շրջանիս է որ Փոքր

9. ՍԵՐԷՆՈՍ, ԻԴ, էջ 81:

Ասիոյ պատմութեան բեմին վրայ երեւան կու գայ նոր ցեղ մը՝ Սելճուքները. ասոնք ԺԱ. դարուն ասպատակեցին Մեծ Հայքի վրայ եւ հետզհետէ զրաւեցին զայն: Մանազկերտի վճռական յաղթանակով, 1071ին, սկսան յառաջանալ դէպի Փոքր Ասիոյ խորքերը. իսկ 1072ին, անոնց առաջնորդը Սիւլէյման՝ ջախջախելով Յոյներու բանակները՝ հասաւ մինչեւ Նիկիոյ սահմանները եւ Իկոնիոյ սուլթանութիւնը հաստատեց կեդրոնական Անատոլիոյ մէջ:

Ան նուաճեց նաեւ Կիլիկիան, տիրեց Տարսոնի, որուն նոյն ժամանակները կը տիրէին, կայսեր հաւանութեամբ, հայազգի Ապլղարիպեանները, ծագումով Արծրունի:

Նոյն թուականներուն, Կիլիկիոյ զանազան շրջաններուն մէջ կ'իշխէին Անիէն եկած հայ իշխաններ, իրենց հետ ունենալով հոծ հայ դաղթականութիւն մը. անոնք կէս անկախ էին եւ հաստատուած լեռնային Կիլիկիոյ մէջ եւ տիրացած էին բազմաթիւ բերդերու: Ասոնց մասին ստորեւ աւելի ընդարձակ պիտի խօսինք:

ԵԱԶԱԿԻՐՆԵՐՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ ԿԻԼԻԿԻԱ

Քրիստոնեայ Եւրոպան լսելով որ Արաբները Փոքր Ասիոյ եւ սուրբ երկիրներուն տիրացեր են ու կը նեղեն տեղւոյն բնիկ քրիստոնեայ տարրը, Հռոմի Պապերու առաջնորդութեամբ, Պաշակրութիւն մը կազմակերպեցին, եւ անցնելով Պալքաններէն՝ հասան Պոլիս, անկից ալ անցան Փոքր Ասիա, նպատակ ունենալով ազատել Սուրբ Երկիրը:

Առաջին խաչակիր բանակը, 300.000 հոգի, գալով ցամաքի ճամբով Պոլսոյ վրայէն, 1097ին կը մտնէ մեծ դժուարութեամբ Փոքր Ասիոյ ընդարձակ տափաստաններուն մէջ, երկար կռիւներ մղելով Սելճուք թուրքերուն դէմ, կը յառաջանայ եւ կը հասնի Կիլիկիա: Նոյն շրջանին Կիլիկիա կատարեալ խառնարան մըն էր ժողովուրդներու, որոնք երկրին այս կամ այն մասին մէջ հաստատուած, բերդեր եւ քաղաքներ իրարու ձեռքէ կը յափշտակէին: Պաշակիրներու Կիլիկիա հասնելուն՝ բազմաթիւ թուրք ցեղեր հեռացան անկից դէպի Միջագետքի անապատները. ասով տեղւոյն բնիկ ժողովուրդները հանգիստ շունչ մը առին եւ թեթեւցան անոնց բռնատիրութենէն եւ կողոպուտներէն¹⁰:

Յոյներ, Փրանկներ ևւ Արաբներ Կիլիկիոյ տիրանալու համար իրարու դէմ մահացու կռիւներ կը մղէին: Պոլսոյ Կոմնենոս կայսրը այս կացութեան վերջ տալու համար՝ մեծ բանակներով եկաւ Կիլիկիա, պաշարեց Տարսոնը եւ գրաւեց Պաշակիրներու ձեռքէն. անոր յաջորդը՝ Յովհաննէս Մանուէլ կայսրը, բաւական երկար կրցաւ իր ձեռքը պահել Կիլիկիան ու շատ մը քաղաքներ եւ բերդեր: Այս վիճակին մէջ էր երկիրը, երբ թատերաբեմին վրայ կու գային ուրիշ ազգի մը զաւակները. ասոնք Հայերն էին, որոնք իրենց

10. Պաշակիրներու եւ Հայերու մասին՝ յատկապէս սկզբնական շրջաններուն, տե՛ս ընդարձակօրէն ISKENDERIAN, Die Kreuzfahrer; GROUSSET, Croisades, I, յովպ. էջ 43-68; ԵՂԻԱՅԵԱՆ, Ատանա, էջ 49-81:

արիւնով եւ պայքարի ոգիով փոխեցին Կիլիկիոյ ճակատագիրը: Անոնք, ինչպէս պիտի տեսնենք, հին ժամանակներէ ի վեր եկեր եւ հաստատուեր էին Տաւրոսեան բարձունքներուն վրայ եւ վամաց կամաց հոն տուն տեղ շինած կ'ապրէին, եւ օրէ օր վ'ընդարձակէին իրենց հողերու սահմանները:

Երբ խաչակիրները Կիլիկիա կը հասնէին, ամբողջ երկիրը տակաւին Հայոց ձեռքը չէր. անոնք լեռներու գագաթներուն վրայ քանի մը բերդեր միայն ունէին, եւ կը գոհանային իրենք զիրենք եւ իրենց շուրջը խմբուած ժողովուրդը պաշտպանելով յոյն, փրանկ եւ արաբ ժողովուրդներու կողմաւորներէն. անոնք իրենց հնարամտութեամբ եւ քաջութեամբ գրեթէ դար մը կըռուելով՝ հոն հաստատեցին նոր հայկական իշխանութիւն մը, տէր դարձան երկրի մէկ մասին, որ եղաւ Հայկական Կիլիկիա:

Յաջորդաբար պիտի տեսնենք թէ այդ բոլոր մը գաղթական հայ ժողովուրդը ինչպէս եւ ինչ դժուարութեամբ կրցաւ տիրանալ Կիլիկիոյ եւ հոն հիմնել թագաւորութիւն մը, որ տեւեց երեք դարեր:

ՀԱՅԵՐԸ ԿԻԼԻԿԻՈՅ ՄԷՋ ՌՈՒԲԻՆՆԵԱՆՆԵՐԷՆ ԱՌԱՋ

Հայերու Հայաստանի զանազան շրջաններէն Կիլիկիա գալը եւ հոն հաստատուիլը հին է. պէտք է գիտնանք որ Կիլիկիա 900-1100 թուականներուն տակաւին հաստատուն տէր չունէր. հոն փոխն ի փոխ կը տիրէին Բիւզանդացիները, Արաբներն ու Թուրքերը, ձեռքէ ձեռք յափշտակելով Կիլիկիոյ զանազան շրջանները. աւելի ուշ, ԺԱ. դարուն, հոն տէրութիւն կազմեցին նաեւ Հայեր: Հայերու Կիլիկիա հաստատուիլը եւս շատ հին է. պատմութեան ընթացքին վը գտնենք, այլեւայլ ժամանակներու մէջ, հայեր Կիլիկիոյ զանազան շրջաններուն մէջ հաստատուած. մանաւանդ հին է Եփրատի շրջանի մէջ հայերու գոյութիւնը, բայց անոնց թիւը համեմատաբար քիչ էր եւ ենթարկուած էին տեղւոյն տիրող հզօր իշխանութիւններուն:

Այսպէս կը յիշուի թէ 362ին, Յուլիանոս Ուրացող կայսեր ժամանակ, Կիլիկիոյ մէջ հայեր կային, եւ ան հոն նահատակած է Ս. Ստեփանոս Ուրնեցին, Ուրնի քաղաքին մէջ, Զէյթունի եւ Տրոնուսի միջեւ գիւղ մը. ինչ որ կ'երեւի, այդ գիւղը հայաշատ միջավայր մը եղած էր:

404ին Ս. Յովհան Ոսկեբերան կը յիշատակէ թէ Կոկիսոսի մէջ շատ հայեր կային: Բիւզանդացի կայսրերը, որոնք կը տիրէին այդ հողերուն, իրենց բանակին մէջ ունէին հայ զինուորականներ, որոնք իբրեւ վեթեւաններ կը դրկուէին այս կողմերը իշխելու եւ կառավարելու, ստանալով կայրածներ, բերդեր ու գիւղեր. ասոնք շատ անգամ Կիլիկիա կու գային 'եւ մնայուն բնակութիւն կը հաստատէին իրենց ընտանիքներով, եւ երկար տարիներ հոն կը մնային, 'կը բազմանային ու կը տիրէին շրջաններու: Ասոնց մէջ կային նաեւ սահմանապահ զինուորներ, որոնք նոյնպէս հաստատուն բնակութիւն ունէին Կիլիկիոյ մէջ:

Ուրեմն, Բագրատունեաց թագաւորութեան ջնջումէն առաջ արդէն՝ Կիլիկիոյ մէջ ձեւացեր էր հայկական հոծ գաղութ մը, որոնք հոն կ'ապրէին

իրբեւ կայսեր ճորտեր¹¹: Հայաստանէն դէպի Կիլիկիա գաղթը կը զօրանայ յատկապէս Ժ. դարու սկիզբները, ինչպէս կը վկայէ Մ. Այրիվանցի. «Արք յիսուն իշխանք Սասունցիք՝ նեղեալք ի Թուրքաց, գնացին ի Կիլիկիա եւ Աստուծով տիրեցին սակաւ սակաւ»¹²: 900-910ի ժամանակները, Պաչիկ Ա. Կաթողիկոսը կը ստիպուի այս հոծ հայութեան պաշտօնապէս Տարսոսի եւ պիսկոպոս կարգել, ինչպէս կը գրէ Ասողիկ. «Իսկ յաւուրս Տեառն Պաչիկայ հայրապետին Հայոց սփռեալ տարածեցաւ ազգս Հայոց զկողմամբքն արեւմտից, մինչեւ ձեռնադրել նմա եպիսկոպոսունս յԱնտիոք Ասորոց եւ ի Տարսոն Կիլիկեցոց եւ ի Սուլնդայ եւ յամենայն գաւառս յայնոսիկ»¹³:

Գաղթի այս շարժումը զօրացաւ՝ երբ նախ Վասպուրականը եւ յետոյ Անին գրաւուեցան Բիւզանդացիներու կողմէ եւ վերջ տրուեցաւ պատմական Հայաստանի մէջ հայ պետականութեան: Գաղթը շարունակուեցաւ նոյն թափով Բիւզանդացիներուն յաջորդող Մելնուքներու օրով ալ: Բագմահազար հայեր փախուստ տալով ուղղուեցան դէպի Կապադովկիա ու Կիլիկիա՝ իբրեւ աւելի ապահով շրջաններ: Ասով հայերու թիւը աւելի շատցաւ եւ հոն գաղութներ ստեղծուեցան, մանաւանդ թէ գիւղեր եւ քաղաքներ կազմուեցան հայերէ բնակուած: Այս գաղթող հայերու մէջ կային նաեւ հայ իշխանական տուններէ անձեր, որոնք եկած եւ կայսեր հովանաւորութեան տակ մտած էին, եւ տիրացած հողերու եւ բերդերու. այսպէս կը յիշուի Կիլիկիոյ ամէնէն հին հայ իշխանը Մլեհ, որ կը տիրէր Անարգարայի, Մսիսի եւ Մամնդաւի¹⁴:

Կիլիկիա եկած ու հաստատուած այս իշխաններէն, սակայն, ամէնէն նշանաւորը եղած է Փիլարտոս կամ Փիլարետ հայը, որ նախ Անտիոքի կառավարիչը եղած է: Պոլսոյ Ռոմանոս Դ. կայսրը 1071ին, երբ Մանազկերտի պատերազմին մէջ Ալփ-Արսլանէն յաղթուելով գերի ինկաւ, իր հրամանատարներէն Փիլարտոս, որ Մալաթիոյ գիծը կը պաշտպանէր, քաշուեցաւ

11. Կիլիկիոյ եւ շրջակայքին մէջ կանուխ շրջաններու այս հայկական գաղութներու մասին տե՛ս ընդարձակօրէն՝ Ա. ԱԼՊՈՑԱՃԱՆ, Պատմութիւն հայ գաղթականութեան, Ա. հատ. էջ 103, 109-110, 128-132, 141-143, 173-175, 183-190. յոկպ. էջ 239 յըբ.: Ա. Գ. ԱՐՐԱ-ՀԱՄԵԱՆ, Համառոտ ուրուագիծ հայ գաղթալայրերի պատմութեան, Ա. հատ., էջ 41, 51, 53 յըբ.: ԶԶ., Պատմ., Գ, էջ 504-515: DEDEYAN, L'immigration arménienne.
12. Մ. ԱՅՐԻՎԱՆՑԻ, էջ 55:
13. ԱՍՈՂԻԿ, Գլ. ԱԱ, էջ 258:
14. Հմմտ. LAURENT, Turcs, էջ 38-44, 67-71; S. RUNCIMAN, First Crusade, էջ 297-304; DEDEYAN, նշ. յօդ.: ԶԶ., Պատմ., Գ, էջ 673-676: Հ. Մ. ՅՈՎՀԱՆՆԷՍԻԱՆ, Սերաստիա:

Հոս պիտի ուզէինք յայտնել մեր լուրջ վերապահութեանը Laurentի յիշեալ դործին նկատմամբ, թէեւ կը յայտնաբերէ պատմական ճիշտ հմտութիւն մը: Բայց կը խորհինք թէ հեղինակը ակնյայտօրէն կը չափազանցէ՝ երբ Փոքր Ասիոյ մէջ Սելնուքեաններու յառաջացումին գլխաւոր պատասխանատուութիւնը կ'ուզէ վերագրել Հայերուն Բիւզանդիոսի հետ անգործակցութեան, առանց բաւականաչափ նկատի առնելու բիւզանդական դիւանագիտութեան հիմնապէս սխալ ուղղութիւնը, որ կը ձգտէր Հայաստանը վերածելու բիւզանդական նահանգի մը: Եւ արդարեւ, այն ատեն սկսան Թուրքերը գերակշռել Փոքր Ասիոյ մէջ, երբ Բիւզանդիոն լրիւ յաջողած կը թուէր իրագործելու իր դարաւոր ծրագիրը տիրելու Հայաստանին, օրօրուելով կարճ ժամանակի մը համար խաբուսիկ մեծութեան մը պատրանքով:

դէպի Կիլիկիա, եւ որովհետեւ թէ՛ Թուրքերուն եւ թէ՛ Հոռոմներուն մէջ խառնակութիւն կար, առիթէն օգտուելով բռնացաւ Կիլիկիոյ վրայ, մինչեւ Եփրատ գետը եւ տէր եղաւ Անտիոքի ու Եդեսիոյ: Իրեն մայրաքաղաք ընտրեց Մարաշը: Երբ 1080ի ատենները Դանիշմէնտ թուրքը Կեսարիոյ, Սեբաստիոյ եւ Ծամնդաւի հայ իշխանութիւնները ջնջեց, այդ կողմերէն յիսուների մօտ հայ ազատականներ Մարաշ եկան, իրեն քով ապաստանեցան, եւ Փիլարտոս անոնց իրրեւ աւատ՝ քաժնեց քաղաքներ, զիւղեր եւ բերդեր: Այս եկողներէն էին Ռուբէն, Գող Վասիլ: Փիլարտոսի ենթակայ այս իշխաններէն ոմանք կրցան ժամանակ մը անջատարար իշխել այլ եւ այլ կողմերու, այսպէս Գող Վասիլ՝ Քեսունի, Թաթուլ՝ Մարաշի, Թորոս՝ Եդեսիոյ, եւ Ռուբէն՝ Կոստանոյ մէջ: Քիչ շատ միեւնոյն ժամանակ կային նաեւ կայսերական աւատառուներ, ինչպէս Ապլղարիպ Արծրունի իշխանը՝ Տարսոնի մէջ, Օշին՝ Լամբրոնի, եւ Ապիրատ իշխան՝ Ս. Ներսէս Ծնորհալիի հայրը՝ Ծովք զղեակին մէջ:

Ասոնց միջեւ, ինչպէս ըսինք, ամէնէն ակնառու, հզօր եւ կորովի իշխանն էր Փիլարտոս հայը, որ նպատակ ունէր Մարաշէն մինչեւ Տարսոն նոր ու անկախ իշխանութիւն մը հիմնել: Այս ծրագիրը, սակայն, չյաջողեցաւ զործարդել, որովհետեւ Սելճուք թուրքերը իրենց Սիւլէյման զօրավարին առաջնորդութեամբ, եկան եւ գրաւեցին Անտիոքը եւ Կիլիկիոյ մեծ մաս մը. Փիլարտոս ստիպուեցաւ տեղիք տալ զօրաւորին, եւ իր անկախ Կիլիկիայի մը ստեղծումը թողուլ յարմար առիթի¹⁵:

ՀԱՅԵՐԸ ԿԻԼԻԿԻՈՅ ՄԷՋ ՌՈՒԲԻՆԵԱՆՆԵՐՈՒ ՕՐՈՎ

Հայերը՝ արդէն Կիլիկիոյ հողին վրայ հաստատուած, բազմացած եւ տեղ տեղ գերակշիռ դիրքի հասած, ծանր կացութեան մը առջեւ կը գտնուէին: Բիւզանդական հզօր կայսրութիւնը Արեւմուտքէն, Սելճուք թուրքերը՝ Արեւելքէն, կը շրջապատէին հայ ժողովուրդը՝ իր արդելք իրենց յառաջացման. որով կը ջանային ճնշում բանեցնել եւ կը սպառնային հաշուեյարդարի մը յանդիլ: Այս վիճակը աւելի ծանրացաւ Անիի գրաւումէն ետք. հայ ժողովուրդը սարսափով դէպի Կիլիկիա կը խուժէր, ապահով տեղ մը գտնելու յոյսով: Ըսինք, սակայն, թէ անկէ առաջ ալ սկսած էր արդէն հայերու զանգուածային տեղափոխութիւնը. Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը, 1021ին, շուրջ 40․000 ժողովուրդով եկած եւ բոյն դրած էր Սեբաստիոյ շրջանին մէջ. ասոր հետեւած էին Սասունցի, Պահլաւունի, Վանանդեցի իշխաններ, այնպէս որ Եփրատի շրջանը կը յորդէր հայերով. կը պակսէր մէկը՝ որ այս հոծ հայութեան գլուխ կանգնէր, կազմակերպէր, զինէր եւ իրենց սպառնացող վտանգին առաջըր առնէր: Թոյները մէկ կողմէն, Թուրքերը միւս

15. Հմմտ. Թ. ԱՍՏՈՒՐԵԱՆ, Պատմ. Հայոց, էջ 234-5: Փիլարտոսի մասին աւելի ընդարձակօրէն տե՛ս ԿՈՄՄԱԳԵՆԱՅԻՆ, Փիլարտոս հայը: J. LAURENT, Turcs, էջ 81-90; ID., Edesse, էջ 381-403; ID., Philareté; ISKENDERIAN, Die Kreuzfahrer; CHALANDON, Comnène, I, էջ 95 յըբ., II, էջ 93-118; C. J. YARNLEY, Philaretos; GROUSSET, Croisades, I, էջ XL-XLIV.

կողմէն՝ իրենց ճնշումը կը զօրացնէին հայ ժողովուրդին վրայ: Այս կացութեան դիմաց, Հայերը ստիպուեցան դիմել ինքնապաշտպանութեան եւ մահացու կռիւներ մղել իրենց գոյութեան սպառնացողներուն դէմ:

Հայ գաղթական ժողովուրդը՝ անտէր եւ անպաշտպան, հեռուներէն դալով, իրեն բնական ապահով տեղեր փնտռեց եւ նախ ապաստանեցաւ Տաւրոսի բարձր լեռներուն վրայ, ձիւնապատ եւ անանցանելի կատարներու կողքին, ուր թշնամին դիւրութեամբ չէր կրնար ոտք դնել:

ՀԱՅԵՐՈՒ ՏԻՐԱՑՈՒՄԸ ԿԻԼԻԿԻՈՅ ԲԵՐԴԱՑԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ

Այդ բարձունքներուն վրայ Հայերը գտան Բիւզանդացիներէն լքուած բերդեր, վերաշինեցին զանոնք եւ հոն ապաստանեցան. այս մասին կը գրէ Սամուէլ Սիւեւոսցի. «Ընդ նուազել թագաւորութեան եւ իշխանութեան Հարոց, յորժամ յափշտակեցաւ յիսմայէլացւոցն մայրաքաղաքն Անի, եւ տարազրեցան թագաւորքն մեր, ի գաւառս եւ ի իշխանութիւնս արքայիցն Յունաց, այլ ոմն ի իշխանացն Հայոց Ապլղարիք անուն, որ էր ի տանէն Վասպուրականին... սա եզրտ ի ստորոտ լերինն Տաւրոսի եւ ի գլուխ քաղաքիս Տարսոնի երկու անմատոյց զղեակս, միոյն անուն Լամբրուն, միւսոյն Պապեռուն... Որ եկեալ ազգատոհմաւ իւրով՝ եւ գտեալ զանառիկս ամայացեալ՝ շինէր ըստ կարի...»¹⁶:

Այս բերդերուն մէջ ապաստանած հայերը, ուրիշ բերդեր ալ այլազգիներուն ձեռքէն խլեցին, զօրացան իրենց դիրքերուն վրայ՝ եւ սկսան հետզհետէ տիրանալ լեռնային շրջաններուն:

Մեր ուսումնասիրութեան ընթացքին պիտի տեսնենք իւրաքանչիւր բերդի մասին պատմական աղբիւրներու տուեալները: Ընդհանուր կեդրով կըրնանք ըսել, թէ Հայերու Կիլիկիոյ մէջ իշխանութիւն հաստատուէն առաջ՝ Կիլիկիա ունէր արդէն, հոռոմական շրջաններէն սկսեալ, բերդային գրութիւն մը, որ յատկապէս զարգացաւ բիւզանդական շրջանին: Մեր Աշխարհացոյցի հեղինակն ալ կը գրէ Ա. եւ Բ. Կիլիկիաներու մայրաքաղաքներ՝ Տարսոնի եւ Անարզարայի մասին՝ «ընդ որովք աշխարհք և բերդք բազումք»¹⁷:

Արդէն Հոռոմացիները մասնաւոր ուշադրութիւն կը դարձնէին բերդերու դիրքին: Անոնց հետքերուն վրայէն՝ Բիւզանդացիներն ալ յաճախ կ'ընտրէին լեռնային բարձունքները, իբր յարմարագոյն դիրքեր պաշտպանութեան համար: Յետագային Հայերն ալ, երբ սկսան շինել իրենց սեպհական բերդերը կամ նորոգել հիները, հետեւեցան՝ ընդհանուր առմամբ՝ շինարարական միեւնոյն սկզբունքներուն: Բայց, ինչպէս վեր կը հանէր արդէն Լանկլուա¹⁸, հայկական բերդաշինութիւնները ունեցան նաեւ իրենց ուրոյն յատկանիշերը:

16. ՅՈՎՍԷՓԵԱՆՑ, սիւն. 541 յըբ.: Հայագատում, ԹԳ, էջ 413 յըբ.:
17. ԽՈՐԵՆԱՅԻ, Աշխարհացոյց, էջ 24:
18. Հմմտ. V. LANGLOIS, Monuments de la Cilicie, էջ 110-111:
Կիլիկիան բերդերու ծագումին եւ շինութեան հարցին լոյս կրնան սփռել մասամբ՝ աշխարհագիր Ուիլիլմ Ռեմսիի հետազոտութիւնները: Ան Պիտիդիոյ Անտիոքի կողմերը

ԿԻՒԿԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԱՆԿԻՒՆԷ

Իբր քաղաքական իրականութիւն ղիտուած՝ ի՞նչ հանգամանք կը ներկայացնէ կամ ի՞նչ սահմանում պէտք է տալ Կիլիկիոյ մէջ Հայկական Պետութեան մը կազմութեան: Գրաւո՞ւմ, բռնադրաւո՞ւմ, ասպատականութիւն, յեղափոխութիւն, բնական յեղաշրջո՞ւմ, արդիւնք պայմանաւորումի՞ կամ թէ ուրիշ բան մը:

Հարց մը՝ որ ընդհանրապէս նկատողութեան առարկայ չէ դարձած պատմագէտներու կողմէ, բայց որ ունի իր կարեւորութիւնը Հայ ժողովուրդի պատմութեան ոչ աննշան մէկ շրջանին քաղաքական-իրաւաբանական մերձեցումի տեսանկիւնէն: Անհրաժեշտ մերձեցում մը ասիկա՝ կարենալ հասկնալու համար իր ներքին կազմարար ազդակներուն մէջ ամբողջ պետական կարգուսարքի մը յառաջադայութեան օղակաւորումը:

Հարցը որոշ չափով ձեռք առած է բազմահմուտ պատմագէտ Նիքոլա Յորկա¹⁹, նուրբ եւ իրաւ ղիտողութիւններով. բայց կը մնայ աւելի նկարագրական դիժի մը վրայ, յանգելով հուսկ Կիլիկեան ընկերութեան «արեւմտեան» նկարագիրը բացատրող ընկերաբանական վերլուծումի մը, առանց խորացնելու հայ իշխաններու Բիւզանդիոնէ ձերբազատումին քաղաքական-իրաւաբանական նկատողութիւնը:

Դժուար չէ նշմարել թէ Կիլիկիոյ Հայկական Պետութիւնը ուրոյն եւ բաւական եզակի առնչութեան մը համապատկերը կ'ընծայէ ընդմէջ հողին, էթնիկ իրականութեան եւ մշակոյթին: Հակառակ որ ասիկա արտաքսպէս, տարբեր տէրութեան մը հողերուն մէջ փոխադրութեան եւ անոնց յաջորդական տիրացումին երեւոյթը կը կրէ, թիչ շատ նման՝ գրեթէ միեւնոյն շրջաններուն Պալքաններու մէջ Պուլկարներու կամ Փոքր Ասիոյ մէջ Սելճուքներու թագաւորութիւններուն կազմութեան, - առանց որ այս մերձեցումը՝ վերջին երկու պարագաներուն միջեւ նոյնութիւն մը ներփակէ - , խորքին մէջ կը տար-

[Antiochia Pisidiae - Անեմուրի եւ Կոռակեսիոնի (Ալայեա) միջեւ] գտած է հոմերոսական մղոնաչափ քար մը Ք. Ա. 6 թուակիր արձանագրութեամբ, ուր կը կարդացուին Օգոստոս Կեսարի եւ նահանգին կայսերական փոխանորդ կոսակալին անունները: Այս արձանագրութեան յենով Ռեմսի կը համարի թէ Օգոստոս Կեսար զինուորական ճամբաներու եւ ամրոցներու ցանցով մը օժտած ըլլար Պիսիդիան, Իսաւրիան, ուր կը հաստատուէին հոմէրոսներու գաղութները: Արդարեւ Պիսիդեան Անտիոք եւ Մելիտինէ զինուորական երկու կարեւորագոյն կորիզներն էին Փոքր Ասիոյ հարաւարեւելեան թերթի վրայ, եւ Կիլիկիա կարեւոր քարտէզի մը՝ դէպի արեւելք եւ հարաւ երկարող հոմերոսական ճամբաներու երկայնքին (W. RAMSAY, Geography, էջ 46-47, 57-58):

Այլուր նոյն հեղինակը կ'աւելցնէ թէ լեռներու կատարներուն կանգնած բերդերը առաւելաբար բիւզանդական շինութիւններ էին, պաշտպանուելու համար սասանեան, արաբական եւ սելճուքեան անակնկալ արշաւներուն դէմ: Թէեւ անմատչելի եւ անառիկ դիրքերու վրայ՝ ասոնք կը ներկայացնէին անպատահելի չկարենալու տոկալու երկարատեւ պաշարումներու՝ շուրթի, պարենաւորումի եւ հաղորդակցութեան պակասին (Անդ, էջ 87):

19. IORGA, Petite Arménie, էջ 13-19:

բերի անոնցմէ: Բայց մեր կարծիքով, Կիլիկիոյ Հայկական պետութեան կազմութիւնը ոչ ալ կարելի է վերածել բոլորովին՝ Փոքր Ասիոյ բիւզանդական սահմաններուն մէջ հաստատուած փրանկ իշխաններու կողմէ անկախ տէրութիւններու կազմութեան տիրապետութեան, ինչպէս կ'ընէ Յորկա:

Արդարեւ Հայկական Կիլիկիոյ պարագան կը տարբերի այդ բոլորէն. եւ այս տարբերութիւնը կը կայանայ հիմնապէս ՓԱ. դարու առաջին կէսին Բիւզանդիոնի եւ Հայաստանի միջեւ քաղաքական փոխյարաբերութիւններու քրոնոլոգիան մէջ: Բիւզանդիոն՝ քաղաքական հզօր ճնշումով, մերթ նենդութեամբ, մերթ ղիւանագիտութեամբ, ի հարկին բռնի ուժով, կը գրաւէ պատմական Հայաստանի վերջին սահմանները՝ ջնջելով անոնց վրայէն երկու թագաւորական տուններու իշխանութիւնը: Առաջին անգամ ըլլալով, Հայաստան կը մտնէ իր ամբողջութեամբ բիւզանդական կայսրութեան սահմաններուն մէջ: Բայց որովհետեւ Բիւզանդիոնի տիրացումը Հայաստանի ոչ սոսկ՝ ոչ ալ գըլխաւորաբար բռնի ուժով է, այլ աւելի «ղիւանագիտական» հնարքներով, Բիւզանդիոն յանձն կ'առնէ իր հողերուն մէջ փոխադրել արքայական յետին շառաւիղները՝ տալով անոնց տիտղոսներ եւ աւատներ: Կիլիկիոյ Հայկական պետութեան ծագումը ուրիշ բան չէ բայց եթէ՝ ակամայ իր հողէն զրկուած եւ տուեալ պահուն իր հողերը վերադառնալու անկարելիութեան մէջ գտնուող ժողովուրդի մը ինքնութեան հաստատումը զինք ճնշող բազուկին դէմ:

ՀԱՅԵՐՈՒ ՎՏԱՆԳԱՒՈՐ ԱՐԿԱՄԱՆՆԻՐՈՒԹԻՒՆԸ

Հայ իշխանները գիտակից էին իրենց ձեռնարկած գործին դժուարին եւ ծանր հետեւանքներուն. լաւ գիտէին եւ կը տեսնէին որ իրենց դէմ ունէին մէկ կողմէն բիւզանդական հզօր կայսրութիւնը, միւս կողմէն ալ սելճուք թուրքերու ուժերը, որոնք Տաւրոսեան լեռներէն քիչ մը անդին բոյն դրած, օրէ օր կը սպառնային տիրել լեռներու վրայ ապաստանած հայերուն:

Ուրեմն ի՞նչ էր այս դժուարին ձեռնարկին իրական պատճառը, որով հայ ժողովուրդը ասպարէզ կ'իջնէր:

Անոնք որ տեղեակ են Հայոց պատմութեան զանազան անցքերուն եւ Յոյներու կատարած տխուր դերին՝ Բագրատունեաց թագաւորութեան կործանման մէջ, մանաւանդ Գագիկի՝ Հայոց Անիի վերջին թագաւորին՝ եղբրական մահուան պարագաներուն, կրնան դիւրաւ եզրակացնել ասոնց հետեւանքները: Անցեալի փորձառութիւնը Հայերը կը մղէր արթուն կենալու՝ վերստին նոյն չար բախտին չենթարկուելու համար: Երկրորդ՝ հայ իշխանները լաւ գիտէին որ Յոյները կրօնական տեսակէտէ ալ ծուռ նպատակներ ունէին, կ'ուզէին Հայերը իրենց Եկեղեցիին կապել, ջնջել հայ Եկեղեցւոյ նուիրապետութիւնն ու ինքնավարութիւնը:

Երրորդ մղիչն ալ այս արկածախնդրութեան՝ էր Յոյներու հռաւորութիւնը Կիլիկիայէն, օրէ օր անոնց զինուորական ուժերու տկարացումը, մանաւանդ որ անոնք Պալքաններու մէջ կոնիւր բռնուած էին սլաւ ցեղերու դէմ. միւս կողմէ՝ սելճուք թուրքերու սպառնալիքը հասած էր իրենց դրոներուն առջեւ. այս ամէնը նկատի առնելով՝ հայ իշխանները իրենց ապը-

տամբուլեան դրօշը պարգեցին Բիւզանդական կայսրութեան դէմ. այս մահացու կռիւին եւ ապստամբութեան գլուխ կը կանգնէր զինուորական իշխան մը՝ Ռուբէն անունով:

Այս ապստամբութեան շրջանին, եղան պարագաներ՝ որոնք նպաստեցին հայ իշխաններու յաջողութեան. ասոնք լաւ կը ճանչնային Յովհաննէս Կոմմենոս կայսեր կորովի նկարագիրը, ու թէ ան չուտով կրնար իր սաղմին մէջ խեղդել Ռուբէնի այս ապստամբութիւնը, եթէ իր դէմ չունենար Գոնիայի սուլթանութիւնը, որ հիւսիսէն պատուար կ'ըլլար կայսեր եւ իրենց միջեւ: Քիչ անդին կային Անտիոքի սուլթանութիւնը, ինչպէս նաեւ Սվազի մէջ նրատող Դանիւլմաններու ներկայութիւնը, որոնց համար դիւրին որս կ'ըլլար Կիլիկիան, եթէ բախտը չժպտէր հայ ժողովուրդին եւ Եւրոպայէն Արեւելք չգային Պաշակիրները եւ չհաստատուէին Սիւրիոյ եւ Կիլիկիոյ մօտիկ շքրջաններուն մէջ:

Ո՞վ էր Ռուբէն

Ռուբէն՝ որքան որ որոշ պատմական անձնաւորութիւն մըն է, սակայն մուծ կը մնան անոր ծագման եւ Կիլիկիա գալու եւ հաստատուելու իսկական պարագաները²⁰:

Մեր պատմիչները զանազան կերպերով կը ներկայացնեն անոր անձը եւ թէ ինչ պայմաններով ան կրցաւ գլուխ հանել Ռուբինեաններու Կիլիկիոյ մէջ ազատ իշխանութիւն մը հիմնելու ծրագիրը: Այն պատմագիրները որոնք Ռուբէնի մասին կը գրեն՝ ժամանակակից չեն, հետեւաբար ինչ որ կը գրեն՝ գրի չեն առներ ակնատեսի աչքով, այլ՝ կամ ուրիշներէ լսեր են եւ կամ կարդացեր են գիրքերէ, որոնք շատ անգամ վաւերական աղբիւրներ չեն:

Մ. Ուռհայեցի կ'ըսէ թէ Ռուբէն «ի զօրացն Գազկայ էր»²¹, այսինքն՝ Գազիկի բանակին պատկանող անձ մը: Սմբատ Սպարապետ կ'ըսէ՝ «եւ հայր հօր նորա Ռուբէն, յիշխանացն Գազկայ թագաւորի էր»²²: Հոս Ռուբէն սովորական զինուոր մը չէ, այլ իշխան մը, հաւանաբար Գազիկի իշխաններէն մէկը: Կիրակոս Պատմիչ կը գրէ. «Այս Թորոս իշխանս եւ եղբայրն Ստեփաննէ որդիք էին Լեւոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբէնի, թոռունք յառաջագոյն ասացելոյ առն, որ յազականութենէ եւ ի զօրացն Գազկայ Արծրունեաց»²³: Յիշատակագիր մը կը գրէ. «Իշխան իշխանաց ի սեռէ թագաւորութեանն, արեանառու մեծին Գազկայ, Ռուբէն անուն»²⁴: Ռուբէնի անձի մասին աւելի ընդարձակ կը գրէ Սամուէլ Անեցի. «յորոց իշխան մի արեանառու Գազկայ Ռուբէն անուն, որ կալեալ ունէր զԿօսիտաւայ բերդն»²⁵. Իսկ Սամուէլի շարունակողը կը գրէ. «Լեւոն որդի Ստեփաննէի՝ որդւոյ Ռու-

20. Հայապատում, ՄՀԱ, էջ 343:
21. Մ. Ուռհայեցի, Մասն Բ, ճԾԱ, էջ 312:
22. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 137:
23. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, էջ 62 (ասացելոյ՝ սրբգ. ըստ քնն. հրատ., էջ 109):
24. Հայապատում, անդ:
25. ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, էջ 116:

բէնի, որ է արեանառու թագաւորին Գազկայ»²⁶: Ռուբինեանց այլեւայլ ժամանակագրութիւններու մէջ ալ կը գտնենք հետեւեալ տեղեկութիւնները. «Ռուբէն մեծն աղգական ոմն եւ իշխան թագաւորին Հայոց Գազկայ»²⁷. «ընդ որս եւ մեծափառ ոմն իշխան իշխանաց ի սեռէ թագաւորութեանն, արեանառու մեծին Գազկայ, Ռուբէն անուն»²⁸: Սամուէլ, ինչ որ կ'երեւի մեր մէջըբերումներէն, չի տարակուսիր Ռուբէնի Բագրատունեաց թագաւորական ընտանիքէ ըլլալուն վրայ: Մխ. Այրիվանեցի, ինչպէս ակնարկեցինք, Ռուբէնը կը ներկայացնէ քաջ երիտասարդ մը, որ ԺԱ. դարուն կոռուելով Յոյներուն դէմ՝ կը տիրանայ Կիլիկիոյ. «Աստ (1045-1050) տիրեցին Կիլիկիոյ Ռուբինեանքն, դատ արար Աստուած զրկելոցս. զի Հոռոմն եբարձ գմեր թագաւորութիւնն, իսկ Աստուած զերկիր նոցա ետ Հայոց, որք եւ այժմ թագաւորեն ի նմա»²⁹: Կիրակոս, սակայն, երբ Ռուբէնի մասին կը խօսի, կը շփոթէ Գազիկ Բ.ի եւ Կարսի Գազիկ թագաւորին անձերը. անստոյգ կը թուի մանաւանդ՝ երբ Ռուբէնը կը ներկայացնէ փոքրիկ մանուկ մը՝ որ Գազիկի կ'ընկերանայ, գերի կը բռնուի, ապա կը ծախուի և հայ վաճառականէ մը կը գնուի, կը մեծնայ, փեսայ կ'ըլլայ վաճառականին եւ ապա տիրելով բերդերու՝ հայ ապստամբութեան գլուխ կ'անցնի: Ռուբէնը մանուկ ներկայացընելը միւս պատմիչները չունին, որոնք զայն «այր կատարեալ» կը ներկայացնեն. հետեւաբար Ալիշան կ'ըսէ թէ Կիրակոսի Ռուբէնի մասին պատմածները՝ «զոր այլ պատմիչք ցուցանեն այր չափահաս եւ ազգական լինել Գազկայ... առասպելաց ունի ցոյցս»³⁰: Յ. Աստուրեան եւս կը գրէ. «Ռուբէն՝ Բագրատունեաց Գազիկ վերջինի եւ միանգամայն Արծրունեաց Սենեքերիմի արքայական տոհմերուն ազգական Սասունցի իշխան մ'էր, Անատոլու գաղթած»³¹:

Ռուբէնի ինքնութեան հարցը նոր լուսարանութիւններ ստացաւ շնորհիւ վերջին յիսնամեակի ընթացքին կատարուած զանազան ուսումնասիրութիւններուն, որոնց մասին մանրամասնօրէն անդրադառնալ մեզ շատ հեռուները պիտի տանէր մեր նիւթէն: Եր. Քասունի, որ մանրագին մաղէ մը կ'անցընէ վանոնք, կ'ըզրակացնէ թէ Ռուբէն կը սերէր Հայաստանցի ազատներու ընտանիքէ մը եւ մտած էր Գազիկ Բ.ի զինուորական ծառայութեան մէջ³²:

Ուրեմն կրնանք ըսել թէ Ռուբէն, երբ Սելճուք թուրքերը տիրացան Անիի, ուրիշ 50ի մօտ իշխաններու հետ, մերձաւորապէս 1070-1080 թուականներուն, Արեւելքէն եկաւ Կիլիկիա, Փիլարտոս հայ իշխանին մօտ: Փիլարտոս՝ տեսնելով Ռուբէնի եւ իր ընկերներուն զինուորական բարձր արժանիք-

26. Ծարուսկալուքիւն ՍԱՄՈՒԷԼԻ ԱՆԵՑԻՈՅ, էջ 142:
27. ԱՅՊ, յաւել. Գ, էջ 204:
28. ԱՅՊ, Յաւել. Գ, էջ 213-214:
29. ՄԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ, էջ 59:
30. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, էջ 58, ծն. 2: Տե՛ս նաեւ Սիւտւան, էջ 44, 148, ուր Ալիշան կը խորհի թէ Կիրակոսի աւանգած զրոյցը կրնայ ունենալ թերեւս պատմական խորք մը՝ ենթադրելով ուրիշ հայ իշխան մը, գուցէ Ռուբէն անունով:
31. ԱՍՏՈՒՐԵԱՆ Ե., Պատմ. Հայոց, էջ 241:
32. ՔԱՍՈՒՆԻ, Ռուբէն Ա., էջ 33-36:

ներն ու քաջուժիւնները, զանոնք իր պաշտպանութեան տակ առաւ, եւ անոնց տուաւ հողեր ու բերդեր. Ռուբէնի տուաւ Փոխիզիոյ լեռնային շրջանը, ուր Ռուբէն տիրեց Կոսիտառայ բերդին եւ ասոր մերձակից Կոռոմոզոյ աւանին. այս վայրը այսօր կը համարուի Կիւրիւմզէ գիւղաքաղաքը, Հաճընէն քիչ հեռու, դէպի արեւմուտք, որ է Տաւրոսի այն բարձունքներուն վրայ, որ կը տարածուին Սիսի հիւսիս-արեւմուտքը³³:

Ռուբէն հոն ամրանալով՝ 15 տարի պաշտպանեց իր ցեղակիցները թուրքերուն եւ Բիւզանդացիներուն հարստահարութիւններուն դէմ, եւ գիտցաւ իր շուրջը հաւաքել հայ քաջ երիտասարդներու խումբեր, ինչպէս կը գրէ Ս. Անեցի պատմիչը. «Եւ անդ բնակեալ, յորում լերին էին բնակեալ բազումք յազգէն Հայոց՝ զորս զամենեսեան զնոսա առ ինքն կալեալ մեծն Ռուբէն, եւ նոքօք զօրացեալ էառ զլեռնային կողմանսն՝ զՀոռոման անտի ի բաց մերժեալ եւ զնոցա տեղիսն առեալ»³⁴: Իրեն օժանդակեց Գող Վասիլ, որ տեսնելով Ռուբէնի օգտակար ձեռնարկները եւ դիտաւորութիւնները՝ անվերապահ կերպով օգնեց անոր գործին յաջողութեան:

Ռուբէն Ա.ի համար բախտաւորութիւն մը եղաւ, որ այդ ժամանակ Ալեքս վայրը Նորմաններու դէմ պատերազմի բռնուած, իսկ Սելճուք թուրքերը ներքին վէճերով զբաղած՝ ուշադրութիւն չդարձուցին իր շարժումներուն եւ դիտաւորութեան: Ռուբէն, երկար տարիներ կուռելով զինքը շրջապատող յոյն եւ սելճուք զօրքերուն դէմ, չթողուց որ անոնք ոտք դնեն իր լեռնային հողերուն վրայ. կազմակերպեց, զօրացուց իր փոքրիկ իշխանութիւնը: Երբ մեռաւ՝ թաղուեցաւ Կաստաղօնի վանքին մէջ: Իր իշխանութիւնը թողուց իր հարազատ որդւոյն՝ Կոստանդինի:

Ընդհանրապէս Ռուբէնի մահը կը դրուի 1095ին, այսինքն Գազիկի ըստպանութեանէն 15 տարի ետք. այս թուականէն է որ պէտք է նկատենք Ռուբինեանց Հարստութեան հաստատութիւնը, այսինքն 1080էն, որմէ դար մը ետք Մեծն Լեոն տիրեց ամբողջ Կիլիկիոյ եւ հոն հիմնեց Կիլիկեան հայ թագաւորութիւնը:

ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՎԱՅՐԸ

Տակաւին անորոշ կը մնայ Ռուբինեանց բնակութեան առաջին վայրը. ոմանք Վահկա կը դնեն, ուրիշներ՝ Բարձրբերդ: Կիրակոս Պատմիչ այս մասին կը գրէ. «Եւ էր անդ բերդ մի՝ զոր Բարձրբերդ կոչեն». այս բերդը յոյն եպիսկոպոսի մը ձեռքն էր, Ռուբէն զայն սպաննելով տիրացաւ անոր. «Եւ ինքն մտեալ ի բերդ անդր բռնացաւ, եւ առ սակաւ սակաւ աճեցոյց զկալուածս իւր, զոր բռնութեամբ եւ զոր պատրանօք»³⁵: Իսկ Ներսէս Լամբրո-

33. Սիսուան, էջ 160, 167-169: Ե. Տէր ՂԱՋԱՐԵԱՆ, Կիլիկիա, էջ 28: Ե. Պ. ՊՕՂՈՍԵԱՆ, Հաճըն, էջ 64:
 34. ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, էջ 116: Ռուբէնի դերի մասին Կիլիկեան իշխանութեան հիմնարկութեան մէջ, հմտ. ԲԱՍՈՒՆԻ, անդ, էջ 47-63: ԶԶ., Պատմ., էջ 677:
 35. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, էջ 58-59:

նացիի Սաղմոսաց Մեկնութեան յիշատակագիրը, հաստատելով Ռուբէնի Գապիկի ազգական ըլլալը, հետեւեալը կը գրէ անոր առաջին բնակութեան տեղի մասին. «Քաջ եւ արի իշխանն Ռուբէն [Ա.], նախնին սոցա, ազգական գոլով թագաւորին Հայոց Գազկայ, դիմեալ յարեւելից եկն ի սահմանս Տարսոնի ի Գան Կիլիկեացոց. եւ բացեալ ընդարձակեալ, տիրեաց կողմանցն այնոցիկ»³⁶: Գրիչը «Գահ Կիլիկեացոց» ըսելով՝ Բարձրբերդի շրջանը կը հասկընայ: Մակայն ուրիշ սլատմիչներ, ինչպէս Անեցի, Հեթում պատմիչ, Վահրամ, կ'աւանդեն թէ Ռուբէն նախ տիրեց Փոխիզիոյ լեռնային շրջաններուն, ինչ որ աւելի տրամաբանական կ'երեւի³⁷: Յաջորդաբար տեղի ունեցած ըլլալու է Ռուբինեանց իշխանութեան ընդարձակումը դէպի Բարձրբերդ, Վահկա եւ դաշտային Կիլիկիա³⁸:

ՀԵԹՈՒՄԵԱՆՆԵՐԸ ԿԻԼԻԿԻՈՅ ՄԷՋ

Հեթումեաններու Կիլիկիա գալը եւ հոն հաստատուիլը՝ Ռուբինեաններու Յոյներու դէմ ապստամբութենէն առաջ է. անոնց Կիլիկիա գալը կապ ունի եւ ժամանակակից է Ապլլարիպեաններու Կիլիկիա գալուն հետ: Այս հայկական երկու տոհմերը Արեւելքէն, Սելճուքներու արշաւանքներու շրջանին, փախչելով՝ եկած են դէպի Արեւմուտք եւ հաստատուած Կիլիկիա, Եփրատի շրջաններուն մէջ, ինչպէս կը գրէ յիշատակագիր մը. «Եւ մինչ կայր նա յանհոգս՝ տուէն յունական ազգին, որ էր ի կայսերէ կարգեալ, ժողովեալ զզօրս իւր եւս եւ զՀայկազունսն, զՆաթանիելեանս զտեարսն Ասկուոսայ, եւ զՀէթում տէր Լամբրուինս. որք եւ նոքա յարեւելից ի սրոյն Իսմայելացոց խոյս տուեալ եկին եւ կալան զկողմանսդ նախասացեալ, եւ մտին ընդ հնազանդութեամբ կայսերն Յունաց»³⁹:

Հեթումեաններու նահապետը եղած է Օշին անունով իշխան մը. սա՝ իր Հարկամ անունով եղբորը հետ, 1071ի ժամանակները, Ապլլարիպեաններու հետ Գանձակի կողմերէն բազմաթիւ ընտանիքներով եկած ու հաստատուած է Կիլիկիա, եւ մտած Յունաց կայսեր պաշտպանութեան տակ՝ ծառայելով անոր բանակին մէջ եւ կայսրէն ստանալով հողեր ու բերդեր: Հեթումեաններէն եւ Ապլլարիպեաններէն առաջ Կապադովկիա եկած են Սենեքերիմեանները, որոնց իշխաններէն էր նաեւ Ապլլարիպ, որ ծագումով Արծրունի էր: Ապլլարիպեաններու հետ Սեբաստիոյ կողմերը եւ Կիլիկիա եկած էին նաեւ ուրիշ հայ իշխաններ, ինչպէս Հասան ԽՈՒԼ Խաչիկի որդի: Ապլլարիպ, Սեբաստիայէն Կիլիկիա գալով՝ կայսրէն Տարօնի քաղաքապետ կարգուած էր, ինչպէս կը գրէ Սամուէլ Սկեւոացի գրիչը. «Յորժամ յափշտակեցաւ յիսմայելացոցն մայրաքաղաքն Անի, եւ տարագրեցան թագաւորքն մեր ի դաւառս

36. Հմտ. Սիսուան, էջ 44: Լամբրոսացիի Սաղմոսաց մեկնութիւնի յիշատակարանի մասին՝ տես ՅՈՎԱԿԻՄԵԱՆՑ, սիւս. 541 յջ.:
 37. ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, էջ 116: ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ, Ժամանակագրութիւն, էջ 77: ՎԱՀՐԱՄ ԲԱՐՈՒՆԻ, էջ 192:
 38. Հմտ. Սիսուան, էջ 44:
 39. ՀԱՅԱՊԱՏՈՒՄ, ՄՀԱ, էջ 345:

եւ յիշխանութիւնս արքայիցն Յունաց, այր ոմն յիշխանացն Հայոց Ապլլսարիբ անուն՝ որ էր ի տանէն Վասպուրականի, իբրեւ զմտերիմ՝ եւ զխոհեմ եւ զարի ի գործ պատերազմի, առաքեցաւ յինքնակալէն Ալեքսէ ի գաւառս Կիլիկեցոց, իշխել մայրաքաղաքին Տարսոնի եւ Մամեստիոյ»⁴⁰:

Ապլլարիպ Տարսոնի մօտ երկու լքուած բերդեր գտնելով՝ «միոյն անունն Լամբրանն, միւսոյն՝ Պապեռանն, որք եւ ունէին շուրջ զինքեամբ գիւղս եւ աւանս»⁴¹, եւ յարմար տեսնելով անոնց զիրքը, հոն կը հաստատուի իր ընտանիքով:

Ապլլարիպ Լամբրոնի բերդը Օշինի կու տայ, իսկ ինքը կ'աննէ Պապեռոնի բերդը. այս երկու իշխանները մեծ ծառայութիւններ կը մատուցանեն կայսեր, եւ երբ Ապլլարիպ կը վախճանի, անոր իշխանութեան կը տիրէ Օշինի փեսան. «եւ տիրեաց Տարսոնի մի յիշխանաց իւրոց՝ փեսայ Օշինին»⁴²: Ասով Ապլլարիպեանները ազգականական կապերով կը ձուլուին եւ կը միանան Հեթումեաններու հետ:

ՆԱԹԱՆԱՑԵԼ ԵԱՆՆԵՐԸ

Նաթանայէլեաններու տոհմը եւս վաղուց Արեւելքէն եկած եւ հաստատուած էր Կիլիկիոյ եւ այլ շրջաններու մէջ, սակայն անոնց ծագումը անծանօթ կը մնայ. անոնք հաւանաբար Ապլլարիպեաններու հայրենակից էին եւ անոնց հետ եկած Կիլիկիա, սակայն մեր պատմիչները անոնց գործունէութեան մասին հազիւ քանի մը տող կը գրեն: Այսպէս կը կարգանք անոնց մասին՝ թէ անոնք կը տիրէին Ասկուռաս բերդին եւ անոր շրջակայ հողերուն, «զՆաթանայէլեանս զտեարսն Ասկուռասայ»⁴³: Անոնք եւս Հեթումեաններու կողքին, կայսեր բանակին մէջ կը կռուին եւ Թորոսի վրայ կու գան. Թորոս փառաւոր յաղթանակ մը կը տանի կայսերական զօրքերուն վրայ եւ կը ձերբակալէ Հայկազուն իշխանները. «զՅոյնսն եսպան եւ զՀայկազունսն ձերբակալ արարեալ կալաւ, եւ յետոյ ազատեաց»⁴⁴: Ասկից զատ ուրիշ բան չենք գիտեր Նաթանայէլեաններու մասին:

Այս իշխաններէն զատ, ինչպէս ըսինք, Կիլիկիոյ մէջ կային նաեւ ուրիշ հայ նշանաւոր իշխաններ, Գոռ Վասիլ, Բագրատ, Փիլարտոս, Սիմոն, Հասան, Ճմնդուկ. ասոնք ամէնքը բաւական զօրաւոր զիրքեր գրաւած էին Կիլիկիոյ զանազան շրջաններուն մէջ եւ իրենց կողքին ունէին բազմաշատ հայ գիւղեր եւ աւաններ, ու կէս անկախ կ'ապրէին: Մ. Ուռհայեցի կը գրէ. «Իշխանքն որ կային բնակեալ ի Տօրոս լեան, Կոստանդին՝ որդի Ռուբինայ, եւ երկրորդ իշխանն Բագունի, եւ երրորդ իշխանն Աւշինն, սոքա զամենայն կարիս կերակրոյ առաքեն առ զօրսն Պրանկաց»⁴⁵:

40. Աճդ, ԹԳ, էջ 413: ՅՈՎՍԵՓԵԱՆՅ, «Իւն. 541:

41. Աճդ:

42. Հայապատում, անդ, էջ 414: ՅՈՎՍԵՓԵԱՆՅ, «Իւն. 542:

43. Հայապատում, էջ 345:

44. Աճդ:

45. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Բ, ձԾԱ, էջ 314:

ԿՈՍՏԱՆՆՈՒՆ Ա. (1095-1100)

Ռուբէնի մահէն ետք, իշխանութեան զուլիս անցաւ եւ կառավարութեան ղեկը ձեռքը առաւ իր որդին Կոստանդին Ա.: Սա՝ Յոյներու ձեռքէն յափըտակեց զանազան բերդեր, գրաւեց Վահկան եւ իր բնակութիւնը հոն հաստատեց, ուր մնաց իր յաջորդներով 70 տարի, մինչեւ որ կրցան իրենց աթոռը Սիս փոխադրել:

Կոստանդին Կիլիկիոյ իրական եւ առաջին տիրողը եղաւ, քանի որ իր հայրը՝ Ռուբէն Ա.՝ Կիլիկիայէն դուրս գտնուող հողերուն կ'իշխէր. ինքը ներքին գրաւումներ ըրաւ. այս մասին կը գրէ վերոյիշեալ յիշատակագիրը. «Ընդ որս եւ մեծափառ ոմն իշխան իշխանաց ի սեռէ թագաւորութեան, արեանառու մեծին Գագկայ, Ռուբէն անուն, յինքն յարեալ զյոլովս ի զօրացն, իաղացեալ զայ եւ առնու զամրոցն զԿաւսիտառայ. յորում եւ դնէ ինքեան տուն իշխանութեան եւ տիրէ լեոնակողմանցն Փռիւզիոյ...: Յաջորդեալ զփառս նորա որդի նորին Կոստանդին (Ա.), այր քաջ եւ արդարագործ, որ եւ ի բազմաց սիրեցեալ եղեւ բնակչաց աշխարհին Կիլիկիոյ. որոյ ձեռնտուութեամբ ելեալ ի ծովակողմն Տօրոսի, տիրեաց նահանգին այնորիկ. նախ առեալ զգղեակն զՎահկայ, եւ ապա անտի յառաջ յոլովից տիրեալ տեղեաց՝ դաշտաց եւ ամրոցաց, զյոքունս ի Յունաց հարեալ»⁴⁶:

Իր իշխանութեան օրով Պաշակիրները Արեւելք եկան. ինք օգնեց անոնց, թոյլ տուաւ որ անցնէին իր հողերուն մէջէն եւ երթային դէպի Երուսաղէմ. այս մասին կը գրէ նոյն ժամանակագիրը. «Այլ եւ փոանգ զօրուն՝ որ յԱնտիոք, նիզակակից եղեալ ընդդէմ Իսմայէլեան զօրուն, եւ քաջութիւնս զարմանալիս անդանօր կատարեալ, հիացոյց զարիականաց գունդն. յորոց եւ կոմսութեան անունս ստացեալ՝ Մարգիզ զնա վերակոչէին»⁴⁷: Կոստանդին իր աղջիկը Ճոսիլինի կնութեան տուաւ, որ վերջը Եղեսիոյ կոմս պիտի ըլլար. իսկ իր եղբոր աղջիկը Այսան կնութեան տուաւ Պաղտինի՝ Կոփրիտոսի եղբոր: Այսպէս արեւմտեան բարձր եւ սովորութիւններ սկսան մտնել հայ իշխանական տուններէն ներս:

Պաշակիրները, սակայն, յետագային միշտ ալ անկեղծ բարեկամներ չմնացին Հայերուն: Ասիկա անոնց միջեւ պաղութիւն մը ձգեց, որ վերջը թշնամութեան եւ կռիւի ալ փոխուեցաւ:

Կոստանդին փառքով փակեց իր աչքերը եւ թաղուեցաւ Կաստաղօնի վանքին մէջ, թողլով ընդարձակ հողեր եւ քերդեր իր յաջորդին⁴⁸: Մմբատ Ապարպետ կը գրէ անոր մասին. «Եկեալ ի լեանն Տաւրոս, քաջութեամբ եւ արիութեամբ բռնակալեալ ունէր զմեծ մասն լերինն Տաւրոսի. եւ տիրեալ բազում բերդից եւ գաւառաց, զոր յափշտակեալ էր յազգէն Մամանաց»⁴⁹:

46. Հայապատում, ՄՀԱ, էջ 343: Հմմտ. ԳԱՍՈՒՆԻ, Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը, էջ 31 յջ.:

47. Աճդ:

48. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Բ, ձԿԱ, էջ 329: ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 113: Հայապատում, անդ:

49. Աճդ, էջ 112:

Այսքանը կը բաւէր, որ Կոստանդին անմահանար եւ Կիլիկիոյ իշխանութեան սիւներէն համարուէր:

ԹՈՐՈՍ Ա. (1110-1123)

Կոստանդինի յաջորդեց իր որդին Թորոս Ա.: Ան եղաւ առաջին հայ իշխանը՝ որ քաջութիւնն ունեցաւ Տարսուսեան լեռներու վատարներէն վար իջնելու զինուած, եւ անցնելով Սիսի վրայէն՝ հասաւ մինչեւ Անարզարա եւ զայն գրաւեց Հոռոմներու ձեռքէն: Գող Վասիլի օգնութեամբ՝ մինչեւ իսկ համարձակեցաւ, վստահ իր ուժին, օգնել Եղեսիոյ Պաղտին կոմսին: Բայց իր գլխաւոր գործը եղաւ՝ Գագիկի մահուան վրէժը առնել Յոյներէն. Մանտալեան երեք եղբայրները անակնկալի բերելով՝ գրաւեց անոնց Կնդուակոս բերդը, պատեց զանոնք եւ ետ առաւ Գագիկի սուրը, ինչպէս կ'ըսէ յիշատակագիրը. «բերեալ ընդ ինքեան զպատկեր Տիրամօրն՝ եղ ի դղեակն Անարզարայ, զոր իւր առեալ էր իր Յունաց»⁵⁰: Իսկ Գագիկի սուրը եւ զանձերը կը տանի Վահկայ բերդը. «Ապա առեալ բազում զանձս ոսկւոյ եւ արծաթոյ եւ զամենայն ինչս նոցա, եւ զմիւս եղբայրն բերեալ ի Վահկայն եւ եղ պահապան բերդին»⁵¹:

Թորոս միայն պատերազմող իշխան մը չեղաւ, այլ նաեւ շինարար. շինեց՝ իր ծախսով՝ վանքեր ու եկեղեցիներ, հիւանդանոցներ եւ հիւրանոցներ, եւ մասնաւորապէս Մաշկեւորի եւ Դրազարկի վանքերը, այնպէս որ կ'ըսէ յիշատակագիրը. «որք զԿիլիկիա անուն լքեալ՝ Թորոսի Երկիր զաշխարհն նորին վերածայնէին»⁵²:

ԼԵՒՈՆ ԻՇԽԱՆ (1123-1138)

Թորոսի յաջորդեց իր եղբայրը Լեւոն իշխան, որ իր եղբոր կենդանութեան՝ արդէն իսկ կը տիրէր Մարաշի շրջանին: Ան իր քաջութեամբ ընդարձակեց իր եղբոր սահմանները, եւ միանալով Անտիոքի Ռոմեր պայլին՝ մեծ բանակով մը զնաց Ազազ քաղաքին վրայ, որ Հալէպի ամիրայութեան ձեռքն էր. 1123 թուականին երեսուն օր զայն պաշարեցին՝ բայց չկրցան գրաւել. այն ատեն Ռոմեր Լեւոնի յանձնեց անոր պաշարումը եւ ինքը քաջուեցաւ ճակատէն: Լեւոն սաստկացուց յարձակումը եւ ստիպեց որ պաշարուածները անձնատուր ըլլան: Ազազի պաշարումը եւ անոր շուրջ մղուած պատերազմը երկարօրէն կը պատմէ Մ. Ուռհայեցի⁵³:

Լեւոն իշխան իր զէնքերը դարձուց դէպի Արեւմուտք եւ կարճ ժամանակի մէջ գրաւեց Մսիսը եւ Ատանան, հասնելով մինչեւ Միջերկրական ծով. 1135ին ալ Փոսանկներու ձեռքէն առաւ Սարվանդիքար բերդը:

50. Հայապատում, էջ 343-344:
51. ՍՄՐԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 137: Հմմտ. Հայապատում, անդ:
52. Հայապատում, էջ 344:
53. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Գ, ՄԽԷ, էջ 454-457:

ԲԻԻԶԱՆՏԻՈՆԻ ԿԱՅՍՐԻՆ ԿԻԼԻԿԻԱ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Ժամանակ մը ետք, Պոլսոյ Յովհաննէս Պորփիրոսէն կայսրը, 1137ի աճառը, մեծ բանակով մը եկաւ Կիլիկիա. անոր առջեւ յաջորդաբար անձնատուր եղան եւ իրենց դռները բացին Տարսոն, Մսիս եւ Ատանա քաղաքները: Լեւոն՝ կայսեր Կիլիկիա գալու շրջանին, գացեր եւ Սելեւկիան պաշարեր էր. երբ Սելեւկիոյ գրաւումը վերջացուց, շուտով վերադարձաւ՝ կայսեր դէմ իր երկիրը պաշտպանելու համար եւ ամրացաւ Անարզարայի մէջ: Կայսրը երբ լսեց Լեւոնի գալը, զնաց եւ պաշարեց Անարզարան. Լեւոն քաջութեամբ դիմադրեց, եւ օր մը իր բանակի խումբ մը քաջերով քաղաքէն դուրս ելլելով յանկարծակի՝ յոյն զինուորները կոտորեց եւ կրկին ամրացաւ Անարզարայի մէջ: Կայսրը ասոր վրայ զայրացաւ եւ Պոլսէն բերել տալով հսկայ բաբաններ եւ քարընկէց մեքենաներ՝ հարուածեց քաղաքին պարիսպները, եւ երկար ատեն պաշարեց Անարզարան: Ներսը սով եւ հիւանդութիւն ինչալով, Լեւոն ստիպուեցաւ լքել Անարզարայի պաշտպանութիւնը եւ զնաց ապաստանեցաւ Վահկայի մէջ. կայսեր բանակները հասան Լեւոնի ետեւէն եւ պաշարեցին Վահկան, որ չկրցաւ երկար դիմանալ, ինկան անոր պաշտպանութեան զիժերը եւ կայսեր բանակները յաղթական մտան Վահկա: Լեւոն անձնատուր եղաւ. կայսրը զայն բռնելով՝ կնոջը եւ Ռուբէն ու Թորոս զաւակներուն հետ՝ շղթայի զարկաւ եւ Պոլիս դրկեց. իսկ միւս երկու որդիները՝ Մլեհ եւ Ստեփանէ, որ ձոսլինի քով կը գտնուէին Վահկայի պաշարման շրջանին՝ ազատեցան զերութենէն⁵⁴: Լեւոն իշխան տարի մը ետք, 1139ին, բանտին մէջ մեռաւ սրտի ցաւէն, ինչպէս կ'ըսէ ժամանակագիրը տխուր շնչումով. «եւ իշխանութիւն Հայոց բարձաւ ի Կիլիկիոյ, տիրելով վերստին Յունաց»⁵⁵:

Ռուբէնի, Կոստանդինի եւ Լեւոնի յիսուն տարիներու պայքարը, ազատ Կիլիկիա մը ունենալու երազը՝ վաղանցուկ բոցի մը պէս մարեր էր: Կիլիկիոյ լեռներուն վրայ ապաստանած բռու մը հայերու կռիւր՝ ափ մը հող ունենալու, իր սաղմին մէջ խեղդուած էր. բայց մեռած չէր Լեւոնի ազատութեան ոգին ու սէրը: Իր կորիւնը՝ Թորոս, ժառանգած էր իր հօրմէն այն յատկութիւնները, որ զինք պիտի մղէին վերականգնելու այդ գահը:

ԹՈՐՈՍ Բ. (1144-1168)

Լեւոնի որդին՝ Թորոս Բ., եօթը տարի զերութենէ ետք, կրցաւ ազատիլ ու հասնիլ Կիլիկիա, եւ ինքզինքը յայտնել քահանայի մը: Հայ ընկճուած իշխանները, հազիւ թէ իմացան այս լուրը, իսկոյն եկան եւ դարձեալ խմբուեցան Թորոսի շուրջ, եւ կրկին զինուորելով ու զօրանալով՝ յարձակեցան Յոյներուն վրայ ու տիրացան բազմաթիւ քերդերու, ինչպէս կը գրէ յիշատակագիրը. «Եւ մեծն Թորոս գտեալ օգնութիւն յԱստուծոյ, եւ ի դիպող ժամու վերստին եկն ի Կիլիկիա. եւ ձեռնտութեամբ լեռնակողմանց Տօրոսի

54. Անդ, էջ 465: Հմմտ. Հայապատում, էջ 345: RAMSAY, Geography, էջ 381:
55. Անդ: Տե՛ս նաեւ ՔԱՍՈՒՆԻ, Կիլիկիոյ հայկազան իշխանապետութիւնը, էջ 177 յԷբ.:

ազինս Հայոց, որ մնացեալ էին անդանօր, տիրեաց նախ Վահկային եւ ամենայն Փռիւզիոյ. եւ յետ սակաւուց Անարգարայ, եւ ամենայն դաշտակողմանն»⁵⁶:

ԹՐԵՔ ԵՂԱՍՏՐՆԵՐ

Ստեփանէ եւ Մլեհ, երբ լսեցին որ իրենց եղբայրը Թորոս Բ. գերութենէ վերադարձեր է եւ սկսած է դարձեալ տիրանալ իրենց հայրենական հողերուն եւ բերդերուն, եկան ու միացան անոր, եւ գացին գրաւեցին Համաքանոյ բերդն ու Մսիս քաղաքը, ծովեզերքին վրայ: Այս երբ լսեց Բիւզանդիոնի Մանուէլ կայսրը, մեծ բանակով մը Արեւելք ղրկեց իր Անդրոնիկոս զօրավարը. յունական բանակին միացան նաեւ Հայկազուն իշխաններ, Հեթումեաններն ու Նաթանայէլեանները: Թորոս Բ. անվեհեր քաջութեամբ կայսեր հսկայական բանակին դէմ ելաւ, ջախջախեց զայն եւ հազարաւոր գերիներ բռնեց, որոնց մէջ էին նաեւ Հեթումեաններէն Օշին՝ Լամբրոնի տէրը, ինչպէս նաեւ Վասիլ՝ Բարձրբերդի իշխանը, Տիգրան՝ Պռականայի տէրը, իսկ Պապեոսի տէրը Սմբատ մեռաւ պատերազմի դաշտին վրայ⁵⁷: Օշին՝ գերութենէ ազատելու համար՝ ստիպուեցաւ 1000 դահեկան վճարել եւ իր որդին Հեթումն ալ պատանդ տալ: Թորոս շատ սիրեց այս երիտասարդը եւ ժամանակ մը ետք իր աղջիկը անոր կնութեան տուաւ. ասով սկսաւ երկու տոհմերու ազգականութիւնը, վերջ տալով այն հակառակութեան ոգիին որ կար անոնց միջեւ:

Կայսրը տեսնելով որ չյաջողեցաւ իր ծրագիրը՝ Թորոսը ծուկի բերելու, անոր դէմ գրգռեց Իկոնիոյ Մաքսուտ Սուլթանը. սա շարունակ յարձակումներ շղթայազերծեց Թորոսի դէմ, բայց չյաջողեցաւ. Թորոս միշտ յաղթական դուրս ելաւ:

Մանուէլ կայսրը տեսնելով որ ձախողեցաւ Անդրոնիկոսի առաքելութիւնը, ինչպէս նաեւ Գոնեսայի սուլթանին յարձակումները, այս անգամ Թորոսի դէմ հանեց Անտիոքի Տաճարական ասպետները, որոնք՝ յունական բանակին միացած, Թորոսի վրայ քայլեցին. պատերազմը տեղի ունեցաւ Ադեքսանդրոսականի մօտերը. երկու կողմերն ալ շատ կորուստ տուին եւ Թորոս տեսնելով որ պիտի չկարենայ երկար դիմանալ միացեալ բանակին, քաշուեցաւ լեռները, եւ Անտիոքի Ռենալտ դուքսին հետ հաշտութեան դաշինք կնքեց, անոր թողլով սահմանային զանազան բերդեր:

Մանուէլ կայսրը, 1156-1157ին, կրկին յարձակեցաւ Թորոսի վրայ, որ դարձեալ քաշուելով իր լեռնային բերդերուն մէջ՝ ուժգին դիմադրութիւն մը ցոյց տուաւ կայսեր. սակայն երբ Անտիոքացիները՝ որ իրեն դաշնակից էին՝ լքեցին ճակատը եւ կայսեր անձնատուր եղան, Թորոս առանձին մնալով ստիպուեցաւ ընդունիլ կայսեր հաշտութեան պայմանները: Կայսրը տեսնելով Թորոսի քաջութիւնները՝ զայն հաստատեց իր իշխանութեան մէջ եւ Թորոս դարձեալ տէր եղաւ իր հօր հողերուն, ինչպէս կը գրէ յիշատակագիրը.

56. Հայագատում, անդ:
57. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 170-171: Հմմտ. Հայագատում, անդ:

«Այլ մեծն Թորոս տիրեալ քաջութեամբ Կիլիկիոյ եւ Սաւրիոյ, վարէր զիշխանութիւնն ըստ հաճոյիցն Աստուծոյ. զի էր այր բարեպաշտ եւ ողորմած, մեծախորհուրդ եւ առատամիտ»⁵⁸:

Իսկ Թորոսի Ստեփանէ եղբայրը, որով լեցուած Յոյներու դէմ, կը նեղէր զանոնք. ան իր քաջութեամբ գրաւեց Սեաւ լեռները եւ հոն անոնցմէ շատեր կոտորեց: Ասոր վրայ Յոյները օր մը խարդախութեամբ բռնեցին Ստեփանէն եւ եռացած ջուրի մէջ նետեցին 1165ին. «Ի թուին ՈժԴ սպանաւ Ստեփանէ՝ որդի Լեռնի, եղբայր Թորոսի սեւաստօսի, դաւով նենգութեամբ անօրէն տուկին Յունաց, յաշխարհ Կիլիկիացոց, առջեւ Համուսին. զի կոչեցին զնա սիրոյ աղագաւ, եւ կալեալ չարաչար մահուամբ հանին ի կենցաղոյս, խաչելով ի կատսայ»⁵⁹:

Մլեհ (+ 1174), Թորոսի եղբայրը, անօրէն, չար եւ սպառամբ, միացած Նուրէտտին սուլթանին հետ, երկար կռիւներ մղեց իր իսկ եղբայրներուն դէմ, գրաւեց Ատանա, Մսիս եւ Տարսոն քաղաքները: Մանուէլ կայսրը զայրացած Մլեհի դէմ, եկաւ Կիլիկիա. Մլեհ սակայն զարկաւ ու խորտակեց կայսեր բանակները⁶⁰: Այս ժամանակները Լամբրոն տակաւին Հեթումեաններու ձեռքն էր. Մլեհ գնաց ու պաշարեց զայն 1173ին եւ շատ նեղութիւններ տուաւ անոր բնակիչներուն, մինչեւ որ Գրիգոր Տղայ Կաթողիկոսը, որուն փեսան էր Մլեհ, զանոնք հաշտեցուց⁶¹: Մլեհ իր գէշ նկարագրով ատելի եղաւ շատերուն, իր իսկ բարեկամ իշխանները իր դէմ ելան, եւ օր մըն ալ Սիսի մէջ դաւադրութեամբ սպաննեցին ու թաղեցին զինքը Մեծ-Քար, իր դաստակերտ վանքին մէջ⁶²:

ՌՈՒՐԷՆ Բ. (1175-1186)

Ռուրէն՝ Մլեհի եղբոր Ստեփանէի որդին էր, իսկ մայրն էր Ռիքա, Պապեոսի Սմբատ իշխանին աղջիկը եւ քոյրը՝ Բակուրան իշխանին, բարեպաշտ եւ աստուածավախ կին մը՝ որ Մլեհի մահէն ետք, հայ իշխաններու խընդրանքին վրայ, Ռուրէնը Կիլիկիա ղրկեց «բազում գանձիւք ոսկւոյ եւ արծաթոյ»: Հայ ժողովուրդը մեծ պատուով ընդունեցաւ զինքը, եւ Ռուրէն ամենուրեք սիրելի եղաւ. «եւ եկեալ Ռուրէն տիրեաց հայրենեաց իւրոց, եւ հնազանդեցան նմա իշխանքն Հայոց յօժարութեամբ»⁶³:

Ռուրէն, ամուսնանալով Իզապէլ իշխանուհիին հետ, ինամութիւն հաստատեց լատին իշխաններու հետ, ու անձամբ գնաց Երուսաղէմ, ուր տեղի ունեցաւ ամուսնական մեծածախս հանդէսը: Այս ամուսնութենէն ծնան երկու անուանի աղջիկներ Ալիծ եւ Փիլիպպինէ⁶⁴: Ալիծ նախ ամուսնացաւ Հե-

58. Հայագատում, էջ 346:
59. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 186:
60. Անդ, էջ 189 յԷ.: Հայագատում, էջ 347:
61. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 190:
62. Անդ, էջ 192: Հայագատում, անդ:
63. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 192:
64. Անդ, էջ 201, 206-207:

Թուժի հետ. անոր մահէն ետք, «ետ Լեւոն զդուստր եղբորն իւրոյ Ռովբինի վԱլիճն, որ յառաջագոյն Հեթումն ունէր, եղբայրն Շահէնշահի, աւագ որդւոյն բրնձին Ըռեմնդին...»⁶⁵:

Ռուբէն Բ. «կեցեալ աւուրս ինչ բարիօք կենօք, եւ ի վախճան մահու հասեալ՝ խրատեաց զեղբայրն իւր [Լեւոն Ա.] բազում իմաստութեամբ եւ բարութեան խրատով. թողեալ ի նա զիշխանութիւնն եւ զգաստերս իւր, ինքն հանդեաւ ի Գրիստոս, եւ կրօնաւորեալ թաղեցաւ ի Դրազարկն»⁶⁶:

Երբ Ռուբէն կը վախճանէր, Կիլիկիա բաւական ընդարձակ սահմաններ ունէր, զօրաւոր իշխանութիւն մը, եւ միտքերը պատրաստ էին անոր յաջորդը տեսնելու՝ բարձրացած թագաւորական գահին վրայ. այս գործը կատարելը վիճակեցաւ Լեւոն Մեծագործին:

ԼԵՒՈՆ Ա. ՄԵԾԱԳՈՐԾ ԹԱԳԱՒՈՐ

Կիլիկիոյ համեստ Պարոնները, գրեթէ հարիւր տարուան ընթացքին, քայլ առ քայլ այդ գեղեցիկ երկրին ոչ միայն լեռնային մասը՝ այլ եւ դաշտային գաւառները գրաւեւր եւ անոր բացարձակ տէրը դարձեւր էին: Ճիշտ այդ ժամանակ Պարոններու աթոռը կը բարձրանար Մեծն Լեւոն Բ. իշխան (1187-1198), որ յետոյ պիտի գահակալէր իբրեւ Լեւոն Ա. թագաւոր (1198-1219), որդին՝ Ստեփանէի եւ Ռիթայի: Ան իր քաջութեամբ ու խելքով մեր պատմութեան ամէնէն նրբամիտ քաղաքագէտներէն եւ կարող ռազմավարներէն մին եղաւ: Իր նպատակներուն հասնելու համար՝ փոխն ի փոխ գործածեց քաղցրութիւն եւ բռնութիւն: Իր իշխանութեան ենթարկեց գրեթէ բոլոր հայ իշխանները: Իր մասին կը գրէ Սմբատ. «Եւ էր սա այր իմաստուն եւ հանճարեղ, ձիավարժ հմուտ, եւ ի զինուորութիւնս քաջասիրտ եւ արիազոյն յամենայն գործ բարութեան՝ ի մարդկայինսն եւ յաստուածայինսն, արագ եւ զուարթերես»⁶⁷:

Լեւոնի կեանքի երազը եղաւ՝ իր ներկիրը թագաւորութեան աստիճանին բարձրացնել եւ անոր օրինական հանգամանք մը տալ. պարագաները նպատեցին իր այս արդարացի ձգտումներուն:

Սալահտտին սուլթանը 1187ին Երուսաղէմը գրաւեց Պաչակիրներէն, իրարանցումի մատնելով Եւրոպայի թագաւորներն ու Հռոմի Պապը: Անոնք մեծ խանդավառութեամբ Երրորդ Պաչակիրութիւն մը կազմակերպեցին, որուն գլուխը անցաւ Գերմանիոյ Փրեզերիկ Ա. Շիկամորուս կայսրը: 1190ին կայսեր բանակները Անատոլիա մտան եւ գրաւեցին Գոնիան: Գերմանները Հռոմներու և Թուրքերու պատճառով, սոսկալի կորուստներ ունեցան եւ շատ նեղութիւններ կրեցին Անատոլիոյ մէջ. իսկ մեծ եղաւ ուրախութիւննին՝ երբ իրենք գիրենք գտան Լեւոնի երկիրը: Լեւոն օգնեց անոնց, եւ երբ կը պա-

65. ԱՅԳ: 66. Հայապատում, էջ 348: Կիլիկիան իշխանութեան այս առաջին շրջանին համար, տե՛ս Սիսուամ, էջ 42-59: 67. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 194:

տրաստուէր կայսրը ընդունելու՝ ընդհանուր ուրախութիւնը սուգի փոխուեցաւ. կայսրը Սելեւկիոյ գետէն անցնելու պահուն՝ հոսանքէն տարուած եւ խեղդուած էր, կամ ըստ ոմանց՝ լողանք առած ժամանակ խեղդուեւր էր: Լեւոն՝ որ կ'երազէր իր թագը կայսրէն ստանալ, շատ տխրեցաւ: Սակայն չյուսահատեցաւ անոր մահով. դիմումներ ըրաւ Պապին եւ Հենրիկոս Զ. երիտասարդ կայսեր. Պապը կանխեց եւ առաջուց զրկեց թագը, իսկ կայսրը զրկեց ոսկիէ մական մը:

Լեւոն Ա. 1198ին, Տարսոնի Ս. Սոփիա եկեղեցիին մէջ, հանդիսաւոր կերպով թագաւոր հռչակուեցաւ. թագադրութեան այս հանդէսէն վերջ, Գրիգոր Ապիրատ Կաթողիկոսը մեծ շուքով թագաւոր օծեց Լեւոնը նոյն մայր եկեղեցիին մէջ:

Լեւոն Ա. իր թագադրութենէն ետք սկսաւ երկիրը կարգի դնել. նախ բարեկամացաւ Գոնիայի Գայասէտտին սուլթանին հետ եւ դրաւեց էլպիստանը, եւ ասպետներու օգնութեամբ փառաւոր յաղթանակներ տարաւ սուլթանին դէմ. գրաւեց Սելեւկիա քաղաքը, Նորբերդն ու Կամարտիաս ամրոցները եւ ասպետներուն նուիրեց:

Իսկ երկու տարի ետք, Լեւոն զինակցելով Էրզրումի սուլթանին հետ՝ արշաւեց Կապադովկիա եւ տիրացաւ Գարաման (Լարանտա, Տէրէնտէ), Հերակիա եւ Տիանա քաղաքներուն:

Լեւոն Ա., Կիլիկիան թագաւորութեան վիճակի վերածելով, կազմակերպեց երկիրը աւատապետական ձեւով՝ արեւմտեան օրինակին վրայ, թերեւս շատ ձեռնբաց ընդունելով արեւմտեան բարքերը: Արքունիքին մէջ՝ հայերէնի կողքին խօսակցական լեզու էր նաեւ Փրանսերէնը:

Ան բնաւորութեամբ ընկերական եւ զուարթ էր, զիտէր գնահատել մարդոց արժանիքները: Զինուորական տեսակէտով Լեւոն ոչ միայն հայկական բանակը կազմակերպեց՝ այլ նաեւ զայն օժտեց զէնքերով եւ պաշարումի նոր տեսակ մեքենաներով: Նոր բերդեր շինեց եւ հսկեց առեւտուրին վրայ՝ ապահով ճամբաներ ստեղծելով երկրին մէջ:

Լեւոն Ա. առաջին հայ թագաւորն էր որ հայերէն գրերով եւ հայերէն լեզուով ոսկի, արծաթ եւ պղինձ դրամներ կոխել տուաւ: Նոյնպէս իրն է հայ թագաւորի մը նուիրական ձեռքով պատմական վաւերագրի մը տակ հայերէն գիրերով առաջին ստորագրութիւնը՝ որ մինչեւ մեզի հասած է: Ան մեծ զարկ տուաւ ուսումին. իր օրով կը տեսնենք զարգացած եկեղեցականներու հոյլ մը⁶⁸:

68. Լեւոն Ա. ի շրջանին ամբողջական տեսութիւնը տուած է ԱԼԻՇԱՆ Սիսուամի վերջը՝ «Լեւոն Մեծագործ առաջին թագաւոր Սիսուանայ», էջ 435-529: Նոյնին Փրանսերէն թարգմանութիւնը՝ առանձնատպ, P. L. ALISHAN, Léon Le Magnifique, Venise 1888: Հայկական Կիլիկիոյ ընդհանուր պատմութեան համար՝ տես ՉԱՄԵՆԱՆ, Գ, էջ 5-365: ՕՐՄԱՆԵԱՆ, Ա, հմ. 905-1099, սիւն. 1316-1598: Բ, հմ. 1101-1349, սիւն. 1601-1955: ԱՍՏՈՒՐԵԱՆ, Պատմ. Հայոց, էջ 241-321: ԶԶ., Պատմ., Գ, Բաժին է, էջ 669-786: TOURNEBIZE, Histoire, էջ 168-337, 644-753; GROUSSET, La Petite Arménie, էջ 385-416; S. DER NERSESSIAN, Cilician Armenia, էջ 630-659; BOASE, Cilician Kingdom, էջ 1-33.

ՋԱՊԵԼ ԵՒ ՓԻԼԻՊ (1222-1224)

Լեւոն Ա. մանչ զաւակ չունեցաւ, ունէր միայն փոքրահասակ աղջիկ մը Ջապէլ անունով (1215-1252). պաշտօնապէս որոշուած էր եւ Հոռոմի Պապին ալ հաղորդուած, որ Հունգարիոյ Անդրէաս թագաւորին տղան Կիլիկիա պիտի գար եւ ամուսնանար Ջապէլի հետ. սակայն այս ծրագիրը չիրականացաւ: Այն ատեն Կոստանդին Պալ խնամակալը զայն ամուսնացուց Հեթումեանց երկրորդ ճիւղէն Անտիոքի Բրինձի տղուն Փիլիպի հետ (1222), որուն մայրը հայ էր: Սակայն Փիլիպ չյարգեց մեր ազգային սովորութիւնները եւ արքունիքին զանձերը զաղանթօրէն իր հօր ղրկեց: Կոստանդին բռնեց եւ բանտարկեց Փիլիպը, մինչեւ որ զանձերը ետ վերադարձնեն. սակայն անոր ազահ հայրը չվերադարձուց զանոնք եւ Փիլիպ մեռաւ բանտին մէջ: Ջապէլ շատ ազդուեցաւ անոր մահով. հայ իշխանները համոզեցին որ Կոստանդինի Հեթում գաւակին հետ ամուսնանայ. ինքը հազիւ 11 տարեկան էր, իսկ Հեթում Ա.՝ 13 տարեկան: Ասով Կոստանդին կրցաւ հաշտեցնել երկու տուները՝ Հեթումեաններն ու Ռուբինեանները. ինքը փոքրիկներուն խնամակալ կարգուեցաւ, եւ իր կորովի բազուկով կառավարեց երկիրը:

ՀԵԹՈՒՄ Ա. (1226-1269)

Հեթում բարի երիտասարդ թագաւորը դժուարին օրերու մէջ գահ բարձրացաւ. ան բարեկամացաւ թաթարներու հետ եւ անոնց զինակից եղաւ: 1252ին վախճանեցաւ Ջապէլ: Հեթում Ա. բազմաթիւ դաշինքներ դրաւ թաթարներու Հուլաղու խանին հետ, որուն կինը քրիստոնեայ էր: Ապա վրայ հասան Մամլուքները եւ յաջորդաբար գրաւեցին Կիլիկիոյ ծովային քաղաքները, եւ Պիպարս առաւ Անտիոքը: Այս դէպքերու ժամանակ Հեթում ծերացած՝ իր թագը ձգեց իր զաւակին եւ վանք քաշուեցաւ: Հեթումի օրով Կիլիկիոյ թագաւորութիւնը անկման շրջանի մէջ մտաւ, որովհետեւ Պաշակիւրները սկսան կազմալուծուիլ եւ յետոյ Մոնկոլները իսլամանալով կամաց կամաց քայքայուեցան: Եւ եթէ Կիլիկիոյ հայկական թագաւորութիւնը տակաւին դար մը ապրեցաւ, ատիկա արդիւնք է մեր թագաւորներու քաջութեան եւ խոհեմութեան:

ԼԵՒՈՆ Բ. (1269-1289)

Լեւոն Բ. Հայոց լաւագոյն թագաւորներէն մէկն է, ազնիւ հօր մը զաւակը. իր գահակալութեան օրը, ներում շնորհեց յանցաւորներուն եւ առատ ողորմութիւն բաժնեց չբաւորներուն: Իր ժամանակ, դարձեալ Կիլիկիոյ վրայ արշաւեց Պիպարս սուլթանը եւ գրաւեց Մսիսը. Պիպարս անձամբ եկաւ Կիլիկիա, քաջալերեց հրոսակները եւ գրաւեց նաեւ Տարսոնը ու կրակի առաւ մանաւանդ թագաւորական պալատը եւ Ս. Սոփիա եկեղեցին. շուտով Այսան ալ ինկաւ արշաւողներու ձեռքը: Պիպարս քաջալերուած տարած յաղ-

թանակէն, դարնան կրկին յարձակեցաւ Կիլիկիոյ վրայ: Լեւոն Բ., իր Սմբատ Գունդստապլ զօրավարին առաջնորդութեամբ, միասին քշեցին թշնամին Մարաշի մօտերը՝ կիրճերուն մէջ, եւ կոտորեցին. Պիպարս հազիւ կրցաւ փախչիլ Դամասկոս եւ հոն մեռաւ: Մարաշի պատերազմին մէջ մեռաւ նաեւ Սըմբատ Գունդստապլը 1276ին:

ՀԵԹՈՒՄ Բ. (1289-1305)

Լեւոն Բ.ի տասնեւեկ զաւակներէն էր Հեթում Բ., որ թէեւ վանքի մարդ, սակայն երեք անգամ գահ բարձրացաւ: Հեթում գնաց Դաւրէժ եւ թաթարներու Պազան խանին հետ դաշինք մը կնքեց: Սակայն Հեթումի եւ իր եղբայրներուն միջեւ դժտութիւններ ստեղծուեցան. իր եղբայրը Սմբատ, որ փոխանորդ կարգուած էր, առիթէն օգտուելով, Հեթումը հրաժարած յայտարարեց եւ վանք քաշուած: Հեթում Բ. եւ թորոս իշխան Պոլիս էին ու իրենց վերադարձին՝ զարմանքով լսեցին Սմբատի ըրածը: Երբ Կեսարիոյ մօտերը հասած էին, Սմբատ բռնել տուաւ զանոնք եւ բանտ նետեց. թորոսը խեղդել տուաւ, իսկ Հեթումին ալ աչքերը տաղեց: Իրենց չորրորդ եղբայրը՝ Կաստանդին, շատ յուզուելով այս դէպքերէն, բռնեց Սմբատը եւ բանտ նետեց, ապա Հեթում Բ.ը ազատեց, որուն աչքերը սկսած էին տեսնել, ու դարձեալ գահ բարձրացուց. իսկ իր եղբայրները Պոլիս աքսորեց:

ԼԵՒՈՆ Գ. (1305-1308)

Այս դէպքերէն վերջ, Հեթում Բ. վերջնականապէս հրաժարեցաւ իր թագէն, եւ իր տեղը թագաւոր կարգեց իր եղբոր թորոսի որդին՝ Լեւոն Գ., որ տասնեւեկ տարեկան ուշիմ եւ կտրիճ երիտասարդ մըն էր: Սակայն Լեւոն Գ. եւ Հեթում Բ. ամբաստանուեցան Բիլարղու թաթար զօրավարէն, որ Անարզաբայ կը նստէր, իբրեւ թէ Հեթում թոյլ չէր տուած որ Սիսի մէջ մղկիթ մը շինուէր: Բիլարղու սուտ բարեկամ ձեւանալով, Հեթումը եւ Լեւոնը իր քովը կանչեց խորհրդակցելու պատրուակով, եւ զանոնք բռնելով սպաննեց: Ասիկա իմանալով՝ Հեթումի Օշին եւ Ալինախ եղբայրները զօրքերով քալեցին Բիլարղուի վրայ եւ զսպեցին:

Թագաւոր հռչակեցին Օշինը:

ՕՇԻՆ (1308-1320)

Օշին թագաւոր օծուեցաւ Տարսոնի Ս. Սոփիա եկեղեցիին մէջ: 12 տարի յուզեալ թագաւորութիւն մը կատարեց. Եգիպտոսի Մամլուքները սկսան Կիլիկիոյ վրայ արշաւել եւ քանդել: Օշին Պալ եւ եղբայրը Կոստանդին սպարապետ, փոքր գունդերով անոնց դէմ ելլելով՝ ջանացին դիմադրել. Օշին թագաւոր մեռաւ 1320ին:

ԼԵՆՈՆ Գ. (1320-1342)

Օշին՝ իր Լեւոն Գ. տասնամեայ որդին իրեն յաջորդ նշանակած էր եւ անոր խնամակալ անուանած՝ Կոռիկոսի տէր Օշին Պայլը: Լեւոն Գ. երբ չափահաս եղաւ, Օշին Պայլ՝ Պապին եւ Կաթողիկոսին հաւանութեամբ՝ իր Ալիծ աղջիկը անոր կնութեան տուաւ, եւ ինքը եղաւ թագաւորահայր:

Օշին Պայլ, սակայն, իր կորովի վարչութեամբ՝ հաճելի չեղաւ պայատականներուն, որոնց գլխաւորն էր Իզապէլ կամ Ջապլուն, Կիպրոսի Ամօրի թագաւորին այրին, աղջիկը՝ Լեւոն Բ.ի եւ հօրաքոյրը Լեւոն Գ.ի: Օշին Պայլ ձերբակալելով այս կինը իր զաւակներուն հետ՝ բանտ նետեց, ուր ալ մեռան:

Սուրբան Նասր իսլամական միութիւն մը կազմելով՝ արշաւեց Կիլիկիոյ վրայ: Իր դրոշմով թիմուրթաչ Կիլիկիա մտաւ եւ Այասի ցամաքային բերդը գրաւեց: Հայերը քաջերու քանի մը խումբերով անոնց վրայ յարձակեցան եւ վանեցին. գերիներէն մաս մըն ալ ազատեցին: Այդ միջոցին՝ Լեւոն Գ. իր Ալիծ թագուհիէն կասկածելով՝ սպաննել տուաւ զայն, Կիլիկիան խառնակութեան մատնելով: Սուրբան Նասր մեծ բանակով մտաւ Կիլիկիա, պաշարեց Այասը, գրաւեց ու քանդեց. սակայն Հայերը դարձեալ նորոգեցին: Երկիրը այս վիճակի մէջ էր, ո՛չ Եւրոպան, ո՛չ ալ թաթարները կրցան բան մը ընել: Լեւոն ստիպուեցաւ ընդունիլ Նասրի ծանր պայմանները եւ Ջահան գետէն անդին քաշուիլ:

Այս ծանր պայմաններով՝ Կիլիկիոյ հայ թագաւորութիւնը կը մտնէր հոգեվարքի մէջ, որովհետեւ կը կորսնցնէր ոչ միայն ընդարձակ հողամաս մը, երկրի եկամուտին գլխաւոր աղբիւրը կազմող նաւահանգիստը, այլ նաեւ երկրին բանակները եղող կիւրճերն ու կապանները, կտրուելով նաեւ ծովային յարաբերութիւններէն Եւրոպայի հետ: Լեւոն Գ. վախճանեցաւ կամ ըսպաննուեցաւ, ինչպէս ոմանք կ'ըսեն, քսաներկու տարեկանին: Ինքը եղաւ Հեթումեանց ընտանիքին վերջին թագաւորը:

ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐԸ

Լուսինեանները Փրանսական ազնուական ընտանիքի մը կը պատկանէին. անոնցմէ իշխան մը՝ Գուխտոն, Սաչակիրներու հետ Արեւելք եկաւ, եւ պարագաներու բերումով Երուսաղէմի թագաւոր եղաւ. 1187ին կորսնցուց Երուսաղէմի թագաւորութիւնը՝ Սալահէտտինի հետ կռիւի բռնուելով: Անգլիոյ Հոնքարտոս Առիւծասիրտ թագաւորը երբ Կիպրոսը գրաւեց, Գուխտոնի յանձնեց կղզիին կառավարութիւնը: Հոն իրեն յաջորդեց իր կրտսեր եղբայրը Ամօրի, որ ամուսնացաւ մեր Լեւոն Բ. թագաւորի Իզապէլ աղջկան հետ. այս կերպով Հայերը եւ Փրանսացի Լուսինեանները իրարու հետ խնամիացան:

Իզապէլ ծնաւ հինգ զաւակներ, որոնցմէ մէկը՝ Գուխտոն, Կիլիկիոյ թագաւոր պիտի ըլլար:

ԳՈՒԻՏՈՆ (1342-1344)

Լեւոն Գ. ով կը վերջանար Հեթումեան ընտանիքի արական ճիւղը: Լեւոն Գ. իրեն յաջորդ նշանակած էր իր հօրաքոյր Իզապէլի երրորդ որդին՝ Գուխտոն կամ Գիտ կոչուա: Գուխտոն 1342ին հասաւ Կիլիկիա, իր հետ բերելով երեք հարիւր փրանկ զինուորականներ միայն: Թագաւորութեան հանդէսը կատարուեցաւ հայկական ծէսով: Գուխտոն հազիւ Հայոց գահին վրայ բարձրացած՝ Եգիպտացիներն ու Գարաման թուրքերը եկան հարկ պահանջելու. սակայն ան մերժեց եւ քանի մը անգամներ գէնքով քչեց զանոնք: Կիլիկիա մահմետականներու սպառնալիքին տակ կը գտնուէր. Գուխտոն դիմումներ կատարեց Հռոմի Պապին եւ Եւրոպայի արքունիքներուն: Գուխտոն՝ Կղեմէս Զ. Պապին առաջարկեց նոր Սաչակիրութիւն մը կազմակերպել, սակայն չյաջողեցաւ: Մասամբ կրօնական, մասամբ քաղաքական պատճառներով՝ Հայերը սպաննեցին զինքը:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Բ. (1344-1363)

Գուխտոնի յաջորդեց Կոստանդին Բ., Պաղտինի որդին, որ թագաւորական ընտանիքէ չէր, այլ Կիլիկիոյ բարձր ազնուականութենէն. ան Նղրի եւ Բարձրբերդի տէրն էր, եւ խնամիական կապեր միայն ունէր Լուսինեան արքունիքին հետ:


Եգիպտացիները իր ժամանակ դարձեալ նեղեցին Կիլիկիան, եւ Գուխտոնը կոչուած թուրքերը գրաւեցին Այասը: Կոստանդին Բ. Եւրոպայի մեծերուն դիմեց՝ բայց անօգուտ: Գարամանները նոյն տարին գրաւեցին Պապեռոնը, իսկ Հալէպի Սէյֆէտտին էմիրը Կիլիկիա մտնելով՝ գրաւեց Տարսոնը, Ատանան, Այասը, այնպէս որ Կոստանդինի վախճանած ժամանակ շատ անձուկ էին Կիլիկիոյ սահմանները:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. (1365-1373)

Կոստանդին Բ.ի մահէն ետք, երկու քաղաքական հոսանքներ՝ մէկը ազգայնական, միւսը փրանկասէր, իրարու հետ կը կռուէին. ոմանք Լուսինեաններէն թագաւոր կ'ուզէին, Գուխտոնի ընտանիքէն, ուրիշներ կ'ուզէին Կիպրոսի Պետրոս Ա. թագաւորը. վերջապէս ազգայնականները յաղթելով, գահին վերայ դրին Կոստանդին Գ. հայ իշխանը. աս ալ նախորդ Կոստանդինի հօրեղբոր Հեթումի որդին էր, շատ անյարմար մէկը այդ դժուարին օրերուն կառավարութեան գլուխ անցնելու: Կոստանդինի ժամանակ նշանաւոր եղաւ Լիպարիտ անուով դիւցազը, որ քաջութեամբ պաշտպանեց Տարսոնը: Ամենցուկ գետին մօտ եղող կամուրջը պաշտպանելը իրեն յանձնուած էր, սակայն Կոստանդին թագաւորին անհողութեան պատճառով թշնամիէն շրջապատուեցաւ եւ անհաւասար կռիւի մը մէջ Լիպարիտ դիւցազնաբար ինկաւ: Իսկ հայ իշխանները դժգոհ թագաւորէն՝ զինք սպաննեցին: Ասոր մահուան ատեն՝ ծովային եւ դաշտային Կիլիկիան մեծ մասով Եգիպտացիներու ձեռքն էր արդէն. Հայոց կը մնային միայն Սիս եւ Անարզաբա քաղաքները:

ԼԵՒՈՆ Ե. (1374-1375)

Լեւոն Ե.՝ Գուխտոն թագաւորի Յովհաննէս (ձիւան) եղբոր եւ Սուրթան իշխանուհիին զաւակն էր: Լեւոն Կիպրոս կը գտնուէր՝ երբ Հայերը որոշեցին Կիլիկիոյ թագը տալ իրեն. ան մեծ դժուարութեամբ փախաւ Կիպրոսէն եւ հասաւ Սիւ: Երբ Լեւոնի դրօշը պարզուեցաւ Սիւսի աշտարակին վրայ, Հայերը շատ խանդավառուեցան եւ ստիպեցին որ թշնամին քաշուի քաղաքէն: Սակայն շուտով յարուածութիւնը ծայր տուաւ Լեւոնի եւ ազգայնական իշխաններուն միջեւ: Միւս կողմէն երկիրը օրէ օր սնանկութեան կը դիմէր, ուտեստեղէնի պակասը զգալի էր. այս կացութեան առջեւ շատեր կը խորհէին թշնամիին հետ համաձայնիլ եւ սպրիլ Եգիպտացիներուն հովանիին տակ: Լեւոն Ե.ի մասին աւելի ընդարձակօրէն պիտի խօսինք՝ «Սիւսի վերջին օրերը եւ անկումը» գլուխին մէջ:



Լեւոն Ե. թագաւորի դամբանը:
Le mausolée de Lévon V., dernier roi de l'Arméno-Cilicie.

ԼԵՌՆԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱ



Միսի բերդը՝ արևելքից:
La forteresse de Sis, vue de l'est.

ՄԻՍ ԲԵՐԴԱՔԱՂԱՔ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Կիլիկիոյ Հայկական թագաւորութեան փառապանծ մայրաքաղաքն էր Միս, զոր թուրքերը ներկայիս կը կոչեն Kozan: Կը գտնուի Տաւրոսի լեռներուն ստորոտը, Սաուրայ գետակի հովիտին մէջ, որ սրընթաց իջնելով բարձր լեռներէն, կու գայ ու կը շրջապատէ քաղաքը երկու կողմերէն եւ կ'երթայ կը խառնուի ձիհուն գետին: Միս բերդաքաղաքը կը տարածուէր երկու գետերու մէջ եղող հարթ տարածութեան մը վրայ. հրաշալի դիրք մ'ունէր, եւ զինուորական կարեւոր կէտի մը վրայ՝ կը պաշտպանէր, հիւսիսէն եկող թշնամիին առջեւ, դէպի դաշտային Կիլիկիա տանող մուտքը: Քաղաքին կից բարձունքի մը վրայ, ապառաժոտ կարմրագոյն եւ կրային քարաբլուրի մը կատարին, կը բարձրանար Միսի նշանաւոր բերդը, բոլորովին առանձնութեան մը մէջ. խոր անդունդներ եւ անմերձենալի վիհեր զայն կը բաժնէին շրջակայ բարձունքներէն: Միսի բերդը շրջապատուած էր երեք կարգ հսկայ պարիսպներով, որոնք ընդմիջուած էին բարձր աշտարակներով եւ զայն անառիկ կը դարձնէին. բերդին ստորոտէն կ'անցնէր «Միս գետ» կոչուած գետակը:


Մեր պատմիչները անոր դիրքին ու տեղագրութեան մասին չեն գրեր, ուստի պիտի գոհանանք ժժ. դարու ուղեգիրներու տուած նկարագրութիւններով:

Հ. Ղուկաս Ինճիճեան, իր «Նոր Հայաստան» հատորին մէջ՝ 1806ին, հետեւեալ տեղեկութիւնները կու տայ Միսի մասին. «Միս շինուած էր լեռան մը կողքին, անոր առջեւէն կ'անցնէր գետակ մը որ Ամնճուկ կը կոչուէր, եւ անցնելով կ'երթար ու ձիհուն գետին կը խառնուէր: Այս քաղաքը իր շուրջը ունէր մեծ եւ տաշուած քարերով շինուած զօրաւոր պարիսպներ, որոնք դժբախտաբար տեղ տեղ քանդուեր են, եւ ինչ ինչ մասեր ալ բոլորովին անհետացեր են. տեղւոյն բնակիչները անոր պարիսպներէն քարեր հանելով տարեր են եւ մօտակայ գիւղի իրենց տուները այդ քարերով շիներ են:

Միս քաղաքին պարիսպները երկարելով ոլոր ու մոլոր, վեր ու վար ելլելով ու իջնելով լեռներու վրայէն՝ կ'երթան մինչեւ քարաժայռին գագաթը եւ կը միանան Միսի ներքին բերդի պարիսպներուն, ամբողջ քաղաքին հետ կազմելով պաշտպանութեան զանգուած մը: Բերդին մէջ առատ եւ յստակ



Բերդին ընդհանուր տեսքը հարավէն (Մազլումեան):
Vue générale de la forteresse du côté sud (Mazloumian).



Սիս քաղաքը՝ որ կը տարածուի բերդին արեւելեան ստորոտը (Մուտաֆեան):
La ville de Sis qui s'étend à l'est de la forteresse (Moutafian).

Չուր մը կը բխէր, ինչ որ մեծ առաւելութիւն էր ներսիններուն՝ պատերազմներու եւ պաշարումի պարագային: Բերդին կեդրոնը գեղակերտ մատուռ մը կար Ս. Աստուածածնի նուիրուած, ուր ժողովուրդը ուխտի կ'երթար Աղուհացի շորեքշարթի օրը:

Քաղաքին մէջ՝ Ռուբինեանց իշխանութեան օրէն մնացած Սիսի նշանաւոր Ս. Սոփիա եկեղեցին, զոր շինած էր Հեթում Ա., կը գտնուէր քաղաքին հիւսիսակողմը, պարիսպներէն ներս. Թուրքերը զայն Չանկուլը-ֆիլիսա կը կոչէին, իր զանգակատան համար: Սիսի Ս. Սոփիա եկեղեցին ճարտարապետական հրաշալիք մըն էր. դժբախտաբար, երբ Եգիպտացիները գրաւեցին՝ ամբողջութեամբ զայն քանդեցին. եկեղեցի մը՝ որ ամբողջ Կիլիկեան թագաւորութեան շրջանին փառքի պայծառ օրեր տեսեր էր: Եկեղեցիին մօտ էր թագաւորական ապարանքը՝ զոր մեր պատմիչները Դարպաս կը կոչեն. բոլորածեւ շինուածք մըն էր, սրբատաշ, մեծղի քարերով, որոնք իրարու միացուցեր եւ կապեր էին կապարէ գամերով: Բերդաքաղաքը ունէր երեք դուռ, հիւսիսային, հարաւային եւ արեւմտեան կողմերուն վրայ, իսկ արեւելեան կողմին վրայ ունէր երեք մեծ պատուհաններ. երեք դռներուն վրայ գեղեցիկ զարդեր քանդակուած էին. պարիսպներէն ներս էր նաև հասարակաց բանտը:

Բացի արտաքին շինութիւններէն, հոս կար ժայռին մէջ փորուած մեծ քարայր մը, Ասմնձուկ գետակին մօտ. այս քարայրը կրնար իր մէջ ընդունիլ 2000 հոգի. տեղւոյն բնակիչները զայն Կեօվէրնիլիֆ կը կոչեն, որովհետեւ հոն կ'ապրէին հազարաւոր վայրի աղաւնիներ: Այս քարայրին դիմաց կը բարձրանար պարիսպ մը, որ փոքրիկ դուռ մը ունէր, ուսկից միայն կարելի էր այդ քարայրը մտնել: Դրան առջեւ տափարակ տարածութիւն մը կար, եւ պատուհան մը որ գետին վրայ կը բացուէր, ուսկից վար նայելով՝ կ'երեւէին գետին տակ եղող շինութիւնները. այս տափարակ տարածութիւնը՝ նոյն ինքն ստորերկրեայ շինութիւններուն տանիքն էր: Հոս էր Սիսի հին բանտը եւ կամ գանձատունը:

Սիս բերդաքաղաքը իր շուրջը գեղեցիկ եւ օդասուն վայրեր, պտղաբեր պարտէզներ ու այգիներ ունէր. կ'ըսեն թէ Սիսի այգիները 15 տեսակ խաղող կը հասցնէին: Քաղաքին շուրջը կ'երեւին մենաստանի մը պարիսպները, իսկ պարիսպներէն դուրս քարի մը կուրծքէն կը բխի հրաշալի աղբիւր մը անմահական ջուրով:

Սիսէն մէկ ժամ հեռու կը գտնուէր նշանաւոր Արֆալազնի կոչուած մենաստանը, այսպէս կոչուած ժամանակին իր շուրջը բազմաթիւ եւ խիտ կաղնիի անտառներ ունենալուն համար: Կը պատմեն թէ վանքը անտառի կաղնիներուն մէջ կորսուած էր, Սիսեցիները չէին գիտեր անոր տեղը: Սիսի Միքայէլ Կաթողիկոսի օրով, 1737ին, վանքի մը մի քանի միաբաններ գիրքերու մէջ կը կարդան՝ թէ Սիսի դիմացն էր Արքակաղնի վանքը. անոնք սկսած են փնտռել անտառներուն մէջ այս վանքը, եւ զայն գտած են կաղնիներու մէջ ծածկուած, ու մեծ ուրախութիւն պատճառեր է այս գիւտը Սիսեցիներուն՝:

1. Հմտ. Ինձիճեան Է. Ղ., Աշխարհագրութիւն. Հայաստան, էջ 360-363:

Միսի բերդը ուժեղ էր եւ անմատչելի կը համարուէր, զայն շինած էր Լեւոն Ա., սակայն այս բերդը ամրացնելու գործին ջանք թափած եւ աշխատած էին Կիլիկիոյ գրեթէ բոլոր հայ թագաւորները՝ ԺԲ. դարէն սկսեալ մինչեւ պետութեան անկումը:

Միսի բերդը՝ որ կը բարձրանար լեռան մը կատարին, իր դիրքին եւ լեռներու ելեւէջին համաձայն զանազանեալ ձեւ ունէր եւ բաժնուած էր երեք անջատ մասերու, որոնք իրարու հետ հաղորդակցութեան մէջ էին ներքին եւ ստորերկրեայ ճամբաներով: Բերդին հաստ պարիսպները մեծ մասով կիսակլոր էին, իրարու մօտ կային աշտարակներ եւ կը համապատասխանէին տեղւոյն եւ դիրքին տարբերութեանց. անոնք զանազան բարձրութեամբ չափեր ունէին: Ստորին մասերը աւելի լաւ ամրացուած էին, հոն կը գտնուէր նաեւ ստորերկրեայ ջուրի ամբարանոցը, ուր կարելի էր սանդուխով իջնել: Բերդի եկեղեցին ու պալատականներու յատկացուած շէնքերը եւ ջրամբարը կը գտնուէին բերդին հիւսիսային մասին վրայ. բերդին բոլոր մասերուն վերայ ալ կային բնակելի շէնքեր, որոնցմէ ոմանք փորուած էին բերդի քարտայուերուն մէջ²:

ՊԱՏՄԱԿԱՆ

Միս բերդաքաղաքին եւ անոր բերդին շինութեան թուականը եւ շինողին անունը մեզի անծանօթ կը մնան: Ոմանք կը համարին թէ քաղաքը եւ անոր պարիսպները շինած են Հռոմէացիները՝ երբ հոն կ'իջևէին, որովհետեւ հոն գտնուած են հռոմէական դրամներ. սակայն ասիկա Հռոմէացիներէն շինուելուն որոշ փաստ մը չի կրնար ըլլալ: Ամէն պարագայի՝ իր կարծ անունը հնութեան նշան է:

Ալիշան կը համարի թէ Միս անունին առաջին անգամ կը հանդիպինք Ե. դարուն՝ Միսան ձեւով, Թէոդորեոսի գրիչէն՝ Ս. Սիմոն Սիւնակեացի վարդին մէջ³: Երուսաղէմի եւ Անտիոքի հին լատին թեմազրութեան մէջ ալ կը գտնենք Չ. դարուն Միսիա (Sisia կամ Sysia) կամ Միս ձեւերը⁴: Թէքսիէ կ'աւանդէ թէ Միսի մէջ կը նշմարուին հռոմէական կարեւոր հնութիւն-

2. Միսի մասին կը գրէ Տրնտլի ուղեցոյց-ատլասը. «Kozan, à proximité de l'ancienne Sis, capitale de la Petite Arménie au XII^e siècle, dotée d'une imposante forteresse Bizantino-arménienne dont l'enceinte était garnie de 44 tours; elle comportait de vastes magasins creusés en profondeur dans le roc, des citernes et des souterrains» (Turquie, Guide-Atlas DENOEL, p. 179).


3. «Κώμη τις εστίν έν μεθορίω τής γμετέρας και τής Κιλικίων χώρας διακεμένη. Σισάν δέ αὐτήν έννομάξουσιν» (Մեր եւ Կիլիկիացիներու երկրին սահմանին վրայ՝ աւան մը կայ, որ Միսան կը կոչեն) (THODORETUS CYRENSIS, Historia religiosa seu ascetica vivendi ratio, xxxvi; PG, 82, սիւն. 1465).

4. Հմմտ. Միսուան, էջ 213 յջ.: Ուրեմն անհիմն է Արար պատմիչներու աւանդութիւնը թէ Միս շինուած ըլլայ Հարուն էլ Ռաշիտի մէկ ներքինիէն՝ որ Միսիյէ կը կոչուէր (Հմմտ. Միսուան, անդ.):

ներ, որոնք կը փաստեն քաղաքին հնութիւնը⁵: Այս կարգի հնութիւններէն է նաեւ Տէլի-շայ գետակին վրայի կամուրջին մէկ մասը⁶:

696ին՝ Միս կը գրաւուի ու կը քանդուի Խունէի որդի Ադիպ կամ Եղիտէ. Թէոփանէս, որ դէպքը կը պատմէ, քաղաքը կը կոչէ τὸ Σίσιον καστρον⁷:

Ը. դարուն սկիզբները, 809ին, ըստ աւանդութեան Միսի հայ բնակիչները Արարներէն հալածուած, Տաւրոսի լեռները կ'ապաստանին. բայց երբ Արարները կը հեռանան Կիլիկիայէն, անոնք կը վերադառնան ու կը վերաշինեն Միսը եւ կը զարդարեն զայն ուրիշ հաստատութիւններով⁸:



Միս բերդի յատկագիծը:
Plan de la forteresse.

Ռուբինեան իշխաններուն այս կողմերուն տիրանալէն առաջ, 1114ի 13 Նոյեմբերին, սաստիկ երկրաշարժ մը տեղի կ'ունենայ, եւ Կիլիկիոյ շատ մը քաղաքներ քարուքանդ կ'ըլլան: Մ. Ուռհայեցի կը գրէ այս սարսափելի երկրաշարժի մասին՝ թէ Միս եւս քարուքանդ կ'ըլլայ. «Եւ յայսմ գիշերի կործանեցաւ Սամուսատ քաղաք եւ Հասան-Մսուր, Քեսուն եւ Ռապան, եւ Մարաշ քաղաք ահաւոր եւ կործանեցան ողիք իբրեւ քառասուն հազար, զի էր բաղամբոխ քաղաք, եւ ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ մի: Եւ յայպէս ի Միս քաղաք կործանեցաւ անթիւ (բազմութիւն) արանց եւ կանանց, եւ այլ բազում գեղք եւ վանորայք...»⁹: Ասիկա ցոյց կու տայ թէ Միս բազմամարդ քաղաք մըն էր այդ թուականին:

5. TEXIER, Asie Mineure, p. 583.

6. Միսուան, էջ 214:

7. «Τούτω τῷ ἔτει Ἄξιθος ὁ τοῦ χουναί ἀπεστράτευσεν τῇ Κιλικίᾳ καὶ πολιορκήσας τὸ Σίσιον κάστρον κατέλαβεν» (THEOPHANES, Chronographia, I, p. 570). (Նոյն տարին Խունէի որդին Ադիբոս Կիլիկիոյ վրայ յարձակեցաւ եւ յետ պաշարելու Միսիոնի բերդը՝ զայն գրաւեց): Ադիպ ետ կը մղուի Տիրեբոս կայսեր եղբոր Հերակլէսի կողմէ (անդ):

8. Հմմտ. Միսուան, անդ.:

9. ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, ՄԺԷ, էջ 416:

Լեոնային Կիլիկիոյ եւ Սիսի՝ առաջին անգամ տէր կը դառնայ Թորոս Ա. եւ ապա Թորոս Բ. ու 1175ին՝ Մլեհ. սակայն այս վերջինս գէշ բնաւորութիւն ունենալով, իր իշխանները զինք Սիսի մէջ կը սպաննեն. «Իշխանքն Մլեհի խորհեցան խորհուրդս անօրէնութեան եւ միաբանեալ սպանին զնա ի քաղաքն Սիս, յաղազս անհանգիստ բարուց իւրոց»¹⁰:

Սակայն Սիսի բուն տիրողը եւ շինողը եղած է եւ կը ճանչցուի մեր պատմիչներէն Լեւոն Ա., որ հաղիւ թագաւոր եղած՝ ձեռք կը զարնէ եւ կը վերաշինէ նախ Սիսի պարիսպները եւ անոր միջնաբերդի պարիսպները, այնպէս որ Լեւոնի թագաւորութեան շրջանին՝ Սիսի բերդը իր շրջապարիսպով ամուր եւ անառիկ վիճակի մէջ էր արդէն. սակայն 1187ին Ռըստամ Թուրքը մեծ բանակով Կիլիկիա կը մտնէ եւ ուղղակի Սիսի վրայ յարձակելով զայն կը պաշարէ. «եւ զնաց մինչեւ ի Սիս, եւ բնակեցաւ առաջի քաղաքին յիսպինն, եւ ծածկեաց զերեսս երկրի անհամար բազմութեամբ»¹¹:

Լեւոն Ա. այնքան զօրաւոր եւ վստահ էր իր քաղաքին անառիկութեան՝ որ իր սակաւաթիւ զօրքերով քաղաքի պարիսպներէն դուրս խոյսցաւ ու կոտորելով թշնամին՝ զայն քշեց մինչեւ Մարաշի սահմանները, «մինչեւ ի քարն Սարվանդաւի...», եւ Ռըստամէն ետ առաւ գրաւած աւարն ու գերիները¹²: Լեւոնի այս պատերազմին եւ յաղթանակին մասին կը գրէ Գրիգոր Տղայ չափածոյ հետեւեալ տողերը.

«Էառ զաւարըս գերողին,
Չանբաւ ժողով բանականին,
Էած ի մայր իւր քաղաքին,
Որ է Սիսուան անմատչելին»¹³:

Ասկից կը հետեւի որ 1193 թուականէն առաջ, Սիս իբրեւ բերդաքաղաք բաւական զօրաւոր էր, սակայն ստորին պարիսպները տակաւին շինուած չէին:

Այս դէպքերէն շուրջ քսան տարի ետք (1211-1212) Վիլլեպրանտ գերմանացին Լեւոնի քով ամիս մը հիւր եւ պատգամաւոր դալով, կը սքանչանայ Սիսի շինութիւններուն եւ զբօսավայրերուն վրայ եւ կը գրէ. «Ասիկա է Տէր Թագաւորին գլխաւոր քաղաքը, որ անհամար եւ հարուստ բնակչութիւն մը կը սնուցանէ: Երջապատուած չէ պարիսպներով. ուստի զայն աւելի աւան մը քան թէ քաղաք մը պիտի կոչէի, եթէ հոն չըլլար Հայերու Արքեպիսկոպոսական (իմա՛ Կաթողիկոսական - Հ. Մ. Յ.) աթոռը, ուր Յոյներն ալ անոնց Պատրիարքին կը հնազանդին: Իսկ քաղաքին վրայ՝ լեւան մը բարձունքին՝ կայ բերդը, որ շատ լաւ ամրացած է եւ որուն ստորոտէն քաղաքը կարգաւոր կերպով ու աստիճանաբար դէպի վար կը տարածուի. կ'ըսուի թէ այս քաղաքը ժամանակին պատկանած ըլլայ Դարեհ թագաւորի, զոր պարտու-

10. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 191-192:
11. Անդ, էջ 200:
12. Անդ:
13. Սիսուան, էջ 214:

թեան մատնեց Աղեքսանդր... Սա ալ աւելցնենք որ Տէր Թագաւորը այս քաղաքին կից իրեն համար զբօսավայր պարտէզ մը շինած է, որուն գեղեցկութիւնը նկարագրելու անկարողութիւնս կը խոստովանիմ»¹⁴:

Շատ բնական էր որ Մեծն Լեւոն ամէն բանէ առաջ զօրացնէր եւ չէնցընէր Սիսի բերդը, որ իր ժամանակ եւ իրմէ վերջ յաջորդող թագաւորներուն ամուր ապաստանարանը եղաւ, ինչպէս նաեւ վերջին կոուանն ու կայքը Հայկական թագաւորութեան, յետ՝ երկու հարիւր տարիներ՝ յաղթանակներու եւ պարտութիւններու հանդիսավայր ըլլալու. ոմանց՝ փառքի տեղ, ուրիշներու՝ սուգի եւ կորուստի, քանի որ Սիսի բերդը երբեմն արգելարան ալ եղաւ նշանաւոր անձերու, ինչպէս Անտիոքի Պեմունդ Բրիւնձին՝ զոր 1193ին Լեւոն Մեծն ձերբակալելով հոն բանտարկեց: Լեւոն՝ որքան որ տակաւին Տարսոնը իբրեւ հին մայրաքաղաք կը պահէր եւ հոն կը կատարէր արքայական հանդէսներ, հիւրերու եւ դեսպաններու ընդունելութիւններ, սակայն որոշ է որ իբր հաստատուն եւ ամուր կեդրոն ունէր Սիսը, ուր էր նաեւ իր արքունիքը, եւ կարելի է զայն Կիլիկիոյ եւ իր պետութեան սիրտը կոչել: Սիսի մէջ էր որ Լեւոն Ա., ԺԲ. դարու վերջերը, Հոռմի Եկեղեցիին հետ սիրոյ եւ միաբանութեան դաշինք դրաւ, որմէ վերջ Հոռմի Պապէն ստացաւ Ս. Պետրոսի դրօշը՝ ի նշան ուխտին եւ թագաւորութեան:

Լեւոն Ա.ի չբաւեցին երեսուն տարիներ՝ ամբողջացնելու համար Սիսի շինութիւնները. զայն իր յաջորդներուն թողուց որ լրացնեն, գեղեցկացնեն եւ զօրացնեն: Զապէլ եւ Հեթում Ա.՝ Լեւոնի այս կտակը շարունակեցին կատարել. անոնք չէնցուցին Սիսը: Իսկ Լեւոն երբ մեռաւ, որքան որ զինքը Ակներ վանքին մէջ թաղեցին, սակայն յետոյ Սիս փոխադրեցին՝ իրմէ շինուած եկեղեցիին տապանին մէջ, Ակների մէջ թողլով փորոտիքը¹⁵:

Լեւոնի մահէն ետք Սիսի գլխուն դժբախտ օրեր եկան: Եդիպտացիները, 1266ին, եւ յետոյ Հեթում Ա.ի եւ Լեւոն Բ.ի օրով, մեծ բանակներով յարձակեցան Կիլիկիոյ վրայ, քաղաքներ յաջորդաբար ինկան անոնց ձեռքը, հուսկ եկան եւ պաշարեցին նաեւ Սիսը: Այս տխուր դէպքերը կը նկարագրէ Սմբատ Սպարապետ. «յաւար առին զքաղաքն, ապա հուր եղեալ յամենայն չէնս և հրկէզ արարին առ հասարակ, եւ գերելոցն եւ սպանելոցն ոչ գոյր

14. VILLEBRANDI ab OLDENBURG Itinerarium, pp. 14-15: «Haec est capitanea civitas Domini Regis, infinitos et divites fovens inhabitantes; nullis munitio-nibus cingitur: unde potius eam villam quam civitatem nuncuparem, si sedem Archiepiscopalem Hormenorum in se non haberet; in quo etiam Graeci suo obediunt Patriarche. Castrum vero habet super se situm in monte, valde mu-nitum; a cuius pede ipsa civitas ordinate et gradatim descendere videtur: et ut dicunt, haec aliquando a Dario rege quem Alexander devicit, posside-batur; ... Illud etiam scitote, quia Dominus Rex juxta hanc civitatem hortum deliciarum sibi praeparavit; ad cuius delicias describendas meam confiteor insufficientiam».

Վիլլեպրանտ կը նկարագրէ նաեւ Սիսի մէջ Աստուածայայտնութեան տօնակատարու-թիւնը եւ Զբօսնէքի արարողութիւնը՝ որոնց ներկայ գտնուած է:

15. Հմմտ. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 223: ՎԱՀՐԱՄ ԲԱՐՈՒՆԻ, էջ 217: Սիսուան, էջ 215:



Դարպասի բուրգերը՝ հարաւ-արեւելքէն (Հելլենկեմպեր):
Les tours du tarbas vues du sud-est (Hellenkemper).

թիւ. եւ պատերազմեալ ի վերայ բերդին եւ նեղէին տալ զբերդն, եւ նոքա ոչ առին յանձն: Իբրեւ տեսին անօրէնքն թէ ոչ կարէին ստնանել բերդին, առ հասարակ զլեռնակողմն եւ գղաշտն հրկէզ արարեալ աւերեցին»¹⁶:

Այս նշանաւոր կոիւին մէջ, Միսի բերդը որքան որ իր անմատչելի եւ անառիկ ըլլալը ցոյց կու տայ, սակայն Հեթում Ա. այլեւս խաղաղ եւ հանգիստ օրեր չ'ապրիր. իր կեանքը կ'անցընէ շարունակ պատերազմներու մէջ, եւ շատ անգամներ Միս կը պաշարուի, կը գրաւուի եւ քանդումներու կ'ենթարկուի, մանաւանդ ստորին քաղաքը, որ թէեւ երեք անգամ շինուեցաւ, զարգարուեցաւ, սակայն առաջին փառքի օրերուն չհասաւ. այնպէս որ չենք գիտեր թէ ինչպէս էր Միս Հեթումի օրերուն: Պատմիչներէն ոչ ոք նկարագրած է Հեթումաչէն Միսի փառքը եւ գեղեցկութիւնը, միայն կայ զայն ողբացող պատմիչ մը, Վարդան Վարդապետ Արեւելցի, որ կը գրէ. «Սմբոթ (Սիմ-էլ-Մաւթ - Հ. Մ. Յ.) յանպատրաստից մտեալ յաշխարհն՝ առնու զՄիս մայր քաղաքաց՝ զարքայանիստն, այրէ զնա եկեղեցեօքն որ ի նմա, եւ զբոսանէ զտունն գետնափոր գանձուցն, եւ առնու յոյժ բազում, զոր ի միում ամանի լինել ասեն վեց հարիւր հազար կարմիր»¹⁷:

16. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 247:
17. ՎԱՐԴԱՆ ՊԱՏՄԻՉ, ՀՎ. ՂԹ, էջ 162:

Վարդանի ժամանակակից Մաղաքիա եւս կը գրէ. «զՄիս քաղաքն այրեցին՝ որ էր նստոց թագաւորին Հայոց. եւ զգովելի մեծ եկեղեցին (Ս. Սոփիա)՝ որ ի մէջ որսայն փայտ ձգեալ այրեցին, եւ զշիրիմս թագաւորացն քակեցին, եւ զբազումս կոտորեցին ի քրիստոնէիցն եւ զբազումս քերեցին ի յերկրէն եւ ի գեւղորէիցն»¹⁸:

Միսի բերդը եւ քաղաքը Կիլիկեան թագաւորութեան ամբողջ շրջանին փառաւոր օրեր կ'անցընեն: Միս այժմ լքուած եւ աւերակ է, բերդը կէս կանգուն պարիսպներով կը հսկէ դաշտագետնին մէջ ցրուած բազմաթիւ գիւղերուն վրայ. այնքան բարձր է, որ մէկ ժամէն հազիւ կարելի է վեր բարձրանալ: Բերդին պարիսպներէն մեծ մաս մը տակաւին կանդուն են, երեք դռներ եւ քանի մը աշտարակներ ամբողջութեամբ ոտքի վրայ կը մնան, որոնց վրայ կը տեսնուին նետաձուլութեան համար մասնաւոր ծակեր: Բերդին ճիշտ կեդրոնը կը բարձրանայ «ներքին կլան», ինչպէս կ'ըսեն, որուն սենեակներէն մէկուն մէջ քանդակուած կը տեսնուէին հետեւեալ արձանագրութեան քանի մը տողերը.

Ի ԹՈՒԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ... ՀԵԹՄՈՅ ԹԱԳ...¹⁹

Այս դղեակին քովէն սանդուխներով գետնափոր ճամբայ մը կ'երկարի դէպի վար, ուր կը գտնուի ջրամբարը. հոն մինչեւ այսօր տակաւին կը հոսի պաղուկ աղբիւրի մը ջուրը, զոր տեղացիները բժշկարար կը նկարեն:

Միսի բերդը այնքան նշանաւոր եղած է իր անառիկ դիրքով եւ ամուր պարիսպներով, որ Կոստանդին Բ. Միսի անունով մասնաւոր դրամ ալ կոխել տուած է բերդին պատկերով, ուր Միսի բերդը թագաւոր կը հռչակէր հետեւեալ բառերով.

ՍՍՈՅ ԲԵՐԴՆ Է ԹԱԳԱՒՈՐ²⁰

Այս դրամը կոխուած է 1345-1365ի շրջանին, երբ Կիլիկիա իր փառքի վերջին օրերը կ'ապրէր: Կոստանդին Բ. (Պաղտին մարաջխտին որդին) կ'ուզէր իր թագաւորութիւնը բռնի կերպով պարտադրել հայ ժողովուրդին ժողովուրդը զինքը չէր սիրեր, եւ որպէսզի Կոստանդին Բ. ցոյց տայ թէ պէտք էին ընդունիլ զինքը եւ հնազանդել իրեն ու ճանչնալ զինքը Կիլիկիոյ տէր, այս դրամը կոխել կու տայ, ցուցնելու համար թէ ինքն է Միսի բերդին տէրը եւ Կիլիկիոյ թագաւորը:

Կիլիկիոյ հայկական թագաւորութիւնը երբ իր վերջին օրերը կ'ապրէր 1375ին, ինչպէս պիտի տեսնենք, Եգիպտացիները կը գրաւեն Միսը. անկէ

18. ՄԱՂԱՔԻԱ ԱՐԵՂԱՅ, էջ 40: Հմմտ. Միսուան, էջ 215. Ալիւան կը կարգայ նորում] որսայն (անդ):
19. Միսուան, էջ 216:
20. Անդ:



«Ներքին կլայ» կամ
միջնաքերդ (Մազլումեան):
La citadelle (Mazlounian).



Դիտարանին հիւսիսային կողմը
(Մազլումեան):
Le côté nord du donjon
(Mazlounian).
▽

վերջ մեր պատմիչները կը լռեն եւ չեն խօսիր Սիսի մասին, զայն ծածկելով մոռացութեան քողին տակ:

Նոյն շրջանի ժամանակակից եւ ականատես ժամանակագիրները ցաւով սրտի քանի մը տողեր հազիւ կը յանձնեն թուղթին, վերջին անգամ մ'ալ ողբալով Հայոց Սիս մայրաքաղաքին փառաւոր անցեալը: Հոս կու տանք այդ քանի մը յիշատակարանները, իբրեւ պատմական ակունքներ, քաղելով Հայաստանէ:

«Ի ՊԻԴ Թուին (1375) բարկացաւ Աստուած ի վերայ քաղաքին Սիսոյ, ու սղարեցին զբերդն սեպտեմբերէն ու մինչուր ի յապրիլ ԺՁ ու տուին ըզբերդն օրն ուրբաթ, ոչ այլ իրաց քանց ի սովոյ, որ մարծպան մի ցորենի ԳՃ ԳԲ (300 կիլիկեան դահեկան – Հ. Մ. Յ.) չէր ի գտվել, որ կերան կատու վ'էշ. ու այս սաստ էր յԱստուծոյ, յաղազս ծովացեալ մեղաց մերոց մատնեաց զմեզ ի ձեռս թշնամեաց մերոց: Ով տեսնոյր զմեզ խաչերոյն արհամարհանքն ու զաստուածաշունչ զրվոյն կտրտել, զսուրբ սեղանուն կործանելն...»:

«Ի մեծ թուիս Հայոց ի դառն եւ նեղ ժամանակիս, ՊԻԴ, յորում ամիս առաւ քաղաքն Սիս. եւ ես նուաստ եւ սուտ անուն եպիսկոպոս Զաքարէ պատահեցայ անդ: Բայց զողբ եւ զողորմազին բանս զոր ետես ակն իմ, ո՞ կարէ պատմել զրով. զի տեսի զակունք պայծառ եւ զարեզակունք, զաստեղս եւ զլուսինս զի կային անկեալ ափի»:

«Ի թուականութեանս Հայոց ՊԻԴ, առաւ Սիս ի քրիստոնէից. եւ էր ժամանակին յայնմիկ կաթողիկոս Հայոց Տէր Կոստանդին Դ., արի, իմաստուն եւ հանճարեղ, եւ էր թագաւոր Հայոց Պր. Լեւոն, որդի Բրնձին. սա թագաւորեաց Հայոց ամ մի: Սա վարեցաւ գերի յԵգիպտոս՝ թագուհով իւրով եւ որդւով. բայց թագուհին Մարուն, եկաւ կեցաւ յԵրուսաղէմ զամս երիս, եւ հանգեաւ ի Քրիստոս. թաղեցաւ առաջի դրան Ս. Յակովբայ»:

«Առին զՍիս Շամայ հեծելն, ի թուին ՊԻԴ, ապրիլ ամիս ԺԲ. բերին զկաթողիկոսն Կոստանդին եւ զասորի պատրիարքն եւ զթագաւորն Լեւոն: Յուրիս ԺԱ դարձաւ ի հետ կաթողիկոսն եւ այլք իշխանք. եւ Մարիուն թագուհին յօգոստոս ամիս Զ: Էր սուլթանն Մսրայ Աշրաֆ Մելիք Նասրի թոռն, Ամիրխունաց տղայ: Արգիլեցաւ թագաւորն ի Մսրբ եօթն տարի. եւ յորժամ եղեւ թիւն ՊԼԱ (1382), Հոկտ. Ա, երեկ Ֆրանկ տեսպան ի Քոստլանաց, ու խառ զինքն ու զնացեր»²¹:

Անցեալ դարու հնախոյզներէն Սիսի մասին յատկապէս շահեկան տեղեկութիւններ կու տայ Վ. Լանկլուա. հոս կ'ամփոփենք իր նկարագրութիւնը²²:

Ատանայի հիւսիս-արեւելքը կը տարածուի ընդարձակ եւ անջրդի դաշտ մը, ուր տեղ տեղ կը բարձրանան փոքր բլուրներ: Հոսուն ջուր չկայ: Եթէ

21. Հայաստան, ԹԿ, էջ 542 յԸ.
22. V. LANGLOIS, Voyage en Cilicie, էջ 380-407. հայ. թրգ. ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ԱՇՃԵԱՆ, Սիս քաղաք եւ կաթողիկոսարանը, «Հասկ», ԼԹ (1970), էջ 440-448:

չըլլային քանի մը ճահիճներ, արեւահար թուփեր եւ հսկայական եղէգնուտներ, որոնք կ'աճին Կիլիկիոյ ճահճային այս շրջանին մէջ, անապատի մէջ կը զգայիք դուք ձեզ:

Ատանայէն տասը ժամ հեռու կը գտնուի Իմամ օղլու Քէօփրիւսի խանը, որուն մօտէն բխող ջուրը կ'երթայ ու կ'անհետանայ դաշտին մէջ: Այս խանէն մինչեւ Սիս ութը ժամուան ճամբայ կայ կտրելիք: Շատ հեռուէն կ'երեւի Սիսի բերդը, որ հորիզոնին վրայ բացուող առաջին բարձունքին վրայ կը հանգչի արծուերոյնի մը պէս:

Սիս քաղաքը ամփիթատրոնի պէս կը տարածուի Տաւրոսեան լեռնաշղթային մաս կազմող ժայռոտ լեռան մը կողին: Տարսոնի եւ Ատանայի նման Սիսի տուններն ալ տախտատանիք ունին, բայց այնպէս մը շինուած են, որ մէկ շարքի տուներուն տանիքները յաջորդ շարքին համար կը ծառայեն իբրեւ փողոց: Վանքը շինուած է քաղաքին վերը, դէպի հիւսիս. զայն շատ հեռուէն կարելի է նշարել իր բարձր կառուցումներուն շնորհիւ: Իբրեւ թըրքական հաստատութիւն՝ Սիսի մէջ կան մզկիթ մը եւ շուկայ մը միայն: Բերդը կը պսակէ ժայռը, որուն վրայ է կառուցուած: Հոն կը տեսնուին արեւախանձ թուփեր, չորցած խոտ եւ արածող կենդանիներ:

Քարապունա չայը, ուր կը թափի նաեւ Տելի-սու գետակը, քաղաքի ստորոտին ոլոր մոլոր կը յառաջանայ:

Սիսը գրաւուեցաւ Եգիպտացիներէն եւ քարուքանդ եղաւ. Կիլիկեան հայ թագաւորներու շինած պալատներէն եւ եկեղեցիներէն կը մնան մասեր միայն. նշանաւոր է Սիսի բերդը, ուր երկու ժամէն հազիւ կարելի եղաւ բարձրանալ, տաժանելի մագլցումէ մը վերջ, ժայռէ ժայռ ցատկելով: Միջնադարեան բոլոր բերդերուն նման, Սիսի բերդն ալ լքուած է արդէն. բերդը ձուածեւ է, երեք դուռ ունի, նոյնքան պարիսպներ եւ բազմաթիւ շէնքեր: Ժայռին բնական կազմութեան պատճառով, պարիսպները անկանոն են, անհաւասար բարձրութեամբ կառուցուած: Աշտարակներ եւ ամրակուռ դիրքեր ցրուած են ամէն կողմ:

Շինութեան անկանոնութեան պատճառով, բերդը բաժնուած է երեք տարբեր մասերու, եւ կը հանգչի երեք տարբեր ժայռային խարխիւներու վրայ, բայց իրարու հետ հաղորդակցութեան մէջ են ներքին կառուցումներով, ժայռափոր անցքերով:

Հարաւային կողմին վրայ կը գտնուի բերդին լաւագոյն պաշտպանուած բաժինը, թագաւորին բնակավայրը:

Լեւոն Ա. երբ կը վերանորոգէր Սիսը՝ զայն կ'օժտէր անառիկ դղեակով մը. ան լաւ ըմբռնած էր որ իր երկրին ապահովութիւնը կախում ունէր իր ընտրելիք բնակավայրէն: Տարսոն, Ատանա, Կոռիկոս եւ Մամեստիա, իրենց դաշտային դիրքով աւելի մատչելի էին եւ թիրախ անհաւատներու յարձակումներուն: Ընդհակառակը, Սիսը իր դիրքով, իր ժայռերով մեծագոյն դժուարութիւններ կը յարուցանէր իսլամ արշաւողներուն եւ թոյլ կու տար որ Հայերը ազդու դիմադրութիւն մը կատարէին:

Լեւոն Ա. բերդին կառուցման սկսաւ 1186ին: Գործը շարունակեց եւ իր լրման հասցուց իր փեսան Հեթում Ա. թագաւորը: Բերդին աշտարակին մէկ պատին վրայ կայ այս արձանագրութիւնը.


Ի ԹՈՒԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ

.... ՀԻՅԱ. ԱՇՐԱՀ

.... ՀԻ ՀԵԹՄՈՅ ԹԱԳ...²³


Թերի է այս արձանագրութիւնը, բայց մեզի մտածել կու տայ թէ Հեթումի օրով կա'մ աւարտած էր շինութիւնը եւ կամ կառուցումը բաւականին յառաջացած էր որ ան հոն կը բնակէր:

Աշտարակի հիւսիսային կողքին ստորերկրեայ աւազան մը կար, անոր կողքին ալ ուրիշ գաղտնի ճամբայ մը՝ որուն դուռը այժմ փակ է: Բերդին բարձրագոյն մասը, որ կը գտնուի լեռան երկրորդ ժայռին վրայ, ասպատակներու ժամանակ աւելի ծանր վնասներու ենթարկուած է. շատ տեղեր կարելի է տեսնել սփյափոյ նորոգութիւններ եւ ամրացումներ, որոնք վատարուած են վստահաբար թշնամիին հարուածներուն ներքեւ:



Մեծն Լեւոնի արձանագրութիւնը (Մագլումեան):
L'inscription de Lévon le Magnifique (Mazloumian).


23. LANGLOIS, անգ, էջ 385, «Հասկ», էջ 442: Ինչպէս կը տեսնուի, Լանկուայի ընթերցումը մասամբ կը տարբերի Ալիշանի վերոյիշեալ ընթերցումէն. «Հասկ»ի թարգմանութիւնը կը կարդայ. «Ի Թուականիս Հայոց... Աշխարհ... Հեթոյ թագ»:



Հարավ-արևմտեան պարիսպներ (Մութաֆեան):
Murailles sud-orientales (Moutafian).



Արևելեան պարիսպներ (Մութաֆեան):
Murailles orientales (Moutafian).



Արևելեան պարիսպներ (Մութաֆեան):
Murailles orientales (Moutafian).

Դէպի երկրորդ բարձրութիւնը տանող ճամբուն վրայ կը գտնուի ջրամբար մը, որ սքանչելի ջուր մը ունի. կ'ըսեն թէ այս ջուրը միշտ նոյն մակարդակին վրայ կը մնայ: Քիչ մը անդին քարայր մըն ալ կայ, որ հայերը Աղաւնատուն (Կէօվերճենլիք) կը կոչեն: Բերդին երեք մասերուն մէջ ալ կը տեսնուին հետքեր երկրորդական շինութեանց, վիճափոր բանտ, խանութ, զինարան եւայլն:

Սիսի բերդը անառիկ նկատուած էր՝ իր վտանգաւոր եւ անմատչելի դիրքին շնորհիւ:

Արքայական պալատը կը գտնուէր հոն, ուր յետոյ կառուցուած է նոս վանքը եւ կաթողիկոսարանը Կիրակոս Աջապահեանի օրով (1797-1822)²⁴: Պալատին քարերը օգտագործուած են նոր կաթողիկոսարանի շինութեան համար (1810):

Սիսի այցելուներէն եղած է մեր օրերուն, 1962ին Պոլսոյ քահանայ հայրերէն՝ Տ. Շաւարշ Պալլմեան, որ կու տայ հետեւեալ նկարագրութիւնը իր տեսածներուն մասին: Գրութիւնը հրատարակուած է Պոլսոյ «Ժամանակ» օրաթերթին մէջ, որմէ արտատպած է «Ազդակ»: Իր շահեկանութեան պատճառով հոս կը ներկայացնենք կարելոր մասերը այդ ուղեգրութեան, տալով նաեւ ինչ որ չի վերաբերիր ուղղակի Սիսի բերդին:

24. Հմմտ. նաեւ Սիսուան, էջ 217-218: ՕՐՄԱՆԵԱՆ, 9, հ.մ. 2326, սիւն. 3403:

«Սեւ Լեւոն ճամբորդութենէս վերադարձիս, առանց ճաշելու, ուղղակի Միսի մայրավանքին աւերակները տեսնելու գացի: Հսկայ պարիսպներու մէջ խոշոր քարակոյտ մը միայն գտայ:

«Մայրաքաղաքի արեւելեան պատին խարխիւները այդ շէնքին հոյակապ կառուցուածքի մասին վկայութիւն կու տան:

«Վերի բերդէն եկող ջուրի ճամբան տեսանելի է. ժայռերու մէջ փորուած եւ կամ թէ բնական քարայրները փրենց լուսթեան մէջ հին օրերու կործանած փառքերուն թախիժը կ'արտայայտեն: Ոլոր ու մոլոր, խորդ ու բորդ եւ սուր քարերով ճամբաներէն կ'անցնիմ, օձեր կը Փշան. ես կ'ուղղուիմ իջխաններու բերդը...:

«Փորուած ժայռէ սանդուխներէ վեր կ'ելլեմ, կամարներէ կ'անցնիմ, սենեակներ կը մտնեմ: Առանց դադար առնելու կը շտապեմ բերդին կատարը հասնիլ:

«Ահա վերջին հանգրուանը: Մեծ աշտարակին պատին վրայ կը կարգամ "Իշխանիս Հայոց": Մեծ յուշաքանդակին վրայ այսչափը միայն կը կարդացուի: Այս յիշատակարանն ալ ընդօրինակելէ վերջ կոթողներու մէջ սկսայ շրջիլ, մէկուկէս մեղրէ աւելի բարձր սիւնի մը առջեւ նորէն կեցայ: Խոշոր երկաթագիր տառեր կը տեսնուին, բայց այնքան մաշած են որ կարելի չ'ըլլար ամբողջ նախադասութիւնը կարդալ: Միայն "Աստ անմահ" պարբերութիւնը դժուար կը վարդացուի»²⁵:

1968, 1969 եւ 1975 թուականներուն Սիս այցելած է գերմանացի դիտնական Հանսկերտ Հելլենկեմփեր, որ կու տայ մանրամասն նկարագրութիւնը բերդի ներկայ վիճակին²⁶: Բնականաբար ԺԹ. դարու նկարագրութիւններէն մեծադրոյն տարբերութիւնը այն է որ վանական շինութիւններէն այլեւս գրեթէ ոչ մէկ հետք կը մնայ, եւ «դարուս սկիզբը» կործանած եկեղեցին ալ «վերջին տարիներու» ընթացքին մինչեւ հիմերը փլցուած է՝ ջրատար շինարարութեան մը պատճառով: Հեղինակին համաձայն, վերջին շրջանին կարելի եղած է երեւան բերել միայն մատուռ մը, որուն անունը անծանօթ կը մնայ:

Ասկէ զատ՝ Քոզան աւանը, որ ԺԹ. դարուն դեռ գրեթէ միջնադարեան բերդաքաղաքին սահմաններուն մէջ կը գտնուէր, հետզհետէ ընդարձակուած է առաւելաբար հիւսիս-արեւելք ուղղութեամբ, յաճախ օգտագործելով հին շինանիւթերը: Բլրան վերին կողերուն վրայ քանի մը տուներ կը յիշեցնեն տակաւին Սիսի ԺԹ. դարու տեսքը երկյարկանի կամ երեք յարկաբաժին:

ՍԻՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ, ՊԱՇԱՐՈՒՄԸ ԵՒ ԱՆԿՈՒՄԸ

Սիս իր հրճուանքի վերջին օրերը ապրեցաւ 26 Յուլիս 1374ին, երբ Լեւոն Ե., Կիլիկեան հայկական Հարստութեան վերջին թագաւորը, Կիպրոսէն դալով ցամաք ելաւ Այասի մօտերը ծովեզերքին վրայ: Սիս չորս կողմէն պաշարուած էր Թուրքերէն եւ անկարելի էր հոն հասնիլ. սակայն Լեւոն զարմանալի քաջութեամբ եւ դրեթէ հրաշքով անցնելով Թուրքերու եւ Եգիպտացիներու պաշարման շղթային մէջէն՝ կը հասնի Սիս: Կաթողիկոսը, եպիսկոպոսներ, իշխաններ եւ հայ ժողովուրդը, երգերով եւ ջահագնացութեամբ, զայն կը դիմաւորեն եւ յաղթական երգերով կը մտցնեն Սիս:

Կոստանդին Գ.ի մահէն (կամ ապանութենէն) ետք (1373ին) շատ մը կարճամիտ հայեր կը մտածէին Միսը Եգիպտացիներուն յանձնել, մասնելով իրենց հայրենիքը օտարին: Լեւոն Ե., սակայն, իր քաջութեամբ եւ ասպետական ոգիով պատնէշին վրայ կը մնար եւ վ'ուզէր պաշտպանել երկիրը. ուստի 150 հոգինոց քաջերու գունդ մը կազմելով, ձիաւորներու առաջնորդութեամբ, կը դրկէ զանոնք մինչեւ ծովեզերք, բերելու համար անկից իր մայրը եւ կինը, որոնք հոն իր հրամանին կը սպասէին:

Այս 150 քաջերը հասնելով հոն՝ իրենց յանձնուած պարտականութիւնը լրիւ կը կատարեն. անոնք ձիերու վրայ հանելով կիները, զգուշութեամբ պաշտպանելով զանոնք, փչչեր ու ցերեկ ձիավարելով, կ'անցնին Եգիպտացիներու պաշարման շղթայէն եւ զանոնք անվտանգ կը հասցնեն մինչեւ Անարզաբա եւ անկից ալ Սիս:

Լեւոն Ե. մեծ շուքով կը դիմաւորէ իր կինն ու մայրը եւ զանոնք մեծ հանդէսով կը մտցնէ Սիս:

Երկու ամիս ետք ալ, 24 Սեպտեմբերին, Ս. Սոփիա եկեղեցիին մէջ դարձեալ մեծ հանդէսով եւ ներկայութեամբ բաղամթիւ մեծամեծ ներկայացուցիչներու եւ զինուորականներու, թագաւոր կը պսակուի, նախ լատին ծէսով եւ ապա հայկական ծէսով Հայոց Կաթողիկոսէն: Գեղեցիկ օր մը կ'ըլլայ այդ օրը եւ հայ ժողովուրդին համար ուրախութեան եւ փառքի օր մը:

Նոյն օրն իսկ, իր լատին թիկնապահը Սոհիէր Տուլքար (Sohier Doucart), որ իր հետ եկած էր Կիպրոսէն եւ ապա իրեն գերեկից եղած մինչեւ Եգիպտոս, ասպետ եւ մարաջախտ Հայոց կը հռչակէ, եւ անոր կնութեան կու տայ Ռիմի կամ Ֆիմի, Կոստանդին Գ. թագաւորին քոյրը, որ նախ ամուսնացած էր իր հօրեղբոր՝ Պեմուդի հետ՝:

1. Հմմտ. Սիսուան, էջ 227: TOURNEBIZE, Histoire, էջ 703-753: ՕՐՄԱՆԵԱՆ, Բ, ՀՎ. 1330-1340, սիւն. 1932-1955: ԱՍՏՈՒՐԵԱՆ, Պատմ. Հայոց, էջ 311-321: Անկասկած, Լեւոն աւելի խոհեմ եւ ազդեցիկ ընթացք մը բռնած պիտի ըլլար, եթէ մասամբ կառչած չ'մնար լատինական ծէսին, սկսեալ օձման հանդէսէն. ինչ որ եւս աւելի զրգոնց լատինաւոր եւ ազգայնական կոուակցութիւններուն փոխադարձաբար արդէն իսկ լարուած տրամադրութիւնները: Ասիկա անշուշտ չբեկոյնէր մը չի կրնար ըլլալ հայ իշխաններու կատարած տիւրք դերին՝ գոհելով ազգային գերագոյն շահերը, երբ նկատի առնուի մանաւնդ Լեւոնի արի եւ ուղղամիտ ընթացքը Սիսի պաշտպանութեան համար, հակառակ այն բանին որ միայն մօրը կողմէ հայկական ճազում ունէր:

25. «Ազգակ», 1Զ. տարի, Թ. 243 (9372), 19 Դեկտ. 1962, էջ 2:
26. HELLENKEMPER, Burgen, 209-213. պատմականը՝ անդ, էջ 202-209: Տես նաեւ FEDDEN - THOMSON, Castles, էջ 97-100:

Դժբախտաբար, ուրախութեան եւ յաղթանակի այս օրերը երկար չտեւեցին. շուտով անհամաձայնութեան եւ երկպառակութեան ոգին հրէշի մը պէս մտաւ հայ իշխաններու սրտին մէջ, երկուքի բաժնելով հայ ժողովուրդը: Ոմանք Լեւոնի հետ կ'ուզէին պահել եւ պաշտպանել Սիսը՝ թշնամիներուն դէմ, մինչեւ իրենց վերջին շունչը, իսկ ուրիշներ լաւագոյն կը նկատէին յանձնել Եգիպտացիներուն, որոնք շուրջ տարիէ մը ի վեր տիրած էին ամբողջ դաշտային Կիլիկիոյ հարուստ հողերուն, քանի մը քիլոմետր հեռուէն պաշարած էին Սիսը եւ զայն արտաքին աշխարհի կապող ճամբաները բռնած էին: Այսպէս Սսեցիները չէին կրնար քաղաքէն հեռանալ ապրուստ ներս մտցնելու համար. նմանապէս անոնք դաշնադրուած էին եւ ընդունած՝ տուրք վճարել ամէն անգամ որ Սիսէն պիտի հեռանային. դարձեալ տուրք պիտի վճարէին քաղաք ներածուած ապրանքներուն համար: Քաղաքը պաշարող այլազգիներու գլխաւորներն էին Տաւուտ բէկ եւ Ապուպէքիր:

Լեւոն երբ Հայոց դահլիճ վրայ բարձրացաւ՝ շատ դժուարին օրերու հանդիպեցաւ. ինքն ալ ուրիշ ընելիք չունէր՝ եթէ ոչ լեզու գտնել զիրենք չըրջապատողներուն հետ, եւ դնել նոր դաշինք՝ պահելով նախապէս հաստատուած դաշնադրութիւնը: Դժբախտաբար նոր բարդութիւններ ծագեցան: Քանի մը հայ բանասարկուներ եւ զրպարտողներ դացին եւ զրգոեցին Տաւուտ բէկը Լեւոնի դէմ, իսկ Լեւոնն ալ՝ Տաւուտ բէկին դէմ. այսպէս խաբելով երկուքն ալ, բէկը եւ թագաւորը, մէկը միւսին դաւադիր ցոյց տալով:

Լեւոն թէեւ յաջողեցաւ, հակառակ դաւադիրներուն, դաշինք դնել Տաւուտ բէկի հետ, բայց այս անգամ մէջտեղ ելաւ Գահիրէի Ապուպէքիր զօրավարը, որ ընդդիմանալով դրուած դաշինքին՝ մեծ բանակով եկաւ ու պաշարեց Սիսը շատ աւելի մօտէն: Սսեցիները եւ թագաւորին հաւատարիմ դուռները քաջութեամբ պաշտպանեցին Սիսը, սակայն քանի մը մատնիչներ լուր զրկեցին Հալէպի Մելիք Ամիրային եւ խոստացան յանձնել քաղաքը, ինչպէս կը գրէ Լեւոնի խոստովանահայրը՝ Յովհաննէս Դարպէլ. «խոստանալով նմա զի եթէ հաճեսցի զալ անձամբ ի Սիս բանակաւ իւրով, մատնեսցեն ի ձեռս նորա զքաղաքն»²:

Մելիք, յետ խորհրդակցելու Սուլթանին հետ, իր բոլոր ուժերով եկաւ եւ պաշարեց Սիսը եւ արգիլեց անկէ ելքը եւ մուտքը, մանաւանդ արգիլեց սայլերուն անդեղէն փոխադրել քաղաքը: Հայերը գաղտնօրէն մատնած էին Սիսը օտարին, եւ կը նախընտրէին օտարին լուծը՝ քան իրենց ընտրած թագաւորին հետ կռուիլ թշնամիին դէմ: Այս մատնութեան լուրը քանի մը բարեմիտ հայեր հասցուցին Լեւոնին: Լեւոն Ե. իր շուրջ հաւաքեց իր հաւատարիմ իշխանները՝ խորհրդակցելու համար: Ան մունեատիկներու միջոցով իմացուց քաղաքացիներուն, որ առնեն իրենց ինչքերը եւ միջնաբերդ քաշուին. ժողովուրդէն մեծ մաս մը հնազանդեցաւ թագաւորին, իսկ մատնիչներէն գլխաւորները միջնաբերդ չքաշուեցան:

Լեւոն Ե. այս որոշումը առաւ՝ գիտնալով որ իր սակաւաթիւ զինուորներով պիտի չկարենայ պաշտպանել ընդարձակ Սիսը:

2. Թ. ԴԱՐՊԵՆԷՆ, ԳԼ. 2., էջ 123:

Նոյն գիշերն իսկ իր շուրջը հաւաքեց միջնաբերդին մէջ իր հաւատարիմները, քաջալերեց զանոնք եւ ամէնուն Աւետարանին վրայ երդում ընել տուաւ որ իր կողքին պիտի կռուին եւ հաւատարիմ մնան իրեն: Այս մասին կը գրէ Դարպէլ. «Յայնժամ նա ինքն արքայ յառաջ քան զամենեսին եղ ծուներ առաջի սրբոյ Աւետարանին... Եւ զկնի նորա մատեան մի ըստ միոջէ, Կաթողիկոսն, Եպիսկոպոսունք, իշխանք, ասպետք եւ քաղաքացիք եւ որեալն որ ի բերդին, ... ըստ կարգի, եւ ուխտեցին... զի լիցին բարի եւ հաւատարիմ»³:

Այս երդումէն ետք Լեւոն կրակի տուաւ Սիս քաղաքը, եւ ինքն ալ՝ վերջինը՝ միջնաբերդ քաշուեցաւ. կրակը շուտով սկսաւ լափլիզել քաղաքը՝ դժոխքի վերածելով զայն: Ասոր վրայ Եգիպտացիները աւելի սաստկացուցին Սիսի դէմ պատերազմը եւ պաշարումը, ու սկսան հարուածել բերդին պարիսպները ամէն կողմէն. Լեւոն հերոսի նման պարիսպ պարիսպ կը խոյանար, կը քաջալերէր, կը հարուածէր թշնամին՝ որ չէր յաջողեր բերդ բարձրանալ, քանի որ, ինչպէս կը գրէ դարձեալ Դարպէլ. «զօրաւոր էր յոյժ բերդն, հոժ եւ լի զօրօք եւ ամրացեալ քարամբք եւ քարնկէց մեքենայիւք, զորս տուեալ էր արքայ հանել ի վերայ պարսպացն. եւ չէր հնար մարտնչել այլուստ ընդ բերդին բայց եթէ առաջի դրանն»⁴:


Սիսը անառիկ էր եւ դիւրաւ անձնատուր չէր ըլլար, եթէ ներսէն մատնիչներ չքանդէին անոր պաշտպանութեան գիծերը: Լեւոն Ե. դիրք բռնած էր միջնաբերդին մէջ հայ ժողովուրդին քաջութեան ու հայրենասիրութեան վրայ վստահացած. Լեւոն այնքան ապահով էր Սիսի մասին՝ որ շատ անգամներ բանալ տալով բերդին դռները, իր բուռ մը քաջերով կ'իյնար թըշնամի գիծերուն վրայ եւ զանոնք ցիրուցան ընելէ ետք՝ վը վերադառնար իր բոյնը. «եւ մեծաւ քաջութեամբ մարտեան ընդ թշնամիսն առ դրամբ բերդին, եւ օգնականութեամբն Աստուծոյ հարեալ խորտակեցին զնոսա, սրոյ ճարակ տուեալ զբազումս ի նոցանէ»⁵:

Այս հերոսական կռիւը կը տեւէ ամբողջ օր մը, Լեւոն անվեհեր ասպետի մը պէս կը խոյանայ թշնամիին գիծերէն ներս, քաջալերելով իր զօրքերը. «տայր խրախոյս զօրաց իւրոց եւ նետաձիգ լինէր ի թշնամիս»⁶:

Թշնամին խուճապահար փախած էր, անհամար մեռեալներ ձգելով Սիսի պարիսպներուն տակ, Հայերը փառաւոր յաղթանակ մը տարած էին եւ միջնաբերդը ազատած:

Սակայն այս յաղթանակը դժբախտ պատահարով մը սուգի կը վերածուէր. Լեւոն մինչ կը կռուէր պարիսպ պարիսպ, թշնամիէն արձակուած երկաթի կտոր մը կու գար եւ ուժգին կը մխրճէր Լեւոնի կզակին մէջ, ջախջախելով անոր ծնօտը. «եւ ջաղխեալ փչրեաց զմի մասն ծնօտին եւ ատամունս երիս, եւ խրեալ կառեաւ ի ներքս ի բերանին»⁷:

3. ԱՅ, 2Բ, էջ 128:
 4. ԱՅ, 2Կ:
 5. ԱՅ:
 6. ԱՅ:
 7. ԱՅ:



Միսի մայրավանքը:
Le monastère du catholicossat de Sis.



Ներքին կամարներ (Մուֆաֆեան):
Arcs intérieurs (Moutafian).

Այս ցաւալի դէպքը պատճառ կ'ըլլայ որ Լեւոն Ե. թողու ճակատը եւ պարիսպներէն վար դալով քաշուի իր սենեակը, իր ստացած ծանր վէրքը դարձանելու համար:

Լեւոն Ե. բերդը մատնիչ եւ դաւադիր իշխաններու ձեռքը թողլով, կը քաշուի վերին դղեակին մէջ. ասոր վրայ ընդհանուր յուսալքում մը կը տիրէ իշխաններու եւ նոյնիսկ եպիսկոպոսներու մէջ, եւ կը մտածեն յանձնել բերդը Եգիպտացիներուն: Լեւոնի վիրաւորուիլը փոխած էր Միսի ճակատագիրը, սակայն ան կը մնար տակաւին արի եւ անյաղթ. իր վիրաւորուիլը առանց իմացնելու զօրքերուն, կը կանչէ բժիշկներ որպէսզի դարձանեն. «եւ ժուժկալեալ արիաբար ցաւոցն, ետ կորզել ի բերանոյն գերկաթն»⁸:

Լեւոն, կ'ըսէ պատմիչը, «հրամայեաց փակել զդրունս բերդին». ինչո՞ւ այս զգուշութիւնը, քանի որ ան յաղթական էր: Լեւոն, սակայն, լաւ գիտէր թէ ինչ կ'անցնէր կը դառնար իր շուրջը, իր իշխաններուն միջեւ, որոնք կը ծրագրէին մատնել զինքը եւ Միսը. ուստի Լեւոն ծանր կացութեան մը առջեւ կը գտնուէր: Որքան որ Միսը տակաւին ոտքի վրայ էր, Լեւոն սակայն կը վախնար մատնութենէ մը: Ուստի, երբ Եգիպտացիները պարտուած ետ կը վերադառնան, գիտնալով որ պիտի չկարենան Միսը զէնքի ուժով առնել եւ Լեւոնը ծուռկի բերել, անոր խաղաղութեան խարդախ պայմաններ կ'առաջարկեն. ա) Լեւոնի պիտի ձգէին ամբողջ Կիլիկիան, եթէ ան ընդունէր Մահմետականութիւնը. բ) Լեւոն ձգէր Կիլիկիան եւ երթար ո՛ւր որ ուզէր. գ) Սուլթանը պիտի ապահովէր Լեւոնի եւ իր ընտանիքին փեանքը, եթէ Լեւոն բանար բերդին դռները իրենց առջեւ:

Լեւոն Ե. մերժեց այս երեք առաջարկներն ալ ըսելով. «Մենք հոս եկած չենք մեր երկիրը քեզի մատնելու եւ ուրանալու մեր Արարիչն ու ամենազօր Աստուածը՝ Յիսուս Քրիստոս... այլ եկած ենք մանաւանդ ապրելու եւ մեռնելու Աստուծոյ ծառայութեան մէջ եւ օտարներու ձեռքը չձգելու մեր ժառանգութիւնը»:

Լեւոն մերժելով առաջարկը, նպատակ չունէր կոռելու. կ'ուզէր կատարեալ խաղաղութիւն, խոստանալով սովորական եւ ընդունեալ հարկերը վճարել կանոնաւորապէս, միայն թէ զիրենք հանգիստ ձգէին: Սակայն Մելիք Ամիրա այս պատասխանը ստանալով՝ կատղեցաւ եւ աւելի մեծ բանակներ ղրկեց Միսի վրայ. Լեւոն վիրաւոր՝ ստիպուեցաւ նորէն բարձրանալ Միսի դղեակի պարիսպներուն վրայ եւ հերոսաբար պաշտպանել իր քաղաքին բերդը և իր պատիւը: Միսի բերդը գուցէ չիյնար, եթէ իր հետ ըլլային իր իշխանները, չըլլային հայ դաւաճաններ, մատնիչներ: Անոնք զիչեր մը դղեակին մէկ մութ անկիւնը հաւաքուած՝ ժողով գումարեցին եւ զրեցին Մելիք Ամիրայի՝ թէ Լեւոն վիրաւոր է եւ բերդին մէջ սովը մօտալուտ, եւ կը խնդրէին չհեռացնել իր զինուորները Միսի պարիսպներէն, խոստանալով բանալ քաղաքին դռները իր առջեւ:

8. ԱՅդ:

9. ԱՅդ, 27, էջ 127-128:



Հարաւային պարիսպներու դուռը (Մազլումեան) :
La porte des murs méridionaux (Mazloumian).

Միսի դղեակին մէջ տիրող սովի մասին կը համաձայնին բոլոր պատմագիրները, եւ Լեւոնի անձնատուութեան գլխաւոր պատճառը կը համարին. բայց կը տարաձայնին անձնատուութեան տեղւոյն մասին. Գարգէլ գայն կը դնէ Միսի դղեակին մէջ¹⁰, մինչդեռ Հոննալոն պատմիչը՝ Կապանի մէջ, որովհետեւ այս վերջին պատմիչը, որուն կը հետեւի նաեւ Չամչեան, կը կարծէ թէ Լեւոն Միսի դղեակին առումի ժամանակ փախեր էր Միսէն եւ կը գտնուէր Կապանի բերդին մէջ¹¹, ինչ որ իրական չի թուիր ու չի համապատասխաներ նաեւ մեր պատմիչներու համառօտ տուեալներուն: Այսպէս վերոյիշեալ յիշատակարաններէն մէկուն մէջ տեսանք. «ու տուին զբերդն, ոչ այլ իրաց քանց ի սովոյ... որ կերան կատու վ'էջ...»¹². այսինքն՝ կատու եւ իշու միս կերան, եւ սովին պատճառով էր որ Միսի բերդը անձնատուր եղաւ:

Ուրիշ յիշատակարան մը աւելի մանրամասն կ'աւանդէ Լեւոնի Միսի մէջ անձնատուր ըլլալը. «ի թուականութեանս Հայոց Պի՛Դ (1375ին) առաւ Միսի քրիստոնէից, եւ էր ի ժամանակին յայնմիկ կաթողիկոս Հայոց Տէր Կոստանդին (Դ.), արի, իմաստուն եւ հանճարեղ, եւ էր թագաւոր Հայոց Պր. Լեւոն (Ե.), որդի Բրնձին. սա թագաւորեաց Հայոց ամ մի»¹³:

Լեւոն Ե., սակայն, կորովի կամքի տէր եւ քաջ ասպետ, հակառակ սովին եւ մատնիչներուն՝ որոնք իր շուրջը կը վխտային եւ առիթ կը փնտռէին զինքը մատնելու, կ'ամրանայ ներքին բերդի Մեծ Աշտարակին մէջ եւ դարձեալ, քանի մը հաւատարիմներով, քաջութեամբ կը դիմադրէ: Իր դաւադիր իշխանները տեսնելով Լեւոնի անընկճելի կամքը եւ դիմադրութեան ոգին, դարձեալ օր մը ժողով կը գումարեն միջնաբերդին մէջ. այս մատնիչներուն զլուխը կ'ըլլայ իր հաւատարիմ կարծուած իշխաններէն Մատթէոս Շապը, որուն վրայ Լեւոն մեծ վստահութիւն ունէր եւ զոր իր իսկ թագաւոր օժուելու օրը՝ պատուած էր ասպետական շքանշանով:

Հայոց Կաթողիկոսը, Մատթէոս Շապի կինը եւ պարոն Վասիլ, որոնք այս դաւաճանութեան պարագլուխներն էին, օր մը զաղտնի կը ներկայանան Մատթէոս Շապի եւ կը հարցնեն. «թէ առնուցո՞ւ յանձն միաբանել ընդ նոսա եւ գործակից լինել սպանութեան արքային»¹⁴:

Մատթէոս Շապ յանձն կ'առնէ եւ իր շուրջը կը հաւաքէ Կիպրոսէն իր հետ բերած շատ մը զինուորականներ, խաբելով զանոնք թէ Եգիպտոսի սուլթանը առաջարկած է Լեւոնի՝ որ մեզ ամէնքս բռնէ եւ իրեն յանձնէ: Շապի այս սուտ յերկրանքներուն կը հաւատան նոյնիսկ Լեւոնի ամէնէն հաւատարիմ եւ քաջ զինուորականները եւ կը միաբանին՝ գիշերանց յարձակիլ Լեւոնի աշտարակին վրայ եւ զայն սպաննել:

Լեւոնի ստացած վէրքը տակաւին չէր սպիացած եւ դեռ ժամանակ մը անկողին կը մնար, իր քով պահելով միայն քանի մը հաւատարիմ զինուորականներ:

Դաւադիրները կէս գիշերին, երբ ամէն ոք կը քնանար, բացի պահակներէն որ արթուն կը հսկէին աշտարակին վրայ, Մատթէոս Շապի առաջնորդութեամբ, զինուած սուրբերով եւ կացիներով, աղօտ լոյսի մը տակ կը բարձրանան աշտարակէն վեր, մէկիկ մէկիկ խորտակելով անոր դռները. երբ թագաւորին դրան կը մօտենան, փակ կը գտնեն եւ կ'ուղեն խորտակել զայն:

Լեւոն Ե. սենեակէն լսելով այս աղմուկը, շուտով լուր կու տայ իր հաւատարիմ զինուորներուն եւ անկողինէն հիւանդագին դուրս կը ցատկէ, կը հազուի զբահները, կը սպառազինուի, եւ մոռնալով իր ցաւերը՝ կը պատրաստուի կռիւի. իր զինակիրները, սակայն, զինքը կը համոզեն ետ կենալ այս անհաւասար եւ մահացու կռիւէն: Լեւոն մտիկ կ'ընէ անոնց. այն ատեն զինքը ճեմիչի պատուհանէն, որ ապահով էր եւ հեռու դաւադիրներու աչքէն եւ տեսութենէն, վար կ'իջեցնեն Միջնաբերդին մէջ, եւ իրենք ալ անոր ետեւէն վար կ'իջնեն նոյն պարանով: Այս խառնաշփոթութեան մէջ չեն կրնար իրենց հետ առնել նաեւ թագուհին եւ իր աղջիկը, որովհետեւ դաւադիրները կը խորտակեն թագաւորին սենեակին դուռը, «հորդան տուեալ դաւաճանացն

10. Անդ, 27, ձԲ, էջ 139 յԷ.
11. ՉԱՄՉԵԱՆ, Գ, էջ 369 յԷ.: LANGLOIS, Voyage en Cilicie, pg. 409: ԳԱՆՈՒՍՏԵԱՆ, Մարաշ, էջ 62-63, Կրկրայեւի կը դռնէ այս աւանդութիւնը:
12. Հայապատում, 64-Ա, էջ 542:

13. Անդ, 64-Դ:
14. ԴԱՐԴԵԼ, 2է, էջ 130:

ի ներքս եւ ոչ գտեալ անդ զարքայն, յապուշ կրթեցան»¹⁵: Հոն կը գտնեն սարսափի մէջ թագուհին եւ իր աղջիկը, սակայն անոնց կեանքին կը խնայեն, խորհելով իբր ընծայ զրկել Մելիքին: Այս աւետիսը ինքը Մատթէոս Շապ յանձն կ'առնէ անձամբ տանիլ ամիրին: Սակայն Լեւոն իր զինակիցներով արդէն իջած էր միջնաբերդ, եւ պաշարած Աշտարակի մէջ եղող դաւաղիրները հետեւարար Շապ չէր կրնար իջնել աշտարակէն եւ երթալ ամիրին լուր տալ: Ուստի դաւաղիրները կ'որոշեն չուանով կապել Շապը եւ պարիսպէն վար իջնել: Հոս մատնիչը իր արդար պատիժը կը ստանայ. դեռ վար չհասած, կէս ճամբուն, կը փրթի չուանը. «անկաւ սա գահավէժ թաւալդոր յերկիր եւ յօղակոտոր եղեալ սատակեցաւ անարգամահ, տիրադրուծն այն Մատթէոս դը Շապ»¹⁶:

Թագաւորին դէմ գործադրուած դաւաղութեան լուրը չուտով տարածուեցաւ քաղաքին մէջ, ինչպէս նաեւ Մատթէոս Շապի անարդ մահը. դաւաղիրները աշտարակին մէջ պաշարուած՝ ահ ու դողի մէջ էին, եւ որեւէ օգնութեան յոյս չուէին:

Երբ Լեւոն Ե. մուկետիկներու միջոցով այս լուրը տարածեց քաղաքին մէջ, ժողովուրդը՝ որ կը սիրէր Լեւոնը, կատղած եւ զինուած, գունդ գունդ դիմեց դէպի աշտարակ. «վառեալք ի գէն եւ կազմ եւ պատրաստ սպասէին հրամանաց նորա»¹⁷:

Լեւոն միջնաբերդի դրան առջեւ դալով՝ խօսեցաւ խուռներամ ժողովուրդին եւ պարզեց եղելութիւնը. ան առաջարկեց դաւաղիրներուն՝ յանձնել աշտարակը եւ ազատ հեռանալ Սիսէն. սակայն անոնք յանձն չառին: Այն ատեն Լեւոն իր մեծերուն խորհուրդով՝ հրաման տուաւ ժողովուրդին որ յարձակի աշտարակին վրայ. «եւ դիմեալ անկան բուռն յարձակմամբ ի վերայ աշտարակին»¹⁸:

Սակայն աշտարակը անառիկ էր եւ դիւրին չէր գրաւել. «որք ի ներքս անդ էին՝ զդէմ կալան նոցա մեծաւ պնդութեամբ»: Լեւոն իր ժողովուրդով եւ զինուորներով՝ նոյն գիշերը չորս անգամ յարձակում գործեցին աշտարակին վրայ, սակայն անկարելի եղաւ առնել զայն, «զի ամուր էր յոյժ եւ մուտ դրանն այնպէս նեղ եւ նուրբ, զի մի մի մարթ էր Կեթ մերձենալ»¹⁹:

Գիշերը վրայ կը հասնի եւ ժողովուրդը կը քաշուի իրենց տուները, բազմաթիւ մեռեալներ թողլով միջնաբերդին մէջ:

Լեւոն Ե. ծանր կացութեան մը առջեւ կը գտնուէր. չուէր պէտք եղածը, ո՛չ սնունդ, ո՛չ մարդ եւ ոչ ալ զէնք. մանաւանդ որ իր զինուորականներէն մէկը Վասիլ անուանով, իրեն խորհուրդ կու տայ՝ ելլել աշտարակ եւ խօսիլ դաւաղիրներուն հետ, որպէսզի հոն սպաննէին զինքը: Լեւոն գուշակելով դաւաղիրին նպատակը, աշտարակ չ'ելլեր:

15. ԱՅԳ, էջ 131:
 16. ԱՅԳ, էջ 132:
 17. ԱՅԳ, ԴԸ, էջ 133:
 18. ԱՅԳ, ԴԹ, 134:
 19. ԱՅԳ:

Այն ատեն դաւաղիրները գիշերանց պարաններով թուրք զինուորներ վեր կը քաշեն. թիւը հետզհետէ կը բազմապատկուի, եւ դաւաղիրներու կողքին կատաղի կերպով կը կուռին պաշարողներուն եւ Լեւոնի դէմ:

Լեւոն վերջին փորձ մը եւս ըրաւ՝ իր վերջին գնդակը արձակելով դաւաղիրներուն դէմ. ան գաղտնի ճամբով միջնաբերդ բարձրացուց հաւատարիմ զինուորներ եւ միասին գիշեր ատեն ուժգին յարձակում մը գործեցին աշտարակին դէմ. անոնք կատաղի կուռէ մը ետք բարձրացան աշտարակին վրայ եւ սպաննելով ներսի բոլոր թուրքերն ու դաւաղիրները՝ աշտարակին վրայ դարձեալ բարձրացուցին Լեւոնի դրօշակը²⁰:

Հալէպի ամիրան, մինչ կը սպասէր որ Վասիլ իր խոստումը կատարէ եւ բերդը յանձնէ, տեսաւ որ աշտարակին վրայ դարձեալ կը ծածանի Լեւոնի դրօշակը եւ կը լսուէր աղաղակ մը՝ թէ «առաւ աշտարակն, առաւ աշտարակն»:

Մելիք յիմարեցաւ եւ ասոր վրայ հրաման տուաւ իր զօրքերուն որ դադրեցնեն Սիսի դէմ կուռը: Գրեց Լեւոնի որ յանձն առնէ՝ աշտարակը յանձնել իրեն, ապա թէ ոչ աւելի գէշ պիտի ըլլար իր վիճակը: Լեւոն պատասխանեց. «Քանի կենդանի եմ՝ չեմ կրնար Քրիստոսը ուրանալ եւ բերդը քեզի յանձնել: Մելիք ասոր վրայ աւելի սաստկացուց աշտարակին եւ բերդին դէմ կուռը. երկու կողմէն բազմաթիւ մեռեալներ ինկան Սիսի պարիսպներուն տակ:

Լեւոն Ե. ասով դարձեալ տէր էր Սիսի եւ բերդի աշտարակին: Բայց տեսնելով որ հայերը կը տատամսին՝ իր հետ շարունակել կուռը սուլթանին դէմ եւ անվստահելի են, կանչեց Հայոց մեծամեծները եւ ըսաւ որ գան եւ Աւետարանին վրայ երդում ընեն՝ իրեն հաւատարիմ ըլլալու եւ մինչեւ վերջին չունչերնին կուռելու այլազգիներուն դէմ:

Հայ ազգայնականները չներկայացան թագաւորին, այլ՝ կ'ըսէ Դարդէլ պատմիչը, գացին Կաթողիկոսին՝ խորհուրդ հարցնելու. «թէ ո՞ր լաւ իցէ, սպանանել զթագաւորն, թէ ձերբակալ արարեալ մատնել զնա ի ձեռս ամիրային Մելէքայ»²¹:

Ամէնքը թագաւորին հակառակ ելան, կ'ըսէ պատմիչը, եւ որոշեցին մատնել զայն Եգիպտացիներուն, լաւ համարելով ապրիլ եւ իյնալ անոնց լուծին տակ՝ քան թէ մնալ ազատ իրենց բնիկ թագաւորին իշխանութեան եւ ծառայութեան տակ. եւ կ'աւելցնէ պատմիչը. «թէպէտ եւ ունէին եւ ոչ մի ինչ պատճառս ատելոյ զթագաւորն. զի իշխէր նոցա քաղցրութեամբ եւ պաշտպանէր զնոսա հօր գորութեամբ»²²:

Այսպէս Լեւոն Ե. կը մնար առանձին. իր հաւատարիմ իշխաններէն շատեր նահատակուած էին հայրենիքին համար, շատեր իրմէ հեռացած, եւ ինքը հիւանդագին՝ կը մնար միջնաբերդի աշտարակին մէջ առանձին:

20. ԱՅԳ, ՃԱ, էջ 137:
 21. ԱՅԳ, ՃԲ, էջ 139:
 22. ԱՅԳ:

Այս տեսնելով Հայոց Կաթողիկոսը եւ իշխանները, գացին եւ ըսին Մե- լիքին թէ Լեւոն հիւանդ՝ անկողինն է, աւելորդ է շարունակել կռուիլ Սիսի բերդին դէմ, մենք քեզի կը խոստանանք վաղը գրաւել աշտարակը եւ զայն յանձնել:

Մելիք Ամիրա մեղքնալով Լեւոնի վիճակին վրայ, վերջին անգամ ալ գրեց անոր ըսելով. Քու մարդիկդ ահա Սիսը ինծի յանձնեցին, քեզի խորհուրդ կու տամ անձնատուր ըլլալ, կ'ապահովեմ անձիդ եւ ընտանիքիդ կեանքը, օգնական զօրքեր ալ կու տամ, ելիր բերդէն եւ զնա՝ ուր որ կ'ուզես²³:

Լեւոն Ե. այս թուղթը առնելով շատ խորհեցաւ, եւ այն եզրակացութեան եկաւ որ այլեւս անկարելի էր Սիսը ոտքի վրայ պահել եւ ազատել Կիլիկիոյ թագաւորութիւնը, քանի որ հայ կաթողիկոսը եւ հայ իշխանները զինքը լքած էին. ուստի յանձն առաւ յանձնել Սիսը եւ երթալ ամիրային քով ու անձնատուր ըլլալ:

Մելիք՝ Սիս ղրկած էր 500 ձիաւորներ եւ Լեւոնի համար մասնաւոր ձի մը. այդ ձիուն վրայ հեծած Լեւոն գացած է Մելիքին, մինչ իրեն կը հետեւէին 500 ձիաւորները՝ զինք պաշտպանելու համար²⁴: Դարդէլ կ'ըսէ թէ Լեւոն, «որ կայր հիւանդ յանկողնի», բերդէն վար իջնելէ եւ անձնատուր ըլլալէ առաջ՝ «խոստովան եղեւ զմեզս իւր, ետ մատուցանել պատարագ եւ հաղորդեցաւ սրբոյ խորհրդոյն ջերմեռանդ հաւատով, որպէս թէ երթալոց էր ի մահ»²⁵:

Թուրքներէն Կիլիկիոյ 300 տարուան փառաւոր թագաւորութեան վերջին օրը հասեր էր. Լեւոն ինքզինքը Աստուծոյ յանձնելով, արցունքոտ աչքերով, աշտարակէն վար իջաւ, իր հետ առնելով կինը, աղջիկը եւ Մարուն՝ նախկին թագուհին, Կոստանդին Գ.ի կինը, եւ ուրիշ հետեւորդներ, ինչպէս նաեւ Սիսի բերդին բանալիները, ներկայացաւ Մելիք Ամիրային, ու խոնարհելով անոր առջեւ՝ յանձնեց Սիսի բանալիները եւ սպասեց սուլթանին հրամաններուն²⁶:

Մելիք Ամիրա ոտքի ելաւ իր գահին վրայ եւ Լեւոնի ձեռքէն առնելով բանալիները, հրամայեց բերել ոսկեհիւս մետաքսէ զգեստներ եւ հագուեցնել անոր: Այս արարողութենէն ետք, Սուլթանը նորէն առաջարկեց անոր՝ ընդունիլ մահմետականութիւնը, սակայն Լեւոն դարձեալ մերժեց առաջարկը, ըսելով թէ կը նախընտրեմ մահը՝ քան ուրանալ հաւատքս:

Այն ատեն Ամիրը հարցուց իրեն թէ կ'ուզէ՞ր հոն մնալ. եթէ Լեւոն հաւանէր՝ Մելիք իրեն բերդ մը պիտի յատկացնէր, ուր կարենար ազատ ապրիլ: Լեւոն ժամանակ ուզեց մտածելու համար: Մելիք Ամիրա հրամայեց որ մեծ վրան մը կանգնեն, ուր առժամաբար տեղաւորուեցաւ Լեւոն իր ընտանիքով:

23. Անդ, ձԳ, էջ 140:
24. Անդ, ձԵ, էջ 141:
25. Անդ, ձԵ, էջ 143:
26. Անդ:

Մելիք Ամիրայի բանակին մէջ քանի մը ուրացող հայ իշխաններ կային, որոնք սակայն համակիր էին Լեւոնի: Լեւոն անոնց խորհուրդ հարցուց թէ կարելի՞ էր որ անվտանգ իր երկիրը մեկնէր. անոնք ըսին՝ կրնաս հասնիլ մինչեւ Տարսոն, քայց հոն կան մարդիկ որ կրնան քեզ սպաննել, ուստի Մե- լիքէն խնդրէ որ քեզ Եգիպտոս ղրկէ եւ անկից ալ կրնաս Եւրոպա անցնիլ: Լեւոն շնորհակալ եղաւ անոնց խորհուրդին եւ Մելիքէն խնդրեց Եգիպտոս երթալ: Այն ատեն Լեւոն Մելիքին յանձնեց Հայոց արքունի գանձը, որ զայն ճամբայ հանեց դէպի Եգիպտոս: 22 Ապրիլ 1375ին Մելիք կը մեկնէր Սիսէն իր հետ տանելով Լեւոնը, թագուհին եւ իր որդիները, մայր թագուհին՝ Կոստանդին Գ.ի կինը եւ մի քանի մեծ իշխաններ, ամէնքը 20 հոգի: Դեռ Հալէպ չհասած՝ Մելիք Ամիրա լուր ղրկեց քաղաքի մեծերուն որ պատրաստութիւններ տեսնեն Լեւոնը եւ զիրենք ընդունելու. դաշտին մէջ, քաղաքէն հեռու բարձունքի մը վրայ, վրան լարեցին եւ հոն քանի մը օր սպասեցին, մինչեւ որ Հալէպի մէջ պատրաստութիւնները վերջանային եւ լուր գար թէ պատրաստ էին զիրենք ընդունելու²⁷:

Յաջորդ օրը, Մելիք եւ Լեւոն Ե. մեծ թափօրով Հալէպ մտան, ժողովուրդի մեծ խանդավառութեամբ, ու կանգ առին Հալէպի բերդին առջեւ բացուող ընդարձակ հրապարակին վրայ: Հոն, անոր առջեւէն տողանցեցին Սուլթանի բանակները, աղանիներ արձակուեցան Եգիպտոս, լուր տալու Սիսի անկումը:

Լեւոն ամիս մը Հալէպ մնաց իր ընտանիքին հետ. այս առթիւ ան այցեցելեց Հալէպի նշանաւոր բերդը, ուր երկար ժամանակներէ ի վեր բանտարկուած գտաւ մի քանի հայեր եւ քահանայ մը. Լեւոնի խնդրանքին վրայ՝ Մելիք զանոնք ազատ արձակեց. Լեւոն 1375ի Յուլիսին մեկնեցաւ դէպի Գահիրէ, եւ Յուլիսին վերջերը հոն հասաւ. իր հասնելուն՝ երեք օր թմբուկներ զարկին Գահիրէի մէջ, Սիսի անկումը աւետելու համար:

Լեւոնի Գահիրէ հասնելուն, սուլթանը դարձեալ առաջարկեց Լեւոնի՝ մահմետականութիւնը ընդունիլ, խոստանալով զիրենք խաղաղ եւ հանգիստ իրենց երկիրը վերադարձնել եւ մեծ պատիւներու հասցնել. Լեւոն դարձեալ մերժեց այս առաջարկը:

Սուլթանը իր դիրքը փոխեց Լեւոնի հանդէպ եւ ըսաւ. որչափ որ Հալէպի ամիրը քեզի խօսք տուած էր եւ գրաւոր յայտնած իր հաւանութիւնը, որ դուն ազատ երթաս Եւրոպա եւ հոն ապրիս, սակայն մենք յարմար չենք տեսներ այս որոշումը, եւ կը վճռենք որ դուն հոս Եգիպտոս մնաս, ստանալով քեզի յարմար բնակութեան տեղեր:

Լեւոն Ե. ստիպուեցաւ իր գլուխը ծռել յաղթողին առջեւ եւ մնալ Գահիրէ, հսկողութեան տակ. սակայն ժամանակ մը ետք, սուլթան Մելիք Եգիպտոսի հայերէն ապահովութեան գիր առնելէ ետք, ազատ թողուց Լեւոնը որ կարենայ շրջագայիլ Գահիրէի մէջ²⁸:

27. Անդ, ձԹ, էջ 148-150:
28. Անդ, ձԺԱ, էջ 153:

Լեւոնի հետ էին նաեւ Հայոց Կաթողիկոսը եւ իշխաններ, որոնք հրաման ստացան վերադառնալու Կիլիկիա: Իսկ նախկին թագուհին՝ Մարուն, նախընտրեց երթալ Երուսաղէմ: Իսկ Պարոն Վասիլ եւ ուրիշ քանի մը իշխաններ մահճետականութիւնը ընդունեցան՝ յուսալով նոր պատիւներու հասնիլ, սակայն յուսախար եղան:

Հայոց Կաթողիկոսը Սիս վերադառնալով շարունակեց իր կաթողիկոսութիւնը: Դարդէլի համաձայն, Կաթողիկոսն ալ թելալ էր կամակից մատնութեան թագաւորին եւ քաղաքին, ոչինչ չատացաւ այնու, այլ առ չարամտութեան եւ անգթութեան, հրամայեաց քահանայից Հայոց բնակելոց ի Քահիրէ եւ ի Հայաստան սպառնալեօք բանադրանաց, զի մի այլ եւս աղօթեցեն ի պատարագի վասն Լեւոնի թագաւորին տեառն իւրեանց, եւ մի յիշեցեն զանուն նորա յայլ ամենայն մաղթանս, այլ զնորին հակառակն աղօթեցեն վասն սուլթանին»²⁹: Կաթողիկոսին այս որոշումը, եթէ հաւաստի նկատենք Դարդէլի վկայութիւնը, մասամբ թելադրուած կրնար ըլլալ նաեւ քաղաքական նկատողութիւններէ: Սակայն Քահիրէի հայերը մտիկ չըրին այդ հրամանին եւ շարունակեցին աղօթել իրենց նահատակ թագաւորին համար եւ զայն յիշել պատարագին մէջ:

Լեւոն եօթը տարի Քահիրէ մնալէ վերջ, հրաման կը ստանայ Եւրոպա անցնելու. Չամչեանի համաձայն, Լեւոն Եւրոպա անցնելէ առաջ՝ կ'երթայ Երուսաղէմ Աստուծոյ շնորհակալ ըլլալու. սակայն Դարդէլ այս մասին խօսք չունի³⁰: Երուսաղէմ գացած է նախկին թագուհին Մարուն՝ Կոստանդինի կիներ³¹: Իսկ Լեւոնի վերջը՝ Մարգարիտ եւ աղջիկը հաւանօրէն մնացած ըլլան Լեւոնի հետ եւ երկուքն ալ վախճանած ու թաղուած Քահիրէի մէջ, քանի որ անոնք վր յիշուին Լեւոնի հետ մինչեւ անոր Եւրոպա մեկնելու վերջին տարին. անկէ յետոյ ա'լ չեն յիշուիր, եւ ոչ ալ Եւրոպա անցնելէ ետք, ինչ որ նշան է թէ անոնք Եգիպտոս վախճանած ըլլալու են:

Հետաքրքրական են Լեւոնի Քահիրէէն մեկնելու պարագաները. ինչպէս գիտենք, Լեւոն Կաստիլիոյ Արագոնի թագաւորին միջնորդութեամբ ազատութիւն կը ստանայ Եւրոպա անցնելու: Դարդէլ ընդարձակ եւ մանրամասն կը պատմէ այս ճամբորդութեան պատահարները:

Եգիպտոսի Բարկուկ իշխանը իր առջեւ կը կանչէ Լեւոնը, եւ չափուցեալ նմա հանդերձս ոսկեհուռ արտակերտեալս. եւ յերկրորդել նոցա զաղաչանսն, արձակեաց զարքայ յանպայման ազատութիւն. եւ ոչ խնդրեաց ի նմանէ երդումն»³²:

Լեւոն Ե. կը պատրաստուի եւ Բարկուկ իշխանը սուլթանին կողմէ իր բնակարանը զալով զինքը կ'առաջնորդէ Նեղոսի վրայ եղող սուլթանին գետանաւը, ուսկից պիտի մեկնէր Աղեքսանդրիա. Լեւոն մտնելով նաև՝ կը հասնի Աղեքսանդրիա եւ շուտով ետեւէ կ'ըլլայ նաև մը գտնելու եւ մեկնելու:

29. Անդ, ձժԳ, էջ 155:

30. ՉԱՄՉԵԱՆ, Գ, էջ 363:

31. ԴԱՐԴԵՂ, ձժԲ, էջ 153:

32. Անդ, ձԼԵ, էջ 183:

Սակայն Լեւոն Ե. հազիւ Քահիրէէն մեկնած, Սուլթանը կը զղջայ զայն ազատ թողուն, եւ անմիջապէս մարդ կը ղրկէ, նամակով մը՝ ուղղուած Աղեքսանդրիոյ Կոստակալին, որ չթողու Լեւոնին մեկնիլ այդտեղէն, մանաւանդ թէ զայն բռնէ եւ Քահիրէ վերադարձնէ, վախնալով որ ան Եւրոպա երթալով կրնար նոր խաչակրութիւն մը հանել իրեն դէմ: Երբ դեսպանը այդ նամակով կը հասնի Աղեքսանդրիա, Լեւոն արդէն նաև առած եւ հեռացած էր Աղեքսանդրիոյ ջուրերէն. յաջող հովով մը նաւարկելով կը հասնի Հռոդոս: Լեւոն երբ Հռոդոս էր, կը լսէ թէ Կիպրոսի Պետրոս թագաւորը, որ իրեն



Տապանագիր Քաթիլինա Գոնարոյի (Ն. Գասպարեան):
L'inscription sepulchrale sur la tombe de Caterina Cornaro dans l'église
San Salvador à Venise (N. Gasparian).

ազգական էր, վախճաններ է, եւ թէ ձենովացիները տիրեր են կղզիին եւ ջնջած Կիպրոսի թագաւորութիւնը, ուստի կը հրատարի Կիպրոս երթալէ, հոն իր իրաւունքներուն տիրանալու համար:

Լեւոն Ե. Հոռոզուէն մեկնելով կը հասնի Վենետիկ, ուր Վենետկեցիները կ'ընդունին մեծ փառքով եւ պատիւով: Լեւոն Վենետիկէն ճամբան շարունակելով կը հասնի Աւինիոն, ուր էր Կղեմէս Է. Պապը, որ 1000 հոգի կը շրկէ դիմաւորելու Լեւոնը, որ մեծ հանգէտով կը մտնէ Աւինիոն:

Պապը զինքը կը քաջալերէ եւ դրամական ճոխ օգնութիւն մ'ալ ընելով պատիւով կը պահէ զինքը ժամանակ մը իր քով: Լեւոն յետոյ կը մեկնի Արագոն եւ Կաստիլիա, հոն երկու թագաւորներուն իր շնորհակալութիւնները յայտնելու, որոնք մեծ զոհողութիւններ յանձն առած էին զինքը ազատելու համար: Լեւոն հոն շատ ջանքեր թափեց նաւեր եւ զինուորներ ստանալու եւ Կիլիկիա վերադառնալու, բայց ամէն խոստում՝ միայն խոստում մնաց:

Լեւոն իր ճամբորդութիւնը վերջացնելով՝ 1383ին հասաւ Փարիզ, ուր Ֆրանսայի Կարոլոս թագաւորը, զինքը պատուեց եւ խոստացաւ օգնել իրեն՝ Կիլիկիա վերադառնալու համար: Այսպէս մեծ պատիւներու արժանացաւ Ֆրանսայի մէջ, ապրեցաւ թագաւորական կեանք մը օտարութեան մէջ:

Լեւոնի թափած բոլոր ջանքերը Կիլիկիա վերադառնալու՝ անօգուտ եղան. վախճանեցաւ 1393ի Նոյեմբեր 29ին եւ թաղուեցաւ Կեղեստինեանց եկեղեցիին մէջ: Գերեզմանին վրայ կը տեսնենք միակտուր մարմարէ իր արձանը պռակած դիրքով, հետեւեալ արձանագրութեամբ. «Հոս կը հանգչի յոյժ ազնուական եւ սքանչելի իշխան ԼԵՒՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ Ե. Հայաստանի թագաւորութեան լատին արքան, որ հոգին աւանդեց Աստուծոյ Փարիզ, Նոյեմբերի 29րդ օրը, յամին շնորհաց 1393. աղօթեցէք իրեն համար»³³:

Այս տապանաքարը այժմ կը գտնուի եւ կը պահուի Սէն Տընիի եկեղեցիին մէջ: Լեւոն «Թագաւոր Հայոց» տիտղոսը նախ անցաւ Կիպրոսի թագաւորներուն, եւ անոնցմէ ալ Սաւոյիայի տան դուքսերուն, որոնք զայն պիտի պահեն մինչեւ իտալական միութեան եւ իտալական թագաւորութեան հիմնարկութիւնը, որուն գահակալները կ'ըլլան:

Սակայն «Հայաստանի թագաւոր» տիտղոսը ձգելէն վերջն ալ՝ անոնք կը շարունակեն կրել իրենց թագաւորական զինանշանին վրայ՝ Սաւոյիայի վահանին հետ նաեւ Ռուբինեաններու առիւծը³⁴:

33. «Cy gist très noble et excellent prince Lyon de Lizigne quint roy latin du royaume d'Arménie, qui rendit l'âme à Dieu, à Paris, le XXIX^e jour de novembre, l'an de grâce — et XIII, Priés pour luy»; Հմմտ. LANGLOIS, Documents, III p. 43, n. 1; IORGA, Petite Arménie, p. 153.

34. Հմմտ. Ս. ԱՊՈՆՑ, Աշխարհագրութիւն, Մասն Բ, Երրորդ, հտ. Բ., Սալոյա, էջ 423-424. հտ. Ե, Օսմանեան տէրութիւն - Կիպրոս, էջ 494-495: GIMORRI, Per la nazione Armena, Թորինոյ, 1916, էջ 17 [Արապ. «Armenia»-է, II (1916), Թ. 7-9]: Մանօթ է Վենետիկի Սան Սալվատոր եկեղեցիին մէջ՝ Կիպրոսի տարագիր թագուհի Քաթերինա Քոնստանտինովնայի դամբանը, Կիպրոսի, Երուսաղէմի եւ Հայաստանի թագուհիին աճիւնները (Cypri Hierosolymorum ac Armeniae Reginae cineres) արձանագրութեամբ:

ՍԻՍ՝ ԿԻԼԻԿԻՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԷՆ ԵՏՔ

Սիսի անկումէն վերջ՝ մեր պատմագիրները այլեւս չեն խօսիր անոր մասին. քանի մը ողբական տողեր միայն կը գտնենք յիշատակարաններու մէջ. ասոր պատճառը Ալիշան կու տայ. «դուցէ գրիչնին եւ սրտերնին առաջ չէ գնացել. այս կարճ յիշատակներս մէկ մէկ հառաչանք թուին»¹:

Մելիք Աշրաֆ Սիսը դրաւելով անոր կուսակալ դրաւ Եագուպ շահը, կամ ըստ ուրիշներուն Ագ-Պուլան. Եգիպտոսի սուլթանին ծրագիրը ըլլալով ցմիշտ դրաւել Սիսը, թոյլ չտուաւ որ քաղաքը բոլորովին կործանեն, թողուց միայն որ կողոպտեն. առաջին կուսակալներէն վերջ ուրիշներ յաջորդեցին, հանդարտեցաւ քաղաքը եւ դադարեցան կողոպուտները եւ աւազակութիւնները:

Սակայն քանի մը տարի ետք, 1389ին, Մելիք Էօմեր բռնի նստաւ Սիսի վրայ իր կուսակալ, եւ չենք գիտեր թէ ի՞նչ սուտ պատճառներով սպաննեց Թէոդորոս Կաթողիկոսը, եւ անոր հետ 16 ուրիշ մեծ իշխաններ:

Պատմական այս իրադարձութիւններու շրջածիրին մէջ՝ ծայր կու տայ գաղթի հսկայ շարժում մը, յատկապէս 1402 եւ 1404 տարիներուն: 1402 թրւականին ներքեւ Մաղաքիա դպիր կը գրէ. «Մ սոյն ժամանակի որ յետ բառնալոյ թագաւորութեան Հայոց ի Սոյ ժողովեցան թագաւորազունք եւ իշխանք եւ բազումք ի ժողովրդոց, մտեալ ի նաւ գնացին ի Փռանկաստան»²: Ուրիշ մեծղի գաղթ մը «յանկոյս ծովուն» շուրջ «տունս ԱՌ» (30.000), տեղի կ'ունենայ, ըստ Կիլիկեան ժամանակագրին, 1404ին, երբ Ռամազան՝ Գարամաններու իշխանը կը պաշարէ Սիսը. «Եւ յետ երթալոյն ի իշխանացն եւ մեծատանցն, ի Սիս մնացեալ աղքատք եւ չքաւորք որ ոչ ունէին զկարողութիւն փախչելոյ՝ ետուն գՄիս յունիսի գ»³:

ԺԵ. դարու կէսին, Սոյ Կարապետ Կաթողիկոսը նորոգեց եկեղեցին եւ իր աթոռը, սակայն այդ միջոցին դարձեալ կողոպտուեցաւ Սիսը եւ այս անգամ նշանաւոր Շահսուար Զիւլգատրեանէն. «խորհեցաւ չարութիւն Սոյ քաղաքին եւ բերդին, բազում հեծելազօրօք խաղաց ի վերայ նորա, ի յունիսի երկրորդ օրին, եւ հրկէզ արարեալ անցեալ գնաց, եւ էառ զԱտանա եւ զՏարսոն եւ զԾովահայեաց քաղաքն Յայաս. էառ նա եւ զԱնարգարա, զԿովառա եւ զամենայն դաշտն... եւ դարձեալ մրմուլով ի վերայ բերդին

1. Հայագատում, ԹԿ-Գ, 542: Այդ յիշատակարաններէն ոմանք տեսանք արդէն (էջ 43): Ալիշան սա խորհրդածութիւնները կ'ընէ Զաքարիա եպիսկոպոսի յիշատակարանին վրայ. «Սրտառուչ բան աչօք տեսողի. Ակումն եւ արեգակումն, վերոյիշեալ գրքեր եւ եկեղեցւոյ սպաններն են, որովք շատ հարուստ էր Հայոց այդ յետին մայրաքաղաքն, եւ ընկած էին այն ատեն՝ Ափի, գետնի վրայ. ի հին բառգիրս կայ գրուած հանդերձ նշանակութեամբն՝ Ափա կամ Ափս, հոգ» (անդ, ծճ. 10):
2. Ձեռ. Թ. 1645 Ս. Ղազարի, Թերթ 75ր. մէջբերուած՝ Սիսուան, էջ 542, ծճ. 3:
3. Ձեռ. Թ. 1318 Ս. Ղազարի, եր. 263. աւելի ընդարձակօրէն մէջբերուած՝ Սիսուան, էջ 542-543 եւ ասկէ՝ ՁԶ., Պատմ., էջ 785-786: Ռամազան յիշուած է նաեւ, 1432ի ուղեգրութեան ընթացքին, Փրանսացի ուղեգիր Պերդրանտէ (BERTRANDON, էջ 313-315, 325-326):

Սսոյ, եւ այրեաց. եւ Չաք պարոն կայր ի բերդն՝ պատերազմ արարին քրիստոնեայքն ի բերդէն, շատ տաճիկ սպանին, բայց աւելի տազնապելով տուաք զբերդն ի դեկտեմբերի երեք: Եւ ի թուին ԶԺԷ (1468) դնաց Շահսուարն դարձեալ ի Շամցուն երկիրն եւ առեալ հազար տուն տաճիկ Շամցի ելից ի Սիս քաղաքն: Դարձեալ եկն Շամցուն մեծն, եւ Շահսուարն դնաց ընդդէմ նոցա. եւ Սըսու թուրքերն եւ Շամցիքն եղան մէկ ի մայիս ամսոյ չորեքտասան եւ արարին պատերազմ. եւ խեցին զբերդ պարոնին զձիան եւ զղորեստան. եւ պարոնն բռնեց զքրիստոնեայս ետ ի հորն: Եւ քաղաքացիքս ամէն թողաք զտուն եւ ըռակ. եւ Փարսահ թուրքմանն թալնեց զքաղաքն, եւ շատ ըռակ առաւ. եւ զեկեղեցեաց անօթս կողոպտեցին. եւ զամենայն աւերութիւն զոր արարին՝ չեմ բաւական ընդ գրով արկանել: Եւ մեք եկաք ի Կոպիտառոյ բերդն»⁴:

Յիշատակագրի խօսքերէն կ'երեւի որ Սիսի մէջ բաւական թուով հայեր տակաւին կը բնակէին եւ իրենց ազատութիւնը ունէին, այնպէս որ կրնային տակաւին գէնք վերցնել եւ կուրիլ թշնամիներուն դէմ: Սիսի այս վերջին աւերումը շատ աւելի սաստիկ եղաւ քան թէ թագաւորութեան վերջանալուն ժամանակ. թէպէտ Եգիպտացիները եկան եւ այս բռնաւորը դուրս քշելով՝ գրաւեցին դարձեալ Սիսը, սակայն երկար չմնաց անոնց ձեռքը, վրայ հասան Օսմանեան հզօր կայսրութեան ուժերը Խալիլ փաշայի առաջնորդութեամբ եւ Սիսը ինկաւ 1487ին Օսմանցիներուն ձեռքը, երբ կուսակալ էր Սիսի՝ Սիպէկ պէկ: Ասով Սիսը եւ ամբողջ երկիրը խաղաղեցաւ, մանաւանդ երբ վերջացան Եգիպտոսի սուլթանութիւնը, Գարամաններու, Ռամազաններու եւ Զիւլգատրեանց իշխանութիւնները. ասով հանդերձ տակաւին աւարառութիւնները, աւազակութիւնները եւ կողոպուտները շարունակուեցան, եւ Սիս այս ժամանակ մեծապէս վնասուեցաւ, ինչպէս կը գրէ յիշատակագիր մը 1527ին. «Եկաւ Քաւրսէտին ձէլալայ ի Սիս քաղաք, մարդն փախաւ՝ ի բերդն ելաւ, շատ աւերում եղաւ. նա Աստուած ազատեց զՍիս քաղաքն ի ձեռն անօրէն Քաւրսէտէ»⁵: Այսպէս շարունակուեցաւ Սիսի կողոպուտը եւ անոր շուրջ կուրը զանազան բէկերու եւ կուսակալներու իշխանութեան ժամանակ:

Օսմանեան իշխանութեան ժամանակ, ինչ որ կ'երեւի, Սիսի ներքին կառավարութիւնը եւ իշխանութիւնը Հայերու ձեռքը մնացեր են ժամանակ մը, եւ Զէյթունի նման Սիսը կը կառավարուէր չորս մեծ տանուտէրներով, որպէս իրենց թագաւորին մեծ պաշտօնեաները: Այսպէս 1585ին, Ազարիա Կաթողիկոսի ընտրութեան մասին՝ եպիսկոպոսներու կողմէ Հռոմ ուղղուած նամակ մը կը ստորագրուի Սիսի չորս իշխաններէն. «Մարշալ իշխան՝ Խթոռակալ Սսոյ... Լիպարիտ իշխան՝ աթոռակալ Սսոյ, Յամուզ իշխան՝ աթոռակալ Մղտիսի. Պուտախ Լարիպի տղայ՝ իշխան Սիսայ»⁶: Այս իշխաններ-

4. Անդ, 62, էջ 579:
 5. Սիսուան, էջ 228:
 6. Անդ, էջ 229: Որոշ է թէ Կիլիկիոյ թագաւորութեան անկումէն ետքն ալ, մանաւանդ լեռնային Կիլիկիոյ մէջ հայ իշխաններ կրցած են շարունակել աւելի կամ նուազ երկար-


րու ժամանակ Սսեցի քանի մը վաճառականներ կ'երթան Վենետիկ եւ Մեսսինա, ու հոն վաճառականութիւն եւ առուտուր կ'ընեն. այս վաճառականներէն մի քանիին անունները քանդակուած կը գտնենք Վենետիկի Ս. Մարկոսի մեծ դրան մուտքի մարմարեայ սիւներէն մէկուն վրայ, շուրջ ԺՁ. դարու կէսերուն:

Այս ժամանակները Սիսի մէջ քիչ թիւով հայեր կը բնակէին, այսպէս 4000 կամ 5000 բնակիչներէն հազիւ 100 տուն հայեր կային, սակայն երթալով բազմացան ու հասան 700 տնուորի, ինչ որ բաւական մեծ թիւ ըլլալ կը նշանակէ: 1882ին կը յիշուին 500ի չափ հայու տուն»⁷:

Սիսի մէջ մնաց Հայոց կաթողիկոսութիւնը մինչեւ 1915 թուականը, ապէս ետք Հայերու տարագրութեան հետ՝ Սիսի կաթողիկոսութիւնն ալ Անթիլիաս փոխադրուեցաւ, ուր կը մնայ մինչեւ մեր օրերը:

օրէն իրենց տեղական իշխանութիւնը: Այդ իշխաններէն՝ թագաւորութեան անկումէն յաջորդող տարիներուն անունով կը յիշուին հետեւեալները. Կոստանդին, որ կը յիշուի 1376-1424 թթ. որպէս Բրկրի կառավարիչ [Շարունակութիւն ՍԱՄՈՒԷԼԻ ԱՆԵՑԻՈՅ, Բ, էջ 170: Կիլիկեան ժամանակագիր, մէջբերուած Սիսուանէ, էջ 543, ծն. 2: ՕՐՄԱՆԵԱՆ, Բ, հմ. 1349, սիւն. 1955, հմ. 1405, սիւն. 2049: ԱԼՊՈՅԱՃԵԱՆ, Բ, էջ 498-499: RÜDT-COLLENBERG, էջ 77, Թ. 206: ԶԶ., Պատմ., Գ, էջ 785: Ըստ Կիլիկեան ժամանակագիրին՝ Կոստանդին 1423-24ին կը գաղթէ Կիպրոս, յետ «թագաւորելու 48 տարի: 1426ին Տիգրանակերտի Ս. Սարգիս եկեղեցիին պատկանած Աւետարանի մը յիշատակարանը կը գրէ տակաւին զի թագաւորութեան Հայոց Կոստանդեայ» (ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ, Բ, էջ 425)], Կանչոյ տէր Օշին եւ որդին թորոս՝ որ կը մեռնի հօրմէն առաջ՝ 1387ին, յիշուած՝ Լոնտոնի թ. 116 հայերէն ձեռագրի յիշատակարանին մէջ (RÜDT-COLLENBERG, էջ 75, Թ. 191 եւ 202. հմտ. CONYBEARE, Armenian Manuscripts, էջ 290: Հաւանական չենք տեսներ Կանչոյ Տէր Օշինի՝ Եգիպտոսի մէջ ապրող հաւատուրաց Աշոտի հետ նոյնացումը, զոր կ'առաջարկէ RÜDT-COLLENBERG), Կոստանդին Դ.ի թոռան որդին՝ թորոս (Սիւր թորոս Կոստանց), մահացած՝ Կիպրոսի մէջ պատերազմի մը ընթացքին, 9 Օգոստ. 1425ին (հմտ. Սիսուան, էջ 561: RÜDT-COLLENBERG, էջ 79: ԶԶ., Պատմ., Գ, էջ 785), Սիսի իշխան՝ Կարապետ, նոյնպէս Կոստանդին Դ.ի թոռներէն, եւ Աւելպէկ, որոնք կ'առաջնորդեն 1404ի մեծ գաղթը (հմտ. Սիսուան, էջ 542: RÜDT-COLLENBERG, էջ 77, Թ. 201 եւ էջ 79):

7. Անդ:



Լամբրոն. ընդհանուր տեսք արևելքից:
Lambron: vue générale de l'est.

ԼԱՄԲՐՈՆԻ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Լամբրոն կամ Լամբրուն՝ Հայկական Կիլիկիոյ ամենէն նշանաւոր եւ պատմական յիշատակներով ճոխ բերդերէն մէկն է. կը գտնուի Տարսոնէն 145 քիլոմեդր հեռու, դէպի արեւմուտք, Տաւրոսի լեռներուն մէկ բարձունքին վրայ, այսօրուան Թուրքերէն Nemrun (Նեմրուն) կամ Çamlı Yayla (Չամլը Եայլա) կոչուած գիւղին վերեւ:

Այս բերդին մէջ հաստատուեցաւ 1072-1110ին՝ Օշին հայ իշխանը, եւ հոն հիմնեց Հեթումեան իշխանութիւնը, որ մէկ ու կէս դար տեւեց:

Մեր պատմագիրները բերդին անունը կը ներկայացնեն զանազան ձեւերով. Լամբրոն, Լամբրոն, Լամբրուն եւ Լամբոն: Ծիշտ ձեւը պէտք է ըլլայ՝ Լամբրոն: Կը գտնուէր Տաւրոսի լեռներուն ստորոտը, Տարսոնի հիւսիսակողմը, դաշտազետինի մը մէջէն բարձրացող ցից ժայռի մը կատարին, չորս կողմերէն շրջապատուած՝ խոր ձորերով եւ անանցանելի կիրճերով. այնպէս որ մեր պատմիչները երբ անոր մասին կը խօսին՝ զայն կ'անուանեն «Անմատոյց դղեակ», «Յոյժ անառիկ», «Անմատչելի դղեակ», «Անառ դղեակ», եւ զայն բաղդատելով Պապեոնի դղեակին հետ՝ կ'ըսեն. «առաւել քան զբերդն Պապիոնի անառիկ», եւ հուսկ, «անառիկ դղեակն ի թիկունս լերինն վերադրտակ մայրաքաղաքին Տարսոնի»¹: Այս գովեստները ցոյց կու տան անոր գերազանց դիրքը եւ կատարած դերը իր գոյութեան ընթացքին: Լամբրոնի բերդը կը գտնուէր ծովուն երեսէն 1500 ոտք բարձրութեան մը վրայ. շուրջը կը տարածուէին մայրիներու ընդարձակ անտառներ, գեղեցիկ մարգազետիններ, արօտավայրեր, օդասուն եւ ծառազարդ հովոցներ ուր կու գային ամրան տաք օրերը անցընելու՝ Տարսոնի եւ Ատանայի բնակիչները: Այս քաղաքներէն բերդին հեռաւորութիւնը ոտքով 12-16 ժամ էր: Բերդին ստորոտը լեռնադաշտերը զարդարող պտղատու ծառերու պարտէզները՝ Թուրքերը «Կեաւուր պահչէսի» [Անհաւատներու (իմա՝ քրիստոնեաներու) պարտէզ] կը կոչէին. ծառաստաններու մէջ ցրուած էին հոս ու հոն բազմաթիւ ամառնային փայտաչէն դարպասներ: Այս մշտադալար սարահարթներուն մէջէն բարձրացող լեռներէն մէկուն կատարին վրայ՝ թառած էր Լամբրոնի բերդը:

1. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, ԼԵ (ԼԷ), էջ 157: Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆՑ, Պատմութիւն վարուց ներսեսի Եպիսկոպոսի, ս.հ. 541: Հայագաւառու, ԹԳ, էջ 413: ՅԺԸ-Գ, էջ 457: Սիսուան, էջ 78-79:



Լամբրոն. միջնաբերդը՝ արեւմուտքից:
Lambron: le donjon vu de l'ouest.



Լամբրոն. միջնաբերդը եւ ներքին պարիսպները:
Lambron: le donjon et les murailles inférieures.

ցից կողերով՝ այս դժուարազնաց քարածայուին վրայ սանդուխներ փորեր էին, ուսկից միայն կարելի էր բերդ բարձրանալ: Այս բարձունքին կը տեսնուէին հեռուն՝ Տաւրոսի ձիւնազարդ կատարները, Կիլիկիոյ Կուկլիակ Կապանը, Ատանայի դաշտադէտինը եւ հուսկ Միջերկրական ծովուն արծաթ հայելին՝ մինչեւ Կիպրոսի լեռնազագաթները:

Բերդը շրջապատուած էր հզօր եւ անտեղիտալի հսկայ պարիսպներով, քառակուսի մեծղի աշտարակներով, որոնք՝ շուրջ տասը դարեր, դիմադրած են ամէն փոթորիկի, պատերազմներու, եւ տակաւին մեծ մասով կանգուն կը մնան:

Լամբրոնի բերդը հինգ դռներ ունէր, վսեմ, լայնարձակ կամարներով, որոնց վրայ քանդակուած կային թագապսակ առիւծներ եւ խաչանշաններ: Դռներէն ներս մտնելով առջեւը կը պարզուէին պարիսպներու եւ աշտարակներու եւ շինութիւններու աւերակոյտեր. այս աւերակներուն մէջ էր թագաւորական «Դարպաս»ը՝ սրբատաշ քարերով շինուած եւ ընդարձակ կամարներով շրջապատուած. պատերուն վրայ, յետագային մեծ մասամբ աւրուած հայկական գիրեր եւ թուանշաններ ալ կը տեսնուէին. բուրգերուն վրայ պատուհանի նման բացուածքներ կային՝ որոնք կը ծառայէին բերդէ բերդ նըշաններ հաղորդելու: Բերդին հարաւարեւելեան կողմին վրայ կը բարձրանար ութանկիւն կամարակապ աշտարակ մը, փոքրիկ լուսամուտներով, որուն ներքնայարկը մատուռ էր:

Վիկտոր Լանկլուա 1852-8ի շրջանին՝ այցելելով բերդը, քննեց զայն. բայց անոր մէջ ո՛չ ինքը եւ ոչ ալ ուրիշներ, իրմէ առաջ, տեւ արձանագրութիւն գտած չեն²: Տոքթ. Յ. Տէր Ղազարեան հետեւեալը կը գրէ Լամբրոնի բերդին մասին. «Տաւրոսեան լեռներու անտառախիտ բարձունքներէն մէկուն ժեռուտ գագաթին վրայ բազմած է Լամբրոնի բերդը: «Պանծալի քան զքնաւ հայկական շէնից Կիլիկիոյ», «գերահուշակ բերդն Լամբրոն», «անմատոյց դղեակն», «անառիկ բերդ յառաջնում գահաւանդի ահաւոր լերինն Տաւրոսի»: ... Բերդին զառիթափին եւ ստորոտի պարտէզներէն դիտողին, դէպի երկինք ցցուած խոշոր նաւու մը պատրանքը կու տայ ան: Բերդին հիւսիսային մասի չորս կամարակապ սենեակները միայն անեղծ մնացած են. բերդը քարերու, փլատակուած շէնքերու կոյտ մը դարձած է, մացառներով պատուած ու անճանաչելի դարձած: Մուտքի ճամբան արեւմտեան զառիթափին վրայ է, ասիկա միակ ուղին է, որով կարելի է բերդ մտնել: Ժայռը, որուն վրայ Լամբրոնի բերդը կանգնած է, գետնէն երեք հարիւր մեղր բարձրութիւն մը ունի, ուղղահայեաց կտրուածքով, ինչ որ անկարելի կը դարձնէ դէպի հոն բարձրանալը, բացի արեւմտեան ճամբայէն:

Բերդին վրայէն դիտուած համայնապատկերը դիւթիչ տեսարան մը կը պարզէ. դէպի հարաւ Տաւրոսեան լեռներու անտառուտ գագաթները, կապոյտ Միջերկրականը, Պապիոնի բերդը, Տարսոն եւ Մերսին, իր մօտակայ հովոցներով: Դէպի հիւսիս Պոզանդի եւ Պուլղար, Տաւրոսեան լեռներու ձիւնապատ գագաթները, Օչին թագաւորի ամարանոցը, Սկեւռայ վանքին ա-

2. Անդ, էջ 79:



Ընդհանուր տեսք
հիւսիս-արեւմուտքէն
(Մութաֆեան):
Vue générale
du nord-ouest
(Moutafian).



Լամբրոնի պարիսպների
մասեր (Մութաֆեան):
Ruines des murailles
de Lambron (Mutafian).

ւերակները, Յովանի «ազարակ-անապատը»: ... Բերդին ստորոտը Հեթում քաղաւորին աղբիւրը անունով ծանօթ վայրին մէջ, կը գտնուի խոշոր քար մը, որուն վրայ խոշոր գրերով արձանագրուած էր. «Կամարեցաւ աղբիւրս ի ժամանակի թագաւորին Հայոց Հեթմոյ»: Այս քարը մեր օրերուն Լամբրոնի Հայոց Եկեղեցւոյ մկրտութեան աւազանին ճակատին դետեղուած էր»³:

Լամբրոն բերդ մըն էր, կը գրէ Ալիշան, որ «եւ ոչ երբէք յիշի՝ ի պարտութիւն մատնեալ, եւ նուաճեալ յարձակմամբ, բայց եթէ ի հուսկ ուրեմն նուազի, որոյ երբն եւ որպէսն իսկ անյայտ, կամ թէ ընդ աղօտ ինչ յիշատակաւ, որպէս տեսցի յետոյ ի կարգին»⁴:

ՊԱՏՄԱԿԱՆ

Հայ թէ օտար պատմիչներու տուեալներուն համաձայն Լամբրոնի բերդը յունական շինութիւն էր, ինչպէս որ անունն ալ ցոյց կու տայ. Մովսէս Վարդապետ, Գէորգ Սկեւռացիի աշակերտը, ուզելով բացատրել Լամբրոն անունը, կ'ըսէ. «ի յունական բարբառոյն՝ ի հայ լեզու կրակարան լսի». իսկ յունարէն «Լամբրոն» պայծառ կը նշանակէ:

Լամբրոնի բերդը բիւզանդական պատմութեան մէջ չի յիշուիր. լատին ուղեգիրներ եւ հնախոյզներ, միջին դարուն մէջ, կը յիշեն զայն եւ կը կոչեն Լամբրոյ = Lambro⁵:

Սամուէլ Սկեւռացի գիտնական վարդապետը, գրելով Ս. Ներսէս Լամբրոնացիի կեանքը, թանկագին տեղեկութիւններ կու տայ Լամբրոնի բերդի եւ անոր տէրերու մասին: Բագրատունեաց իշխանութեան վերջանալուն, երբ Իսմայէլացիները գրաւեցին Անի մայրաքաղաքը, մեր թագաւորները եւ իշխանները թողլով իրենց հայրենական երկիրը, տարագրութեան ճամբան բռնեցին, եւ զաղթելով դէպի Արեւմուտք՝ եկան եւ հաստատուեցան յոյն թագաւորներու իշխանութեան պատկանող հողերուն մէջ, յուսալով հեռու ըլլալ Արփասլանի ճիրաններէն. դէպի Յոյներու երկիրները գաղթող այս իշխաններէն մէկն էր «այր ոմն իշխանացն Հայոց Ապլիսարիբ անուն, որ էր ի տանէն Վասպուրականի» (այսինքն Արծրունեաց ցեղէն)⁶: Ապլիսարիբ, յու-

3. ՏՈՔԹ. Յ. ՏԻՐ ՂԱԶԱՐԵԱՆ, Հայկական Կիլիկիա, էջ 83: Տես նաեւ՝ FEDDEN - THOMSON, Crusader castles, էջ 37-38:

4. Սիսուան, էջ 80:

5. Անդ, էջ 77:

6. Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆՅ, անդ: Հայապատում, ԹԳ, անդ: Ապլիսարիբ որդին էր Հասանի եւ թողը՝ Ոռւլ Ոռչիկի, Սենեքերիմ թագաւորի իշխաններէն, որ գաղթեց անոր հետ Սեբաստիա, անկից անցաւ Պոլիս, եւ կայսեր սիրելի դառնալով զբիւռեցաւ Կիլիկիա. նորոգեց Լամբրոն բերդը եւ ամրացուց Պապեոսը, ուր դրաւ իր աթոռը: Իր փեսան եղաւ Օշին Գանձակեցի, որ յետոյ ժառանգեց իր երկիրները եւ իշխանութիւնը: Իրեն փեսայացուց նաեւ Գագիկ Բ. թագաւորին կրտսեր որդին Դաւիթը, զոր յետոյ թունաւորելով սպանեց, կասկածելով անոր դաւաճանութեան վրայ: Մեռած է 1080ին եւ թաղուած Պապեոսի բերդին մէջ՝ իրեն համար շինած հանգստարանին մէջ: (Հմտ. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴ., Պատմութիւն, էջ 106: ԶԱՄԶԵԱՆ, Պատմութիւն, Բ, էջ 995: ԱՅԱՌԵԱՆ, Անճամանուճներու բառարան, Ա, էջ 22: ՔԱՍՈՒՆԴ, Ապլիսարիբ):



Լամբրոնի դղեակիմ գահլիմը՝ հարաւէն (Հելլենեմփէր):
Côté sud de la grande salle du château de Lambron (Hellenkemper).

նական հողերուն մէջ հաստատուելով, իր քաջութեամբ, հաւատարմութեամբ եւ խոհեմ ընթացքով՝ սիրելի եղաւ Յոյներու Ալեքս կայսեր, որ զինք ղրկեց արեւելեան սահմանները, «ի գաւառս Կիլիկեցւոց իշխել մայրաքաղաքին Տարսոնի եւ Մամեստիոյ»: Ապլխարիբ իր վրայ կայսրէն դրուած յոյսերը կ'իրականացնէ, եւ Կիլիկիան՝ որ պատերազմներէն ամայացած էր եւ քանդուած՝ կը վերաշինէ. «եւ շինեալ տաճարք աղօթից ի լեոնային եւ ի դաշտային գաւառս», ուր հոժ հայութիւն մը կ'ապրէր: Ապլխարիբ օրէ օր անուանի կ'ըլլայ եւ իր իշխանութեան սահմանները կ'ընդարձակէ, սակայն միշտ մնալով Յոյներու կայսեր հպատակ. «եւ մնայր ի հաւատարմութիւնն Յունաց»: Մամուէլի խօսքերուն նայելով՝ Ապլխարիբ կ'իշխէր դաշտային եւ նաեւ իր շրջանի լեոնային Կիլիկիոյ:

Ապլխարիբ «եզիտ ի ստորոտ լերինս Տաւրոսի եւ ի գլուխ քաղաքին Տարսոնի երկու անմատոյց դղեակս, միոյն անուն Լամբրաւն, միւսոյն Պապեռաւն, որք եւ ունէին շուրջ զինքեամբք գիւղս եւ աւանս»:

7. Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆՆՑ, ամոյ:



Լամբրոնի դղեակիմ գահլիմը՝ արեւմուտքէն (Հելլենեմփէր):
Côté ouest de la grande salle du château de Lambron (Hellenkemper).

Այս երկու բերդերէն մէկը՝ Պապիոնը՝ իրեն կը վերապահէ, իբրեւ «զանձուց շտեմարան» եւ հոն ալ կը շինէ եկեղեցի եւ դամբարան հանգստեան իրեն եւ որդիներուն համար. իսկ Լամբրոն բերդը կու տայ իրեն մտերիմ եւ սիրելի Օշին հայ իշխանին, որ իր հետ 1071ին Հայաստանի արեւելեան գաւառներէն Գանձակի Մայրեաց Զուրք աւանէն եկած հաստատուած էր Կիլիկիոյ մէջ: Ապլխարիբ Օշինի միայն երկիր եւ բերդ չի տար, այլ նաեւ Պետրոս Առաքեալին մասունքներէն մաս մը, որ իր հետ բերած էր իր երկրէն:

Ապլխարիբ եւ Օշին այս բերդերը նորոգ վիճակի մէջ գտած չէին, այլ քանդուած, ու զանոնք կը վերաշինեն. «եւ գտեալ զանառիկս ամայացեալ շինէր ըստ կարի»: Այս պատճառով՝ Ալիշան Օշինը կը կոչէ «նորոգ շինող Լամբրոնի»:

Ապլխարիբ կարեւոր դեր մը կատարած է Կիլիկեան իշխանութեան հաստատուելուն եւ զօրանալուն մէջ. խելացի գտնուած է՝ գիտնալով օգտազոր՝ ծել զաղթական հայ իշխաններու զօրութիւնը: 1052ի ժամանակները, «յարձակեցաւ ազգն Իսմայելացւոց ի վերայ գաւառիս Կիլիկիոյ, ի հինգ հարիւր թուականին Հայոց, եւ զամենայն դաշտային գաւառսն աւերեաց, հառ եւ

զՏարսոն եւ սրով ճարակեաց զքրիստոնեայսն», փնչալէս կ'աւանդէ Սամուէլ: Ապիւրարիբ արդէն վախճանած էր այս շրջանիս (իր յաջորդութեան մասին՝ տե՛ս աստ, Պապիռոմի բերդ):

Արարներու արշաւանքը վնաս չի պատճառեր Օշինի, որ, դարձեալ Սամուէլի խօսքերով, էր «մնացեալ յանմատչելի ամուրս՝ անփորձ»: Արարները կ'երեւի թէ Տարսոնը առնելով եւ դաշտային Կիլիկիոյ տիրելով եւ կողոպտելով՝ կը գոհանան, չեն հասնիր մինչեւ Լամբրոն. հետեւաբար Օշին կը շարունակէ իր շինարար գործը, մանաւանդ թէ կայսեր հանդէպ ցոյց տուած հաւատարմութեամբ՝ «առնոյր ի նմանէ անուն պատուոյ եւ տուրս զանձուց առատապէս»: Ասկէ ետք Օշին «Տէր Լամբրոնի» կը կոչուի⁸:

Օշինի մահէն ետք (1098) Լամբրոնի տէր կը դառնայ իր որդին Հեթում, նոր անուն մը: Այլիչան կը համարի թէ Օշինի հայրը Հեթում կը կոչուէր, որուն անունէն այս ցեղը Հեթումեանք կոչուեցաւ եւ ոչ թէ Օշինեանք: Հեթում իր հօր արժանաւոր զաւակը կ'ըլլայ, ազնուական ցեղէ, խելացի եւ քաջ, այնպէս որ Յոյներու կայսրը զինքը «Սերաստոս» կ'անուանէ. «եւ պատուեցաւ ի Յունաց արքայէն Ալեքսէ Սերաստոս անուամբ», կ'ըսէ Սամուէլ:

1098ին Կիլիկիա կը հասնին առաջին խաչակիրները, որոնք հիւրասիրուեցան անշուշտ հայ իշխաններէն եւ մասնաւորապէս Լամբրոնի տիրոջմէ Հեթումէն. եւ սակայն, կը յարէ Սամուէլ, «յետ ժամանակաց՝ անձուկ բազում նեղութեան կրեաց ի նոցանէ սերաստուան Հեթում՝ վասն հայրենի բերդին»: խաչակիրները Երուսաղէմը առնելէ ետք՝ երբ տիրեցին Միջագետքի շատ մը քաղաքներու, Անտիոքի, Ուրֆայի, Տրիպոլիոյ, սկսան աչք տրնկել հայկական հողերուն ու բերդերուն, եւ նեղել նաեւ հայ իշխանները: Լամբրոն չէր կրնար ազատ մնալ խաչակիրներու կողոպտելու մարմաջէն. հետեւաբար ուղեցին անոնք անոր ալ տէր դառնալ. բայց Հեթում գիտցաւ այս կացութենէն դուրս գալ յաղթական, յաջողելով կայսեր աջակցութեամբ՝ դանոնք հեռու պահել Լամբրոնի շրջակայքէն: Հեթում օրէ օր զօրացաւ իր բերդին կատարին վրայ ամրացած. մանաւանդ թէ 1118-1143ի շրջանին Հեթում ընդարձակեց իր հողային սահմանները եւ տիրեց ուրիշ բերդերու ալ, ինչպէս՝ Պապեոսի եւ Ասկուոսայ:

Հեթումեանները բերդերու պաշտպանութեան մէջ այնքան վարժ էին եւ քաջ կռուողներ, որ խաչակիրներն անգամ չկրցան անոնց սահմաններէն ներս ոտնձգութիւններ ընել եւ նուաճել զանոնք:

Հեթում Ա. Լամբրոնի տէր, խելացի քաղաքականութեամբ մը կրցաւ խաղաղ ապրիլ երկար տարիներ իր հայրենական բերդին մէջ: Ունէր մէկէ աւելի աղջիկներ, որոնց անունները չեն յիշուիր պատմութեան մէջ. Հեթում զանոնք հարս տուաւ իր շրջակայ հայ իշխաններուն եւ ազգականութեան կապերով իր ազդեցութիւնը տարածեց: Այսպէս՝ անոնցմէ մէկը ամուսնացուց Գրիգոր Գ. Կաթողիկոսի եւ Շնորհալիի եղբոր՝ Վասիլ իշխանին հետ, որոնք

8. Սիսուան, էջ 80-81: Օշինի մասին տես նաեւ LAURENT, Aspiétés, ուր հեղինակը կը փաստէ զանազանութիւնը իրարու գրեթէ ժամանակակից երեք անձերու՝ Aspiétés, Ursinus եւ Օշին:

Գրիգոր Մազիսարոս Բջնեցիի թոռներն էին: Մանչերէն երկրորդին՝ Սմբատի տուաւ Պապեոսի իշխանութիւնը. իսկ երէց որդին Օշինը, հօրը մահէն ետք, ամուսնացաւ Շնորհալիի միւս եղբոր՝ Զօրավարի Շահանդուխտ աղջկան հետ: Ասոնցմէ ծնան Հեթում եւ Ս. Ներսէս Լամբրոնացի⁹:

Հեթում Ա. կը վախճանի 1143ին: Իր որդին Օշին Բ.՝ շարունակեց հօրը քաղաքականութիւնը կայսեր հաւատարիմ մնալու, եւ ստացաւ անկէ «սերաստոս» պատուանունը, եւ «փարթամացաւ բազում զանձիւք»¹⁰:

Այս շրջանիս Կիլիկիոյ մէջ հայ իշխանները սկսած էին զօրանալ եւ այլազգիներու ձեռքէն յափշտակել բերդեր եւ ամրոցներ, մանաւանդ լեռնային շրջանին մէջ. այս իշխաններէն էին Ռուբինեանքը, որոնք կամաց կամաց զօրանալով սկսան իրենց լեռնային դիրքերէն վար իջնել եւ դաշտային Կիլիկիոյ մէջ հողեր գրաւել. ասիկա բնական է հաճելի չէր կրնար անցնիլ Հեթումեաններուն, որոնք յունասէր եւ կայսեր հպատակ՝ չէին ուզեր խռովել իրենց խաղաղութիւնը եւ կռուիլ կայսեր դէմ. հետեւաբար չհետեւեցան Ռուբինեաններու կայսեր դէմ ապստամբութեան ծրագրին:

Ռուբէն Ա., 1080ին, կը հաստատէր իր անունով իշխանութիւն մը՝ որ շուրջ հարիւր տարի վերջ թագաւորութեան պիտի փոխուէր: Օշին նիզակակից ըլլալով կայսեր, երբ Թորոս Բ. Պոլսոյ բանտէն ազատելով Կիլիկիա եկաւ, եւ կամաց կամաց տիրացաւ դաշտային Կիլիկիոյ ինչ ինչ քաղաքներուն, ու կայսրը Արեւելք զրկեց Թորոսի դէմ Անդրոնիկոս զօրավարը, 12.000 հեծեակներով, ասոր միացաւ Նաթանայէլեան իշխաններուն հետ՝ նաեւ Օշին Բ.: Անոնք կռուեցան Մսիսի դաշտին մէջ՝ Թորոսի դէմ. կայսերական բանակները յաղթուեցան, Սմբատ՝ Օշինի եղբայրը մեռաւ դաշտին վրայ, իսկ Օշին Բ. գերի բռնուեցաւ. կրցաւ ազատիլ միայն 40.000 ոսկի փրկագին եւ իր հազիւ երկամեայ Հեթում որդին ալ պատանդ տալով:

Հեթում մեծցաւ Թորոս Բ.ի քով եւ անկէ սիրուեցաւ. Թորոս անոր կընտրեան տուաւ իր աղջիկը եւ զայն իր հօր քով զրկեց:

Սակայն Օշին, չենք գիտեր փնչ պատճառով, կ'ըսէ Այիչան, կրկին զէնք բարձրացուց Թորոսի դէմ 1165ին. այն ատեն Թորոս եկաւ Լամբրոնի սահմանները եւ հոն, կ'ըսէ Սամուէլ. «ոչ սակաւ խռովութիւնք լինէին եւ հեղմունք արեան ի մէջ երկուց իշխանաց»¹¹:

Օշին կը վախճանի 1175ին: Քսան տարիներ գրեթէ անցան մինչեւ որ Կիլիկիան իշխանութիւնը թագաւորութեան փոխուեցաւ եւ եկաւ Մեծն Լեւոն:

Լեւոն Ա. իր թագաւորութեան առաջին տարիներուն խոհեմութեամբ վարուեցաւ Հեթումեաններուն հետ. սակայն չէր կրնար հանդուրժել Հեթումեաններու յունասիրութեան եւ անոնց բռնած հպարտ դիրքին՝ իրեն հանդէպ: Ուստի, կ'ըսէ Սմբատ, «խորհէր Լեւոն իմաստութեամբ փետտել ըզթեւս նոցա, եւ ցածուցանել զբարձրայոն հպարտութիւն նոցա»¹²: Եթէ հար-

9. Անդ: 10. Հայագատում, 69, էջ 414: ՅՈՎՍԷՓԵԱՆՅ, սիւն. 543: 11. Սիսուան, էջ 81: ՅՈՎՍԷՓԵԱՆՅ, սիւն. 385: 12. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 211: Տե՛ս նաեւ ԿԻՐԱԿՈՄ ԳԱՆՁԱԿԵՑԻ, անդ:

ցրենք թէ ինչո՞ւ էր Ռուբինեաններու այս հակառակութիւնը Հեթումեաններու հանդէպ, գլխաւոր պատճառը գուցէ այն էր որ Ռուբինեանները կասկածներ ունէին Հեթումեաններու մասին՝ զանոնք խոչընդոտ նկատելով իրենց իշխանութեան ընդարձակութիւնը, եւ ապա իշխանութիւն մը հաստատելուն, հակառակ յոյն կայսրերուն:

Ասկէ զատ՝ Հեթումեանները ի կոնիոյ սուլթանին հետ բարեկամական եւ նիզակակցութեան դաշինք մը կնքած էին, հակառակ Ռուբինեաններուն, եւ ստէպ կ'ապստամբէին անոնց դէմ: Այս է զոր կ'ուզեն մատնանշել Սմբատ եւ Կիրակոս, երբ կ'ըսէ. «Եւ խորհէր Լեւոն իմաստութեամբ փետտել զթեւս նոցա, եւ ցածուցանել զբարձրայօն հպարտութիւն նոցա»:

Լեւոն՝ իր այս մտադրութիւնը կը խորհի իրականացնել առանց դէնքի, խորամանկօրէն թակարդ մը լարելով Հեթումի դէմ. «Ոսէր ընդ Հեթում որդի Օշինի, բանս ախորժականս մտաց նորս»: Ի՞նչ էին այս ախորժական խօսքերը. իր Ռուբինեաններէն ազատ արձակել Փիլիպէն կնութեան տալ Հեթումի որդւոյն՝ Օշինի. «Եւ Հեթում շնորհակալութեամբ ընկալաւ զբանն եւ ուրախացաւ»:

Հարսանիքի պատրաստութիւնները սկսան տեսնուիլ Տարսոնի մէջ:

Հեթում «եկն տամբ եւ զաւակօք եւ ամենայն ախիւք ի Տարսոն»¹³: Գարանը լարուած էր, Լեւոն կ'ուզէր ճզմել Հեթումեաններու ըմբոստ ընթացքը. ուստի կը բռնէ հարսնեւորները՝ երբ Տարսոն կը հասնին եւ իր քով կը պահէ. «Եւ առաքեալ էառ զԼամբրուն առանց մարտի», կ'ըսէ Սմբատ: Լեւոն առանց արիւն թափելու տէր կը դառնայ Լամբրոնի բերդին. Հեթում յանկարծակի կու գայ, եւ իր հարսնիքի ուրախութիւնը սուգի կը վերածուի. Լեւոն՝ հարսնեւորները «եւ զՀեթում եղ ժամանակս ինչ ի բանս»:

Լամբրոնի նուաճումը հետեւեալ ձեւով կ'աւանդէ Կիրակոս. «Արքայն Լեւոն մինչ կենդանի էր՝ էր բերդ մի ի նորա աշխարհին, յոյժ անառիկ, որում անուն էր Լամբրոն, եւ իշխանն որ տիրէր բերդին՝ ապստամբաց ի նմանէ, որում անուն էր Հեթում, եւ նա բազում անգամ ջանացեալ՝ ոչ կարէր նուաճել զապստամբն. ապա յետոյ խորամանկութեամբ խաբեալ զնա խնամութեան աղազաւ, որպէս թէ տայցէ զգուստր եղբոր իւրոյ՝ որդւոյ նորա Օշնի կնութեան, ըմբոսեալ զնա եւ զորդիս նորա չարչարեալ, ետուն ի նա զամրոցն. եւ նորա առեալ եղ ի նմա զմայրն իւր գտիկնանց տիկին, եւ գրեաց նզովս ոչ եւս այլ տալ զնա իշխանի ումեք, բայց միայն արքունի լիցի, զի հանապազ, ասէ տեսաք նորա ապստամբք են լեալ վասն ամրութեանն»¹⁴: Նոյն դէպքը կը պատմէ նաեւ Սմբատ Սպարապետ, սակայն քիչ մը տարբեր կերպով, ուսկից կ'երեւի որ Լեւոն յաջորդաբար աւելի լաւ վարուած է Հեթումեաններուն հետ ու զանոնք հանած բանտէն. «Եւ ապա հանեալ ի բանտէն ետ նմա գեղորայս բազումս եւ պատուով ընդունէր զնա, եւ նա ծառայէր նմա միամտութեամբ, ըստ իմաստութեան իւրոյ, զի էր այր զգօն եւ մեծիմաստ զբազէտ յոյժ»¹⁵: Այս բոլորը տեղի կ'ունենայ Լեւոնի թագա-

13. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 211-212:
 14. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, ամբ:
 15. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 212: Հմտ. Սիսուան, էջ 504-505:

դրութենէն վերջ, որովհետեւ Լեւոնի թագադրութեան հանդէսին ներկայ էր նաեւ «Իշխանն Լամբրունին Հեթում», հայրը՝ Օշինի: Սակայն ինչ որ կ'երեւի Սմբատ Սպարապետի պատմութենէն, Հեթումեանները կրկին փորձեր ըրած են ապստամբութեան, եւ Լեւոն դարձեալ բռնելով Հեթումը բանտած է Վահկայի մէջ. «Եւ դարձեալ յետ ամաց ինչ կայեալ զնա եւ եղ ի բանտի»: Հեթում ձանձրացած իր այս նեղացուցիչ աշխարհային կեանքէն, բանտի մէջ իսկ կ'որոշէ քաշուիլ աշխարհէն եւ կրօնաւոր ըլլալ. «Եւ նա անդ (այսինքն բանտին մէջ) զգեցաւ զգեստ կրօնաւորութեան», հրաժարելով պաշտօնապէս ոչ միայն աշխարհէն, այլ եւ Լամբրոնի բերդի իշխանութենէն: Մինչ Հեթում Վահկայի բերդին մէջ բանտարկուած էր, Լեւոն տեսնելով որ հասած է իր նպատակին՝ ծուկի բերելով հպարտ Հեթումեանները, կ'ելլէ կ'երթայ Վահկայ բերդը՝ Հեթումի սիրտը առնելու եւ հաշտուելու համար. «Եւ զնաց թագաւորն առ նա ի բանտ ի Վահկայն եւ խնդրեցին թողութիւն յիրերաց, եւ ազատեաց զնա թագաւորն»: Լեւոն՝ Հեթում կրօնաւորը Դրազարկի վանահայր կը կարգէ՝ ուր ան կը մնայ մինչեւ իր մահուան օրը, կոչուելով «Աբբայ Դրազարկի» եւ փոխելով իր անունը՝ կը կոչուի Հեղի, «Եւ ի ժամ կրօնաւորութեանն փոխեցաւ անուն նորա, եւ անուանեցաւ Հեղի»¹⁶:

Վախճանած ըլլալու է 1212-1218 տարիներուն, որովհետեւ 1210ին Լեւոնի կողմէ իբրեւ ղեսպան կը զրկուի Իննովկենտիոս Գ. Պապին եւ Օթոն կայսեր, թագ խնդրելով՝ Ռուբինեաններէն թողան համար:

Հեթում կրօնաւոր ըլլալով, անոր որդիները իրենց մէջ բաժնեցին անոր թողած ժառանգութիւնը: Օշին՝ Հեթումի անդրանիկ որդին՝ չի յիշուի պատմութեան մէջ, վաղահաս մեռած ըլլալով. անոր Կոստանդին եղբայրը, ժառանգելով Լամբրոնը, կը կռուի Ռուբինոյ սուլթանին դէմ (1217) եւ գերի կ'իյնայ. սակայն Լեւոն զայն կ'ազատէ փրկանք տալով¹⁷: Լեւոնի մահէն ետք, Պապեոտնի իշխան՝ Կոստանդին Պայլը, Հեթում Ա. ի հայրը, որ Լամբրոնացի Կոստանդինի ալ քեռայրն էր, զայն իր որդիին թագադիր եւ խնամակալ կը կարգէ: Սակայն ժամանակ մը վերջ, ըստ հայրենի սովորութեան, Կոստանդին կ'ապստամբի իր քեռորդւոյն Հեթում Ա. արքային դէմ: Կոստանդին Պայլ թագաւորահայրը եւ թագաւորը կը ջանան զինքը համոզել, բայց ի զուր: Ան սուլթանէն օգնութիւն առնելով կը մնայ ապստամբ. բայց երբ սուլթանը կը յաղթուի թաթարներէն եւ Կոստանդին առանձին կը մնայ, այն ատեն Հեթում կը յարձակի եւ կը գրաւէ Լամբրոնի բոլոր գեղերը եւ անդաստանները: Կոստանդին կը ստիպուի ղեսպաններ զրկել Հեթումի եւ հաշտութիւն խնդրել, իր որդիները պատանդ տալով թագաւորին. սակայն Հեթում չ'ընդունիր անոր առաջարկը: Ապստամբ Կոստանդին Ռուբինոն կ'երթայ եւ դարձեալ սուլթանէն օգնութիւն առնելով յանկարծակի կը յարձակի Հեթումի հողերուն վրայ եւ շատ աւերներ կը գործէ: Հեթում տեսնելով այս չարիքները, իր զօրքերը կը հաւաքէ եւ հակադարձակումի կ'անցնի. Կոստան-

16. ՍՄԲԱՏ, ամբ: Սիսուան, անդ:
 17. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 221-222: Սիսուան, էջ 84: ԱՃԱՌԵԱՆ, ԱճԳՅԱՆՑՆԵՐՈՒ ԲԱՌԱՐԱՄ, Բ, 657:

դին հազիւ կրնայ փախչելու եւ ապաստանիլ իր բերդին մէջ՝ սակաւաթիւ գոր-
քերով, ու անկէ վերջ՝ ա՛լ չի համարձակիր դուրս գալ իր բերդէն¹⁸ :

Սամուէլ Անեցիի շարունակողներէն մէկը համառօտ կերպով կը գրէ այս
մասին՝ ըսելով. «Ապստամբեաց Լամբրոնեցի Կոստանդին ի Թապաւորէն Հեթ-
մոյ եւ ել առ Խիաթատին սուլտանն, եւ առեալ գոր՝ գայ ի Կիլիկիէ եւ յաղ-
թեալ լինի»¹⁹ :

Այս ապստամբ Կոստանդինի առաջնորդութեամբ Իկոնիոյ սուլթանին հե-
րոսակները 1245ին «ընդ Պարպառոնին ընտոն ի վայր» իջնելով՝ աւերակ դար-
ձուցին շատ գիւղեր եւ եկան պաշարեցին Տարսոնը. սակայն Հեթում անոնց
դէմ ելլելով՝ կը յաջողի վտարել զանոնք²⁰ :

Թէ ինչո՞ւ էր Կոստանդինի այս ռիսակալութիւնը եւ քինախնդրութիւնը
իր արեւնակիցներուն դէմ, դժուար է որոշ պատասխան մը տալ. գուցէ նպա-
տակ ունէր Կիլիկիոյ Թագին տիրանալու :

Կոստանդին այսքան շարիք հասցնելէ ետք, ինքն ալ 1250ին «սպանաւ
սրով» : Ալիշան կ'ենթադրէ թէ ան Կոստանդին Պայլի ձեռքը ինկած ըլլայ,
եւ իբրեւ մատնիչ սպաննուած : Կոստանդինի մահով եւ արիւնով կ'երեւի թէ
երկու կողմերու քինախնդրութիւնը վերջ կ'ըզանէ²¹ :

Հեթում Բ. Թապաւորի օրով, Կոստանդին Բ. Կաթողիկոսը երբ գահըն-
կէց կ'ըլլայ, ժամանակ մը զայն կը պահեն Լամբրոնի բերդին մէջ. սակայն
չի յիշուիր թէ այս ժամանակ ո՞վ էր բերդատէրը. կ'երեւի թէ Հեթումի եղ-
բայրներէն մէկն էր, հաւանօրէն կրտսեր եղբայրը Ալիմախ, որ Միսի եւ Ատա-
նայի ժողովներուն մէջ, 1307ին եւ 1316ին, կը ստորագրէ «Տէր Լամբրոնի» :

Ալիմախէն վերջ Լամբրոնի տէր կը յիշուի Կոստանդին, Հեթում Պատմի-
չի որդին, որ 1329ին, Լեւոն Դ-ի հրամանով՝ իր Օշին եղբոր հետ սպան-
նուեցաւ²² :

Ատանայի Թանգարանին մէջ պահուած է հետեւեալ մարմարեայ արձա-
նագրութիւնը, զոր կ'աւանդէ Տ. Շաւարշ քհնյ. Պալլմեան, տեսած ըլլալով
1 Դեկտ. 1962ի իր այցելութեան ընթացքին. «ՇԻՆԵՑԱԻ ԶՐԱՂԱՑՆԻՍ : ՀՐԱ-
ՄԱՆԱԻ ԵԻ ԾԱՍԽԻԻՔ ԱԻՇԻՆ ՄԱՐԱԶԱԽՏՈՒ ՀԱՅՈՑ : ՈՐԴՈՑ ԿՈՍՏԱՆԴԵԱՅ
ԼԱՄԲՐՈՎՆԻ ԹԱԳԱԴՐԻ ՀԱՅՈՑ : Ի ԹՎԻՆ ԶԽԲ (1293)»²³ :


18. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, էջ 157-158: Տե՛ս նաեւ ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 212 եւ Սիսուան,
էջ 84 եւ 505:
19. Տե՛ս Սիսուան, էջ 84, ծն. 2: ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ Պատմութեան այս շարունակութիւնը,
որմէ կ'օգտուի Ալիշան Սիսուանի մէջ՝ չ'երեւիր վաղարշապատի 1893ի հրատարակու-
թեան մէջ. դէպքը չի յիշուիր նաեւ Յովսէփեանցի հրատարակած համառօտ ժամանա-
կագրութեան մէջ (ՅՈՎՍԵՓԵԱՆՑ, սիւն. 523-532): Այս ժամանակագրութեան եւ Անեցիի
շարունակողներու համեմատութեան մասին՝ տես անդ, սիւն. 531-534:
20. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 227:
21. Սիսուան, էջ 85:
22. Սիսուան, անդ:
23. Տես վերը՝ Սիսուանի քերականագրութիւնը, ծն. 25: Արձանագրութեան ընթերցումին տպագրական վրի-
պակները սրբագրած ենք նոյնինքն Տ. Շաւարշ Պալլմեանի ձեռագրին վրայէն, զոր ինք աղ-
նուօրէն ցոյց տուած է մեզի:

Այս մարաջախտ Օշինը, անշուշտ, եղբայրն էր Կոռիկոսի Տիրոջ Հեթում
պատմիչի՝ որ կը սպաննուի 1309ին, եւ զարմիկը՝ 1307ին Անարզարայի մէջ
Մոնղոլներու կողմէ սպաննուած Օշին սպարապետին²⁴ :

Այսպէս՝ Օշին Գանձակեցիէն սկսեալ, երկուքուկէս դարու տեւողու-
թեամբ, միայն ինը իշխաններ կը յիշուին իբր Լամբրոնի տէր: Անոնցմէ վերջ
յիշատակութիւն չենք գտներ. եւ այսպէս անյիշատակ կը մնայ նաեւ Լամ-
բրոնի բերդին վախճանը, աւերումը եւ ամայանալը :

Հաւանական է որ Եգիպտացիներու արշաւանքներու շրջանին Լամբրոն
բոլորովին քանդուած եւ ամայացած ըլլայ²⁵ :

24. Հմմտ. RÜDT - COLLENBERG, էջ 66, Թ. 116: Անարզարայի կոտորածի մասին տես
վարը՝ Անարզարա, ծն. 31:
25. Լամբրոնի ճարտարապետական կառոյցի եւ ներկայ վիճակի մասին տես ընդարձակօրէն՝
ROBINSON - HUGES, Lampron; HELLENKEMPER, Burgen, էջ 228-236:



Պապիռոն. ընդհանուր տեսք (Մուֆաֆեան):
La forteresse de Papéron: vue générale (Moutafian).

ՊԱՊԻՌՈՆԻ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Պապիռոնի բերդը Կիլիկիոյ հին եւ անուանի ամրոցներէն մէկն էր. կը գտնուէր Չանտըր գիւղի մօտերը, Տարսոնէն շուրջ 40 քմ. դէպի հիւսիս-արեւմուտք. կը բարձրանար քարաբլուրի մը վրայ, շրջապատուած ապառաժուտ եւ դժուարագնաց լեռներէ. իր բարձր դիրքին համար Տարսոնի ծովախորշէն կը տեսնուէր աչքով, առանց դժուարութեան: Բերդին անունը գրուած կը գտնենք նաեւ Պապիռոն, Պապիռուան, Պապիռուան, Պապիռուան, Պապառոն ձեւերով:

Պապիռոնի բերդը՝ համանուն գիւղի բնակիչներէն կը կոչուէր Չանտըր քաղաքի: Բերդը իր ստորոտը ունէր Չանտըր անունով երկու գիւղեր. մին՝ Ստորին կամ Փոքր Չանտըր, որ ձորին մէջ էր. իսկ միւսը՝ Մեծ կամ Վերին Չանտըր, լեռան բարձրաւանդակին վրայ՝ հրաշալի եւ օդասուն դիրքով, ուր օդափոխութեան կ'երթային ամառը ստորին Չանտըր գիւղի բնակիչները: Այս վերին Չանտըր գիւղէն քիչ հեռու կը բարձրանար առանձին քարաբլուրի մը վրայ, Չանտըր Քաղաքին, որ հին ատեն Պապիռոնի բերդ կը կոչուէր: Այս բերդին մէջ եղող եկեղեցիին մէջ գտնուած է Հեթում Ա. Թագաւորին եղբոր՝ Սմբատ Գունդստապլի մէկ արձանագրութիւնը, ուր ինքզինքը կը կոչէ «Տէր դրեկիս հայրենական»: Սմբատ Գունդստապլը եղբայրն էր Օշինի, եւ հօրեղբայր՝ Ս. Ներսէս Լամբրոնացիի: Այս արձանագրութեան մէջ «տէր դրեկիս հայրենական» կոչումը, շատ հաւանօրէն կը վերաբերի Պապիռոնի բերդին. թէեւ Սմբատ Պապիռոնի բերդէն զատ՝ տէր էր նաեւ ուրիշ բերդերու, ինչպէս պիտի տեսնենք: Պապիռոնի բերդը, սակայն, իր հայրենական սեփական բերդն էր. կերպով մը իր հօրմէ ժառանգուած. այս մասին կը գրէ Սմբատ Սպարապետ պատմիչը. «Իսկ Թագաւորն Հայոց Հեթում [Ա.], հանդերձ հարազատօք իւրովք Սմբատիւ [Գունդստապլ], որ եւ տէր գոյով անմատչելի դրեկին Պապիռոնին...»: Բացի այս բերդէն, տէր էր նաեւ «Սմբատայ կլային, Աստուայ, Ֆրիսուցն, Պապատուլին, Սիկոյ, եւ Մուռանդնին...»¹:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգրք, էջ 244:



Պապիռոնի բերդի մուտքը (Մուքաֆեան) :
Entrée de la forteresse de Papéron (Moutafian).



Պապիռոնի սանդուխտները (Մուքաֆեան) :
Les escaliers de Papéron (Moutafian).

Մեր պատմիչները ամէն անգամ որ կը խօսին Պապիռոնի բերդին մասին՝ զայն կը կոչեն ամուր, ամառիկ, ամմատչելի, ինչ որ իրականին մէջ կը համապատասխանէ իր դիրքին եւ տեղւոյն :

Պապիռոնի բերդը երեք կողմերէն գրեթէ անմատչելի էր . խոր անդունդներ, ցից ժայռեր զայն կը շրջապատէին եւ անմերձենալի կը դարձնէին : Հոն կարելի էր բարձրանալ միայն հիւսիս-արեւելեան կողմի ճամբէն : Ասիկա ժամանակի ընթացքին խանգարուած ըլլալով, անցեալ դարուն բերդին մուտքը կարելի էր միայն նոյն կողմի ջրամբարի ճամբէն, որ կը գտնուէր բերդին ձախ կողմը : Հոն ժայռին մէջ փորուած անցք մը կար, բաւական ընդարձակ, ուր կարելի էր ելլել եւ մտնել՝ քարին մէջ փորուած 142 սանդուխտներէ : Բերդին աւագ դուռն ալ, որ ճարտարապետական հրաշալիք մըն էր, դժբախտաբար մեծ մասով կործաներ էր, սակայն պարիսպներէն մեծ մաս մը տակաւին կանգուն էր . կանգուն էին նոյնպէս անոր հօր աշտարակներէն մի քանին² :

ՊԱՏՄԱԿԱՆ

Մեզի անձանօթ կը մնայ՝ թէ ե՛րբ եւ որմէ՛ շինուած է Պապիռոնի բերդը : Հաւանաբար, կ'ըսէ Ալիշան, «առաջին հիմնարկու սորին յայտ է թէ նախ քան զգալուստ մերագնեայցս էր, ի Յունաց Բիւզանդացւոց, կամ ի հնագունից եւս . այլ ի պատմութեան նոցին՝ կարծեմ անյիշատակ մնայ մինչեւ ի կէս ԺԱ. դարու»³ :

Մինչեւ ԺԱ. դար մեր պատմիչներն ալ զայն չեն յիշեր : Երբ կիլիկեան լեռներու բարձունքներուն վրայ կու գան հեռու աշխարհներէ եւ կը հաստատուին Ռուբինեան հայ իշխանները, ու կռիւի կը բռնուին Կիլիկիոյ հին տէրերուն՝ Յոյներուն հետ, ահա՛ այս շրջանին մէջտեղ կ'ելլէ Պապիռոնի բերդին անունը, եւ կը յիշուի իբրեւ կալուած հայ իշխաններուն, տրուած՝ բիւզանդացի կայսրերէն :

Որո՞նք էին այս հայ իշխանները, որոնք Արեւելքէն եկած եւ Բիւզանդիոնի կայսեր հպատակներ եղած եւ անոր ծառայութեան մէջ մտած էին . այս իշխաններէն առաջինը՝ որ կը յիշուի մեր պատմիչներէն, Ապլիսարիք հայ իշխանն է . սա՛ կը յիշուի թէ Գանձակի կողմերէն գաղթեր է Բիւզանդիոն՝ հոն կայսեր ծառայութեան մէջ մտած եւ իր քաջութեան համար կայսրէն, հաւանաբար 1072ին, ղրկուած՝ Կիլիկիա, ինչպէս կը գրէ ժամանակագիր Մ. Ուռհայեցի, «առ Ապլիսարիք, իշխանն Հայոց՝ որդւոյ Հասանայ՝ որդւոյ Խաչկայ իլիմ՝ առն քաջի, ի Վասպուրական գաւառէ» : Իսկ Սամուէլ Սկեւոացի կը գրէ . «այր ոմն յիշխանացն Հայոց Ապլարիպ անուն՝ որ էր ի

2. ԱԼԻՇԱՆ, Սիւռւան, էջ 70 : Պապիռոնի բերդը՝ պատմական, տեղագրական ու ճարտարապետական-յատակագծային ամբողջական մերձեցումով վերջին ուսումնասիրողներէն յիշենք յատկապէս՝ J. GOTTWALD, Papéron; HELLENKEMPER, Burgen, էջ 237-240 :
3. Անդ :



Պապիռոնի դղեակը (Մուփաֆեան) :
Le château de Papéron (Moutafian).

տանէն Վասպուրականի, իբրեւ զմտերիմ եւ զխոհեմ եւ զարի ի գործ պատերազմի՝ առաքեցաւ յինքնակալէն Ալեքսէ ի գաւառս Կիլիկեցւոց՝ իշխել մայրաքաղաքին Տարսոնի եւ Մամեստիոյ...» : Ապլիարիբ Կիլիկիա կու գայ, իբրեւ կայսրէն զրկուած հոն իշխելու եւ կառավարելու երկիրը : Մամուէլ կ'ըսէ. «Սա եզիտ ի ստորոտ լերինն Տաւրոսի եւ ի գլուխ քաղաքին Տարսոնի երկու անմատոյց զղեակս, միոյն անուն Լամբրուն եւ միւսոյն Պապիռուն» : Այս զղեակները որքան որ բարձր դիրքերու վրայ կը գտնուէին, սակայն, ինչպէս Մամուէլ կ'ըսէ՝ «ունէին շուրջ զինքեամբք զիւրս եւ աւանս», որով Ապլիարիպ «զՊապեոսն իւր սեփականեաց գանձուց շտեմարան»⁴ :

Ապլիարիպ Վասպուրականէն առանձին չէ որ կու գայ, այլ «եկեալ ազգատոհմաւ իւրով», իր ամբողջ ընտանիքով եւ գուցէ իր հաւատարիմ իշխաններով եւ հպատակներով : Մամուէլի խօսքերէն կ'երեւի որ Ապլիարիպ այս բերդերը կանգուն եւ լաւ վիճակի մէջ գտած չէ, քայքայուած եւ լքուած էին անոնք՝ դարերէ ի վեր եւ ամայացած. իր հեռատես միտքը կը տեսնէ այդ բերդերուն զինուորական կարեւոր դիրքը եւ ձեռքը անոնց վրայ կը դնէ, «եւ գտեալ զանառիկս ամայացեալ շինէր ըստ կարի», եւ ամէնէն առաջ կ'ըսէ

4. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Բ, ճԺԹ, էջ 263: Հայապատում, ԹԳ, էջ 413-414: ՅՈՎՍԷՓԻԱՆՑ, սիւն. 541-542: Իր մասին տես աստ՝ Լամբրոն, յն. 6:

Մամուէլ. «պատրաստեաց նախ ի ծայր բերդիս հանգստարան սուրբ եւ զըլխաւոր Առաքելոյն նշխարաց»⁵ : Ապլիարիպ հոն կը շինէ եկեղեցի մը՝ որ իր տոհմին հանգստարանը պիտի ըլլար⁶ :

Ապլիարիպ, սակայն, Ալէքս կայսեր նախորդներէն պէտք է որ զրկուած ըլլայ Տարսոն, որովհետեւ Ալէքս թագաւորած է 1080ին, արդ այս թուականէն տարի մը առաջ է որ Գագիկ Բ., Բագրատունի վերջին թագաւորը, Ապլիարիպի կ'երթայ՝ Տարսոն, անոր աղջկան ձեռքը խնդրելու իր Դաւիթ որդւոյն. չյաջողելով այս գործը, նեղուած ետ կը վերադառնայ, եւ ճամբան 1079ին կը սպաննուի Մանտալեան եղբայրներէն⁷ :

Ապլիարիպ կը վախճանի հաւանօրէն (ըստ Հ. Ն. Ակինեանի) 1080ին, եւ կը թաղուի Պապիռոնի մէջ շինած իր դամբարանին մէջ : Սա արու զաւակ չունենալով՝ իր իշխանութիւնը եւ բերդը կը յանձնէ իր աւագ իշխաններէն մէկուն, որ փեսան էր Հեթումեանց տոհմէն Լամբրոնի Օշին իշխանին եւ որուն անունը, Չամչեանի համաձայն, Սահակ ըլլալու էր⁸ : Օշին, ինչպէս տեսանք խօսելով Լամբրոնի մասին, Ապլիարիպի հետ Արցախէն եկած էր Կիլիկիա, եւ անոր վստահութիւնը եւ սէրը կը վայելէր :

Ապլիարիպի մահով Պապիռոնի բերդի իշխանութիւնը կ'անցնի Հեթումեաններուն. այս անցքի թուականը մեզի անծանօթ կը մնայ. որոշ է որ Պապիռոնի բերդը ԺԲ. դարու կէսէն առաջ անոնց ձեռքն էր եւ նոյն ժամանակի Պապիռոնի բերդին տէրն էր Սմբատ՝ Ներսէս Լամբրոնացիի հօր Օշին Բ.ի եղբայրը, եւ թոռը Օշին Ա.ի, որ 1151ին սպաննուեցաւ երբ կայսեր բանակին մէջ կը կռուէր Ռուբինեանց Թորոս Բ. իշխանին դէմ, թողլով երկու մանչ եւ մէկ աղջիկ, Բակուրան, Վասակ, եւ Ռիթա :

Սմբատի մահէն ետք, իրեն կը յաջորդէ անդրանիկ որդին՝ Բակուրան, որուն քոյրը Ռիթա՝ Թորոսի եղբոր Ստեփանէի հետ ամուսնացած էր : Երբ Ստեփանէ ողբերգական մահով կը վախճանի, այդ իշխանութեան կը տիրանայ իր անզգամ եւ բռնաւոր եղբայրը Մլեհ : Ռիթա չկարենալով ապրիլ Մլեհի ձեռքին եւ պաշտպանութեան տակ, կ'առնէ իր որդիները Ռուբէն (Բ.) եւ Լեւոն (Ա. թագաւորը), եւ կ'երթայ Պապիռոն իր եղբոր Բակուրանի քով. «եւ գնաց ի Պապիռոնն առ եղբայր իւր Բակուրան, եւ անդ նստեալ սնուցանէր զնոսա. եւ էր բարեպաշտօն եւ իմաստուն կիսն այն եւ երկիւղած ի Տեառնէ, որոյ կոչէր անունն Ըռիթա...»⁹ :

Բակուրան, կ'ըսէ Սմբատ, «տէրն Պապիռոնին էր այր բարի եւ առատ, եւ բարեբարոյ առ ամենայն ոք, եւ սիրելի Աստուծոյ եւ մարդկան...»¹⁰ : Բակուրան, երբ հայ իշխանները կը սպաննեն Մլեհը, որ իր հօր թիւ մէկ

5. Հայապատում, անդ :

6. Անդ : Հմմտ. Սիսուան, էջ 70 յջ. :

7. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 263-265: ՍՄԲԱՍ, Տաբեգիբէ, էջ 86-87: Հմմտ. Սիսուան, էջ 71:

8. ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., Ներսէս Լամբրոնացի, էջ 413: ՉԱՄՉԵԱՆ, Բ, էջ 1005: Սիսուան, էջ 71: ԱԿԻՆԵԱՆ կամայական կը նկատէ Չամչեանի վարկածը՝ թէ Օշինի փեսան Սահակ կը կոչուէր (անդ) :

9. ՍՄԲԱՍ, Տաբեգիբէ, էջ 187:

10. Անդ :



Պապիռոնի պարիսպները (Մուքաֆեան) :
Restes des murs de Papéron (Moutafian) :



Պապիռոնի մուտքերն մէկը (Մուքաֆեան) :
Une entrée de Papéron (Moutafian).

Թշնամին էր, անյիշաչար ոգիով տէր կ'ըլլայ անոր թոռներուն, եւ երբ հայ իշխանները Մլեհի տեղ իրենց իշխան կը խնդրեն Ռուբէն Բ.ը (Ստեփանէի որդին), սիրով զայն կը շնորհէ հայ իշխաններուն, «բազում գանձիւք ոսկւոյ եւ արծաթոյ» : Անտարակոյս ան դեռ աւելի պատուեց Թորոսի փոքրիկ եղբայրը՝ Լեւոն (Ա.), երբ ան արքայական գահին վրայ բարձրացաւ, եւ որու թագադրութեան հանդէսին ալ 1199ին ներկայ գտնուեցաւ, ինչպէս կը զրէ Սմբատ. «իշխանն Պապեռոնի Բակուրան»¹¹ : Բակուրան երկար ապրած է :

Բակուրանի մահէն ետք, Պապիռոնի տէր կը դառնայ անոր Վասակ եղբայրը, որ տէր էր նաեւ «Բերդին Ասկուսոյ եւ Լամոսի» : Սա եւս երբ կը վախճանի, Պապիռոնի բերդը ժառանգութիւն կը թողու իր Կոստանդին որդիին, որ Պայլ ալ կրչուած է եւ եղած է թագաւորահայր Լեւոն Ա.ի եւ սպարապետ Կիլիկեան իշխանութեան :

Երբ Կոստանդին Պայլ թագաւորահայրը կը վախճանի (1263ին), իր հայրենի ժառանգութիւնը եւ կալուածներն ալ կը թողու իր անդրանիկ որդիին՝ նշանաւոր Սմբատ Գունդստապլի (1208-1276), որուն 1224էն ի վեր յանձնած էր արդէն իր սպարապետութեան պաշտօնը :

Սմբատ Գունդստապլը, իր Կոստանդին հօրմէ եւ Լեւոն Մեծէն վերջ, Կիլիկեան թագաւորութեան շրջանի ամէնէն ազդու, ուշիմ եւ կարող անձնաւորութիւններէն մէկը եղած է. եւ իր Հեթում Ա. թագաւոր (1229-1369) եղբորմէն ալ գերազանց կը հանդիսանայ իր իմաստութեամբ, քաջութեամբ եւ պատերազմական հանճարով : Թողած է բազմաթիւ գրութիւններ, «Տարեգիրք»ը, «Օրինագիրք» մը Մխիթար Գօշի հետեւողութեամբ, «Անսիղք Անտիոքայ» թարգմանութիւնը, իր ջեռայրին՝ Կիպրոսի թագաւոր Հենրիկոս Ա.ի ուղղուած «Թուղթ»ը : Իր հրամանով կատարուած են նաեւ բազմաթիւ օրինակութիւններ : Յիշատակարանի մը մէջ՝ գրուած 1244ին, զոր կը գտնենք Արխատտէլի Ստորոգութեանց եւ Նիււաջիի գործերուն հաւաքման մէջ, իր մասին կ'ըսէ.


«Տըրուպ գինուորս եւ եղկելիս,
Սմբատ անուն իմ Հայկազնիս,
Տէր եւ Պարոն Պապէռաւնիս,
Եղբայր Հեթմոյ թագաւորիս
Եւ սպահապետ Հայոց գնդիս...»¹² :

Իսկ «Անսիղք»ի յառաջարանին մէջ այսպէս կը ներկայացնէ ինքզինքը. «Ես, Սմբատ ծառայ Աստուծոյ եւ Գունդուստապլ Հայոց, եւ որդի Կոստանդեայ եւ եղբայր բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ (Ա) եւ տէր Պապառոնին»¹³ :

11. ԱՅԳ, էջ 210 :

12. ՅՈՎԱԷՓԵԱՆՆՑ, սիւն. 955 : Տե՛ս նաեւ Սիսուան, էջ 71 եւ Հայագատում, ՅԼԳ, էջ 481 : որ ունին թեթեւ տարբերակներ Յովսէփեանցէ եւ իրարմէ :

13. SEMPAD LE CONNETABLE, Assises d'Antioche, Venise, 1876, p. 3.



Բերդին պատուհաններէն մէկը (Մուքաֆեան) :
Une fenêtre de la forteresse (Moutafian).



Կամար մը (Մուքաֆեան) :
Un arc de la forteresse (Moutafian).

Երբ Հեթում Ա. Կիլիկեան դահին վրայ կը բարձրանայ 1224ին՝ Սմբատ անոր սպարապետը կ'ըլլայ, յաջորդելով իր Կոստանդին Պայլ Տօր, ու մեծ դեր կը կատարէ Կիլիկիոյ պատմութեան մէջ: Դաշինք կնքելու նպատակով՝ Թաթարներու խանին կ'երթայ եւ կը շնորհաւորէ Քէուք խանի զահակալութիւնը: 1250ին Թաթարիստանէն կը վերադառնայ եւ Տարսոնի մօտ հին Պապեոնի բերդին մէջ կը շինէ փառաւոր եկեղեցի մը¹⁴:

Սմբատ սպարապետ, Եգիպտացիներուն դէմ յաղթական պատերազմներ կը մղէ, Սարվանդիքար կոչուած բերդին առջեւ. կը հասնի մինչեւ Մարաշի դռները, եւ մինչ կը հալածէր թշնամին Եփրատէն անդին, դժբախտ պատահարի մը զոհ կ'երթայ. այս մասին կը գրէ յիշատակագիր մը. «Ի թուիս ՉիԴ (1275) եկն Մսրայ սուլտանն ի Սիս եւ աւերեաց բազում գեօղս, եւ սրոյ ճարակ ետ գլուղլս, եւ թագաւորն Լեւոն (Բ.) ի սուր մաշեաց զնոսս եւ մնացեալքն փախստեայ անկան ի խորչս իւրեանց»: Սակայն այս յաղթանակը չուտով սուգի կը վերածուի, որովհետեւ Սմբատ սպարապետ անզգուշութեամբ ծանր պատահարի մը զոհ կ'երթայ. «Իսկ սպայապետն Հայոց մեռաւ քաջութեամբ կացեալ ի մէջ նոցա. եւ յորժամ ելեալ (դառնայր) ի պատերազմէն՝ երկվարն հարեալ զնա ընդ ծառոյ միոջ՝ ոչ կարաց տանել ցաւուն, քանզի յոյժ ծերացեալ էր, զնաց ի Սիս, եւ սակաւ ինչ ապրեալ, բարի խոստովանութեամբ ննջեաց ընդ հարսն իւր...»¹⁵:

Թէ ո՛վ յաջորդած է Սմբատ Գունդստապլի իր սպարապետութեան պաշտօնին մէջ, իր մահէն վերջ, մեր պատմիչները չեն ըսեր. հաւանաբար իր որդիները շարունակած են իրենց Տօր պաշտօնը՝ Պապիոնի բերդին մէջ. սակայն Սմբատի որդիները, մէկը միւսին ետեւէն, չուտով վախճանած են, առանց ժառանգ թողու:

1289ին Պապիոնի բերդին ժառանգութիւնը կը ստանայ Լեւոն, որ իբրեւ Գունդստապլ կը յիշուի:

Պապիոնի բերդի այս տէրերէն ալ շուրջ տասը տարի ետք, 1295ին, հոն իբր իշխող կը գտնենք Թորոս արքայորդին՝ Հեթում Բ.ի եղբայրը. ասկէ կ'երեւի որ այս շրջանին Պապիոնի բերդը Թագաւորական տան կալուած եղած էր: Ասիկա ցոյց կու տան նաեւ Վատիկանի դիւաններուն մէջ պահուած քանի մը վաւերագրեր, որոնց համաձայն, Լեւոն Գ. իր Թագաւորութեան առաջին օրերուն, իր Հեթում խնամակալին հաւանութեամբ եւ խորհուրդով, որ Նղրոյ բերդին տէրն էր, զայն կու տայ իբրեւ կալուած իր աներոջ՝ Օշինին, որ Կոռիկոսի բերդին ալ տէրն էր, եւ Հեթում պատմիչի որդին¹⁶:

14. ԱՃԱՌԵԱՆ Զ., ԱճճԱՌՈՒՄՆԵՐՈՒ ԲՈՒՄԱՐԱՄ, Դ, էջ 557: Հմմտ. Սիսուան, էջ 71:

15. Հայապատում, անդ: Յիշատակագիրը կ'ըսէ. «զի յոյժ ծերացեալ էր»: Ալիւան հետեւեալ ծանօթութիւնը կ'աւելցնէ. «ոչ այնքան ծեր, զի ծնած էր յամի 1206, † 1276, ի 6 Մարտի: Ուրիշ յիշատակագիր մը կ'իմացնէ՝ որ ոտքը զարնուեցաւ ծառին եւ ճրգմըւեցաւ»: (Անդ, ծն. 1): Տե՛ս նաեւ ԱԼԻՇԱՆ, Սմբատ Գունդստապլ Հայոց եւ Անսիգֆ Անտիոքայ, «Բազմավէպ», ԼԴ (1876), էջ 317-318, եւ Սիսուան, էջ 72, ուր մէջբերուած է Սմբատի մահը աւելի մանրամասնօրէն նկարագրող, բայց թերի հասած յիշատակարան մը:

16. Սիսուան, էջ 73:

Երբ Օչին 1329ին դաւադրութեամբ մը Լեւոն Դ-ի հրամանով կը սպաննուի, Պապիոնի բերդը դարձեալ Թագաւորական կալուած կը դառնայ:

Այս թուականէն վերջ մեր պատմիչները այլեւս չեն յիշատակեր այդ բերդը: Պապիոնի բերդին պաշարումը եւ առումը չի յիշուիր մեր պատմութեան մէջ, կ'ըսէ Ալիշան. իր անտիկ դիրքը, զինքը շրջապատող անանցանելի խոր կիրճերը եւ բարձր աշտարակները թոյլ չէին տար որ թշնամին մօտենար եւ պաշարէր զայն. միայն 1245ին կը յիշուի թէ Քէյ Սոսրով սուրթանը Իկոնիոյ, եկած եւ պաշարած է զայն, Հեթում Ա-ի օրով, անկէ իր վերէժը լուծելու համար, որովհետեւ Հեթում Թաթարներուն մատնած էր անոր կինը եւ աղջիկը, որոնք իր քով ապաստանած էին. Սոսրով Պարոն Կոստանդինի (սպարապետի) հետ «մտաւ ընդ Պապառոնին լեառն ի վայր, ու այրեաց զամէնն»¹⁷, եւ զնաց պաշարեց Տարսոնը: Սակայն Ալիշան կը համարի որ հոս յիշուած Պապառոնին լեառն, իբր համանուն բերդին, չի յարմարիր Չանտըր Գալէսի դիրքին¹⁸:

Չանտըր բերդի եկեղեցիին դրան վրայ, դուրսէն, քանդակուած է 1251ին կամ 1256ին գրուած արձանագրութիւն մը, ուր կը յիշուին Հեթում (Բ.), Սմբատ Գունդատապլ եկեղեցիին շինողը, եւ իր Կոստանդին եղբայրը.

«Հեթում եղբայրս իմ պանծական,
Ստացայ շինել վէժ գլուխ անկեան.
Բազում ծախիւք եւ սրբարան»¹⁹,
Սմբատ անունս Հայկազան.
Տէր դղեկիս հայրենական,
Եւ գունդուստապլըս զինական.
.....
Յիշել զճնողս իմ
Չկոստանդինս մեծ իշխան,
Չեղբայր զորդի եւ զագգական
.....
Ի մեծ թվականս Չ եւ Ե»²⁰:

Ի՞նչ վիճակի մէջ կը գտնուի այսօր Պապիոնի բերդը: Այս հարցումին պատասխան կու տայ Տոքթ. Յ. Տէր Ղազարեան, որ իր երիտասարդ օրերուն այցելած եւ տեսած է զայն. «Տարսոնէն քառասուն քիլոմետր հիւսիսարեւմուտք կը գտնուի Պապիոնի բերդը, Չանտըր Գալէ: Բերդը շինուած է ժայռերու վրայ, ձորերով շրջապատուած. ելքի միակ ճամբան հիւսիսա-

յին կողմէն է. խորունկ ձեռակերտ ջրամբարներ կը գտնուին այլ եւ այլ տեղեր: Տասնեւթ տողոց հայկական արձանագրութիւններ կը գտնուին բերդին արեւմտեան պատին վրայ, ուր անկարելի է հասնիլ: Հայր Կ. Սիպիլեան 1878ին հեռադիտակով, հեռուէն, երկու օր ժամանակ յատկացնելով, հազիւ կրցած է կիսկատար բաներ մը կարդալ: Մենք հազիւ կրցանք առանց հեռադիտակի, քանի մը հայկական տառեր որոշել:

Պապիոնի բերդին շրջակայքը կը գտնուին փլատակներ. պէտք է ըլլան դամբարաններ եւ Մլիճոյ վանքի աւերակները, ինչպէս նաեւ Սմբատ Գունդատապլի ձեռակերտը՝ Սմբատայ Կլան»²¹:



Պապիոնի մնացորդներ՝ ԺԹ. դարու գծագրի մը համաձայն («Սիսուան»էն):
Des restes de Papéron selon une esquisse du XIX^e siècle (de «Sissouan»).

21. ՏԻՐ ՂԱԶԱՐԵԱՆ Թ., էջ 15-16: SIR DENNIS WRIGHT, 1946ին, ոչ մէկ հետքի չէ հանդիպած 1256ի վերոյիշեալ արձանագրութեան. հմտ. BOASE, Castles, էջ 158:

17. ՄՐԲԱՏ ՍՊԱՐ., էջ 227:
18. Սիսուան, անդ:
19. Հաւանական է որ ըլլայ սրբարան:
20. Սիսուան, անդ: «Առ հասարութիւն չարիոյ ոտից բանին՝ կարծելի էր ընթեռնուլ եւթմ-հարիւրեան» կը գրէ Ալիշան (ամդ, ծն. 4): Պապիոնի եկեղեցիին եւ անոր ճարտարապետութեան մասին տես ընդարձակօրէն՝ EDWARDS, Eccles. Architecture, էջ 161-162, պատկերք 1, 8-12:

ՄՄԲԱՏԱԿԱՅ

Լեռնային Կիլիկիոյ բերդերէն մէկն էր Մմբատակլայ, յիշուած նաեւ Մմբատայ-կլայ եւ Մմբատկլայ ձեւերով: Կը գտնուէր Լամբրոնի բերդին մօտերը, դէպի Հիւսիս-արեւմուտք, բարձր քարածայոյի մը կատարին, հրաշալի դիրքով եւ բնութեան գեղեցկութիւններով օժտուած: Հ. Կղեմէս Սիւլիւեանի անդլիացի ուղեկիցը Տէյվիս՝ տեղւոյն բնական դիրքին մասին կու տայ հետեւեալ նկարագրականը. «Այս շրջանի բնական գեղեցկութիւնը ամէն նկարագրութենէ վեր է: Ժայռերու ստորոտէն սրընթաց գետակ մը կը հոսի, որուն երկու ափերը ծածկուած են սօսիներով, արքակաղնիներով եւ ընդարձակ մարգագետիններով: Գետակի երկու ափերէն կը բարձրանան ահագին տեսքով քարածայոյեր, որոնց մէջ կան բնական քարայրներ, ամբողջութեամբ շրջապատուած եղեւիններով, որոնք ժայռերու ծերպերէն դուրս կը ցցուին: Ժայռերու վառ գոյները, կարմիր, բոսոր, դեղին, ծիրանի եւ գորշ, մերթ պայծառ ու մերթ աղօտ, իրարու հետ խառնուելով՝ դեռ աւելի կը շեշտեն տեսարանին գեղեցկութիւնը»¹:

Այս գեղեցիկ շրջանը ամբողջութեամբ կը պատկանէր Կիլիկեան իշխան Մմբատ Գուլգուտապլի. այս շրջանին մէջ էր իր ձեռակերտ նշանաւոր Սըմբատկլան, որու մասին կը գրէ ինքը իր մէկ յիշատակարանին մէջ 1241ի ժամանակները.

«Տըրուպ զինուորս եւ եղկելիս,
Մմբատ անուն իմ Հայկազնիս,
.
Նոյն եւ շինող ի բնէ նորոյ
Ջանառ դղեակս անմարտելիս,
Որ ըստ իմոյ անուանս եղի,
Մմբատկլայ քաջ ամրոցիս»²:

1. «The natural beauty of the spot is beyond all description. Below the rock a river flows, the banks of which are covered with plane and walnut trees, and a carpet of grass. The river, again, is enclosed on both sides by enormous rocks of great height, full of natural caves, and covered with pine-trees, which shoot up at all angles. The brilliant colours of the rocks, red, scarlet, yellow,

Այս տողերէն կը հասկցուի՝ որ բերդը ամբողջութեամբ Մմբատ Գուլգուտապլ ինքը շինած է եւ իր անունով Մմբատկլայ կոչած:

Ուրիշ յիշատակութիւն չունինք այս բերդի մասին. միայն Մմբատ Սպարապետ, անցողարար եւ պատահամբ կը յիշատակէ զայն առանց մանրամասնութիւններու, երբ կը խօսի Հեթում Ա. Թագաւորի կատարած մէկ արշաւանքի մասին: Եգիպտոսի Պեկպարս սուլթանը Կիլիկիոյ վրայ կու գայ մեծ բանակով եւ կը հասնի Անտիոքի մօտերը. Հեթում Ա., իր Մմբատ Գուլգուտապլ եղբոր հետ, բանակով մը անոր դէմ կ'ելլէ. Պեկպարս տեսնելով հայ բանակին ոյժը՝ առանց պատերազմելու ետ կը քաշուի. Հեթում ալ իր եղբոր հետ Կիլիկիա կը վերադառնայ: Այս առթիւ Մմբատ Սպարապետ կը գրէ. «Իսկ Թագաւորն Հայոց Հեթում (Ա.) հանդերձ հարազատօք իւրովք Մմբատիւ, որ եւ տէր գոյով անմատչելի դղեկին Պապեռոնին, Մմբատայ կլային...»³: Իրմէ վերջ Մմբատկլայի տէր կը յիշուի միայն իր համանուն եւ համակարգ թողը Գուլգուտապլն Մմբատ՝ որդի Լեւոնի, որ տակաւին կենդանի էր 1320ին⁴:



Մմբատայ բերդի արտաքին տեսք (Մ. Փափազեան):
Vue extérieure de la forteresse de Smbat (M. Papazian).

purple and gray, here distinct, there blended and running into each other, add greatly to the beauty of the scenes» (DAVIS, p. 45).
2. ՅՈՎՍԷՓԵԱՆՅ, 955: Հայապատում, Թշուկ. 334, էջ 481: Սիսուան, 76: Այս վերջինս կը կարգայ. ի բնէն որմոյ] ի բնէն նորոյ: Յիշատակարանի մասին՝ տե՛ս աստ, Պապիանի բերդ, թ. 12:
3. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 244: Տե՛ս Պապիանն, թ. 1:
4. Սիսուան, էջ 76, 258: RÜDT - COLLENBERG, էջ 70:

ԴԵՂՆՔԱՐ ԲԵՐԴ

Դեղնգար կը գտնուէր Տարսոնի մօտերը: Չայն կը յիշէ Սմբատ Սպարապետ, 1269ին պատահած մեծ երկրաշարժին առիթով. կը գրէ՝ «Ի թուին ՉժԸ (1269) եղեւ շարժ ասատիկ եւ յաշխարհին Կիլիկիա ի տեղիս բազում չէնս յաւեր դարձոյց, եւս առաւել առ լերամբն որ Սեաւ կոչի. եւ զանառիկ դղեակն Սարվանդաւ յաւեր դարձոյց, եւ զքնակիչսն առ հասարակ մահացոյց եւ ի սուրբ ուխտն Արքակաղնին քահանայսս եւ կրօնաւորսս վախճանեցան ի տանցն ընկրմելոց, եւ ընդ լեռնակողմն ընդ այն բազում չէնս եւ ըզբերդն Դեղնգարն, եւ այլ բազում տեղիս խարխալեալ հերձեաց»:

Սակայն յետագային, 1319ին, բերդը վերաշինուած է Օշին Բ.ի օրով: Շինողները արձանագրութիւն մ'ալ թողած են, որ բարեբախտաբար անեղծ մընացած է դարերու ընթացքին: Յ. Տէր Ղազարեանի վկայութեամբ, 1860ական թուականներուն Տարսոնցի երիտասարդներ զայն կորուստէ փրկելու համար՝ հանած են բերդէն եւ Տարսոն տանելով զետեղած են եկեղեցիին աւազ խորանին ներքեւ գտնուող խցիկի պատին վրայ: Այս արձանագրութիւնը ծանօթ էր Ալիշանի:

ԿԱՄԱԻՔ ԱՆՄԱՀ ԲԱՐԵՐԱՐԻՆ
ՈՐ Է ՊԱՏՃԱՌ ԶԱՆՈՒՐՑ ԳՈՅԻՆ:
ՍՈՒՐԲ ԵՒ ՀՁԱՒՐ ԱՐՔԱՅՆ ԱԻՇԻՆ
ՏԵՐԱՄԲ ԹԱԳՎՈՐ ՀԱՅՈՑ ՉԱՐՄԻՆ:
ԿԱՆԳՆԵԱՑ ՉԱՄՐՈՑՍ ԱՅՍ ԱՀԱԳԻՆ
ՆՈՑՈՒՆՑ ՈՐ ԱՍՏ ԱՊԱՍՏԱՆԻՆ:
ԸԶՀԻՄՆԱԴԻՐ ԱՅՍ ԱՄՐՈՑԻՆ
ՉԹԱԳԱՉԱՐՄԸՆ ԿՈՍՏԱՆԴՆԻՆ:
ՈՐ ՆԱ ՏԻՐԷ ՄԵԾ ԴՂԵԱԿԻՆ
ՈՐ ԴԵՂՆՔԱՐ ԱՆՈՒՆ ԿՈՉԻՆ.
ԱՒԱՐՏԵՑԱԻ ՉԱՆԱԻՔ ՍՈՐԻՆ
ՉԿԸԻՆ: (եաւթըն հարիւր վաթսուն ութին)

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 251:

ԱՐԴ ՈՐ Ի ՍԱ ԱՊԱՍՏԱՆԻՆ.
ԵՒ ԿԱՄ ՄԱՐՄՆՈՑ ԱՉԱԻՔ ՆԱՅԻՆ:
ՏԱԼ ՓՈՆԱՐԷՆ ՉՏԷՐ ՈՂՈՐՄԻՆ՝
ԼԻՆԵԼ ԺԱՌԱՆԳ ԱՂԻՆ ԴՐԱՆՏԻՆ: Ատէն²:

Դեղնգարի այս նշանաւոր արձանագրութիւնը կը յիշէ նաեւ Ս. Ղազարի անտիպ Կիլիկեան ժամանակագրութեան հեղինակը, որ զայն տեսած է Տարսոնի Սուրբ Աստուածածին եկեղեցիին մէջ: Ահա՛ իր խօսքերը.


«Ի սոյն թվին [ՉԿԳ] կանգնեաց Օշին ամրոց մի, Կոստանդնուս՝ թագաւորմիւ ձեռամբն, որ սորա մի պատուական քարն մարմարեայ տեսաք, որ եղեալ են այժմ ի սեղանն սուրբ եկեղեցոյն ի Տարսոն եւ գիր ի վերայ՝ որ է այս. Խնամօք անմահ բարեբարին, որ է պատճառ հանուրց գոյին, որ եւ հօր արքայ Օշին, տէր թագաւոր Հայոց զարմին. կանգնեաց զամրոցս այս ահագին, նոցունց որք աստ ապաստանին. զհիմնադիր այս ամրոցին ըզթագաւորմն Կոստանդին, որ նա տիրէ մեծ զղեակին, որ Դեղնգար անուն կոչին. աւարտեցաւ ջանիւք սորին. եօթն հարիւր վաթսուն՝ ութին»³:

Արձանագրութիւնը կը գտնուէր 0,82x0,55 մ. չափերով սեւ մարմարի մը վրայ: Այս քարին՝ Տարսոնի եկեղեցիին փոխադրութիւնը՝ նշան է թէ բերդը շատ հեռու չէր Տարսոնէն: Ըստ Յ. Տէր Ղազարեանի, Դեղնգար (զոր ինք Օշինի ամրոց կը կոչէ) հազիւ մէկ ժամ հեռու էր Լամբրոնէ՝ դէպի արեւելք⁴:

Արձանագրութիւնը, անշուշտ յարգելու համար Օշին թագաւորը, որ դղեակը կանգնելու հրամանը տուած էր, անոր կը վերագրէ ամրոցին շինութիւնը, «հօր արքայ» կոչելով զայն, բայց ինչ որ կ'երեւի՝ անոր բուն հիմնադիրը եւ տէրը թագաւորմ Կոստանդինն էր, որ մեծ ջանքերով զայն կ'աւարտէ 1319ին՝ երկու տարուան ընթացքին:

Ըստ Ալիշանի, այս Կոստանդինը վրնար Նղրոյ տէր Չամբուլայ Հեթումի որդին ըլլալ⁵, որ յետոյ կը թագաւորէ իբր Կոստանդին Գ. (Դ) (1365-1373) եւ ծնած ըլլալու է 1300ի շուրջ⁶: Նկատի առած, սակայն, այս Կոստանդինի շատ երիտասարդ տարիքը բերդի շինութեան թուականներուն, մեզի աւելի հաւանական կը թուի որ յիշեալ Կոստանդինը ըլլայ Լամբրոնի տէր Կոստանդին Գունդատապլը, որ կը սպաննուի Ատանայի մէջ 1329ին⁷: Դեղնգարի մերձաւորութիւնն ալ Լամբրոնի աւելի հաւանական ցոյց կու տայ այս վարկածը:

2. Սիսուան, էջ 273: Այս արձանագրութիւնը Ալիշան հրատարակած է Հ. Ստ. Եազընեանի թղթագանգուած նմանահանութեան վրայէն:
3. Ս. Ղազարի Ձեռ. թիւ 1318, էջ 228-229: Անծանօթ հեղինակը չի մէջբերեր արձանագրութեան վերջին տողերը: Այս ժամանակագրութիւնը կը հասնի մինչեւ 1605: Ուրեմն յիշեալ արձանագրութիւնը Տարսոնի Մայր եկեղեցին կը գտնուէր Յ. Տէր Ղազարեանի յիշած 1860ական թուականներէն շատ առաջ: Թերեւս, այդ թուականներուն՝ եկեղեցոյ մէջ թեթեւ տեղափոխութիւն մը կրած ըլլայ, խորանին տակ աւելի ապահով տեղ մը դրուելով:
4. Յ. Տէր ՂԱՉԱՐԵԱՆ, Կիլիկիա, էջ 18:
5. Սիսուան, էջ 273:
6. Հմմտ. RÜDT - COLLENBERG, էջ 73:
7. Անդ, էջ 69: Կոստանդինի զլուրը իբրեւ նուէր կը զրկուի Եգիպտոսի սուլթանին:



Les Portes ciliciennes (Pylae Ciliciae)
 «Կիլիկիոյ Դուռ» կոչուած կիրճը:

ԿՈՒԿԼԱԿ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Կուկլակ՝ Կիլիկիոյ նշանաւոր եւ հնագոյն բերդերէն մէկն էր, մեր նախնիքներէն կոչուած Բերդ Կապանի կամ Բերդ Դրանց Կիլիկիոյ. Թուրքերը զայն կը կոչեն Կիլիք քալէ: Կը գտնուի Տաւրոսեան լեռնաշղթայի համանուն գիւղին մօտ բարձրացող կատարի մը վրայ: Ատանայէն եւ Տարսոնէն դէպի Անգարա գացող ճամբան անոր առջեւէն կ'անցնի, որ երբ կը հասնի շ. 1050 մեղր բարձրութեան՝ լեռներու հետզհետէ իրարու մօտեցող կողերը նեղ կ'իրճ մը կը ձեւացնեն. այս կ'իրճը կամ անցքը՝ մեր նախնիքները Կապան կամ Դրանք Կիլիկիոյ կը կոչէին: Այս կապանին արեւմտեան մէկ բարձուն-

1. Պատմութեան մէջ գլխաւոր երկու կապաններ կը յիշուին, իբրեւ անցքեր դէպի Կիլիկիա եւ դէպի Ասորիք ու Միջագետք: Արեւելեան կապանը կը գտնուէր Մարաշի մօտերը՝ Էլպիստանի լեռներուն մէջ, իսկ այս արեւմտեան կապանը՝ Տարսոնէն այսօր դէպի Անգարա գացող ճամբուն վրայ: Այս անցքը, զինուորական տեսակէտով, կարեւոր ճամբայ մըն էր, հինէն ի վեր ծանօթ՝ Ասորեստանցիներուն, Եգիպտացիներուն, Պարսիկներուն: Այսօր իսկ այս անցքին կողի մէկ ժայռին վրայ քանդակուած կը մնան անունները այն զօրավարներուն եւ բանակներուն՝ որոնք անցեր են անկից: Կուկլակայ կապանը, շուրջ 4 քլմ. երկարութեամբ, կը գտնուի Պողանդիի եւ Թէփիր-Թէփէի հարաւակողմը, այնպիսի կէտի մը վրայ՝ ուր Կիւզնոս գետի (Tarsus çay) արեւելեան օժանդակներէն Մանուշկա (Menevşe suyu) եւ Կուսկուլթա իրարմէ հազիւ մէկ մղոն հեռաւորութիւն մը կը ձեւացնեն, շրջապատուած՝ ծովու մակերեսէն շ. 1100-1300 մեղր բարձրութեամբ զազաթներէ, որոնց բարձրագոյնն է Կիւլէք-Թէփէ, շ. 1600 մեղր, կապանին հիւսիսային կողմը: Ասոր գրեթէ հաւասար ուրիշ գագաթ մը կը բարձրանայ կապանին արեւմտեան կողմը՝ որուն վրայ կը գտնուի Կուկլակայ բերդը:

Առաջին նշանաւոր անցքը այս կապանէն եղած է Փոքր Կիւրոսի զօրքերուն կատարածը, Ք. Ա. 400 թուականին: Այս տեղէն անցած են, հաւանաբար, նաեւ Մեծն Աղեքսանդրի բանակներէն մաս մը, իսկ ինքը՝ Մեծն Աղեքսանդր՝ կապանէն անցնելով էր որ զարկաւ եւ անկից հալածեց պարսկական պահակազունները, եւ իջնելով Կիլիկիոյ դաշտապահներ, հոն՝ Իսոսի դաշտին մէջ՝ Չախլախեց Դարեհի բանակները եւ փախուստի մատնեց:

Հռոմէական պատմութեան մէջ եւս կը յիշուի զոնէ մէկ անգամ այս նշանաւոր անցքը, երբ Բ. դարու վերջերը Յ. Ք., Պեակինիոս Նիզեր (սեւ) կոչուած Հռոմէացի բանակալը ամրացուց կապանի անցքը ընդդէմ Սեպտիմիոս Սեւերոս կայսեր բանակներուն. սակայն անկից անցնող ջրատար ամբարտակները սաստիկ հեղեղներէն խորտակուելով՝ Նիզերի զօրքերը ա՛լ չկրցան դիմադրել կայսերական բանակներուն եւ փախան:

քին վրայ կը վանդնէր Կուկլիակ բերդը, շինուած հոն՝ պաշտպանելու համար այդ անցքը, որ միակ մուտքն էր հիւսիսէն:

Կուկլիակ բերդին շուրջ կը տարածուի առոյգ բուսականութիւն մը՝ շոճիի եւ եղեւինի բարձր ծառերով. հիանալի դիրք մը ունի, Ալպեան տեսարաններով եւ սեպածեւ կատարներով շրջապատուած՝ որոնք կը սլանան դէպի վեր եւ ամպերու մէջ կը կորսուին:

Կապանի կիրճէն դուրս գալով՝ ուղեւորին առջեւ կը բացուի Պողանդոսի կամ Պողանդիի հրաշալի լեռնահովիտը, որուն մէջ ցրուած են ամառնային փոքրիկ տնակներ. այս դիւղը Թուրքերը Pozanti կը կոչեն. հին անունն էր Podandos, յունարէն՝ Ποδανδός, Ποδενδός կամ Ποδανδεύς²: Տընօէլ Ֆրանսական ուղեցոյց-ատլասը՝ Կուկլիակի կիրճի մասին հետեւեալը կը գրէ, նկարագրելով Կեսարիա-Ատանայի ճամբան, Ատանայէ 154 քմ. հեռւորութենէն սկսեալ. «արագ եւ յաճախուած ճամբայ մը (E 5), որ կը բարձրանայ Տաւրոսի կողերն ի վեր՝ դէպի դաշտ բացուելէ առաջ: Գեղեցիկ տեսարաններ: Այս ճամբուն երեք կարեւոր հանգրուաններն են. 40 քմ.ի վրայ՝ Պոզանդի աւանը, հին Պոզանդոսը, որ Կիլիկիոյ Դուներուն (Pylae Ciliciae) մուտքը պաշտպանող բերդաւան մըն էր: 57 քմ.ի վրայ՝ Tepir Tepe կոչուած կիրճը, 1268 մ. բարձրութեամբ: Հուսկ 62 քմ.ի վրայ՝ նեղ կիրճ մը, Gülek Bogazi կոչուած Թուրքերէն, հիներու Կիլիկիոյ դռները, որոնք հին դարերուն եւ Միջին դարուն միակ անցքը կը կազմէին դէպի Կիլիկիա³:

1800ական թուականներուն Կուկլիակ բերդը տակաւին լաւ վիճակի մէջ էր. անոր մասին կը գրէ Հ. Ղ. Ինճիճեան իր «Նոր Հայաստան» գրքին մէջ.


Մանօթ է նաեւ ու նշանաւոր 1830-40ին հոն պատահած դէպքը, երբ Մեհեմէտ Ալի Եգիպտոսի կուսակալը ընդլզելով Օսմանեան կայսրութեան դէմ, իր որդւոյն Իպրահիմ փաշայի առաջնորդութեամբ սկսաւ կռիւը. Իպրահիմ յետ խորտակելու սուլթանին բանակը, ըմբռնելով կարեւորութիւնը այս անցքին, զայն ուժգին ամրացուց, բազմաթիւ թնդանօթներ զետեղեց շրջակայ բարձունքներուն վրայ, կանգնեց հսկայ աշտարակ մը իրրեւ դիտարան, եւ զայն անտիկ դարձուց. այնպէս որ՝ Թուրքերուն քով առակի կարգ անցած էր ըսել. «Որ չերկնչի ի Պահակէն, / Նա չերկնչի եւ յԱրարէն»:

Սակայն Իպրահիմ փաշայի այս բոլոր պատրաստութիւնները օգուտ չունեցան. եւրոպացի պետութիւնները միջամտեցին եւ հաշտութիւն կնքել տուին երկու բանակներուն. որով Իպրահիմ փաշա 1840ին նահանջեց, ետ քաշուեցաւ այս անցքէն, իր հետը տանելով մեծ դժուարութեամբ հոն հանած թնդանօթները եւ հրետանին: Հուսկ 1853ի ուսական պատերազմին՝ Կապան բոլորովին քանդուեցաւ: (Տե՛ս Սիսուամ, էջ 127-128: ԳՈՒՂԱՄԻՐԵԱՆՑ, Կիլիկիա, էջ 293-298):

- 2. Հմմտ. Սիսուամ, էջ 132:
- 3. Turquie. Guide-Atlas DENOEL, էջ 325: «Vers Adana, 154 kilomètres par une route rapide à grande circulation (E 5) qui traverse le Taurus avant de déboucher sur la plaine. Beaux paysages. Les trois points remarquables de cette route sont, au km. 40, la petite ville de Pozanti, ancienne Podandos, place forte défendant l'entrée des Portes ciliciennes (Pylae Ciliciae), au km. 57 le col de Tepir Tepesi (alt. 1268 m.) et au km. 62, une gorge étroite, la Gülek bogazi, appellation turque des Portes ciliciennes, défilé qui, dans l'antiquité et au Moyen Age, commandait l'accès de la Cilicie».

«Կիւլէֆ կամ Կիւկլէֆ, բերդ անմատոյց կառուցեալ ի գլուխ լեռին յանձուկ Կապանին, իրրեւ միօրեայ հեռի ի յԱտանայէ, որ կոչի Կիւլէֆ Պէլի, կամ Կիւկլէկ պօզազի»⁴:

Կուկլիակ բերդի շինութիւնը շատ հին է. անոր առջեւէն եկեր ու անցեր են դարերով ժողովուրդներ եւ բանակներ, հուսկ Ռուբինեանները: Կուկլիակ բերդը այսօր լքուած եւ աւերակ է, լեռան կատարին, անմերձեալի իր դիրքով: Բերդին պարիսպները մեծ մասով մինչեւ հիմերը քանդուած են. պարիսպներէն մասեր մը, որ կը մնան, ցոյց կու տան թէ հսկայ քարերով շինուած էր, իսկ վերի մասերը տաշուած քարերով. պարիսպները ընդմիջուած էին կլոր աշտարակներով: Բերդին մասին հետեւեալ նկարագրութիւնը կու



Յատակագիծ Կուկլիակի («Սիսուամ»էն):
Plan de la forteresse de Gouglag (Gülek) (de «Sissouan»).

4. Ինճիճեան, Աշխարհագրութիւն. Հայաստան, էջ 359: Ժ. Պ. դարու ուղեգիրներէն Կուկլիակ բերդի եւ շրջանի մասին շատ ընդարձակօրէն կը խօսի՝ D. TH. KOTSCHY, Reise, էջ 40-53, 73-204:

տայ Գուլամիրեանց. «Այս բերդը քառակուսի երկար ձեւով ձգուում է արեւմտքից արեւելք: Արեւմտեան եւ հարաւային պարիսպների ստորոտում շինուել են բոլորչի աշտարակներ: Բերդի մէջ տեսնուում են բնակարանների հետքեր, երկու վիմափոր ջրչեղջ, ամբարանոցներ, եւ մի դաւիթ, որ երբեմն սիւնազարդ է եղել: Մեծ դրան կամարը՝ քառաժայռի մէջ կտրուած, հսկայածեւ 60 սանդուխներից է առաջնորդուում: Այս մուտքի վերեւ կան երկդարեան ընկուղենիներ, որոնց կից՝ դեռ մէկ դար առաջ մզկիթի վերածուած մի եկեղեցի է եղել: Արեւմտեան քարուկիր պարիսպները կանգուն են: Բերդի երկայնութիւնը 300 քայլ է, ամէնից լայն մասը 100, իսկ ամբողջ շրջապատը 1000 քայլ: Բերդի արեւմտեան ծայրից բարձրանում է մի մեծ դղեակ, միջի կողմը հրկիզուած: Հիւսիսում՝ քարաժայռերի մէջ փորուած խոռոչներ, ջրամբարներ կամ մթերանոցներ. արեւել-հարաւում խորախոր մի անդունդ: Միայն արեւմտեան կողմից, այն է Քիւլեֆ քեփէ լեռնակից մատչելի է բերդը: Վերջապէս, շրջակայ բարձր լեռներից 9 ժամու ճանապարհ մեկուսացած՝ մի ահեղ տեսք է ներկայացնում այս անցքի եւ բերդի արտաքին երեւոյթը»⁵:

ՊԱՏՄԱԿԱՆ

Բերդին շինութեան թուականին եւ շինողներու մասին՝ կարելի չէ որոշ բան մը ըսել. ստույգ է թէ հին շինութիւն մըն է եւ հին ժամանակներէ ի վեր կարեւոր դեր մը կատարած է: Որովհետեւ միակ անցքն էր՝ որ ճամբայ կու տար հիւսիսէն եկող բանակներուն դէպի Սիս եւ Ատանայի դաշտը: Հաւանական է որ Բիւզանդական կայսրութեան շրջանին շինուած ըլլայ:

ԺԱ. դարուն վերջերը Ռուբինեան իշխանները արդէն բռնած էին Դրուսիֆ Կլիկիոյ կապանը եւ հոն հայ պահակազուրկներ դրած. հետեւաբար դրուած էին նաեւ Կուկլիակ բերդը՝ որ, ինչպէս ըսինք, կապանի կողքին շինուած էր: Այս կիրճի մասին կը գրէ Մ. Ուռհայեցի, երբ կը պատմէ Խաչակիրներու անցքը, Կոփրետի առաջնորդութեամբ եւ 200.000 բանակով՝ հետեւակ եւ հեծեալ. «Եւ զօրքն Փրանկաց... ճանապարհ արարեալ ընդ աշխարհն Բիւթանացոց, ... հասանէին ի դժուար վայրս լեռանց Տօրոսի. եւ խաղացեալ էանց բազմութիւն բանակին եւ ընդ նեղ կապանս նորա գնալով ընդ Կիլիկիա. եւ էանց ընդ Տրովազա, որ է Անաւարդայ, եւ հասանէր ի քաղաքն Անտիօք»⁶: Պատմիչը որոշակի չ'անուաներ այդ դժուարին եւ նեղ անցքերը. սակայն պարզ է թէ ակնարկը Կուկլիակի կապանին է: Այս մասին կը գրէ Սմբատ Սպարապետ. «Եւ նոքա սոցա [Իշխանացն հայոց] յորդորմամբ խաղացեալ անհուն բազմութեամբ անցին ընդ կապանն Պօտանդրոյ եւ անտի գնացին յԱտանայ եւ յԱնարզարա, եւ անտի ի մեծն Անտիօք»⁷: Այս անցքը տեղի կ'ու-

5. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ, Կիլիկիա, էջ 295-296:
 6. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Բ, ճժա, էջ 312-313:
 7. ՍՄԲԱՏ ՍՊԱՐ., էջ 102: Հմմտ. Սիսուան, էջ 120-130:

նենար 1097ին, Կոստանդինի որդւոյն Ռուբէնի օրով, որու մասին դարձեալ կը գրէ Սմբատ. «Իշխան ոմն մեծազգի, իշխանացն Գաղկայ, Կոստանդին անուն, որդի Ռուբինի, որ զկնի մահուան Գաղկայ թագաւորին եկեալ էր ի լեառն Տաւրոս, եւ արիաբար քաջութեամբ տիրեալ էր բազում բերդից եւ դաւառաց»: Այս բազում բերդերէն մէկն էր, անշուշտ, Կուկլիակ բերդը. ու երբ Խաչակիրները կու գան ասկից անցնելու՝ Կոստանդին կը դիմաւորէ զիրենք եւ կը յորդորէ Կապանի վրայէն իջնելու դէպի դաշտային Կիլիկիա:

Ալիշան կը խորհի թէ Կուկլիակ բերդն այս դէպքերու ընթացքին ամայացած եւ լքուած ըլլայ, ինչպէս նաեւ Լամբրոն եւ Պապեոն: Բայց երբ Ռուբինեանները տիրեցին ամբողջ Կիլիկիոյ՝ զանոնք վերաշինեցին եւ Կուկլիակ կապանի բերդն ալ Հայոց գլխաւոր բերդերէն մէկը եղաւ: Այս դէպքերէն շուրջ հարիւր տարի վերջ, Լեւոնի թագաւորութեան սկիզբը, Սմբատ անունով իշխան մը կը յիշուի Սմբատ Գունդատապլէ՝ իբր անոր տէրը, հաւանօրէն Հեթումեանց տոհմէն եւ թերեւս Կոստանդին արքայահօր եղբայրը⁸: Ասկէ զատ, Սմբատ Գունդատապլէ՝ երկու առիթով կը յիշէ Կուկլիակ կապանի բերդը, 1245ին եւ 1246ին, երբ Իկոնիոյ Քէյ Պոսրով սուլթանը Կիլիկիոյ վրայ կ'արշաւէ⁹:

Ուստի կրնանք հետեցնել թէ Կուկլիակ բերդը երկար տարիներ Հայոց ձեռքը մնացած է: Լեւոն Բ. 1288ին իր ձենովացիներուն տուած Պարզեւագրին մէջ կը յիշէ Կուկլիակ կապանի բերդը՝ որուն անցքին վրայ կար ձենովացիներու Բաթառունը կամ մաքսատունը, հաստատուած մասնաւորապէս վաճառականներու համար: Օշինի թագաւորութեան շրջանին՝ ԺԴ. դարուն առաջին քառորդին, անոր իշխանն ու տէրն էր, իր Ալինախ եղբայրը¹⁰:

Ասկէ վերջ Կուկլիակ կապանի բերդը չի յիշուիր մեր պատմիչներէն: Պերդրանտ (Bertrandon de la Broquiere) գաղղիացի ուղեգիրը, Կիլիկիոյ անկումէն 57 տարի վերջ, անցած է Կուկլիակ կապանէն, շատ հեռուներէն ալ տեսանելի, ու կ'աւելցնէ թէ ով որ ուզէր Գարամաններու երկիրը երթալ՝ պէտք էր Կուկլիակ կապանէն անցնիլ եւ ապա Լուլուա բերդէն¹¹:

8. ՍՄԲԱՏ ՍՊԱՐ., էջ 210: Սիսուան, էջ 130:
 9. ՍՄԲԱՏ ՍՊԱՐ., էջ 227: Հմմտ. Սիսուան, անդ:
 10. Տե՛ս անդ, ծն. 2: Իբր աղբիւր կը յիշուին՝ վենետկոյ Դիւանէն Patti, 4, 79, 81: Տես նաեւ՝ RÜDT - COLLENBERG, The Rupenides, էջ 72, թ. 161:
 11. «We both, therefore, set off very early, and ascended the high mountains where the castle of Cublech (Kulek Boghaz - ծն. թրգ.) is situated, and is the highest I am acquainted with. It is seen two days' journey off; but sometimes we turned our backs to it, by reason of the windings of the mountains, sometimes as it was hidden by their height. No one can penetrate into the country of Karman but on foot over the mountain on which this castle is built. The pass is narrow, and in some places has been perforated by the chisel, but it is everywhere commanded by Cublech. This castle, the last which the Armenians lost, belongs at this day to the Karman, who had it in his division after the death of Ramedan» (BERTRANDON, Travels, էջ 319-320). Պերդրանտի այս տողերուն կ'ակնարկէ Ալիշան՝ Սիսուան, էջ 130:

Կուկլակ բերդը ներկայիս ամայի է, անոր գիւղի բնակիչները խլամացած են: Մինչեւ Կիւրոսի Օսմանցիներէն գրաւուելու ժամանակը՝ անիկա տակաւին ձենովացիներուն ձեռքն էր. բայց հայ զօրավար մը՝ որ Օսմանեան բանակին մէջ կը ծառայէր, պաշարել կու տայ զայն, սով կ'իյնայ բերդին մէջ, եւ բնակիչները չեն դիմանար. որով Թշնամին բերդին հիւսիսային կողմէն՝ քովի բարձունքներուն վրայ ելլելով՝ Թնդանօթներով կը հարուածէ պարիսպները. բնակիչները սարսափահար՝ դռները կը բանան փախչելու համար. այն ատեն Թշնամին կրակի կու տայ շուրջի անտառները եւ կը գրաւէ բերդը¹²:

12. Սիսուան, անդ:

Այստեղ՝ Ալիշան կը յիշէ, Կուկլակի բերդին մօտերը գտնուող, Դրիգիւրիան (Δριζύβιον - Դրիգիւրի?) անունով բիւզանդական բերդ մըն ալ: Թէեւ Ալիշան չի յիշատակեր իր աղբիւրը, նման անունով բերդ մը յիշուած կը գտնենք Կեդրենոսի մօտ. «'Ο δὲ Νικηφόρος... ἔχων Θεοφανὸς τὴν γαμετὴν σὺν τοῖς τέκνοις αὐτοῦ. ἐκείνην μὲν οὖν ἔξωθεν τῆς Κιλικίας ἐν τινι φρουρίῳ καταλιμπάνει, Δριζίῳ καλουμένῳ, αὐτὸς δὲ εἰσελθὼν εἰς Κιλικίαν Ἀνάζαρβαν καὶ Ῥωσσὸν καὶ Ἀδαναν τὰς πόλεις... κατεστρέψατο». (Նիկեփորոս [Փոկաս]... իր հետ ունենալով կինը՝ Թէոփանէն եւ սոսր զաւակները. զիրենք Կիւկլիայէն դուրս՝ Դրիգիոս կոչուած բերդի մը մէջ կը ձգէ, իսկ ինքը Կիւկլիա մտնելով՝ կը գրաւէ Անարգարա, Հոսոսս [Արասոս] եւ Ասանա քաղաքները...) (CEDRENUS, II, էջ 361):

Կուկլակի կառոյցին ու ներկայ վիճակի մասին տես՝ HELLENKEMPER, Burgen, էջ 225-228:

ԱՆԱՇԱ ԲԵՐԴ

Անաշա բերդը կը գտնուէր լեռնային Կիւիկիոյ շրջանին մէջ, Պողանդիէն քիչ մը հարաւ, համանուն Անաշա լեռան սեպածեւ մէկ բարձունքին վրայ, որուն ստորոտէն կ'անցնի Սիհուն գետի օժանդակներէն՝ Չաքըթսուլու վտակը (Çakitsuyu): Ալիշան կը գրէ. «Ժամաւ հետի ի Պողանդեայ ի դազաթան սեպացեալ լեռինն Անաշայ՝ կանգնեալ կայ բերդ համանուն Անաշա-գալէսի ի 4000՝ բարձու (որ է շ. 1750՝ բարձր) յերեսաց գետոյն, հանդէպ Աքտաղ լեռին»¹: Աքտաղ լեռը կը բարձրանայ Չաքըթսու վտակին արեւելեան ափին:



Բերդը՝ հիւսիս-արեւմուտէն տեսնուած (Ռ. Էտուարտ):
La forteresse d'Anacha vue du nord-ouest (R. W. Edwards).

1. Սիսուան, էջ 132: Տես նաեւ HARPER, Podandus, էջ 150: HELLENKEMPER, Burgen, էջ 224-225:



Արեւմտեան ծայրամասին արտաքին տեսքը՝ հիւսիս-արեւմուտէն (Ռ. Էտուրքոս):
L'extérieur de l'extrémité occidentale de la forteresse vue du nord-ouest
(R. W. Edwards).



Արեւմտեան ծայրամասին ներքին տեսքը՝ հարաւ-արեւելէն (Ռ. Էտուրքոս):
L'intérieur de l'extrémité occidentale de la forteresse vue du sud-est
(R. W. Edwards).




Արեւելեան ծայրագոյն աշտարակին վրայ պատուհան մը (Ռ. Էտուրքոս):
Une fenêtre de la tour à l'extrémité occidentale de la forteresse (R. W. Edwards).

Անաչա բերդը ձեռով նման էր Կուկլակ բերդին: Հոն կարելի էր բարձրանալ շոճիններու մէջէն գալարուող նեղ քարուտ ուղիէ մը. երկու դռներ ունէր, որոնցմէ մին գահաւանդին ստորոտը: Ըստ Ալիշանի, բերդէն անջատ աւելի բարձր քարաժայռի մը վրայ կը տեսնուէին բազմաթիւ փոքր խաչքանդակներ: Բերդը՝ Անաչա լեռան գագաթի տարածքին, համապատասխան երկայնանիստ կառոյցք մ'ունէր եւ պարիսպները մեծ մասով տակաւին կանգուն էին դարուս սկիզբը: Արեւելեան եւ հարաւային կողմերը պարիսպ չունէին՝ բնականէն անմատչելի ըլլալով:

Լանկուա՝ Անաչա բերդը թուզանդական շինութիւն կը համարի, նկատելով անոր շորս մեծղի աշտարակներով պատուարներուն շինութեան ձեւը: Աշտարակներու դռները երկաթէ էին: Բերդը ունէր վեց մարտկոցներ, ամբարտակներ, ջրամբարներ, որոնք ժժ. դարու առաջին քառորդին՝ տակաւին շէն էին: Ազուգայ մը բերդի հարաւակողմի լեռներէն ջուր կը բերէր եւ վեր բարձրանալով կը լեցնէր բերդին ջրամբարները: Երկրորդ մը ջուր կը հասցնէր մինչեւ պարտէզները, եւ հաւանօրէն կը ջրէր նաեւ գիւղին այգիները: Բերդին ստորոտը կը գտնուէր համանուն Անաչա գիւղը, ուր միասին կը բնակէին հայեր եւ թուրքեր:

Այնպէս կը թուի որ Անաչա բերդը Կիլիկիոյ Հայոց իշխանութեան շրջանին՝ նշանաւոր եւ հզօր բերդերէն մէկը եղած է: Դժբախտաբար մեր պատմիչները անոր մասին չեն խօսիր. թերեւս հին ատեն ուրիշ անունով մը ճանչցուած ըլլար: Մտաւոր ապարապետ կը յիշէ Կնչումով Անաչայի մերձաւոր՝ Անդաշձի բերդ մը, որու իշխանն էր Պաղտին. «Իշխանն Անդաշձին եւ Կուպային Պաղտինն»², որ ներկայ եղած է 1198ին Լեւոնի Թագադրութեան: Իր մասին աւելի տեղեկութիւն չունինք: Անդաշձի բերդի մասին Ալիշան կը գրէ. «գուշակի ի ծովեզերս Կիլիկիոյ լինելի»³, առանց աւելի բան մը ըսելու:



Անաչայի յատակագիծը. սամադաշաի՝ 1:1000
(Հելլենիստիկէրէ ըստ Heffeningh):
Plan d'Anacha. Echelle 1:1000
(de Hellenkemper selon Heffeningh)

2. ՄՄԲԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:
3. Սիսուան, անդ:

ԼՈՒԼՈՒ ԿԱՄ ԼՈՒԼՈՒԱՅ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Լեւոնային Կիլիկիոյ հին բերդերէն մէկն էր Լուլու կամ Լուլուայ բերդը: Հին պատմիչները եւ ուղեգիրները մեզի անոր ճշգրիտ տեղագրութիւնը չեն տար. թէեւ կ'ընձեռեն տուեալներ, որոնցմէ կարելի է հետեւեցնել անոր դիրքը: Ալիշան զայն կը զետեղէ Լամբրոնի արեւմտակողմը, զէպի հիւսիս: Մելիք-Թէվէթէլ որ անձնապէս ծանօթ էր այս շրջակայ վայրերուն, 1914ին հրատարակած մէկ յօդուածին մէջ, մանրամասն վերլուծումի ենթարկելով Ներսէս Լամբրոնացիի այն վկայութիւնը՝ ըստ որուն Մեծն Լեւոն կրցած էր տիրել Բ. Կապադովկիոյ նահանգին եւ յատկապէս Տիանա մայրաքաղաքին, օգտագործելով Լուլու բերդի ռազմավարական դիրքը, կը հետեւցնէ թէ Լուլու պէտք էր գտնուիլ Կուկլակի անցքին կողմերը, Պոզանդիի մօտիկ, զէպի հիւսիս-արեւմուտք, աւելի ճիշտ՝ ներկայի Փորսուք (Porsuk) եւ Պայալը կամ Պէյ-յաղըլ (Beyagil) գիւղերուն շուրջ, ուսկից քիչ մը աւելի զէպի հիւսիս-արեւմուտք կը գտնուէր Տիանա քաղաքը (այսօր՝ Kizhisar կամ Kilisehisar, 28 ըմ. զէպի հարաւ-արեւմուտք Նիղոէ քաղաքէն): Մելիք Թէվէթէլի համաձայն այս վարկածը կը հաստատուի նաեւ Ալիշանի կողմէ ալ մէջբերուած Պերդրանտ տը լա Պրոքիէրի վկայութեամբ: Թէվէթէլ՝ Փորսուք եւ Պայալը գիւղերու կողքին, լեւոնային բարձունքի մը վրայ, նշմարած է բերդի մը մնացորդները եւ կը համարի թէ նոյնացուելու են Լուլուի աւերակներուն հետ, թէեւ տեղւոյն անմատչելիութեան պատճառով չէ կրցած անոնց մօտենալ: Ուրեմն այս կարծիքին համաձայն, Լուլու բերդը կը գտնուէր Լամբրոնի բերդէն շիտակ զէպի հիւսիս ուղղութեամբ, Տարպողազ կոչուած վայրէն քիչ մը աւելի վեր:

1. Մելիք-Թէվէթէլ, Ո՛ւր կը գտնուէր Լուլուայ բերդը, «ՀԱ», ԻԸ (1914), սիւն. 156-162: Լամբրոնացիի եւ Տը լա Պրոքիէրի վկայութիւնները ստորեւ պիտի տեսնենք: Սիսուան, էջ 114-115: Լուլուայ բերդի մասին բաւական ընդարձակօրէն կը խօսի նաեւ RAMSAY, Geography, էջ 351-354:

ՊԱՏՄԱԿԱՆ

Լուլուայ բերդը կը յիշուի արարական արշաւանքներու շրջանին՝ Թ. դարէն սկսեալ: Բիւզանդական բերդ մըն էր, հաւանաբար Բիւզանդացիներէն շինուած, զոր յոյն պատմիչները կը կոչեն καστρόν λούλου կամ λούλον, իսկ արաբները՝ Լուլիլս. հայ պատմագիրներուն մօտ կը գտնենք «Բերդն Լուլուայ», երբեմն առանց յի, կամ «Բերդն Լուլու» կոչումները:

Առաջին անգամ Լուլուայ բերդը կը յիշուի 832ին, երբ Էլ-Մամուն ամիրայետը իր երկու որդիները՝ Մութասսէմ եւ Ապպաս՝ մեծ բանակներով կը զրկէ Լուլու բերդին վրայ. անոնք կը պաշարեն դայն չորս կողմերէն. հարիւր օր կը տեւէ պաշարումը, բայց չեն յաջողիր գրաւել: Մութասսէմ՝ բերդին պաշարումը կը յանձնէ իր Օճայիֆ զօրավարին, եւ ինքը կ'երթայ Սիւրիոյ կողմերը, իր դէմ ելած ասպտամուրթիւնը ճզմելու:

Օճայիֆ կը շարունակէ բերդին դէմ յարձակումը. ներսի բնակիչները զօրաւոր դիմադրութիւն մը ցոյց կու տան, պաշարումը կ'երկարի եւ բերդին մէջ սով կ'իյնայ. այն ատեն բերդին պահապանները կ'որոշեն յարձակման անցնիլ. անոնք գիշերանց կը բանան բերդին դռները եւ կ'իյնան արարական զօրքերուն վրայ, որոնք անակնկալի գալով, փախուստի կը դիմեն. Օճայիֆ գերի կը բռնուի եւ բերդին պաշտպանները կը հալածեն արաբները Կիլիկիոյ սահմաններէն դուրս:

Այս պաշտպանութեան անձամբ կը մասնակցէր Թէոփիլոս կայսրը: Սակայն Էլ-Մամուն, Սիւրիոյ կողմերը իր գործերը կարգի դրած, կը վերադառնայ մեծ բանակով մը եւ այս անգամ կը յաջողի գրաւել Լուլուայ բերդը: Վարդան պատմիչ կը գրէ այս մասին. «Եւ Մամուն էր ի կողմանս Յունաց զամս եօթն, եւ առնոյր զանհպելի ամուրն Լուլուայ»²:

Բերդը ապա ժամանակ մը ձեռքէ ձեռք կ'անցնի, կը քանդուի եւ դարձեալ կը վերաշինուի: Յունաց Միքայէլ կայսեր օրով կը վերանորոգուի եւ պահապան զօրքերով կ'օժտուի: Այս շրջանին Լուլու՝ այն ութը բերդերէն մէկն էր՝ որոնց վրայով բոցեղէն նշաններ կը տրուէին Կեսարիոյ Արգէոս լերան վրայ եղող գիտանոցին, եւ անկից ալ Պոլիս՝ կայսեր:

Երեք դար վերջ Ս. Ն. Լամբրոնացի պիտի գրէր. «Տառապեալ եպիսկոպոս Տարսոնի Թարգմանեցի... ի նորաշէն ամուրն Լուլուայ, որ է գլուխ դրանն Կիլիկիոսի, զոր ի բազմաժամանակեայ յամայութենէն մարդարնակ արար մի յեղբարց իմոց Շահնշահ եւ զկործանեալ շինուածն Յունաց յիսմայէլացոց շինեաց ամրագոյն եւ ընդարձակեաց նովաւ գՀայաստանեայս Թագաւորի Լէ[ւ]ոնի ձեռն. եւ նովաւ կարողացաւ տիրել Երկրորդ Կապադովկիոյ»³: Այսպէս կը գրէր Լամբրոնացին 1196ին: Ասկից կը հետեւի որ Լամբրոնէն առաջ Մեծն Լեւոն գրաւած է Լուլուն, քանի որ իր Թագադրութեան հանդէսին ներկայ եղած է, ինչպէս կը գրէ Սմբատ Սպարապետ, «Իշխանն Լուլուայոյ Շահնշահն»⁴, Ս. Ն. Լամբրոնացիի եղբայրը:

2. ՎԱՐԴԱՆ ՊԱՏՄԻՉ, էջ 79:

3. ՅՈՎՍԷՓԵԱՆՅ, սիւն. 599: Հայապատում, Յշուկ. 306-ժ, էջ 432:

Թագադրութեան Թուականէն (1198) քսան տարի վերջ, երբ այլեւս ծերացեր էր եւ հիւանդ, իր տորքերուն՝ Կապան-Շողականի պատերազմին՝ Իկոնիոյ Քէյքաուս Սուլթանէն կրած պարտութիւնը դարձանելու եւ գերի հայ իշխանները ազատելու համար, Լեւոն յանձն կ'առնէ Սուլթանին յանձնել որիչ բերդերու հետ՝ նաեւ Լուլուն⁵:

Ասկէ յետոյ Լուլուայ բերդը չի յիշուիր մեր պատմութեան մէջ: Ալիշան կը համարի թէ, երբ Մոնղոլները կը տիրապետեն այդ կողմերուն՝ ջնջելով Սելճուքներու իշխանութիւնը եւ Հայերուն կը թողուն իրենց սահմաններուն մօտակայ բերդերը, Լուլուայ բերդն ալ դարձեալ Հայոց ձեռքը անցած ըլլայ:

Կիլիկիոյ Թագաւորութեան անկումէն վաթսուն տարի ետք, փրանկ ուղեգիր Պերդրանտոն, այդ կողմերէն անցնելով, կու գայ Լարանտա եւ կը տեսնէ Լուլուայ բերդը, զոր կը կոչէ Լեւ (Leve)⁶:

4. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

5. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Փարիզ, էջ 118: ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ, Պատմութիւն Երոսիկոնիս, էջ 63:

6. «Et en ung aultre passage a un chastel sur une montaigne que on appelle Leve» (BERTRANDON, Voyage, p. 104). Հրատարակիչին համաձայն, «Il faut, au lieu de Leve, lire Zeivèh» (սնդ. թ. 1):

ՄՈՒՆԴԱՍ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Արեւմտեան լեռնային Կիլիկիոյ բերդերէն էր Մունդաս: Կը գտնուէր Լամբրոնի եւ Առակլիի (հին Հերակլեան, ներկայ Ereğli-ն) միջեւ Այտոս լեռան (3488 մ.) հիւսիս-արեւմուտքը, Չանափա (Չենեփ) չհասած, Չաքըլլար (Çakillar) եւ Էսքիհիսար (Eskihisar) գիւղերուն միջեւ հոսող Քալէ տերէսի Kale deresi = բերդավտակ) գետակի ձախ ափին՝ լեռնային բարձունքներու վրայ (չ. 1700 մ.), ուր տակաւին կ'երեւին բերդին աւերակները, թուրքերէն Mindos kalesi կամ հին ձեւով Kale-i-mindos կոչուած¹:

ՊԱՏՄԱԿԱՆ

Սմբատ սպարապետ կը յիշէ այս բերդը եւ կը պատմէ դէպք մը անոր մասին, որու մէջ ինքն ալ դեր ունեցած է²:

Հեթում Ա. թագաւորին օրով՝ Մունդաս բերդի շրջանները Իկոնիոյ սուլթանին ենթակայ հողեր էին: Հեթում Ա.ի իշխաններէն Օշին, «ազգաւ յոյն», անակնկալ յարձակումով մը կը գրաւէ զայն: Այս դէպքը կը պատահի 1259ին: Իկոնիոյ սուլթանը Էրք կ'իմանայ, զայրացած՝ մեծ բանակ մը կը կազմէ եւ «առաքեաց ի վերայ անուանեալ զղեկին Մունդասու պաշարել զնա», ուր շրջակայ գիւղերէն եւ աւաններէն բազմաթիւ քրիստոնեաներ ապաստաներ էին: Ասոնք՝ մեծ դժուարութեամբ, զաղտնի ճամբով մը, կը յաջողին լուր զրկել Հեթումի, որ «հրամայեաց զօրաց իւրոց ժողովել, եւ առեալ զնոսս զնայր վաղվաղակի, եւ եհաս մինչեւ ի սահմանս բերդին: Եւ էր ընդ թագաւորին կենսունակ սուրբ Նշանն որ անուանի Կօսիտառցի, յորմէ եղեւ մեծ սքանչելիք»:

Գիշերը, մինչ բանակը զաղտնի ճամբաներով կը մօտենար Մունդաս բերդին, որու շորս կողմը ձիւնով ծածկուած էր, թէեւ եղանակը Յուլիս էր, Լեւոն սպասալար Ապլհասանաց, բանակին առաջնորդը, յանկարծ կը նշմարէ

որ, ճամբու եզերքին՝ թուփերու մէջ, սելճուք զօրքեր պահուրտած են: Անակընկալ յարձակումով մը զանոնք փախուստի կը մատնեն մինչեւ Առակլի: Սակայն Սելճուքներէն ուրիշ խումբ մը, հակայարձակումի անցնելով, կը յաջողի պաշարել նշանաւոր Համուսցի Վահրամ զօրավարը, որ թագաւորի եղբօր՝ Սմբատ Սպարապետի փեսան էր: Այս ուր կը տեսնէ Հայոց Սպարապետը Սմբատ՝ օգնութեան հասնելով Վահանի՝ կ'ազատէ զայն եւ վերջնականօրէն կը վանէ Սելճուքները:

Այս յաղթանակը՝ Պատմիչը Կօսետառայ Ս. Խաչին կը վերագրէ, «եւ յայնժամ եհաս զօրութիւն սրբոյ նշանին» ու այսպէս կ'եզրակացնէ. «Իսկ թագաւորն բազում աւարաւ եւ կարասեալ նոցա դարձաւ խաղաղութեամբ ի Կիլիկիա. եւ զայնքան բազմաթիւն հաւաքելոցն՝ ի նոյն զղեկէն հանեալ երեր յաշխարհն իւր»:³ Այս վերջին տողերէն կ'երեւի որ Մունդաս բերդը Կիլիկիոյ սահմաններէն դուրս էր եւ կամ սահմանային բերդերէն էր: Լեւոն մեծի թագաւորութեան հանդէսին ալ չի յիշուիր Մունդաս բերդի իշխանը, ինչ որ դարձեալ ցոյց կու տայ, թէ նոյն շրջանին՝ Մունդաս Իկոնիոյ հողերուն մաս կը կազմէր:

1. Հմմտ. Սիսուան էջ 177:
2. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 234-235:

ԱՍԿՈՒՌԱՍ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Կուկլակ Պահակէն անդին անցնելով, Առակլի հասնելէ առաջ, ճանապարհորդ մը կը յիշէ բերդ մը, Ասերս (Asers) անունով, որ շատ հաւանօրէն խեղաթիւրուած անուանակոչում մը պէտք է ըլլայ: Ալիշան կը համարի՝ թէ ասիկա, Ռուբինեաններու իշխանութեան օրով, Ասկուռաս անունով մեզի ծանօթ բերդն ըլլար, Կիլիկիոյ մեծագոյն եւ նշանաւոր բերդերէն, որ երբեմն կը յիշուի հորովուած ձեւով՝ Ասկուռսյ (նաեւ Ասկուրսայ): Կը գտնուէր հաւանաբար Պապիւռնի եւ Լամբրոնի բերդերուն մօտերը. հին ժամանակներու մէջ՝ պատկանած էր Բիւզանդական կայսրութեան, եւ հաւանաբար Բիւզանդացիներէն շինուած էր:

ՊԱՏՄԱԿԱՆ

Ռուբինեաններու Կիլիկիա հաստատուելէն առաջ, հոն ոտք դրեր էին արեւելեան Հայաստանէն հայկազուն իշխաններ, «որք եւ նոքա յարեւելից ի սրոյն Իսմայելացոց խոյս տուեալ եկին եւ կալան զկողմանսդ նախասացեալ»¹: Այս իշխաններն էին Նաթանայէլեան, Ապլարիպեան եւ Հեթումեան կոչուածները. ասոնք կու գան եւ կը հաստատուին Կիլիկիոյ լեռնային շրջաններուն մէջ: Բիւզանդիոնի կայսրերը, տեսնելով ասոնց քաջութիւնը, իրենց հողեր եւ բերդեր կու տան. ասոնցմէ էր Ասկուռաս բերդը: Նաթանայէլեանները կը կոչուէին՝ «տիրք Ասկուռասայ»². կայսրէն ընդունած էին զայն իբրեւ սեփականութիւն. այս մասին կը գրէ նաեւ Վահրամ Բարունին.

«ՉՆաթանիբեանքն ժողովեալ,
Որ յԱսկուռաս էին տիրեալ.
Չի Հայկաղնեայ իշխանքս ելեալ,
Յարեւելից առ կայսր եկեալ:
Եւ ընդ նորին լծով մըտեալ
Եւ ի նմանէ պատիւ գտեալ»³:

1. ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, էջ 216:
2. ԱՅՊ:
3. ՎԱՀՐԱՄ ԲԱՐՈՒՆԻ, էջ 208:

Սամուէլ Անեցիի շարունակողն ալ կը գրէ այս Նաթանայէլեան իշխաններու մասին. «Իուքսն Յունաց որ էր իր Տարսոն ժողովեաց զգորս Յունացն եւ կոչեաց ընդ իւր զտէրն Լամբրունին եւ զՆաթանիբեանք որ էին տէրք Ասկուռսոյ, եւ այնմ լեռնակողմանցն»⁴:

Այս Հայկազուն իշխանները կէս անկախ ճորտեր էին Յունաց կայսեր, որուն պարտական էին օգնել պատերազմի ընթացքին: Իրենք կողմնակից էին Բիւզանդիոնի դաշնակից եւ հպատակ մնալու քաղաքականութեան ու հաշտ աչքով չէին դիտեր Ռուբինեանց անկախութեան քաղաքականութիւնը, ինչպէս տեսանք մեր ներածութեան մէջ:

Կայսեր կողքին՝ Թորոս Բ. իշխանին դէմ իրենց մղած պայքարէն վերջ Նաթանայէլեաններու տոհմը ա՛լ չի յիշուիր: Ապլարիպեաններուն նման, անոնք ալ կ'անհետանան եւ իրենց հողերուն ու իշխանութեան կը տիրանան Հեթումեանները: Լեւոն Մեծի թագաւորութեան շրջանին Ասկուռասի տէր եւ իշխանն էր Վասակ, Կոստանդին թագաւորահօր հայրը. սա իբր տէր կը յիշուի Ասկուռասի՝ 1165էն սկսեալ, եւ ներկայ կ'ըլլայ Լեւոնի թագադրութեան հանդէսին. «իշխանն Ասկուռսոյ Վասակ»⁵, ինչ որ ցոյց կու տայ՝ թէ Վասակ Լեւոնի ենթակայ իշխան մըն էր:

Աւելի ուշ, 1316ին, կը յիշուի իբր տէր Ասկուռասի, Սմբատ Մարաջայտ, որ կը տիրէր նաեւ Պիմակ բերդին⁶:

4. ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, էջ 207. տես նաեւ աճք, էջ 216: Նաեւ՝ Հայապատում, Յշուկ. 271, էջ 345:
5. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:
6. ՍԻՍՈՒԱՆ, էջ 115, 258: Պիմակ բերդը՝ Ալիշան մէկ տեղամ միայն եւ հարեւանցի յիշուած կը գտնէ (աճք, 115):

ՄՈՒՐԱՆԴԻՆ ԲԵՐԴ

Կիլիկիոյ հիւսիս-արեւմտեան ծայրամասի բերդերէն մէկն ալ էր Մուրանդին (գրուած նաեւ՝ Մուռանդին)։ Յիշուած է Սմբատ Սպարապետէն, որ զախ կը գետեղէ «մերձ ի քաղաքն Առակլի», երբ կը խօսի Հեթում Թագաւորի 1255ին դէպի «Գաւառն Հոռոմոց» կատարած արշաւանքի մասին¹։

Բերդը կը պատկանէր Թագաւորական տան. անոր տէրն էր, 1265ին, Հեթում Ա. Թագաւորին եղբայրը, Սմբատ Գունդստապլ, որ՝ բացի այս բերդէն՝ տէր էր նաեւ ուրիշ քանի մը բերդերու. «որ եւ տէր գորով անմատչելի դղեակին Պապեոսին, Սմբատայ կլային, Աստուայ, Ֆարխուցն, Պապատուին, Սիկոյ, եւ Մուռանդին»²։

Որոշ չենք գիտեր՝ թէ Լեւոն Բ., երբ Գէյքառուղ սուլթանէն յաղթուելով՝ կը ստիպուէր անոր վերադարձնել կարգ մը բերդերն ու քաղաքները Հոռոմոց գաւառին, ինչպէս Լուլուայ բերդը, Առակլի քաղաքը, Լարանտա եւլն. արդեօք Մուրանդին բերդն ալ յանձնա՞ծ էր թէ ոչ։

1256ին՝ Հեթում Ա., Մանգու Խանին այցելութենէն վերադարձին, մեծ զորաժողով մը ընելով կ'արշաւէ Հոռոմոց գաւառը, ուր կը գտնուէր նաեւ Մուրանդին բերդը. «առ ստորոտովն լերինն Տաւրոսի, մերձ ի քաղաքն Առակլի, ի փողն Եկեղեցեաց, եւ ի Մուրանդին, եւ անդ շահեցան բազում արջառս եւ ոչխարս, ձիս եւ ջորիս, ծառայս եւ ոսկիս, եւ քաղում աւարաւ դարձաւ յաշխարհն իւր»³։ Յաջորդաբար, Մոնղոլներու միջնորդութեամբ, համաձայնութիւն մը կը կնքուի Հեթումի եւ Սելճուքներու միջեւ⁴։

ԲԱՐՁՐԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Լեւոնային Կիլիկիոյ հին եւ նշանաւոր բերդերէն մէկն էր Բարձրբերդ, օտարներէն կոչուած Պերսպիրք կամ Պերսիրք, որոնք հին անուան Բարձրբերդի աղաւաղեալ ձեւերն են։ Կը գտնուէր համանուն ականին մօտ, Սիսի հիւսիս-արեւմուտքը եւ Մուլեոնի (Մուլնի) արեւելքը, Սարոս գետի օժանդակներէն Չամանդ գետակի հովիտին մէջ։ Ըստ հին մատենագիրներուն, սահմանակից էր Մուլեոնի, ինչպէս կը գրէ Յովհաննէս արքայեղբայրը՝ 1280ին օրինակած Աւետարանին յիշատակարանին մէջ. «ի Գահս Կիլիկիոյ՝ գաւառն Բերդին Բարձր սասցելոյ», եւ ըստ Վարդան աշխարհագրին որ կը գրէ. «գրաբարբերդն մօտ ի Մուլեոն»։ Այս ամբողջ իր դիրքին համաձայն կոչուեցաւ «Բարձրբերդ», եւ երբ Հայոց իշխանութեան սահմանները ընդարձակուեցան, Բարձրբերդն ալ անոր գաւառներէն մէկը եղաւ։ Միխայէլ Ասորիի թարգմանիչ՝ Վարդան Վրդ. եւս իր յաւելումներն մէջ կը գրէ անոր դիրքի մասին. «Բարձրբերդոյ՝ որ հայի հարաւով ընդ դաշտն Կիլիկիոյ, որ ի ծովն Աշրիանու» (փոխանակ լսելու՝ Միջերկրականի)²։ Որով իր անունին նայելով՝ կրնանք ըսել թէ ան Կիլիկիոյ առաջնակարգ բերդերէն մէկն էր, եւ կը բարձրանար ցից եւ ապառաժուտ ժայռի մը զազաթին վրայ. Սիսէն մէկ օրուայ ճամբով հեռու էր։ Անոր շինութեան թուականը, սակայն, անո-

1. ՄՄԲԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 231:
2. ԱՅԳ, էջ 244:
3. ԱՅԳ, էջ 231:
4. ՄՄԲԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 241:

1. Յիշատակարանը տե՛ս Հայագրատում, Յշտի. 336-Դ, էջ 487. Հմմտ. Սիսուան, էջ 146 եւ 148: ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., Աշխարհացոյց, Գ, բ, 322, էջ 50: Յ. Պ. Պողոսեան, հիմնուելով յոյն պատմիչ Ստրաբոնի ցուցմունքներուն վրայ, կը համարի թէ Բարձրբերդն ըլլայ՝ պատմիչէն յիշուած Δασταρχόν բերդաքաղաքը, կառուցուած Կարմարաս (Չամանթի) գետի ափափաններուն մէջ [տե՛ս՝ Յ. Պ. ՊՕՂՈՍԵԱՆ, Հաճըմ, էջ 56. Հմմտ. STRABO, I, XII, էջ 810. «φρούρα δ'ἔρουμνά ἐπὶ τῶν ὄρων, τὰ τε Ἀζάμορα, καὶ τὸ Δασταρχόν, ὃ περιρρέεται τῷ Καρμάλα ποταμῷ (լեւներուն վրայ կան ամբաշէն բերդեր, Ազամորան եւ Դաստարկոնը՝ որուն շուրջ Կարմարաս գետը կը հոսի). Ստրաբոն կը խօսի Դաստարկոնի մասին ժ.Բ. դիրքին Կապադովկիայի վերաբերեալ առաջին մասին մէջ]։

2. ՄԻՍԱՅԵԼ ԱՍՈՐԻ, Ա. տպ., էջ 609. Բ. տպ., ՅՊ. Քիմյ., էջ 39: Հաւանօրէն վանական Վրդ.ի աշակերտ Վարդան Արեւելցիին է Աշխարհացոյցի հեղինակը, ինչպէս նաեւ Միխայէլ Ասորիի թարգմանիչը կամ թարգմանութեան սրբագրիչը. տե՛ս՝ Լ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ Ներածութիւնը Աշխարհացոյցի հրատարակութեան, էջ ԴԳ-ԴԶ, եւ ՄԻՍԱՅԵԼ ԱՍՈՐԻԻ Բ. տպագրութեան Յառաջաբանը, էջ ԺԱ-ԺԳ:

րոշ կը մնայ. հաւանաբար շատ հին ժամանակներէ շինուած էր ան, նորոգուած Հոռոմէացիներու իշխանութեան շրջանին, անցած Բիւզանդացիներու ձեռքը, եւ ապա եղած հայ իշխաններու անառիկ բերդը ու կիլիկեան իշխաններու եւ Թագաւորներու գանձատունը:

ՊԱՏՄԱԿԱՆ

Յոյներու ձեռքէն Բարձրբերդը կը գրաւէ, հաւանօրէն, Ռուբէն Ա. 1080-1095ի ժամանակները: Անոր գրաւումին պատմութիւնը կ'ընէ Կիրակոս պատմիչ վիպական մանրամասնութիւններով, զոր հոս կ'ամփոփենք՝ անոր համար որ ազգագրական որոշ շահագրգռութիւն մը կը ներկայացնեն: Յոյները մոռցած չէին Մարկոս Մետրապոլիտին սպանութիւնը, հետեւաբար առիթ մը կը փնտռէին իրենց վրէժը լուծելու համար Հայերէն: Այս առիթը շուտով կը ներկայանայ, երբ օր մը Գագիկ Թագաւոր որսի ելլելով Բարձրբերդի շրջանին մէջ, կէսօրին յոգնած ու կէս գինով՝ ծառի մը շուքին տակ կը պառկի եւ կը քնանայ: Այս առիթէն օգտուելով՝ Բարձրբերդի յոյն պահապանները կ'իջնեն բերդէն վար եւ քունի մէջ գտնելով Թագաւորը՝ կը բռնեն ու կը տանին Կիլիկիոյ բերդը. Գագիկ երբ քունէն կը սթափի՝ ինքզինքը կը գտնէ բանտին մէջ, ուր ժամանակ մը մնայէ ետք՝ Յոյները անարգանքներով եւ չարչարանքներով կը սպաննեն զինք եւ բերդի պարիսպներէն վար կը նետեն: Գագիկի հետ էր փոքրիկ մանուկ մը. Յոյները զայն եւս գերի կը տանին եւ կը ծախեն հայ վաճառականի մը. մանուկը վաճառականին քով մեծնալով՝ կ'ամուսնանայ անոր աղջկան հետ: Այդ աղեկը Կիլիկեան իշխանութեան հիմնադիր Ռուբէն Ա.ն էր:

Ռուբէն Ա. օր մը իր բարբար փաճառականին հետ Բարձրբերդի շրջանին մէջ կաքաւի որսորդութեան կ'ելլէ: Այդ ժամանակները Բարձրբերդին մէջ կ'ապրէր յոյն եպիսկոպոս մը, որուն հետ Ռուբէն Ա. շուտով կը բարեկամանայ, այնպէս որ ստէպ անոր սեղանակից ալ կ'ըլլայ: Օր մը երբ նորէն որսորդութեան կ'ելլեն, եպիսկոպոսը բերդէն զերենք կը տեսնէ եւ ներս կը հրաւիրէ. վաճառականը յանձն չ'առնեք ներս մտնել, գուցէ յիշելով Գագիկ Թագաւորին մահուան պարագաները. ասոր վրայ եպիսկոպոսը ինքը բերդէն վար կ'իջնէ եւ կու գայ իր հայ բարեկամներուն քով, որոնց սեղանակից ալ կ'ըլլայ: Սակայն, հայ վաճառականը կ'որոշէ Գագիկի վրէժը առնել այս եպիսկոպոսէն, եւ իր միտքը կը յայտնէ նաեւ Ռուբէնին. կ'ըսէ թէ երբ եպիսկոպոսը որեւէ բանի համար զինք բերդ ղրկէ, ջանայ կերպով մը տիրել բերդին եւ անմիջապէս իրեն նշան մը տալ պարիսպին վրայէն: Կէսօրին եպիսկոպոսին հետ հայ վաճառականը եւ Ռուբէն ճաշի կը նստին. ճաշի պահուն անս գինին կը պակսի. եպիսկոպոսը կը խնդրէ Ռուբէնէն որ բերդ երթայ եւ իր ծառայէն տակառ մը գինի առնէ ու իրենց բերէ: Ռուբէն անմիջապէս բերդ կը վազէ, բերդին դուռը կը զարնէ. սպասաւոր մը դուռը կը բանայ, Ռուբէն ներս կը մտնէ եւ եպիսկոպոսին պատուէրը կը հաղորդէ սպասաւորին. ասիկա մառանին բանալին առած՝ մառան կ'իջնէ, Ռուբէն ալ ետեւէն, եւ երբ սպասաւորը կը ծռի գինիի մեծ կարասին վրայ՝ սրուակը

լեցնելու, Ռուբէն սպասաւորին ոտքերէն բռնելով զայն կը խոթէ կարասին մէջ եւ գինիի տակառին մէջ կը խեղդէ զայն: Յետոյ անմիջապէս դուրս պարիսպներուն վրայ վազելով՝ նշան կու տայ թէ բերդը գրաւուած է. այն ատեն հայ վաճառականը եւս իր կարգին, խօսքէն գործի անցնելով՝ տեղւոյն վրայ քանի մը հարուածով կը սպաննէ յոյն եպիսկոպոսը, եւ բերդ մտնելով կը տիրանան Բարձրբերդին ու հոն կը հիմնեն Ռուբինեան իշխանութիւնը³:

Այս դէպքը, աւանդուած Կիրակոս պատմիչէն, թէեւ վիպական բնոյթ կը կրէ, սակայն կը համարինք թէ իրական խորքի մը կը յենու, ինչպէս կ'ենթադրէ նաեւ Ալիշան⁴, որովհետեւ եթէ նոյնիսկ Ռուբէն Ա. եղած ըլլայ այդ արարքին հեղինակը, գրեթէ ստոյգ կը թուի որ անոր ժամանակակից հայ իշխան մը, անունը մեզի անծանօթ, գրաւած ըլլալու է Բարձրբերդը: Կիրակոս Ռուբէն Ա.ի կը վերագրէ զայն, հաւանօրէն անոր համար որ ինքը նախ տիրած է Փռիւզիոյ շրջանին մէջ գտնուող Կիլիկիայէն հեռու, Կոստատայ եւ Կոռմոզոյի բերդերուն, որոնց դիրքը անորոշ է, իսկ Բարձրբերդը, ինչպէս ըսինք, կը գտնուի Մոլեւոնի բերդին արեւելքը եւ Սիսի հիւսիսարեւմուտքը:

Որոշ ալ չէ, կը յաւելու Ալիշան, թէ Ռուբինեանները առաջին անգամ այս բերդին մէջ բնակած ըլլան. այլ հաւանական է որ Բարձրբերդ իրենց գանձի տունը եղած ըլլայ, ինչպէս որ կը հաստատէ Ապուլֆարաճ ասորի պատմիչը, որ նոյն ժամանակները հիւր գացած էր Կիլիկիոյ հայ իշխաններուն⁵:

Ամէն պարագայի՝ ստոյգ է որ, յետագային, Բարձրբերդ մեր իշխաններուն ապաստանարան ալ եղած է, եւ նախ Թորոս Բ.ի՝ որուն վրայ կու գայ մեծ բանակով Բիւզանդիոնի Մանուէլ կայսրը (1157-1158) եւ զայն կը պաշարէ. «Զորոյ քաջութեան համբաւ լուեալ կայսրն իմամնուէլ որդին Փեոփեոսօօօնին, մրմոռեալ իբրեւ զառիւծ՝ եկն զօրօք բազմօք ի Կիլիկիա ըմբռնել զԹորոս (Բ.) եւ պաշարեալ զնա ի դղեակն Բարձրբերդ կոչեցեալ»: Մանուէլ կայսրը, սակայն, իր նպատակին չի կրնար հասնիլ, Թորոս Բ. կեանքի եւ մահու կուր մը կը մղէ, եւ յաղթական դուրս կու գայ. «Յարձակեալ ապա քաջն Թորոս (Բ.) ի վերայ ժողովոյն Յունաց զբազումս եսպան, եւ զյոյով Սեւաստիանոսս գերի տարեալ ի դղեակն, վաճառեաց ընդ ոսկւոյ՝ կայսերն իմամնուէլի, եւ զգանձն բաշխեաց իւրոց հետեւակաց զօրուն»⁶:

Այս դէպքը չափածոյ տողերով կը պատմէ նաեւ վահագմ Բարունի.

«Այլ Թորոսի ի դղեակ ելեալ
Որ Բարձր բերդն է ասացեալ,
Եւ զլերանցն զկիրճս առեալ,
Հետեւական զօրօք լցեալ:

3. Կիրակոս ԳԱՆՁԱԿԵՑԻ, էջ 58-59:

4. Սիսուան, էջ 148: Ռուբէնի դերին մասին Կիլիկիոյ իշխանութեան հիմնադրումին մէջ՝ տե՛ս ՔԱՍՍՈՒՆԻ, Ռուբէն Բ., էջ 47-63:

5. Հմմտ. Սիսուան, անդ:

6. Հայագրատու, ՄՀԱ, էջ 345:

Յոր՝ իբրև զօրք Յունաց եկեալ,
Վաղվաղակի եղեն պարտեալ,
Յորոց յոլովք ձերբակալեալ
Եւ առ թորոս (Բ.) ածեն կապեալ»⁷:

Ալիշան կը համարի՝ թէ հոս պատմիչները կը շփոթեն թորոս Բ.ի վերաբերեալ երկու դէպքեր, որ է երկու անգամ պաշարուիր Յոյներէն, մին՝ Մսիսի, միւսը՝ Բարսրբերդի մէջ: Առաջինին՝ որ է 1151-52ի շրջանին, յուսնական բանակին մէջ, թորոսի դէմ կը կոռէին նաեւ Լամբրոնեան եւ Նաթանայէլեան հայ իշխանները, եւ այս կողմին մէջ է որ գերի կը բռնուի Վասիլ Բարձրբերդի իշխանը, որ Լամբրոնեանց եւ Նաթանայէլեանց պէս՝ Հայոց սղնուական տոհմերէն կը սերէր. սակայն պատմութիւնը կը լռէ իր մասին: Հաւանաբար թորոս այն ատեն է որ գրաւեց Բարձրբերդը եւ իր սեփական ամրոցը ըրաւ, թէեւ Բարձրբերդի գրաւումի մասին՝ թորոս Բ.ի կողմէ չի խօսուիր մինչեւ ժ. Դարու վերջերը, երբ անոր իբր տէր կամ սրահապան կը յիշուի Գէորգ անունով մէկը. բայց թէ ո՛վ էր Գէորգ, պատմութիւնը դարձեալ կը լռէ⁸:

ԺԳ. դարու ընթացքին, Կոստանդին թագաւորահայրը (1219-1263) կը գրաւէ Բարձրբերդը եւ իր սեփական կալուածը կ'ընէ. Բարձրբերդէն ոչ շատ հեռու գիւղ մըն ալ կը շինէ՝ զոր Կոստանդինոս կը կոչէ: Հոս եկած է Հեթում Ա. թագաւորը 1256ին թաթարստանէն վերադարձին, «ուր էր հայրն իւր Կոստանդին եւ ուստերք եւ դստերք իւր, եւ ուրախացան յոյժ»⁹: Ինչ որ կ'երեւի Բարձրբերդը իր ամուր դիրքին եւ Կիլիկիոյ դռներուն բանալին ըլլալով, խորագէտ ծերունի Կոստանդին Պալլ իրեն սեփական ամրոցը ըրած էր. եւ ստուգել 1266ի Եգիպտացիներու արշաւանքին, անոնք չկրցան զայն գրաւել. առին Սիւր, բայց ոչ Բարձրբերդը, ինչպէս մատնանշել կը թուի, ըստ Ալիշանի, Հեթում Պատմիչ իր ժամանակագրութեան մէջ¹⁰:

Հեթում Բ. Պոլիս երթալով՝ իր Սմբատ եղբայրը իրեն փոխանորդ կարգեր էր (1296-1298): Սմբատ առիթէն օգտուելով եւ իր կողմը ձգելով կաթողիկոսն ու պարոնները, ինքզինքը թագաւոր կը հռչակէ, ըսելով թէ Հեթում արդէն գահէն հրաժարած է եւ կրօնաւոր եղած. որով իրաւունք չունի կրկին գահ բազմելու: Սմբատ ինքզինքը ճանչցնել կու տայ թաթարներու խանին եւ կ'ամուսնանայ թաթար իշխանուհիի մը հետ: Իսկ երբ Հեթում Բ. եւ իր եղբայրը թորոս՝ Կիլիկիա դառնալով՝ իրենց իրաւունքը պահանջեցին, Սմբատ՝ Հեթումը Մոլեւոնի բերդին մէջ, թորոսն ալ Բարձրբերդի մէջ բան-

7. ՎԱՀՐԱՄ ԲԱՐՈՒՆԻ, էջ 204:
8. Սիսուան, էջ 148:
9. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 231:
10. ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ, Ժամանակագրութիւն, էջ 84. Հմմտ. Սիսուան, էջ 148: ՉԱՄՉԵԱՆ, Գ, էջ 266: ՕՐՄԱՆԵԱՆ, Բ, հմ. 1142, սիւն. 1663:
11. ՉԱՄՉԵԱՆ, Գ, էջ 296-297: ՕՐՄԱՆԵԱՆ, Բ, հմ. 1208-1213, սիւն. 1754-1762: Մամբ Ժամանակագրութիւն, Բ, էջ 150. 170, ծն. 193. էջ 183:

տեց: Քանի մը օր ետք՝ թորոսը խեղդել տուաւ, Հեթումին ալ աչքերը թեթեակի տաղեց: Իրենց չորրորդ եղբայրը՝ Կոստանդին, զգուած Սմբատի զործած ոճիրներէն, լռեց զայն, բանտարկեց եւ ինք գրաւեց գահը: Այդ ժամանակ Եգիպտացիները կրկին յարձակեցան Կիլիկիոյ վրայ. Կոստանդին՝ թիւ-Համտունը եւ ուրիշ բերդեր տալով՝ ետ վերադարձուց արշաւողները: Սակայն Կոստանդինն ալ չսիրուեցաւ ժողովուրդէն: Հեթումի աչքերը սկսեցին տեսնել. նա երրորդ անգամ բարձրացաւ Կիլիկիոյ գահին վրայ, եւ Սրմբատն ու Կոստանդինն ալ Պոլիս աքսորեց¹¹:

Լեւոն Դ.ի թագաւորութեան շրջանին, 1319-1341, Բարձրբերդը կ'անցնի Նղրի բերդի իշխաններուն ձեռքը, որոնք Կոստանդին թագաւորահայր տոհմէն էին, եւ որուն թող Պաղտիմ մարաջախտ՝ Իշխանաց իշխանը, կը նստէր Բարձրբերդի մէջ. սա 1335ին Լեւոն Դ. թագաւորէն կը զրկուի իբրև դեսպան Եգիպտոս, խաղաղութեան համար, սակայն ճամբան Հայկաի Ալթուն Պուղա սուլթանը բռնելով զայն՝ բանտ կը նետէ, ուր եօթը ամիս ետք կը վախճանի: Անոր կը յաջորդէ Բարձրբերդի մէջ իր անդրանիկ որդին Կոստանդ, որուն մայրն էր Սմբատ Գունդատապլի Լեւոն որդիին աղջիկը՝ Մարիոնէ: Կոստանդ յետոյ Հայոց թագաւոր կ'ըլլայ (1344-1363). սա իր ձեռքով իսկ աւելցուցած է Սմբատ Գունդատապլի ձառնոցին մէջ հետեւեալ յիշատակարանը. «Ի թվականութեանս Հայոց 925 (1338), յամսեանն աւգոստոս ժն. սուրբ Աստուածածնի տօնին ծնաւ անդրանիկ որդի իմ Աւշին ի Բարձրբերդ»¹²:

Հաւանաբար Բարձրբերդը մնացած է Կոստանդին Բ.ի իշխանութեան տակ իր թագաւորութեան ընթացքին՝ մինչեւ Կիլիկեան թագաւորութեան վերջին օրերը. ատկէ ետք այլեւս մեր պատմիչները չեն խօսիր Բարձրբերդի մասին: 1467ին զայն գրաւած է Շահսուար ամիրան՝ Չիլքատրեաններու ցեղէն: Օսմանեան պատմիչներէն ոմանք կ'աւանդեն՝ թէ Բարձրբերդ մինչեւ 1485 մնացած ըլլայ Հայերու ձեռքը, որոնք՝ ըստ իրենց՝ կը նեղէին այդ կողմերէն անցնող ճամբորդները, մինչեւ որ 1485ին Օսմանցիները վերջնականապէս գրաւած են զայն: Ամէն պարագայի, մինչեւ ժ. Դ. դարը Բարձրբերդի աւանը տակաւին բնակուած էր Հայերէն. ու դեռ յետագային ալ, մինչեւ դարուս սկիզբը, այդ շրջանը ամառանոց եղած է շրջակայքի հայ բնակիչներուն¹³: Բարձրբերդի ընծայած գրական կարկառուն դէմք մը եղած է իր շրջանին՝ Վարդան Վարդապետ Բարձրբերդցի, ծաղկած ժ.Գ. դարու վերջերը¹⁴:

12. Սիսուան, էջ 149: Ձառնոցն գրութեան թուականն է 1269. տե՛ս՝ անդ, էջ 71: Այս ձառնոցին յիշատակարանները չգտանք Հայագատումի մէջ:
13. Սիսուան, անդ:
14. Ուսումնասիրութեան կարօտ դէմք մը: Իր մասին շատ ամփոփ տեղեկութիւն մը կու տայ Ալիշան՝ Սիսուան, էջ 149: Դժբախտաբար կը պակսին ստույգ տեղեկութիւններ իր դրական արտադրութեան մասին: Արդի հեղինակներ ալ հազիւ կ'ակնարկեն իր անունին: Պէտք չէ զինք շփոթել Վարդան Արեւելցիի հետ, ինչպէս կը կարծէր Չամչեան (Պատմ., Գ. էջ 240): Յարգ իր մասին մեզի ծանօթ լաւագոյն ուսումնասիրութիւնն է ԱԿԻՆԵԱՆԻՆԸ, Վարդան Բարձրբերդցի:

ՄՈԼԵՒՈՆԻ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Լեոնային Կիլիկիոյ Հին բերդերէն մէկն էր Մոլեւոնի բերդը, կը գտնուէր Լամբրոնի եւ Բարձրբերդի նահանգներուն միջեւ, Լամբրոնէն դէպի Հիւսիս եւ Բարձրբերդէն դէպի հարաւ-արեւմուտք, Միսի Հիւսիս-արեւմուտքը: Կիլիկիան իշխանութեան օրով այս շրջանը կը կոչուէր Նահանգք Դոն-կիմ Մոլեւոնի կամ Դաշտ Մլունի, անշուշտ Մոլեւոնի մեծ եւ ամուր բերդին անունով: Հաւանաբար բերդը շինուած էր Լամբրոնի եւ Պապիւոնի բերդերուն նման յոյն իշխաններէ:

Եկեղեցական վիճակագրութեան մը մէջ՝ Յովհաննէս արքայեղբայրը կը կոչուի եպիսկոպոս «նահանգաց աստուածապահ դոնկիմ Մալեւաւնի եւ մասին ինչ Բարձրբերդոյ»¹: Մոլեւոնի մահանգքը կը բացուէր արդէն դէպի դաշտային Կիլիկիա, մինչ բերդը կը գտնուէր անշուշտ դէպի դաշտաբերան իջնող վերջին բարձունքներուն վրայ: Այիջան հաւանական կը նկատէ որ Հիներէն փոքր Մոլեւոնի վոչուած վայրը Ալատաղի պարին եւ Պուլար լեռներու վերջին դարեւանդներու մէջտեղէն իջնող լեռնուղին ըլլար:

Բերդին անունը զանազան կերպերով կ'աւանդեն պատմիչները. Մալուվոն, Մուլուն կամ Մլուն. իսկ Արաբները զայն կը կոչէին Հրսն-էլ-Մլուն. լատին պատմիչները բոլորովին փոխուած կը գրեն անոր անունը, Mons Livonis, եւ հոլովուած Montis Lionis: Սակայն Լեոն Մեծի պարգեւագրին մէջ, Հիւանդանոցի աստիճաններուն տրուած, կը գրուի Երկիր Մլունի - In territorio Meloni²:

ՊԱՏՄԱԿԱՆ

Լեոնի թագադրութեան հանդէսին ներկայ եղող իշխաններու կարգին կը յիշուի Մոլեւոնի բերդին իշխանը, «իշխանն Մօլովոնին Աժառոսն»³, որ հաւանորէն յոյն մըն էր եւ կը տիրէր ոչ միայն Մոլեւոնի բերդին, այլ եւ

1. Սիսուան, էջ 142:
 2. Անդ:
 3. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

անոր շուրջը տարածուող նահանգին. բայց ենթարկուած էր հայ թագաւորութեան, նման՝ ուրիշ հայ, յոյն եւ լատին իշխաններու:

Այս յոյն իշխանէն վերջ կը յիշուի Սիր Լեւոն, տէր Մոլեւոնի, որ 1271ին, Լեւոն Բ.ի թագաւորութեան սկիզբները, Ապլլարիպ իշխանին հետ միացած, ուղեց ապստամբութիւն մը կազմակերպել, սակայն չյաջողեցաւ եւ երկուքն ալ բռնուեցան⁴: Հաւանորէն, այս դէպքերէն վերջ, Մոլեւոնի բերդն ալ՝ ուրիշ նշանաւոր բերդերու կարգին՝ գրաւուած եւ թագաւորական կայուած եղած է: Օշին թագաւորի ժամանակ, ԺԴ. դարուն սկիզբները, անոր եղբայրը Ալինախ կը յիշուի իբրեւ տէր Մոլեւոնի, Լամբրոնի եւ Կուկլիակ բերդերուն⁵: Մոլեւոնի բերդը իր ընդարձակ նահանգով եպիսկոպոսական թէմ էր. կը յիշուին անոր երկու եպիսկոպոսները՝ Յովհաննէս արքայեղբայրը (1260-1290) եւ Ներսէս, որ 1316ին ներկայ եղած է Ատանայի ժողովին:

1292ին՝ երբ Եգիպտացիները Աբայ քաղաքը կը գրաւեն, «գերեցին զՄոլեւոնին փողոն» կ'ըսէ Սամուէլ Անեցիի շարունակողը⁶: Բերդը հաւանորէն անխոցելի մնացած է:

Մոլեւոնի բերդը Լեւոն Գ.ի ժամանակ կը գրաւուի թագաւորներէն եւ կը քանդուի. սակայն դեռ ատեն մը եւս կը յիշուի մեր պատմութեան մէջ: Լեւոն Դ.ի ժամանակ, Կոստանդին անունով անձ մը, արգելափակուած Մոլեւոնի բերդին մէջ, ինքզինքը կու տայ գրչագրութեան եւ 1331ին կ'օրինակէ հոն Սողոմոնի Առակները⁷: Մոլեւոնը կը յիշէ նաեւ 1397ի յիշատակարան մը⁸:

Այս բերդին մէջ 1297ին սրտածմլիկ դէպք մը պատահած է. Սմբատ արքայ իր անդրանիկ եղբոր եւ իր նախորդին՝ Հեթում Բ.ի աջքերը տաղած է: Հեթումը կ'ազատի իր միւս եղբոր Կոստանդինի ձեռքով՝ որ գահ կը բարձրանայ⁹:

Լեւոն Դ.ի թագաւորութեան օրով, 1323ին, հայ իշխանութիւնը կը տկարանայ. Եգիպտացիները Ալասի գրաւումէն վերջ կը յարձակին աւելի ներսերը եւ կը հասնին մինչեւ Մոլեւոնի առջեւ: Այս մասին կը գրէ յիշատակագիր մը. «Յիշաւ [ասպատակ] արարեալ զօրացն թուրքաց՝ զՄլունն զամէն առ հասարակ ի մեծէ մինչև ցփոքունս գերեաց, եւ հրով այրեաց երկու պուրճ, եւ բազում քրիստոնեայք հրով կատարեցան»¹⁰: Այս առթիւ, ինչ որ կ'երեւի, մասամբ քանդուած է Մոլեւոնի բերդը, սակայն ազատած է ամբողջական աւերումէ: Ատկից 12 տարի վերջ Ալթուն Պուղա, Հալէպի կառավարիչը, կը յարձակի Կիլիկիոյ վրայ եւ կու գայ կը պաշարէ Մոլեւոնի բերդը 25 Մայիս՝

4. Հեթում ԿՈՒՌՅԱՆ, Համառոտ Պատմութիւն, էջ 84: Տես նաեւ Սիսուան, էջ 142, ծն. 1:
 5. Սիսուան, էջ 142. տես նաեւ անդ, էջ 85 եւ 130:
 6. ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, էջ 163: Տես նաեւ Սիսուան, էջ 142:
 7. ԽԱՉԻԿԵԱՆ, ԺԴ, էջ 241-242:
 8. Անդ, էջ 619:
 9. Մանր ժամանակագրութիւններ, Բ, էջ 170, ծն. 193: Տես աստ, Բարձրբերդ եւ Կապան բերդ:
 10. Տես Սիսուան, էջ 142:

Համբարձման օրը. «ու գնացեալ ի Մոլեռնին առջեւ, ու կեցաւ ինն օր յերկիրս ու ելաւ»¹¹. Իսկ Սամուէլ Անեցիի շարունակողը կը գրէ. «ձիւրնթաց արձակեալ... ի մի գիշեր և ի մի օր հասեալք ի Մամուէստիա եւ յԱտանա, եւ ի թագաւորաշէնն, եւ ի բոլոր զաշտս Մլուռնին, զի թերեւս ըմբռնել կարացեն զթագաւորն Լեռնն»¹²:

Մոլեռնի բերդին մօտերը եղած է նաեւ վանք մը՝ որ Կամրիկ կամ Կամրիկ անապատ կը կոչուէր. անթուական աւետարանի մը յիշատակարանին մէջ կը կարդանք.

«Ի դղեակս Մոլեռնի,
ի յանապատըս որ Կամրիկ կոչի
Ընդ հովանեաւ Աստուածածնին
Եւ Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի,
Եւ սքանչելագործ Ս. Նշանի,
Որ պահապան այսրմ եղիցի
Ի թագաւորութեան Լեռնի»¹³:

Ուրիշ մերձակայ վանք մըն էր հուշակաւոր Գոնները¹⁴:

Մլուռնի նահանգին մէջ էին զանազան բերդաւաններ. յիշենք Վաները, զոր Մեծն Լեռնն Հիւանդանոցի ասպետներուն կը շնորհէ, և Գմբէթբերդը (Cumbethfor)՝ նոյնպէս Մեծն Լեռննէ Տեւտոնեաններուն տրուած¹⁵:

Մոլեռնի բերդը Օսմանեան պատմութեան մէջ ալ կը յիշուի Մուլէն կամ Մուվանէ անունով. Պայազիտ Բ. ի օրով տեղացի թուրքմէներ զայն կը նուաճեն. իսկ 1487ին՝ Լամբրոնի, Կուկլակի, Պոճա քաղէի եւ Ալընքաշի բերդերուն հետ՝ Մոլեռնն ալ կը գրաւուի Օսմանցիներէն¹⁶:

ՎԱՀԿԱՅ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱՎԱՆ

Վահկա լեռնային Կիլիկիոյ հուշակաւոր եւ հին բերդերէն մէկն էր, Յոյներէն կոչուած Βαχά, իսկ Արարներէն՝ Βεββէ կամ Վաֆա (ներկայիս Feke): Կը գտնուէր Սիհուն գետի արեւմտեան ափին վրայ, Սիւնն հազիւ 50 քմ. հեռու՝ դէպի հիւսիս-արեւմուտք, եւ Բարձրբերդի արեւմտակողմը:

Հաճընի (ներկայիս Saimbeyli, հնուց՝ Բադիմոն) հարաւ-արեւմուտքը, այսօրուան Feke գիւղէն շ. 10 քմ. դէպի հիւսիս-արեւելք, ծովի մակերեսէն 1200 մեզր բարձրութեան վրայ ընդարձակ դաշտէ մը ցցուող 100 մեզրնոց սեպածեւ ժայռի մը կատարին շինուած էր Վահկայի բերդը. անոր արեւելեան կողմը խոր անդունդ մը կը բացուէր, իսկ արեւմտեան կողմէն ցից ժայռեր զայն կը շրջապատէին. այնպէս որ երկու կողմերէն ալ՝ մագլցիլ եւ բերդ բարձրանալը անկարելի էր:

Բերդին մուտքը կը գտնուէր հարաւային պարիսպին վրայ, շինուած կրանիթեայ քարերով: Բերդին մէջ կը հոսէին երկու մշտարուխ աղբիւրներ, որոնք կ'երթային կը լեցնէին մօտակայ աւազանները: Այս աղբիւրներուն ջուրը բերուած էր, ազուզաներով, բերդին հիւսիսը գտնուող բարձր լեռներէն, մինչեւ բերդին ստորոտը, անկից ալ բերդին ժայռերը փորելով, ջուրը վեր բարձրացուցած էին եւ բերած բերդին կեդրոնի հրապարակին մէջ՝ ուր կը հոսէր երկու ծորակներէ: Փորձեր կատարուած են գտնելու՝ ջրատար խողովակները, սակայն անօգուտ աշխատանք եղած է:

Բերդին մէջ կար հսկայ եւ ընդարձակ տարածութիւն մը, որ կրնար հազարաւոր մարդ պարունակել: Բերդին պատերուն վրայ բացուած էին լոյսի եւ նետառութեան համար մասնաւոր նեղ ու երկայն լուսամուտներ, որոնք աստիճանաբար կը նեղնային ներսէն դէպի դուրս: Ներսի պատուհաններուն վրայ կային բազմաթիւ խաչի նշաններ եւ արձանազրութիւններ:

Բերդին դազաթը տափարակ էր եւ ծածկուած էր խոտով, տեղ տեղ կը տեսնուէին բնակարաններու հետքեր, ճամբաներ եւ հասարակաց կայաններ:

1913ին երկու հայեր (Յ. Պ. Պօղոսեան եւ Կ. Օհանեան), Վահկայի հազարապետին մասնաւոր հրամանով, այցելել են բերդը, եւ ելեր՝ մինչեւ անոր դազաթը, ուսկից կը պարզուէր ընդարձակ տեսարան մը մինչեւ Տաւրոսի հեռաւոր կատարները: Բերդը ժամանակի ընթացքին շատ անգամներ

11. Սիսուամ, 142: ԽԱՉԻԿԵԱՆ, ԺԴ, էջ 295: Այս վերջինս կը կարգայ իմու Լեռնին] ի Մոլեռնին:
12. ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, էջ 159:
13. ՏԱՇԵԱՆ, Ցուցակ, էջ 667: Սիսուամ, էջ 143: ՈՍԿԵԱՆ, Կիլիկիայի վամբերը, էջ 219:
14. ՏԿ՝ ՈՍԿԵԱՆ, ամդ, էջ 144-150:
15. Սիսուամ, էջ 142-143:
16. Հմմտ. ԳՈՒԼԱՄԻՐ ԵԱՆՅ, Կիլիկիա, էջ 200:

Թիրախ դարձած է քանդումի, աւերումի, կործանումի փորձերու, սակայն անկարելի եղած է. անոր պարիսպի քարերը իրարու հետ զօղուած էին զօրաւոր շաղախով մը. հակառակ ասոր՝ հիւսիսային պատերը մեծ մասով քանդուեր են եւ քարերը փոխադրուած հեռուները՝ իբր շինարարական նիւթ անոնցմէ օգտուելու համար:

Սուլթան Համիտի օրով, իր տարեդարձի օրը, բերդը կը լուսաւորուէր ծայրէ ծայր. իսկ տարին մէկ անգամ ալ, Չատիկին, հայ ժողովուրդին հրաման կը տրուէր զայն այցելելու:

Յ. Պ. Պօղոսեան կը համարի թէ Վաքա կամ Վաքքա անունը առաջ եկած ըլլայ լատիներէն վաֆֆա (vacca) բառէն՝ որ կը նշանակէ կով. այսպէս կոչած կրնան ըլլալ Հռոմայեցիները այս շրջանի լեռները, ինչպէս կոչած են ցով (taurus) Տաւրոսեան լեռները¹:

ՊԱՏՄԱԿԱՆ

Վահկայի բերդը կը յիշուի բիւզանդացի պատմիչներ Նիկետաս Քոնիատայէ եւ Կիննամոսէ, Յովհաննէս Պորփիրոսէն կայսեր Կիլիկիա կատարած արշաւանքին առիթով²: Բերդը, լեռներու կատարին, հռոմէական կամ բիւզանդական շինութիւն մըն է, բիւզանդացիներու ձեռքը մնաց մինչեւ որ ԺԱ. դարու երկրորդ կէսին Անիէն հեռացող հայ իշխաններ սկսան տեղաւորուիլ Կիլիկիոյ կողմերը:


Վահկա՝ Ռուբինեան իշխաններու Կիլիկիոյ մէջ գրաւած առաջին բերդերէն է, ինչպէս կը վկայեն շատեր մեր պատմիչներէն եւ յիշատակագիրներէն: Գրաւումը տեղի կ'ունենայ, ըստ Ալիշանի, 1097ին. գրաւողն է Ռուբէն Ա. ի որդին՝ Կոստանդին Ա. «Կոստանդին, այր քաջ եւ արդարագործ, որ եւ ի բազմաց սիրեցեալ եղեւ բնակչաց աշխարհին Կիլիկիոյ. որոյ ձեռնտըւութեամբ ելեալ ի ծովակողմն Տօրոսի, տիրեաց նահանգին այնորիկ. նախ առեալ զղղեակն զՎահկայ, եւ ապա անտի յառաջ յոլովից տիրեալ տեղեաց դաշտաց եւ ամրոցաց, զյոքունս ի Յունաց հարեալ»³:

Նուազ մանրամասնօրէն կը գրէ Սմբատ Սպարապետ. «Սա այս Կոստանդին էր յիշխանացն Հայոց Գագկայ արքայի Բագրատունոյ, որդւոյ Աշոտոյ, որպէս վերագոյն գրեցաք. եւ զկնի մահուան Գագկայ արքայի, եկեալ ի լեառն Տաւրոս՝ քաջութեամբ եւ արիութեամբ բռնակալեալ ունէր զմեծ մասն»

1. Հմմտ. ՊՕՂՈՍԵԱՆ Յ. Պ., Հաճըն, էջ 235-239 (Օսմանեան զօրանոցի մասին՝ ճիշտ բերդին առջեւը, տե՛ս էջ 37): Հմմտ. Կառլ Լանգլուան, Սիսուան, էջ 161: LANGLOIS, Voyage en Cilicie, էջ 408: ԳՈՒԼԱՄԻՐ ԵԱՆՅ, Կիլիկիա, էջ 307: Յ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ, էջ 59: H. HELLENKEMPER, Burgen, էջ 218: Վահկայի անառիկ դիրքին մասին՝ կը գրէր բիւզանդացի պատմիչ Նիկետաս. «ἔφ' οὐπερ ἢ μὲν φύσις τῆν πέτραν ἀνέδωκεν, ἢ δὲ τέχνη τεύχεσιν ἀδύτην περιέλαβε καὶ ἐυράτουνεν (զոր բնութիւնը ժայռով, իսկ արհեստը շրջափակ պարիսպներով ամրացուցեր էր)» (NICETAS, Historia, Iohannes Comnenus, էջ 30):
 2. NICETAS, Անդ, էջ 29-33: CINNAMUS, I, 8, էջ 18, 20:
 3. Հայապատում, ՄՀԱ, էջ 343:



Վահկայի բերդը:
 La forteresse de Vahka.



Բերդիմ յատակագիծը (Հիլլենկեմփերէմ՝ ըստ Dunbar-Boalի). սանդղաչափ՝ 1:1000:
 1. Ստորին բերդի աշտարակը: 2. Ստորին բերդի գաւիթը: 3. Ամրացուած միջանցք:
 4. վերին բերդ: 5. Մարտկոց:
 Plan de la forteresse (de Hellenkemper selon Dunbar - Boal).

լերինն Տաւրոսի. եւ տիրեալ բազում բերդից եւ գաւառաց, զոր յափշտակեալ էր յազգէն Մարմանաց. եւ յառաջ քան զելաննելն նորա ի կենցաղոյս եղեւ նշան զարմանալի, զի ցոլացեալ հուր ի նմանութիւն կայծակի ի դղեակն Վախկայն...»⁴:

Վահկայի գրաւման մասին՝ կը գրէ նաեւ Վահրամ Բարունի չափածոյ տողերով.

«Որ Կոստանդին էր անուանեալ,
Մեծախորհուրդ եւ քաջ եղեալ:
Հըռչակաւոր զղեկին տիրեալ,
Այն որ Վահկայն է կոչեցեալ.
Յորում եւ տուն ինքեան եղեալ,
Եւ տէրութիւն անդ հաստատեալ»⁵:

Վահկայի մէջ, 1100ին, Կոստանդին կը վախճանի եւ կը թաղուի Կաստաղօնի մերձակայ վանքին մէջ:

Կոստանդինի կը յաջորդէ իր որդին Թորոս Ա., զոր Սմբատ կը կոչէ «Տէր Վահկային»⁶. ասիկա՝ Մանտալեան եղբայրներէն՝ Գագիկ Բ. Անիի թագաւորին մահուան վրէժը կը լուծէ, եւ Գագիկի գանձերը գրաւելով՝ կը բերէ կը դնէ Վահկայի մէջ. «Ապա առեալ բազում գանձս ոսկոյ եւ արծաթոյ եւ զամենայն ինչս նոցա, եւ զմիւս եղբայրն բերեալ ի Վախկայն եւ եղ պահպան բերդին»⁷:

Թորոս Ա.ի կը յաջորդէ՝ եղբայրը Լեւոն. ասոր օրով Յունաց Յովհաննէս Պորփիրոսէն կայսրը (1137)ին մեծ բանակով կը յարձակի նախ Անարգարայի եւ յետոյ Վահկայի վրայ, ուր ապաստանած էր Լեւոն՝ իր իշխաններով: Ասոնք, վստահացած՝ բերդին անառիկ դիրքին վրայ, երկար կը դիմադրեն, մանաւանդ թէ իրենց քաջերէն մէկը՝ Կոստանդին, պարթեւահասակ իշխան մը, պարիսպին վրայ ելած՝ յոխորտալով յունարէն լեզուով կ'արհամարհէ կայսրը, կը ծաղրէ Յոյներու քաջութիւնը, զիրենք մենամարտի հրաւիրելով: Յոյները կ'ընդունին հրաւերը եւ կը զրկեն մենամարտելու Եւստոատ անունով քաջը. Կոստանդին դժբախտաբար կը յաղթուի եւ զէնքերը դաշտը թողած՝ կը սկսի դէպի բլուրը փախչիլ: Կայսրը, սակայն, երբ բերդը կը գրաւէ, Կոստանդինն ալ շղթայազարկ նաւ կը դնէ եւ Պոլիս կը զրկէ: Նաւը հազիւ ցամաքէն հեռացած՝ Կոստանդին, շղթաները քակել տալով իր

4. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 112:

5. ՎԱՀՐԱՄ ՐԱԲՈՒՆԻ, էջ 193: Ալիշան, յետ մէջբերելու Վահրամի այս տողերը, հետեւեալ ծանօթութիւնը կ'աւելցնէ. «Այսպէս գրէ եւ ընդարձակող ժամանակագրութեան Անեցւոյն. «Որ եւ տիրեաց հռչակաւոր բերդին որ Վահկայ կոչի. յորում գտէրութիւնն իւր հաստատեաց. եւ նովաւ հառ զբազում տեղիս»: Իսկ զօրինակ նուաճման բերդին, ոչ եւս յիշեմ՝ ո՛ր պատմիչ, ասէ խարէութեամբ լինել. ի մեծի տօնի եւ տօնավաճառի տեղոյն՝ առաջէ Կոստանդին արս ծպտեալս իբրեւ վաճառականս, որք ի խոսն հրապարակին մերկացեալ զզէնսն թաքուցեալս՝ դիմեն ի ներքս ի բերդն եւ ի բունն առնուն» (Սիսուան, էջ 162, ծն. 1): ԱՅԵԳԻԻ շարունակողի մասին՝ տե՛ս վերը Լամբրոնի բերդ, ծն. 19:

6. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 136:

7. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 137:



Հարաւային նրբամցքին մուտք՝ հիւսիս-արեւմուտէն (Ռ. Էտուարտ):
L'entrée du couloir méridional vue du nord-ouest (R. W. Edwards).

ծառաներուն, գիշերը յանկարծակի կը յարձակի պահապաններուն վրայ, կը սպաննէ զանոնք ու կը փախչի. սակայն կրկին կը ձերբակալուի եւ գերի կը տարուի Պոլիս⁸: Յոյները Վահկայի մէջ գերի կը բռնեն նաեւ Լեւոն իշխանը եւ իր Թորոս (Բ.) եւ Ռուբէն որդիները, ու գիրենք ալ շրթայակապ Պոլիս կը տանին: Հոն Ռուբէնի աչքերը կը կուրցնեն եւ բանտ կը նետեն: Լեւոն իշխան սրտի ցաւէն կը վախճանի, իսկ Թորոս Բ. ութը տարի Պոլսոյ մէջ գերի մնալէ ետք, «գտեալ օգնութիւն յԱստուծոյ, եւ ի դիպող ժամու վերջստին եկն ի Կիլիկիա. եւ ձեռնտուութեամբ լեռնակողմանց Տօրոսի ազինս Հայոց, որ մնացեալ էին անդանօր, տիրեաց նախ Վահկային եւ ամենայն Փռիւզիոյ»⁹:

Թորոսի փախուստը Պոլիսէն կը պատմէ նաեւ Սմբատ Սպարապետ. «Թ թուին ՇՂԴ (1145) մանուկ մի Թորոս անուն, յորդուցն Լեւոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբինի, զոր տարան կապանօք ի Կոստանդինուպօլիս տամբ եւ որդւովք, սա այս Թորոս գերծեալ անտի հասանէր ի լեռնակողմն Տաւրոսի, ի սահմանս Վահկային, անտեսեալ եւ ծածկեալ զինքն թէ ո ոք էր, եւ իմաստութեամբ փոքր փոքր ձգէր առ ինքն արս աջողակս ի քահանայից եւ աշխարհականաց...: Եւ օգնութեամբն Աստուծոյ փոքր փոքր տիրեաց Հայրենեաց իւրոց, եւ առ զՎահկայն, զՅամուտայն, զՍիմանայկլայն, զԱռիւծ բերդ, եւ այլ գաւառս էառ ընդ ձեռամբ»¹⁰:

Թորոս Բ. ի օրով Վահկան կ'ըլլայ Ռուբինեանց իշխանութեան կեդրոնը, մինչեւ որ Թորոս Բ. կը մեռնի եւ իրեն կը յաջորդէ իր Մլեհ եղբայրը որ իր աթոռը՝ Սիս կը փոխադրէ. եւ անկէ վերջ Վահկայ բերդը կը գործածուի իբրեւ արգելարան, բանտ. այնպէս որ՝ ԺԲ. դարուն հոն կը բանտարկուի, ինչպէս տեսանք, Ս. Ներսէս Լամբրոնեցիի եղբայրը՝ Հեթում, Լամբրոնի տէրը, որ յետոյ կրօնաւոր կ'ըլլայ: Վահկայ բերդին մէջ արգելափակած է նաեւ Լեւոն Մեծագործ իր առաջին կինը, որուն դէմ անհաւատարմութեան ամբաստանութիւն եղած էր¹¹:

Ժամանակ մը եւս տակաւին հայ ժողովուրդը խմբուած կ'ապրի Վահկային շուրջ, այնպէս որ կը յիշուին ականաւոր դէմքեր՝ որոնք Վահկացի կը կոչուին, ինչպէս Կոստանդին Կաթողիկոս Վահկացի (1430-1438): Այս շրջանին է որ քահանայական ընտանիք մը (ըստ աւանդութեան՝ Թագաւորական) կը ստանայ կաթողիկոսարանի սրբութիւններու պաշտպանութիւնը, այսինքն է չորս սուրբ Աջերը (Ս. Գրիգոր Լուսաւորչի, Ս. Նիկողոսի, Ս. Սեղբեստրոսի եւ Ս. Պարսամի) եւ ժառանգաբար զանոնք որդիէ որդի փոխանցելով կը պահպանեն. այս պատճառով անոնք կոչուեցան Աջպահ, Աջպահեան, Աջպահեան, Աջպահեան կամ նաեւ Աջպահ, Աջպահեան¹²:

8. NICETAS, Անդ:
 9. Հայագատում, էջ 345:
 10. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 164-165:
 11. Հմմտ. Սիսուան, էջ 508-509: TOURNEBIZE, Histoire, էջ 192: ՕՐՄԱՆԵԱՆ, Ա, Հմ. 1078, սիւն. 1567: Հիներէն հմմտ. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 213-214: Տարբեր ուղղութեամբ՝ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, Ա (Գ), էջ 77:
 12. Հմմտ. Սիսուան, 163, 218-219: ՕՐՄԱՆԵԱՆ, Բ, Հմ. 2006, սիւն. 2937-2940:



Ջրհոր մը՝ հիւսիսէն (Ռ. Էտուարտս)
 Un puits vu du nord (R. W. Edwards).



Հիւսիս-արեւմտեան գիտնափորը՝ դիտուած արեւելէն (Ռ. Էտուարտս):
 La crypte nord-occidentale vue de l'est (R. W. Edwards).



Արեւելեան պատը՝ հիւսիս-արեւմուտքէն (Ռ. Էտուարտս):
Le mur oriental vu du nord-ouest (R. W. Edwards).



Վահկա՝ հիւսիս-արեւելքէն (Ռ. Էտուարտս):
Vahka, vu du nord-est (R. W. Edwards).

Վահկա երկար դարեր մնաց հայ ժողովուրդի պաշտպանութեան կեդրոնը, մինչեւ որ զօրացան թիւրքմէն ցեղեր, եւ սկսան Կիլիկիոյ վրայ յարձակիլ: Հայերը հետզհետէ քաշուեցան դէպի լեռնային Կիլիկիա: 1467ին Վահկա՝ իր շրջակայ բերդերով, ինչպէս նաեւ Հաճըն քաղաքը, կը գրաւուին Շահսուար Զիւրզասրեանէն¹³: Ռամազան Օղլուները կը գրաւեն Ատանան եւ Սիսը, եւ թուրքմէն Աֆշար ցեղախումբեր կու գան կը հաստատուին հետըզհետէ ամբողջ Կիլիկիոյ մէջ: Ասոնցմէ Քոզան Օղլուները ժէ. դարու կէսերուն կը տիրեն գրեթէ ամբողջ լեռնային Կիլիկիոյ, Սիսէն մինչեւ Հաճըն, մինչեւ 1865՝ երբ Օսմանեան կառավարութիւնը վերջ կը դնէ անոնց տեղական գերիշխանութեան: Քոզան Օղլուներու անունով կոչուած է շրջակայքը Քոզան կամ Քոզան Տաղը¹⁴:

Հակառակ այս անցուդարձներուն, դեռ ժթ. դարու վերջերը՝ Վահկայի մէջ կ'ապրէին շուրջ 200-300 տուն հայեր¹⁵:

Վերջին դարերուն, Վահկա Կիլիկիոյ կաթողիկոսարանին հովոցը կ'ըլլայ, մասնաւորապէս Աջպահեան կաթողիկոսներուն օրով: Վահկայի մօտ էր, ինչպէս ըսինք, Կաստաղօնի վանքը ուր թաղուած են թորոս Ա. եւ իր եղբայրները¹⁶:

13. Հայապատում, ՅԶ, էջ 579: Սիսուան, էջ 166-167:


14. Հմմտ. Յ. Պ. ՊՕՂՈՍԵԱՆ, Հանքն, էջ 31: LANGLOIS, Անդ, էջ 410:

15. Հմմտ. Սիսուան, էջ 161: ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՅ, Անդ: LANGLOIS, Անդ, էջ 408: Յ. Պ. ՊՕՂՈՍԵԱՆ, Անդ, էջ 37:

16. Յ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ, Անդ: Վահկայի մասին իբր հովոց Ստեփաներու՝ տես նաեւ Յ. Պ. ՊՕՂՈՍԵԱՆ, Անդ, էջ 34: Վահկայի մասին նորագոյն ուսումնասիրութիւններէն յիշենք՝ DUNBAR - BOAL, Vahga; HELLENKEMPER, Burgen, էջ 217-223:



Վահկա՝ հարաւ-արեւելքէն (Ռ. Էտուարտս):
Vahka, vu du sud-est (R.W. Edwards).



Քանդուած շէնքին ներքը՝ հարաւ-արեւելքէն (Ռ. Էտուարտս):
L'intérieur de l'édifice écroulé vu du sud-est (R. W. Edwards).



Հիւսիսային ջրամբարը՝ հարաւ-արեւելքէն (Ռ. Էտուարտս):
La citerne septentrionale vue du sud-est (R. W. Edwards).



Վահկա. հիւսիսային աշտարակները՝ հարուէՑ (Ռ. Էտուարտս):
Vahka: les tours septentrionales vues du sud (R. W. Edwards).

ԿԻԶԻՍՏՈՒ Ա ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Լեռնային Կիլիկիոյ սահմանային բերդերէն էր Կիզիստոս, մերթ զմերթ ուսած նաեւ Կիզիստոէ: Մեր պատմիչներուն մօտ կը հանդիպինք ուրիշ անունի մըն ալ՝ Կիմոնուկարի, որ ունի հետեւեալ տարբերակները՝ Կիմոնուկարիս, Կոնոնուկարիս, Կիմոնուկարի, Կրնոնուկարի, Կիտոնուկարի, Կիմոնուկոյ, Կիտոնուկոյ, Կիտոս: Առաջին ձեւին կը հանդիպինք Մատթէոս Ուռհայեցիի եւ Սմբատի (ըստ փարիզեան բնագրին) մօտ. սակայն Ուռհայեցի երկրորդ ձեւը կ'որդեգրէ՝ երբ կը խօսի Թորոսի կողմէ բերդի գրաման մասին: Երկրորդ ձեւը կը գործածեն նաեւ Սամուէլ Անեցի, Սմբատ (Վենետիկեան բնագիր), Հեթում Ժամանակագիր: Հին պատմիչներէն այս բերդը կը յիշեն Սորարոն եւ Պողոմէոս՝ Կոնիստրա ձեւով, զայն դասելով՝ Կատալոնիոյ (Cataonia) կուսակալութեան (praefectura) բերդաւաններու կարգին¹: Կարելի է թերեւս ենթադրել, Ալիշանի հետ (Սիսուան, էջ 168), թէ այս երկու անուններէն մէկը բուն բերդը կը նշանակէր, իսկ միւսը՝ շրջակայ գիւղը կամ աւանը: Մեզի անհաւանական չի թուիր նաեւ՝ որ երկրորդ ձեւը հայերու կողմէ այլափոխուած կոչում մը ըլլայ, նկատի առած մանաւանդ երկու ձեւերուն Ուռհայեցիի մօտ տարբեր շրջափակներով գործածութեան պարագան: Հոսակ Արարները զայն յորջորջած են Dhu'l Qila (կամ Kila) (բերդերու տիրող), քանի որ, ըստ Պալատուրի պատմագրին, կազմուած էր երեք զղեակներէ²:

1. STRABO, l. XII, cap. I, par. 4; PTOLOMAEUS, l. V, cap. VIII. Չեռագիրներու մէջ կը հանդիպին նաեւ Կոնիստրա կամ Կոնիստրա ձեւերը: Սորարոն Կատալոնիոյ կուսակալութեանը կը կապէ Կապադովկիոյ, մինչ Պողոմէոս Փոքր Հայքի (Armenia Minor): Կատալոնիա կը կոչուէր Կապադովկիայի հարաւը գտնուող գօտին, որ հարաւէն Կիլիկիոյ, հարաւ-արեւելքէն Կոնիստրայի սահմանակից էր: Քրիստոնէական շրջանի Կիստոսայի մասին տես՝ LE QUIEN, I, սիւն. 401-404: Եւրոպական արդի լեզուներուն մէջ կը նշանակուի ընդհանրապէս Cybistra, Cyzistra ձեւերով:
2. BALADHURI, էջ 263: Կիզիստոսայի շրջանը ներկայիս կը կոչուի Եշիլհիսար (Yeşilhisar), որ կը գտնուի՝ Նիզիսի վրայով Բոնիսայէն Քայսերի գացող ճամբուն վրայ, 62 քմ. հեռաւորութեամբ՝ Սողանըլէն: Տես Turquie, «Guides Bleus», էջ 700):

Փոյթինկէրեան (Պեւտինգերեան)³ իջեւանագրութեան մէջ բերողը կը նը-
շանակուի Կեսարիոյ եւ Տիանայի միջեւ (Տիանայի դիրքի մասին՝ տես աստ,
Լուլուայ բերդ) :

Մ. Ուուսայեցի զայն կը դնէ Արծիասի (հին Արգէսոսը, ներկայիս՝ Էր-
ճիշէշ) դաշտին մէջ. «ի դաշտն Արծիասոյ, ի բերդն որ ասի Կիզիաստայ»⁴ :
Սմբատ Սպարապետ աւելի կը ճշտէ բերդին դիրքը. «սոքա ունէին ամուր
բերդ մի՝ մօտ ի Ձինջուրն, վերահայեաց յաշխարհին Գամրաց՝ որ էր անուն
բերդին Կենդոսկաւի»⁵ : Սմբատ կը յաւելու նաեւ թէ Մանտարեան եղբայր-
ները «խոստացեալ էին տալ զբերդն զայն ի Թորոս, զի սահմանակից իւր էր
եւ ի Թուրքէն նեղէին յորժ»⁶ : Ուրեմն, շատ հաւանական է որ այս բերդը
Սարոսի ձախ ափին վրայ գտնուէր, Վահկայէ՝ որ Թորոսի սեփականութիւնն
էր՝ դէպի հիւսիս-արեւմուտք :

Ինքզը կանգնած էր բարձունքի մը վրայ. պատմիչները կը խօսին բերդին
«զառիվեր»ի մասին⁷ :

ՊԱՏՄԱԿԱՆ

Երբ Թորոս Յոյները յանկարծակիի բերելով կը յարձակի Կիզիաստա
բերդի վրայ, ասոնք՝ որ առաւօտ բերդէն դուրս ելեր էին՝ դէպի բերդ
կը փախչին, եւ սակայն չեն կրնար բերդին երկու դռներն ալ գոցել. կը դոցեն
միայն ներքին պարիսպին դուռը, թայց արտաքին դուռը թայց կը մնայ Թո-
րոսի զինուորներուն առջեւ. «Եւ հետեւակն Թորոսի խեցին զդուռն...»⁸ :
Սարսափը ինկած էր բերդէն ներս, բնակիչները խուճապի կը մատնուին եւ
կը սկսին բերդի ետեւի դռներէն փախչիլ. սակայն Թորոսի զօրքերը հոն ալ
կը հասնին. «եւ զօրքն Թորոսի կալան զփախստականսն եւ առին զբերդան,
եւ ընթացեալ պատմեցին Թորոսի»⁹ : Այսպէս Կիզիաստա, Յոյներու անառիկ

3. Այսպէս կոչուած՝ 1507ին Յելթէտի կողմէ գտնուած բնագրին առաջին ստացողին Գոնրատ
Փոյթինկէրի (Conrad Peutinger) անունով: Ուղիները եւ հանգրուաններու հեռաւո-
րութիւնները ցոյց տալու նպատակով պատրաստուած այս քարտէսը, ընդհանրապէս, կը
նկատուի վաղ Միջին դարու գործ մը, որ հաւանօրէն Հոռոմի կայսերական շրջանի քարտէս
մը կը վերարտադրէ :
4. Մ. ՈՒՌՆԱՅԻՆ, Բ, ՃԺԹ, էջ 263 :
5. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 136. տպագրիւրը վրիպակաւ ունի Ձինջուր՝ փոխանակ Ձինջուրի,
զոր ուղղեցինք ըստ ձեռագրին, Ձեռ. Ս. Ղազարի, թիւ 1308: Փարիզեան հրատարակութեան
մէջ կը կարդանք. «Բերդ մի ամուր մերձ ի Ձինջուրն՝ բնահայեաց ի Գամրաց աշխար-
հին...: Եւ անուն բերդին Կիզիաստէ՝ խիստ ամուր» (էջ 89) :
6. Անդ: Նոյնպէս՝ նաեւ փարիզեան բնագրիւրը: Հեթում Պատմիչի վերագրուած Ժամանակա-
գրութեան մէկ տարբերակը դեռ աւելի կը ճշտէ բերդին դիրքը ըսելով՝ «ի Լիկանդոնն»
(յուն.՝ Lycantis կամ Lacanitis), թէեւ բոլորովին ստոյգ չէ այս վայրին ալ դիրքը
(Հեթումի ՊԱՏՄԻՉ, Ժամանակագրութիւն, էջ 77: Հեթումի ՎՈՒՌՆԱՅԻՆ, Համառօտ
Պատմութիւն, էջ 74, բնագրային տարբերակներ: Տես՝ Սիսուան, էջ 168) :
7. Մ. ՈՒՌՆԱՅԻՆ, Գ, մէ, էջ 398: ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 136 :
8. Անդ :
9. Անդ, էջ 137 :

բերդը, Թորոս քաջին ձեռքը կ'իյնայ, բերդ մը՝ որ երեսուն երկու տարիներ
առաջ տխուր ողբերգութեան մը թատրը եղած էր, Գազիկի մահով: Բերդին
մէկ կողմը ահաւոր անդունդ մը կը թացուէր. Մանտարեան եղբայրներէն
մէկը, յուսահատ, ինքզինքը անկից վար կը նետէ¹⁰ : Իսկ միւս երկու եղ-
բայրները կը բռնուին Թորոսէն՝ որ անոնցմէ մէկը գաւազանի հարուածնե-
րու տակ կը սպաննէ, միւսն ալ Վահկայի պահապան կը դնէ¹¹ :

Բերդը իր մէջ գանձատուն մ'ալ ունէր, ուր անբաւ հարստութիւն դիզ-
ուած էր. «եւ միաբարձ արարեալ զամենայն տունս նոցա, բազում գանձս
եւ զդիպակս եւ խաչս յոյժ մեծամեծս արծաթիս, եւ պատկեր ոսկեճոյլ եւ
արծաթ առեալ գնաց ի Վահկայն»¹² :

10. Մ. ՈՒՌՆԱՅԻՆ, Գ, մէ, էջ 399 :
11. Անդ, էջ 400: ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 137 :
12. Նոյն տեղիքը :

ԼԵՒՈՆԿԼԱՅ

Լեւոնկլայ լեռնային Կիլիկիոյ բերդերէն էր: Հին աղբիւրներէն՝ Կիլիկեան շրջանի ձեռագրի մը յիշատակարանին մէջ կը յիշուի Լեւոնկլայ անունը. «ի յայսմ ժամանակի եղեւ զնալ անօրինաց յերկիրն Հայոց ի Թագաւորանիստ եւ ի մեծ գղեակն Բարձրբերդ, եւ ի գավառին յայն փոքր գղեակ մի, որ կոչի Լեւոնկլայ, ընդ հովանեաւ աստուածարնակ ուխտին ԽՈՐՆԻՆ, եւ է ընդ ստորոտ լեռին գեղեցկաչէն անապատ մի, որ կոչի ՓԵՐՃԵՐ»¹:

Այս տողերը քաւական մանրամասնութիւններ կ'ընձեռեն Լեւոնկլայի տեղւոյն եւ դիրքին մասին. նախ՝ թէ փոքր դղեակ մըն էր, կը գտնուէր Բարձրբերդի գաւառին մէջ, ընդ հովանեաւ Խորնի ուխտին, որ է ըսել՝ Խորնի վանքին շատ մօտ. արդ Խորնի վանքը կը գտնուէր Խորնի ձորին մէջ, Տաւրոսեան շղթային ստորոտը, Պոլքար լեռներու եւ Ալատաղի միջեւ, Սարոս կամ Սիհուն գետի արեւմտեան օժանդակներէն Գօրգուն գետի (Görgün su, Korkün su) ակնաղբիւրներուն ուղղութեամբ²:

Լեւոնկլայի՝ Բարձրբերդի հետ տեղագրական մերձաւորութեան մասին ունինք ուրիշ վկայութիւն մըն ալ 1302 թուականէն՝ Թովմաս գրիչէ, Ներսէս Շնորհալիի Ընդհանրակնիւն ընդօրինակութեան յիշատակարանին մէջ. «Խորնի... մերձ ի սահմանս Բարձրբերդոյ եւ Լեւոնկլային անառիկ դղեկին»³:

Սմբատ Սպարապետ երբ կը խօսի Լեւոն Բ. Թագաւորի շինարարական գործերու մասին կը գրէ. «ի սոյն ամի (1272) Թագաւորն Լեւոն (Բ.) հրա-

մայեաց շինել ամրոց առ լեռամբն Տաւրոսի, հանդէպ քաջայաղթ զօրավարին Անդրէի պահարանիցն, կիսօրեայ ճանապարհաւ հեռի, ի պահանութիւն այնմ գաւառին եւ հռչակաւոր ճանապարհին Խոզ Զորոյ: Որ եւ ի նոյն ամի յոր սկսաւ, կատարեաց զնա, եւ անուանեաց զնա...»: Դժբախտաբար Ս. Ղազարի թ. 1308 մայր օրինակին մէջ, զոր կը գործածէ Ալիշան, կը պակսի բերդին անունը⁴: Բայց նկատի առած Լեւոնկլայի դիրքը, որ լաւ կը յարմարի Սմբատի նկարագրութեան, Ալիշան կը համարի թէ խնդրոյ առարկայ բերդը Լեւոնկլան է, ինչ որ մեզի ալ հաւանական կը թուի: Ալիշան դիտել կու տայ նաեւ՝ թէ Լեւոնկլան, եթէ շինուած ըլլար Մեծն Լեւոնէ, հաւանօրէն յիշատակութիւն մը կ'ունենար մինչեւ Լեւոն Բ.ի ժամանակները⁵:

1. ԲԱԲԳԷՆ ԿԹՎ., Յուցակ Ձեռագրաց Անկիւրիոյ, Ձեռ. թիւ 184, սիւն. 897: Հեղինակին թուագրումը՝ «ԺԱ դար» անշուշտ արդիւնք է տպագրական վրիպակի մը, քանի որ ձեռագրին գրչութիւնը կը նկատուի իբր արդիւնք Կիլիկեան արուեստի (սիւն 895): Նկատի առած որ յիշատակարանին մէջ Բարձրբերդը Թագաւորանիստ կ'որակուի, հաւանական է որ ձեռագիրը ԺԳ. դարուն պատկանի, երբ Բարձրբերդը Կոստանդին Թագաւորացօր կալուածը զարձած էր:

2. Հմմտ. Սիսուան, 138-139, 151-152, 534: Ն. ԵՊՍ. ՄՈՎԱԿԱՆ, Խորնի ամապատ, «Միոն», ԼԲ (1959), էջ 71: ՈՍԿԵԱՆ, Կիլիկիայի վանքերը, էջ 208-218, 272-275:

3. Տե՛ս յիշատակարանը՝ ՏԱՇԵԱՆ, Յուցակ, էջ 621. տե՛ս նաեւ՝ ՈՍԿԵԱՆ, Կիլիկիայի վանքերը, էջ 214 (մասամբ), եւ Սիսուան, էջ 151 (միայն մէջբերուած հատուածը): Հայագատումի մէջ չկրցանք գտնել այս յիշատակարանը, որ դուրս մնացած է նաեւ Լ. Խաչիկեանի հաւաքածոյէն, Երեւան,

4. Այս ձեռագիրը, որ կը ներկայացնէ շատ կարեւոր վաւերաթուղթ մը Կիլիկեան պատմութեան, 1956ին հրատարակուեցաւ Վենետիկ՝ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք անունով: Չայն շատ յաճախ արդէն գործածած էր Ալիշան՝ իր Սիսուանին մէջ իբրեւ Պատմիչ Կիլիկիոյ, Արքունի Պատմիչ կամ սոսկ Պատմիչ Անր: Ձեռագիրին մէջ կը պակսի բերդին անունը, որուն տեղը նախնապէս բաց թողուած է, եւ ուր յետագային տարբեր ձեռք մը, տարբեր գիրով ու մեկանով, գրած է՝ զմա կատարեաց անիմաստ բառերը: Վենետիկի հրատարակութեան մէջ՝ առնուած է միայն կատարեաց բայը՝ առանց որեւէ ծանօթութեան (էջ 254): Այս ձեռագրին կարեւորութեան եւ հրատարակութեան հանգամանքներու մասին՝ տե՛ս S. DER NERSESSIAN, The Armenian Chronicle of the Constable Smpad.

5. Սիսուան, էջ 151:

ԱՆԱՐՁԱԲԱ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Ատանայի հիւսիս-արեւելքը, անկէ հազիւ 75 քիլոմետր հեռու կը գտնուէր Կիլիկիոյ հին եւ նշանաւոր Անազարբա կամ հայացած ձեւով՝ Անարգարա բերդաքաղաքը, Ճիհուն գետի օժանդակներէն, Սիսի եւ Սաուրա գետակներու գետախառնուրդին մէկ անկիւնին վրայ: Այսօր լայնածաւալ ամայութեան մը մէջ լքուած եւ անզաւակացած կը մնայ Կիլիկիոյ այս քաղաքամայրը, որ երբեմն ամբողջ զաւառին գլուխն էր, եւ իշխանանիստը՝ Հայկական Կիլիկիոյ:

Այսօր անոր տեղոյն վրայ փոքրիկ գիւղ մը կայ որ Անաւարսա = Anarsa կը կոչուի, որուն մասին Տրնէլ ուղեցոյց-ատլասը կը գրէ. « Village situé près du site antique d'Anazarbus, devenu place-forte arménienne du XII^e siècle à la fin du XIV^e siècle. La ville basse s'étend au pied d'une colline; la montée jusqu'à la forteresse est assez pénible »¹.


Այս գիւղին մօտիկ երկայնանիստ քարաբլուրի մը կատարին կը բարձրանայ, աւերակ եւ կիսաքանդ, երբեմնի նշանաւոր եւ անառիկ Անարգարայի բերդը. անոր արեւմտեան կողին ստորոտը կը տարածուէր հին Անարգարա քաղաքը, քառակուսի պարիսպներով: Ըլլա՛յ բերդին, ըլլա՛յ քաղաքին շինութեան ոճը եւ դիրքը զգալի նմանութիւններ ունէին Վանի քաղաքին եւ Տոպեան ժայռին վրայ բարձրացող Շամիրամի բերդին հետ, ինչպէս կը մատնանշէր արդէն անցեալ դարու կէսերուն Թէքսիէ²:

Անարգարայի անունին ստուգարանութիւնը յոյն պատմագիրներ, ինչպէս Ստեփանոս Բիւզանդացի եւ Սուիդաս, կը կապեն Anazarbas կամ Anazarbo անունով դիւցազի մը³: Սուիդասի համաձայն քաղաքին նախնական անունը

1. Turquie, Guide - Atlas DENOEL, p. 179.

2. TEXIER, L'Arménie, II partie, Van, p. 10; ID., Asie Mineure, p. 581.

3. STEPHANUS BYZANTINUS, De Urbibus, p. 126; SUIDAS, I, n° 1866, pp. 167-168; II, n° 1165, p. 104. Տես նաեւ՝ V. LANGLOIS, Voyage en Cilicie, p. 434. Սիսուամ, էջ 237: Եթէ ստոյգ է Սուիդասի վկայութիւնը՝ Թէ Անարգարան կոչուած է նաեւ Դիոկեսարիա, հարկ է այդ պարագային զանազանել ուրիշ Դիոկեսարիա մըն ալ՝ արեւմտեան Կիլիկիոյ մէջ, Սելեւկիոյ հիւսիսը, Լամոս գետին հիւսիսային ափերուն, յիշուած՝ հին աղբիւրներու մէջ՝ Olba կամ Olbia (ներկայիս՝ Ura) քաղաքին մօտերը:



Անարգարա, մայրաքաղաք. հարաւային միջնորմներն ու մարտկոցները (Հելլենկեմպեր): Anarzaba, le château d'avant: courtines et bastions méridionaux (Hellenkemper).



Անարզաբա, նախաքերդ. աշտարակառուցի ներքը (Հելլենկեմպեր):
Anarzaba, le château d'avant: l'intérieur de l'enclos de la tour (Hellenkemper).



Անարզաբա, նախաքերդ. հարաւային միջնորմներն ու մարտկոցները (Հելլենկեմպեր):
Anarzaba, le château d'avant: courtines et bastions méridionaux (Hellenkemper).

եղած է Դիոկեսարիա (Diocaesarea), եւ Անազարբայի փոխուած, երբ Ներուաս կայսրի օրով (96-98 յ. Ք.) քաղաքը կը կործանի եւ զայն կը վերաշինէ Anazarbo անունով ծերակուտական մը: Բայց այս վարկածը կը խախտի Պլինիոս Երէցի վկայութեամբ՝ որուն ծանօթ էր արդէն Անազարբա անունը⁴: Ուրիշ ենթադրութեան մը համաձայն Անազարբա անունը կը սերի արարեբէն Այն գարբա [= դեղին աղ (աղբիւր)] բառէն, մատնանշելով շրջակայ ժարերուն դեղնորակ գոյնը: Այս վարկածը կը թելադրէր արդէն Ստեփանոս Բիւզանդացի՝ իր վերոյիշեալ միւս վարկածին առընթեր, եւ զայն կ'իւրացնէր իր հրատարակիչը⁵:

Հիներու քով յիշուած է նաեւ Կիւնդա (Κούνδα, Κύνδα) անունը⁶: Կայսերական հին դրամներու վրայ կը գտնուի նաեւ Կեսարիա Անազարբեան (Καيسάρεια πρὸς Ἀναζάρβο - Caesarea ad Anazarbum) անունը, զոր տուած է քաղաքին Օգոստոս կայսրը, Արեւելք կատարած մէկ ուղեւորութեան ընթացքին, հաւանելով անոր զինուորական դիրքը. որով զայն մեծցնել տուած է եւ կայսերական տիտղոս շնորհած անոր՝ Ք. ա. 19 (Հոռմի 735) թուակաշին, որով կը սկսի Անազարբայի առաջին դարաշրջանը⁷:

Այս անունը մեր պատմագիրները զանազան ձեւերով կը դրեն. Սմբատ՝ Անարզաբա, Վարդան՝ Անաւարգա, Մ. Ուռհայեցի զայն կը կոչէ Տրովադա. «եւ հանց ընդ Տրովադա, որ է Անաւարգա». իսկ անոր հրատարակիչը մեզի կու տայ անոր Տրովադա կոչուելուն պատճառը. «յաղազս անառիկ պարբայացն որով ամրացեալ էր, եւ էր մայրաքաղաք Սիկիլիոյ (sic!) առ ժամանակօք Խաչակրաց»⁸:


Հ. Ղ. Ինճիճեան, 1800 թուականներուն, իր «Նոր Հայաստան» գրքին մէջ հետեւեալ տեղեկութիւնները կու տայ Անարզաբայի մասին, զոր աշխարհաբարի վերածելով հոս կ'արտագրենք. «Անարզաբա կամ Այնգարպէ... բերդաքաղաք՝ ճիհուն գետի մօտ, Սիսի հարաւակողմը՝ անկէ վեց ժամ հեռու

Keil եւ Wilhelm զայն կը նոյնացնեն Ներկայի Uzuncaburçի ակերակներուն հետ, եւ կը խորհին թէ այս քաղաքը Արկադիոս եւ Հոնորիոս կայսրերու կողմէ վերաշինուելով՝ Դիոկեսարիա կոչուած է եւ զատուած՝ Olbiaյէն (տես՝ KEIL - WILHELM, Denkmäler, էջ 44-45): Սակայն, իրարու մերձաւորութեան պատճառով՝ երկու քաղաքները յաճախ միասնաբար կը յիշուին. տես, օրինակի համար, AKURGAL, Ancient civilisations, էջ 342:

4. Տե՛ս PLINIUS, lib. V, cap. XXVII. Հմմտ. LANGLOIS, անդ:
5. STEPH. BYZ., անդ. «Ἀναζάρβα, πόλις Κιλικίας κέκληται ἀπὸ τοῦ προκειμένου θροῦ, ἢ ἀπὸ Ἀναζάρβου τοῦ κτισαντος». Տես նաեւ՝ անդ, հրատարակիչին թ. 98 ծանօթութիւնը. հմմտ. V. LANGLOIS, անդ: Սիսուան, էջ 236-237:
6. Հմմտ. SUIDAS, I, p. 168. II, p. 104. Սիսուան, էջ 237:
7. Հմմտ. LANGLOIS, անդ: Սիսուան, էջ 237:
8. ՍՄԲԱՏ ՍՊԱՐՍԱՊԵՏ, էջ 145 եւ 160: ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, ՀԳ, էջ 126: Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Բ, ճԺ, էջ 312 եւ 566. Ծնթ. թ. 185: Յոյն պատմիչներու քով ալ կը տարբերի քաղաքին անունին գրութեան ձեւը: Լեւոն Սարկաւազ (Leo Diaconus) կը գրէ 'Αναζάρβος, մինչ Նիկիեզաս Ակոմինատոս եւ Աննա Կոմնեն կը գրեն 'Αναβάρζος, որ կ'երեւի նաեւ Մորթմանէ 1126-1150 թուադրուած կնիքի մը վրայ (հմմտ. MORDTMANN, Sceaux, էջ 26-27):



Անարզաբա, արեւմուտքէն դիտուած (ՄՀՄՈՎԿ):
Anarzaba, vu de l'ouest (CEDCAM).



Անարզաբայի շինութեան արձանագրութիւնը (ՄՀՄՈՎԿ):
L'inscription principale de la forteresse (CEDCAM).



Անարզաբայի բերդին ելքը՝ արեւմուտքէն տեսնուած:
Vue d'ouest de la forteresse d'Anarzaba (CEDCAM).

լերան մը ստորոտը՝ դէպի արեւմուտք, ընդարձակ տափարակի մը վրայ. այս դաշտը Չուգուր օվա կը կոչուի: Քաղաքը շրջապատուած է կրկին պարիսպներով, որոնք շատ ամուր են եւ սրբատաշ մեծամեծ քարերով շինուած: Երկու պարիսպներուն մէջտեղ խրամ մը կայ, եւ մէկ պարիսպէն միւսը մեծ կամուրջ մը կ'երկարի, ուսկից միայն կարելի է քաղաք մտնել: Քաղաքին մէջ կը տեսնուին բազմաթիւ եկեղեցիներ, բաղնիքներ, մեծաչէն ապարանքներ, տուններ, առհասարակ շինուած գեղեցիկ եւ մեծամեծ քարերով, սակայն բոլորովին անբնակ եւ մարդերու տեղ անոնց մէջ օձեր բոյն դրեր են: Ապարանքներուն մէջ վայրի ծառեր եւ մոլախոտեր բուսեր են ու շատ տեղեր տուններուն եւ պալատներուն քարերը ինկած են փողոցներուն մէջ. ուստի կարելի չէ ազատօրէն շրջադայիլ աւերակներուն միջեւ օձերու վախէն. չկրցանք ստուգել պատմութենէն՝ թէ ինչո՞ւ այսպիսի քաղաք մը, հրաշալի եւ մեծ պալատներով, այսպէս անբնակ եւ դատարկ դարձած է:

«Քաղաքին պարիսպները վարէն վեր կ'երկարին եւ կը բարձրանան մինչեւ բերդը, որ սրածայր լերան գագաթին վրայ՝ ընդարձակ տարածութիւն մը կը բռնէ: Սաստիկ զառիթափ ըլլալով այս լեռը, վարի քաղաքէն մինչեւ բերդը, ոլորապտոյտ կը բարձրանայ լերան կարծրակուռ քարին մէջ փորուած սանդուխ մը. այս քարին տեսակը մզի կը կոչեն: Գագաթի տափարակին վրայ կը տեսնուին տուններու փլատակներ. բայց տակաւին կանգուն կը մնայ մատուռ մը, ամբողջովին քարաչէն եւ գմբէթաւոր, չորս սիւններու վրայ հաստատուած. դուրսէն գմբէթին շուրջը հայերէն գիրերով քանդակուած են Ռուբինեան թագաւորներէն ոմանց անունները՝ երկաթազիր: Բերդին արեւելեան ստորոտէն կ'անցնի ձիհուն գետը: Անարզարայի մօտերը կան բազմաթիւ ճախճախուտներ, լի շամբերով, որոնց մէջ կ'ապրին բազմաթիւ վարազներ»⁹:

Էփրիկեան ալ հետեւեալը կը գրէ Անարզարայի մասին. «Ի բնէ երեք կողմերէն անմատչելի է, իսկ չորրորդ կողմը՝ որ 700 ոտնաչափ բարձրութիւն ունի, ապառաժուտ է եւ դժուար ելանելի. կրկին բարձր պարսպօք ամրափակուած է եւ Կիլիկիոյ ուրիշ շատ բերդերէն աւելի կանգուն եւ անկործան մնացած է տակաւին հանդերձ իւր բարձր աշտարակներով: Արեւմտեան կողմի աշտարակներն որք շինուած են կիսաբոլոր, ուռուցիկ տաշուած քարերով, ըստ Լանկլուայի՝ արդիւնք են բիւզանդական ճարտարապետութեան. արեւելեան կողմը հայկական շէնք է: Բերդիս չորս դռներէն արեւմտեանը կը նմանի հոյակապ յաղթական մեծ կամարի մը, ասոր դիմաց կանգնած կայ բուն յաղթական կամար մը: Առաջին պարսպին մէջ կը գտնուի վերոյիշեալ Ա. Թորոսէն շինուած Գէորգ եւ Թէոդորոս զօրավարաց եկեղեցին, որ դեռ մեծ մասամբ կանգուն է...: Պարիսպի արեւելեան ծայրը՝ քարաժայռը ճեղքուած է արուեստով զօրաւոր բաղկին Մեծին Լեւոնի (1188ին), եւ դիմացը շինուած է Միջնաբերդը կամ Կլայն, ուր միայն հնարաւոր էր անցնիլ

9. Ինձիճեւն 4. Դ., Աշխարհագրութիւն. Հայաստան, էջ 365-366:



Քաղաքի գուռը (Հելլենեմփեր):
La porte de la ville (Hellenkemper).



Ընդհանուր տեսարան (Փաօլոյ Գունեոյ):
Vue générale (Paolo Cuneo).

չարժական կամուրջով՝ որ այժմ չըլլալուն պատճառաւ՝ անմատչելի եւ անքըննելի մնացեր է ամրակուռ բերդը»¹⁰ :

Միեւնոյն տեղեկութիւնները կը գտնենք նաեւ Գուլամիրեանցի տեղագրութեան մէջ՝ որ կու տայ նաեւ չափազրական մանրամասն տուեալներ: Ահա իր նկարագրութիւնը. «որի [Անարղարայի] ամայի ու տխուր աւերակները այսօր բարձրանում են մի առանձնակ կրային քարածայրի ստորոտում, որ մօտ երկու վերստաչափ ձգուել է հիւսիսից հարաւ՝ 700-1000 ոտնաչափ բարձրութեամբ եւ տեղ տեղ շատ նեղ մինչեւ 7 սաժէն (1 սաժէն = 2,1336 մ. - Հ. Մ. Յ.) թանձրութիւն ունենալով: Քարածայրի երկճիւղ գազաթը կրում է իւր վրայ Կիլիկիոյ ամենամուր բերդերից մինը»¹¹: «Բերդը, որ ձեւուած է նոյն իսկ ժայռի անկանոն ձեւով, կրկնակի բարձր պարսպով... նրանք դեռ կանգուն են, մանաւանդ ներքին պարիսպը, արեւմուտքից արեւելք ձգուած՝ հնդանկիւնի կամ մահիկի ձեւով, 56 քառակուսի աշտարակներով՝ իրարից 16 սաժէն հեռու-հեռու կանգնած. աշտարակների իւրաքանչիւր կողմի լայնքը 5 սաժէնաչափ է»¹²:

Այս զանազան տեղեկութիւնները կ'ամփոփէ Հ. Պ. Պալիախչեան՝ Կիլիկեան Ճարտարապետութեան մասին իր յօդուածին մէջ. «Անարղարայի բերդը, որ բարձրանում էր քաղաքի գլխին 200 մետր բարձրութեամբ գառութափ լանջերով բլրի վրայ, տեղանքին համաձայն բաժնուում էր վերին ու ստորին մասերի, որոնք շրջափակուած էին երկչաք բարձր պարիսպներով: Ստորին մասը հնդանկիւնի էր եւ ունէր 56 քառակուսի աշտարակ: Աշտարակների լայնութիւնը 11,5 մետր էր, նրանց միջեւ ընկած տարածութիւնը՝ 34 մետր: Վերին մասի աշտարակները կիսակլոր էին: Արեւմտեան դարպասի առջեւ գտնուում էր մի յաղթակամար»¹³:

10. Բնաշխարհիկ Բառարան, Ա, էջ 165-166:


11. Մ. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՅ, Կիլիկիա, էջ 193-195:

12. Անդ, էջ 198:

13. Հ. Խ. ԽԱՎՓԱԽՉԵԱՆ, Կիլիկիայի հայկազմ ճարտարապետութիւնը, էջ 49: **TEXIER, Asie Mineure**, էջ 581, նոյն չափերը կու տայ՝ իր 10 եւ 35 մեզր: Իսկ յաղթակամարի մասին կը գրէ. «c'est un arc de triomphe à trois portes dont la façade a 22m64 de large, mais dont l'épaisseur n'est que de 5m58, la grande arcade a 3m75 de large, les arcades latérales ont 3m50. Une galerie transversale règne dans l'épaisseur de l'édifice, sa largeur est de 2m10. Les massifs entre les portes sont décorés de colonnes accouplées en granit et d'ordre corinthien portées sur un soubassement qui règne tout autour de l'édifice. L'entablement est composé d'une frise ornée de rinceaux de feuillage et d'une corniche avec des modillons. Tout l'entablement se profile autour du grand arc et forme l'archivolte; cet exemple est unique dans les monuments antiques. Au-dessus de l'ordre règne un massif de maçonnerie qui composait l'attaque, mais dont la décoration a disparu. Le style de cette architecture est du second siècle de notre ère, aucune inscription ne fait connaître le nome du fondateur. Deux murs en retour, ornés de pilastres corinthiens cannelés, forment devant la porte un large parvis, qui donnait un caractère grandiose à cette entrée monumentale de la ville» (էջ 582):



Միջնաքերդի հարավային կողմը (ՄՀՄՈՎԿ):
Côté méridional de la citadelle (CEDCAM).



Միջնաքերդի արևմտեան պատը (ՄՀՄՈՎԿ):
Le mur occidental de la citadelle (CEDCAM).

Անարզարայ այսօր չի պարզեր միեւնոյն տեսքը՝ ինչպէս զայն կը նկարագրեն՝ 1806ին Ինճիճեան եւ անցեալ դարու միւս ուղեգիրները. աշխարհակալներու արշաւանքներ եւ մանաւանդ յաճախակի երկրաշարժներ՝ այն քիչն ալ որ հինէն մնացեր էր՝ քարուքանդ ըրած են եւ այսօր հազիւ քանի մը կամարներ եւ պարիսպներէն մասեր կանգուն կը մնան: Տընօէլ ատլասը հետեւեալ տեղեկութիւնները կու տայ Անարզարայի ներկայ վիճակին եւ դիրքին մասին. « Non fouillé, mais seulement exploré en 1949-51, par l'archéologue anglais, M. Gough. Il comprend deux villes, la Ville Basse (la plus importante et la plus facile à visiter) et la Ville Haute (ascension difficile et peu conseillée, car les rares vestiges sont d'intérêt limité). L'accès à cette acropole se fait par un escalier taillé dans le roc que l'on prend derrière le théâtre »¹⁴:

ՊԱՏՄԱԿԱՆ

Անարզարա պատմականօրէն կարեւորութիւն կը ստանայ հռոմէական աշխարհակալութեան շրջանին. հոն կը նստէր հռոմէացի դատաւորը, եւ անոր հրամանով էր որ, քրիստոնեաներու դէմ հալածանքներու շրջանին, հոն նահատակուեցան Տարագոսեան վկաները, ինչպէս կ'երգէ նաեւ հին տաղերգուն.

«Նախ ի Տարսոն չարչարեալք,
Եւ ի Մամուեստիա տանջեալք,
ՅԱնարզարայ կատարեալք,
Ըստ հասակաց երից ընտրեալք»¹⁵:

Անարզարայի դժբախտ ճակատագիր մը վերապահուած էր՝ պատմութեան ընթացքին: Չանազան անգամներ սաստիկ երկրաշարժներու կեդրոն կը դառնայ եւ քարուքանդ կ'ըլլայ: Առաջինը տեղի կ'ունենայ Ա. դարուն վեր-

14. Turquie, Guide - Atlas DENOEL, p. 501, ուր ներկայացուած է նաեւ քաղաքին համարու մէկ պատմականը հետեւեալ տողերով. « Fondée au Ier siècle av. J. C., florissante à l'époque romaine, annexée à l'empire sous Claude, pillée par les Sassanides, rebâtie par les Byzantins qui la rebaptisèrent Justinopolis. puis Justinianopolis, Anazarbus devint au VIII^e siècle une ville arabe sous le nom d'Aïn Zarba. Reconquise par Nicéphore Phocas (964), elle fut, avec Sis, une des premières places fortes de Cilicie enlevée aux Byzantins par le prince arménien Thoros Ier de la maison Roubénienne (1100-1129) et une des dernières forteresses arméniennes à résister aux Mamelouks (1375). Elle joua à l'époque un rôle commercial important ».

Անգլիացի հետազոտող Կաֆ իր պեղումներուն եւ հետախուզումներուն արդիւնքները հրատարակած է 1952ին Anatolian Studies պարբերաթերթին մէջ՝ GOUGH, Anazarbus: Ընդարձակօրէն կը խօսի Անարզարայի մասին նաեւ HELLENKEMPER, Burgen, էջ 191-201:


15. Սիսուան, էջ 237:



Անարզաբա, ներքին տեսք (Ֆրանսոյ Մարրա):
Anarzaba: vue intérieure
(Franco Marra).



Նախաբերդի աշտարակատունը (Հելլենկեմպեր):
Château d'avant: l'intérieur de l'enclos
de la tour (Hellenkemper).



Թորոսի մատուռը (ՄՀՄՈՎԿ):
La chapelle de Thoros (CEDCAM).

Ջերը. կը վերաշինուի Ներուաս կայսրէն: Երկրորդ անգամ կը կործանի Յուստինոս Ա. կայսեր ժամանակ, 525ին, որ զայն նորոգելով կը կոչէ Յուստինուպոլիս¹⁶: Երրորդ զօրաւոր երկրաշարժ մը տեղի կ'ունենայ Յուստինիանոսի օրով, որ քաղաքը վերաշինելով՝ կը կոչէ Յուստինիանուպոլիս¹⁷:

Գ. դարուն սկիզբը Անարզաբայ կը կոչուի մայրաքաղաք (μητροπολις). Իսկ Թէոդոս Փոքրի ժամանակ, 444ին, երբ Կիլիկիա երկուքի կը բաժնուի, Անարզաբայ կ'ըլլայ «գլուխ քաղաքաց Բ. Կիլիկիոյ»¹⁸: Նոյնը կը հաստատէ Սորենացիի աշխարհագրութեան հեղինակը՝ որ կը գրէ. «Ա. եւ Բ. Կիլիկեայք են... որոց մայրաքաղաքք են Տարսոն, եւ Անարզաբա, ընդ որովք աշխարհք բազումք եւ բերդք»¹⁹: Աւելի ուշ Լամբրոնացին ալ կը գրէր. «Անարզաբա եւ Սիս, եւ որ ընդ նոքօք աշխարհք», մասնանշելով թէ ան երկար դարեր բարգաւաճ եւ մեծ քաղաք մըն էր²⁰: Որքան բնութիւնը զայն կը տապալէր, այնքան մարդկային ճարտարութիւնը զայն կը նորոգէր եւ կը վերականգնէր, եւ այս էր պատճառը՝ որով ստէպ կողոպուտի եւ յափշտակութեան թիրախ կը դառնար: Ամէն քաղաքներէ աւելի Անարզաբա Արաբներէն եւ Հռոմէացիներէն դրաւուած եւ կողոպտուած է, ինչպէս կը պատմէ Մ. Ուռհայեցի: Արաբ պատմիչներու համաձայն՝ առաջին անգամ զայն դրաւեց Հարուն-էլ-Ռաշիտ Ը. դարու վերջերը, եւ Պարսկաստանէն ու Հնդկաստանէն բնակիչներ բերելով հոն զետեղեց: Անոր յաջորդեց Միւթասսէմ ամիրապետը՝ Թ. դարու առաջին կէսին: Ասկէ վերջ կրկին դրաւեց Անարզաբան Միւթէվաքըիլ ամիրան 860ին, որուն ձեռքէն առաւ Վասիլ Ա. կայսրը 880ին, անկից հալածելով Արդլա զօրավարը եւ քանդելով ասոր ամրութիւնները:


Ժ. դարու կէսին Եգիպտոսի ամիրաները կը տիրեն այս շրջաններուն, որոնցմէ դարձեալ ետ կ'առնեն Արաբները, եւ ասոնցմէ ալ՝ Նիկեիոս կայսրը 962ին, ինչպէս կը գրէ Մ. Ուռհայեցի. «Մեծաւ յաղթութեամբ առնու... դակնաւորն զԱնուարգա. եւ ահագին սաստիկ կոտորած էած ի վերայ ագգին Տաճկաց մինչեւ ի դուռն Անտիոքայ քաղաքին»²¹:

Չմշկիկ եւ Վասիլ Բ. կայսրերը, իրենց դէպի Արեւելք կատարած արշաւանքին, կը գրաւեն նաեւ Անարզաբան, սակայն Թէոդորա կայսրուհիին օրով (1054-1058)՝ Արաբները մեծ ուժերով կը յարձակին Անարզաբայի վրայ

16. CEDRENUS, t. I, pp. 639 s. Հմմտ. LANGLOIS, անդ, էջ 435:
17. PROCOPIUS, *Historia Arcana*, 18, p. 111. Հմմտ. LANGLOIS, անդ. Սիսուան, էջ 237.
18. Անդ, էջ 238. «Καὶ Κιλικίαν δευτέραν ἀπομερίσας ἀπὸ τῆς πρώτης ἐποίησεν ἐπαρχίαν, δοὺς δικαίον μητροπόλει καὶ ἀρχοντα Ἀναζάρβω τῇ πόλει» (եւ երկրորդ Կիլիկիան բաժնելով առաջինէն՝ զայն բաւառ ըրաւ. Անարզաբա քաղաքն ալ մայրաքաղաքի իրաւունքով եւ կուսակալով օժտեց) (IOANNIS MALALAE, *Chronographia*, l. XIV, p. 365).
19. ԽՈՐԵՆԱՅԻ, Աշխարհացոյց, էջ 24: Միջայէլ Գլիւկաս՝ ԺԲ. դարու յոյն պատմագիրն ալ կը հաստատէ թէ Անարզաբա, Ատանայի, Մամիստարայի, Տարսոնի հետ եւլն.՝ Կիլիկիոյ ամէնէն մեծ եւ նշանաւոր քերդաքաղաքներէն էր (MICHAEL GLYCAS, IV, էջ 570).
20. Տե՛ս Սիսուան, էջ 238:
21. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Ա, Գ, էջ 6:



Թորոսի մատուռը (ՄՀՄՈՎԿ):
La chapelle de Thoros (CEDCAM).



Թորոսի արձանագրութիւնը մատրան արեւելեան պատին վրայ (ՄՀՄՈՎԿ):
L'inscription de Thoros sur le mur oriental de la chapelle (CEDCAM).

եւ կը գրաւեն: Սակայն Յոյները կը յաջողին զայն ետ առնել ու պահել մինչեւ ԺԱ. դարու վերջը: Անարզարայէն կ'անցնին առաջին Պաշակիրները իրենց ճամբուն վրայ դէպի Անտիոք²²:

ԺԲ. դարու սկիզբները՝ Յոյներու ձեռքէն Անարզարան կ'անցնի Ռուբինեաններուն: Թորոս Ա.՝ Գազիկ Թազաւորին վրէժը լուծելով, Անարզարան կ'առնէ Յոյներէն: Կը շինէ տաճար մը «Զօրավարաց» անունով. «Բերեալ ընդ ինքեան զպատկեր Տիրամօրն՝ եղ ի դղեակն Անարզարայ, զոր իւր առեալ էր ի Յունաց. յորում եւ շինեաց զհռչակաւոր տաճար, եւ եղ անդ զպատկերն...»: Թորոս Ա. Անարզարայի մէջ կը շինէ նաեւ ուրիշ ապարանքներ եւ կը զօրացնէ անոր դղեակը կրկին պարիսպներով. կը շինէ նաեւ «բարենց ճամբուն վրայ դէպի Անտիոք»²³:

Նոյնը կը պատմէ նաեւ Վահրամ՝ իր վիպասանութեան մէջ չափածոյ տողերով, տալով Թորոսի շինած եկեղեցիին անունն ալ:

«ԶԱնարզարա՝ յինքն գրաւեալ
Յորում զտաճարն մեծ շինեալ.
Զօրավարացն անուամբ պատուեալ,
Անդ զպատկեր Կուսին եղեալ,
Որպէս յարձանսն՝ էր փորագրեալ»²⁴:

Այս եկեղեցիին քիւերուն տակ, պատին ամբողջ երկարութեամբ՝ Թորոս քանդակած էր մեծ արձանագրութիւն մը. մեղք որ մեծ մասով խանգարուած է եւ հազիւ կը կարդացուին հետեւեալ տողերը.

Ի ԿԱՄՍ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՍ ԹԷՈՒԹՈՍ... ՍԵԲԱՏՈՍ ՈՐԴԻ ԿՈՍՏ... ՈՐԴԻՈՅ ՌՈՒԲԵՆԻ ՇԻՆԵՑԻ ՁԵԿԵՂԵՑԻՍ...

Իսկ եկեղեցիին արեւելեան կողմը, թերեւս առաջին արձանագրութեան կցուած էին՝ վասն բառով՝ հետեւեալ տողերը.

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՈՅ ԻՄՈՅ ԵՒ ՅԻՇԱՏԱԿ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ ԵՒ Ի ԿԵՆ- (ԴԱ)ՆՈՒԹԻԻՆ... (ԲԱՐԵ)ՈՒՍՈՒԹԵԱՄԲ...

Հիւսիսային պատին վրայ գրուածը բոլորովին խանգարուած է, իսկ արեւմտեան կողմին վրայ՝ կը կարդացուի հետեւեալը.

ՅԻՇԵՍՁԻՔ ՁԹԷՈՂՈՍ, ՈՐԴԻ ԻՄ ՁԿՈՍՏԱՆԴԻՆ Ի ՍՈՒՐԲ ՅԱՐԺԱՆԱ- ԻՈՐ ՅԱՂԱԻԹՍ ՁԵՐ Ի ՔՍ ՅՍ Ի ՏԷՐ ՄԵՐ. Ի ԹՎԻՆ...

22. Անդ, Բ, ճծա, էջ 312:


23. Հայագատում, ՄՀԱ, էջ 344: Թորոսի շինած այս եկեղեցիին ճարտարապետական մանրամասն նկարագրութիւնը տուած է, 1906ին, կին հնախոյզ Geltrude Lowthian Bell, որ զայն տեսած է «զրեթէ կատարեալ» մնացած վիճակի մէջ (BELL, Notes, I, էջ 24-29): Հեղինակը կը համարի թէ նախապէս գոյութիւն ունեցած ըլլար հոն յունական եկեղեցի մը, որուն մնացորդները կը նշմարէ հիւսիսի աւերած կոնքին վրայ. մինչ ներկայ տաճարը իր ամբողջութեան մէջ իբր հայկական շինութիւն կը նկատէ (տես նաեւ անդ, էջ 15-24, Անարզարայի ուրիշ երկու յունական եկեղեցիներու աւերակներուն նկարագրութիւնը):

24. ՎԱՀՐԱՄ ՐԱՐՈՒՆԻ, էջ 195: Հմմտ. Սիսուանէր էջ 238:



Մատրամ մուտքը դուրսէն դիտուած (Ֆ. Մարրա):
 Vue extérieure de l'entrée de la chapelle (F. Marra).

Այսօրուան կիսաքանդ եւ անմատչելի դղեակը՝ Մեծին Լեւոնի շինածն է, որուն բերդին արեւմտեան ծայրը քարածայրին վրայ, մեծ արուեստով ճեղքուած, եւ անոր կատարին վրայ շինուած է դղեակը իր գահակալութեան առաջին տարիներուն, 1187ին: Մուտքի դրան վրայ անեղծանելի մնացեր է, բախտով, գեղեցիկ արձանագրութիւն մը, որ ցոյց կու տայ դղեակին դիրքը եւ շինողին հանճարը եւ քաջութիւնը. Կիլիկիոյ ամէնէն սքանչելի արձանագրութիւնն է որ մեզի հասած է:



Մատրամ արսիդը (Ֆ. Մարրա):
 L'abside de la chapelle (F. Marra).

ՅԱՄԻ ՈՂՁԵՐՈՐԴԻ ԹՎԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ ԽԱՒԱՐԵՑԱԻ ԱՐԵԳԱԿՆ ՄԻՆՉԵՒ ԱՍՏԵՂՔ ԵՐԵՒԵՑԱՆ ԵՒ ԷԱՌ ԹՈՒՐՔՆ ԶՍՈՒՐԲ ՔԱՂԱՔՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ. ՅԱՅՆՄ ԱՄԻ ՄԵՌԱԻ ՌՈՒԲԷՆ ՍՏԵՓԱՆԷՒ ՈՐԴԻՆ ԵՒ ՆՍՍԱԻ ՅԱԹՈՌ ՆՈՐԻՆ ԲԱՐԵՊԱՇՏՆ ԼԵՒՈՆ, ՈՒՆԵԼՈՎ ԶԿԻՒԿԻԱ ՏՈՐՈՍ ԼԵՐԱՄԲ ԵՒ ՍԵԱԻ ԼԵՐԱՄԲ ԾՈՎԵԶԵՐԲՆ ՄԻՆՉԵՒ ՅԱՍԱԼԻԱ. ԵՒ ՅԵՐԿՐՈՐԴ ԱՄԻ ՏԷՐՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՅ ՍԿՍԱԻ ՇԻՆԵԼ ԶԿԼԱՅՍ ՈՐ Է ՄԱՅՐ ՔԱՂԱՔԱՅՆ ԱՆԱԻԱՐՁԱ. ՃԵՂՔԵԱՑ ԽՍՏԱԳՈՅՆՍ ԵՐԿԱԹԵԱԻՔ ԶՊԱՌԱՋՍ ԵՒ ՀԱՍՍԱՀԻՄՆ ՄԵԾԱՄԵԾ ՎԻՄԱԻՔ ԿԱՆԳՆԵԱՑ ԶՊԱՐԻՍՊՍ ԵՒ ՀԱՍՍԱՏԵԱՑ ՏԱՐԲ ԵՐԿԱԹՈՎ ԵՒ ԿԱՊԱՐԱԻ. ԵՒ Ի ՄԻ ԱՄԻ ԿԱՍԱՐԵՑԱԻ²⁵:

Այս դղեակին շինութիւնը կանխող 80 տարիներու ընթացքին, Թորոս Ա.էն, մինչեւ Լեւոն Ա., Անարզարայի գլուխէն շատ անցքեր անցեր էին:

1107ին Պարսիկները 12.000 բանակով մը կու գան Անարզարայի վրայ, եւ արիւնալի կռիւէ մը ետք՝ զայն կը գրաւեն, կը քանդեն եւ կ'երթան դէպի Մարաշ՝ Գող Վասիլի վրայ. ասիկա անոնց դէմ ելլելով՝ կը կոտորէ զանոնք եւ Անարզարայի շրջանէն կապտուած աւարներն ալ ետ առնելով՝ կը քշէ իր սահմաններէն հեռու²⁶: Այս դէպքերէն վերջ Թորոս Ա. իշխան տասներկու տարի խաղաղ կ'ապրի եւ մեծ համբաւ կը շահի. այդ օրերուն Կիլիկիա

25. Այս եւ վերի արձանագրութիւնները տե՛ս Սիռուան, էջ 239:
 26. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 128-129:

կու գայ եւ փրեն կ'ապաւինի, 1117ին, Պիր քաղաքի տէր՝ Հայազգի Ապլղարիպ իշխանը, Վատակ Պահլաւունի որդին, նեղուած՝ փրանկ իշխաններէն²⁷ :

Թորոս Ա. իշխանին կը յաջորդէ իր եղբայրը Լեւոն, որուն օրով Ալէքս Պորփիւռոսէն կայսրը, դրդուած՝ յոյն իշխաններէն, անձամբ Կիլիկիա կու գայ՝ մեծ բանակի մը գլուխը անցած : 1137ին կը պաշարէ Անարզարան. քաղաքին բնակիչները, Լեւոն իշխանի առաջնորդութեամբ, արիարար կը պաշտպանեն պարիսպները եւ Յոյները չեն յաջողիր գրաւել : Այն ատեն Հեռուէն կը պաշարեն քաղաքը, որ 37 օր կը դիմանայ. բայց, վերահաս սովին վրայ, կը ստիպուին անձնատուր ըլլալ : Կայսրը յաղթական կը մտնէ Անարզարա, կողոպուտի կը մատնէ զայն եւ դերի բռնելով Լեւոն իշխանը, իր երկու որդիներով՝ շղթայակապ Պոլիս կը ղրկէ :

Լեւոն եւ Ռուբէն կը վախճանին Պոլսոյ բանտերուն մէջ, իսկ Թորոս Բ. յարմար առիթով մը կը փախչի եւ կու գայ Կիլիկիա. հոն ժամանակ մը անձանօթ ապրելէ ետք՝ ինքզինքը կը յայտնէ Հայ իշխաններուն եւ անոնց հետ միացած՝ կը յարձակի Անարզարայի վրայ եւ կը գրաւէ. կ'ամրացնէ եւ զայն իր իշխանութեան կեդրոնը կ'ընէ :

Անարզարա՝ Լեւոն Մեծի օրով (1187-1219) բոլորովին կերպարանափոխ կ'ըլլայ. կը շինուին բազմաթիւ շէնքեր եւ ապարանքներ : Քաղաքին մօտիկ քարաբլուրին վրայ Լեւոն կը շինէ, մեծ դժուարութեամբ, Անարզարայի դըղեակը, ինչպէս տեսանք : Քաղաքը կը շրջապատէ կրկնակ հաստ պարիսպներով, եւ զայն կը միացնէ դղեակին : Լեւոն հոն կը պահէր պահակազունդ մը, եւ երբ երկրին վտանգ մը սպառնար կամ թշնամիի ներխուժում մը, պահակները բերդին կատարէն բոցերով նշան կու տային հեռուոր բերդերու :

Այնքան գեղեցիկ կ'ըլլայ Անարզարա՝ որ Լեւոն Մեծն անոր կլային պատկերը իր զինանշանը կ'ընէ. Վիլլեպրանտ, որ այս ժամանակները հիւր կ'ըլլայ Լեւոնի, զմայլանքով կը նկարագրէ զայն Նաւարա = Navarsa կոչելով. «Եկանք Նաւարա, որ սքանչելի բերդ մըն է՝ բարձր լեռան մը կատարին, զոր բնութիւնը կարծես պատրաստած ըլլայ Տէր Թագաւորի վայելումին համար՝ սարահարթի մը մէջտեղը : Թագաւորին զինանշանն ալ այս բերդը կը ներկայացնէ : Լեռան ստորոտը քաղաք մը կը գտնուի, որ ունեցած է շատ բարգաւաճ անցեալ մը, ինչպէս կը վկայէ այսօր հոյակապ ջրտարը՝ որ բարձր սիւներու վրայէն երկու մղոն երկարութեամբ մինչեւ քաղաքը կը հասնի»²⁸ :

27. Հմմտ. ԱՅԳ, էջ 145 : Սիսուամ, էջ 50, 240 : ԱՃԱՌԵԱՆ, ԱՅՏՈՒՆԵՐԻ ԲՈՒՅՈՒՄԸ, Ե, էջ 50 :

28. « Venimus Navarsam, quod est Castrum optimum in alto monte situm, quod natura in media planicie illius terrae ad totum commodum Domini Regis ordinavit, a quo Rex ipse signum suum Navarsa solet proclamare. In pede huius montis sita fuit quaedam civitas, cujus auctoritatem magnam fuisse, quidam mirabilis acqueductus, illuc super altas columnas ad spatium duorum milliarum productus hodie contestatur » (WILLEBRANDI ab OLDENBURG Itine-

Երբ Լեւոն Ա. իր մայրաքաղաքը կ'ընէ Սիսը, որքան որ Անարզարա իր կարեւորութիւնը մասամբ կը կորսնցնէ, սակայն բոլորովին չի լքուիր. դարերով իբր ապաստանարան կը ծառայէ բազմահազար ժողովուրդներու՝ պատերազմներու ընթացքին²⁹ :

1279ին, սակայն, Եգիպտոսի Պիզար զօրավարը կու գայ եւ զայն կը պաշարէ. բայց չկարենալով գրաւել՝ կը հեռանայ յետ կողոպտելու եւ քանդելու շրջակայ գիւղերը³⁰ : 1307ին Անարզարայի մէջ կ'ամրանայ մոնղոլ Փիլարդուն զօրավարը, որ հոն նենգութեամբ կը սպաննէ Լեւոն Գ.ը, Հեթում Թագաւորահայրը եւ քառասուն սկանաւոր իշխաններ, որոնց միջեւ՝ Օշին սպարապետը : Սակայն կը պարտուի իր կարգին Թագաւորի հօրեղբայր Օշինէն, որ զինք Կիլիկիայէն դուրս կը քշէ³¹ :

Կիլիկիոյ Թագաւորութեան վերջանալուն, Սելճուք Թուրքերը կը գրաւեն Անարզարան եւ մեծ մասով կը քանդեն անոր զինուորական պաշտպանութիւններն ու պարիսպները. ասոր վրայ բնակիչները վախցած՝ կամաց կամաց կը լքեն քաղաքը եւ կ'երթան աւելի ապահով վայրեր : Անարզարա հետզհետէ կը լքուի, կ'ամայանայ եւ իր դժբախտ ճակատագրին կը թողուի : Այսօր անոր փառաւոր անցեալէն հազիւ քանի մը պարիսպներու խեղճներ տակաւին ոտքի վրայ են, իբր վկաներ՝ Կիլիկիոյ Թագաւորութեան փառաւոր անցեալին :

rarium, p. 15). Անարզարա ունէր երկու մեծ ջրտարներ, որոնցմէ մէկը Արեւելքէն կու գար՝ 12 քիլոմէր երկարութեամբ, իսկ միւրը՝ հիւսիսի լեռներէն, եւ ունէր 20 քիլոմէր երկարութիւն մը. շինուած էին կայսերական շրջանին : Հաւանական է որ շինող կայսրերը անոնց վրայ քանդակած ըլլային նաեւ արձանագրութիւններ, որոնցմէ որեւէ հետք չ էմնացած [Հմմտ. Ch. TEXIER, De Sis à Trébizonde, «Nouvelle Revue française», t. V, p. 104, մէջբերուած՝ LANGLOIS-է, Voyage en Cilicie, p. 437. TEXIER, Asie Mineure գործին մէջ 30 թւմ. կը նշանակէ երկրորդ ջրտարին երկարութիւնը, իսկ առաջինին համար կ'ըսէ թէ կ'երկարէր մինչեւ Սիսի ճամբուն կէսը (էջ 582) : Տե՛ս նաեւ՝ Turquie, Guide-Atlas DENOEL, էջ 501, Անարզարայի յատակագիծը] :

29. Վիլլեպրանտ զայն կը նկարագրէ իբրեւ մասամբ ամայացած արդէն թ՛ք. դարու սկիզբը. Հմմտ. յիշ. գրծ., անդ :

30. Սիսուամ, էջ 241 :

31. Հմմտ. ՁՁ, Պատմ. Գ, էջ 766-767 : Օշին սպարապետի մասին՝ տես RUDT-COLLEMBERG, էջ 66, Հմ. 120 : Լեւոն Գ.ի հօրեղբայր-Օշինի մասին տես՝ անդ, էջ 72, Հմ. 160 :

ԼԵՒՈՆԻ ԲԵՐԴ

Լեւոնի անունով Կիլիկիոյ մէջ, երկու բերդեր կը յիշուին Լեւոնի բերդ եւ Լեւոնկլայ: Ալիշան, երբ իր «Սիսուան»ը կը հրատարակէր, կը խորհէր թէ անոնք նոյն բերդերն ըլլային, երկու տարբեր անուններով յիշուած. սակայն, գործին վերջաւորութեան, յաւելուածին մէջ, իր կարծիքը կը ճշտէ ըսելով. «Երկրայէի ընդ նոյն կամ որիչն լինել ի Լեւոնկլայէ. արդ համարիմ զսա (Լեւոնի բերդ) որիչ, եւ մերձ ի Սիս (ընդդէմը մեզմէ - Հ. Մ. Յ.), շինեալ ի Մեծէն Լեւոնէ, ըստ վկայութեան ժամանակագրին թէ «չինեաց բազում բերդս եւ դղեակս, որոց մին էր, որ ըստ անուան իւրոյ կոչի Լեւոնբերդ, զոր այժմ այլազգիք Լմբերք կոչեն, որ շէն՝ այլ ամայի մնացեալ (է). եւ եկեղեցի Ս. Վասիլի անուամբն, որ նա եւս աւերակ է»: Աւանդէ նոյն ժամանակագիր՝ զի ի կէս ԺԶ դարու, գէթ ըստ մասին շէն էր տեղին եւ ամարանոց Մայսեց տոհմի Սսեցւոյ, յորմէ էր թորոս Ա. Կաթողիկոս, այն՝ որ արհամարհութիւն կրեալ, առանձնացաւ ի բերդն յայն, «եւ կեցաւ անդ եւ մեռաւ, եւ թաղեցաւ անդ ի Ս. Յովհաննէսայ դուրսն, ի հարաւային որմին տակն. եւ ի ՌԲ (1553) թուին որ նորոզեցին զԼեւոնբերդին զեկեղեցին, նա զգերեզմանն ի ներս առին»¹:

Մեր պատմիչները կ'աւանդեն թէ Լեւոն Ա. շատ բերդեր շինած է. հաւանաբար ասոնցմէ մէկն էր նաեւ Լեւոնի բերդը, որու մասին շատ ծանօթութիւն չունինք:

1407ին գրուած յիշատակարանի մը մէջ կը կարդանք թէ Շահսուար «էառ զՎահկայն: ... զԱտանա եւ զՏարսոն եւ զԾովահայեաց քաղաքն Յայաս. էառ նա եւ զԱնարզարա, զԿովառա եւ զամենայն դաշտսն. էառ եւ զՊաղրասու բերդն... եւ զԼեւոն բերդն եւ զԿոպիտառա, եւ յետոյ զԲարձրաբերդ, եւ տիրեաց ամենայն լեռնակողմանցն»²:

Այս յիշատակագրէն կ'երեւի որ Լեւոնի բերդը կը գտնուէր Բարձրաբերդի շրջանին մէջ, դէպի Սիս, Ատանայի հիւսիսակողմը բարձրացող լեռներուն վրայ, թէեւ որոշապէս դժուար է ճշտել՝ թէ ո՛ւր եւ ի՛նչ դիրքի վրայ էր:

1. Սիսուան, էջ 534:

2. Հայապատում, 62, էջ 380:

ԿԱՊԱՆ ԲԵՐԴ*

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Հայկական Կիլիկիոյ հիւսիս-արեւելեան սահմաններուն կից կը գտնուէր Կապան գաւառը, որ կ'ընդգրկէր Ջահան կամ Ծիհուն գետի (հիներու՝ Պիւնամիսը, ներկայիս՝ Ceyhan) հիւսիսային լեռնահովիտները, որոնց մէջէն կ'անցնի Ջահանի գլխաւոր օժանդակներէն Կէօքսուը (Կոկիսոնի գետակ - հմմտ. Սիսուան, էջ 12)՝ Մարաշի եւ Ալպիստանի (էլպիսթան) գաւառներուն արեւմտակողմը: Ջայն հիւսիսէն շրջապատող գլխաւոր լեռներն են՝ Պերիզ կամ Պրիտ (Beyrut Dağ) եւ աւելի վեր՝ Պինպոզա (Binboğa) լեռները¹: Կապանի սահմաններուն մէջ էր երբեմնի հռչակաւոր Արեգնի վանքը՝ որ գաւառին եպիսկոպոսական աթոռանիստն էր²:

«Այս հողամասը, կը գրէ Տոքթ. Յ. Տէր Ղազարեան, արեւելքէն ու հարաւէն շրջապատուած է Ջահան գետով, որ խորախորհուրդ ձորերու մէջէն թաւալելով կ'երկարի մինչեւ Անաւարդա: Իսկ հիւսիսէն Տաւրոսեան լեռներու ձիւնապատ գագաթները, անանցանելի կիրճերն ու հովիտները, ժայռուտ բլուրներն ու խիտ անտառները կազմած են ցանց մը, որ անթափանցելի հրմայթով մը պարզեւտրած են այս աննման լեռնային վայրը»³: Բնութեան այս եղական կերպաւորումին հետեւանքով մեր նախնիք՝ Կապանէն մինչեւ Քեսուն երկարող այս շրջանը կոչած են «Սեաւ եւ մթին լեռուն», որ հարուստ էր յատկապէս վանքերու եւ մենաստաններու բազմութեամբ⁴: Այս շրջաններուն մէջ իրարու կը հանդիպէին արեւմուտքէն երկարող Տաւրոսեան եւ հարաւէն բարձրացող Ամանոսեան լեռնաշղթաները:

* Սիւնեաց աշխարհին մէջ ալ կայ համանուն բերդ մը (Կապան, Ղափան - տես մեր Հայաստանի բերդերը, էջ 423-425): Հոն նշուած նախնական աղբիւրներուն վրայ աւելցնելու է հետեւեալները. ա) «Պատմութիւն աստուածընկալ Ս. Նշանին Ս. Աղբերկու», ՅՈՎՍԷՓ-ԵԱՆՑ, սիւն. 184, ուր կը յիշուի Գապիկ Գ.ի հայրը Ջուանշիր (Ջվանշէր) իբր տէր Կապանին (Տեղագրութեան ցանկին մէջ շփոթուած են երկու Կապանները, անդ, սիւն. 1085). բ) «Երկրագրութեան Աւետարանի», Երեւանի Ձեռ. թիւ 7450, ի թուին ԶՀԱ (1322). ԽԱ-ԶԻԿԵԱՆ, ԺԴ, էջ 176: Չիֆոթել այս Կապանը՝ Կոկիլակ Կապանի հետ:

1. Հմմտ. Սիսուան, էջ 179-180: ԱԲԵՂԵԱՆ, քարտէս:

2. Հմմտ. ՍՄԲԱՏ ՍՊԱՐ., էջ 208: Սիսուան, էջ 191. Հոս Ալիշան վարանոտ կ'արտայայտուի Արեգնի նոյնացումի մասին օսմանեան շրջանի Ալպաշ գիւղին հետ: Տես անդ, էջ 180, այս շրջաններուն գիւղերու ցանկը՝ այդ տարիներու բնակչութեան համեմատութիւններով:

3. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ, Կիլիկիա, էջ 34:

4. Տես՝ Հ. Տ. ԵԱՐՏԸՄԵԱՆ, Քեսունի Կարմիր վանքը, գլ. 2, «Սեաւ լեռուն»ը, էջ 12-24:

Կապանի աւանը, որ համանուն գաւառէն կ'առնէր իր անունը, եռանկիւն մը կը ձեւացնէր՝ հիւսիս-արեւելքէն Ձէյթունի (Zeytin, ներկայիս՝ Süleymanlı, նախնեաց Ուլմիին մօտերը) եւ արեւելքէն Բերդուսի (Bertis) հետ⁵ :

Codex Kultur-Atlas քարտէսին վրայ (Teil 8) նշանակուած կը տեսնենք երկու նմանանուն վայրեր. մին՝ բուն Կապանը՝ Geben, մեր հիներէն յաճախ յիշուած Փոնուսի (Փոնուզ, Փոնոս)՝ ինչպէս նաեւ Պնդուխ (Buduk) եւ Սիւնէ գիւղերուն հարաւ-արեւմուտքը: Իսկ միւսը Faziye (Keben)՝ յիշեալ գիւղերուն հիւսիս-արեւմուտքը, եւ Gebenի նկատմամբ հիւսիս-արեւելեան զիրքի վրայ: Երկու Կապաններուն միջանկեալ կ'անցնի Kösulu dere կամ Kursulu çay գետակը, որ դէպի հարաւ ընդլայնելով կ'առնէ Gökşun dere անունը եւ կը միանայ Ջահանի. Geben կը մնայ գետակին արեւմտեան ափին, իսկ Keben-Faziye՝ արեւելեան ափին:

Ալիշան, իր կարգին, կը զանազանէ երեք Կապաններ: Ահա՛ իր խօսքերը. «Ներկայիս երեք տեղեր կը ճանչցուին այս անունով. առաջին՝ մեծ Կապան, շուրջ 400 հայ տուններով եւ եկեղեցիով, Պնտուխ գիւղին արեւմտակողմը. երկրորդը՝ փոքր գիւղ մը, ուր կ'ըսուի թէ հայերու միայն 20 տուն կայ եւ մնացածը թուրքերու է. իսկ երրորդը՝ որ կը գտնուի ձորագլուխին եւ լեռան ստորոտը՝ հռչակաւոր Կապան բերդն է, արեւելքէն Փոնուսի՝ եւ արեւմուտքէն Աստուածաշէն լեռան միջեւ, Գըրֆկէօզ գիւղին մօտերը, ուր հայերու միայն 10 տուն կը հաշուուի»⁶ :

5. Ալիշան կը նոյնացնէ Ձէյթունը եւ Ուլմիին (Սիսուան, 180), մինչ Գուլամփրեանց վարանոտ է «թէ բուն իսկ Ձէյթունն է, թէ մերձակայ մի ուրիշ տեղի է վերաբերում» (Կիլիկիա, էջ 333). այլուր կը գրէ. «Ձէյթունի արեւմտեան կողմը, մի ձորակի միջավայրում է Ֆոնուզ կամ Ֆոնոս: Այս գիւղը մականուանում են իժուտ, զանազանելու համար հին Ֆոնուզ գիւղակից, որ գտնուում է հիւսիս-արեւմուտքում, Սէֆի Կէտիկ լեռան վրայ եւ որ համարուում է հին Ուլմի գիւղը» (ամդ, էջ 345): Գալուստեան կը գրէ այս մասին. «Անեցի առաջին դաղթականներուն վրայ աւելցած են նաեւ մաս մը Ուլմեցիներ, որոնց պատճառաւ Ձէյթունի Ուլմիա անունն ալ տալ սովորական եղած էր: Մինչդեռ Ուլմիա կը գտնուէր Ֆրնուզի կողմը, Ձէյթունէն 6 ժամ հեռու եւ կը կոչուէր Հին-գիւղ: Հոն մնացած էին միայն Այլղարիսեան բերդատէրները, որոնք յետոյ կոչուեցան Ալիպարեներ եւ դաղթեցին այժմու Թէլէմէլիք գիւղը» (Մարաշ, 93): Հին-գիւղը կը գտնուէր Փոնուզի արեւմտեան կողմը՝ անկէ շ. 15 վայրկեան հեռաւորութեան վրայ. մինչեւ եղեռնի օրերը հոն կը բնակէին 40-50 ֆոնուզցիներ (հմտա. ՊՏՂՈՒՆԻ, Ֆոնուզի գաւառաքարքառը, էջ 9):

Բերդուս կը գտնուէր՝ ներկայ Maksutlu (Mahsudlu)ի մօտիկը՝ Մարաշի հիւսիս-արեւմուտքին:

6. Սիսուան, էջ 192: Ալիշան երեք անգամ կը յիշատակէ Աստուածաշէն մեծ լեռը (էջ 180, 192, 194): Էջ 180ի մէջ՝ զայն կը գետեղէ Ձէյթունի արեւմտեան լեռներուն՝ Քօշ տաղի (Keşdağ), Գանսիլ տաղի, Գզըլ տաղի հարաւ-արեւմտակողմը եւ Կապանի հիւսիս-արեւմուտքը՝ բաւական հեռու: Էջ 194ի վրայ՝ խօսելով Կանչի բերդի մասին (= Çukurhisar, Կապանի հիւսիս-արեւելքը՝ Ձէյթունի գիծին վրայ - հմտա. Codex Kultur-Atlas, Teil 8. ԳԱԼՈՒՍՏԱՆ, քարտէս), կը գրէ. «Լեռուն բարձր, կարծեմ Աստուածաշէնն՝ ի Հս. Մ. անջրպետէ զսահմանս Կանչոյ ի Կոկիսոնէ. այլ ի հասարակի յանուն Կապանու կոչին լեռինը կողմանս, եւ առանձնակի՝ Չոխախ, Փիւրէն, Մէկ, եւ այլն»: Այս դիրքը կ'իւրացնէ նաեւ ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՅ, Կիլիկիա, էջ 347:

Նոյն շրջանին մէջ է՝ Կապանէն դէպի հիւսիս՝ Կատրանդի կամ Կայրանլը տաղ լեռը:



Անարզաբայի պարիսպներէն մասեր՝ ներսէն տեսնուած: Vue des murs intérieurs de la forteresse d'Anarzaba (CEDCAM).

Նոյն զանազանութիւնը կը կատարէ նաեւ Գալուստեան. «ԿԱՊԱՆ (Կէ-Պէն), Անտըրըն գաւառակի կեդրոնը, Զէյթունի արեւմտեան հարան է: Կապան ունի երկու գիւղ, մէկը բոլորովին հայ, իսկ միւսը թրքարնակ, այս վերջինը շինուած բերդին եւ հայ գիւղին ճիշդ մէջտեղը»⁷:

Այս զանազանութիւնները կը բացատրեն գուցէ Կապանի դիրքին նկատմամբ քարտէսներու միջեւ նշմարուող ինչ ինչ անհամաձայնութիւնները: Այսպէս Կապանը՝ Ֆոնուսի նկատմամբ դէպի հիւսիս-արեւմուտք ցոյց կու տան Արեւեանի եւ Carta del Levante քարտէսները: Ասիկա կը պատշաճի Faziyе-Kebenի դիրքին: Արիշան եւ Գալուստեան, թէեւ Կապանը կը նշեն Ֆոնուսի հարաւ-արեւմուտքին, բայց Պնդուխի եւ Սիսնէի նկատմամբ դէպի հիւսիս-արեւելք ցոյց կու տան, ինչ որ չի յարմարիր Codex Kultur-Atlasի եւ այլ ճշտագոյն քարտէսներու ցուցմունքներուն, ուր Ֆոնուսի հարաւ-արեւմուտքին տեսնուող Gebenը՝ հարաւ-արեւմուտքի վրայ է նաեւ Պնդուխի եւ Սիսնէի նկատմամբ: Ասիկա կը համապատասխանէ նաեւ՝ նոյնինքն Գալուստեանի նկարագրութեան՝ Կապան, Ֆոնուզ, Պունտուզ եւ Շիվիկլի գիւղերու դիրքերուն. կը գրէ արդարեւ. «Շիվիկլի.— Ֆոնուզի հարաւ-արեւմուտքը». իսկ քիչ մը վարը. «ՊՈՒՆՏՈՒԳ.— Կապանի եւ Շիվիկլիի ճիշտ մէջտեղը»⁸: Կը հետեւի, ուրեմն, թէ Կապան, որ Ֆոնուզի հարաւ-արեւմուտքն է, նոյն դիրքին վրայ պէտք է ըլլայ նաեւ Պունտուզի նկատմամբ:

Գալուստեան կ'ընձեռէ նաեւ ուրիշ կարեւոր մատնանշում մը պատմական Կապանի տեղւոյն նկատմամբ՝ երբ կը գրէ բերդի դիրքին մասին. «Կապան-բերդը» կը գտնուի գիւղէն մէկ ժամ հեռաւորութեամբ Կոկիսոնէն եկած ճամբուն Մէյրէմ Զիլ անուն անցքին առջեւ»⁹: Այս պարագան ալ կու դայ հաստատել թէ պատմական Կապանը պէտք է փնտռել Gebenի եւ ոչ թէ Kebenի կողմը, թէեւ մեծ չէ երկուքին հեռաւորութիւնը (չուրջ 17 քմ. օդի ճամբով): Արդարեւ, Gebenէն քիչ անդին, դէպի հարաւ-արեւելք, Kōrsulu dereի արեւելեան ափին նշանակուած կը տեսնենք Kultur-Atlasի վրայ Meryemçil բերդը:

Ինչպէս յիշեցինք արդէն¹⁰, Ջահանեան Կապանը՝ արեւելեան համապատասխանն էր Կուկլակ Կապանին՝ եւ կ'ընձեռէր գլխաւոր անցքը դէպի Ասորիք եւ Միջագետք, Կոկիսոնէն (Göksun) դէպի Մարաշ իջնող ճամբու մը միջոցով: Արիշան կ'ենթադրէ թէ գուցէ ուրիշ կածան մը եւս ըլլար, որ Կապանէն դէպի հարաւ-արեւմուտք շեղելով՝ Կոկիսոնը Անարզարայի կապէր¹¹:

Դժբախտաբար Կապան բերդի մասին կը պահսին նկարագրական գոհացուցիչ տեղեկութիւններ: Հետեւեալ տողերը կը գտնենք Տոքթ. Յ. Տէր Ղազարեանի տեղագրութեան մէջ. «Կապան բերդը, երկու լեռներու միջեւ դտնուած բարձր բլուրի մը վրայ շինուած, հսկայ քարերով եւ շուրջանակի

7. ԳԱՒՈՒՍՏԵԱՆ, Մարաշ, էջ 61:

8. Անդ, էջ 63:

9. Անդ, էջ 62:

10. Տե՛ս Կուկլակ Կապան, թ. 1:

11. Սիսուան, էջ 191:

պարիսպով: Բերդը կը հսկէ Կոկիսոնէն վար իջնող հոռմէական եւ բիւզանդական ճամբաներու անցքերուն: Կապան բերդի դիրքը շատ կարեւոր էր հիւսիսէն դալիք թշնամի բանակներուն դէպի Մարաշ կամ դէպի Սիս յառաջխաղացման արգելք ըլլալու համար»¹²:

Կապան բերդի մասին կը գրէ նաեւ Գալուստեան. «Կապանի բերդը երկու հսկայ լեռներու բարձրութեանց միջեւ դուրս ցցուած բլուրի մը վրայ կը բարձրանայ: Բերդին շատ մը մասերը դեռ կանգուն կը մնային մինչեւ վերջերս: «Կապան-բերդ»ը կը գտնուի գիւղէն մէկ ժամ հեռաւորութեամբ Կոկիսոնէն եկած ճամբուն Մէյրէմ Զիլ անուն անցքին առջեւ. հաւանաբար շինուած է հիւսիսէն եկող արշաւանքներու դէմ պաշտպանելու համար Կիլիկիան: Դաշտային Կիլիկիայէն սկսեալ՝ մինչեւ լեռնային Կիլիկիոյ այդ վերջին անցքը՝ շատ մը բերդերու բեկորներ կը մնան դեռ. ասոնց ամէնէն հիւսիսային լեռնանցքին պահպանն էր այս Կապան-բերդը»¹³: Բերդին ծովու մակերեսէն բարձրութիւնն է շուրջ 6.000 ոտք^{13ա}:

ՊԱՏՄԱԿԱՆ

Կապանի անցքին տիրացեր էին Ռուբինեանները իրենց իշխանութեան առաջին օրերուն՝ իբրեւ կարեւոր կէտ մը երկրին պաշտպանութեան համար. մեր պատմագիրները կը գրեն թէ Պարոն Լեւոն Ա. (Իշխանը) տէրն էր Կապանին եւ Վահկային: Երբ Լեւոն իշխան գերի տարուեցաւ Պոլիս 1138ին, կը գրէ Սմբատ Սպարապետ, «ի թուին ՇՁԷ (=1138) եկն Ահմէտ Մելեքն եւ էառ զԼեւոնի տեղիքն ի Հոռոմէն, զՎահկայն, զԿապանն եւ զայլսն»¹⁴:

Բայց Լեւոնի որդին Թորոս Բ., երբ գերութենէն Կիլիկիա վերադարձաւ, իր առաջին դործը եղաւ գրաւել Կապանի շրջանը եւ Կապանի բերդը, իբրեւ իր հայրենի հողերուն եւ բերդերուն ժառանգորդը:

Թորոս Բ.ի եղբորորդին Ռուբէն Բ., 1182ին, Կապանը իր բերդով եւ շրջանով, իր եղբոր Լեւոն Մեծին տուաւ, իբրեւ հայրենական կալուած. «ի թուին ՈԼԱ (= 1182) դարձաւ Լեւոն ի Կոստանդնուպոլսէ եւ եկն առ եղբայրն իւր Ռուբէն (Բ.), եւ նա սիրով ընկալաւ զնա, եւ ետ նմա զԿապան բերդն»¹⁵: Բերդին դիրքը մօտ ըլլալով Ջահանի եւ անոր օժանդակին՝ ճամբորդներու եւ վաճառականներու անցք մըն էր. որով հոն հաստատուած էր նաեւ մաքսատուն մը¹⁶:

Պատմութենէն կ'երևի որ Լեւոն Մեծն երբ իր եղբոր յաջորդեց Կիլիկիոյ մէջ, Կապանը իր շրջանով տուած է Տանգրէտ փրանկ իշխանին, քանի որ՝ ան ներկայ եղած է 1198ին Լեւոն մեծի թագադրութեան հանդէսին իբրեւ

12. ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ, Կիլիկիա, էջ 36:
13. ԳԱԼՈՒՍԵԱՆ, Մարաշ, էջ 62:
13ա. Հմմտ. FEDDEN-THOMSON, Crusader Castles, էջ 37:
14. ՍՄԲԱՏ ՍՊԱՐ., էջ 161:
15. ԱճԴ, 194:
16. Սիսուան, անդ:

«Իշխանն Կապանն Տանկրի»¹⁷: Իսկ 1215ին երբ Լեւոն կը վերահաստատէ իր պարզեւազիրը ձենովացիներուն՝ տալով անոնց իրաւունք վաճառականութիւն ընելու իր երկրին մէջ, զիրենք ազատ չարձակեր իրենց տուրք վճարելու պարտաւորութենէն Ջահան գետէն անցնելու ժամանակ Կապանի բերդին տիրոջ՝ որ նոյն ատեն Լեւոն անունով իշխան մըն էր¹⁸:

Ասկէ երկու տարի ետք, 1217ի վերջերը, Իկոնիոյ Ազգ-էտտին Քէյքաուզ սուլթանը, որուն հետ եօթը տարիէ ի վեր խաղաղութեան դաշինք դրած էր Մեծն Լեւոն, հակառակ այդ դաշինքին, մեծ բանակով մը եկաւ հիւսիսային Կիլիկիա եւ պաշարեց Կապանի բերդը, որ կրնար բանալ իր առջեւ Կիլիկիոյ դռները՝ մինչեւ ընդարձակ դաշտագետինները եւ մինչեւ ծով:

Նախապէս՝ Լեւոն, 1211ին, նիզակակցելով Քէյքաուզի հօրեղբոր՝ էրզրումի սուլթան Տուղրիլ շահի հետ, գրաւած էր Հերակլէայի (Ereğli) եւ Լարանտայի (Derinde, Karaman) ամրոցները, պաշարելով նոյնինքն Կեսարիա քաղաքը: Մանաւանդ թէ, վկայութեան մը համաձայն, յաջողած էր նոյնիսկ գրաւել Կեսարիան, բայց յետոյ ստիպուած՝ զայն ծախել¹⁹: Քէյքաուզ՝ Լեւոնի յառաջացած տարիքը, անշուշտ, պատեհ առիթ մը նկատած էր իրեն՝ լուծելու համար այդ հին վրէժը:

Լեւոն Քէյքաուզի դէմ շրկեց բանակ մը՝ մեծ իշխան պարոն Ատան Պայլի եւ Կոստանդին գունդստապլ սպարապետի առաջնորդութեամբ. բանակին մաս կը կազմէր նաեւ Լամբրոնի իշխան Կոստանդինը՝ Հեթում Հեղիի որդին: Հայկական զօրքը կը կեդրոնանայ Կապանի մերձակայ Շողական ամրոցին մէջ: Մինչ կը սաստկանար պաշարումը, Կապանի տէր Լեւոն իշխան անակնկալ յարձակումով մը կը յաջողի շփոթութեան մատնել թշնամին եւ այրել բարանները²⁰: Յաջորդաբար Սելճուքեանները վերակազմուելով՝ կը դիմեն նաեւ Շողականի վրայ: Համեմատելով Սմբատի փարիզեան հրատարակութեան եւ Միխայէլ Ասորիի նկարագրութիւնները, այնպէս կ'երևի՝ թէ պատերազմի այս երկրորդ փուլին, Կոստանդին գունդստապլ դուրս գալով բերդէն, յաջողած է վանել սելճուքեան յարձակումը. բայց տարուած յաղթանակի հրապոյրէն՝ չափազանց յառաջացած է թշնամիի հետապնդումին մէջ, խրելով

17. ՍՄԲԱՏ ՍՊԱՐ., էջ 209:
18. Հմմտ. LANGLOIS, Cartulaire, էջ 126-127. «excepto passagio, quod dominus Leo de Cabban habet in flumine, quod vocatur Jahan». այս պարզեւազիրն 1275 թուականէն մէկ օրինակութիւնը կը պահուի Վենետիկ՝ Ս. Ղազարի թանգարանին մէջ: Կապանի տէր Լեւոն իշխան, միեւնոյն թուականին, յիշուած է նաեւ ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ Տարեգրքին փարիզեան խմբագրութեան մէջ (էջ 117 - տե՛ս նաեւ՝ Սիսուան, էջ 191):
19. «Եւ առեալ էր զԱրակլի եւ զԼաոնդա եւ Կեսարիոյ սղարիւն՝ զոր ի յառ էած եւ դարձաւ ծախեց իւրեանց» (ՍՄԲԱՏ ՍՊԱՐ., Փարիզ, էջ 117): Հմմտ. նաեւ ՍՄԲԱՏ ՍՊԱՐ., էջ 218: ՎԱՀՐԱՄ ԲԱՐՈՒՆԻ, էջ 214: TOURNEBIZE, Histoire, էջ 190: GROUSSET, La Petite Arménie, էջ 396:
20. «Եւ սուլտանն սկսաւ սերտ կռուիլ ի վերայ բերդին: Բայց Պարոն Լեւոն՝ տէրն Կապանն եւ այլ իշխանք որ կային ի ներս՝ էլան ի դուրս, ու զարկին իւրեանք ու զիւրեանց պահերն ընդ ափ տարան, ու այրեցին զբարնին (= բարանները - Հ. Մ. Թ.). ու այնով պրծան զէտ քաջ մարդիկ» (ՍՄԲԱՏ ՍՊԱՐ., Փարիզ, էջ 117-118):

կիրճերու միջեւ, ուր սելճուքեան պահեստի թարմ ոյժերը ծանր հարուած մը տուած են իր զօրքերուն:

Գերի կ'իյնան Կոստանդին սպարապետ, Կոստանդին Լամբրոնացին, «Կեոսակ Մամղաոյ տէրն»²¹ եւ այլ իշխաններ²²:

Գերուած իշխանները տարի մը եւ չորս ամիս կը մնան Սուլթանին մօտ: Հուսկ Լեւոն, իր մեծութեան վայել վեհանձնութեամբ մը, կը փրկանաւորէ զանոնք՝ Սուլթանին յանձնելով Իսաւրիայէն մինչեւ Սելեւկիա իջնող գետանցքը, Լուլուայ բերդը եւ Կիլիկիեան Դոներուն մօտիկ Լօզադ (Լաւզադ) անառիկ կիրճը²³:

Այս դէպքերէն վերջ, մինչեւ ԺԳ. դարու վերջերը, Կապանի մասին յիշատակութիւններ չունինք. այդ տարիներուն կը յիշուի միայն Կապանի տէրը՝ Կոստանդին (Ա.)՝ Լեւոն Բ.ի որդին: Կոստանդին՝ Կապանի մէջ կը բանտէ իր եղբայրը Սմբատ (Թազաւոր՝ 1297-98), որ աչքերը տաղած էր իր եղբոր՝ նախկին թազաւոր Հեթում Բ.ի եւ սպաննած իր միւս եղբայրը՝ Թորոսը²⁴: 1307 թուականի վենետիկեան վաւերագրի մը մէջ կը յիշուի Օշին՝ տէր Կապանի, թազաւորին եղբայրը, այսինքն՝ Լեւոն Գ.ի, եւ որդին Թորոս Գ.ի²⁵: Իբրեւ Կապանի տէր կը յիշուի նաեւ Թորոս՝ Լիպարիտ եւ Վասիլ մարաջախտներու հայրը²⁶:

Հաւաստի կ'երեւի թէ Կապան, իր շրջակայքով, մնացած է հայերու ձեռքը՝ մինչեւ Կիլիկիեան թազաւորութեան անկումը: Ալիշան կը գրէ այս մա-

սին. «Հաւանութեան է, եւ գրեթէ եւ պատմական իսկ, զի յետ բարձման թազաւորութեան Սիսուանեայց, յամրագոյն լեռնակողմանքս տեւեցին տալաւին բերդատեարք ոմանք, որպէս յամուրս կողմանց Դրանցն Կիլիկիոյ, եւ յաւէտ յայս սահմանս Կապանայ»²⁷: Բայց զուրկ է պատմականութենէ, ինչպէս տեսանք, այն աւանդութիւնը՝ որուն համաձայն Լեւոն Ե. Հոս ապաստանած ըլլայ իր վերջին օրերուն եւ Հոս անձնատուր եղած²⁸:

1473ին գրուած յիշատակարանի մը համաձայն, Լեւոն Ե.ի յանձնումէն ետք, Հայերը կը յաջողին վերագրաւել Կապանը, Լեւոնի զօրավարներէն՝ Հայոց վերջին սպարապետին Հեթումի արի կնոջ՝ Չարմանուհիի առաջնորդութեամբ:

Լեւոն Ե.ի յանձնումէն ետք Հեթում տակաւին կը կռուի Եգիպտացիներու դէմ, եւ պատանդ կը բռնէ Սուլթանի որդին. բայց կը սպաննուի Գրիգոր անուն հայ դաւաճանէ մը, որ ազատ կ'արձակէ գահաժառանգը: Չարմանուհի՝ ամուսինին մահէն վերջ՝ կը քաշուի Կոկիսոնի եւ Ունիոյ լեռները, եւ հինգ տարի այդ կողմերը մնայէ ետք՝ տեղացի լեռնցիներէ կազմուած զուռուով մը, իր որդիին Գէորգի հետ, կը յարձակի Կապանի վրայ եւ կը վերագրաւէ զայն. ասիէ ետք Կապան դեռ վաթսուն հինգ տարի կը մնայ Հայերու ձեռքը²⁹:

21. ՀԵՌՈՒՄ ՊԱՏՄԻՉ, Ժամանակագրութիւնք, էջ 82: Այս Կեոսակն է անշուշտ՝ Լեւոնի թազաւորութեան ներկայ՝ «Մաղվայոյ եւ Սիկոյ եւ Պալապոլին Կեոսակն» (ՍՄՐԱՍ, էջ 210):
22. Հմմտ. ՍՄՐԱՍ ՍՊԱՐ., Փարիզ, էջ 118: ՀԵՌՈՒՄ ՊԱՏՄԻՉ, անդ: ՄԻՒԱՅԵԼ ԱՍՈՐԻ, էջ 511-513:

ՍՄՐԱՍԻ վենետիկեան խմբագրութիւնը (էջ 218), ՎԱՀՐԱՄ ՐԱԲՈՒՆԻ (էջ 216), Բուրինեանց համառօտ պատմութիւնը (ՍՄՄՈՒԷԼ ԱՆՅՅԻ, Յաւելուած Դ., էջ 220) կը լռեն կամ կը ջնան մեղմել Հայերու պարտութիւնը. նոյնպէս՝ Ալիշան, (Սիսուամ, էջ 514. տե՛ս, սակայն, էջ 191-192, ուր ամբողջութեամբ կը մէջբերէ Սմբատի նկարագրութիւնը՝ փարիզեան հրատարակութեան համաձայն):

23. Հմմտ. ՍՄՐԱՍ, Փարիզ, էջ 118. Վենետիկ, էջ 222: ՄԻՒԱՅԵԼ ԱՍՈՐԻ, էջ 513: TOURNEBIZE, անդ:

ՄԻՒԱՅԵԼ ԱՍՈՐԻ (էջ 512), ՎԱՀՐԱՄ ՐԱԲՈՒՆԻ (էջ 216) եւ Սամուէլի շարունակողին (Շար. ՍՄՄՈՒԷԼԻ ԱՆՅՅԻՈՑ, Ա, էջ 146-147. տե՛ս նաեւ համառօտ խմբագրութիւն մը՝ ՅՈՎՍԷՓԵԱՆՑ, սիւն 525 յջ.) համաձայն, իշխաններու պարտութենէն եւ կալանաւորումէն ետք, Լեւոն չի վհատիր եւ տարբեր ուղղութեամբ յաջող ապաստակութիւն մը կը կատարէ դէպի Սուլթանին հողերը, որմէ ետք կը կնքուի հաշտութեան դաշինքը եւ տեղի կ'ունենայ գերիներու դարձը: Այս պարագային, սակայն, դժուար կը բացատրուի թէ Լեւոն ինչո՞ւ այդքան կարեւոր գիշումներ ըրած ըլլայ փրկելու համար իր իշխանները: Անշուշտ Կոստանդինի պարտութիւնը արդիւնք էր ուղղմանակալան սխալի մը, ինչպէս կը շեշտեն յատկապէս Միխայէլ եւ Անցիլի շարունակողը: Լեւոն յաջորդաբար կրնայ գէթ մասամբ հաւասարակշռած ըլլալ զինուորական կացութիւնը, առանց որուն հաշտութեան պայմանները թերեւս աւելի ծանր ըլլային:

24. Հմմտ. Սիսուամ, էջ 192: Մամր ժամանակագրութիւնք, Բ, էջ 170, ծն. 193:

25. Հմմտ. LANGLOIS, Cartulaire, p. 174; G. M. T. HOMAS, Diplomatarium, vol. I, p. 70: «Barono Ossino, domino Cabani, fratri regis».

26. Հմմտ. RÜDT - COLLENBERG, The Rupenides, էջ 73, Բ. 172: Սիսուամ, էջ 542:

27. Անդ, էջ 184: Հմմտ. աստ՝ Սիսու՝ Կիլիկիոյ քաղաքութեամ անկումէն ետք. տես նաեւ՝ ՉԶ., Պատմ., Գ, էջ 785-786: RÜDT - COLLENBERG, The Rupenides, էջ 77:

28. Տե՛ս աստ՝ Սիսուի վերջին օրերը, էջ 54: Ալիշան, այս աւանդութեան ակնարկելով, կ'ենթադրէ թէ թերեւ, անունի մերձաւորութեան պատճառով, չփոթութիւն մըն ալ կրնայ ծագած ըլլալ ընդմէջ (Չահանեան) Կապանի եւ Կուկլակ Կապանի (Սիսուամ, էջ 130), արդեօք լեռնային թելադրե՞լ ուղեւով որ Լեւոն Ե.ի յանձնումը «Կապանի» մէջ դնող աւանդութիւնը՝ Կուկլակ Կապանի կրնայ վերաբերիլ:

29. Հոս ամբողջութեամբ կ'արտագրենք այդ յիշատակարանը, զոր գտած է Չէյթունի մէջ 1868ի Օգոստոս 3ին, տեղւոյն վրայ ուսուցչութիւն կատարող Կարապետ Վրդ. Մինասեան, հին Շարահնոցի մը մէջ: Յիշատակարանը հրատարակուած է «Մանգուլիէ ԽՓքեարքի մէջ, 1870, Բ. 1116. «Փառք մանակալ Ատուծոյ... եւն. եւն.: Արդ խնդրեմ զի յիշեալիք յաղօթս ձեր զնախնի հաւն իմ եւ զիշխանն մեր գշեթում, որ զօրապետ բանակաց Հայոց առ թազաւորք Կոստանդնու եւ Լեւոնի վերջնոյ. սա էր՝ սպան զքաջ զօրապետն Եգիպտացւոց Էօմէր ի դաշտն Ատանայ ու յաւուրս Կոստանդնու արքայի եւ արար յաղթութիւն մեծ. սա էր որ սպան զԱլի զօրավարն Եգիպտացւոց յաւուրս Լեւոնի վերջնոյ ի դաշտն Սոոյ, յետ այտորիկ եւս բազում քաջութիւնս առնելով ի Կանչու (Չուզուր Հիսար) յետ գերութեան Լեւոնի սպանաւ նենգութեամբ ձեռամբ մատնիչ Գրիգորի, որոյ պատրեալ ի բանից Սուլթանին սպանանելով գշեթում եւ արձակելով զորդի Սուլթանին, որ էր գերի Հայոց ձեռամբ Չարմանուհի տիկնոջ, եղև մատնիչ եւ դաւաճան ազգին մերոյ, փան որոյ նզովս արկ գհետ սորա. յիշեցէ զկինն նորա զՉարմանուհի զի սա եւս յետ գերութեան արքայի մերոյ ի գիշերի գաղտ յարձակեալ ի բանակն Եգիպտացւոց արար կոտորած մեծ ընդ առն իւրում Հեթոյ, եւ ձերբակալ արար զորդի Սուլթանին, բայց ապա տեսեալ թէ մատնիչ սպանին գշեթում եւ կամին եւս սպանանել զինքն եւ արձակեցին զարքայորդին, փախեալ ի լերինս Կոկիսոնի (Կեօքսիւն) եւ Ունիոյ (Չէյթին) եւ անդ թափառէր ամս հինգ, յետ հինգ ամաց ժողովեալ ի լեռնականաց արս 300 էառ ընդ որդւոյ իւրում զԿապան եւ ազատեաց զազգն ի ձեռաց այլազգեաց ամս 85. զքաջութիւնս նորա եւ զառն իւրոյ Հեթոյ եւ զորդւոցն իւրոց և՛ գրեալք ի գիրս յիշատակարանին վանաց սրբոյն Կարապետի, եւ ի վանս սրբոյն Ստեփաննոսի որ ի Կանչու, եւ ի վանս Տանըզու,

Այս յիշատակարանին հետ՝ դարձեալ Կարապետ Վրդ. Մինասեանի կողմէ
դտնուած ուրիշ յիշատակարանի մը համաձայն, Չարմանուհիի եւ Գէորգի
մահէն վերջ, երբ այլազգիները վերստին կը գրաւեն Կապանը, հայ փախըս-
տեաներէն ոմանք կ'ապաստանին Ձէյթուն եւ հոն կը հիմնեն իշխանութիւն
մը, որ տեւած է մինչեւ 1865 թուականը³⁰ :

եւ զամենայն անցսն, եւ զպատերազմսն եւ երկրաշարժն մեծ, եւ զսովն մեծ եւ զմահ-
տարածման մեծ, են գրեալք նոյնպէս. զայսոսիկ միայն գրեցան զի մի կորիցեն ան-
ուանք նախահարց իմոց զի մեր օճախն է իջեալ ի Հեթմոյ եւ ի Չարմանայ. յիշեցէք եւ
զիս զմեղաւոր ծառայ ձեր զՏէր Կիրակոս վարդապետ, եւ զեղբայրն իմ զՏէր Յովհաննէս
քահանայն Կանչուի եւ զորդիսն նորա զՀեթումն եւ զԼեւոնն եւն. եւն., եւ դուք յիշեալ
լիջիք ի Տեառնէ ամէն: Գրեցաւ Շարականս այս ի թուին Հայոց Ձիթ, ի վանս սրբոյն
Ստեփաննոսի յետ աւերման սրբոյն Կարապետի տեսի զի Շարականս էր հնացեալ եւ չէր
հնար ընթեռնուել, նորոգեցի զսա զի ըզորդ ընթեռնուցուն զպիրքն եւ զյիշատակարանս
այս գրեցի զի ժողովուրդ մեր գիտասցին մեր օճախին մեծութիւնը զի մեք եմք յօճախէ
մեծին Հեթմոյ եւ Չարմանայ. յիշեցէք յաղօթս ձեր զՏիկիին Չարման եւ զՀեթում. եւ
զիս մեղաւոր ծառայս զվանահայր վանուցս Տէր Ղուկաս վարդապետս եւ զեղբորորդիսն
իմ զՍարգիսն եւ Լեւոնն եւ զհայրն նոցա զՏէր Մատթէոս քահանայն, եւ դուք յիշեալ
լիջիք ի Տեառնէ ամէն. գրեցաւ ի թուին ՌՁ (1006) ի վանս սրբոյն Կարապետի»:

30. Տես՝ «Մանգրումէի Էֆեբար», անդ: Հմմտ. Ա. ՇՕՐՎՕՂԼԵԱՆ, ՁԷՅԹՈՒԱ, որ կու տայ
հսկան մատենագիտութիւն մը, էջ 255-56: Այս յիշատակարանը հրատարակած է նաեւ
Լ. Պաշիկեան, օգտուելով ուրիշ ընդօրինակութիւններէ, ձեռքի տակ չունենալով «Ման-
գրումէի Էֆեբար» յիշեալ թիւը. թերթին խնդրոյ առարկայ համարն է 24 Դեկտ. 1869
թուակիրը՝ ըստ հին տոմարի, 5 Յունվ. 1870՝ ըստ նոր տոմարի: Այլիշան՝ զանազան
անգամներ կ'ակնարկէ այս յիշատակարանի դէպքերուն (Սիսուամ, էջ 184, 192, 227, 542)
եւ կը յայտնէ վերապահութիւններ անոնց պատմականութեան կատմամբ (էջ 184, ծն. 1,
եւ էջ 542): Նոյնպէս ԽԱՉԻԿԵԱՆ, անդ, ծն. ** : Մեր կարծիքով, կարելի է ունենալ
վերապահութիւններ՝ քննելով վերաբերի յիշատակագրին ազգականութեան Չարմանուհիի եւ
Հեթումի հետ: Բայց բաւարար պատճառ մը չենք տեսներ կասկածելու համար՝ զոնք
դէպքերուն պատմական հիմքի մը գոյութեան մասին: Կը խորհինք թէ Կիլիկիամ ժամա-
նագրիմ լուսթիւնն ալ, որուն կ'ակնարկէ Այիշան (էջ 542), պատճառ չէ երկբայելու,
քանի որ այս ազբիւրը կը լուէ նաեւ Կիլիկիոյ վերջին օրերուն եւ Լուսինեանց մասին,
ինչպէս կը նշէ նոյնիքն Այիշան (Սիսուամ, էջ ԺԱ): Հեթումի եւ Չարմանուհիի
թեան մասին՝ տես՝ RÜDT - COLLENBERG, էջ 63:

ՃԱՆՃԻ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Նմանաձայն անունով՝ իրարու մօտ դիրքերու վրայ էին ձանճի եւ Կանչի
բերդերը: Ուսումնասէրներէն ոմանք ուզած են զանոնք նոյնացնել. սակայն
ճիշտ չէ, քանի որ Սմբատ Սպարապետ զանոնք առանձին առանձին կը յիշէ:
ԺԲ. դարու վերջերը ձանճի տէրն էր Կոստանդին անունով իշխան մը, որ
ներկայ եղած է Լեւոնի թագադրութեան հանդէսին. «Իշխանն ձանճոյն Կոս-
տանդին»¹: Ասկէ եօթանասուն տարիներ վերջ՝ նոյն պատմիչը, Սմբատ,
ձանճի բերդին տէր կը նշանակէ «Վասակ տէրն ձանճոյն»²: Այս Վասակ իշ-
խանը՝ Կոստանդին թագաւորահօր որդին էր, ու խորթ եղբայրը՝ Հեթում
Ա.ի: Այս մասին կը գրէ Սմբատ. «Եւ առաքեցին պանդանտ զՕշին քեռորդի
արքային Հեթմոյ, ... եւ զորդի Կոստանդեայ թագաւորահօրն զՎասակ՝
տէրն ձանճոյն»³:

ձանճի բերդը մեր պատմիչներէն կը յիշատակուի հետեւեալ կամ նման
կարգով մը. Բերդուս, Կանչի, Փօռնոս, Կապան, ձանճի, Շողական, Մա-
զոտ Սաչ, եւ այլն: Բացի վերջին երկուքէն, միւսները, կը գտնուէին իրարու
մօտիկ եւ սահմանակից էին:

Այիշան, հետեւելով Մոլթըէի եւ Թէքսիէի, ձանճի բերդը կը գետեղէ
Կոկիսոնի եւ Կապանի միջեւ⁴: Թէքսիէ ուղեգիրը, որ տեսած է Կանչի եւ
ձանճի բերդերը, առաջինը Մարիանչիլի (Mariantschil) ֆալտսի կը կոչէ, իսկ
երկրորդը Չիմչիմ (Tschintschin) ֆալտսի⁵:

Թեքսիէ, 1836ին, Կովկասոնէն գալով դէպի հարաւ, հինգ ժամ քարոս
ճամբայէ մը անցնելէ վերջ հասած է թուրքմէններու գիւղ մը, որուն գլխա-
ւորն էր Օսման Պէյ: Պէյը Թէքսիէի կ'ըսէ թէ իրենց մօտերը զարմանալի
բերդ մը կայ, որ ատենօք ճեղմվացի հօր իշխանի մը պատկանած է. ասիկա
երկար ատեն զիմադրեր է մահմետական Բէկերու յարձակումներուն, բայց
վերջը լքած դացեր է Մարաչ եւ այլեւս չէ վերադարձեր: Բերդը Մարաչէն

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:
2. Անդ, էջ 250:
3. Անդ:
4. Սիսուամ, էջ 194:
5. TEXIER, Asie Mineure, էջ 585:

ժամ մը հետո՝ շինուած էր ընդարձակ հովիտի մը մէջ, բրդաձեւ քարաժայռի մը կատարին վրայ, ուր ելլելու համար ճամբու հետք չէր տեսնուեր: Մէկ կողմը խոր ձոր մը ունէր, իսկ միւս կողմէն սրընթաց գետ մը կը հոսէր:

Քարաժայռին զագաթը ամբողջութեամբ պարսպապատ էր, իսկ վարի մասերը վայրի ձիթենիներով եւ որթատունկերով ծածկուած: Մեծ դժուարութեամբ է որ Թեքսիէ մագլցելով կը բարձրանայ մինչեւ պարիսպներուն ստորոտը, ուր կը տեսնէ որ բերդը ամրացած էր կրկին պարիսպներով, որոնք բլրան կատարին անկանոն ընթացքին համաձայն կը բոլորուէին: Պարիսպներու պատուածքէ մը ներս կը մտնէ, եւ կը տեսնէ ներսը ընդարձակ եւ ամրացած գոտի մը, որուն շուրջը կային սրահներ եւ սենեակներ. ասոնցմէ շատեր ստորերկրեայ մուտքեր ունէին, հաւանօրէն ժայռափոր, որոնցմէ մէկը ջրամբար էր: Բերդին ծայրը կիսաւեր եկեղեցի մը կար, ստկայն մէջը ոչ մէկ արձանագրութիւն: Եկեղեցւոյ շինութեան ոճը՝ սրածեւ կամարներով էր եւ չէր նմաներ Անարդարայի շինութիւններուն, որով հայկական չէ թուած Թեքսիէի՝ այլ արեւմտեան խաչակիրներէ շինուած բերդ մը:

Յ. Տէր Ղազարեան, իր կիլիկեան ուղեգրութեան մէջ, ճանճի բերդը կը դնէ Եուզրի վանքին հիւսիսակողմը, Մարաշէն ոչ շատ հեռու: Կը գրէ անոր մասին. «Կապանէն ետք կու գայ ճանճի բերդը: Այս բերդը շինուած է ձորի մը մէջ, միակտուր ժայռի մը վրայ. ո՛չ անցք, ո՛չ ալ ճամբայ կայ դիւրութեամբ հասնելու բերդին, որ չորս կողմերէն ձորերով եւ ձիթենիի անտառներով շրջապատուած է: Եթէ կարողանաս բարձրանալ բերդը, հոն առջեւ կը տարածուի բաւական մեծ բակ մը, որ սենեակներով ու մատուռով մը շրջանակուած է եւ ուր ջրամբարներ ու ստորերկրեայ անցքեր կը գտնուին: Պարիսպը բրդապատ է: Ճանճի բերդը, ինչպէս Կապանը, ամրակուռ բերդ էր, մեր հիւսիսային սահմանին պաշտպանութեան համար: Ատեն մը ճանճի բերդատէրն էր Ճօֆր անունով փրանկ մը, ճորտ՝ կիլիկեան թագաւորներուն: Ճանճի բերդին մօտերն են Փոնուսի, Կանչի, Մազոտ խաչի բերդերը, որոնք փոքր աւատապետներու յանձնուած էին, եւ պարտականութիւն ունէին իրարօգնութեան, ինքնապաշտպանութեան եւ հիւսիսէն ու արեւելքէն գալիք թշնամի յարձակումներուն դիմադրելու»⁶:

Գր. Յ. Գալուստեան, իր Մարաշի պատմութեան մէջ, կը գրէ. «Մարաշի հիւսիս-արեւմտեան կողմը ժամուան մը չափ՝ ցարդ կը նշմարուին աւերակները բերդի մը, որ լայնանիստ ժայռաբլուրի մը զագաթը կը գտնուի»⁷: Գալուստեանի կողմէ Ճանճի կոչուած այս բերդը՝ կը համարինք թէ ճանճի բերդն ըլլայ, զոր կը յիշեն մեր պատմիչները:

ՊԱՏՄԱԿԱՆ

Իսկ Պիպի պարսիկ պատմագիրը, որ ապրած է 1192-1280ի ժամանակները եւ յօրինած է Սելճուքներու պատմութիւն մը, կը խօսի ճանճի բերդի մասին, եւ զայն կը կոչէ Ճինգին (Ging'in - جینگین). զայն նկատելով Կի-

6. Յ. Տէր ՂԱԶԱՐԵԱՆ, Հայկական Կիլիկիա, էջ 37:

լիկիոյ ամէնէն ամուր բերդերէն մին, կը գրէ՝ «որուն համար կ'ըսեն թէ ամրագոյնն է»: Սելճուք թուրքերը, Սուլթան Իզդէտտին Քայ Քաուսի օրով, կու գան եւ զայն կը պաշարեն 1215ի աշնան. եւ որովհետեւ բերդը բարձր դիրք ունէր եւ անառիկ, դիւրաւ չեն կրնար դրաւել զայն. պաշարումը երկար կը տեւէ, մեծղի բարաններով քրեք օր, երեք գիշեր կը հարուածեն անոր պարիսպները. բերդին պահապանները քաջութեամբ կը դիմադրեն, մինչեւ որ ճարահատ երեք օր պայմանաժամ կը խնդրեն՝ յուսալով թէ Լեւոն թագաւոր իրենց օգնութեան կը հասնի: Դժբախտաբար Լեւոն եւս ուրիշ ճակատի վրայ պատերազմի բռնուած էր, լուր կը դրկէ թէ ինքն իսկ օգնութեան կը կարօտի: Ասոր վրայ բերդին պահապանները անձնատուր կ'ըլլան Սուլթանի բանակին»⁸:

7. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ, Մարաշ, էջ 321:
8. IBN BIBI, էջ 71-74: Ճինգինի եւ Ճանճի բերդի նոյնացման մասին հմտ. Ղ. Պ. Տէր ՊՕԼՈՍԵԱՆ, Իրան Բիքի, սիւն. 166, թ. 4:

ԿԱՆՁԻ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Հայկական Կրիտիկոյ նշանաւոր եւ հնագոյն բերդերէն էր Կանչի բերդը: Համանուն անունով՝ կը գտնուէր լեռնային Կրիտիկոյ Ֆոնոսի ձորագետին վերեւ, Կոկիսոնի հարաւը, Թրքական Չուքուր Հիսար կամ Ուլնեցիներու, որ է Չէյթունցիներու, հնչումով Չուխրասար գիւղին տեղը: Կանչի բերդը եւ աւանը յիշուած են Ստեփանոս Ուլնեցիի վկայարանութեան մէջ: Յետագային Կանչի անունը վերածուած է Կանչուկի¹: Այստեղ դատուեցաւ եւ նահատակուեցաւ Ս. Ստեփանոս Ուլնեցի իր ընկերներով՝ Կոկիսոնէն զրկուած դատաւորի մը ներկայութեան. իր յիշատակին համար հոն մատուց մ'ալ շինուած էր:

Կանչի բերդի դիրքի մասին հետեւեալ նկարագրութիւնը կու տայ Գր. Գալուստեան. Բերդը կը գտնուէր «ընդարձակ հովիտի մը մէջ, բրգաձեւ ժայռի մը վրայ բարձրացած, ուր հասնելու համար ճամբու հետք մը չկար: Մէկ կողմէն ձորն էր եւ միւս կողմէն՝ վտակը: Քարաբլուրին ծայրը պարսպապատ եւ ստորոտը վայրի ձիթենիներով եւ գիճիկներով մացառացած էր, եւ մեծ դժուարութեամբ կարելի էր վեր ելլել եւ պատուածքէ մը ներս մտնել: Բրգապատ կրկին պարիսպներէն ներս՝ ընդարձակ ամուր տեղ կար, սրահներով եւ սենեակներով շրջապատուած: Ամբողջ մէկ ծայրը կը գտնուէր եկեղեցւոյ կիսաւեր յարկը՝ առանց որեւէ արձանագրութեան»²:

ՊԱՏՄԱԿԱՆ

Ժ. Գարուն Կանչի բերդին իբրեւ իշխան կը յիշուի՝ Սմբատ Սպարապետէն Աշոտ անունով մէկը, որ ներկայ եղած է 1198ին Լեւոն Ա.ի թագադրութեան հանդէսին. «Իշխանն Կանչոյն Աշոտ»³: Ո՛վ էր Աշոտ՝ չենք գիտեր:

Իպն Պիպի պատմագիրը, զոր յիշեցինք խօսելով ձանձի բերդի մասին, կը յիշէ նաեւ Կանչի բերդը, նկարագրելով 1215ին Սելճուքներու արշաւանքը: ձանձոյ բերդի գրաւումէն վերջ, «Կարգն եկած էր, կը գրէ Իպն Պիպի, Կանչի բերդին, որ լաւ ամրացուած էր: Սելճուքները սաստկակոծ ուժակոծելի յե-

1. Սիսուան, էջ 193:
 2. Գր. Յ. ԳԱՂՈՒՍՏԵԱՆ, Մարաշ, էջ 64:
 3. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 209:

տոյ կը յաջողին երկար սանդուղներով բարձրանալ պարիսպներուն վրայ եւ զրոհով մը խուժել բերդին մէջ»⁴:

Աւելի ուշ Կանչի բերդին տիրած է Հեթում Ա. թագաւորին եղբայրը՝ Օշին. «Օշինը՝ որ եւ նա տէր դուրով գերագոյն զղեկին Կուռիկոսիոյ, ... Կանչոյն եւ այլ փոքրագոյն ամրոցաց»⁵: Օշին մեռած է Տարսոնի մէջ 26 Դեկտեմբեր 1264ին, եւ թաղուած՝ Սիսի մէջ, ինչպէս կը վկայէ դարձեալ Սմբատ Սպարապետ. «Ի սոյն ամի յամսեանն զեկտեմբերի որ օր իզ էր, եղբայրն արքային Հեթմոյ Օշին՝ տէրն Կուռիկոսոյ փոխեցաւ առ Քրիստոսի մայրաքաղաքն Տարսոն, եւ առեալ տարան զնա ի մայրաքաղաքն Սիս, եւ թաղեցին առ պատուանդանի հօր իւրոյ»⁶:

Օշինի յաջորդած է համանունը Օշին, որ ԺԳ. դարու կէսին տէրն էր Կանչի բերդին⁷: 1320ին Կանչի իբր տէր կը յիշուի Կիաւդիմ, որ է Գուռտոն, Օշին Պայլի եղբայրը, որ Եգիպտացիներուն դէմ կռուելով Այասի մօտ, վերաւորուեցաւ եւ մեռաւ:

1339ին այստեղ կ'ապաստանի լատինամիտ Ներսէս Պալենց կամ Պալոնց եպիսկոպոսը, որով Կանչի թատերաբեմ կը հանդիսանայ կրօնական վէճերու ու նաեւ կռիւներու⁸: Այս դէպքերուն առնչութեամբ կը յիշուի Hanga (սեռական՝ Hangae) անունով բերդ մը հայ Փրանկիսկեան Դանիէլ Դաւրիթեցիէ, Աւինեոնի մէջ, լատիններէն լեզուով Պապական իշխանութեան ներկայացուցած ջատագովութեան մէջ ի նպատակ Հայ Եկեղեցւոյ ուղղափառութեան՝ ընդդէմ Ներսէս Պալենցի կողմէ մղուած ամբաստանութիւններուն եւ Հայ Եկեղեցւոյ վերագրուած մոլորութիւններուն: Յիշեալ բերդը կը ներկայացուի իբրեւ castrum magnum (մեծ զղեակ)⁹: Այիշան կը գրէ այս մասին. «Կանչի թուի գրեալն Hanga»¹⁰: Մեզի աւելի քան հաւանական կը թուի նոյնացումը, նկատի առած պատմական մանրամասնութիւնները:

Կրիտիկոյ թագաւորութեան վերջնաւուսն, Հեթում վերջին Սպարապետը եւ անոր կինը Ջարման կը տիրանան նաեւ Կանչի բերդին¹¹:

4. Հ. Պ. ՏԵՐ-ՊՕՂՈՍՏԵԱՆ, Իրն Բիբլի, սիւն. 187:
 5. Անդ, էջ 244:
 6. Անդ, էջ 245:
 7. Այիշան կը միտի՝ այս Օշինը նկատելու նախորդին թողը. «Թերեւս եւ թոռնն՝ Օշին (Սիսուան, էջ 193): Թիւթ-Քոլլենպերկի ազգարանական ցուցակին համաձայն հայր ու որդի են (RÜDT-COLLENGER, Table III (H2), N° 101): Միեւնոյն հեղինակին համաձայն այս կրտսեր Օշինն է, եղբայրը Հեթում պատմիչի, որ սպաննած է Քորոսը եւ ինքն ալ իր կարգին սպաննուած է 1309ին: Ո՛չ թէ ինքը այլ իր զարմիկն Օշինը ըլլալու է 1307ին Անարզարայի մէջ դաւադրաբար Մոնկոլներէն սպաննուողը. այլապէս, եղբայրը՝ Հեթում զանց պիտի չընէր անշուշտ յիշել այս դէպքը իր պատմութեան մէջ (համտ. Անդ, էջ 66, Թ. 116):
 8. Դէպքերու մասին տես՝ ՉԱՄՁԵԱՆ, Գ, էջ 331-332: Սիսուան, էջ 194: ՕՐՄԱՆԵԱՆ, Բ, հմ. 1279, սիւն. 1853:
 9. RHC. DA, II, p. 616, art. LXXVII.
 10. Սիսուան, էջ 194:
 11. Անդ: Այս դէպքերը աւանդող եւ Այիշանէ յիշուած այս յիշատակարանի մասին տես Աստ, Կապան, թ. 29:

ՖԸՌՆՈՒՍ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Ֆրոնուս կամ Ֆրոնուզ, Սմբատ Սպարապետէն Փոնուս կոչուած, լեռնային Կիլիկիոյ աւաններէն մէկն էր, որ կը գտնուէր Ուլնիոյ գաւառին մէջ. Օսմանեան իշխանութեան օրով կը կոչուէր Խժուտ գիւղ, զանազանելու համար հին Ֆրոնուսէն, որ աւելի վերով կը գտնուէր՝ դէպի հիւսիս-արեւմուտք, Սէկի-Կէտիկ կոչուած լեռան վրայ: Հոս կը գտնուէր նաեւ Ֆրոնուս բերդը¹:

Ֆրոնուս գիւղի մասին կը գրէր Ինճիճեան, թէ Ուլնիէն աւելի մեծ գիւղ մըն էր, բնակուած հայերէ եւ շինուած փոքրիկ վտակի մը ափին. գետակէն անդին կար լեռ մը ամբողջութեամբ կաղնիներով պատուած. այս լեռան վրայ էր Ս. Ստեփանոս Ուլնեցիի վանքը, որ Ֆրոնուզէն մէկ ժամ հեռու կը մնար. իսկ նոյն լեռան թիկունքին եւ անոր ստորոտն էր մատուռը եւ գերեզմանը սուրբին, զոր կ'այցելէին նաեւ այլազգի ուխտաւորներ: Սուրբի գերեզմանին մէկ անկիւնէն աղբիւր մը կը բխէր քաղցրահամ ջուրով, ուր ըստ աւանդութեան սուրբին ճկոյտը կը գտնուէր. իսկ մատուռէն դուրս ուրիշ քաղցրահամ աղբիւր մըն ալ կը բխէր²:

ՊԱՏՄԱԿԱՆ

Ֆրոնուս գիւղի եւ բերդի իշխանն էր, Լեւոն Ա.ի Թագաւորութեան ընկերը, Ապլղարիպ, որ ներկայ ալ Կղած է Լեւոնի Թագաւորութեան հանդէսին. «Իշխանն Փոնուսայ Ապլղարիպն»³: Իր յաջորդներուն մասին յիշատակութիւն չենք գտներ:

ԺԴ. դարուն վերջերը եւ ԺԵ. դարու սկիզբները, հերոսուհի Զարմանի առաջնորդութեամբ, Կապանի հետ, Հայերը կը գրաւեն նաև Ֆրոնուս բերդը⁴:

Ս. Ղազարու վանքին ձեռագրատան մէջ կը պահուի մագաղաթեայ, պատկերազարդ շարականոց մը, գրուած 1578ին Ֆրոնուսի մէջ: Ֆրոնուս-Խժուտ գիւղերուն մէջ 1800ի վերջերը կային շուրջ 400 հայ տուներ⁵:

1. Հմմտ. Սիսուան, էջ 192:

2. Հմմտ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն. Հայաստան, էջ 376:

3. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 209:

4. Տես աստ, Կապան բերդ, Յն. 29 եւ 30:

5. Սիսուան, էջ 193. տես անդ՝ բնակչութեան թիւի մասին Ալիշանի յիշած տուեալներն ու: Ֆրոնուսի մասին տես նաև՝ Յ. ՊՏՂՈՒՆԻ, Ֆրոնուզի գաւառաբարբառը:

ԲԵՐԴՈՒՍ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Լեռնային Կիլիկիոյ հին եւ անուանի բերդերէն մէկն էր Բերդուսը: Համանուն աւանով՝ կը գտնուէր Ընկուզիկ լեռան հարաւը եւ Ախրու լեռան հիւսիսը, որ Մարաշի գաւառին սահմանը կը դժէր, երկու լեռներէն ալ դրեթէ հաւասար հեռաւորութեան վրայ: Պէյթիմուրէն մէկ քիլոմետր հեռու, Խուսմա գետի ձախ ափին, Տաւրոսի լեռնաշղթային մէկ ընդարձակ սարալանջին վրայ, կը կանգնէր Բերդուսի բերդը, բարձրակատար լեռներով շրջապատուած: Բերդուս, ժամանակին, նշանաւոր աւան մը եղած է՝ եպիսկոպոսական աթոռով եւ իշխանանիստ բերդով: Այս վերջինս կը յիշեն հայ թէ օտար պատմիչներ. Արաբները զայն Ֆէրթուս կը կոչեն:

ՊԱՏՄԱԿԱՆ

Բերդուս կը յիշուի մեր պատմութեան մէջ 1107 թուականին, Ռուբինեանց իշխանութեան սկիզբի օրերուն: Կը պատկանէր նշանաւոր Գոզ Վասիլ իշխանին, որ զայն նուէր ստացեր էր Փիլարտոսէն, երբ արեւելքէն կու գար եւ Քեսունի մէջ կը հաստատուէր: Մ. Ուռնայեցիի համաձայն, 1107ին, Պարսիկները (պէտք էր ըսել՝ Սելճուքները) 12·000 զօրքով կ'արշաւեն Բերդուսի շրջանը: Նախ Ռուբինի որդւոյն՝ Թորոս Բ.ի երկիրը կը քանդեն եւ աւարի կու տան, ապա կը մտնեն Գոզ Վասիլի երկիրը. «զօրաժողով եղեալ աղզն Պարսից երկոտասան հազար, եւ անցեալ ընդ Տօրոս լեռան որ կոչի Աւարզա (Անազարբա), եւ արար աւար զամենայն երկիրն Թորոսի՝ որդւոյ Ռուբինայ, եւ զայր անցանէր ընդ դաշտն քաղաքին Մարաշայ. եւ անթիւ գերութեամբ հասանէր յերկիրն Գոզ Վասիլին, ի տեղի որ կոչի Բերդուս՝ ի սահմանս նուիրականն»¹: Ալիշան կը նախընտրէ Սմբատի ընթերցումը՝ նուիրականն, փոխանակ «նուիրականն» կամ «նորիրականն» ընթերցումներուն²: Գոզ Վասիլ կը դիմադրէ. «զօրաժողով արարեալ զգունդն զօրացն Հայոց. եւ նոքա որպէս զարծիւ եւ կամ որպէս զկորիւն առիւծոյ հասանէին ի վերայ այլազգեացն. եւ արարին սաստիկ եւ ահաւոր պատերազմ եւ մեծաւ յաղթութեամբ դարձուցին զթուրքն ի փախուստ. եւ միաբան սրով զհետ

1. Մ. ՈՒՌՆԱՅԵՑԻ, ՃՂԷ, էջ 379-380:

2. Սիսուան, էջ 195:

ընթացան եւ արարին անթիւ կոտորածս զնոսա, եւ կալան զբազումս ի նոցանէ, եւ թափեցին զամենայն առ եւ զգերութիւնն»³:

Գող Վասիլի մահէն վերջ (1113ին), երբ Լեւոն իշխան ալ գերի կը տարուի Պոլիս, օտարները կը գրաւեն Բերդուը. սակայն Թորոս Բ., երբ գերութենէն կը վերադառնայ Կիլիկիա, կամաց կամաց կը վերագրաւէ իր հողերը եւ բերդերը:

1157ին Թորոսի Ստեփանէ եղբայրը, առանց Թորոսի հրամանին, կը յարձակի Մարաշի եւ Կոկիսոնի վրայ եւ զանոնք գրաւելէ վերջ՝ կը պաշարէ նաեւ Բերդուը: Պահապանները, խոստում առնելով Ստեփանէէն՝ որ պիտի խնայէ իրենց կեանքին, անձնատուր կ'ըլլան եւ բերդին դռները կը բանան. ժողովուրդը կը սկսի մեկնիլ. սակայն Ստեփանէ տեսնելով որ դացողները, յետ վտանգէն ազատելու, կը սպառնան Թուրքերուն օգնութեան դիմել, եկեղեցականներուն խորհուրդը կը հարցնէ, որ կը պատասխանեն. «Թէ այդպէս սպառնան՝ անխիղճ ես դու վասն երդմանն: Եւ առաքեաց զհետ նոցա եւ կոտորեաց զնոսա»: Այս որ կը լսեն այլազգիները աւելի սաստիկ թշնամութեամբ եւ ոխով կը լեցուին. «Եւ լուան զայս ամենայն այլազգիք եւ դատնացան ընդդէմ քրիստոնէից...»⁴:

Այս խռովութիւններուն վրայ՝ Իկոնիոյ Սուլթանը Ուլիճ Ասլան, որ Թորոսին բարեկամ էր, Կոկիսոնի վրայ կու գայ. «Եկն Ուլիճ Ասլանն ի դաւառն Կոկիսոնի, եւ հնազանդեցոյց իւր զամենեւեան, եւ ոչինչ մեղադրեաց բնակչացն. եւ անտի զնաց ի Բերդուը»⁵: Ուլիճ Ասլան, առանց Կոկիսոնի բնակիչներուն մնասելու, ինչպէս կ'ըսէ Գրիգոր Երէց, «Նուաճեաց զերկիրս խաղաղութեամբ ի հնազանդութիւն հրամանի իւրոյ, սէր առնելով... ընդ Թորոս յաղթողն, եւ ինքն դարձաւ յաթոռ իւր խաղաղութեամբ»⁶:

Ուլիճ Ասլանի այս բարեացակամ վերաբերումը համապատասխան էր Թորոսի վարուելակերպին, որ համամիտ չէր՝ իր եղբոր Ստեփանէի Բերդուը գրաւելուն: Արդարեւ, երբ Ուլիճ Ասլան Բերդուսի վրայ եկաւ, «Թորոս յաղապս սիրոյ սուլտանին՝ նենդեալ եղբորն, տայր զԲերդուըն ի սուլտանն, յոչ կամայ Ստեփանէի. եւ սուլտանն վասն սիրոյն Թորոսի զբնակիչսն բերդին անվնաս ազատեաց»⁷: Նոյն իմաստով կը գրէ նաեւ Մ. Ուռհայեցի՝ Թորոսի եւ Ուլիճ Ասլանի բարեկամութեան մասին. «Յորժամ եկն ի Բերդուըն զոր էր առեալ Ստեփանեայ բռնութեամբ նենդեալ եղբոր իւրոյ Թորոսի, եւ սիրոյ աղազաւ տուեալ ի սուլտանն առանց կամելոյ եղբոր իւրոյ. եւ զորս ի ներքս ի բերդին էին մարդիկ հեծեալ եւ հետեակ՝ զամենայն ազատ արարեալ (սուլտանին) վասն Թորոսի հնազանդութեան եւ տալոյ զբերդն»⁸: Ստեփանէ սակայն, ինչ որ կ'երեւի, դարձեալ փորձած է գրաւել այդ հողերը, առանց

3. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, ճշէ, էջ 380:
4. ՄԻՆԱՅԵԼ ԱՍՈՐԻ, էջ 437-438:
5. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգիրք, էջ 175:
6. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 520-521:
7. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, անդ:
8. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 521:

յաջողութեան. «Եւ ջանաց Ստեփանէ գողանալ զՄարաշ եւ ոչ կարաց»⁹: Ասով հանդերձ, Հայերը, շատ ժամանակ ջանցած, դարձեալ կը գրաւեն Բերդուը, քանի որ ԺԲ. դարուն վերջերը Բերդուսի կը տիրէր Լեւոն անունով իշխան մը՝ իր Գրիգոր տղուն հետ. ասոնց ժամանակ Բերդուսի մէջ կը նստէր Ստեփանոս անունով եպիսկոպոս մը, որոնք կը յիշուին Սմբատ Սպարապետն Լեւոնի թագադրութեան առթիւ¹⁰:

Սակայն շուրջ տասը տարի վերջ, 1208ին, երբ Մեծն Լեւոն գահընկէց կ'ընէ Յովհաննէս կաթողիկոսը եւ անոր հետ կը գժտուի, Յովհաննէսի զորդումով՝ Իկոնիոյ սուլտանը Բերդուսի վրայ կու գայ. «Եւ ի սաղրելոյ եւ խորհրդակցութենէ տէր Յոհաննիսի, եկն բազում զօրօք ի վերայ Բերդուսին, եւ պատերազմեալ էառ զնա եւ ըմբռնեաց զտէր նորա զԳրիգոր, որդի Լեւոնի, եւ յայնմհետէ Բերդուըն ելաւ յիշխանութենէ Հայոց, եւ էր թուական Հայոց ՈՄԷ (657 = 1208)»¹¹:

Այս դէպքերէն վերջ՝ Բերդուը այլեւս չի յիշուիր մեր պատմութեան մէջ:

9. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 175:
10. ԱՅԳ, էջ 209:
11. ԱՅԳ, էջ 215: Տես նաեւ Սիսուան, էջ 196:

ՇՈՂԱԿԱՆ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Շողական բերդի դիրքի մասին որոշակի տեղեկություն չունինք, թէև հաւանական է որ գտնուէր Կապանի մօտերը, դէպի հարաւ-արեւմուտք: Սմբատ Սպարապետ կը յիշէ անոր իշխանը, որ ներկայ եղած է 1198ին Լեւոնի թագադրութեան, «Իշխանն Շողականն (sic) ձօֆրի»¹: ձօֆրի՝ թերեւս օտար մը ըլլար եւ կամ օտարանուն հայ մըն էր: Թերեւս այս միեւնոյն իշխանն էր կամ իր թոռը՝ որ կը վախճանի 1255ին եւ որու մասին կը գրէ դարձեալ Սրմբատ. «Իշխանն ձօֆրի յերկրէն Կիլիկիոյ, որ էր ներքինի ի մարդկանէ եղեալ, եւ էր ազգաւ քրիստոնեայ, բարիոք խոստովանութեամբ փոխեցաւ ի կենցաղոյս»²:

Յ. Տէր Ղազարեան կը խօսի իրեն ծանօթ Շողական ամրոցի մը մասին. «Կիլիկեան պատմութեամբ հետաքրքրուողներէն շատ քիչեր ուշադրութիւն դարձուցեր են Շողական բերդի վրայ:

«Կիլիկեան ծանօթ բերդերը, Լամբրոն, Պապիւոն, Կորիկոս, Վահկայ, Լեւոնկլա, Ճանճի եւ ուրիշ շատ շատեր, հայկական շինուածքներ չեն եղած. մենք զանոնք ժառանգած ենք հռոմայեցիներէ կամ բիւզանդացիներէ: Հայկական իսկական կառուցուածքով բերդեր կը գտնուին Սիսի եւ Մարաշի միջեւ, Անտեռունի, Կապանի եւ Տօնկալայի շրջաններուն մէջ:

«Շողականը հայկական այդ բերդերէն մէկն է Կապանի շրջանին մէջ»³:

Յ. Տէր Ղազարեան Շողական բերդը կը գետեղէ Կապանի հարաւ-արեւմուտքը՝ Սիսէ հիւսիս-արեւելք ուղղութեամբ, իր տեղադրութեան սկիզբը դրած քարտէսին մէջ:

Կիլիկեան մեր պատմիչները Շողական բերդի մասին որոշ ցուցմունքներ եւ տեղադրութիւն չունին. այս անունը մերթ իբրեւ բերդ կը ներկայանայ եւ մերթ իբր լեռան, դաշտի կամ տեղի մը անուն. Ալիշան զայն թէ՛ իբր բերդ եւ թէ՛ իբր լեռ կը ճանչնայ «եւ բանակեցան յանուանեալ տեղուջն Շողական»,

1. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:
 2. ԱՅՂ, էջ 230:
 3. Յ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ, Կիլիկիա, էջ 147:

առ համանուն լեռանը, զորոց փափաքելի է ճշգրտել զգիրս»⁴: Ինչ որ կ'երեւի սրտամութենէն, Շողական՝ լեռան մը անունն էր, որուն ստորոտը կամ կողին վրայ կար համանուն բերդը, ռազմագիտական ուշագրաւ դիրքի մը վրայ, որ բանակներու հանդիպման հաւաքատեղի կ'ըլլայ: Կարեւոր բերդ մըն էր, թէև փոքր: Սմբատի փարիզեան բնագրին համաձայն Շողականը կը կոչուէր նաեւ Իզտի⁵: Ալիշան կը խորհէր նոյնացնել ասիկա Եգիպտոսի գիւղին հետ, հայաբնակ եւ հայերէ Աւագնիք կոչուած, բայց կը վարանէր, քանի որ այս վերջինը աւելի մօտ էր Ձէյթունի քան թէ Կապանի⁶:

Կոկիսոնէն Կիլիկիոյ վրայ արշաւող թշնամին նախ պէտք էր գրաւէր Ճանճի եւ Կապանի բերդերը, եւ յետոյ՝ դէպի արեւմուտք թեքուելով՝ իր առջեւ կը գտնէր Շողականը. այս բերդին գրաւումով՝ ճամբան բացուած կ'ըլլար դէպի Սիս, ինչպէս պիտի տեսնենք:

ՊԱՏՄԱԿԱՆ

Քոնիայի Քայ Քառու Ա. սուլթանը, 1218ին, հակառակ Լեւոն Ա.ի հետ կնքած դաշինքին, անակնկալօրէն մեծ բանակով մը Կոկիսոնի վրայէն իջնելով, կու գայ, Կապանը կը պաշարէ: Քայ Քառուի՝ Կապանի վրայ կատարած այս վերջին յարձակումին, Լեւոն Ա. իր կեանքի վերջին ամիսները կ'ապրէր: Երբ Լեւոն կը լսէ Սուլթանին յարձակումը, կը զրկէ Կոստանդին Գոճաղա-տապը, Պայլ Ատանը, Կոստանդին Լամբրոնացին, Սիկոյ տէր Կեռսակը եւ ուրիշ իշխաններ, վերցնելու Կապանի պաշարումը: Հայերը Շողականի կողմը կը բանակին⁷:

Վահրամ Բաբրունի Շողական-Կապանի այս պատերազմը չափածոյ տողերով կը պատմէ.

«Սակայն զօրացն անմտացեալ,
 Եւ արքայի ոչ մնացեալ,
 Այլ յերեւելն ի մարտ մտեալ,
 Եւ յայլազգեացն պարտեցեալ.
 Յոլովք ի սուր եղեն մատնեալ,
 Այլքն կապով գերի տարեալ»⁸:

Լեւոն՝ երբ այս դժբախտ պատահարը կ'իմանայ, ռազմավարութեան ձեւը կը փոխէ, եւ փոխանակ թշնամիին հետ դէմ առ դէմ ճակատելու, իր անձնական գունդերով կ'արշաւէ Սուլթանին երկիրը եւ կը հասնի մինչեւ Կեսարիա, գերի կը բռնէ բազմաթիւ սելճուք անձնաւորութիւններ, եւ կը վերա-

4. Սիսուան, էջ 192, 590:
 5. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Փարիզ, էջ 118:
 6. Սիսուան, էջ 192:
 7. ՀժժԹ. ՄՄԲԱՏ ՍՊԱՐ., Փարիզ, էջ 117-118: Սիսուան, էջ 520:
 8. ՎԱՀՐԱՄ ԲԱԲՐՈՆԻ, էջ 216:

դառնայ Սիս: Սուլթանը երբ կը լսէ այս տխուր լուրը, կը վերցնէ Կապանի պաշարումը եւ բաւական համարելով առած աւարը եւ գերիները, կը վերադառնայ իր երկիրը, իր հետ տանելով գերի հայ իշխանները: Յաջորդաբար հաշտութեան դաշինք կը կնքուի եւ գերիները կը փոխանակուին:

«Ընդ արքայի՛ երդումն եղեալ,
Եւ զգերեալս՝ ըն դարձուցեալ»⁹:

Այս դէպքերէն մէկ ու կէս ամիս վերջ Լեւոն Ա. Մեծագործ կը վախճանի, Շողականի պարտութեան կսկիծը իր սրտին մէջ:

Հ Ա Ճ Ը Ն

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Հաճըն լեռնային Կիլիկիոյ նշանաւոր քաղաքներէն մէկն էր եւ մաս կը կազմէր Մարաշի գաւառին եւ Ատանայի նահանգին. կը գտնուէր Չամլըք լեռան հարաւ-արեւելեան կողին վրայ, մօտ՝ Չաթալ-Կէօզ կոչուած գետակին, որ քաղաքաւանին անունով Համնոյ ջուր ալ կը կոչուէր: Հաճըն՝ լեռան կողքին շինուած ըլլալով քարքարուտ էր, տուները ամփիթատրոնի պէս ետեւէ ետեւ կը բարձրանային լեռան կողքին եւ գեղեցիկ տեսարան մը կը ներկայացնէին՝ շրջապատուած պուրակներով եւ այգիներով: Հաճընէ 15 վայրկեան հեռու կը հոսի Քըրտէտէի գետակը, որ Չաթալ-Կէօզ գետակին հետ՝ Հաճընի երկու կողմերէն հոսելով՝ զայն կը կղզիացնեն եւ անմերձեանալի կը դարձնեն:

Հաճընի մասին մեր հին պատմիչները չեն գրեր: Չամչեան զայն կը նոյնացնէ Հարգամ աւանին հետ, որուն երկու եպիսկոպոսները կը յիշուին ԺԴ դարուն, Անդրէաս՝ 1307ին, եւ Ստեփանոս՝ 1311ին:

ՊԱՏՄԱԿԱՆ

Հաճըն երկար ժամանակ մը կէս անկտիս ապրեցաւ: Եւրոպացի ճանապարհորդներ կ'ըսեն՝ թէ հոն երկուքէն երեք հազար տուն հայութիւն մը կ'ապրէր: Թուրքերը համեմատաբար սակաւաթիւ էին: Երբ Ֆրանսացի Թեքսիէ ուղեւորը Ձէյթունէն 1836ին Հաճըն կու գայ, Հաճընցիները յաղթանդամ եւ սակաւախօս կը գտնէ, եւ երբ տեղւոյն թուրք առաջնորդին կը հարցնէ՝ թէ ստո՞յգ է որ կրնան 10.000 կռուողներ մէջտեղ հանել պէտք եղած ատեն, ան կը պատասխանէ՝ այո՛, կրնանք, Հայոց օգնութեամբ՝:

Հ. Ղ. Ինճիճեան, իր Նոր Հայաստան գրքին մէջ, կը գրէ 1806ին. «Ի վերայ բլրոյ ունի բերդ փոքրիկ»²: Քաղաքին հիւսիսակողմը կը գտնուի նշանաւոր Ս. Յակոբի վանքը, զորաւոր պարիսպներով շրջապատուած. զայն նորոգած է 1554ին Խաչատուր եպիսկոպոս: Շուրջ 170 տարի վերջ կը յիշուի

9. Անդ: Հմմտ. Սիսուան, էջ 520-521:

1. Սիսուան, էջ 164-166:

2. Ինճիճեան, Աշխարհագրութիւն. Հայաստան, էջ 318:



Հանքնի բերդին հիւսիս-արեւմտեան աշտարակը (Ռ. Էտուրքոս)
 La tour nord-ouest de la forteresse de Hadjin (R. W. Edwards)



Բերդին արեւմտեան շինուածքին տեսքը հարաւ-արեւելէն (Ռ. Էտուրքոս)
 Le bâtiment ouest de la forteresse vu du sud-est (R. W. Edwards)



Արեւմտեան շինուածքին տեսքը հիւսիս-արեւելէն (Ռ. Էտուրքոս)
 Le bâtiment ouest vu du nord-est (R. W. Edwards)

Հաճընցի Յովհաննէս եպիսկոպոսը, որ յետոյ Սիւսի կաթողիկոս եղած է (1719-1726): Քաղաքը ունի նաեւ երեք եկեղեցիներ, Ս. Գէորգ, Ս. Աստուածածին եւ Ս. Թորոս. վերջինիս մասին կ'ըսուէր՝ թէ Թորոս իշխանէն շինուած ըլլար³: Հաճընի բերդը եւ Ս. Աստուածածին եկեղեցին շինուած էին մօտաւորապէս 200 մեղր բարձրութիւն ունեցող ժայռի մը գագաթին, որուն ստորոտը խիտ առ խիտ կը շրջապատէին քաղաքին տուները: 1861ին բերդի կատարէն հսկայ ժայռ մը փրթելով վար գլորած եւ բազմաթիւ տուներ խորտակած է իր ընթացքին մէջ, աւերակներուն տակ թաղերով բազմաթիւ հայեր⁴:

ԱՆԴՐԻՈՒՆ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Անդրիուն կը յիշուի Սմբատ Սպարապետ եւ Մ. Ուռհայեցի պատմիչներէն. աակա՞ն անոր տեղւոյն մասին որոշ ցուցմունքներ չեն տար: Մ. Ուռհայեցիի նկարագրութենէն կ'երեւի որ Անդրիուն անառիկ բերդ մըն էր եւ շինուած բարձր ժայռի մը վրայ՝ ուսկից, կ'ըսէ պատմիչը, վար նետեցին պիղծ յոյն արեղան՝ զոր Պեխտ իշխանը սպաննած էր. «ձգեցին զպիղծ արեղայն ընդ բարձր քարձայր բերդին»¹: Ալիշան կը համարի որ Անդրիուն բերդը Հաճընի կողմերը գտնուէր, ինչ որ կը հաստատէ 1331ին Ակներ վանքին մէջ գրուած Աւետարանի մը մեկնութեան յիշատակարանը. «մերձ յաստուածապահ ամրոցն որ կոչի Անդրիունին բերդ»²: Յիշատակագիրը ցոյց կու տայ թէ Աւետարանը գրուած է Ակներ վանքին մէջ, որ վը գտնուէր Անդրիունի բերդին մօտ: Իսկ Ակներ վանքը, ըստ Տոքթ. Տէր Ղազարեանի, կը գտնուէր Վահկային հիւսիսը, Բարձրբերդի մօտերը³:

Ալիշան կ'ըսէ թէ Մարաշի դաւառին մէջ կը յիշատակուի Էմտէրուն անունով վիճակ մը կամ գաւառ մը, որուն դիրքը թէեւ անորոշ է, քայքայ հաւանական կը թուի որ Հաճընի քովերը ըլլար, քանի որ Մաշտոցի մը յիշատակարանին մէջ, գրուած 1331ին, Կոստանդին անուն երէցէ մը, կ'ըսուի թէ «թարգմանեցաւ... յանուանեալ գեղն Անդրուն», որ ըստ Ալիշանի կը գըտնուէր Ջահանի գետահովտին մէջ եւ Մարաշի դաւառին մաս կը կազմէր⁴: Այս գիւղէն քիչ հեռու գետակ մը կ'անցնի, որ Անտրըն-Սու կը կոչուի եւ որ Ջահան գետին մէջ կը թափի. իսկ գիւղին քով կային եկեղեցւոյ մը աւերակները եւ անոր քով ալ բերդի մը մնացորդներն ու պարիսպները:

ՊԱՏՄԱԿԱՆ

Մ. Ուռհայեցի կը գրէ թէ 1076ի ժամանակները այս բերդին տէրն էր Էպիստ կամ Պիստ անունով հայ իշխան մը, որուն մասին կ'ըսէ պատմիչը թէ էր «այր քաջ եւ հզօր պատերազմող, ի տանէն Շիրակայ»⁵:

3. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ, Կիլիկիա, էջ 301-307:
 4. ՊՕՂՈՍԵԱՆ, Հաճըն, էջ 116-152:

1. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Բ, ճԺԲ, էջ 258: ՍՄԲԱՏ ՄՊԱՐԱՊԵՏ, էջ 84:
 2. ԽԱԶԻԿԵԱՆ, ԺԴ, էջ 251:
 3. Յ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ, Կիլիկիա, էջ 52:
 4. ՍԻՍՏԱՄ, էջ 168-169:
 5. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Բ, ճԺԲ, էջ 257: ՍՄԲԱՏ ՄՊԱՐԱՊԵՏ, էջ 84:

Անշուշտ այս Պեխտ իշխանը ուրիշ մէկը չէր՝ եթէ ոչ Վեստ Պաշտուրը Շիրակացի, որ Անիէն գաղթած եւ եկած հաստատուած էր Կիլիկիոյ մէջ, եւ իր քաջութիւններով անուանի եղած՝ 1035ի ժամանակները: Յոյն կայսրերը տեսնելով այս մարդուն քաջութիւնները անոր հողեր եւ բերդեր տուած եւ մինչեւ իսկ զինքը Անտիոքի դուքս վարդեր էին: Այդ բերդերէն մէկն էր Անդրիուսի բերդը: Պեխտի համար մեր պատմիչները կ'ըսեն՝ թէ էր «Հայոց իշխան»: Իսկ Սմբատ՝ թէ «էր յազգէն Հայոց»: Թէեւ յոյներու ստիպումին վրայ յունադաւան եղած էր, «բայց նա ծածուկ հայրենի հաւատն պաշտէր զսրբոյն Գրիգորի»⁶:

Պեխտ կարճ ժամանակի մէջ Կիլիկիոյ նշանաւոր իշխաններէն մէկը կը դառնայ, եւ, Փիլարտոս հայուն կողքին, ընդարձակ հողերու տէր կ'ըլլայ, Մարաշէն մինչեւ Եփրատի ափերը: Պեխտ հաւանաբար Փիլարտոսի ամէնէն հզօր գործակիցներէն մէկը եղած ըլլայ, թէեւ պատմութիւնը այս մասին կը լռէ⁷:

Պեխտի պէս փառաւոր իշխան մը, սակայն, ողբերգութեամբ մը կը կնքէ իր կեանքը. հիւանդանարով անկողին կ'իյնայ, եւ որովհետեւ յունադաւան էր՝ քովը իբրեւ խոստովանահայր կը դնեն յոյն արեղայ մը, որ կը հսկէր սնարին մօտ:

Պեխտ, ինչ որ կ'երեւի, շատ կարեւորութիւն չէր տար արեղային խորատներուն եւ խորհուրդներուն. ուստի արեղան կատղած Պեխտի վրայ՝ գիշեր մը զայն իր անկողինին մէջ կը խեղդէ:

Հազիւ կ'իմանան ասիկա Անդրիուսի հայ իշխանները, նոյն օրն իսկ կը բռնեն արեղան, չարաչար կը տանջեն, «եւ գահավէժ արարին վերուստ ի վայր ի կլայէն, եւ սատակեցաւ անդ»⁸: Պեխտի մահը տեղի ունեցած է՝ ըստ Մ. Ուռհայեցիի եւ Սմբատ սպարապետի՝ 1076ին:

Այս թուականէն վերջ Անդրիուս անգամ մը եւս կը յիշուի Աւետարանի մը յիշատակարանին մէջ, այն՝ զոր վերեւ մէջբերեցինք. ինչ որ նշան է թէ Անդրիուս բերդը կանգուն էր մինչեւ 1331 թուականը: Դժբախտաբար կը պակտին ուրիշ տուեալներ:

6. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 257-258: ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 83-84:
 7. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, ամդ:
 8. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, ամդ: Տես նաեւ ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 84:

ՍԱԶՈՏ ԽԱԶԻ ԲԵՐԴ

Մազոտ խաչի բերդը կը գտնուէր Ճիհուն գետի մէկ հովիտին մէջ, ըստ Սմբատ սպարապետի, որ անոր իշխան վը համարի Սիմոն անունով մէկը, «իշխանն Մազոտ Պաշին Սիմոն»¹: Սա ներկայ եղած է 1198ին Լեւոն մեծագործի թագադրութեան հանդէսին:

Ո՞վ էր Սիմոն իշխանը, որ տէրն էր Մազոտ Պաշ բերդին: Մեր պատմութեան մէջ ուրիշ առթիւ չի յիշուիր այս անունը. հաւանաբար յոյն կամ լատին իշխան մըն էր, որ հաւատարմութիւն խոստացած էր Լեւոն Բ.ի եւ անոր հովանիին տակ կ'իշխէր Մազոտ Պաշ բերդին. ապրած է ԺԲ. դարու վերջերը: Իրեն յաջորդ կը նշանակուի 1261ին Գրիգոր անունով ուրիշ իշխան մը, որ գուցէ իր որդին էր եւ որ մասնակցած է Քարամաններու դէմ մղուած պատերազմին, Կոստանդին թագաւորահօր մահէն վերջ²:

Քարամանները Իկոնիոյ շրջանին մէջ հաստատուած թուրքմէն ցեղախումբեր էին, որոնց առաջնորդն էր Քարաման: Ասոնք վը յարձակին Իսաւրիոյ եւ Սելեւկիոյ շուրջ գտնուող բերդերուն վրայ, ուր հայեր կը բնակէին, Հեթում թագաւորի օրով: Սաստիկ կռիւ մը տեղի կ'ունենայ Հայերուն եւ Քարամաններուն միջեւ. Կռիւին վը մասնակցին բազմաթիւ հայ իշխաններ: Քարամանները կը յառաջանան դէպի Տարսոն, հայ իշխանները Կոստանդին թագաւորահօր խորհրդով կու գան Տարսոնը պաշտպանել ու անկից ցորենի պաշար առնելով՝ բեռցուցած սայլերու վրայ՝ երթալ Սելեւկիան ազատելու: Երբ Սելեւկիոյ դռներուն առջեւ կը հասնին՝ բեռնաւոր սայլերով ու զինուորներով, կը տեսնեն որ Քարամանները Սելեւկիան պարպեր եւ քաջուեր գացեր են. շատ կը զարմանան՝ առանց կռիւի Սելեւկիան ազատած ըլլալուն համար, բայց որպէսզի իրենց հետ բերուած ցորենի պաշարը ետ չվերադարձնէին, զայն Սելեւկիոյ բերդին մէջ կը պարպեն եւ պահակազունդ մը հոն թողլով կը հեռանան:

Վերադարձի ճամբուն վրայ Քարամանները յանկարծակի բերելով Հայերը, չորս կողմերէն կը յարձակին Հեթումի զօրքերուն վրայ. Հայերը, սակայն, չեն այլայլիր եւ հակադարձակման կ'անցնին: Լեւոնը կ'իրճերուն

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:
 2. ԱՅԴ, էջ 240:

մէջ ձգելով քարաման գործերը՝ փախուստի կը մատնեն թշնամին: Այս կռիւ-
ւին մէջ կը վիրաւորուի Քարաման, որ բանակ չհասած կը մեռնի:

Հեթում ալ այս կռիւին մէջ կը կորսնցնէ իր իշխաններէն Կոստանդին Պայլը, Սոմայեցի կոչուած իշխանը, եւ Գրիգոր Մագոս իշխանը, ինչ-
պէս կը գրէ պատմիչը. «Եւ ի գորացն արքային սպանաւ պայլն Կոստանդին
Սոմայցին, եւ իշխանն Գրիգոր, որ էր տէր Մազոտ խաչի»: Պատմիչը Գրի-
գոր իշխանին մեռնելու պատճառն ալ կու տայ. «զաջոյ ձեռինն նորա գրոյթն
սրով հարեալ ի բաց ընկեցին, եւ սակաւք կորեան ի քրիստոնէիցն յայնմ
աւուր ...»³:

Սակայն այս իշխաններն ալ իրենց կեանքը ձրի տուած չէին, անոնք ալ
իրենց կարգին, ինչպէս ըսինք, սպաննած էին թշնամի բանակին առաջնորդը՝
Քարամանը, եւ ինչպէս կ'ըսէ պատմիչը. «խոցոտեցին նիզակաւ եւ նետիւ
զՊարամանն, եւ դարձաւ ամօթով, եւ յետ սակաւ աւուրց սատակեցաւ ի
խոցուածէն անօրէնն այն»⁴:

Ս Ի Մ Ա Ն Ա Կ Լ Ա Յ

Միմանակլայ կը գտնուէր Անարզարայի մօտերը, համանուն վանքին
զիմաց: Թորոս Բ-ի առաջին չորս ստացուածքներէն մէկն էր, ինչպէս որ
ցոյց կու տան՝ ոչ միայն պարզեւազրին եւ Վիլլեպրանտի խօսքերը, այլ եւ
յայտնի վկայութիւնը Ներսէս Լամբրոնացիին, որ ոչ միայն բերդ՝ այլ եւ
անոր մօտ վանք ըլլալն ալ ցոյց կու տայ. «Եկեալ ի վանսն, որ Միմանակլայ
կոչի՝ հուպ Անարզարայ, յորում բազում գրեանք ի յունական գիրս աւան-
դեալ է, մանրամասնաբար խուզեալ՝ գտի զայս գիրսս [Կանոնաց Ս. Բենե-
դիկտոսի – Հ. Մ. Յ.], եւ հրճուեալ ի վերայ անչափ խնդութեամբ... առեալ
զնացի ի հայրապետական աթոռն՝ որ կոչի Հռոմկլայ՝ յային Եփրատայ»¹:

Միմանակլայի 1145ին արդէն տիրած էին Ռուբինեանները եւ զայն իրենց
կալուած ըրած. այնպէս որ Երբ Լեւոն իշխան իր որդիներով գերի կը տարուի
Պորիս, եւ Թորոս Բ. փախչելով Կիլիկիա կը վերադառնայ, Պատմիչը կ'ըսէ.
«Հասանէր ի լեռնակողմն Տաւրոսի, ի սահմանս Վահկայի»²: Թորոս Բ. հոն
ժամանակ մը ծածուկ ապրելով, հետզհետէ ինքզինքը կը յայտնէր իր մտերիմ
իշխաններուն եւ սպա քահանաներուն, եւ անոնց ձեռնտուութեամբ կամաց
կամաց դարձեալ կը տիրէր Վահկայի եւ չըջակայ բերդերուն, որոնցմէ մէկն
էր նաեւ Միմանակլան. «Եւ օգնութեամբ Աստուծոյ փոքր փոքր տիրեաց հայ-
րենեաց իւրոց եւ առ զՎահկայն, զԱմուտայն, եւ զՍիմանակլայն, եւ զԱռիւծ
բերդ, եւ այլ գաւառս էառ ընդ ձեռամբ»³: Պատմիչին խօսքերէն կը հետեւի
որ Միմանակլան եւ միւս բերդերը Ռուբինեաններուն առաջին հողերն ու բեր-
դերն էին՝ զորս գրաւած էին, երբ եկած էին Կիլիկիա: Թէ այս շրջանէն վերջ
ի՞նչ պատահած է, ի՞նչ անցքեր անցեր են անոր գլուխէն, որոնք տիրած են
սնոր՝ պատմիչները կը լռեն: Լեւոնի թագաւորութեան օրով՝ նշանաւոր էր
անունով եւ անձով Սիրուհի, մէկը՝ զոր պատմիչը կը կոչէ «Սիրուհի իշխանն
Միմանակլային»⁴: Սա 1189ին ներկայ եղած է Լեւոնի թագաւորութեան հան-
դէսին: Ո՞վ էր Սիրուհի. գուցէ իշխանուհի մը՝ որ տիրած է Միմանակլային,
բան մը՝ զոր որոշ չենք կրնար ըսել:

3. ԱՅԳ:
4. ԱՅԳ, էջ 239-240: Տես նաեւ Սիսուան, էջ 196:

1. ՅՈՎՍԷՓԵԱՆՅ, սիւն. 479:
2. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 164-165:
3. ԱՅԳ, էջ 164-165:
4. Սիսուան, էջ 200-201:

Լեւոնի թագաւորութենէն վերջ՝ գրեթէ դար մը ամբողջ չի յիշատակուիր Սիմանակլան մեր պատմիչներէն. եւ յանկարծ ժ.Գ. դարուն վերջերը եւ ժ.Գ. դարուն սկիզբները կը յիշուի իբրեւ բերդին տէր՝ Օշին Լամբրոնացի, որդին Հեթումի՝ Հայոց մարաջախտին⁵ :

Անունը եւ յունական գիրքերու գիւտը, համանուն վանքին մէջ, ենթադրել կու տան որ, նախ քան Հայոց հող տիրելը, թէ՛ վանքը եւ թէ՛ բերդը Յոյներուն կը պատկանէին եւ անոնցմէ շինուած էին :

5. Սիսուած, էջ 200:

ԿՈՊԻՏԱՌՈՒ ԲԵՐԴ ԿԱՍ ԿՕՍԻՏԱՌԱՅ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Կոպիտառու բերդը կիլիկեան հին եւ նշանաւոր բերդերէն մէկն էր, հաւանաբար շինուած նախկին կիլիկեցիներէն եւ կամ յոյներէն. կը գտնուէր անմերձենալի դիրքի մը վրայ, ամուր եւ անառիկ պարիսպներով :

Կոպիտառու բերդի դիրքի մասին մեր պատմիչները զանազան ցուցմունքներ ունին. Սմբատ Սարգսպետի համաձայն, կը գտնուէր ընդմէջ Բարձրբերդի եւ Մոլեւոնի. Վարդան աշխարհագիր կ'ըսէ՝ «Կիլիկիէ, որ է Սիս, մէջ կայ Ասորոց եւ Գամրաց. ունի քաղաքս եւ անուանի աւանս, եւ բերդս բազումս՝ զբերդն Կոպիտառոյ եւ զԲարձրբերդն մօտ ի Մոլեւոն»¹ : Վարդան Կիլիկիոյ բազմաթիւ բերդերէն կը յիշէ միայն Կոպիտառուն եւ Բարձրբերդը, իբրեւ Կիլիկեան նշանաւոր բերդեր, որոնք Մոլեւոնի բերդին մօտ կը գըտնուէին :

Կոպիտառու բերդը հաւանաբար Կիլիկիոյ սահմանային բերդերէն էր, դէպի Գամրաց աշխարհը տանող ճամբուն վրայ. այս շրջանիս մէջ, հին ժամանակներէ, Արծրունեաց Սենեքերիմ թագաւորի 1022ի զաղթի միջոցին, հոս եկած եւ հաստատուած էին հայ իշխաններ իրենց ժողովուրդին հետ, եւ հոն բիւզանդական հովանիի տակ կազմած էին կէս անկախ շրջաններ :

ՊԱՏՄԱԿԱՆ

Ռուբէն Ա., 1080–1093 տարիներուն ամբողջապէս տիրապետեր է այս շրջանէն շատ մը բերդերու, ինչպէս կը գրեն պատմիչները. բայց թէ որո՞նք էին այս բերդերը եւ ի՞նչ շրջանակ ունէին, եւ ո՛ւր էին, դժուար է որոշել. որովհետեւ մեր պատմիչները յստակ կերպով չեն ներկայացներ անոնց դիրքը, այլ խառնակ եւ չփոթ : Սամուէլ Անեցիի շարունակողը կը գրէ. «Գայ եւ առնու զամբոցն զԿաւսիտառայ, յորում դնէ ինքեան տուն իշխանութեան, եւ տիրէ լեռնակողմանցն Փռիւզոյ»² : Նոյն պատմիչը ուրիշ առթիւ կ'ըսէ, թէ նախ տիրած է Կաւսիտառայի, ապա եկած է Փռիւզիոյ կողմերը եւ տիրած է զԻւղի մը՝ որ Կօլմօզօլայ կը կոչուէր³ : Վահրամ գրիչ ալ աւելի որոշ կը գրէ.

1. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., Աշխարհացոյց, էջ 50:
2. ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, Յաւելուած, Գ, էջ 214:
3. ԱՅՊ, էջ 116: Յաւելուած, էջ 204:

«Ռուբէն անուն վերածայնեալ,
զԿոստատոսայ ամրոց կալեալ»³ա:

Պատմիչներու այս ըսածներէն կարելի չէ որոշ հետեւանք մը հանել Կոստատոսայ բերդի դիրքին նկատմամբ եւ ոչ ալ Ռուբէնի կատարած գրաւումներու մասին. այս որոշ է որ Ռուբէն Ա. նախ հոն հաստատուած է, եւ կարելի է ըսել թէ Կոստատոսայ բերդը Փոփուկիոյ արեւելեան սահմանին մօտ էր, եւ անկից է որ Ռուբէն կ'երթայ Տաւրոսի լեռները եւ կը բնակի Կորմուզու կամ Կոմուզու գիւղը, ուր կը գտնէ իրմէ առաջ եկած եւ հաստատուած ազգայիններ. զանոնք կը համախմբէ իր շուրջը եւ կը տիրէ լեռնային կողմերուն⁴:

1091-1098ի շրջանին Կոստատոս բերդին տէրն էր Կոստանդին՝ Ռուբէն Ա.ի որդին, «մեծ իշխանն Հայոց Կոստանդին, որդի Ռուբենայ, որ ունէր զՏօրոս լեռան, ի յաշխարհին Կոստատոսայի ի Մառապա, որ եւ բազում գաւառաց տիրեալ էր»⁵:

Հոս Մ. Ուռհայեցի բերդին հետ, նոյն անունով, «աշխարհ» մ'ալ մեղի կը ներկայացնէ, եւ անոր մէկ գաւառը՝ Մարպա կամ Մառապա, որ Անարզարայի մօտ էր եւ զոր անոր սահմանակից ցոյց կու տայ, Երբ կ'ըսէ. «Յայսմ ամի (1110) զօրաժողով արարին զօրքն թուրքաց, եւ մտին ի յաշխարհն Անարզարայ. եւ արար աւար գամենայն երկիրն եւ զՄարպայ»⁶: Նոյն բանը կ'ըսէ նաեւ ուրիշ կերպով Մարտո Սպարապետ. «Մտին յաշխարհն Անարզարայ եւ կոտորեցին զքրիստոնեայս՝ գաւառին Մարպայոյ»⁷: Արդ ըստ Մ. Ուռհայեցիի կարծես նոյնն են Կոստատոս եւ Անարզարայ աշխարհները. իսկ Մարպա կամ Մարապայ, երկուքին ալ համաձայն, Անարզարայի մէկ գաւառն էր:

Կոստանդին Ա.ի այս կողմերուն տիրապետութենէն գրեթէ դար մը վերջը, դարձեալ կը յիշուի Կոստատոսայ բերդը, ցաւալի առիթով մը. 1193ին կը վախճանի Գրիգորիս Գ. Կաթողիկոսը, «եւ նստաւ յաթոռն իւր որդի քեռն իւրոյ տէր Գրիգորիս, որ կոչէր Վահրամ, տղայ տիօք...: Յորժամ եղեւ կաթողիկոս՝ ոչ տանէր զառաջին հնազանդութիւնն ամենեցուն, որպէս յորժամ ընդ դատարարակալ էր, այլ ինքնիշխանութեամբ տանէր զհայրապետութիւնն, որպէս տեսեալն էր ի քեռն իւր: Յայնժամ մտխոյցեալ ընդ նա աւագագոյն մարդիկն, առաքեն առ Լեւոն (Ա.) եւ ասեն. ոչ ունի աս իմաստութիւն վարել զհայրապետութիւնն որպէս արժան է, եւ յօգեցին որպէս կամեցան զնմանէ: Եւ զայս արարին միանգամ եւ երկիցս եւ երիցս, մինչեւ շարժեցին զԼեւոն (Ա.) ի կամս իւրեանց»⁸: Իշխաններ եւ աւագանին կը գրըգրեն Կաթողիկոսին դէմ Լեւոնը, մինչեւ շարժեցաւ Լեւոն «ի կամս իւրեանց»:

3ա. ՎԱՀՐԱՄ ՐԱՔՈՒՆԻ, էջ 192:
4. Սիսուան, էջ 169:
5. ՄԱՏԹԻՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, Բ, ճԺ, էջ 312:
6. Անդ, Գ, ԲԵ, 393-394:
7. ՄՄՔԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 134:
8. Անդ, էջ 204-206:

Լեւոն Հոռմկլայ կը զբնէ Յովհան՝ Սիսի եպիսկոպոսը, որ Կաթողիկոսը խաբէութեամբ բռնէր եւ Սիս բերէր. Յովհան եպիսկոպոս կ'երթայ Հոռմկլայ «եւ մտեալ առ կաթողիկոսն պատուով եւ մեծարեալ որպէս զհիւր եւ զազգային»: Յովհան բերդի ծառաներուն միջոցով, մինչդեռ տեղանի նստած էին, բռնել կու տայ կաթողիկոսը. «եւ կալեալ զնա եղին յարգելանի եւ ամրացոցին պահապանօք»: Հուսկ կ'ըսէ պատմիչը, «եւ առեալ տէր Յովհաննէս զգատապարտեալ հայրապետն երբ առ Լեւոն, եւ եղին զնա ի պահեստի ի բերդն Կոստատոսայ, ժամանակս ինչ կալ անդ»:

Կաթողիկոսը, բերդի բնակիչներու խորհուրդով, կ'որոշէ փախչիլ եւ երթալ Հոռմկլայ, եւ որովհետեւ Կոստատոս բերդը, ըստ Օրպէլեան պատմիչին քարաժայռի մը վրայ էր, զոր «Քարն Կոստատոս» կը կոչէ, Գրիգոր Ե. «առեալ կտաւ կախեցաւ ի գիշերի իջանել ի բերդէն, եւ կտաւուն անկն բեկեալ պատառեցաւ եւ անկեալ ի խոնարհ բարձաւ մեռեալ, եւ առեալ տարան ի Դրազարկն եւ անդ թաղեցին զնա...»⁹: Ասկէ ան կոչուեցաւ Գրիգոր Ե. Քարավէժ:

Լեւոնի թագադրութեան տարին՝ 1198ին, դարձեալ Կոստատոս բերդին իշխան կը յիշուի Կոստանդին անունով մէկը. «Իշխանն Կոստատոսայ Կոստանդին»¹⁰, որմէ վերջ մինչեւ ԺԴ. դար անոր յաջորդները անծանօթ կը մնան պատմութեան մէջ:

1307ին Սիսի ժողովին, Կոստատոս բերդին իշխան կը յիշուի Օշին, եւ այս շրջանին է որ Կոստատոս բերդը «մանր ուսման» կեդրոն կ'ըլլայ. յիշատակարանի մը մէջ կը կարդանք այս մասին. «զբեցաւ տետրակս այս մանրուսման ի թուին Հայոց ՉԶԷ (1338), յանառ դղեակս, որ կոչի Կոստատոս»¹¹:

Ասկէ վերջ ԺԵ. դարուն անգամ մը եւս կը յիշուի Կոստատոս բերդը, երբ 1467ին Շահսուար Կիլիկիա կը մտնէ, եւ կը կողոպտէ գիւղեր եւ աւաններ. ժամանակագիր մը կը գրէ. «եւ մեք եկաք ի Կոստատոս բերդն»¹², այսինքն Շահսուարի Երեսէն փախչելով ժողովուրդը կ'ապաստանի Կոստատոս բերդին մէջ, ինչ որ ցոյց կու տայ թէ տակաւին բերդը կանգուն էր եւ բնակուած եւ անառիկ, թէ եւ չի յիշատակուիր թէ ո՛վ էր անոր տէրը կամ իշխանը, որովհետեւ կիլիկեան թագաւորութեան վերջանալէն արդէն շուրջ հարիւր տարիներ անցեր էին:

Կոստատոս բերդի մասին կը գրէ նաեւ Տօքթ. Յ. Տէր Ղազարեան եւ, իր աշխարհագրական քարտէսին մէջ, զայն կը գետեղէ Սիսի շրջանին մէջ: Կոստատոս բերդը թէ եւ փոքրիկ դղեակ մըն էր, բայց կիլիկեան պատմութեան մէջ անուանի՝ իր ամուր եւ անառիկ դիրքով, ասոր համար ալ կոչուած է Կոստատոս բերդ կամ Կոստատոս քար:

Կոստատոս բերդին այս ամրութեան պատճառով, երբ Իկոնիոյ սուլթանը Մաքսուտ Կիլիկիոյ վրայ կ'արշաւէր եւ Մովք կը մօտենար, Գրիգոր

9. Անդ:
11. ԽԱՉԻԿԻԱՆ, ԺԴ, էջ 315:
12. Հայագատում, ԹԶ, էջ 579: Տես նաեւ Սիսուան, էջ 157:

Պահլաունի կաթողիկոսը եւ Ս. Ներսէս Շնորհալի կը փախչին Ծովքէն եւ Կոպխտառու քար բերդին մէջ կ'ապաստանին. այս առթիւ Շնորհալի կը գրէ.

«Մեք ի դղեկէն որ Ծով կոչի,
Որ սեփական մեր էր տեղի...
Անցեալք ի յայս կոյս Տօրոսի,
Բնակեալ հանդէպ ամրականի,
Որ Այլասեռ քար անուանի»¹³ :

Շնորհալի Կոպխտառու բերդը Այլասեռ քար կը կոչէ:

Տոքթ. Յ. Տէր Ղազարեան կը գրէ. «Կոպխտառ, ինչպէս անունէն կը տեսնուի, յունական ծագում ունէր: Ինչպէս Վահկա, այսպէս ալ Կոպխտառ իր անմերձենալի դիրքին պատճառով, իբրեւ բանակատեղի ծառայած է»:

Կոպխտառ այժմու Թափան կոչուած տեղը պէտք է որ ըլլայ, որ կը գըտնուի Վահկայի եւ Կոկիսոնի ճիշտ մէջտեղը:

ԱՄՈՒՏԱ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Լեւոնային Կիլիկիոյ բերդերէն մին էր Յամուտայ կամ Ամուտայ բերդը, որ ներկայիս Հեմետիէ քալէսի կը կոչուի. կը գտնուէր Ջահան գետին հովիտին մէջ, կոնստանտնուպոլիսէ մը զազաթին վրայ: Արար պատմիչներն ալ կը վկայեն թէ Ամուտա կը գտնուէր Ջահան գետի անցքին վրայ, նոյնպէս Վիլլեպրանտ ուղեգիրը, որ այցելութեան զացեր էր Լեւոն մեծին, կ'ըսէ թէ Ջահան գետը Ամուտա բերդին ստորոտէն կ'անցնէր: Լանկլուա կը ճշդի զայն նոյնացնել թումուլու քալէ բերդին հետ, որ Անարզարայի հարաւը կը գտնուէր:

ՊԱՏՄԱԿԱՆ


Թորոս Բ. իշխանը երբ գերութենէն կը վերադառնար, Ասորիքի կողմէն մտնելով Կիլիկիա, եւ հոն գտնելով իր Ստեփանէ յեղբայրը, անոր հետ միացած կը գրաւէ նախ Ամուտայ բերդը եւ ապա Վահկան:

«Նախ գլխուտայն եղեն առեալ,
Ապա նովաւ այլոց տիրեալ»¹,


կը գրէ Վահրամ տաղասաց: Թորոսի առաջին գրաւած բերդերուն կարգին էին նաեւ Սիմանակլան եւ Առիւծ բերդերը: Միւթթար Այրիվանեցի կը սխալի՝ երբ Թորոս Բ. ի գործերը կը վերագրէ Թորոս Ա.ին, թէ եւ ճիշտ կ'ըսէ՝ թէ «Թորոսն (Բ.) էառ գլխուտայն եւ սկսաւ զօրանալ»²: Այս մասին կը գրէ նաեւ Միքայէլ Ասորի, թէ Թորոս Բ., Լեւոն իշխանի որդին, Պոլսէն փախչելով, ուր յոյները զինքը իր հօր հետ գերի տարած էին 1125ին, Կիլիկիա հասնելուն՝ նախ կը գրաւէ Ամուտան. «Եկն յերկիրն Կիլիկեցոց եւ չողաւ առ Տէր Աթանաս Մետրապօլիտն Ասորոց՝ հետեւակ, եւ ետ նմա զիւր ձին եւ երկուտասան այր... եւ ած զնա յԱմուտայն, որ կայր ընդ ձեռամբ նորա, եւ ի վաղիւն տեսին զնշանակս նորա եւ ծաննան թէ ողորմութիւն Աստուծոյ եհաս

13. ՏԱՇԵԱՆ, Յուլի, ձեռ. 104, էջ 514: Տես նաեւ Յ. Տէր ՂԱԶԱՐԵԱՆ, Կիլիկիա, էջ 32:

1. ՎԱՀՐԱՄ ՐԱԲՈՒՆԻ, էջ 202:
2. ՄԻԹԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ, էջ 61: Սիսուան, էջ 200:




Ամուտայի միջնաբերդը հիւսիսէն (Հելլենկեմպեր)
 Le donjon d'Amouda vu du nord (Hellenkemper)



Արեւմտեան դիտարանին ներքը՝ արեւելէն դիտուած (Ռ. Էտուարտս)
 L'intérieur de la tour de contrôle orientale vu de l'est (R. W. Edwards)

Ամուտայի յատակագիծը: Սանդղաչափ՝ 1:1.000:
 1. Բուրգին տեղը (հաւանակամ), 2. Շտեմարան,
 3. Մատուռ, 4. Միջնաբերդ (Հելլենկեմպերէն)

Plan d'Amouda. Echelle 1:1.000
 (de Hellenkemper)





Ամուտայի ընդհանուր տեսքը (Հելլենկեմպերի)
Amouda. Vue générale (de Hellenkemper)



Ամուտա. մատուռը (Հելլենկեմպերի)
Amouda. La chapelle (de Hellenkemper)

ի վերայ քրիստոնէից... եւ անդուստ ընդարձակեցաւ եւ հառ զբարզում տեղիս»³ :

ԺԲ. դարուն վերջը Ամուտայի բերդին տէրն էր Սիմոն անունով մէկը, Լեւոնի Թագաւորութեան օրով, թէեւ Սմբատ Սպարապետ զայն չի յիշեր:

Լեւոն Մեծագործ 1212ին մասնաւոր պարգեւագրով մը Ամուտա բերդը ուրիշ քանի մը զիւղերով նուէր տուաւ Տեւտոնեան ասպետներուն:

Լեւոնի այս նուէրը մասնաւոր կոնդակով մը վաւերացուց եւ հաստատեց Իննուկենտիոս Գ. Պապը, 27 Փետրուար 1213ին:

Վերեւ մեր յիշած Վիլլիպարանտը, որ Լեւոնի քով կեցած է շուրջ ամիս մը, եւ ապա անցած Ամուտա՝ Տեւտոնեան ամրոցը, երբ կը նկարագրէ Ջահան գետը, կ'ըսէ թէ հայոց բարձր լեռներէն իջնելով կու գայ եւ Ամուտա բերդին ստորոտէն կ'անցնի՝ քսուելով անոր պարիսպներուն:

Կէս դարէն աւելի Ամուտայ բերդը կը մնայ Տեւտոնեան Ասպետներու ձեռքը. սակայն երբ 1266ին կը սկսի Վելիպարանտ արշաւանքը Կիլիկիոյ վերայ, Լեւոն Բ-ի գերութենէն եւ անոր եղբոր Թորոսի մահէն վերջ՝ Մառի պատերազմին, Սուլթանը յաղթանակով կը մտնէ Կիլիկիա եւ բազմաթիւ բերդերու հետ կը գրաւէ նաեւ Ամուտան, անցնելով ձիհուն գետի հունէն:

1298ին Եզրպատացիները դարձեալ կու գան Ամուտայի վրայ, Ջահան գետի ջուրերը բարձրացած ըլլալով՝ չեն կրնար անցնիլ անոր հունէն. ուստի կ'աւերեն եւ կը Վողոպտեն Ամուտայի շրջակայքը:

Ամուտայի բերդին գէմ, գետին աջ կողմը կը գտնուէր Հեմետէի զիւղը, ամբողջութեամբ հայերէ բնակուած:

3. ՄԻՆԱՅԷԼ ԱՍՈՐԻ, էջ 422:

ԱՌԻՒԾ ԲԵՐԴ

Լեոնային Կիլիկիոյ բերդերէն էր Առիւծ բերդը, զոր կը յիշէ միայն Սմբատ Սպարապետ, ուրիշ քանի մը բերդերու հետ. անոր տեղը որոշ չենք գիտեր. հաւանաբար կը գտնուէր Վահկայ, Ամուտայ եւ Սիմանկլայ բերդերու շրջանին մէջ, քանի որ անոնց հետ կը յիշուի:

Առիւծ բերդի շինողն ու շինութեան թուականը անորոշ կը մնան. Սմբատի պատմութենէն կ'երեւի որ Առիւծ բերդը, Ռուբինեանց Կիլիկիոյ մէջ հաստատուելու ժամանակն արդէն, իրենց դրաւած առաջին բերդերէն մէկն էր. սակայն Յունաց Վասիլ կայսրը 1145ին երբ կու գայ Կիլիկիա, Կապանին հետ կը գրաւէ նաեւ Առիւծ բերդը եւ գերի բռնելով Լեոն իշխանը իր երկու որդիներուն հետ Պոլիս կը դրկէ շղթայակապ: Հոն բանտին մէջ կը վախճանին Լեոն եւ իր որդին Ռուբէն. Թորոս Բ. սակայն յարմար առիթով փախչելով Պոլսէն կու գայ Կիլիկիա, եւ ինքզինքը կը յայտնէ հայ ժողովուրդին. իր շուրջը կը հաւաքէ քաջ հայեր, եւ բանակ մը կազմելով կը յարձակի Վահկայի վրայ, կը գրաւէ գայն, եւ նաեւ ուրիշ քանի մը բերդեր, ինչպէս կը գրէ Սմբատ Սպարապետ. «Եւ օգնութեամբ Աստուծոյ փոքր փոքր տիրեաց հայրենեաց իւրոց, եւ առ զՎահկայն, զՅամուտան, զՍիամանայ կլայն, զԱռիւծ բերդ եւ այլ գաւառս էառ ընդ ձեռամբ»¹:

Սմբատի խօսքերէն կ'երեւի որ, ինչպէս ըսինք, վերոյիշեալ բերդերը արդէն սկիզբէն Ռուբինեան իշխաններու ձեռքն էին, զորս յափշտակած էին Յոյներէն. Թորոս Բ., գերութենէն վերադարձին, զանոնք դարձեալ կը գրաւէ. այս իմաստով է որ պատմիչը կ'ըսէ «փոքր փոքր տիրեաց հայրենեաց իւրոց...»²:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 164-165:
2. Անդ:

ԸՆԿՈՒԶՈՒՏԻ ԲԵՐԴ

Կիլիկեան բերդերէն էր Ընկուզուտի բերդը. կը գտնուէր Ջահան գետին վերին հովիտին մէջ, ուր կը բարձրանային դէմ դիմաց Ալիշեր եւ Ընկուզուտ լեռները. Ընկուզուտի լեռան ստորոտն էին համանուն գիւղը եւ Ընկուզուտի բերդը:

Այս գիւղին մօտ եղած պէտք է ըլլայ նաեւ Ընկուզուտի վանքը, որուն վանահայրը եւ եպիսկոպոսը կը յիշէ Սմբատ Սպարապետ. «Տէր Մխիթար Եպ. Ընկուզտին». իսկ անոր իշխանն էր Պաղտիմ՝ «իշխանն Ընկուզտին Պաղտինն»¹: Ասոնք երկուքն ալ, Մխիթար Եպ. եւ Պաղտին իշխան, ներկայ եղած են Լեւոնի թագադրութեան հանդէսին 1198ին:

Ընկուզուտի բերդը, կը գրէ Գր. Գալուստեան, կը գտնուէր Մարաշի մօտերը, եւ անկէ չորս ժամ հեռու բլուրի մը գագաթին վրայ կը բարձրանար. հիանալի եւ օդատուն դիրք մը ունէր: Ներկայիս իր գիւղը կը կոչուի Քոզլուտեք (Ընկուզուտի ձոր). ունի բնակչութիւն մը՝ որ հին ատեն հաւանաբար քրիստոնեայ էին, եւ յետոյ իրենց դէմ ելած հալածանքներուն հետեւանքով իսլամացեր են: Ընկուզուտի բերդը այժմ կ'իսկործան վիճակի մէջ է²:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 209: Տես նաեւ Սիսուս, էջ 195:
2. ԳԱՂՈՒՍՏԵԱՆ, Մարաշ, էջ 321:



Վաներ. հիւսիսային սենյակի մուտքը հարաւ-արեւելքէն դիտուած (Ռ. Էտուարտս)
 Vaner (Gökveioğlu). L'entrée de la chambre nord vue du sud-est (R. W. Edwards)

ՎԱՆԵՐ ԲԵՐԴ

Լեւոնային Կիլիկիոյ բերդերէն մէկն էր Վաներ. հաւանաբար կը գտնուէր Մոլեւոնի բերդին մօտերը. անոր մէկ իշխանը կը յիշէ Սմբատ Սպարապետ իր պատմութեան մէջ, որ Մարազախտ տիտղոսն ալ կը կրէր, մեծ զինուորական մը ըլլալով. «Իշխանն Վաներոյն Վասիլ մարաջատն»¹: Սա ներկայ եղած է Լեւոնի թագադրութեան հանդէսին, որով սպրած ըլլալու է 1189ի ժամանակները. հաւանաբար Վասիլ՝ արքայական ընտանիքի մօտիկ անդամներէն մէկն էր, որուն կալուածները 1214ին, իր մահէն վերջ, կ'անցնին թագաւորական տան սեփականութեան. որովհետեւ Լեւոն Ա. թագաւոր, երբ իր Ռիթա դուստրը հարսնութեան պիտի տար Երուսաղէմի Յովհաննէս Պրիեն թագաւորին, հիւանդանոցի ասպետներէն տասը հազար բիւզանդական սառակին փոխ կ'առնէ իր աղջկան Ռիթային օժիտը լրացնելու, որուն փոխարէն ան գրաւի կը դնէ, ձկեր բերդին հետ, Վաներ բերդը իր սահմաններով, գիւղերով, արտերով եւ դաշտերով, անջրդի եւ ջրարբի տեղերը. ասոնց հետ կը յիշուին նաեւ ծովեզերեայ կալուածները:

Լեւոն Ա.ի այս պայմանագրին ստորեւ ստորագրած են նաեւ Կոստանդին Գունդատապլը, Վահրամ մարաջատն եւ անոր շօւրին եղբայրը, Լեւոն Տը Պուլիում եւ ասոնց ութը ասպետները 1214, 23 Ապրիլին Տարսոնի մէջ²: Ներկայիս թուրքերը Վաներ բերդը կը կոչեն Կէօվեիօղլու քաղաքի (Gökveioğlu):

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:
 2. LANGLOIS, Cartulaire, էջ 122-123:



Վաներ. ընդհանուր տեսք (Հելլենեմփեր)
 Vaner. Vue générale (Hellenkemper)



Վաներ. հիւսիսային պատին հարաւէն տեսքը (Հելլենեմփեր)
 Vaner. La muraille septentrionale vue du sud (Hellenkemper)



Վաներ. հիւսիսային սենեակին ներսը՝ հարաւ-արեւմուտէն դիտուած (Ռ. Էտուրքս)
 Vaner. L'intérieur de la chambre septentrionale vu du sud-ouest (R. W. Edwards)



Վաներ. սենյակի մը անբակները դիտուած հարաւ-արեւելէն (Ռ. Էտուըրտս)
 Vaner. Les ruines d'une chambre vues du sud-est (R. W. Edwards)



Վաներ. հիւսիս-արեւելեան անկիւնը (Ռ. Էտուըրտս)
 Vaner. Le coin nord-oriental (R. W. Edwards)



Վաների հարաւային ծայրը հիւսիս-արեւելէն դիտուած (Ռ. Էտուըրտս)
 L'extrémité sud de Vaner vue du nord-est (R. W. Edwards)



Հիւսիսային պատը, մասնակի տեսք (Ռ. Էտուըրտս)
 Le mur septentrional, détail (R. W. Edwards)

ՇՈՒՊԼԱՅ ԲԵՐԴ

Կիլիկեան բերդերէն մէկն էր Շուպլայ բերդը. զայն կը յիշէ միայն Գրիգոր Երէց, որ զայն կը կոչէ Շուպլայ կամ Շուպլաս բերդ. անոր ուրտեղ գտնուիլը չենք գիտեր. կը յիշուի 1138ի ժամանակները, երբ, յետ Լեւոն իշխանի գերութեան, կու գայ զայն գրաւելու Մելիք Մահմուտ կամ Ահմատ Դանիշմանեան սուլթանը, փնջպէս որ կը գրէ պատմիչը. «Եւ գնաց Մելիք Մահմուտն այս ի բերդն Շուպլաս, բազում մարտիւք մարտուցեալ եւ նետս անթիւս հեղեալ ոչ ինչ կարաց առնել բերդին, եւ այնպէս գնալով ընդ կատարս լերանցն որ Կուլլա կոչին՝ գնաց յաշխարհն իւր»¹: Պատմիչի խօսքերէն կարելի է հետեւցնել որ բերդը անառիկ էր եւ կը գտնուէր լեռներու վրայ:

Ալիշան կը համարի թէ Կուլլա անունը պէտք էր համապատասխանել Կուկլակ Կարանի լեռներուն, որոնց կատարէն անցնելով գնաց իր երկիրը Ահմատ Դանիշմանն²:

1. Մ. ՈՒՌԱՅԵՏԻ, էջ 466:
2. Սիսուան, էջ 537:

ՄԱՆԱՇ ԿԱՄ ՄԱՆԱԶ ԲԵՐԴ

Լեւոնային Կիլիկիոյ բերդերէն մէկն էր Մանաշ կամ Մանազ բերդը. անոր որոշ տեղը չենք գիտեր, հաւանաբար կը գտնուէր իր համանուն գիւղով, Կարմրագիւղի հարաւային կողմը. այս գիւղը իր բերդով քննած է Լանկլուա հնագէտը, որ զայն կը կոչէ Մանաս կամ Մանազ, եւ կը համարի որ շինուած ըլլայ բիւզանդական կամ ասելի առաջ՝ հռոմէական շրջանին, որովհետեւ այդ գիւղին եւ բերդին մէջ գտեր է բազմաթիւ հռոմէական հնութիւններ, բիւզանդական շինութիւններ, քարայրներ, ջրամբարներ եւ քարերու մէջ փորուած գերեզմաններ¹:

Ալիշան Լանկլուայի Մանաս կամ Մանազ կոչած բերդը, անունի նմանահնչութեան պատճառով, կը նոյնացնէ Սմրատ Սպարապետէ յիշուած Մանաշի հետ, որուն իշխանը Հեթում ներկայ եղած է Լեւոնի թագադրութեան հանդէսին ԺԲ. դարու վերջերը. անշուշտ այս իշխանը Ս. Ներսէս Լամբրոնացիի Հեթում եղբայրը չէ, այլ անոնց ժամանակակից իշխան մը: Սմրատ Սպարապետ կը գրէ. «Իշխանն Մանաշայ Հեթում»²: Անգամ մը միայն կը յիշուի այս իշխանը մեր պատմութեան մէջ, եւ մէկ անգամ ալ իր բերդը:

1. Սիսուան, էջ 76:
2. ՍՄՐԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

ԱՐԵՊՆԻ ԲԵՐԴ

Հաւանաբար լեռնային Կիլիկիոյ բերդերէն էր Արեգնի բերդը, համանուն գիւղով եւ կը գտնուէր Արեգնի կոչուած վանքին մօտ: Կիլիկիոյ պատմիչը՝ Սմբատ Սպարապետ զայն իբրեւ բերդ չի յիշեր, այլ կը յիշէ իբրեւ գիւղ եւ վանք, որ եպիսկոպոսանիստ էր, որուն եպիսկոպոսը 1199ին ներկայ եղած է Լեւոն Ա.ի Թագադրութեան հանդէսին. «Տէր Գրիգորիս արքեպիսկոպոս Կապնուն եւ առաջնորդ Արիգնոյն»¹:

Արեգնի վանքին տեղը գիտենք, Զէյթունի շրջանին մէջ էր. կա՛մ նոյն վանքին մօտ համանուն բերդ մ'ալ գոյութիւն ունէր, եւ կամ վանքը պարսպապատ էր եւ հետեւաբար կը ծառայէր նաեւ իբրեւ բերդ, ինչ որ հաւանական կը թուի. որովհետեւ Հալէպի մօտերը, 56 հզրմ. հեռու կը գտնուի Ս. Սիմէոնի վանքը, որ նոյնպէս բերդ է, հսկայ պարիսպներով շրջապատուած: Ալիշան Արեգնին կը յիշէ իբրեւ բերդ՝ կիլիկեան բերդերու կարգին²:

Արեգնի վանքի մասին կը գրէ Տոքթ. Յ. Տէր Ղազարեան. Արեգնի վանքը կը գտնուէր «Քեսունի Կարմիր վանքին եւ հռչակաւոր Շուղրի վանքին մէջտեղը, "Սեաւ եւ Մթին լեռան" անառիկ դիրքի մը մէջ թոյն դրած»³:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 208:
2. ՍԻՍՈՒԱՅ, էջ 64:
3. Յ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ, Կիլիկիա, էջ 112:

ԹՈՌՆԿԱՅ ԲԵՐԴ

Թորնկայ բերդը կը յիշէ Սմբատ Սպարապետ. «Իշխանն Թորնկային Ստեֆն»¹: Ստեֆ, որ է Ստեփան, ներկայ եղած է Լեւոնի Թագադրութեան հանդէսին, սակայն իր մասին ուրիշ ծանօթութիւններ չունինք:

Թորնկայ բերդը, ըստ Ալիշանի, կը գտնուէր Ընկուզուտ բերդի շրջանին մէջ, համանուն գիւղին մօտիկը բարձրացող բլուրի մը կատարին վրայ:


Լեւոնի Թագադրութեան շրջանին, որ է 1198ին, Թորնկայ գիւղը եպիսկոպոսական թեմ էր եւ անոր եպիսկոպոսն էր Տէր Մխիթար, իսկ բերդին իշխանը Պաղտին²:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 200:
2. ՍԻՍՈՒԱՅ, էջ 195:

ԹՈՒՄԼՈՒ ԲԵՐԴ

Թումլու բերդը կը գտնուէր Անարզարայի շրջանին մէջ, Ջահան գետին արեւմտեան ափին՝ անոր երկու օժանդակներէն մէկուն եզերքը գտնուող քարաբլուրի մը գագաթին վրայ: Թումլու կիրիկեան հորազոյն բերդերէն մին էր, եւ որ ծանօթ էր նաեւ Թումլա կամ Թումլոյ անուններով. իսկ Թուրքերը Dumlu kalesi կը կոչեն զայն:


Բերդիս շինողն ու շինութեան Թուականը անծանօթ կը մնան. զայն կը յիշէ Ալիշան իր Սիսուանին մէջ՝:



Թումլուի յատակագիծը ըստ Ծումկի: Սանդղաչափ՝ 1:1.000 (Հելլենքեմպերէն)

1. Պահականոց, 2. Աշտարակ, 3. Աշտարակ:

Plan de Toumlou (selon Youngs). Echelle: 1:1.000 (de Hellenkemper)



Թումլու. դրեակին արեւելեան կողմը (Հելլենքեմպերէն)

Toumlou. La façade orientale du château (de Hellenkemper)



Թումլու. դրեակին գլխաւոր աշտարակը (Հելլենքեմպերէն)

Toumlou. La tour principale du château (de Hellenkemper)

1. Սիսուան, էջ 244:

ԿԱՐՏԷՆ, ԿԱՐՏԵՆՈՅ ԿԱՍ ԿԱՅՏԵՆՈՅ ԴՂԵԱԿ

Կարտենոյ բերդը կը գտնուէր Ս. Պօղոսի «անապատ»ին, այսինքն վանքին մօտերը, ինչպէս կը վկայէ ձեռագրի մը յիշատակարանը, գրուած 1193ին. «յանապատիս, որ կոչի Պաւղոսական՝ մերձ առ ամուր դղիկիս Կարտինոյ»¹, ուր գրիչը ընդօրինակած է բազմաթիւ Աւետարաններ եւ ուրիշ աուրբ մատենաներ: Այս քերական տեղերն ալ «Անապատն Պաւղոսեան» եւ Կարտենոյ բերդը մօտիկ էին նաեւ Գոների հռչակաւոր վանքին²: Տոքթ. Յ. Տէր Ղազարեան կը հաստատէ այս տեղագրութիւնը՝ Կարտենոյ բերդը դնելով, իր փոքրիկ քարտէսին մէջ, Ճիհուն գետի օժանդակներէն մէկուն արեւելեան ափին վերայ, Մարաշի արեւելքը եւ Ս. Պօղոս կոչուած Անապատին արեւմուտքը:

1. ՅՈՎԱՆՓԵԱՆՑ, «Իւն. 569-570»:
2. Սիսուան, էջ 147:

ԽՆՁՈՐՈՎԻՏԻ ԲԵՐԴ

Խնձորովիտի բերդը կը գտնուէր հաւանօրէն Էլմալըք կամ Էլմալը Օլուք կոչուած գիւղին մօտ. այս անունը մեզի կը յիշեցնէ իր նախնական հայ անունը, Խնձորովիտ¹, որ հաւանօրէն անունն էր համանուն գիւղի բերդին ալ. անուն մը որ մէկ անգամ կը յիշուի 1316ի Ատանայի ժողովին պատմութեան մէջ. այդ ժողովին մէջ բազմող իշխաններու կարգին կը յիշատակուի նաեւ Խնձորովիտի իշխանը Լիկոս. «Պր. Լիկոս տէրն Խնձորովտայ»²:

Ուրիշ Խնձորուտ (Էլմալը) գիւղ մը եւս կը յիշուի Քրք-Կէչիտի գետահովտին մօտերը: Արիւան կը տատամսի թէ ասոնցմէ ո՞ր մէկուն կը համապատասխանէ նախնաց Խնձորովիտը:

1. Սիսուան, էջ 123: Տես նաեւ ԷՓՐԻԿԵԱՆ, Բ, էջ 134:
2. Սիսուան, էջ 258:

ԿՈՒՏԱՅ ԲԵՐԴ

Կուտաֆ բերդն ալ կը յիշուի Սմբատ Սպարապետէն Լեւոնի թագադրութեան հանդէսին ներկայ եղող իշխաններու կալուածներու կարգին. անոր իշխանն էր «Ապլղարիպ Մարաշխտ Հայոց»:

Այս բերդը հաւանաբար կը գտնուէր Սիմանակլայի եւ Ընկուզուտի բերդերուն մօտերը: Լեւոնի պարգեւագրին մէջ ալ կը յիշուի անոր եկեղեցին, նշան՝ թէ ականաւոր բերդերէն մին էր¹:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 209: Սիսուան, էջ 202:

ՃՈՃԻՍ ԲԵՐԴ

Այս բերդը կը յիշէ Միքայէլ Ասորի, երբ կը խօսի Պոտանդոյ քաղաքի մասին, զոր իսլամական 708 թուականին կը գրաւէ արաբ Մսլիմ զօրավարը: Քաղաքին հետ Մսլիմ կը գրաւէ նաեւ Ճոճիմ բերդը. ինչ որ ցոյց կու տայ թէ Ճոճիմ Պոտանդինի մօտ էր. Պոտանդ այսօրուան Պոզանդի քաղաքաւանին կը համապատասխանէ եւ կը գտնուի Տաւրոսեան լեռներուն մէջ, Կուկլակ Կապանի մօտերը¹:

1. ՄԻՍԱԹԵԼ ԱՍՈՐԻ, էջ 333: Տես նաեւ Սիսուան, էջ 132:

ՄԻՔԱՅԷԼԿԼԱՅ ԿԱՄ ՄԻՔԱՅԼԿԼԱՅ

Հեռնային Կիլիկիոյ բերդերէն էր Միքայէլկլայ, որուն դիրքը եւ տեղը Ալիշան եւ չէ կրցած ճշտել: Այս բերդը իր տիրոջ հետ կը յիշուի 1307-1316ին Միսի եւ Ատանայի մէջ գումարուած ժողովներու ատենագրութիւններուն մէջ, ուր կը կարդանք «Պր. Պեմունդ Սէնէսջալն՝ տէրն Միքայէլկլուն»¹: Արքունի Յայամաւորքը Յունուար 17ին կը յիշէ Պեմունդի մահուան թուականը: Ըստ Ալիշանի, Պեմունդ կամ Ռեմունդ զաւակն էր Հեթում Ա. թագաւորի քրոջ Մարիամի որդւոյն՝ Հեթումի²:

1. Սիսուան, էջ 132, 258:

2. Անդ, էջ 132: Տես նաեւ RÜDT-COLLENBERG, էջ 58, № 58bis, էջ 62, № 87:

ԳԱՆՁԷ ԲԵՐԴ

Կը յիշուի 1335ին գրուած Ճաշոցի մը յիշատակարանին մէջ, ուր գրիչը կը պատմէ Քարամաններու արշաւանքը Կիլիկիոյ վրայ: Ըստ յիշատակարանին, Գանձէ բերդը կը գտնուէր Տաւրոսի լեռներուն ստորոտը, ուր իբրեւ ապահով վայր մը կը քաշուի եւ հոն կը ծաղկանկարէ Աւետարան մը. «յայսմ ամի ազգն, որ կոչի խարաման մտեալ էր ընդ երկիրս Կիլիկիոյ, եւ բազում վնասս գործեցին ի տեղիս, եւ ես պանդխտեալ նստէի ի դղեակս որ կոչի Գանձէ, առ ստորոտովն լերինն Տօրոսի»¹:

1. ԽԱՉԻԿՅԱՆ, ԺԴ, էջ 278:

ԱՅԾԻՑ ԲԵՐԴ ԿԱՄ ՔԷՉԻ ՔԱԼԷՍԻ

«Քէչի Քալէսի», Այծից բերդի մասին շատ քիչ ծանօթութիւն ունինք: Կը գտնուէր Տիանայի գաւառի շրջանին մէջ, զոր Ալիշան կը կոչէ Թիկունք Գառուն Կիլիկիոյ: Բերդին աւերակները կը յիշէ Ալիշան «Գրքպունար» (Kırkpınar) լերան կողերուն վրայ¹:

1. Սիսուան, էջ 170:

ԱԼԷՆԳԱՇ ԲԵՐԴ

Ալէնգաշ կամ Ալնագաշ բերդը, ըստ Ալիշանի, կը գտնուէր հաւանաբար Մուշեւոնի եւ Կուկըակ Կապանի միջեւ¹:

1. Սիսուան, էջ 143:

ԽՈՃԱ ՔԱԼԷ

Ալէնգաչ բերդի շրջանին մէջ կը գտնուէր նաեւ Խոճա քալէ բերդը. կը յիշուի 1478ին Եգիպտացիներու Ալի Փաշային դէմ Օսմանցիներու կողմէ մղուած պատերազմին առթիւ. կը գտնուէր Մոլեռոնի բերդին մօտերը, Ալատաղի եւ Իւչքափու լեռներուն միջեւ՝:

1. Սիսուան, էջ 143:

ՇԱՀԱՊ ԲԵՐԴ

Քիչ ծանօթ բերդ մը՝ Կիլիկիոյ մէջ, յիշուած նաեւ եւրոպական Villa Sahap ձեւով: Հաւանաբար, ըստ Ալիշանի, կը գտնուէր Կանչոյ բերդին մօտերը, համանուն գիւղով՝:

1. Սիսուան, էջ 194:

ՔԱՐԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱ



Սելեկիա. հարաւային մարտկոցներ ու միջնորմներ (Փառլոյ Քունէոյ)
Silifke. Bastions et courtines méridionaux (Paolo Cuneo)

ՍԵԼԵԿԻԱ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Հին եւ անուանի քաղաք՝ քարային՝ Կիլիկիոյ մէջ. կը գտնուի Կալիւկադնոս գետի ափին, ծովէն հազիւ ութը քմ. ներս եւ 280 քմ. հեռու Ատանայէն: Կը կարծուի թէ նախապէս երկու քաղաքներ ըլլային, Ոլբիա եւ Հիւրիա, զորս՝ Մեծին Աղեքսանդրի զօրավարներէն Սելեւկոս Նիկանոր, Աղեքսանդրի մահէն վերջ, Ն. Ք. Գ. դարուն, իրարու միացուց շինելով բազմաթիւ նոր հաստատութիւններ, շէնքեր, պալատներ: Սելեւկոս նոր քաղաքը, իր անունով, Սելեկիա կոչեց. եւ որովհետեւ նոյն անունով ուրիշ քաղաքներ ալ կային, ասիկա վերակոչուեցաւ Քարուտ Սելեկիա, թէեւ բուն անունը կը մնայ Սելեկիա: Կոչուած է նաեւ Կալիկադնեան Սելեկիա, գետին անունով, որուն ջուրերուն մէջ կը խեղդուի 1190ին Փրեդերիկոս Շիկամօրուս կայսրը:

Կիլիկիան երբ հայ իշխանները կը գրաւեն, Սելեկիա անունը կը պահեն: Հիմա եւս այս քաղաքը գոյութիւն ունի եւ թուրքերը զայն կը կոչեն Սիլիֆէ (Silifke):

Հին Սելեւկիա քաղաքը կը մրցէր մինչեւ անգամ Տարսոսի հետ ոչ միայն իր շինութիւններով եւ վաճառականութեամբ՝ այլ եւ կրթական եւ կրօնական հաստատութիւններով. բազմաթիւ գիտական անուանի անձեր փառքն եղած են այդ քաղաքին:

Երկար ատեն կը մնայ արգատ քաղաք: Քրիստոնէութեան շրջանին Իսաւրիոյ նահանգին եպիսկոպոսանիստ աթոռը կ'ըլլայ. քանի չափ եպիսկոպոսական թեմեր ունէր, այնպէս որ, Լեւոն Ա.ի թագադրութեան հանդէսին ներկայ եղող արքեպիսկոպոսներէն վերջ, առաջին կարգին վրայ կը բազմի Սելեւկիոյ Եպիսկոպոսը. «Տէր Թորոս եպիսկոպոս Սելեւկիոյ»²:

Սելեւկիան իր հնութիւններէն մեծ մաս մը տակաւին կը պահէ: Այսպէս կանգուն են ամփիթատրոնը, երկու տաճարներ՝ իրարու մօտիկ, մէկը միւսէն գեղեցիկ. կանգուն կը մնայ նաեւ Կէօքսուի վրայ (Հին Կալիկադնոս) հինէն մնացած գեղակերտ քարէ կամուրջը: Բայց այս քաղաքը շինութիւններէն

1. Քարային Կիլիկիոյ մասին տե՛ս աստ՝ Ներածութիւն, էջ 1:
2. ՍՊԲԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 209:



Սելեկիա. ընդհանուր տեսք:
Silifke. Vue générale.



Սելեկիա՝ արեւմուտքից:
Silifke vu de l'ouest.



Սելեկիա. մեծ բուրգը ներսից (Մուքաֆեան):
Silifke. La tour principale vue de l'intérieur (Moutafian).




Սելեկիա. հիւսիսային նրբանցքը (Հելլենկեմպեր):
Silifke. Le couloir septentrional (de Hellenkemper).

→
 Սելեկիա. մեծ բուրգը՝
 դուրսէն (Մուքաֆեան):
 Silifke. La tour principale
 vue de l'extérieur
 (Moutafian).




Սելեկիա. 1236ին հիւսիսային
 կողմը շինուած գլխաւոր
 աշտարակին մուտքը
 (Փաւլոյ Քունէոյ):
 Silifke. L'entrée de la tour
 principale au côté nord,
 bâtie en 1236
 (Paolo Cuneo).



Սելեկիա. հիւսիսային
 աշտարակաւոր մուտքի
 հայերէն արձանագրութիւնը
 (Հելլենեմփեր):
 Silifke. L'inscription
 arménienne à l'entrée
 de la tour septentrionale
 (Hellenkemper).


Բերդին մէջ գտնուող հայերէն
 արձանագրութիւնը
 (Հելլենեմփեր):
 L'inscription arménienne
 dans la forteresse
 (Hellenkemper).





Սելևկիոյ բերդին շրջապատի յատակագիծը ըստ Սթորոզինսկիի: Սանդղաչափ՝ 1:20.000.
 1. Կալիկազնոս, 2. Միջնադարեան աւանը, 3. Բերդը, 4. Ակրոպոլը, 5. Թատրոնը,
 6. Ս. Թեկզի ուխտավայրը (Հելլենիստիկական):

Plan d'ensemble de Silifke, selon Storozinski (de Hellenkemper).



Սելևկիա բերդին յատակագիծը (Միլլեր-Վիներէն). A. Մուտք, B. Առաջին դուռ,
 C. Մեծ դրան հաւանական տեղը, D. Գետնափոր նկուղներ, X. Խոտի դուռ:

Silifke. Plan de la forteresse (de Müller-Wiener)



Սելևկիոյ բերդին պարիսպները եւ մեծ աշտարակը:
 Murailles et grande tour de la forteresse de Séleucie (CEDCAM).

աւելի նշանաւոր է Սելեւկիոյ բերդը որ քաղաքին արեւմտեան մէկ մասին վրայ, բլուրի մը կատարին կը կանգնի. բերդը մեծ մասամբ տակաւին կանգուն է եւ հոն կարելի է բարձրանալ միայն նեղ ճամբէ մը:

Պարիսպները սաստիկ բարձր էին եւ ամուր. շուրջն ալ փորուած էին երկու կարգ խոր խրամներ. պարիսպները ընդմիջուած էին բարձր աշտարակներով:

Քաղաքը կրկին պարիսպներով շրջապատուած էր. արտաքին պարիսպները աւելի ցած էին: Քաղաքի դրան վրայ փորագրուած էր, քառակուսի ծաղկազարդ շրջանակի մէջ, հայկական արձանագրութիւն մը, զոր հնագէտները ամբողջութեամբ չէին կրցած օրինակել. Պոֆորտ ծովապետը կրցած է միայն անկէ քանի մը տող կարդալ եւ օրինակել:

Ի ՀԱՅՈՑ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՆԻՆ ՈՒ ԵՒ ՁԵ ԱՄԻՆ... (= 1205):

Երկրորդ եւ չորրորդ տողերուն վրայ հազիւ կը կարդացուի ԹԱԳԻՈՐՆ ՀԵԹՈՒՄ ՈՐ...:

Եօթներորդ տողին մէջ կը կարդացուի Կոստանդին անունը, որ Հեթումի հայրն էր, իսկ ամէնէն վերջին տողին կայ Լեւոն անունը: Աջ կողմի շրջանակին մէջ ալ կը կարդացուի Սմբատ անունը, որ Սմբատ Գունդստապլը (Հեթումի եղբայրը) կրնայ ըլլալ, եւ որու անունին վերեւ գրուած է ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ, ըստ Լանկլուայի²:

Այս արձանագրութիւնը կարելի է կապել անշուշտ բերդին նորոգութեան Կոստանդին թագաւորահօր ձեռքով, Ասպետներու ձեռքէն առնելէ ետք զայն:

ՊԱՏՄԱԿԱՆ

Լեւոն Մեծի իշխանութեան գլուխ զալէն առաջ, արդէն թորոս Բ.ի օրով, Սելեւկիոյ բերդաքաղաքը իր շրջանով Հայերուն ձեռքն էր:


Լեւոն, իր տէրութեան առաջին օրերուն, Սելեւկիա քաղաքը իր շրջանով կը նուիրէ Սասունցի Չորտուանէլի որդւոյն Շահանշահի. իսկ ասոր մահէն վերջ, 1194ին, տէր եւ իշխան կը յիշուի Սելեւկիոյ Կոստանց անունով իշխան մը, որ ազգակից էր յոյն Կոմարտիոս իշխանին. Կոստանց ներկայ կ'ըլլայ Լեւոնի թագադրութեան հանդէսին. այնպէս որ Սմբատ զինքը կը յիշէ ըսելով «Իշխանն Սելեւկիոյ եւ Պոնառոյ Կոստանցն»³:

Լեւոն Ա., իր թագաւորութեան 12րդ տարին, Սելեւկիան՝ Նորբերդի եւ Կամառտիասի հետ կը նուիրէ Երուսաղէմի Հիւանդանոցի ասպետներուն, պատերազմի շրջանին անոնցմէ ստացած օգնութեան փոխարէն. այսպէս երկար տարիներ Սելեւկիոյ կ'իշխեն Ասպետները, եւ 1214ին, Սելեւկիոյ տէր կը յիշուի Ֆէրալտ տը Պարբաս, որ ստորագրած է Լեւոնի դաշնագիրը:

Լեւոն Ա.ի մահուան նախօրեակին Սելեւկիոյ բերդին տէր կը յիշուի Սիրատան (Սիր Ատմ): Սա Լեւոնի դստեր դաստիարակն էր եւ արքունիքին

2. Սիսուան, էջ 285:

3. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:



Սելեւկիա. մեծ շտեմարանները (Քայլ-վիլհելմ):
 Silifke. Les grandes citernes (de Keil-Wilhelm).

մէջ մեծ ազդեցութիւն ունէր, եւ տէր էր ոչ միայն Սելեւկիոյ շրջանին, այլ եւ ուրիշ բերդերու, ինչպէս կը գրէ Մմբատ Սպարապետ. «էր տէր բազում բերդից եւ գաւառաց, ի Սելեւկիոյ մինչեւ ի Կարձորոս»⁴:

Հեթումի Թագաւորութեան սկիզբները, երբ ան դեռ նոր պսակուած էր Չապէլի հետ, Չապէլ Թագուհին այցելութեան կ'երթայ իր մօր, որ Սելեւկիա կը գտնուէր, Ասպետներուն քով, որոնք կը դրդեն Չապէլը որ Սիս չվերադառնայ. Կոստանդին Թագաւորահայր կը զայրանայ եւ բանակով մը կու գայ, կը պաշարէ Սելեւկիան, ստիպելով որ Թագուհին իրեն յանձնեն: Ասպետները տեսնելով որ պիտի չկարենան դիմադրել Կոստանդինի, կը ստիպուին ոչ միայն Չապէլը, այլ եւ քաղաքը յանձնել⁵:

Կոստանդին զուրս կը քշէ Երկրէն Ասպետները եւ Սելեւկիոյ վրայ զօրաւոր պահակազունդ մը կը դնէ. այս շրջանին՝ երբ կը նորոգէ բերդը, անոր դրան վրայ ծաղկազարդ շրջանակի մէջ արձանագրութիւն մը քանդակել կու տայ, որու մասին խօսեցանք վերեւ:

ԺԳ. դարու կէսին, Քարամանները զօրանալով կը տիրեն Սելեւկիոյ: Ասկէ վերջ անգամ մը եւս կը յիշուի Սելեւկիա մեր պատմութեան մէջ, երբ Լեւոն Բ. իր Թագաւորութեան սկիզբները, 1271ին, այս կողմերը այցելութեան կ'ելլէ⁶:

Կիլիկեան Թագաւորութեան անկումէն դար մը վերջ, 1471ին, Վենետկեցի Պարպարոյ ուղեգիրը այս կողմերէն կ'անցնի եւ իր յուշերուն մէջ կը գրէ Սելեւկիոյ քաղաքի մասին. ան կ'ըսէ թէ Սելեւկիա ծովէն 5 մղոն հեռու էր, Կալիկազնոս գետի ափին վրայ, զօրաւոր եւ անառիկ պարիսպներով. քարաժայռի մը կատարին կը բարձրանար իր ներքնաբերդը, շրջապատուած բարձր աշտարակներով: Քաղաքին մէջ կար ամփիթատրոն մը, որ շատ կը նմանէր Իտալիոյ Վերոնա քաղաքին ամփիթատրոնին, թէեւ անկէ շատ աւելի մեծ եւ ընդարձակ էր: Բերդին ամէն անկիւններուն վրայ կային մէկկական աշտարակներ, իսկ բերդին դռները երկաթեայ էին: Բերդին կեդրոնը քարայր մը փորուած էր, որ հաւանաբար ձմեռը անձրեւի ջուրով կը լեցուէր: Քաղաքը չորս կողմերէն ալ հրաշալի տեսարաններ ունէր, մէկ կողմը կը տարածուէր ծովուն արծաթ հայելին, իսկ միւս կողմը Տաւրոսի ձիւնապատ լեռները⁷:

ԺԹ. դարուն Սելեւկիոյ բերդի մասին ընդարձակօրէն անդրադարձած է Լանկլուա եւ անկէ վերջ քաղմաթիւ մատենագիրներ մինչեւ մեր օրերը⁸:

4. Անդ, էջ 222:
 5. Սիսուան, էջ 285:
 6. Անդ:
 7. G. BARBARO, in Ramusio, II, p. 100. հմտ. Սիսուան, էջ 286:
 8. V. LANGLOIS, Voyage, էջ 404-405; KEIL - WILHELM, Denkmäler, էջ 238; MÜLLER - WIENER, Castles, էջ 80; LANGENDORF - ZIMMERMANN, Trois monuments, էջ 155-165; FEDDEN - THOMSON, Castles, էջ 103-105: Այս վերջիններս Սելեւկիոյ բերդը կը նոյնացնեն Կամարտիաի հետ. տես աստ ստորեւ՝ Կամարտիա քերդ, էջ 230:

ՆՈՐ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Քարային Կիլիկիոյ թերթերէն էր Նոր բերդ, եւրոպացի ուղեգիրներէն կոչուած՝ Castellum novum: Կը գտնուէր Կալիւկադնոսի (Göksu) հովիտին մէջ, Սելեւկիա քաղաքին մօտերը. շրջապատուած էր զօրաւոր պարիսպներով եւ հզօր աշտարակներով:

Սմբատ Սպարապետ 1198 թուականներուն կը յիշէ անոր մէկ փշխանը, որ ներկայ եղած է Լեւոն Ա.ի թագադրութեան հանդէսին, «Իշխանն Նորբերդոյ եւ Կամառտիասոյ սեւաստիօսն Հեռի»¹:

Հեռի յոյն կամ յունածէս հայ իշխան մըն էր, որուն որդին Կաստանց, կը շարունակէ իշխել, իր հօր մահէն վերջը, իր պապենական հողերուն եւ բերդերուն վրայ: Կոստանց, ինչ որ կ'երեւի, իելյացի եւ գործունեայ իշխան մը եղած է, որ Լեւոն Ա.էն դեսպան կը ղրկուի Եւրոպա՝ Փրեդերիկոս կայսեր:

Սակայն, չենք գիտեր ինչ պատճառով, Լեւոն Ա. յանկարծ կը կասկածի այս իշխանին վրայ, եւ բռնելով զինք ու իր որդիները բանտ կը նետէ, ինչպէս կը գրէ Սմբատ Սպարապետ. «Ի սոյն ամի [ՈՄՁ] թագաւորն Լեւոն յազազս պատճառի ինչ իրիք կալաւ զսեւաստիօսն Հեռի, եւ զորդիս նորա զԿոստանց Կումարտիասն եւ զՃօսլին եւ զՊաղտինն եւ եղ ի կապանս եւ ի բանտի»²: Հեռի՝ Հայոց Յովհաննէս կաթողիկոսին փեսան էր. «Եւ Հեռի փեսայ էր տէր Յոհանիսի կաթողիկոսին Հայոց. եւ յայտմանէ եղեւ խռովութիւն ընդ թագաւորն Լեւոն եւ ընդ կաթողիկոսն տէր Յոհաննէս»³: Այսքանով հարցը չի վերջանար, թագաւորին եւ կաթողիկոսին միջեւ ատելութիւնը կը զօրանայ, «մինչ զի ի բաց մերժեաց զնա թագաւորն եւ առաջնորդքն եւ իշխանքն Կիւլիկեցւոց»⁴: Հեռի իր որդիներով բանտին մէջ էր, երբ Լեւոն Ա. Սելեւկիա քաղաքը Նորբերդի եւ Կամարտիասի հետ Երուսաղէմի Հիւանդանոցի Ասպետներուն կը նուիրէ. Իննովկենտիոս Գ. Պապն ալ, 1210ին, մասնաւոր կոնդակով մը կը վաւերացնէ այս նուիրատուութիւնը⁵:

1. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:
2. ԱՅՊ, էջ 215:
3. ԱՅՊ:
4. ԱՅՊ:
5. Սիսուան, էջ 235:

Ս. Ն. Լամբրոնացիի եղբոր՝ Հեթում-Հեղիի միջնորդութեամբ, 1211ին, Լեւոն ազատ կ'արձակէ բանտարկեալները: Կոստանց արդէն մեռած էր, թերեւս նաեւ Հեռին⁶: Ծանօթ են՝ թագաւորին եւ կաթողիկոսին միջեւ գժտութեան տխուր հետեւանքները⁷:

1317ին Նոր բերդի իշխան կը յիշուի Ստեփանոս անունով անձ մը, զոր Օչին թագաւոր դեսպան կը ղրկէ Եւրոպա՝ Հռոմի Քահանայապետին եւ փրանկ թագաւորներուն, օգնութիւն մը ստանալու համար այլազգիներուն դէմ: Ստեփանոս մինչ կը թափառէր Եւրոպայի արքունիքները, ահա կը վախճանի Օչին թագաւոր՝ եւ Օչին Պայլ թագաւորահայրը կը գրաւէ Իսաւրիոյ բոլոր թագաւորական կալուածները, որոնց կարգին էր նաեւ Երուսաղէմի Ասպետներուն պատկանող Նոր բերդը: Հռոմի Քահանայապետը երբ այս կը լսէ, մասնաւոր նամակով մը կը յորդորէ Օչին Պայլը որ ետ դարձնէ այդ հողերը. իսկ Երուսաղէմի Ասպետներն ալ կը հրաւիրէ յարգելու փոխադարձ դաշինքները եւ ճշտիւ պահելու Հայոց թագաւորին դրած պայմանները: Նոր բերդը Ասպետներու ձեռքը կը մնայ մինչեւ 1347, երբ՝ ընդհանուր հրամանատարի մը պակասէն՝ Պապը դուրսէն Դամարիոս անուն անձ մը տեսուչ կը կարգէ իրենց⁸:

6. ԱՅՊ, էջ 217-218:
7. Տես աստ, Բերդուս:
8. Հմմտ. LANGLOIS, Voyage, էջ 490-491: Սիսուան, էջ 237: BOASE, History, էջ 25:

ԿԱՄԱՐՏԻԱՍ ԲԵՐԴ

Սելեկիոյ շրջանի բերդերէն էր Կամարտիաս կամ Կումարտիաս, լատին պատմագիրներէն Camardesium կամ Camardius, իտալացիներէն Camardo կոչուած: Անշուշտ կը գտնուէր Նոր Բերդի մօտերը, որոնց երկուքին միասնաբար իբրեւ տէր եւ իշխան յիշուած է Սմբատ Սպարապետէն, Լեւոնի թագադրութեան առթիւ, Հեռի Սեւաստոսը¹:

Արդի ուսումնասէրներէն ոմանք կը նոյնացնեն այս բերդը Սելեկիոյ բերդին հետ²: Ալիշան, ընդհակառակն, կը դանաղանէր այս երկու բերդերը, ինչ որ աւելի հաւանական կը նկատէ նաեւ Boase³: Հակառակ Լանկլուայի կարծիքին, որ Կամարտիասը հայերէն շինուած կը համարէր, Ալիշանի համաձայն շատ հաւանօրէն յոյներէն կառուցուած պէտք է ըլլայ⁴:

Լեւոն Մեծէն առաջ՝ այս շրջանները արդէն ինկեր էին Թորոս Բ. իշխանի ձեռքը, քանի որ Լեւոն՝ իր իշխանութեան առաջին շրջաններուն՝ Սելեկիան տուած է Սասունցի Չորտուանէլի որդւոյն Շահանշահին⁵: Ասոր մահէն վերջ՝ 1194ին, Լեւոն Ա. դայն կու տայ Հեռի անդրանիկ արդի՝ Կոստանց իշխանին, որ կը վերակոչուի Կամարտիաս կամ Կումարտիաշ⁶:

Կոստանց Կամարտիաս, ինչ որ կ'երեւի, ուշիմ եւ ճարպիկ անձ մը եղած է եւ Լեւոնի արքունիքին մէջ ալ համարուած եւ պատիւ վայելած: Այնպէս որ, 1190ին, իր Պաղտին եղբօրը հետ, Լեւոնի կողմէ ընդառաջ կը ղրկուի Փրեզերիկոս կայսեր, որ մեծ բանակներով Կիլիկիոյ սահմանները հասած էր⁷:

Ինչպէս տեսանք, Լեւոն Մեծի եւ Հեռի Սեւաստոսի ընտանիքին միջեւ վստահութեան յարաբերութիւնները անխախտ չեն մնար եւ Կամարտիասն ալ, հուսկ, Լեւոնի կողմէ Երուսաղէմի Հիւանդանոցի Ասպետներուն կը նուիրուի⁸:

1. Տես Նոր Բերդ, ծն. 1:

2. Հմմտ. FEDDEN - THOMSON, էջ 37, 103-105: HELLENKEMPER, էջ 249-254, եւ SEMAVI EYICE Հելլենիստիքի գիրքին գրախօսութեան մէջ՝ «Belleten», հտ. 41, հմ. 164, Անգարա 1977, էջ 769:

3. Տես Սիսուան, էջ 284, 287: BOASE, էջ 158:

4. Սիսուան, էջ 287:

5. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 201:


6. Սիսուան, անդ: Հեթոնի ՎՈՒՌԻՎՈՍՈՅ, Համառոտ Պատմ., էջ 78:

7. Սիսուան, անդ:

8. Տես Նոր Բերդ:

ՄՈՒԴ ԿԱՍ ՄՈՒՏ ԲԵՐԴ

Քարային Կիլիկիոյ բերդերէն էր Մուդ կամ Մուտ բերդը, որուն մասին շատ քիչ ծանօթութիւն ունինք: Հետեւեալ տեղեկութիւնները կը քաղենք Ալիշանէն: Կը գտնուէր համանուն գիւղաւանի լեռներէն մէկուն կատարին: Ստորոտէն կ'անցնէր փոքրիկ գետակ մը, Կիրամա կոչուած, որ երթալով կը խառնուէր Պուզաքչի գետակին¹: Այս գետերու խառնուրդին մօտերը կան շատ մը հին աւերակներու մնացորդներ, որոնք հոռմէական շրջանի շինութեանց մնացորդներ կ'երեւին եւ այդ տեղ բարգաւաճ գիւղի մը գոյութիւնը ցոյց կու տան: Բլուրին վրայ կը գտնուին բերդին մնացորդները, մարտկոցներով պարիսպներ, քառակուսի աշտարակներ՝ կրկին պարիսպներով. ունի նաեւ հսկայ աշտարակ մը եռոյսրկանի, որու մէջէն սանդուխներով վեր կ'ելլէին: Բերդին մէջ աւելի ուշ ժամանակ շինուած է, հաւանաբար Քարամաններէն, մզկիթ մը, իսկ բերդին մէկ անկիւնին վրայ կան եօթը սիւներ¹:



Մուդ բերդի յատկագիծը (Սիսուանէն)

Plan de Mout (de Sissouan)

1. Արդի քարտէսները Կէօք չայը (Gök çayı) անունով կը նշեն այս գետակը, որ հիւսիս-արեւմուտքէն Կալիկաղնոսի միացող գլխաւոր թեւերէն մէկն է:

Բերդին արեւմտեան կողմին վրայ կը բարձրանար գղեակը, դարձեալ կրկին պարիսպներով ամրացուած. գղեակին կեդրոնը կը բարձրանար կլոր հսկայ աշտարակ մը՝ եռայարկանի. աշտարակին ստորին մասը թանձր քարերով եւ աւելի լայն շինուած էր: Դղեակին մէկ անկիւնը կը տեսնուէին տաճարի մը մնացորդները, սիւնազարդ կամարի գլուխներով: Մուգ բերդը կը յիշուի նաեւ Թուրքիոյ մասին ներկայ զբօսաշրջային հրատարակութիւններու մէջ²:

ՄԱՂՎԱԲԵՐԴ

Մաղվաբերդը կը գտնուէր Մութ բերդի հիւսիսը, անկէ տասը մղոն հեռաւորութեան մը վրայ: Տակաւին մեծ մասով կանգուն են անոր պարիսպները. այլազգիները զայն կը կոչեն Մաւզա քալէսի, իսկ մեր պատմիչները Մաղվայոյ բերդ:

Մաղվաբերդը կը բարձրանար քառակուսի կտրուած քարաժայռի մը կատարին վրայ, երեք կողմէն շրջապատուած՝ խոր ձորերով. սրընթաց դետակ մը կ'անցնէր իր պարիսպներուն տակէն. այս գետակին վրայ կամուրջ մը նետուած էր, որմէ միայն կարելի էր բերդ բարձրանալ:

Տէյվիս հնագէտը, որ 1875ի Յուլիս 23ին բարձրացած է Մաղվաբերդ, հոն կը գտնէ արաբերէն արձանագրութիւն մը, 1190 թուականէն, Մահմուտ սուլթանի անունով: Այդ թուականէն քիչ յետոյ Լեւոն Ա. գրաւած է Մաղվաբերդը եւ իր թագաւորութեան կցած: Այնպէս որ Մաբատ Սպարապետ կը յիշէ Մաղվաբերդի իշխանը. «իշխանն Մաղվայոյ եւ Սիկոյ եւ Պալապօլին Կեոսակն»²: Սա ներկայ եղած է Լեւոնի թագադրութեան հանդէսին:

Կեոսակ, կամ Կիո-Սակ (Կիո Սահակ), մեզի ծանօթ է պատմութենէն, յատկապէս 1217ին Քէյքաուզ Սուլթանին դէմ՝ Կապանի եւ շրջակայքի պաշտպանութեան բերած մասնակցութեամբ³:

Հաւանօրէն Մաղվայ բերդն է որ կը յիշատակեն նաեւ բիւզանդացի պատմիչները, կոչելով զայն Μελοϋς, զոր կը գրաւէ յունաց Վասիլ Ա. կայսրը, Լուլուայ բերդին տիրելէն վերջ, ինչպէս կը պատմէ Կոստանդին Պոուփիւռոսէն յոյն պատմիչը⁴:

2. Սիսուան, էջ 288:

3. DENOEL, էջ 168, 330. Բերդին աւերակները կը նշուին իբր ժ.Դ. դարու Քարամանեան շինուածքի մը մնացորդները:

1. DAVIS, էջ 327-330:

2. ՍՄԻՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

3. Տես վերեւ՝ Կապան, Ճանճի, Կանչի բերդերը:

4. Հմմտ. Սիսուան, էջ 288:

ԷՐՄԷՆԷԿ

Քարային Կիրիկիոյ արեւմտեան բերդաւաններէն մէկն էր Էրմէնէկ. կը գտնուէր համանուն գետակին եւ Կէօքտէրէ գետի խառնուրդին մօտ, դէպի հիւսիս-արեւմուտք, վտակի մը եզերքը: Էրմէնէկի արեւելքէն կը հոսի Պալքեսէն կամ ներկայիս Պարթուսան կոչուած գետը, որ Կէօքտէրէի հետ կը միանայ Կէօքսուի: Այդեւէտ եւ թուսարեր շրջան մըն էր Էրմէնէկ. սակայն ձմեռը հոն շատ երկար կը տեւէր, քաղաքաւանը ըլլալով 1300 մեդր բարձրութեան մը վրայ:

Հ. Ղ. Ինճիճեան, Էրմէնի եւ Էրմէնէկ բառերու նմանաձայնութենէն, կարծած է թէ այս աւանը իր անունը առած ըլլայ՝ հայերէն կառուցուած եւ հայերէն բնակուած ըլլալուն համար, ինչ որ իրականութեան չի համապատասխաներ:

Էրմէնէկ Գերմանիկուպոլիս անունէն կը ծագի, Գերմանիկոս կայսրէն շինուած ըլլալով: Իբրեւ թեմ Germanicopolis կը կոչուէր եւ Սելեւկիոյ շրջանին եպիսկոպոսանիստ քաղաքներէն էր: Բիւզանդացիներէն անցած է Ռուբինեան հայ իշխաններու ձեռքը եւ փոքրիկ աղաւաղումով կոչուած՝ Ժերմանիկ եւ հոլովուած ձեւով՝ Ժեռմանկան:

Էրմէնէկ, ինչպէս Կիրիկիոյ շատ մը աւանները, իր բերդն ալ ունէր, որ կը կոչուէր Ժեռմանկան բերդ կամ Էրմէնէկի բերդ: Անոր տէրն էր, ԺԲ. դարուն վերջերը եւ ԺԳ. դարուն սկիզբը, Հալկամ անունով իշխան մը, որ ունէր նաեւ ուրիշ քանի մը ծովեզերեայ բերդաւաններ: Սմբատ Սպարապետ զայն կը յիշէ Լեւոնի թագադրութեան առթիւ եւ կը կոչէ «Իշխանն Մանիօնին, Լամսօյ, Ժեռմանկանն եւ Անամուռին Հալկամն»:

Էրմէնէկ բերդը հաւանօրէն շինուած ըլլայ Հալկամէն եւ կամ ուրիշ հայ իշխանէ մը: Անառիկ բերդ մըն էր, լեռան մը կատարին վրայ, որուն կու գային կը միանային Էրմէնէկ քաղաքին պարիսպները: Բերդ բարձրանալու համար լեռնաժայռին մէջ փորուած էին սանդուխներ, ձորի եզերքէն շուրջ 500 մեդր բարձրութեամբ: Յետագային երկրաշարժներէ այս ճամբան խանգարուած եւ քանդուած էր, այնպէս որ բերդն ալ անմերձենալի կը մնար: Բերդին ստորոտը քարին մէջ փորուած սենեակներ կային, որոնք իբր ապաստանարան կը ծառայէին:

1. ՍՄՐԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

Էրմէնէկի մէջ կը տեսնուէին նաեւ հռոմէական շինութիւններու մնացորդներ:

Թաթարներու արշաւանքներու շրջանին, թուրքմէն թափառաշրջիկ ցեղեր, փախչելով թաթարներու առջեւէն՝ եկած եւ հաստատուած են Էրմէնէկի շուրջ, եւ տեղւոյն բնիկներէն, որոնք քրիստոնեայ էին, խնդրած են իրենց բնակութեան տեղ, տուն եւ մշակութեան հող, պայմանով որ իրենց շահածին տասանորդը տային բնիկներուն: Այս ցեղախումբերը թէեւ յաջորդաբար կը տիրեն այդ շրջաններուն, սակայն քիչ ժամանակ վերջ, 1228ին, Իկոնիոյ Սալահատին Քէյքաուզ սուլթանը զբաւելով Էրմէնէկը, զայն կու տայ իր իշխաններէն մէկուն:

Չենք գիտեր թէ ԺԳ. դարուն, երբ Օշին, Կոռիկոսի տէրը, տիրեց այս կողմերուն, յաջողեցա՞ւ արդեօք տիրել նաեւ Էրմէնէկի: Պատմութիւնը կը լռէ:

ԺԹ. դարու կէսերուն քիչ հայեր կը յիշուին հոն, փսի աւելի ուշ, 1876ին, հազիւ քանի մը հոգի²: Քաղաքին արեւելեան կողմին վրայ կային գերեզմաններ, հին խաչքարերով:

2. Սիսուան, էջ 281:

ՊԱԼԱՊՈԼ ԲԵՐԴ

Պալապոլ՝ հին ատեն կը կոչուէր Պալէապոլիս, Παλαιάπολις (հին քաղաք), Միջին Դարուն Պալապոլ, իսկ հիմա Պալապոլու, որ հին գիւղ մըն է, սակաւաթիւ բնակչութեամբ. անկէ հաւասար հեռաւորութեան վրայ կը գտնուին՝ էրմէնէկ արեւմուտքէն, իսկ Մաղվայ բերդը՝ արեւելքէն: Լեւոնի թագաւորութեան շրջանին՝ Մաղվայ բերդին տէրը Կիո Սակ կը տիրէր նաեւ Պալապոլի, ինչպէս կը գրէ Սմբատ Սպարապետ. «Իշխանն Մաղվայոյ եւ Սիկոյ եւ Պալապոլին Կեռասակն»:

Տէյվիս ուղեգիրը կը պատմէ թէ տակաւին կը տեսնուէին բերդին աւերակները, հսկայ բարձրութեան մը վերեւ, վախ ազդող քարաբլուրի մը գագաթին. իսկ բերդին հիւսիսակողմը կային բազմաթիւ գերեզմանաքարեր, մեծ մասով անարուեստ եւ խաչանիշերով, ինչպէս նաեւ փճացած արձաններ ու մանրուած քանդակներ առիւծի եւ յովաղի պատկերներով: Իսկ քաղաքին պարիսպներէն տակաւին կանգուն էին ինչ ինչ մասեր, գրեթէ ծածկուած՝ հըսկայ գիհներէ:

Տէյվիս, որ 1875ին թուրք առաջնորդով մը կրցած է քարձրանալ մինչեւ բերդը եւ քննել անոր աւերակները, կ'ըսէ թէ բերդը մինչեւ 1382 տակաւին Հայոց ձեռքը մնացեր է. այդ թուականէն վերջ է որ Քարամանօղլու թուրք իշխան մը՝ պաշարելով բերդը, եւ մօտակայ բլուրին վրայ պատերազմական մեքենաներ դետեղելով՝ կը հարուածէ անոր պարիսպները: Մեծ դիմադրութեան մը կը հանդիպի քաղաքացիներու կողմէն, բայց հուսկ յանկարծակի յարձակումով մը կը յաջողի գրաւել զայն²: Տէյվիս հոն գտնուած գերեզմաններու արձանագրութիւններուն վրայ հիմնուելով է որ կու տայ յիշեալ թուականը:

1. ՄՐԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

2. DAVIS, էջ 343-344: Տես նաեւ Սիսուան, էջ 289:

ԼՕՁԱՏ ԲԵՐԴ

Քարային Կիլիկիոյ բերդերէն մէկն էր նաեւ Լաւգատ կամ Լօգատ կոչուած բերդը. կը գտնուէր էրմէնէկ գետակի ափերուն մօտ, գէպի հարաւ՝ ձորի մը մէջ: Այս բերդն էր անշուշտ որ Յոյներէն Λαύζαδος կոչուած է, իսկ Փրանկներէն Lauwsa¹:

Լեւոն Ա.ի թագաւորութեան շրջանին, Լօգատ իր զօրաւոր եւ կարեւոր բերդերէն մէկն էր. անոր իշխանը, յիշուած՝ Սմբատ Սպարապատէն, ներկայ եղած է Լեւոնի թագաւորութեան, եւ որ տէր էր նաեւ ուրիշ քանի մը բերդերու. «Իշխանն Լավգատոյ եւ Տիմիտուպօրոյ Պուօֆօրն»²: Անունէն կ'երեւի որ յոյն մըն էր, թէեւ Լեւոնի հպատակ:

Լօգատ բերդը իր նեղ եւ անառիկ դիրքին համար կոչուած է նաեւ «Անառիկ ծական Լօգատի». ինչ որ ցոյց կու տայ թէ բերդը նեղ քարայրի մը առջեւ կը գտնուէր եւ ունէր բնական ամրութիւններ, որոնց վրայ աւելցուած էին արուեստական ամրութիւններ:

Լեւոն Ա., իր իշխանութեան վերջին օրերուն, — երբ Կապանի վրայ յարձակեցաւ Իկոնիոյ Քէյքաուզ սուլթանը եւ բազմաթիւ հայ իշխաններ գերի բռնեց —, ստիպուեցաւ՝ զանոնք ազատելու համար՝ ուրիշ բերդերու հետ Լօգատն ալ յանձնել Սուլթանին³: Սակայն, ինչպէս Լուլուայ բերդը, որ վերջը նորէն ինկաւ հայերու ձեռքը, հաւանաբար Լօգատն ալ հայերէն վերագրուած ըլլայ:

1. Սիսուան, էջ 289-290:

2. ՄՐԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

3. ԱՅՊ, էջ 222:

ՄԱՆԻՕՆ ԲԵՐԴ

Մանիօն (Մանիաւն) բերդին որոշ տեղը չեն նշանակեր մեր պատմիչները: Հ. Ալիշան կը համարի՝ թէ կը գտնուէր Լարանտայի արեւելեան սահմաններուն մօտ: Չայն կը յիշէ Սմբատ Սպարապետ, երբ կը խօսի Քարամաններու մասին: Ալաթատին սուլթանը, երբ հայերէն կը գրաւէ Էրմէնէկը 1228ին եւ կը յանձնէ իր զօրավարներէն մէկուն, հոն կը բերէ կը բնակեցնէ թուրքմէն ցեղեր: Ասոնց միջեւ կար Նուր-Սոֆի անունով ածխագործ մը որ, ըստ Համմէթի, ծագումով հայ էր՝ Սա շատ անգամ Լարանտա կ'երթար իր ածուխը ծախելու եւ այս առուտուրէն հարստացած էր. երկու որդիներ ունէր, որոնք Քարաման կը կոչուէին, իրենց տոհմին անունով: Այս երկու եղբայրները թաթարներու արշաւանքներէն եւ խառնակութիւններէն օգտուելով, սկսան սրիկաներու խումբեր կազմել եւ յարձակիլ մերձակայ գիւղերու վրայ, գողնալ եւ կողոպտել եւ տիրել ինչ ինչ շրջաններու: Ասոր վրայ Իկոնիոյ սուլթանը, զանոնք զսպելու նպատակով, իրենց տուաւ Էրմէնէկ գիւղը. աւագ եղբայրն ալ պէկ անուանեց այդ գաւառին²:

Այսպէս, հրոսախումբերը ա'լ սուլթանին երկրին վրայ չկարենալով արշաւել, իրենց ուղղութիւնը փոխեցին, դարձան դէպի իրենց սահմանէն անդին Հայոց հողերը: Քարամաններու մասին՝ գրեթէ ժամանակակից Սմբատ Սպարապետ կը խօսի ընդարձակօրէն, բայց չ'ըսեր թէ անոնք հայազգի ըլլային. ընդհակառակն՝ «յարեաւ ոմն ի խորանարակ Իսմայելացոցն ցեղէն, Սարաման անուն, եւ եկեալ յարեցան ի նա ի նոյն ցեղէն բազումք, որ եւ ետ կոչել նոցա զինքն սուլթան, եւ այնչափ զօրացաւ նա, մինչեւ սուլթանն Հոռոմոց Ըռուզնատինն յահի եղեալ ի նմանէ ոչ իշխէր ընդդիմախօսել նմա, եւ բազում տեղիս հանդերձ ամբոցօք ընդ ձեռամբ իւրով բռնակալեաց, եւ բազում նեղութիւն էած կողմանն Սաւրիոյ եւ Սելեւկիոյ գերելով զոսա, եւ երկիցս անգամ կտտորեաց ի զօրաց արքային Հեթմոյ, զոր կացուցեալ էր անդ կողմնապահս, որ եւ անդ սպանաւ ամենագովելին Հալկամ, որ էր Յոյն աղգաւ, զոր յառաջ յիշեցաք զնա: Եւ սկսաւ Սարամանն այն եղջիւր ածել թագաւորանեղբորն Սմբատայ, զի յայնմ գաւառի յորում Սարամանն բնակէր՝ բազում աշխատութեամբ եւ առատաձիր պարգեւօք զղեակ մի յանօրինացն

1. HAMMER, I, էջ 85:

2. Սիսուան, էջ 293:

Թափեաց Մանիօն անուն, որ յառաջագոյն քրիստոնէից էր եղեալ. եւ թագաւորանեղբայրն եւ սպարապետն Հայոց Սմբատ գ ամ կալաւ զնա ի մէջ այնքան բազմութեան անօրինացն: Եւ գոռոզն Սարաման նեղէր զնա սաստկապէս եւ ամենայնի վտանգ հասուցանէր Սմբատայ, որ եւ բազում ոսկիս եւ արծաթս անդ վատնեաց ի պէտս զինուորաց եւ դղեկին այն կարեաց: Եւ եկեալ Սարամանն ի վերայ նոյն բերդին եւ պատեաց զնա շուրջանակի զամիսս ք եւ նեղէր սաստկապէս. եւ սկսաւ անտի խօսիւք ամբարտաւանել եւ պատուիրել առ արքայն Հայոց Հեթում, ասելով, թէ կամիս առ իս գալ՝ յիմս ոտն մի՛ դայցես, այլ համբերեա փոքր մի մինչեւ աշնանային հողմն սրբեսցէ ըզգառնութիւն երկրիդ քո, զի մի՛ յորժամ գայցեմ՝ տկարանայցեմ, եւ ոչ կարիցեմ գործել ինչ»³:

Այսպէս հեզնելով կը խօսէր ու միաժամանակ կը գրգռէր պատերազմի ելլելու. Հեթում, աւելի խոհեմ, «յարեաւ եկն առ հայր իւր Կոստանդին եւ պատմեաց նմա...»: Սորազէտ Կոստանդին քաջալերեց ու խրատեց՝ թէ հարկ չկայ վախնալու, գնա՛ անոր վրայ: «Եւ յարեաւ արքայն եւ եկն ի Տարսոն, եւ ժողովեաց զզօրս իւր եւ գնաց ի Սելեւկիա եւ անդ հաւաքեցան հեծեալն եւ հետեակն եւ բեռնակիրքն զի ու (1000) քոռ ցորենոյ տանէին ի դղեակն ածել. եւ իբրեւ հասին ի սահմանս բերդին զօրքն քրիստոնէից եւ արքայն, անօրէնքն որ պաշարեալ էին զբերդն, յետս կոյս չողան ի բերդին, եւ իբրեւ եկն թագաւորն զօրքն ի բերդն, ոչ եզիտ զանօրէնն Սարամանն անդ, եւ հրամայեաց թագաւորն թափել զցորեանն ի բերդն, եւ եհան զպահապանս որք պանդխտացեալ էին, եւ նորս կացոյց ի տեղի նոցա: Եւ ապա դարձան եւ ընդ այլ ճանապարհ գային յաշխարհն իւրեանց անհողութեամբ: Իսկ անօրէնն այն Սարաման, եկեալ էր ի տեղի ինչ մացառուտ եւ գփնեայ, քարակոյտ եւ անձուկ որպէս խողովակ եւ անդ դարանամուտ եղեալ. եւ յորժամ եկին ի տեղին յայն զօրքն քրիստոնէից, անօրինացն ճիչ բարձեալ եւ նետաձուլութեամբ խոցոտէին գհաւատացեալսն. եւ եհաս աղաղակն առ արքայն, եւ արիագոյնքն թողեալ զգուռդս իւրեանց, հասին ի տեղի պատերազմին, եւ հարեալ զանօրէնսն ի փախուստ դարձուցին, որ եւ խոցոտեցին, նիղակաւ եւ նետիւ զՍարամանն, եւ դարձաւ ամօթով, եւ յետ սակաւ աւուրց սատակեցաւ ի խոցուածէն անօրէնն այն: Եւ ի տեղի մարտին սպանաւ եղբայր անօրինին որ կոչէր Պօնսուզ, եւ փեսայ նորին... եւ ի զօրացն արքային սպանաւ պայլն Կոստանդին Սոմայցին, եւ զիշխանն Գրիգոր, որ էր տէր Մազոտ Սաչին, զաջոյ ձեռինն նորա զբոյթն սրով հարեալ ի բաց ընկեցին, եւ սակաւք կորեան ի քրիստոնէիցն յայնմ աւուր»³:

Մանիօն բերդի այս պաշարումը, ըստ Ալիշանի, պէտք է որ սկսած ըլլայ 1259ին. իսկ անոր շուրջ մղուած կռիւր ազատութեան համար եւ Քարաման եղբայրներու մեռնիլը պատերազմին մէջ՝ 1262ին: Քարամանի մահէն վերջ, Իկոնիոյ սուլթանը պատանդ բռնեց անոր որդիները. սակայն քիչ վերջ թաթարներէն ազատ արձակուեցան: ԺԳ. դարու վերջերը, Քարամաններու եր-

3. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 238-239:

կրին տէրն էր Աւատ Ապուլֆետայ, ասոր օրով է որ Քարամաններու տէրութիւնը ընդարձակուեցաւ, Իկոնիոյ սուլթանութեան վերջանալուն 1294ին:

ԺԳ. դարուն վերջերը եւ ժԴ. դարուն սկիզբը, Քարամաններու երկրին կ'իջևէր Մուհամմէտ Պէտրէտտին: Ասոր յաջորդներէն մէկը, 1318ին, բազմաթիւ հեծելազուններով արշաւեց Տարսուսի սահմանները. սակայն Օչին Պայլ, Պոմպէոպոլսոյ սահմաններուն մօտ, յաջողեցաւ ցրուել անոնց վերջապահ զուեղերը: Նոյնին կամ անոր յաջորդին օրով՝ 1336ի սկիզբները, Քարամանները դարձեալ արշաւեցին Կիլիկիոյ վրայ եւ շատ աւեր դործեցին⁴:

1432ին Պերդրանտ անցնելով Լարանտայէն, զայն կը նկարագրէ իբր վաճառաչահ քաղաք մը, ուր հին բերդ մը կար՝ շատ ամուր, երկաթեայ եւ վայելուչ դռներով, սակայն պարիսպները կործանած⁵:



Լեւոնի բերդը (երլանգալէ) եւ դարպասը:
Forteresse et habitation de Lévon (Léon) (CEDCAM).

4. Տես ԽԱՉԻԿԵԱՆ, ԺԴ, էջ 273, 277: Սիսուան, էջ 295:

5. BERTRANDON, Voyage, էջ 106:

ԼԱՐԱՆՏԱ-ԳԱՐԱՄԱՆ

ԲԵՐԴԱՔԱՂԱՔ


Լիկալոնիոյ նահանգին նշանաւոր քաղաքներէն մէկն էր Լարամտա կամ Քարաման, Կարիւկաղնոսի ձախակողմեան ձորահովիտին մէջ, արեւմուտքէն եւ հարաւէն՝ սահմանակից Իսաւրիոյ, իսկ հիւսիսէն՝ Իկոնիոյ:

Այս շրջանները երբեմն գրաւուած են Ռուբինեաններէն, կամ լաւ եւս՝ Լեւոն Ա. Մեծագործէն: Իր օրով հայերը Կիլիկիայէն դուրս ալ, իրենց սահմաններուն կից, ունեցած են շատ բերդեր եւ ամրոցներ: Մովսէղերքէն Լեւոնի սահմանները կ'երթային մինչեւ Պամփիւլիա, իսկ ցամաքային կողմէն մինչեւ Կապադովկիա, Տիանա եւ Առակլի քաղաքները: Այսպէս, Լարանտան ալ՝ Լեւոն իր հզօր մականին տակ առաւ, հակառակ որ հոն կ'իջխէր Իկոնիոյ սուլթանը:

Երբ 1210ին՝ Լեւոն Սելեւկիան Երուսաղէմի ասպետներուն տուաւ, յոյս յայտնեց որ այլ նուիրատուութեան վրայ պիտի աւելցնէր նաեւ Լարանտան,



Լարամտա-Քարաման քաղաքը:
·La ville Laranda-Karaman (Sissouan).



Լարանտա-Գարաման եւ իր բազմանկիւմ բուրգերը:
Laranda-Karaman - les tours polygonales des remparts (Denoël).

Եթէ ինքը կամ իր յաջորդները յաջողէին առջադպիրներու ձեռքէն առնել այդ շրջանները: Թէ Լեւոն իր այս խոստումը իրագործած ըլլայ՝ յայտնի չէ, բայց որոշ է որ ան հասած է այդ կողմերը եւ տիրած Լարանտայի: Սիկարդ, Քրեմոնայի նպիսկոպոսը, որ նոյն ժամանակները Կիլիկիա եկած էր, քահանայապետական նուիրակ երկու Միրանաւորներու հետ, կ'ըսէ թէ Լարանտա Հայոց եւ Իկոնիոյ տէրութիւններուն սահմանն էր, առանց սակայն յստակելու թէ Լարանտա որո՞նց կը պատկանէր: Բայց Անաբրտոս, Փրեզերիկ կայսեր ուղեկիցը, կ'ըսէ եւ կը վկայէ՝ թէ Լարանտա Լեւոն Ա.ի ձեռքն էր եւ անոր երկրին մաս կը կազմէր. իսկ ինքը հոն տեսեր է հայ գիւղեր եւ խաչակիրներու գերեզմանատուներ¹:

1. Սիսուան, էջ 202:

Մեր պատմիչներուն համաձայն, Լեւոն Ա.ի Թագաւորութեան վերջին տարիներուն՝ Լարանտան տակաւին անոր ենթակայ էր. այնպէս որ երբ Լեւոն ծերացած եւ արդէն հիւանդ էր, Իկոնիոյ սուլթանը ուզած է վրէժը ընծել անկէ: Կը գրէ Սմբատ Սպարապետ. «Ի ժամանակս Լեւոնի ժողովեաց զօր սուլտանն Իկոնին... որ անուն էր Ազըտին Քայքայուզ: Եւ ի ծերութեան Լեւոնի որ ցաւտեալ էր ի նըկրիսէն, եւ աւերեալ էր ձեռքն ու ոտքն, կամեցան քէն հանել վասն շատ ուժերոյն, զոր արարեալ էր Լեւոն Թագաւորն իւրեանց, եւ առեալ էր զԱրակլի եւ զԼառնդա եւ Կեսարիոյ սղարելն՝ զոր ի յառ էած...: Նա սուլտանն երեկ, սղարեաց զԿապան բերդն»²: Այսպէս կը ծագի Կապան-Շողականի պատերազմը, որու մասին խօսեցանք՝ այդ բերդերը նկարագրելով: Ազատելու համար գերեալ հայ իշխանները, Լեւոն կը ստիպուի քանի մը բերդեր սուլթանին յանձնել, Լուրուէն մինչեւ Լօզաստ «եւ զԻսաւրիոյ գետն»³: Թէեւ բացայայտօրէն չի յիշուիր Լարանտա այս բերդերու կարգին, սակայն շատ հաւանական է որ ամբողջ այդ հողաշերտը իր բերդերով միասին Լեւոն զիջած ըլլայ:

Լարանտայի ծագումը մինչեւ Մեծն Աղեքսանդրի ժամանակները կ'երկարի. Յոյները զայն կոչած են Λάρανθα: Գրիստոնէութեան շրջանին կը բարձրաւճի եւ կ'ըլլայ եպիսկոպոսական թեմ Իկոնիոյ նահանգին:

Լարանտայի մէջ յունական եւ հռոմէական հնութիւններ չկան, այլ արարական քանի մը մզկիթներ, որոնցմէ մին նշելի է՝ ճարտարապետական տեսակէտէ:

Լարանտա իր հզօր բերդն ալ ունէր, բլուրի մը տափարակ զազաթին վրայ, բազմաթիւ քառակուսի աշտարակներով: Առաջին պարիսպներէն քիչ մ'աւելի հեռու, քաղաքը կը շրջապատուէր երկրորդ պարիսպով մը: Հոն, անցեալ դարուն, բաւական հայեր ալ կ'ապրէին, որոնցմէ շատեր գինեւաճառութեամբ կը զբաղէին: Ունէին մեծ ու վայելուչ եկեղեցի մը, որու կառուցման ժամանակի մասին յիշատակութիւն չունինք⁴:

2. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Փարիզ, էջ 117:
3. Անգ, էջ 118: Տես նաեւ ՄԻՔԱՅԷԼ ԱՍՈՐԻ, էջ 513:
4. Սիսուան, էջ 293:

ԱՆԴՈՒՇԾԱՅ ԲԵՐԴ

Անդուշծայ կամ Անդուշծի բերդին տեղը եւ պատմութիւնը անձանօթ կը մնան. քայն կը յիշէ Սմբատ Սպարապետ. բերդին իշխանն էր Պաղտին, որ տէր էր նաեւ ուրիշ քանի մը բերդերու. «Իշխանն Անդուշծին եւ Կուպային Պաղտին»¹: Պաղտին թագաւորական ընտանիքէն էր, եւ մեծ իշխան մը, սա ներկայ եղած է 1198ին Լեւոնի թագադրութեան հանդէսին:

Անդուշծայ բերդը Արիշան կը համարի թէ Կալիւկադնոսի ստորին հովիտին մէջ գտնուէր²:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

2. ՍԻՍՈՒԱՑ, էջ 328:

ԼԱԿՌԱԻՆՈՅ ԲԵՐԴ

Յիշուած Սմբատ Սպարապետէ իր Պատմութեան մէջ, եւ որուն իշխաններն էին 1198ին «Կոստանդին, եւ Նիկոֆոն»¹, որոնք ներկայ եղած են Լեւոնի թագադրութեան հանդէսին:

Այս բերդը հաւանաբար կը գտնուէր Պամփիլիոյ արեւմտեան շրջաններուն մէջ. Կոստանդին եւ Նիկեֆոն յոյն ըլլալու էին եւ հաւանաբար՝ հայր ու որդի²:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

2. ՍԻՍՈՒԱՑ, էջ 328:

ՊՈՒՆԱՐ ԲԵՐԴ

Կիլիկեան բերդերէն էր նաեւ Պունար բերդը, զոր կը յիշէ Սմբատ Սպարապետ, որուն տէրն էր նշանաւոր Կոստանց իշխանը, «Իշխանն Սելեւկիոյ եւ Պունարոյ Կոստանցն»¹: Կոստանց Լեւոնի թագադրութեան հանդէսին ներկայ եղած է եւ իր հաւատարիմ իշխաններէն մէկն էր. կ'իշխէր Սելեւկիոյ եւ Կալիւկադնոսի ամբողջ շրջանին. հետեւաբար այս բերդն ալ պէտք է որ այդ շրջանին մէջ փնտռենք²:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

2. ՍԻՍՈՒԱՑ, էջ 287:

ՍԻՆԻՏ ԵՒ ԿՈՎԱՍ ԲԵՐԴԵՐ

Սինիտ եւ Կովաս՝ կիլիկեան երկու անձանօթ բերդեր են, յիշուած Սմբատ Սպարապետէ եւ որոնց տէրն էր, Լեւոնի թագադրութեան շրջանին՝ «Իշխանն Սինիտու եւ Կովասու Ռոմանոս»¹:

Հ. Արիշան կը համարի թէ այս երկու բերդերը կը գտնուէին Կալիւկադնոս գետի ստորին հովիտին մէջ²:

Սինիտ կամ Սիւնիդ կը յիշուի իբրեւ եպիսկոպոսական թեմ Պամփիլիոյ նահանգին. հետեւաբար այդ երկու բերդերը այդ շրջանին մէջ պէտք էին գտնուիլ³:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

2. ՍԻՍՈՒԱՑ, էջ 328:

3. ԱՅՊ:

ՎԷՌԸՍԿՈՒ ԲԵՐԴ

Արեւմտեան Կիլիկիոյ բերդերէն էր Վէռըսկի կամ Վէռըսկու բերդը եւ հաւանաբար կը գտնուէր Էրմէնէկի մօտերը, Կալիւկադնոս գետի մէկ օժանդակին վրայ: Կը յիշուի նաեւ Վոռկիս անունով¹:

Այս բերդին իշխանը, որ կը կոչուէր Նիկոֆոն, ներկայ եղած է Լեւոն Թաղաւորի Թաղադրութեան հանդէսին, 1198ին. հաւանաբար յոյն իշխան մըն էր, ենթակայ Լեւոնի²:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

2. Սիսուան, էջ 577:

ՎԷՏ ԲԵՐԴ

Քարային Կիլիկիոյ բերդերէն էր, զոր կը յիշէ Սմբատ պատմիչ, եւ որու տէրն ու իշխանն էր Նիկեֆոն. «Իշխանն Վէտին եւ Վէռըսկու Նիկիֆոնն»:

Սա ներկայ եղած է Լեւոնի Թաղադրութեան հանդէսին: Այս բերդը հաւանաբար կը գտնուէր Էրմէնէկի մօտերը, Կալիւկադնոսի օժանդակներէն մէկուն վրայ, եւ պէտք չէ որ հետու ըլլար Վէռըսկու բերդէն, քանի որ երկու բերդերուն ալ տէրը նոյն Նիկեֆոնն էր: Այս շրջանի հետեւիներն ու բերդերը տակաւին ըստ բաւականի քննուած չեն, դժուարմատչելի դիրքերու մէջ ըլլալով²:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

2. Սիսուան, էջ 291:

ԴԱՇՏԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱ

ԼԵՒՈՆԻ ԲԵՐԴ ԿԱՍ ՕՁԵՐՈՒ ԲԵՐԴ
(ԵՐԼԱՆ ՔԱԼԷ)

ԸՆԻՀԱՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Տաւրոսեան լեռներու ստորոտներէն դէպի արեւմուտք՝ մինչեւ Միջերկրական ծով, եւ Տարսոնէն դէպի արեւելք՝ մինչեւ Ամանոսեան լեռները կը տարածուի ընդարձակ դաշտագետին մը, Յոյներէն հին ժամանակներէ ի վեր կոչուած է πεδίαδα, գոգաւոր դաշտագետին, իսկ այսօր Թուրքերէն կը կոչուի Չուգուր օվա: Այս դաշտագետինին մէջէն սրընթաց կը հոսին, Տաւրոսեան լեռներէն դալով, գլխաւոր երեք գետեր՝ Ճիհուն, Սիհուն եւ Կիւզնոս, որոնք իրենց ճամբու ընթացքին, ողողելով դաշտագետինի շրջակայ հողերը, կը թափին Միջերկրական ծով:

Այս ընդարձակածաւալ դաշտագետինը բոլորովին հարթ հաւասար չէ, դաշտին մէջ հոս ու հոն կը բարձրանան ոչ այնքան բարձր լեռներ, մանաւանդ արեւելեան հիւսիսային կողմերը, եւ որոնք Տաւրոսեան լեռներու հետ կապուած չեն. այս առանձին լեռներու եւ քլուրներու կատարներուն վրայ է որ կը բարձրանան Դաշտային Կիլիկիոյ քաղաքները:

Մտրաբոն յոյն պատմիչը եւ հին աշխարհագիրները, Դաշտային Կիլիկիոյ սահման կը գծեն, արեւմուտքէն՝ Սոլէէն եւ Տարսոնէն սկսելով, դէպի արեւելք կը հասցնեն մինչեւ Իսոսի դաշտը, որ Արեքսանդրակի ծովածոցին սկիզբն է, իսկ հիւսիսէն՝ Տաւրոսի լեռներէն մինչեւ Կապադովկիոյ շրջանները:

Այս ընդարձակ դաշտագետինը, որչափ որ շատ բարեբեր է, սակայն ամառները շատ տաք եւ վատառողջ օդ մը ունի, եւ ամառները անոր բնակիչները լեռներու վրայ կ'ապաստանին. ասոր համար այլ դարերու ընթացքին այս դաշտագետինը բազմամարդ եղած չէ. ուստի անկից դէպի արեւմուտք ալ երթեւեկութիւնը քիչ եղած է: Այս Դաշտային Կիլիկիոյ շրջանները շատ քննուած չեն, քացի քանի մը քաղաքներէն, եւ այս աշխարհամասին համար պատրաստուած աշխարհագրական քարտէզները, այդ շրջանները անապատային շրջան կը նշանակեն, դատարկ եւ անմշակ մեծ մասով:

Ուրեմն մենք ալ պիտի սկսինք նկարագրել սկսելով Ջահան գետահովիտէն, ուր կը բարձրանան քաղաքներ եւ բերդեր. Մսիս, Ատանա եւ Տարսոն:

Ալիշան Դաշտային Կիլիկիոյ իբրեւ մաս կը դնէ նաեւ Սիսի եւ Անազաբայի շրջանները, ինչ որ մենք Լեռնային Կիլիկիոյ մաս կը համարինք եւ նկարագրած ենք այդ շրջանի լեռներու կարգին:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Լեւոնի բերդը կամ Օձերու բերդը (Երլամ ֆալէ), կոչուած նաեւ Շահի Մարամ կամ Շեհիսի Մարամ բերդ, Կիլիկիոյ նշանաւոր, ամէնէն ակնառու եւ անաղարտ մնացած բերդերէն մէկն է: Կը գտնուի Իսկենտերուէն Մսիս եւ Ատանա գացող ճամբուն ձախին, 39 քլմ. հեռաւորութեան մը վրայ, բլրան մը կատարին: Բերդը բոլորովին առանձնացած է, մօտէն կ'անցնի Ճիհուն գետը. հրաշալի դիրք ունի, կրկնակի պարիսպներով շրջապատուած է, բոլորածեւ աշտարակներով զօրացած:

Մեր կիլիկեան պատմիչները, նոյնիսկ Մմբատ Սպարապետ, չեն յիշեր զայն, ոչ իսկ Լեւոնի Թագադրութեան հանդէսին առթիւ: Թերևս 1198էն վերջը կառուցուած լըլայ եւ կամ հին ատեն ուրիշ անունով մը ճանչցուած էր: Այլապէս, դժուար է կուսել թէ ինչո՞ւ մեր պատմագիրները լռութեամբ կ'անցնին անոր մասին, քանի որ Օձերու բերդը լեռներու մէջ կորսուած եւ անծանօթ բերդ մը չէ, այլ բաց դաշտին մէջ՝ ամէն կողմէ կը տեսնուի: Հ. Ղ. Ինճիճեան, Երեմիա Չէլէպիէն առնելով, կը գրէ իր «Նոր Հայաստան» գրքին մէջ՝ Երլամ ֆալէսի կամ Երլամլը ֆալէ, կամ Շահմարամ ֆալէսի մասին. «Բերդ ի գլուխ լերին... Թափուր է ամենեւին ի քնակչաց, եւ մերձենալ իսկ անդ ոչ ոք ի շիտէ քնաւ սակս բազմութեան օձից որք որջացեալ ունին ի նմա»:

Հ. Ալիշան իր «Սիսուան»ին մէջ բաւական երկար կը խօսի այս բերդի մասին, Օձերու բերդը կամ Շահի Մարան կոչելով, բայց ոչ Լեւոնի բերդ, ինչպէս ոմանց հաճելի է կոչել:

Ըստ տեղացի ժողովուրդի ավանդութեան, այս բերդի շուրջը հաւաքուեր են ամէն կողմէ օձեր, իրարու դէմ կռիւ ընելու համար, եւ ապա հոն հաստատուելով բազմացեր են, եւ քերդը կոչուած է Օձերու բերդ:

Ուրիշ ավանդութիւն մ'ալ կ'ըսէ թէ այդ ապառաժոտ բարձունքին վրայ կ'ապրի եղբր վիշապ օձ մը, կամ լաւ եւս օձամարդ մը, որ ուզած է տեղւոյն



Լեւոնի բերդ (Երլամֆալէ). գլխաւոր մուտքը՝ վերին բերդի հարաւ-արեւմտեան կողմը:
Forteresse de Lévon (Yilankale). L'entrée principale sur le côté sud-ouest du château supérieur.

Թագաւորին գեղանի աղջիկը յափշտակել, բայց չըջակայ գիւղերու բնակիչները զայն կը հալածեն. վիշապ օձամարդը կը փախչի եւ կ'երթայ պահուրտելու Տարսոնի բաղնիքին մէջ, ուր կը հասնին զինուած մարդեր եւ զայն կը սպաննեն: Այս աւանդութիւնները լսելով՝ գրի առած է Լանկլուա²: Իսկ Թուրքերու ուրիշ աւանդութեան մը համաձայն, օձապաշտ մէկը կամ օձերու կախարդիչ մը, Շէյխ Իմրան կոչուած, այս տեղը իրեն բնակութիւն ընելով՝ հոն հաւաքած է բազմաթիւ օձեր. ահա թէ ինչո՞ւ Օձերու բերդը կոչուած է նաեւ Շահի Մարան՝ Շէյխ Իմրանի անունով:

2. Միսուս, էջ 251:



Լեւոնի բերդ (Երլամֆալէ). վերին բերդի հարաւ-արեւմտեան ճակատի կիսաբոլոր աշտարակները:

Forteresse de Lévon (Yilankale). Les tours sémicirculaires de la façade sud-ouest du château supérieur.

Օձերու բերդը վերջին յիսուն տարիներու ընթացքին առարկայ եղած է բազմաթիւ գիտական այցելութիւններու եւ հետազոտութիւններու³:

1964ին Օձերու բերդին վրայ բարձրացած է նաեւ Շաւարշ Քէյ. Պալըմեան եւ իր տեսածներն ու սպաւորութիւնները գրած՝ «Մարմարա» օրաթերթին մէջ. «Մէկ ժամուան չարքաչ եւ վտանգաւոր մաքառումներէ վերջ, վերջապէս Լեւոնի բերդին դրան առջեւ կը հասնիմ. սակայն անկից վեր տակաւին բաւական տեղ կար քարձրանալու: ... Բերդը իր արտաքինով՝ տեսնողին վրայ մեծ ազդեցութիւն կը ձգէր, բերդին աջ կողմը սանդուխ մը կար, ուսկից կարելի էր կեդրոնական աշտարակին վրայ բարձրանալ: Բերդին կեդրոնին վրայ կար քանդակուած պատկեր մը, Մեծին Լեւոնի դիմանկարն էր. Թագաւորը ծալապատիկ նստած, մէկ ձեռքով խաչ մը բռնած էր, իսկ միւս

3. Տե՛ս GOTTWALD, Burgen, էջ 89-93: THOMSON, Castles, էջ 574: YOUNGS, էջ 125-133: MÜLLER-WIENER, Castles, էջ 78-79: BOASE, էջ 186: Եւ ժամանակ՝ HELLENKEMPER, Burgen, էջ 160-187:



Լեւոնի բերդ (Երլանգալէ), վերին բերդի աշտարակից հիւսիսային կողմը (Հելլենկեմփեր):
La forteresse de Lévon (Yilankale), le côté nord de la tour supérieur (Hellenkemper).

ձեռքով ալ թագաւորական մականը. թագաւորին երկու կողմերը երկու առիւծներ կային՝ յարձակումի վիճակին մէջ: Այս փորագրուած պատկերը շատ կը նմանէր կիլիկեան ձեռագիրներուն մէջ պծուած Լեւոն թագաւորի պատկերին, դատաստանի դիրքին մէջ: Դրան աջ կողմը սանդուխ մը կար, որ աշտարակ կը հանէր. ձախ կողմը կային ջրամբարներ: Բերդին հիւսիսային ծայրին վրայ կար քառակուսի քարձր աշտարակ մը, քարին մէջ փորուած սանդուխներով: Քարին մէջ փորուած կար նաեւ եկեղեցի մը, սակայն կէս մնացեր էր: Այս քերդը շատ կը նմանի Այաշի բերդին իր արտաքինով, ճարտարապետական կառուցուածքով եւ անոր մէջ գործածուած շինութեան շաղախով, ինչ որ ցոյց կու տան թէ բերդի շինութիւնը հին ժամանակներու մէջ եղած չէ, այլ աւելի նոր: Բերդին պարիսպները սղոճածեւ են ատամնաւոր նետաձգութեան համար. պարիսպներուն վրայ ինչ ինչ տեղեր կը տեսնուին թեւաւոր առիւծներ»⁴:

4. ՇԱՒԱՐՇ ԳԶԾ. ՊԱԼՄԵԱՆ, «Մարմարա» օրաթերթ, 1964:



Լեւոնի բերդ. վերին բերդի աշտարակից մուտքը (Հելլենկեմփեր):
Forteresse de Lévon (Yilankale), l'entrée de la tour supérieure (Hellenkemper).



Լեւոնի բերդ. վերին բերդի աշտարակի մասնակի տեսք (Հելլենկեմփեր):
Forteresse de Lévon (Yilankale), la tour supérieure, détail (Hellenkemper).



Լեւոնի բերդ (Երլանֆալէ)՝ ընդհանուր տեսք դէպի դաշտագետին՝
 Forteresse de Lévon (Yilankale), vue générale sur la plaine.

Երլանֆալէի կամ Օձերու բերդի պատմութիւնը մութ Կ. Մեր հին պատմագիրները, ինչպէս ըսինք, զայն չեն յիշեր: 1467ին գրուած յիշատակարանի մը մէջ⁵ կը յիշուի Լեւոնի բերդ մը, ուրիշ ծանօթ քանի մը բերդերու հետ⁶:

5. Հայագատում, 32, էջ 579: Սիսուան, էջ 228: ԽԱԶԻԿԵԱՆ, ԺԵ, ԹԻԷ 349, էջ 273:
 6. Բագմաթիւ մանրամասնութիւններ տե՛ս ԵՂԻԱՅԵԱՆ ԲԻԻԶԱՆԻ, Ատանայի Հայոց Պատմութիւնը, Անթիլիաս, 1970, էջ 105-108:




Լեւոնի բերդ (Երլանֆալէ)՝ վերին աշտարակի մուտքի քանդակները. կերտուող՝ Լեւոն Մեծագործ, ծալապատիկ նստած, երկու առիւծներու միջեւ:
 Forteresse de Lévon (Yilankale), reliefs de l'entrée de la tour supérieure.



Լեւոնի բերդ կամ Օձերու բերդ եւ ձիւնոմ գետը:
 Forteresse de Lévon (Yilankale) et la rivière de Djihoun.




Լեւոնի կամ Օձերու բերդը իր քառակուսի աշտարակով, արեւելեան կողմէն տեսնուած :
Forteresse de Lévon (Yilankale) et sa tour quadrangulaire, vue de l'est.



Լեւոնի բերդ (Երլանֆալէ), վերին բերդի աշտարակը հարաւէն դիտուած :
La forteresse de Lévon (Yilankale), la tour supérieure vue du sud.



Լեւոնի բերդ կամ Երլանֆալէ :
Forteresse de Lévon (Leon) (CEDCAM).




Լեւոնի բերդը կամ Օձերու բերդը ներսէն տեսնուած :
La forteresse de Lévon (Yilankale) vue de l'intérieur.



Լեւոնի կամ Օձերու բերդէն մաս մը ներսէն տեսնուած :
La forteresse de Lévon (Yilankale) vue de l'intérieur.



Լեւոնի բերդ (Երլամբալէ), ներքին տեսք, հիւսիսային մարտկոց:
La forteresse de Lévon (Yilankale) vue de l'intérieur, bastion nord.



Լեւոնկլայի յատակագիծը.— Ա. վարի գաւիթի դարպաս, Բ. Միջին գաւիթի դարպաս, Գ. վերի գաւիթի դարպաս, Դ. Զրամբար, Ե. Մատուռ, X կողմնակի դուռ:

Plan de la forteresse de Lévon.

ԹՕՓՐԱԳ ՔԱԼԷ

Դաշտային Կիլիկիոյ նշանաւոր եւ աչքառու բերդերէն մէկն է Թօփրագ քալէ կոչուած բերդը: Կը բարձրանայ Ամանոսեան լեռներու արեւմուտքը, գետակի մը մօտ, կոնաձեւ բարձունքի մը վրայ, շուրջ 800 մեղր բարձրութեան վրայ: Շատ հեռուներէն վը տեսնուի բերդը, շինուած է հրաբխային սեւ քարերով, ինչպէս են իր շրջակայ գիւղի բնակարանները:

Բերդի պարիսպներու բարձունքէն հրաշալի տեսարան մը կը պարզուի. դէպի հիւսիս կը տարածուի ընդարձակ դաշտագետին մը, մինչեւ Տաւրոսի լեռներուն ստորոտը, աջին՝ ունենալով Մսիսի եւ ձախին՝ Ամանոսի լեռները. իսկ հիւսիս-արեւմտեան կողմէն կը տեսնուին Սնարզարայի եւ Սիսի պարիսպները:



Թօփրաքալէ, արեւմտեան կողմ:
Toprakkale, côté ouest.



Թոփրաֆալէ, ընդհանուր տեսք արեւելքէն:
Toprakkale, vue générale de l'est.

Թօփրազ քաղէ բերդը ամբողջութեամբ քանդուած չէ. ունի կրկին պարիսպներ. ներքին պարիսպները շատ ամուր են: Բլուրին մէկ բարձունքին վրայ կը բարձրանայ իր ներքին բերդը, դարձեալ զօրաւոր պարիսպներով եւ անառիկ, ներքին բերդը հաստատուած է մեծ կամարներով եւ ունի ներքին յարկեր, շուրջը փոքրիկ սենեակներ: Բերդին բակին մէջտեղ կայ ջրամբար մը, մթերքի համար մասնաւոր ամբարանոցներ եւ անոնց տակն ալ կենդանիներու համար ախոռներ: Բերդին ստորտը, գետակին ափին, կը մնան տակաւին իր հին զիւղի աւերակները, ուր կանգուն կը մնայ մզկիթի մը մի նարէթը, շինուած սեւ քարերով:


Հոս ու հոն փնկած կը մնան սիւներու մնացորդներ եւ կոթական սիւներու կտորներ, ինչ որ ցոյց կու տան հին շինութիւն ըլլալը. հաւանօրէն այս մէկն է այն քերդերէն՝ որ կը յիշուին Հեթումի պարգեւագրին մէջ:

Մեր պատմիչները, սակայն, զայն չեն յիշատակեր իր այս թրջական անունով. հին աստն հաւանաբար ուրիշ անունով ճանչցուած եւ կոչուած էր: Արիշան զայն Հոպարերդ կը կոչէ՝:

1. Սիսուան, էջ 210:



Թոփրաֆալէ, հիւսիսէն դիտուած:
Toprakkale, vue du nord.



Թոփրաֆալէ, մասնակի տեսք:
Toprakkale, détail.



Թոփրաֆալէ դղեակը:

Toprakkale, la forteresse (Denoël).



Թոփրաֆալէի պարիսպներէն մասեր եւ մեծ աշտարակը:

Toprakkale, détail de l'enceinte et la grande tour (Denoël).



Թոփրաֆալէ արեւելէն տեսնուած:
Toprakkale vue de l'est.

ԱՒԱԶԱԲԵՐԴ

Դաշտային Կիլիկիոյ բազմաթիւ բերդերէն մէկն էր Աւազաբերդ, որ կոչուած է տեղացիներէն՝ Գում-գալէ. թէ ինչո՞ւ այս անունը ստացած է՝ չենք գիտեր:

Գում-գալէ կը գտնուէր Ջահան գետի հովիտի արեւելեան ափին վրայ, անտառոտ չրջանի մը մէջ, լեռնային բարձունքի մը վրայ, Անարգարայի արեւելքը եւ Հարունէի հարաւը: Ե՞րբ եւ որմէ շինուած է՝ չենք գիտեր. հաւանաբար Հռոմէացիներէն, որովհետեւ հնագէտներուն համաձայն՝ անիկա Աքիլէոսմ կը կոչուէր: Կիլիկեան կամ օտար պատմիչներ՝ անոր անունը չեն յիշեր:

Ալիշան խօսելով Դաշտային Կիլիկիոյ բերդերու մասին, կը յիշէ զայն թրքական անունով՝ Գում-գալէ, ուրիշ շատ մը բերդերու կարգին, որոնք կը գտնուէին անոր մօտերը, այսպէս՝ Անաշա, Երլան-գալէ, Գուրտ-գալէ, Թումու-գալէ, Չորտան-գալէ, Թօփրազ-գալէ, Բապուր-գալէ, Քիւչիւզ-գալէ, Ազ-գալէ եւ ուրիշներ՝:

Ինչ որ կ'երեւի, Գում-գալէ Կիլիկեան չրջանին քանդուած էր եւ անգործածելի դարձած, որու հետեւանքով մեր պատմագիրները չեն յիշեր անունը, եւ սակայն բերդին չրջակայքը հնախօսական դօտի մը եղած է հին ժամանակներէ ի վեր՝:

1. Սիսուան, էջ 65:

2. Սիսուան, էջ 204:


ԱՏԱՆԱ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Դաշտային Կիլիկիոյ, հին ժամանակներէ ի վեր ծանօթ, անուանի եւ վաճառաշահ քաղաքն էր Ատանա: Կը գտնուի համանուն ընդարձակ դաշտագետնին մէջ, Սիհուն գետի երկու ափերուն վրայ: Մտիսէն 28 քմ. հեռու, Տարսոնէն 38, Կիլիկիոյ Պահակէն 80, Անարգարայէն 46, Միսէն 73, ու ծովէն 50 քմ.:

1800ական թուականներուն, Հ. Ղ. Ինճիճեան այսպէս կը ներկայացնէր Ատանա քաղաքը եւ անոր բերդը. «Ունի քերդաքաղաք փաշայանիստ, ընդ որ անցանէ գետն Սէյհան կամ Չազըտ որ ի բնակչաց կոչի Ըրմազ, 68 ժամաւ հեռի ի ծովէ, եւ 90 մղոնաւ յԱնդաքեայէ: Բնակիչք քաղաքիս տաճիկք, եւ յազգէս հայոց իբրեւ 1000 տունք. քտանի եւ ի յունաց 4 կամ 5 տունք. բազմութիւն վաճառականաց ժողովին ի սմա աստի եւ անտի մանաւանդ ի Գայսէրիոյ, որք ի գանազան գաւառս սիոեն գրամբակ նորա. իւրաքանչիւր տունք ունին տանիս, զի են ըստ մեծի մասին քաղաքք Անատոլիոյ: Ունի իջեւանս այսինքն խանս, քաղանիս եւ վաճառանոցս. երկու եկեղեցիս հայոց շինեալ ի թրճեալ աղիւսոյ (որպէս եւ այլ շինուածք Ատանոյ), որք կոչին վերի եւ վարի: Վերինն է յանուն սրբոյ Աստուածածնին, իսկ վարինն յանուն սրբոյն Ստեփաննոսի, նորոգեալ ի թուականիս ՌՂԸ, խորանքն միայն են քարաչէն, բայց ոչ նստի յայս քաղաք առաջնորդ:

«Ի մէջ մզկիթաց սորա երեւելի է այն մզկիթ հանդերձ մէտրէսէիւն որ է առ Չազըտ գետով, շինեալ ի փաշայէ ումեմնէ ռամատանեան զարմին, որք նախ քան զառնուլ օսմանականաց տիրէին կողմանցս այսոցիկ, էսկի ճամի, որ յառաջն էր եկեղեցի յանուն սրբոյն Յակոբայ: Առ Չազըտ գետով է ապարանք փաշային, նաեւ փոքրիկ բերդ քաղաքին՝ որոյ շրջապատն է իբրեւ 300 քայլ. կառուցեալ ի վերայ կարծրակուտ վիմի, պարիսպ նորա զարդարեալ բրգօք, եւ ի մէջ բերդին բազում ամբարանոցք, եւ բանտ զարհուրելի, որ է գուբ բոլորակաճեւ, իբրեւ 60 ոտնաչափ շրջապատ նորա. եւ իբրեւ 40 խորութիւն նորա. ի բերդին են տունք պահակաց: Գետն առաջի քաղաքիս է ընդարձակ յոյժ, յորոյ վերայ շինեալ կայ մեծագործ կամուրջ քարաչէն, բազմակամար. ջուր սորա գոլով բարեհամ եւ յստակ յոյժ, քաղաքացիք աստի ըմպեն, եւ ջրկիրք անդադար կրեն ի քաղաքն, արտաքոյ քաղաքին են նաեւ ջրանցք մեծամեծք:



Ատանա, Սիսուան գետ եւ հեռուն՝ Տարոսի լեռները:
La ville d'Adana sur le fleuve Djihoun et loin les monts du Taurus (Sissouan).

«Յամարայնի ծանր գորով օգ Ատանայի, փաշայն յամարանոցն ելանէ, այսինքն ի եայլագն, եւ ընդ նմա ամենայն քաղաքացիք, իւրաքանչիւրոց սփռեալ ի տունս ամարանոցաց իւրեանց. եւ յայնժամ դատարկանայ ի բնակչաց այս քաղաք, միայն կրպակաւորաց ոմանց մնացեալ անդ ի պէտս անցաւորաց, եւ սակաւուց պահապանաց որք մասնաւոր տրովք պահ ունին իւրաքանչիւր թաղից»¹:

Ատանայի մասին այս ընդհանուր ծանօթութիւններէն ետք, տեսնենք հիմա անոր անցեալը պատմութեան մէջ:

ՊԱՏՄԱԿԱՆ

Ատանա շատ հին քաղաք է. հնուց ծանօթ էր ճամբորդներուն եւ վաճառականներուն, բայց ոչ նոյն անունով. հաւանաբար հին անունն էր **SARUS**:

1. Է. Ղ. Ինձիձնն, Նոր Հայաստան, էջ 358-359:



Ատանա քաղաքի տեսքը հեռուէն:
Adana, vue de loin (Sissouan).

Ն. Ք., Ա. դարու կէսերուն, Ատանան կը յիշուի Միհրդատի եւ Հոռմէացիներուն պատերազմին առթիւ:

Ատանա անունը ոմանք կը կապեն փիւնիկերէն Ատան բառին, որ ուռենի կը նշանակէ. ասոնք առատօրէն կ'աճէին Ատանայի շրջանին մէջ, մանաւանդ Սիհուն գետին եզերքները: Ուրիշներ կը համարին որ Ատանայ անունը: Սարոս գետի անունն նման, առաջ եկած ըլլայ Ատանա, եւ Սարոս քորավարներու անուններէն, որոնք կ'իշխէին այդ շրջանին եւ որոնցմէ մէկուն անունով գետը՝ որ քաղաքին մէջէ կ'անցնէր՝ կոչուած է Սարոս, իսկ քաղաքը՝ Ատանա:

Պոմպէոս Ատանայի մէջ նախ բնակեցուցեր է ծովահէններ, եւ զանոնք ստիպեր է որ մշակութեամբ զբաղին. այդ շրջանին՝ Ատանա հռոմէական քաղաք եղած էր: Ադրիանոս կայսրը, քաղաքին մէջէն անցնող Սիհուն գետին վրայ շինել կու տայ գեղեցիկ կամուրջ մը, 400 մեդր երկար, 22 աչքերով:

Ատանա, դաշտի մէջ ըլլալով, շուրջը բնական ամրութիւններ չունէր. ուստի շարունակ Ատանա ենթարկուած է Դարձակումներու եւ աւերուած՝

մինչև Դ. դարու կեսերը: Ապա Ատանա կ'անցնի Բիսպանացիներու ձեռքը. 2. դարուն Յուստինիանոս կայսրը զայն կը շինցնէ: Արարները կ'արշաւեն Կիլիկիա, եւ Ատանա կուռահանձոր կ'ըլլայ. անոր շուրջը երկար կոխիւներ կը մղուին, Արարները կը տիրեն քաղաքին: Հարուն-էլ-Ռաշիտ կը սկսի եւ անոր որդին կը շարունակէ շինել քաղաքին պարիսպները եւ դղեակը. պարիսպները ութը դռներ ունէին: Ատանա Ժ. դարուն բարգաւաճ քաղաք մըն էր, թէեւ կէս առ կէս փոքր էր Մսիսէն:

1072ին, Մանազկերտի պատերազմէն վերջ, Ռոմանոս Դիոգինէս կայսրը, պարտուած եւ հոգին ազատած՝ շունչը առած է Ատանա, ուր կը լսէ թէ Միքայէլ փորավարը իր տեղ ինքզինքը կայսր հռչակած է եւ անոր կուսակիցները Ատանա եկած են զինք ձերբակալելու համար. «Յայնժամ համբաւ հասնէր առ Տիօփէնն՝ եթէ թագաւորեաց Միխայլ որդին Տուկծին, եւ թողեալ զնա ամենայն փորքն իւր փախեան. եւ Տիօփէնն գնաց փախստական ի քաղաքն որ կոչի Ատանա, եւ ժողովեցան ի վերայ նորա փորք թագաւորի Միխայլին. իսկ Տիօփէնն առ վտանգի իւր դրեցաւ զգետտ արեղայի՞»:

Տիօփէն կայսեր մահէն վերջ, Պարսիկներու խանը կը գրաւէ Ատանան. սակայն 1097ին Պաշակիրները՝ իրենց առաջին արշաւանքին՝ կ'առնեն զայն եւ հոն կը գտնեն ոսկի, արծաթ եւ առատ պարէն: Ատանան գարձեալ կ'անցնի Յոյներու ձեռքը:

Պաշակիրներու պատմիչները կ'ըսեն թէ Ատանա ամուր պարիսպներով եւ աշտարակներով փորացած քաղաք մըն էր, բազմամարդ եւ հարուստ: Կը յիշեն նաեւ այնտեղ Օշին անուանով իշխան մը, հաւանօրէն ենթակայ Բիւզանդիոնի, զոր Ալիշան զայն Լամբրոնի տոհմապետը կը նկատէ⁵:

Յոյներէն Ատանան կը գրաւէ Տանգրէտ, զոր՝ իր նահանգով՝ Անտիոքի իշխանութեան կը միացնէ: Տանգրէտի յաջորդները տկար կ'ըլլան, որոնցմէ կ'առնէ Ատանան մեր Լեւոն իշխանը, անոր հետ գրաւելով նաեւ ուրիշ բերդաւաններ գաշտային Կիլիկիոյ մէջ, զոր ամէնքն ալ կորսնցուց՝ երբ գերի բռնուեցաւ եւ Պոլիս տարուեցաւ իր երկու զաւակներուն հետ: Սակայն Թորոս Բ., Լեւոնի որդին, գերութենէն վերադառնալով Կիլիկիա, իր առաջին զորքը նկատեց իր հայրենական հողերուն տիրանալ, եւ գրաւեց Ատանան: Սակայն ասկէ առաջ, Թուրքիներէն եւ Հեթումեանները թշնամութեան մէջ ըլլալով, Օշին Լամբրոնացի կը գրգռէ Թուրքերը Թուրքիներէն զէմ, որոնք Ատանայի վրայ յարձակելով, մեծ աւեր կը գործեն⁶:

Յաջորդաբար Ատանա իր կարեւորութիւնը կը կորսնցնէ: Լեւոն Մեծի օրով երկրորդական քաղաք մ'էր. Լեւոնի թագադրութեան առթիւ չի յիշուիր անոր իշխանը:

Եգիպտացիներու արշաւանքներուն, Պիպարս կը հասնի մինչև Ատանայի դռներուն առջեւ եւ կը գրաւէ զայն (1266):

2. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 243:
3. Սիսուամ, էջ 257:
4. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 211:



Ատանայի ճշմարտոր գաշտագետիկը եւ բամբակեաց:
Adana et sa célèbre plaine de cotonnier.

1310ին Ատանայի մէջ կնքուած է դաշինք մը Կիպրոսի Հենրիկոս Բ. թագաւորին եւ ասոր Ամօրի եղբոր միջեւ, որ Հայոց Օշին թագաւորին քեռայրն էր, Պապին նուիրակին ներկայութեան: Ատանա գումարուած է նաեւ 1316ին, Օշին թագաւորի եւ Կոստանդին կաթողիկոսի օրով՝ աղգային եկեղեցական Սիւնհոդոսը, բազմաթիւ իշխաններու ալ մասնակցութեամբ:

Լեւոն Դ.ի օրով, ինչ որ կ'երեւի, Ատանա բարգաւաճ շրջան մը բոլորած է⁵: 1335ին Ատանա գարձեալ ասպատակութեան գաշտ կը դառնայ⁶, որմէ ետք ալ չի յիշուիր Կիլիկիոյ թագաւորութեան լնթացքին⁷:

5. Մամուէլ Անեցիի շարունակողը (ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, էջ 158), 1322ին կը յիշէ Ատանայի գրաւումը Եգիպտացիներուն կողմէ եւ բերդին քանդումը: Ալիշան կը նախընտրէ, սակայն, ինչ ինչ ձեռագիրներու Այաս ընթերցումը՝ փոխանակ Ատանայի (Սիսուամ, էջ 259): Հմմտ. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Փարիզ, էջ 129):
6. Շարունակութիւն ՍԱՄՈՒԷԼԻ ԱՆԵՑԻՈՅ, Ա, էջ 159: Սիսուամ, էջ 260: Անեցիի շարունակողը ասպատակութիւնը կը վերագրէ Եգիպտոսի Նասր սուլթանին, մինչ Ալիշան՝ Հալէպի սուլթան Ալթուն-Դաշ Նայիպին:
7. Սիսուամ, անդ:

1378ին թուրք Բամազան ցեղեր կը տիրեն Ատանայի, մինչև որ 1575ին Օսմանեան կայսրութեան մէջ կը մտնէ՞:

Պերդրանտ ուղեգիրը, երբ 1432ին այս կողմերէն կ'անցնէր, կը յիշէ իր Ատանա մնալը, եւ կ'ըսէ լիք բաւական մեծ վաճառաշահ քաղաք մըն էր, ծովէն ոչ շատ հեռու, բարեբեր դաշտի մը մէջ, մեծ գետի մը ափին, որուն վրայ, կ'ըսէ, երկար եւ լայն կամուրջ մը կար՞:

1467ին Շահսուար Չիւլքատրեան կը գրաւէ Ատանան: ԺԾ. դարուն վերջերը Եգիպտացիները դարձեալ կը պաշարեն զայն եւ կը քանդեն պարիսպները: Օսմանցիներու օրով ալ չեն պակսիր ասպատակումներ եւ աւերներ, ինչպէս 1606ի Թաւրի ասպատակութիւնը, որ կը յիշուի Եփրեմ Կաթողիկոսի պատմութեան մէջ՞:

1707ին, Փօլ-Լիւք ուղեգիրը Ատանա այցելելով, կը գրէ Ատանայի բերդի մասին, որ կը գտնուէր գետեզերքին մօտիկ, 300 քայլ շրջապատով, երկաթէ դռներով ամրացած, թէեւ ներսը պարապ էր եւ քնակութիւն չկար, եւ ոչ ալ զինամթերք: Նշանաւոր էր Ատանայի բերդին մէջի քանտը՝ որ գուր մըն էր, 15 մեդր խոր, ուր կային եւ կը տառապէին 60ի մօտ քանտարկեալներ. ասոնց մէջ Ասորուց պատրիարքը՝ իր երեք եպիսկոպոսներով, որոնք հոն նետուեր էին կրօնական խնդիրի մը համար, իրենց հակառակորդներէն ամբաստանուելով: Ուղեգիրը կը յիշէ Ատանայի նշանաւոր մեծ կամուրջը, 22 կամարներով՞:

Տիրահոջակ է Ատանա մեր արդի պատմութեան մէջ, 1909ի ահաւոր կոտորածով: Դարուս սկիզբը Ատանայի մէջ կը հաշուուէին շուրջ 11.000 հայեր՞:

8. Անդ:

9. BERTRANDON, Voyage, էջ 98:

10. Հմմտ. Սիսուամ, էջ 260:

11. Անդ, էջ 261:

12. Մանրամասնութիւններու համար տես՝ Էփրիկեան, Ա, էջ 270: Նաեւ՝ Սիսուամ, էջ 261-262: Նորագոյն հրատարակութիւններէն՝ յիշենք ամէնէն ուղարկչը, Բ. ԵՂԻԱՅԵԱՆԻ Ատանայի Հայոց Պատմութիւնը, Անթիլիաս, 1970:

ՏԱՐՍՈՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

Կիլիկիոյ մեծագոյն եւ նշանաւոր քաղաքներէն մէկն էր Տարսոն, հաւանաբար շինուած Հիթիթներէն, եւ դարերու ընթացքին կարգաւ եղած ասորեաստանեան, պարսկական, յունական, հռոմէական, բիւզանդական, հայկական եւ հուսկ թրքական քաղաք մը: Մենք Տարսոն կը կոչենք զայն յունարէն τάρσοςի հետեւողութեամբ: Հին հռոմէացիները կը կոչէին Tarsus, որմէ կը սերին եւրոպական արդի լեզուներու կոչումները: Հնութեան մէջ կոչուած է նաեւ Քաղաք Անտիոքացոց (Սերեւկեան շրջանին) եւ Յուլիոպոլիս (Julio-polis)՝ հռոմէացիներու օրով՞:

Տարսոնի շինութեան մասին յունական զիջարանութիւնը զանազան առասպելներ յօրինած է. մենք զանոնք զանց ընելով՝ կու տանք հոս ինչ որ պատմական է:

Մեծն Աղեքսանդր գրաւելով ամբողջ Փոքր Ասիան, Տարսոնն ալ կ'առնէ Պարսիկներու ձեռքէն եւ զայն յունական քաղաքակրթութեան կեդրոն մը կը դարձնէ: Սերեւկեաններու շրջանին Տարսոն եւս աւելի կը բարգաւաճի եւ յետ Աթէնքի ու Աղեքսանդրիոյ այդ շրջանի կարեւորագոյն քաղաքներէն մին կը հանդիսանայ: Այս կացութիւնը կը շարունակուի նաեւ հռոմէական շրջանին եւ քրիստոնէութեան առաջին դարերուն: Այսօր 50.000ոց թրքական քաղաք մըն է. պատմական արժէք ներկայացնող հնութիւններ չունի, բացի քաղաքին հռոմէական մէկ դռտէն:

Արդէն Բիւզանդացիներու օրով, Ժ. դարուն վերջերը, Տարսոնի մէջ կը հաստատուի հայ արքեպիսկոպոսական աթոռ մը, որուն վրայ յետագային պիտի բազմէր Ս. Ներսէս Լամբրոնացի:

Մեր ազգային պատմութեան մէջ, նախապէս, Դ. դարուն կը յիշուի Տարսոն: Արքեպիսկոպոս Դ. Հայքի կառավարիչը, որ Ս. Արիստակէսը սպաննել տուած էր, փախստեայ ապաստանած է Տարսոն:

Չ. դարուն Արաբները կը տիրեն Տարսոնի եւ հոն ոստիկաններ կը դնեն՝ իբրեւ կառավարիչներ. հոն եկած են նաեւ արաբ ամիրաներ, ինչպէս Մէմուն 833ին՝ որ հոն ալ մեռած է:

1. Սիսուամ, էջ 265:

965ին հայազգի Նիկեփոր Փոկաս կայսրը, նոյնպէս հայազգի Չմշկիկ զօրավարին օգնութեամբ եւ առաջնորդութեամբ, Տարսոնը կը վերագրաւէ եւ հոն կը բերէ բազմաթիւ քրիստոնեաներ. ի յիշատակ իր այս յաղթութեան, Նիկեփոր կայսրը հանել կու տայ Տարսոնի եւ Մսիսի երկաթէ գեղեցիկ դռները եւ Պոլիս կը տանի²:

ԺԱ. դարուն վերջին քառորդին, Յոյներու կողմէ Տարսոնի կառավարիչ կը դրուի հայազգի Ապրղարիպ Արծրունին, Սուլ Սաշիկի որդին³:

Առաջին Սաշակիւրներու գալուստով, Անտիոքի գրաւումէն առաջ, Տանգրէտ փրանկ իշխանը Տարսոնի վրայ եկաւ, եւ տեղւոյն հայ բնակիչներուն օգնութեամբ, գրասեց քաղաքը:

Ասկէ վերջ Տարսոն, մինչեւ ԺԲ. դարու վերջերը, կռուի առարկայ կը դառնայ Յոյներուն եւ փրանկ իշխաններուն միջեւ: Հայերն ալ հետզհետէ կը մասնակցին այս կռիւններուն, մինչեւ որ 1130ին Պարոն Լեւոն կը յաջողի գրաւել զայն, ինչպէս կը վկայէ Վահրամ Բարունի.

«Մամեստիոյ եղև տիրեալ,
Եւ ի Տարսոն մեծըն հասեալ»⁴:

Իսկ իր որդւոյն Թորոս Բ.ի մասին կը գրէ.

«Ինքն դարձեալ զօր ժողովեալ,
Զերեւելին Տարսոն առեալ»⁵:

Մլեհի եւ իր եղբորորդւոյն՝ Ռուբէն Բ.ի օրով Տարսոն ձեռքէ ձեռք կը յափշտակուի. Ժամանակ մը անոր կը տիրանան Անտիոքի իշխանները. սակայն երկու տարի վերջ զայն կը գրաւէ Ռուբէն Բ., եւ գիտնալով որ զայն երկար պիտի չկարենայ իր ձեռքը պահել, ինք՝ լեւոններու վրայ, Տարսոն դաշտի մէջ, զայն շատ սուղի կը ծախէ Անտիոքացիներուն⁶: Սակայն երբ Լեւոն կը զօրանայ, առաջին գործը կ'ըլլայ վերագրաւել Տարսոնը, ինչպէս կը գրէ 1286ի Ճաշոցին Յիշատակարանը. «Այս Լեւոն տիրեալ Մամեստիոյ եւ Տարսոնի եւ ամենայն սոցին նահանգի, եւ աջակցեալ Ֆուանկաց ի գործ պատերազմի, քաջութեան անուն ստացաւ»⁷:

ՊԱՐԻՍՊՈՆԵՐԸ ԵՒ ԲԵՐԴԸ

Քաղաքին ամէնէն հին եւ շքեղ կառուցուածքը իր պարիսպներն էին, շատ անգամ քանդուած եւ վերաշինուած, այնպէս որ հազիւ անոնց հետքերը

2. Անդ:
3. Հայապատում, ԹԳ, էջ 402-403: ՅՈՎՍԷՓԵԱՆՅ, սիւն. 541:
4. ՎԱՀՐԱՄ ԲԱՅՈՒՆԻ, էջ 196: Հմմտ. ՍԻՍՈՒԱՅ, էջ 267:
5. Անդ, էջ 207:
6. ՍԻՍՈՒԱՅ, էջ 267:
7. Հայապատում, Բ., էջ 238:



Թոփրաֆֆալէի ընդհանուր տեսքը արեւելիէն:
Vue générale de l'est de Toprakkale (CEDCAM).

կը նշմարուին այսօր: Լաւագոյն պահուած մասերէն մէկն է Խաճճի-Քափու կոչուած դուռը, շինուած՝ Բիւզանդացիներէն⁸:

Տարսոնի բերդն ալ քիւզանդական շրջանին կը պատկանի, գետեղուած քաղաքին մօտիկը, հիւսիս-արեւելեան ուղղութեամբ, բլրակի մը վրայ: Ունէր պարիսպներու կրկնակ շարք մը եւ շրջապատուած էր խրամով: Հուշակաւոր էր սրակամար Տեմիր-Քափու (Երկաթեայ դուռ) կոչուած մեծ դուռը, որ կը գտնուի հարաւային կողմը, քաղաքին դիմաց⁹:

Յիշենք որ Տարսոնի Ս. Սոփիա եկեղեցիին մէջ կատարուած է Լեւոն Ա. Մեծագործի օժման եւ Թագադրութեան հանդէսը: Հոն կատարուած են նոյնպէս Թագադրութեան եւ օժման հանդէսները Լեւոն Մեծի երկու յաջորդներուն՝ Հեթում Ա.ի եւ Լեւոն Բ.ի, ինչպէս կը գրէ Սմբատ Սպարապետ. «մսկի թուին ԶԻ (1271) յամսեանն Յոմնուարի գն, օծին Թագաւոր Հայոց զԼեւոն (Բ.) որդի Թագաւորին Հեթմոյ, ի մայրաքաղաքն Տարսոն ի սուրբն Սոփի»¹⁰: Կը յիշուի դարձեալ Տարսոնի մէջ Օշինի օծումը 1308ին¹¹:

Երբ Կիլիկիոյ Հայոց Թագաւորութիւնը վերջ գտաւ, այս փառաւոր անցեալով հրաշակերտ եկեղեցին քարուքանդ եղաւ այլապահներէն, հետքը անդամ կորսուեցաւ, եւ անոր աւերակներուն վրայ կ'ըսուի թէ Բամազանի Թուրքերը շինած քլլան իրենց Ուլու ֆամի մեծ մզկիթը¹²:

Լեւոն Մեծի օրով Տարսոնի պարիսպները գէշ վիճակի մէջ էին. 1228ին, Հեթում Ա., իր Թագաւորութեան սկիզբները, զանոնք նորոգեց: Այս առթիւ Հեթում քանդակել տուած է հետեւեալ արձանագրութիւնը.

Ի ԹՈՒ ՀԱՈՑ
Ո Հ է: ՆՈՐՈԳԵՑ
ԱՒ ՊԱՐԻՍՊՍ ՏԱՐՍ
ՈՆԻ ՁԵՌԱՄԲ ԹԳ.
ՀԱՈՑ ՀԵԹՄՈՅ¹³:

Տարսոնի վերաշինուած պարիսպներուն ամրութիւնը փորձուեցաւ՝ երբ Իկոնիոյ սուլթանը, 1245-46 տարիներուն, երկու անգամ պաշարեց զայն. երկրորդ անգամին՝ 260.000 զօրքով, ինչպէս կ'ըսէ Սմբատ պատմիչ. «նա յետ այլ մէկ տարուոյ, ի թուին 695 (= 1246) արարին շատ ժողովք, ու եկին մտան ընդ Կուկլայ Կապանն երկու հարիւր եւ վաթսուն հազար մարդ, եւ բոլոր պատեցին զՏարսուս, Թագաւորահայրն եւ ես Սմբատ Գունդստապլս մտաք ի Տարսուս: Եւ եթէ զամէն նեղութիւն բարնաց ու զկռիւ գրեալ էաք՝ նա կարի շատ էր լեալ: Հայնց որ ի ջրմտին գեհն ու ի ջրելին աղէկ նետըն-

8. LANGLOIS, Voyage, էջ 313:
9. Անդ: ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ, էջ 215-216:
10. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 252:
11. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Փարիզ, էջ 127:
12. Անդ:
13. Անդ:

կէց մի փլուցին զպարիսպն. շատք մեռան յերկուց կողմանց, բայց ի դրացէն հարիւրապատիկ, զի ունէաք ընդ ներքս արէկ Փռանկի շարխաւորք»¹⁴:

Հեթումի մահէն վերջ Եգիպտացիները դարձեալ արշաւեցին Կիլիկիոյ վրայ, ինչպէս կը գրէ Վահրամ Բարունի.

«Եւ զՏարսոն մեծն աւերեալ:
Չերեւելին եւ զհոչակեալ,
զՍուրբ Սոփիա տաճարն վառեալ.
Եւ զքաղաքին աւարն առեալ»¹⁵:

Այս աւերումէն վերջ դարձեալ նորոգուած է քաղաքը եւ նաեւ Ս. Սոփիա եկեղեցին, բայց ոչ առաջուան պէս չքեղ, գեղեցիկ եւ փառաւոր¹⁶:

ԺԳ. դարու վերջերը եւ ժԴ. դարուն սկիզբը, Տարսոնի տէրն էր Օշին թագաւորին եղբայրը Ալինախ, երբ Հեթում Բ. հոն թագաւոր օծուեցաւ 1308ին: Սակայն 1317ին որքալի մահով Տարսոնի մէջ մեռաւ Ալինախ՝ թագաւորին սիրելի եղբայրը. «ՌՅԺ (ՉՄԷ) թագաւոր Օշինն որդի թագաւորին Լեւոնի Մեծի՝ եղբայրն Հեթմոյ՝ օծեալ ի Մայրաքաղաքն Տարսուս, կացեալ ամս ժԳ: ... ՌՅԺԹ. ի ՉԿՉ թիւին փոխի մահուամբ առ Քրիստոս Պարոն Ալինախն. եղբայր Հեթմին եւ Օշին թագաւորին. եւ կայ հանգուցեալ ի Դրազարկն. եւ պատճառ մահու նորա այս է. լողացեալ եղեւ ի գետն Տարսոնի, էր ընդ նմա ի լողկանալն տաճիկ ձի մի եւ եհար զնա ոտամբն ի պլուխն եւ այս եղեւ պատճառ մահու նորա»¹⁷:

Օշին թագաւորի մահէն վերջ, հաւանորէն իր համանունը Օշին, Կոռիկոսի քերդին տէրը, որ Լեւոն Դ.ի խնամակալն էր եւ տէր էր Կիլիկիոյ մեծ մասին, տիրած է նաեւ Տարսոնի, մինչեւ որ Լեւոն Դ.ի հրամանով՝ դաւադրութեամբ սպանուած է 1329ին¹⁸:

Ասկէ վերջ Տարսոնի կառավարիչ կը կարգուի Պաղտին Մարաջախտ, որ թագաւորահայր ալ էր: Պաղտինի որդին եւ յաջորդը կ'ըլլայ Կոստանդին Բ. Նղրեցի. սա չկարենալով իր ձեռքը պահել դաշտային Կիլիկիան, դայն կը ծախէ Եգիպտացիներուն, որոնք հոն ոստիկան մը կը դնեն Քոմարի անունով, որմէ վերջ ոստիկան կ'ըլլայ, 1363ին, Մանճաք Եոլսուֆ¹⁹:

1467ին Շահսուար ամիրան, կ'ըսէ ժամանակագիր մը, «էառ զԱտանա եւ զՏարսուն». ասկից վերջ պատմութիւնը կը լռէ Տարսոնի մասին

Տարսոն՝ Ս. Պողոսի հայրենիքը, հինէն ի վեր քրիստոնեաներու մասնաւոր գուրգուրանքի եւ յարգանքի քաղաքը եղած է. հոն քացի Ս. Սոփիա

14. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 227:
15. ՎԱՀՐԱՄ ԲԱՐՈՒՆԻ, էջ 232:
16. Սիսուամ, էջ 271:
17. Եպրամակուրիւմ ՍԱՄՈՒԷԼԻ ԱՆՑՑԻՈՑ, Ա, էջ 156-157: Տե՛ս նաեւ Սիսուամ, էջ 271:
Ալինախի մասին՝ RÜDT-COLLEBERG, The Rupenides, էջ 72, հմ. 161:
18. Սիսուամ, անդ: Իր մասին՝ RÜDT-COLLEBERG, էջ 69, հմ. 143:
19. Սիսուամ, անդ:

եւ Ս. Թէոդորոս եկեղեցիներէն, Ս. Պողոս Առաքեալին ի յիշատակ շինած են՝ առաջին իսկ դարերուն Ս. Պողոս անունով եկեղեցի մը. կայ նաեւ Ս. Աստուածածնին նուիրուած եկեղեցի մը ու աւանդութեամբ կ'ըսեն՝ թէ Ս. Պողոս Առաքեալ շինած ըլլայ ի պատիւ Քրիստոսի մօր: Ս. Պողոսի հրաշալի եկեղեցին այսօր մզկիթի վերածուած է, եւ կը կոչուի Քիլիսէ-Ճամի, կամ մարակապ հրաշալի եկեղեցի մըն է, ճակատը ամբողջութեամբ սխնագարդ: Աւանդատան դրան վերեւ քանդակուած էր.

Այս դուռն տեառն է արդարոց,
Եւ բնակարան է երկնայնոց.
Պահեա զՕշին արքայ Հայոց,
Լեր քաւիչ (իւր) ամէն գործոց:

Ձախակողմի դրան վրայ եւս կար գրութիւն մը որ կ'ըսէ.

Հեթում թագաւոր զտաճարս շինեցի,
Որոյ անուն (Ս) Պողոսի կոչի...
Տաճար յիշման Աստուծոյ²⁰:

20. Սիսուամ, էջ 274:

ՀԱՄՈՒՍ ԲԵՐԴ

Համուս, զոր Հ. Արիշան կը կոչէ «Անուանի բերդ», կը գտնուէր Թիւ Համտունի արեւելեան կողմը, Անարգարայի մօտերը: Մտքատ Սպարապետ կը յիշէ անոր մէկ իշխանը, Արեւզոյն անունով, «Իշխանն Համուսի Արեւ-զոյնն»¹:

Համուսի տիրացած էր հաւանօրէն Թորոս Բ. իշխանը, Թիւ Համտունի հետ: Համուսի առջեւ է որ Կիլիկիոյ յոյն կառավարիչներէն Անդրոնիկոս Փերբէնոս 1165ին կը սպաննէ դաւով Թորոսի եղբայրը Ստեփանէն. «Ի Թուին Հայոց ՈժԴ (614 = 1165) սպանաւ Ստեփանէ որդին Լեւոնի, եղբայր Թորոսի սեւաստօսի, դաւով նենգութեամբ անօրէն տուկին Յունաց, յաշխարհն Կիլիկիեցոց, առջեւ Համուսին»²:

Արեւազոյնէն վերջ Համուսի իբրեւ իշխան կը յիշուի 1259ին, Մուշկասի պատերազմին մէջ, Վահրամ Համուսիցի՝ որ Մտքատ Գունդատարի փեսան էր. սա պատերազմին մէջ քիչ մնաց կը մեռնէր, եթէ իրեն օգնութեան չհասնէր իր աները՝ Մտքատ:

Եգիպտացիները 1266ին Համուսը կը պաշարեն. կատաղի կռիւէ մը վերջ զայն կը գրաւեն եւ մեծ մասով կը քանդեն. սակայն ինչ որ Եգիպտացիները ամբողջութեամբ չէին կրցած ընել, անկէ երեք տարի վերջ, 1269ին, Կիլիկիոյ նշանաւոր եւ աննախընթաց երկրաշարժը, զոր պատմիչները «Ժածն Կիլիկիոյ» կը կոչեն, ըրաւ: Կիլիկիցի ակննատես յիշատակագիր մը կը նկարագրէ այս երկրաշարժը ըսելով՝ «Շարժեալ սասանեցաւ երկիրս մեր առ հասարակ... նաեւ Համուսն անուանեալ (բերդ) զմայր սիրելի որդւովք եւ որ մերձ էին՝ կորոյս տարածամ վախճանօք»³:

Այս գէպքերէն ետք Համուս բերդը չի յիշուիր մեր պատմութեան մէջ. սակայն ինչ որ կ'երեւի, ժամանակ մը վերջ, տեղւոյն բնակիչները ջանացին են բերդին քանդուած մասերը նորոգել եւ հոն բնակութիւն հաստատել⁴:

Արիշան կը խորհի՝ թէ Համուս 1337ին Եգիպտացիներէն պահանջուած հինգ բերդերէն մին ըլլար եւ թէ Համուսն ըլլայ արաբ պատմիչներու կողմէ Հոււէյ-մասա կոչուած բերդը:

1. ՄՐԲԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 209:
2. Անդ, էջ 186: CINNAMUS, V, 13, p. 226:
3. Հայապատում ՅԱ, էջ 347:
4. Սիսուամ, էջ 206:

ՍԱՐՎԱՆԴԻՔԱՐ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Հին եւ անուանի բերդ, համանուն գիւղաւանով կը գտնուի Դաշտային Կիլիկիոյ մէջ. հայ եւ օտար պատմիչներէն կոչուած է՝ Սարաւանիքար կամ Սարավան, կամ Սարաւանդաւ, այլազգիները իրենց հնչումով կոչած են՝ Սէրվէնտեար: Կը գտնուէր ձորի մը մէջէն բարձրացող սեպածեւ ժայռի մը կատարին, Անարգարայէն մէկ օրուան ճամբով հեռու էր: Բերդին աջակողմէն կ'անցնէր Ճիհուն գետը¹:

Հայկական անունով այս անառիկ բերդը, Կիլիկիոյ շատ մը բերդերէ աւելի զօրաւոր եւ անառիկ դիրք մը ունէր:

ՊԱՏՄԱԿԱՆ

Չի գիտցուիր Հայերէն թէ օտարներէն շինուած է. որոշ է որ Ռուբինեան իշխանութենէն առաջ գոյութիւն ունէր, որովհետեւ ԺԲ. դարուն ըսկիգրները՝ Սարվանդիքար իր գիւղաւանով՝ գոռ Տանգրէտ ասպետին իշխանութեան ենթակայ էր:

1101ին երբ Պաշակիրները Տոլովսայ Ռեմունդ Սէն Ժիլի առաջնորդութեամբ հասան Բիւզանդիոն, եւ Ալէքս կայսրի առաջնորդութեամբ անցնելով Վոսիորը՝ մտան Փոքր Ասիոյ տափաստանները, ծուռ եւ յոգնեցուցիչ ճամբաներէ անցնելով՝ հասան Նիկիոյ մօտերը, ուր կռիւի բռնուեցան՝ Ուլիճ Ասլանի թարմ եւ զօրաւոր քանակին հետ, եւ բնականաբար յաղթուեցան: Փոխուստի մատնուեցաւ խաչակիր մեծդի քանակը, որոնց առաջնորդը Սէն Ժիլ, զերի չբռնուելու համար փախաւ եւ ապաստանեցաւ Անտիոք: Անտիոքի Տանգրի կոմսը լաւ աչքով չէր նայեր Սէն Ժիլի. Մատթէոս Ուռհայեցի կ'ըսէ. «Եւ յայնժամ Տանգրի կոմսն Անտիոքայ բռնեաց զկոմսն Ֆուանկաց Ջրնճիլն եւ երկաթի կապանօք յուղարկեաց զնա ի քաղաքն, որ ասի Սարուանդաւի»², ուր բաւական ժամանակ մնալէ վերջ, Անտիոքի Ֆուանկ պատրիարքին միջնորդութեամբ՝ Տանգրի զայն ազատ կ'արձակէ:

1. Հ. Ղ. ԻնձիճեւԱն, Նոր Հայաստան, Վենետիկ, 1802, էջ 366:
2. Ս. ՌԻՌԷԱՅԵՑԻ, Պատմ., էջ 348-349: Տեա նաեւ ՄՐԲԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, Տաքիգիրք, էջ 118:

Մ. Ռուհայեցի երբ այս դէպքը կը պատմէ, Սարվանդիքարը իբր քաղաք կը ներկայացնէ, չ'ըսեր թէ անիկա բերդ մը ունէր. բայց շատ հաւանական է՝ որ այս նշանաւոր քաղաքը ունենար նաեւ իր բերդը, բլուրի մը բարձունքին վրայ, որ կը կոչուէր Սարվանդիքար բերդ, ինչպէս կը գրէ Սմբատ Սպարապետ. «էսո լեւոն որդի Ռովբինի գրեթէ Սարվանդաւ...»³

1135ին՝ Լեւոն իշխան, եղբայրը Թորոս Ա.ի, լատին իշխաններու ձեռքէն կը փրկէ Սարվանդիքար բերդը, որու հետեւանքով խոռվութիւններ կը ծագին Հայոց եւ Լատիններու միջեւ, ու շատ արիւն կը թափի երկու կողմէն: Յաջորդ տարին Պեմունդ, Անտիոքի տէրը, բռնելով Լեւոն իշխանը, բանտ կը նետէ, եւ իբրեւ փրկանք կը ստանայ Սարվանդիքար բերդը⁴: Այս բոլորը կը համառօտէ Սմբատ Սպարապետ՝ գրելով. «Ի թուին ՇՁԴ (1135) Հառ Լեւոն՝ որդի Ռովբինի, գրեթէ Սարվանդաւ, եւ եղեւ խոռվութիւն մեծ ի մէջ Լեւոնի եւ Փռանգին...: Ի թուին ՇՁԵ (1136) տէրն Մարշայ Պաղտինն խանգրեաց զԼեւոն որդի Ռովբինայ, եւ յետ երկոց ամսոց տէրն Անտիոքայ Պեմունդն կալաւ զԼեւոն: ... Եւ Պեմունդն յետ երկու ամսոյ առ զորդիան Լեւոնի պանդանտ եւ ԿՄ (60.000) դահեկան գին, զՄսիս, զԱտանա, զՍարվանդի քարն, եւ արձակեաց զԼեւոն ի տուն իւր»⁵:

1185ին նոյն ճակատագրին կ'ենթարկուի Լեւոնի եղբոր որդին՝ Ռուբէն Բ.: Ռուբէն Անտիոք երթալով՝ քաղաքի իշխանը «բրինձ Պեմունդ կալաւ զնա եւ եղ ի բանտի...»⁶: Բանտէն ազատելու համար «կտրեաց Ռովբէն գին անձին իւրոյ զՍարվանդիքարն, զԹիլ եւ զձկերն եւ Ռ (1000) դահեկան, եւ արձակեաց զնա քրինձն, եւ եկն յերկիր իւր»⁷:

1188ին Թուրքերը դարձեալ Կիլիկիոյ վրայ կ'արշաւեն: Լեւոն Ա. հայկական բանակներով անոնց դէմ կ'ելլէ. կատաղի կռիւէ մը վերջ՝ Լեւոն Ա. սրախողող կ'ընէ անոնց Ըսստոմ գորավարը, եւ բանակը կը ցրուէ, որոնք սարսափահար լեռներու մէջ «դարձան ամենեքեան ի փախուստ, որոց զհետ մտեալ կոտորեաց զոսոս մինչեւ ի քարն Սարվանդաւի...»⁸:

Լեւոն Ա. դարձեալ կը գրաւէ Սարվանդիքար բերդը. իր թագադրութեան շրջանին՝ Սարվանդիքարի իշխանն ու տէրն էր՝ Սմբատ, Կոստանդին Թագաւորացօր եղբայրը, Հեթումեաններու ընտանիքէն. «Իշխանն Սարվանդաւի՝ Սմբատ»⁹:

Կոստանդինի ժամանակ, 1266ին, Եգիպտացիները դարձեալ կ'արշաւեն Կիլիկիոյ վրայ ու կը պաշարեն Սարվանդիքար բերդը: Բազմաթիւ կռիւներ տեղի կ'ունենան անոր շուրջը, շատեր կ'իյնան անոր պարիսպներուն տակ,

3. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 160: Հմմտ. նաեւ Սիսուան, էջ 209:
4. Հմմտ. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 160:
5. Անդ, էջ 159-160:
6. Անդ, էջ 194:
7. Անդ, էջ 194: Հմմտ. Սիսուան, էջ 200:
8. Անդ, էջ 200:
9. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 209:

բայց Սարվանդիքար բերդը անսասան կը մնայ: Եգիպտացիները կորագլուխ կը թողուն բերդին պաշարումը եւ ետ կը վերադառնան, աւերելով եւ կողոպտելով անոր շրջակայ գիւղերն ու աւանները:

Ինչ որ Եգիպտացիները չէին կրցած ընել, արեւտալի երկրաշարժ մը Սարվանդիքարը եւ կիլիկեան շատ մը բերդեր, քաղաքներ, գիւղեր եւ վանքեր քարուքանդ կ'ընէ 1260ին. «Ճարժեալ սասանեցաւ երկիրս մեր առհասարակ, եւ այս ոչ մի ժամ, այլ գրեթէ ամսօրեայ ժամանակ. քանդի դղեակն կոչեցեալ Սարաւանդիքար, ընդմէջ հերձեալ կործանեցաւ, զամենայն բնակիչս ծածկելով, քաց ի սակաւուց»¹⁰: Այս մասին կը գրէ նաեւ Սմբատ Սպարապետ. «Ի թուին ՉԺԸ (1269) եղեւ շարժ սաստիկ եւ յաշխարհին Կիլիկիա... եւս առաւել առ լերամբն որ Սեաւ կոչի. եւ զանաօրիկ դղեակն Սարվանդաւ յաւեր դարձուց...»¹¹:

Սարվանդիքար բերդը հաւանաբար չուտով վերանորոգած են, եւ Կոստանդին իշխանը շարունակած է հոն քնակիլ, բարեկամակամ դաշինք գնելով Ալամաններու հետ, որոնց սահմանները կը հասնէին մինչեւ Սարվանդիքարի մօտերը: Այս դաշնագրին մէջ Սարվանդիքարի տէրը կը կոչուի Կոստանդին. «Եւ Կոստանդին ծառայ Աստուծոյ եւ որդի Պարոն ձաւֆրէի եւ տէր Սարվանդիքարին...»¹²:

Հուսկ վերջին անգամ Սարվանդիքարի մօտերը Սմբատ Գունդստապըր փառաւոր յարթանակ մը կը տանի Եգիպտացիներուն վրայ 1276ին, եւ զանոնք կը քչէ Կիլիկիայէն դուրս. այս կռիւի ընթացքին, սակայն, ինքն ալ կը վիրաւորուի եւ փառքով կը վախճանի¹³:

Կիլիկիոյ Թագաւորներու իշխանութիւնը տկարանալով, Եգիպտացիները դարձեալ ոյժ կ'առնեն եւ կը յարձակին Կիլիկիոյ վրայ, կը տիրեն շատ մը շրջաններու եւ բերդերու. Սարվանդիքար բերդը, որ տակաւին ինկած չէր անոնց ձեռքը, անոնք կը պահանջեն զայն՝ ուրիշ շատ մը բերդերու հետ:

Այս թուականներէն վերջ Սարվանդիքար բերդը այլեւս չի յիշուիր մեր պատմութեան մէջ. այսօր անոր աւերակները միայն կը տեսնուին, լուռ եւ ամայի շրջանի մը մէջ:

10. Հայապատում, Բ., էջ 547: Հմմտ. նաեւ Մ. ՌԻՌՎԱՅԵՏԻ, էջ 414-419:
11. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 251:
12. Սիսուան, էջ 210:
13. Հմմտ. Անդ:

ԱՆՏԻՈՒՔ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Սեաւ կամ Մուժ լեռներու ստորոտը, Միջերկրական ծովէն 26 քմ. հեռու, դաշտագետնի վրայ կը տարածուի հին եւ պատմական յիշատակներով լի Անտիոք քաղաքը, որու սկզբնաւորութիւնը կը մնայ անորոշ: Այսօր Թուրքերը զայն կը կոչեն Antakya:

Անտիոքի լճակէն Որոնդէս գետը բխելով, կը շրջապատէ քաղաքը, զայն անառիկ կղզիի մը վերածելով:

Ներկայ հեղինակ մը կը գրէ անոր մասին. «Անտիոք նշանաւոր քաղաք մըն էր, որ ունէր իր միջնաբերդը եւ կը բարձրանար ժայռոտ լեռան մը կատարին: Միջնաբերդը շինուած է Փոկաս կայսրէն՝ 963-269 տարիներուն, ու վերանորոգուած է Պաշակիրներէն: Միջնաբերդի կատարէն կը պարզուի հրաշալի տեսարան մը, մինչեւ ծով ու Սուրիոյ սահմանները: Միջնաբերդը այսօր աւերակ է եւ լքուած. կանգուն կը մնան անոր հին պարիսպներէն քանի մը կտոր»¹:

ՊԱՏՄԱԿԱՆ

Նպատակէ դուրս է ընել Անտիոք քաղաքին պատմականը, տեսնենք միայն թէ ի՞նչ կապեր ունեցած է մեր պատմութեան հետ:

Մեծն Տրդրան 83-69 (Ք. Ա.) թուականներուն՝ տիրացած է Անտիոքի, ուր իր անունով դրամ ալ կոխած է: 64ին Հռոմի հետ կռուի բռնուելով՝ Պոմպէոսի կը թողու այս շրջանը, ինք կը քաշուի իր սահմանները:

ԺԲ. դարուն Անտիոքի կը տիրեն Պաշակիրները, հաստատելով լատին կոմսութիւնը: Այս շրջանիս է որ Անտիոք խնդիրներ կ'ունենայ Կիլիկիոյ մեր թագին հետ:

1195ին Լեւոն Ա. թագաւոր կը մտածէ ձեռով մը տիրանալ Անտիոքի, եւ որով իր եղբոր աղջիկը՝ Ալիծը, կնութեան կու տայ Անտիոքի Ռեմուելը կոմսին, պայմանով որ «թէ լինէր ի նմանէ որդի արու՝ լինէր ժառանգ Լեւոնի, եւ զկնի մահուան հօր իւրոյ Ըռեմուելին՝ լինէր տէր Անտիոքու. եւ հաստա-

1. Guide-Atlas Denoël, p. 187.



Անտիոք քաղաքի պարիսպներէն մաս մը ինչպէս որ է այսօր:
Remparts de la citadelle d'Antioche (Denoël).

տեցին զայս գրով երդմամբ»²: Լեւոն ժառանգորդ չունենալով, այս ձեռով կը համարէր լուծումը՝ թէ՛ իր յաջորդութեան եւ թէ՛ տիրանալու Անտիոքի:

Սմբատ Սպարապետ կը պատմէ թէ 1209ին Լեւոն կը պաշարէ Անտիոքը, եւ չի սոյն ամի յարոյց պատերազմ մեծ թագաւորն ի վերայ Անտիոքայ, եւ աւարեալ այրէր զամենայն գեղորայս եւ կոտորէր, ոչ զմարդ՝ այլ զայգիս եւ զծառս նոցա: Եւ զայս առնէր ի բազում ամս եւ ժամանակս, եւ խնդրէր իրաւամբք եւ պատերազմաւ զհայրենիսն տղային Ըռովրիսի... եւ մեծաւ նեղութեամբ նեղէր զԱնտիոք, յամենայն ամի առանց ձանձրանալոյ»³:

2. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգիրք, էջ 207:

3. ԱՅԳ, էջ 217:

Լեւոն երեք անգամ կը պաշարէ Անտիոք քաղաքը, ու ի վերջոյ տեսնելով թէ կոխով չի հասնիր նպատակին, կը թողու պաշարումը եւ կը հեռանայ, մտածելու համար նոր միջոցներ գրաւումի: Սմբատ շարունակելով պատմութիւնը, կը գրէ թէ 1216ին «էառ թագաւորն Լեւոն զԱնտիոք, արուեստիւ եւ իմաստութեամբ. քանզի զոր յառաջագոյն մեծաւ պատերազմաւ ոչ կարաց արծել ի հաւանութիւն, յետոյ առատատուր պարգեւօք եւ խոստմամբ հաւանեցոյց զոմանս յիշխանացն, եւ նոքա բացին նմա զգրուեսն ի գիշերի, յոր եմուտ բազում գորութեամբ, եւ էառ զգրուեսն եւ զամենայն աշտարակս պարսպին եւ շուրջանակի, եւ ելից զփողոցամէջս քաղաքին զօրօք բազմութեամբ, եւ բնակիչք քաղաքին ոչ գիտէին, եւ յորժամ եղեւ առաւօտ՝ տեսին զքաղաքն յցեալ զօրօք եւ ապշեալ յիմարեցան եւ ոչինչ վնաս եղեւ ումեք, եւ ոչինչ յափշտակեալ»⁴:

Լեւոն կը մտնէ յաղթանակով Անտիոք, զինքը կը դիմաւորեն քաղաքին մեծամեծները, Պատրիարքը եւ իշխաններ: Լեւոն անմիջապէս կ'առնէ Ռաբէնը եւ ուղղակի կ'երթան Ս. Պետրոսի տաճարը. «եւ Պատրիարքն ձեռնադրեաց զԸռովբէն՝ բրինձ Անտիոքայ»⁵:

Լեւոն Ա. սակայն ասով գոհ չ'ըլլար, կ'ուզէ հաստատուն հիմերու վերայ դնել՝ եւ ապահովել Ռուբէնի իշխանութեան շարունակութիւնը, ուստի, կ'ըսէ պատմիչը, Լեւոն Ա. ի ստիպումին վրայ՝ «ամենեքեան երդուան նմա որպէս իւրեանց հայրենի տեան»⁶:

Մինչ Անտիոքի մէջ այս դէպքերը կը պատահէին, ինչ որ կ'երեւի մաս մը քաղաքի զինուորականներէն, ամբացած միջնաբերդին մէջ շուտով անձնատուր չեն ըլլար Լեւոնի, «եւ որք ի կլայն էին՝ կացին աւուրս ինչ եւ տրեալ զայն եւս, եւ եկին յերկրպագութիւն բրինձին Ըռովբինի»⁷:

Լեւոն Ա. իր նպատակին հասած վեր, իր թագին ժառանգորդը ապահոված էր. «Իսկ թագաւորն Լեւոն հասեալ յայսպիսի գործոյ կատարումն՝ ցնծայր եւ յոյժ ուրախ էր ընդ աստուածային յաջողումն... եւ զուարճանայր ի վերայ Ըռովբինի, ձիավարժ գովելի, իշխանական ձեռօք պատկառելի եւ անձամբ սուրբ»⁸:

Այսպիսի անձ մը Լեւոն Ա. պատրաստած էր իր մահէն վերջ, տէր դառնալու իր թագին, Անտիոքէն մինչեւ հեռաւոր Տաւրոսի բարձունքներուն, եւ ծովեզերքին: Սակայն դժբախտ պատահար մը փոխեց պատմութեան այս ընթացքը: Լեւոն Ա. նոյն տարին (1216) աղջիկ զաւակ մը կ'ունենայ, որու անունը կը դնեն Զապէլ: Զապէլի ծնունդով Լեւոն կը փոխէ իր միտքը ու կ'որոշէ զինք իր թագին ժառանգորդ կարգել. «եւ յայնմհետէ խորհէր զդուստր իւր աննել ժառանգ թագաւորութեան իւրոյ»⁹:

4. ԱՅՊ, էջ 219:
 5. ԱՅՊ:
 6. ԱՅՊ:
 7. ԱՅՊ:
 8. ԱՅՊ, էջ 219-220:
 9. ԱՅՊ, էջ 220:



Անտիոքի երկնային պարիսպներէն մասեր:
 Anciens murs d'Antioche (Sisouan).



Անտիոքի քարաժայռը, ստորեւ Ս. Պետրոս եկեղեցին:
Antioche, sa roche et l'église Saint Pierre.


Այսպէս կը խորհէին եւ խորհուրդ կու տային նաեւ իր իշխաններէն շատեր. «նոյնպէս տային նմա խորհուրդ... լոյժ զերդումն մեր զոր արարեալ եմք Ընովքինի... եւ թաղաւորն հաւանեցաւ ի քանս իշխանաց իւրոց»¹⁰:

Սակայն Լեւոն Ա.ի ծրագրին փոփոխութիւնը, ինչ որ կ'երեւի միակ Չապէլի ծնունդը չէր, ուրիշ դէպք մը պէտք է որ զայն կանխած ըլլար, անհաճոյ դէպք մը պատահած ըլլալու էր՝ Լեւոնի եւ երիտասարդ թագաժառանգին միջեւ, ինչ որ Ալիշան կը գուշակէ ըսելով. «Մի վաղուց յայնժամ ընտրեալ եւ ցուցեալ իւր յաջորդ զմուրէն, այլ յետ վերջին անգամ եւ լիապէս հաստատելոյ զնա ի սեպհական աթոռն Անտիոքայ (1216) արիամարիութիւն ինչ կրեալ յերիտասարդէն՝ երկմտեալ էր ի նմանէ: Ոչ պատմի ստուգիւ անգիտութիւն Ռուբինի՝ այլ համարին ոմանք թէ ի վահակալին՝ ճեպեցոյց ըզ-

10. Անդ:

հայրազիր իւր եւ զամենախնամ դաստիարակն՝ փութով մեկնիլ յԱնտիոքայ, որպէս եւ է մտօք»¹¹:

Լեւոն աւելի կը հաստատուի իր որոշումին մէջ, երբ նոյն տարին Եգիպտոսի Քէյքաուզ սուլթանը կու գայ եւ Անտիոքը կը զբաւէ. Լեւոն Ա. շատ րնական էր որ զայրանար եւ զէնք վերցնէր սուլթանին դէմ, Ռուբէնը պաշտպանելու համար. սակայն այս քայլը չ'առնել, մտածելով որ Քէյքաուզ Անտիոքը առնելէն վերջ կրնար գալ եւ պաշարել զինքը՝ Կապանի բերդին մէջ, ուր ապաստանած էր իր զօրքերով: Այսպէս Լեւոն կը ստիպուի վերջնակապէս հրաժարիլ Անտիոքի իշխանութենէն:



Տեսարան Անտիոքի եւ իր պարիսպներուն:
Vue d'Antioche et de ses murs.

11. Սիսուան, էջ 512:

Հոս կու տանք մաս մը Հեթում Ա.ի տուած պարզեւադրին, զայն լատիներէնէն թարգմանելով.

ՀՐՈՎԱՐՏԱԿ ՀԵԹՄՈՅ Ա. ԵՒ ԶԱՊԷԼ ՏԻԿՆՈՋ
Որով պարզեւեմ գՀարուն՝ եղբարց Տանն Ալամանաց

ՀԱՐՈՒՆԻ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Դաշտային Կիլիկիոյ նշանաւոր բերդերէն էր Հարունի բերդը, մեր պատմիչէն կոչուած Դոնակն Հարունի կամ Հարուն բերդ, իսկ Լատինները զայն կը կոչէին՝ Haronia կամ Haronie, Aronie: Կը գտնուէր Ջիհուն գետի հարաւարեւմտեան ափին վրայ, Ճկերի եւ Այասի գաւառներուն սահմաններուն մօտ: Բերդը չըջապատուած էր հզօր եւ անառիկ պարիսպներով, հաւանաբար շինուած էր Հարունն էլ Ռաշիտ ամիրայեանէն եւ իր անունով կոչուած՝ Հարունի բերդ: Բերդին ստորոտը կը գտնուէր համանուն Հարուն ավանը:

ՊԱՏՄԱԿԱՆ

Հարունի բերդի պատմութիւնը մեզի անծանօթ կը մնայ: Սմբատ Սպարապետ կը յիշէ՝ «Մշխանն Հարունոյն Լեւոն»¹, որ 1198ին՝ Լեւոն Ա. թագաւորին թագադրութեան հանդէսին ներկայ եղած է:

Հարունի բերդի մասին ունինք վկայագիր մը, ուր Հեթում Ա., հաւանաբար 1236ին, նորապսակ Զապէլ թագուհիին հաւանութեամբ, Հարունի անուանի եւ գեղեցիկ բերդաքաղաքը, իր չըջանով, մասնաւոր կոնդակով մը կը նուիրէ Տեւտոնեան ասպետներուն: Հեթում այս նուիրատուութիւնը կ'ընէ՝ ի նշան երախտագիտութեան Տեւտոնեան ասպետներուն, որոնք խոստացած էին փոխադարձ՝ պաշտպանել Հայոց Կիլիկիոյ թագաւորութիւնը²:

Մինչեւ ե՞րբ Տեւտոնեան ասպետներու ձեռքը կը մնայ Հարունի բերդը. չենք գիտեր. հաւանաբար, կ'ըսէ Ալիշան, կէս դար մը, եւ քիչ մ'ալ աւելի, որովհետեւ Հարունի բերդը 1337ին Եզրպտացիները կը գրաւեն:

Հարուն բերդը վերջին անգամ մ'ալ կը յիշուի 1348ին, Պալենցի գրած մէկ յիշատակարանին մէջ. «Մի Փոքր Հայք, որ է Կիլիկիա մերձ ի դոնակն Հարունի կոչեցեալ, է ջուր ջերմիկի, յոյժ օգտակար ամենայն ցաւոց»³:

«Կամօքն բարերարին Աստուծոյ Հօր եւ շնորհօք Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, եւ հաճութեամբ Հոգւոյն Սրբոյ, Հեթում (Ա.) Քրիստոսի Աստուծոյ հաւատարիմ թագաւոր Հայոց, որդի արքայազարմն Կոստանդնի, եւ Զապէլ թագուհի դուստր ի Քրիստոս հանդուցեալ թագաւորին Լեւոնի, յայտ առնեմք ձեզ որ յայժմուս էք եւ որք յետոյ գալոց. զի տուաք, որպէս եւ խնդրեացն, աստուածարնակ տան Հիւրանոցին Ալամանաց, ի ձեռն սրբազան եւ բարեպաշտօն մայստոին եղբօր Հերմանի, եւ Աստուծոյ սիրելի Քօմանտորին եղբօր Լիդրուտի, զանուանի եւ զգեղանի քաղաքն Հարունիա, չըջակայ սահմանօք նորին, յարակցօք եւ անջատելովք, որպէս ունէր երբեմն Պարոն Կաւիրէտ (Ջոֆրի) յորժամ տիրէրն Հարունիոյ. զորս յիշեսցուք մի ըստ միոջէ, վաներովն, զիւղովք, ագարակօք, հողով եւ ջրով, աղօրեօք, գետնօք, լեռամբք, եւ բլրովք, եւ պտղաբեր հարթ վայրօք, եւ ամենայն պտղովք, կալուածովքն եւ ստացուածովք:

«Քանզի տեսաք զսուրբ եւ բարեկրօն տունն Հիւանդանոցին Ալամանց՝ լցեալ եւ առաւելեալ ամենայն բարութեամբ, յամենայնի եւ ամենեւին խաչագոցեցեալ եւ զինեալ ընդդէմ թշնամեաց խաչին Քրիստոսի, եւ նովին յաղթող զտեսլ հակառակացն ի պատերազմունս, եւ զարդարեալ եւ զօրացեալ ի սպասաւորութեան հիւանդաց, միշտ եւ հանապազ մատակարարելով տուրս սնանկաց. որք եւ զմեր թագաւորութիւնս ընկալան յիւրեանց եղբայր եւ քոյր:

«Եւ արդ քանզի կցորդակիցք եղեաք, ոչ վայրապար սիրով՝ այլ ամենասերտ կապանօք, որպէս եւ խոստանան մեզ պահպանել եւ պաշտպանել զթագաւորութիւնս մեր՝ յամենայն կողմանց, իբրեւ եղբարք հարազատք եւ բարեկամք անբաժանելիք, ըստ հրամանի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է սիրել զմիմեանս, եւ ախու լինել աչակերտ նորին. որպէս եւ եղբարք սրբոյ Տանն Ալամանաց լնուն զամենայն օրէնս գրեալս եւ զքրիստոնէականս, եւ փոխանակ անցաւոր կենացս ընտրեցին եւ զնեցին զանմահականն եւ զյաւիտենական արքայութիւն Աստուծոյ...:

«Տուաք նոցա զվերոյիշեալ քաղաքն Հարունիա, յարակից եւ հեռակաց նորին երկրաւ, հանդերձ սահմանօքն, որպէս եւ վճռեալ տրամադրեալ է...»⁴:

Ապա կը թուէ մէկիկ մէկիկ անոնց տրուած գիւղերու եւ ագարակներու, աղօրիքներու, վանքերու եւ բերդերու անունները եւ կը ստորագրէ՝ «Հեթում Ա. թագաւոր Հայոց»:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգիրք, էջ 200:
2. Հմմտ. Սիսուան, էջ 206-208:
3. ՅԱԿՈԲԵԱՆ Բ. Ա., Մանր ժամանակագրութիւն, հատ. Բ., Երեւան, 1956, էջ 176:

4. Սիսուան, էջ 207-208:

ՀԱՍՏՈՒՆ ԿԱՍ ԹԻԼ ՀԱՍՏՈՒՆԻ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Գաշտային Կիլիկիոյ գլխաւոր բերդերէն էր Համուուն կամ Թիլ Համ-սունի բերդը: Այս մասին կը գրէ Ինճիճեան եւս իր «Նոր Հայաստան» գրքին մէջ. «Բերդ եւ աւան պարսպաւոր յարեւելս Անաւարզայ, իբրեւ միօրեայ հեռի ի նմանէ, առ վտակաւն որ խառնի ի Ճիհուն գետ. ի վերայ բլրոյ կա-ռուցեալ գորով կոչեցաւ յայս անուն. զի Թիլ, ի լեզու Արարացոց՝ բլուր թարգմանի. ունի պարտէզս բեղմնաւորս»¹:

ՊԱՏՄԱԿԱՆ

Առաջին անգամ Թորոս Բ. է որ 1151ին կը գրաւէ Թիլը եւ հոն կը բանտէ Թումաս. Անդրոնիկոս գուբար գալով՝ կը ջանայ ազատել զայն, սակայն չա-րաչար կը պարտուի Թորոսէն Մսիսի քով: Այս մանրամասնութիւնը պատ-մողն է Սմբատ, որ կը գրէ. «Ի սոյն ամի (1151) Թորոս (Բ) որդին Լեւոնի էառ ի Հոռմէն գլխիս եւ գլխին, եւ կալաւ գտուին Թումաս. եւ գուբարն Ան-դրոնիկէ որ ունէր զպահպանութիւն Կիլիկիեցոց աշխարհին, հրամանաւ թա-ղաւորին Յունաց, եկն ԺԲԹ (12·000) հեծելով ի վերայ Թորոսի ի քաղաքն Մսիս, եւ նախատանօք աղաղակէր առ Թորոս՝ թէ ահա կապանքն երկաթի հօրն քո, սովաւ տարցուք զքեզ ծառայ ի Կոստանդինուպօլիս, որպէս հայրն քո»²:

Մանուէլ կայսրը տեսնելով որ Թորոսը պիտի չկարենայ ծունկի բերել իր ուժերով, կը գրգռէ Իկոնիոյ Մասուտ սուլթանը. «Եւ վերստին լուեալ զհամբաւ բարութեան եւ զքաջութեան մեծին Թորոսի՝ կայսրն էմմանուէլ, եւ ոչ կարացեալ տանել նախանձու, սկսաւ կաշառօք գրգռել զԹիլճ-Արսլան սուլտանն Իկոնիոյ, ի վերայ Թորոսի, որ եւ եկեալ բազում զօրօք ի Կիլի-կիա՝ պաշարեաց զԹիլն աւան, եւ ի Տեառնէ պատուհասեալ ախտիւ եւ ցա-ւօք, զորոց գերբվարսն շանաճանճ սպառեաց»³:


1. Հ. Ղ. Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 366:

2. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգիրք, էջ 170:

3. Հայապատում, Բ., էջ 240: Հմտ. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Պատմութիւն, էջ 512-513:



Ընդհանուր տեսարան Թոփրաֆալէի:
Vue générale de Toprakkale (CEDCAM).



Յաստակագիծ Թիլ-Համտունի
 Plan de la ville de Til Hamdoun

Մասուտ Իկոնիոյ սուլթանը 1155ին երկրորդ անգամ Թիլի վրայ կու գայ. սակայն այս անգամ եւս Մասուտ իր նպատակին չի կրնար հասնիլ. պատճիչը կ'ըսէ թէ այս անգամ ալ «եղեւ դարձեալ բարկութիւն Աստուծոյ ի վերայ նոցա, եւ թէպէտ աւուրք ամարայնոյ վին, սակայն որոտմունք եւ հրաձգութիւնք ահագին լինէին յերկինս, եւ հողմն ուժգին, որ եւ զծառս խլէր յարմատոյ, եւ յահաւոր բարկութենէն ամենեքեան պակուցեալ յԱստուած ապաւինէին»⁴:

Թորոս Բ. սակից վերջ գրեթէ 30 տարի խաղաղ կ'ապրի. սակայն 1185ին իր եղբորորդին՝ Ռուբէն Բ., դաւաճանութեամբ մը կը բռնուի Անտիոքի իշխանէն. Թորոս իբրեւ փրկանք կը ստիպուի տալ Թիլն. «Եւ կտրեաց Ռուբէն վին անձին իւրոյ՝ զՍարվանդիքարն եւ զԹիլն, եւ զձկեր եւ Ռ (1000) դահեկան եւ արձակեաց զնա բրինձ եւ եկն յերկիր իւր»⁵: Սակայն քիչ վերջ Թիլ դարձեալ կ'իյնայ Մեծն Լեւոնի ձեռքը:

4. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 173:
 5. ԱճԳ, էջ 194:

Լեւոն Մեծի օրով Թիլի տէրն էր Ռուպերտ անունով իշխան մը. ապա կը յաջորդէ ձօսլին, որ 1218ին Լեւոնէ կը դրկուի Հոնդարիա, անոնց Անդրէաս թագաւորին, որպէսզի անոր որդիին հետ ամուսնացնէ իր Զապէլ աղջիկը. «եւ առաքեաց Լեւոն թագաւորն զՂամբուլայն իւր զձօսլինն, զտէրն Համտոնոյ Թլին, հետ Ռենդոաց թագաւորին՝ ի խնդիր որդւոյ նորա»⁶: Սակայն այս առաջարկը չի յաջողիր եւ ձօսլին ետ կը վերադառնայ:

Հայ իշխաններ Լեւոնի աղջիկը Զապէլ՝ կ'ամուսնացնեն Անտիոքացի Յիւլիպ իշխանին հետ, եւ զայն Հայոց թագաւոր կ'ընեն. սակայն այս օտար իշխանը հայ իշխաններուն հաճելի չ'ըլլար. կը քռեն զայն եւ կը նետեն Թիլ Համտունի բերդը, ուր շուտով կը վախճանի⁷:

Հեթում Ա. 1265ին կը տիրանայ Թիլ Համտունի եւ հոն կը կատարէ Աստուածայայտնութեան սօճը. «եւ թագաւորն (Հեթում Ա.) ժողովեաց ըզզօրս իւր եւ զազգայինսն ի բերդն որ կոչի Թիլ Համտուն, եւ անդ արարեալ զտօն Յայտնութեան Տեառն»⁸: Հեթում Ա. հոս էր որ իր բանակները հաւաքած՝ զինեց պատրաստեց, Թաթարներու հետ պատերազմի երթալու համար: Սակայն տարի մը վերջ Կիլիկիոյ վիճակը կը վատթարանայ. Հեթումի երկու զաւակները գերի կ'իյնան, մէկը կը մեռնի, իսկ միւսը իր անդրանիկ որդին Լեւոնը ազատելու համար՝ Հեթում կը ստիպուի Թիլ Համտունը թողուլ յաղթողներուն:

Յաջորդաբար իր որդին եւ թոռները շատ անգամներ գրաւեցին Թիլը եւ կորսնցուցին: 1284ին, Հեթում թագաւորի ժամանակ, Հայերը դարձեալ գրաւեցին Թիլը, սակայն 1302ին երբ հեռացան Կիլիկիայէն Եգիպտացիները, Թաթարները զօրաւոր ուժերով եկան եւ պաշարեցին Թիլը, ուր ապաստանած էին ահաւոր բազմութիւն մը, շրջակայ գաւառներէն, որոնք ստիպուեցան անձնատուր ըլլալ Յունիս Կին. հոն կային վեց մեծ բերդատէրեր եւ բազմաթիւ իշխաններ:

Գէորգ Սկեւռացիի աշակերտը Մարտիրոս՝ Թիլ Համտունի գրաւումը այսպէս կը նկարագրէ. «մի թուականիս 20Գ (1304), յամսեանն Յուլիս... եկին մահմետական զօրքն ի Շամբէն, եւ առին սիրով զբերդն Թիլ, եւ ուխտազանց եղեալ դաշանցն՝ կոտորեցին զօրս անդ գտին. եւ բազումք փախրստական եղեալ ի նոցանէ՝ (կորեան) ջրասոյզ եղեալ ի մեծ գետն Զահան»⁹: Պատմիչին տուեալէն կը հասկնուի որ Եգիպտացիները Թիլը սուրով կամ քաջութեամբ չէ որ առած են, այլ անոնք անձնատուր եղած են եւ Եգիպտացիները հակառակ իրենց խոստումին՝ ջարդեր են բերդին բնակիչները:

Ասկէ վերջ, սակայն, դարձեալ Թիլը անցած է Հայերուն ձեռքը, եւ 1320ին, Հեթումի մահուան տարին, Եգիպտացիները դարձեալ եկած են Թիլի վրայ:

6. Անդ, էջ 221:

7. Անդ, էջ 225:

8. Անդ, էջ 243:

9. ԱլիշԱն 2. Գ., Սիսուամ, էջ 538:

Լեւոն Գ. նոյն տարին Եգիպտացիներուն հետ 15ամեայ խաղաղութեան դաշինք դրաւ, եւ հաւանօրէն անոնք դարձեալ պահանջեցին Թիլի բերդը եւ անոր նահանգը: Երկրորդ դաշնադրութեան, 1337ին, կը յիշուի որ Հայերը պէտք էին քաշուիլ Զահան գետէն անդին, եւ Եգիպտացիներուն թողուլ հինգ անուանի բերդերէն զատ նաեւ Այասը: Ասկէ վերջ Թիլ Համտունի անունը չի յիշուի մեր պատմութեան մէջ: Սակայն Կիլիկեան թագաւորութեան վերջանալէն յետոյ ալ Թիլը տակաւին չէն էր, քանի որ Ժէ. դարու աշխարհագիր մը կը յիշէ տակաւին զայն եւ կը յիշէ անոր բերդը եւ պիւղին պարիսպները, եւ կ'ըսէ թէ անոր շուրջը բերրի պարտէզներ կային¹⁰:

10. Անդ, էջ 204-206:

ԴԱՐՊԱԿ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Անտիոքի լճակին հիւսիսը բարձրացող Ամանոսեան քարուտ բլուրներէն մէկուն վրայ՝ կը բարձրանար Դարպասի բերդը. այն կը պաշտպանէր «Դրունք Ասորոց» կոչուած Պէլլանի լեռանցքը, եւ դէպի Անտիոք գացող ճամբան:

Մեր եւ օտար պատմագիրներու տուեալներուն համաձայն, Դարպասի Պաղրաս բերդի հարաւը կը գտնուէր, բարձր դիրքի մը վրայ: Դարպասի եւ Պաղրաս երկու երկուորեակներու նման՝ միշտ միասին կը յիշուին, ինչ որ ցոյց կու տայ թէ իրարու մօտիկ էին. մէկը միւսէն հազիւ 10 քիլոմետր հեռու կը գտնուէր:

Դարպասի բերդը կը յիշուի նաեւ արաբ պատմիչներէ. լատին պատմիչներ զայն Trapasa = Թրասպարգա կը կոչեն: Սանուտայ ուղեգիրը կ'ըսէ թէ կէս օրուան ճամբայ հեռու է Կապանէն, Սեաւ կոչուած լեռներու ստորոտը, եւ զանոնք կը կոչէ Պազարաս եւ Տրասաս. Duo castra, Bagaras et Trapasa, ad pedem montis¹:

Իր անունը՝ Դարպասի, կարծել կու տայ թէ հայերէն բառ ըլլայ. սակայն ճիշտ չէ, որովհետեւ Հայերուն այդ կողմերուն տիրելէն շատ առաջ, նոյն իսկ Պաշակիրներու Կիլիկիա մուտքէն առաջ, ա'ն կը յիշուի, ոչ միայն բերդ՝ այլ եւ աւան մը ունէր իր ստորոտը, յաջորդաբար Թուրքերէն կոչուած Սարայ, ինչպէս որ Գրիգոր Տղայ կը գրէ իր Երուսաղէմի առումին ողբին մէջ, ցոյց տալով որ Սարայ (Դարպասի) բերդը եւ աւանը՝ կը գտնուէր Անտիոքի ծովակին հիւսիսակողմը, ուր Ասորիքէն եկան Սալահետտիներանները.

«Ապա ի միւս կողմանն անցին,
ի հիւսիսոյ Անտիոքին.
Իջին բանակքն՝ ի լայն դաշտին՝
Մերձ ի ծովակն՝ որ անդրստին:
Պատեալ զամուր տեղ պահեստին՝
Որում Սարայն անուանէին.
Զօրօք պատնէջ եղեալ նորին,

1. Հմմտ. ԱԼԻՇԱՆ Է. Ղ., Սիսուան, էջ 428:

Եւ մեքենայս անհընարին.
Ելից քարիւ մանքանային,
Եհար նետիւ լայնալըճին.
Մինչեւ կարի վիրեալ նոցին
Որք անդ յամուրն բնակէին,
Եւ յոչ կամաց նոցայն սրտին,
Ի յանկմանէ իսկ պարըսպին,
Ելին արտաքս առ թշնամին.
Էսո եւ զայս Հազարացին»²:

ՊԱՏՄԱԿԱՆ

Սալահետտին սուլթանը 1189ին մեծ քանակով մը, քարէնկէց մեքենաներով, բարաններով կու գայ եւ կը պաշարէ Դարպասի: Արաբ պատմագիրը կ'ըսէ թէ նոյն թուականներուն Պաշակիր ասպետներու ձեռքն էր Դարպասի շատ անառիկ եւ ամուր բերդը, լեցուն պատերազմի համար կարեւոր ամէն տեսակ զինամթերքով: Բերդին պաշարումը կը տեւէ տասը օր. բերդապահները ներսէն, պարիսպներուն վրայէն կատաղի պաշտպանութիւն մը ցոյց կու տան, բարանները եւ քարէնկէց մեքենաները կը սկսին հարուածել բերդին պարիսպները ու կը քանդեն մասեր մը, սակայն Սալահետտինի զօրքը չի կրնար ներս մտնել: Սուլթանը յարձակումի նշանը կու տայ. քաղաքապար զօրքեր խելահար կերպով կը սկսին պարիսպներէն վեր բարձրանալ, որոնցմէ շատ շատեր թաւալվոր կ'իյնան պարիսպներուն տակ: Բարանները կը յաջողին պարիսպին մէջ ծակ մը բանալ, եւ աշտարակներէն մէկն ալ կործանել. յաջորդ օրը, երբ կը պատրաստուին խուժել բացուած ծակէն ներս, զարմանքով կը տեսնեն որ ծակը կարկտնուած ու գոցուած է: Բերդի պաշտպանները դեռ ժամանակ մը եւս կը դիմանան պաշարումին, սակայն սովը եւ ջուրի պասակը՝ կը ստիպեն զիրենք օգնութիւն խնդրելու Անտիոքի Պեմուռը իշխանէն. երբ Պեմուռը կ'ուշանայ իրենց օգնութեան հասնելու, կը ստիպուին անձնատուր ըլլալ, պայմանով որ թոյլ պիտի տրուէր իրենց, առանց ստերնին բան մը առնելու, հեռանալ բերդէն: Սալահետտին կ'ընդունի պարմանը. բերդին պաշտպանները արցունքոտ աչքերով, բայց հպարտ եւ աննկուն՝ կը հեռանան բերդէն եւ կ'երթան Անտիոք: Այս մասին կ'ըսէ պատմիչը. «Էսո Սալահետտին... զՊաղրաս եւ զԴարպասին»³:

Լեւոն Ա. Կիլիկիոյ ամէնէն հզօր եւ փառաւոր ղէմքը, իր խոր աղղեցութիւնը ունէր չըջակայ ազգերուն վրայ, որոնք կը պատկառէին իրմէ եւ կ'ակնածէին իր գէմ ելլելէ: Երբ Եգիպտացիները հեռացան Անտիոքի շրջաններէն, Լեւոն իբրեւ տէր այս շրջանի բերդերուն, առանց տատամսելու անցաւ Ամանոսեան լեռներէն եւ գրաւեց Դարպասի, վերաջինեց Պաղրաս բերդը եւ օգնեց Տաճարական ասպետներուն ալ որ դարձեալ տէր դառնան Դարպա-

2. Անգ:
3. ՄԻՔԱՅԷԼ ԱՍՈՐԻ, Ժամանակագրութիւնք, Երուսաղէմ, 1871, էջ 407:

սակի: Եզրիպտացիները երբ իմացան որ Լեւոն հեռացեր է Անտիոքի շրջանէն՝ երկրորդ անգամ յարձակեցան Դարպասակի վրայ, եւ առանց մեծ դիմադրութեան գրաւեցին, դուրս քշեցին Տաճարական ասպետները Անտիոքի շրջանէն: 1236ին Տաճարական ասպետները, իրենց ամբողջ ուժերով յարձակեցան Եզրիպտացիներուն վրայ, չկրցան գրաւել Դարպասակը. Եզրիպտացիները դուրս գալով իրենց թաքստոցներէն՝ հարուածեցին Տաճարականներու բանակը, անոնցմէ շատեր ինկան դաշտին վրայ, շատեր ալ գերի բռնուեցան: Եզրիպտացիները անթիւ աւարով, եւ նաեւ մեռելներու գանկերը առնելով՝ յաղթական Հալէպ վերադարձան. այնպէս որ Ապուլֆէտա արար պատմիչը կ'ըսէ՝ թէ Իսլամներու ամենամեծ յաղթանակներէն մէկն էր Դարպասակի կռիւր:

Ասկէ քիչ յետոյ Թաթարները կ'ողողեն ամբողջ Փոքր Ասիան, կը գրաւեն նաեւ Հալէպը, եւ յառաջանալով մինչեւ Սեւ լեռները՝ կը գրաւեն Դարպասակը եւ Պաղրաս բերդերը: Եւ որովհետեւ Հայերը իրենց նիզակակից էին, անոնք այդ շրջաններէն քաշուելէ առաջ՝ Դարպասակը կը յանձնեն Հայերուն. այնպէս որ Դարպասակը Մարտի պատերազմէն վերջ ալ՝ տակաւին Հայոց ձեռքն էր: 1268ին երբ Հեթում Պիպարսի հետ դաշինք կը դնէ խաղաղութեան, Պիպարս Հեթումէն կը պահանջէ Դարպասակի հետ՝ ուրիշ քանի մը բերդեր եւս: Հեթում ստիպուած կը յանձնէ զանոնք:

Պիպարս իր բանակը կը դնէ Պաղրասի եւ Դարպասակի շրջակայ դաշտերուն մէջ, ուր կը պատրաստուի եւ 1272ին կը մտնէ Կիլիկիա⁴:

4. Հմմտ. ԱԼԻՇԱՆ Է. Ղ., Արսուամ, էջ 428-427:

ՊԱՂՐԱՍ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Պաղրաս Ամանոսեան լեռներու վրայ եղող բազմաթիւ նշանաւոր բերդերէն մէկն է: Կը գտնուի Անտիոքի գաւառին մէջ: Հին ատեն այս գաւառը Արասուս կը կոչուէր, այս պատճառով ալ Միքայէլ Ասորի պատմիչը կը գրէ. «Պաղրաս, որ եւ Պաղրաս, էր դղեակ մեծ յԱրասուս յերկրին Կիլիկիոյ»¹: Ալիշան կը գրէ. «բերդ մի Անտիոքի մօտ, Պէյլանի լեռանցքին վրայ, հին ատեն նշանաւոր տեղ էր, Pagre կոչուած, Հայոց տէրութեան պահպանութեան ամրոցն էր»²: Աւելի մանրամասնելով՝ կ'ըսէ թէ կը գտնուի Անտիոքէն 20 քլմ. հեռու, Ամանոսեան լեռներուն ստորոտը բլուրի մը վրայ, շքեղապատուած խիտ անտառներով:

Ըստ արդի երկրախոյզներուն, Պաղրաս՝ Յոյներէն քաջբաւ կը կոչուէր, եւ Լատիններէն ալ Pagras. կը գտնուի Անտիոքի ծովակին արեւմուտքը, Որոնդէս գետի օժանդակներէն մէկուն վրայ: Արար պատմիչներն ալ կը յիշեն եւ կը կոչեն Պաղրաս, աւելցնելով թէ բերդը կը գտնուէր լեռան մը կատարին՝ շատ անառիկ եւ անմատչելի դիրքով:

Այսօր տակաւին կանգուն են Պաղրաս բերդի պարիսպներէ մեծ մաս մը, որոնք փոքր քարերով շինուած են, իսկ բերդը կրկին պարիսպներով շրջապատուած է եւ հսկայ քառակուսի աշտարակներով պաշտպանուած է. աշտարակները քառակուսի են, ինչ որ հռոմէական շրջանին շինուած ըլլալ կը թուին: Բերդը ունի ստորերկրեայ բազմաթիւ նկուղներ եւ սենեակներ, որոնք վեր բռնուած են հսկայ քառակուսի սիւներով, այնպէս որ հնախոյզներէն շատեր այս բերդի ստորին մասերը, շատ հին ժամանակներու շինութիւն կը համարին:

ՊԱՏՄԱԿԱՆ

Քաջակիրները 1098ին Պէյլանի լեռանցքէն անցնելով, իրենց ճամբուն վրայ գտան այս անառիկ բայց լքուած ամրոցը, որ նորոգելով ամրացուցին

1. ՄԻՔԱՅԷԼ ԱՍՈՐԻ, Ժամանակագրութիւն, ապ. Երուսաղէմ, 1871, էջ 405 եւ 443:
2. ԱԼԻՇԱՆ Է. Ղ., Հայապատում, Բ., Վենետիկ, 1901, էջ 455:



Պաղրաս, ընդհանուր տեսք հարավ-արևելքից:
Baghras, vue générale du sud-est.



Պաղրաս բերդը՝ արևելքից տեսնուած:
Baghras, vue de Test.

եւ իրենց մէկ ամբողջ ըրին: Պաղրաս՝ Ամանոսեան լեռներու վրայ եղող «Իրունք Ասորւոց» կոչուած անցքին վրայ կը հակէր:

Թորոս Բ. (1144-1168) միացած Անտիոքի Բրինձ Ռնալտ իշխանին, Յորներու ձեռքէն կ'առնեն շատ մը բերդեր, որոնք իրենց կարգին՝ յափշտակուած էին Պաղարկիւններէն: Ռնալտ, սակայն, զժտուելով Թորոս Բ.ի հետ, անկէ շատ մը բերդեր պահանջեց, ու երբ Թորոս մերժեց՝ սաստիկ կոխներ տեղի ունեցան, Աղեքսանդրեակի մօտիկ լեռներուն վրայ. երկու կողմերէն ալ շատեր մեռան, սակայն ի վերջոյ Թորոս Բ. յաղթական դուրս եկաւ եւ զբաւեց Պաղրասը եւ ուրիշ քանի մը բերդեր, ու անոնց պաշտպանութիւնը յանձնեց Տոէրներուն:

1150ին երբ Երուսաղէմի Թագաւորը կ'իմանայ թէ Ճիրարտ Սիդոնի իշխանը ծովահէնութեամբ կը նեղէ ու կը սպաննէ քրիստոնէաներն ու տաճիկները, կը գրաւէ Սիդոնը ու կը հալածէ Ճիրարտը, որ վալով Անտիոքի իշխանին, կը ստանայ անկէ Պաղրասը: Բայց հոս ալ շարունակելով նոյն չարագործութիւնները՝ կը վնասուի Անտիոքի իշխաններէն, ու Պաղրաս կը յանձնուի Տաճարական ասպետներուն, որպէսզի պաշտպանեն:



Սալահատին Սուլթան մեծ երկրակալը, 1189ին Երուսաղէմը եւ Ասորիքի շատ մը քաղաքներ գրաւելէ վերջ, կը քալէ դէպի հիւսիս: Իր բանակին առջեւ մէկիկ մէկիկ կ'իյնան ծովեզերեայ քաղաքները, կը գրաւէ նաեւ Դարպըսակը եւ կու գայ կը պաշարէ Պաղրաս բերդը:

Սալահատին կը կարծէր թէ միւս քաղաքներուն եւ բերդերուն նման՝ Պաղրաս ալ շուտով պիտի բանար իր դռները: Պաղրասը պաշտպանողներ, Տաճարական ասպետները, ուժգին դիմադրութիւն մը ցոյց կու տան. Սալահատին մեծ կորուստներու կ'ենթարկուի, ամէն հնարք կը գործադրէ Պաղրասի պաշտպանութեան դիժերը խախտելու համար, սակայն չի յաջողիր. Պաղրաս անտեղիտարիօրէն կը դիմադրէ:

Սալահատինի բանակին մէջ կը սկսի դժգոհութիւնը, որովհետեւ զինուորները անօգուտ կը տեսնէին կռուիլ այդքան զօրաւոր բերդի մը դէմ, տալով բազմաթիւ զոհեր, մինչ դիւրաւ կրնային գրաւել Անտիոքը, որմէ յետոյ Պաղրաս կրնար ինքնաբերաբար անձնատուր ըլլալ: Սալահատին դիւրաւ տեղիք տուողը չէր. վիճակ ձգել կու տայ եւ այն եզրակացութեան կը հասնի՝ թէ պէտք է շարունակէ պաշարումը: Կրկին կատաղութեամբ կը սկսին աշխատցնել քարանները եւ քարընկէց մեքենաները՝ խորտակելու համար պարիսպները: Բերդը կը դիմադրէ, եւ երբ Սալահատինի զինուորները կը սկսին գանգատիլ ջուրի պակասին համար, Սալահատին աւազաններ փորել կու տայ, եւ ջուր գտնելով՝ կը հանդարտեցնէ զինուորները:

Այս արարքին դիմաց բերդի պահապանները կը սկսին աւելի վախնալ, որ պաշարումը երկարելով աւելի գէշ պիտի ըլլայ իրենց վիճակը, ուստի պատգամաւորներ կը դրկեն՝ խաղաղութեան դաշինք դնելու:

3. ՄԻՊԱՅԷԼ ԱՍՈՐԻ, էջ 443-444 եւ 435-436:



Պաղրաս, հարաւ-արեւմտեամ պարիսպ: Baghras, le bastion sud-ouest.

Պաղրաս, մըքանց: Baghras, un couloir.

Սալահատին կ'ընդունի դեսպանները եւ անոնց առաջարկները, եւ կ'առաջարկէ ծանր պայմաններ. անոնք պէտք էին թողուլ բերդը եւ հեռանալ իրենց զգեստներով միայն, բերդին մէջ թողլով եղած զինամթերքը, առանց ուրիշ բան մը հետերնին առնելու: Դեսպաններուն հետ իր դրօշակն ալ կու տայ, որպէսզի եթէ ընդունէին իր պայմանները՝ դրօշակը բարձրացնէին բերդին վրայ:

Պաղրասի բերդի պաշտպանները կը ստիպուին ընդունիլ Սալահատինի ծանր եւ խոնարհեցուցիչ պայմանները, եւ լքելով կը քաշուին Պաղրաս բերդէն, իրենց հետ տանելով միայն իրենց կարեւորը:

Սալահատին Պաղրասը գրաւելով, հակառակ իր տուած խոստումին, կը հրամայէ քանդել բերդը: Իր այս բարբարոսութեան համար, զինքը կը մեղադրէ նաեւ իր զօն պատմագիրը՝ Էլ-Աթիր, որ կ'երեւի թէ նոյն բանակին մէջ էր. որովհետեւ կ'ըսէ, թէ Լեւոն (Ա.) Հայոց տէրը, որուն սահմաններուն մօտ էր Պաղրաս բերդը, գայն մեծ խնամքով կրկին կը վերաշինէ, եւ հոն պահապան գտնել մը կը դնէ ասպատակելու համար չըջակայքը. կ'ըսէ

նաեւ թէ մինչեւ այսօր տակաւին Հայոց ձեռքն է, որոնց ասպատակութենէն մեծապէս կը վնասուի Հալէպի շրջակայքը⁴:


1193ին Անտիոքի Պեմունդ իշխանը, հակառակ որ Լեւոն Ա.ի ազգական էր, կ'ուզէ անոր ձեռքէն առնել Պաղրաս եւ ուրիշ քանի մը բերդեր. «Պորհեցաւ ընդ տիկինն իւր՝ բռնել զԼեւոն (Ա.) եւ նա ասէ, մի՛ գործեր զայդ գործ անիրաւութեան, քանզի փեսայ է իմ, եւ յամենայն ժամ յօժարութեամբ զայ ի ծառայութիւն ջո, եւ ձեռնտու է քեզ ի գործ պատերազմի: Այլ նա ոչ դարձաւ ի չար խորհրդոցն, եւ առաքեաց կոչեաց զնա»⁵:

Լեւոն կ'ելլէ եւ Պաղրաս բերդ կ'երթայ, որ իր իշխանութեան տակ էր, անկից Անտիոք անցնելու համար. սակայն Պեմունդին կինը, «ծանուցանէր Լեւոնի (Ա.) գրանն զանխարար»⁶: Լեւոն, աւելի խորագէտ, փոխանակ ինքը երթալու, Անտիոքի տէր Պեմունդը կը կանչէ Պաղրաս. «եւ նոքա եկին յօժարութեամբ. եւ Լեւոն ել ընդ առաջ նոցա եւ մեծարեալ երբեր ի Պաղրաս, եւ անդ կալաւ գրքինձ, եւ տարեալ եզ յարգելանս ի կլայն Սիսոյ»⁷: Պեմունդ իր փորած փոսին մէջ ինքը կ'իյնայ. սակայն լատին իշխաններ կը միջնորդեն Լեւոնի, գլխաւորապէս Գոնթէ Հանրի, որու խնդրանքին վրայ՝ Լեւոն զայն ազատ կը թողու: Ասկէ վերջ Պաղրաս Լեւոնի սահմանային բերդը կ'ըլլայ. երբ Սմբատ Սպարապետ կը սկսի Կիլիկիոյ բերդատէրերու կարգը թուել, առաջին մեծ բերդատէրը Լեւոնի թագադրութեան հանդէսին ներկայ եղող Պաղրասի իշխանն էր. «Իշխանն Պաղրասայ Առանն»⁸:

Սմբատ Սպարապետ շարունակելով պատմութիւնը՝ կը գրէ. «Տի սոյն ամի (1193) առաքեաց Սալահատին սուլտանն առ Լեւոն՝ տալ գերկիրն Կիւլիկիոյ ի նա, եւ ինքն զնասցէ ողջ անձամբ: Եւ Լեւոն յերկիւղի եղեալ թէ զինչ արասցէ, եւ յԱստուած արպաւինելով ասէ ընդ առաքեալն առ նա. ասա՛ ցուրտանն թէ երկիր ոչ ունիմ տալ քեզ, բայց եթէ գայցես յերկրիս իմում, տաց քեզ յերկայրից ըմպելիս»⁹: Սուլթանը այս նախատական պատասխանէն ջրղայնացած՝ մեծ զորքով ճամբայ կ'ելլէ ու կը հասնի Սեւ գետի մօտ, այն է՝ Պաղրաս բերդի մօտերը: Հոն ծանր հիւանդութեան մը հանդիպելով՝ Սալահատին կը մեռնի:

Լեւոնի թագադրութենէն 16 կամ 17 տարի վերջ, 1236ին, Հալէպի սուլթանը իր Թուրանշահ հօրեղբայրը կը զրկէ Պաղրասի վրայ, պաշարելու եւ առնելու զայն ի զին ամէն զոհողութեան: Այս շրջանիս Պաղրաս Տաճարական ասպետներու ձեռքն էր, անոնք զայն Լեւոն Ա. կամ Հեթում Ա. թագաւորէն նուէր ստացեր էին եւ հոն հաստատուած: Սուլթանը իր բանակներով յարձակումի կ'անցնի, բայց չի կրնար գրաւել, հակառակ որ մեծ բանակով մը

4. Հմմտ. Սիսուան, էջ 425-426:
5. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 204:
6. Անդ:
7. Անդ:
8. Անդ, էջ 209:
9. Անդ, էջ 204:




Պաղրաս, մասնակի տեսք:
Baghras, vue partielle.

հասած էր Պաղրաս: Թուրանշահ կը հրատարի բերդէն, որովհետեւ դաշնակից կ'ըլլայ Անտիոքի բրինձին:

1268ին Պիպարս եգիպտացիին Անտիոքի գրաւումէն վերջ, ամբողջ ուժերով կ'իյնայ Պաղրաս բերդին վրայ, որու պահապանները առաջուց իմացած ըլլալով Պիպարսի մեծ ուժերով իրենց վրայ գալը, մանաւանդ թէ երբ կ'իմանան Անտիոքի անկումը, յուսալքուած՝ կը թողուն բերդին պաշտպանութիւնը եւ կը հեռանան Պաղրասի շրջաններէն. այնպէս որ երբ Պիպարսի բանակը կը հասնի Պաղրասի դռներուն առջեւ, մեծ զարմանքով կը տեսնեն որ բերդը լքուած էր, առանց ոչ մէկ պաշտպանութեան: Յաղթանակով բերդ կը մտնեն, առանց կաթիլ մը արիւն թափելու, բերդը կը լեցնէ եգիպտացի պահապաններով, զինամթերքով, եւ իր սահմանային հզօր բերդերէն մէկը կ'ընէ¹⁰:

Այս դէպքերէն վերջ Պաղրաս այլեւս չի յիշուիր մեր պատմութեան մէջ, միայն 200 տարի վերջ 1467ին գրուած յիշատակարանի մը մէջ կը կարդանք հետեւեալը. «Տի մեծ թուին Հայոց ԶԺԶ (1467) ի բազմանալ մեղաց մարդկան

10. Սիսուան, էջ 425-428:



Պաղրասի բերդէն մաս մը:
Gaghras, vue partielle.

եւ յազդմանէ չարին, Տուղարցի ոմն Շահսուար անուն՝ եղեալ հակառակ Մսրայ սուլտանին, եւ շատ աւերած էած անոր աշխարհին... եւ էառ զԱտանա, եւ զՏարսոն, էառ եւ զՊաղրասու բերդն, զԼեւոն բերդն, եւ յետոյ զԲարձրբերդն եւ տիրեաց ամենայն լեռնակողմանցն»¹¹:

Այս յիշատակագիրը ցոյց կու տայ թէ մինչեւ 1467 թուականը Պաղրաս տակաւին բնակուած էր: Այս թուականէն վերջ է որ կը լքուի եւ աւերակ կը դառնայ Պաղրասի պէս նշանաւոր բերդ մը¹²:

11. ԽԱՉԻԿԷԱՆ Լ. Ս., Յիշատակարան ձեռագիրներու ժե. դարու, Երեւան, 1955, էջ 273: Հմմտ. Հայապատում, Գ., էջ 242:
12. Պաղրասի բերդին մասին տե՛ս ՍԻՒՐՄԷՆԱՆ ԱՐՔԵՊՍ. ԱՐՏԱԻԱԶԴ, Պաղրասի բերդը, Հալէպ, 1937:

ԱԶԱԶԻ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Հալէպէն 45 քիլոմետր հեռու, բլուրներու ստորոտը, ընդարձակ դաշտի մը մէջ, կը տարածուէր Ազազ հին քաղաքը. այժմ ան փոքրիկ գիւղ մըն է, չըջապատուած այգիներով եւ ձիթենիի ծառերով: Գիւղին կեդրոնը, հողաբլուրի մը վրայ, կը բարձրանայ Ազազի բերդը, մեր նախնիքներէն կոչուած «Անառիկ»:

Ժամանակին Ազազ զինուորական կարեւոր կեդրոն մը եղած է, ինչ որ վերեւի պատմիչներու գրածներէն, եւ վարեւոր դեր մը խաղացեր է, իբրեւ քաղաք, ղէպի Միջագետք գացող ճամբուն վրայ:

ՊԱՏՄԱԿԱՆ

Ազազ բերդը, թէեւ հայկական ամրոց մը չէր, սակայն մեր պատմութեան հետ ունեցած է կապեր, յատկապէս կիլիկեան շրջանին:

Մատթէոս Ուռհայեցի կ'աւանդէ թէ 1030ին, Պոլսոյ Ռոմանոս կայսրը մեծ բանակով մը «եկեալ բանակեալ ի վերայ ամուր բերդին որ կոչի, Հալապայ մերձ, Ազազ քաղաք»¹: Այս վկայութենէն կ'եզրակացնենք թէ Ազազ քաղաք մըն էր, Հարէպի մօտ, եւ թէ ունէր նաեւ իր «ամուր բերդ»ը:

1118ին, Անտիոքի Ռօճեր կոմսը կ'ուզէ գրաւել Ազազ՝ Թուրքերու ձեռքէն: Երեսուն օր պաշարելէ յետոյ, տեսնելով որ իր բանակներով պիտի չյաջողի գրաւել բերդը, փորձելու համար Հայոց ոյժն ու զօրութիւնը, «կոչեաց զԼեւոն եւ ասէր, եթէ վաղիւն քո ելցես զօրօքդ ի պատերազմ»²:

Լեւոն յանձն կ'առնէ այս վտանգաւոր առաջարկը, առանձին ելլել Ազազը պաշտպանողներուն դէմ, որոնք երեսուն օր կրցած էին զիմադրել Ռօճերի հօր քանակին եւ յարձակումներուն: «Յայնժամ ձայն տուեալ մեծ իշխանն Հայոց ամենայն զօրացն Հայոց, որ էին ի բանակին, եւ ժողովեցան ամենայն զօրքն Հայոց առ քաջ զօրականն Քրիստոսի Լեւոն (իշխան), եւ նա յորդորէր զամենեսեան մի առ մի»³:

1. ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, Պատմութիւն, էջ 64:
2. ԱՅԳ, էջ 428:
3. ԱՅԳ: Տես նաեւ ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 147:

Թուրք զորքերը քաջալերուած Ռոճերի վրայ տարած մասնակի յաղթանակէն, յաջորդ օրը դուրս կ'ելլեն քաղաքէն եւ կը յարձակին Փռանկ զօրքերուն վրայ, բայց իրենց առջեւ կը գտնեն հայ զօրքեր. «եւ իշխանն Հայոց Լեւոն վառեալ ունէր զՊորսն Հայոց ընդդէմ զօրացն Տաճկաց, եւ ձայն տայր զօրաց, եւ ի դիմի հարան զօրացն այլազգեաց. եւ գոչեաց ուժգին որպէս զառիւծ, եւ հանդերձ զօրօքն բախեցաւ ի վերայ նոցա եւ դարձոյց զնոսա ի փախուստ, եւ սրով (անկաւ) ի հետ՝ մինչեւ ի դուռն քաղաքին կոտորեաց զնոսա, եւ արար զնոսա արգելականս, որ այլ ոչ ելին ընդ դուռն քաղաքին ի պատերազմ»⁴:

Տաճիկ զօրքը չարաչար պարտուած կը լքէ ճակատը եւ կը քաշուի Ազազի պարիսպներէն ներս, չհամարձակելով դուրս ելլել եւ կռուիլ, կ'ըսէ պատմիչը: Լեւոն թէեւ Ազազի բերդը չէր կրցած գրաւել, սակայն մեծ յաղթանակ տարած էր, քչելով թուրք բանակը իր բոյնին մէջ: Ռոճեր անշուշտ հեռուէն հետեւած էր պատերազմին եւ զարմացած հայ զօրքերու քաջութեան վրայ. «եւ էառ իշխանն Հայոց Լեւոն՝ քաջութեան անուն յաւուր յայնմիկ, եւ գովեցաւ ի մէջ զօրացն Փռանկաց. եւ յայնմ օրէ սիրեաց Ռոճեր զՊորսն Հայոց»⁵:

Լեւոն յաղթանակ մը տարած էր, բայց Ազազ տակաւին ինկած չէր: Յաջորդ օրը Լեւոն դարձեալ Ազազի պարիսպներուն առջեւ կը շարունակէ պատերազմը. այս անգամ ուղղակի քաղաքին դէմ. «եւ այսպիսի պատերազմաւ նեղէր զքաղաքն Ազազ, եւ սաստիկ պատերազմաւ հաւանեցուցանէր զնոսա, եւ էառ խաղաղութեամբ, եւ մարդոյ ոչինչ մեղուցաւ, այլ արձակեաց զընակիչսն խաղաղութեամբ»⁶:

Ազազ վերջապէս Լեւոնի առջեւ իր դռները բացած Վեր: Լեւոն (իշխան) բարեսիրտ եւ ներող, ժողովուրդին վնաս չի հասցներ, զանոնք խաղաղութեամբ կը թողու որ հեռանան, եւ ինքը յաղթական Ազազ կը մտնէ: Սակայն Ազազը Հայկազի Սազի ամիրային ըլլալով, առաջ որ Սազի ամիրան բարեկամ էր Ռոճերի, Ազազի գրաւումով՝ անոնք իրարու կը թշնամանան, «յառաջն էին յոյժ սիրելիք եւ բարեկամք միմեանց, եւ յայսմ ժամուն եղեն թշնամիք, վասն զի Հայկազն եւ Ազազն Սազեայ էին՝ ամիրային Թուրքաց... եւ մոմոայր Սազի ի սրտի իւրում»⁷:

Յաջորդաբար անշուշտ Լեւոն բերդը յանձնած է Ռոճերի՝ որ զինք կանչած էր օգնութեան:

Ազազ բերդի մասին դեռ կը գտնենք զանազան ակնարկներ մեր պատմական գիրքերուն մէջ, որոնք զանց կ'ընենք համադրելէ, որովհետեւ ոչ մէկ կապ ունի մեր աղբայրին պատմութեան հետ⁸:

4. Անդ, էջ 429:

5. Անդ:

6. Անդ:

7. Անդ:

8. Հմմտ. Անդ, էջ 431, 454-458: ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 148, 156-158: ՄԻԽԱՅԷԼ ԱՍՈՐԻ, էջ 478-479:



Թոփրաֆալի պարիսպները եւ մեծ աշտարակը:
Murailles et grande tour de la forteresse de Toprakkale (CEDCAM).

ՀԵՐՄԻՆ ԲԵՐԴ

Հերմին կամ Հերիմ, Ամանոսեան լեռներու վրայ եղող բազմաթիւ բերդերէն մէկն էր, կը գտնուէր Կիլիկիոյ արեւելեան սահմաններուն վրայ, Անտիոքի մօտերը, եւ մաս կը կազմէր Անտիոքի կոմսութեան, ինչպէս կը ծանօթագրէ Մ. Ուռհայեցիի հրատարակիչը՝ ըսելով. «Հերիմն որ եւ Հարէմ, էր ամրոց յիշխանութեան Անտիոքի, հարաւոյ արեւելից եւ միոյ յաւուր ճանապարհաւ հեռի ի քաղաքէն»¹:

1161ին Հերմին բերդին վրայ կ'արշաւէ Նուբէտտին սուլթան, կը պաշարէ, սակայն չի կրնար գրաւել բերդը «ի բազմութենէ անձրեւին»²: Անձրեւի պատճառով չկարենալ գրաւել բերդը՝ հաւանաբար պատրուակ մըն էր. իրական պատճառը կու տայ մեզի Սմբատ Սպարապետ՝ «երբ կը գրէ. «Թորոս (Բ.) որդի Լեւոնի եւ Թագաւորն Երուսաղէմի՝ յԱնտիոք էին, վասն որոյ ոչ ի շխեաց յամել անդ, այլ գնաց յետս»³:

Նուբէտտին լաւ կը ճանչնար Թորոս Բ.ի զինուորական կարողութիւնները եւ կատարած քաջագործութիւնները, ուստի խոհեմութիւն կը համարի չհանդիպիլ անոր. գիշերանց կը թողու Հերմին բերդի պաշարումը եւ կը պաշարէ Արցխան բերդը. «Այլ գնաց յետս եւ Նուբրտինն գնացեալ գառ զԱրցխան երդմամբ, եւ քակեաց զքնակութիւնն եւ զգերին տարեալ Հալպ»⁴:

Մեր պատմիչները ասկէ վերջ չեն խօսիր Հերմին եւ Արցախ բերդերու մասին:

1. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Պատմ., էջ 582, Ծանօթ. 346:

2. Անգ, էջ 545:

3. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգիրք, էջ 185:

4. Անգ:

ԱՐՑԽԱՆ ԲԵՐԴ

Արցխան բերդը կը յիշուի մեր պատմութեան մէջ, սակայն անոր դիրքին մասին մեր պատմիչները որոշ ոչ մէկ տեղագրութիւն ունին: Սմբատ Սպարապետի հրատարակիչը զայն կը դնէ «Ամրոց Անտիոքի մօտ», հաւանաբար Սեաւ լեռներու վրայ բարձրացող բերդերէն մէկն էր, զոր Մ. Ուռհայեցի «Անտիկ բերդ» կը կոչէ: Մ. Ուռհայեցիի շարայարողը, Գրիգոր Երէց, կը գրէ անոր մասին, երբ 1160ին Նուբէտտին սուլթանը Դամասկոսէն մեծ քանակով կը հասնի Տրապոլիս, եւ անկից ալ Հերմին բերդին վրայ կը քալէ. սակայն երբ կ'իմանայ որ Թորոս Բ. եւ Երուսաղէմի Թագաւորը միացեալ քանակով Անտիոք են եւ իրեն դալուն կը սպասեն, «վասն որոյ ոչ իշխեաց յամել անդ, այլ զնաց յետս, եւ Նուբրտինն գնացեալ էառ զԱրցխան՝ երդմամբ, եւ քակեաց զքանակութիւնն եւ զգերին տարեալ ի Հալպ»¹:

Նոյն դէպքը, ինչպէս ըսինք, կը պատմէ նաեւ Մ. Ուռհայեցի ցոյց տալով որ Արցխան բերդը քրիստոնեաներու ձեռքն էր, այսինքն յատին իշխաններուն, «քակեաց աւերեաց, էառ գերի զայլ մնացեալ քրիստոնեայն եւ երբ ի Հալպ քաղաք»²:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 185:

2. ԳՐԻԳՈՐ ԵՐԷՑ, շարայարող Մ. Ուռհայեցիի Պատմութեան, Երուսաղէմ, 1800, էջ 545-546:

ՊՈՒՏՐՈՒՆ ԿԱՍ ՊՈՒՏՐՈՒՍ ԲԵՐԴ

Դաշտային Կիլիկիոյ բերդերէն էր Պուտրումի բերդը: Թուրքերը զայն կը կոչեն Budrum Kalesi = Պուտում Բալէսի: Կը գտնուի Ամուտայի արեւելքը եւ անկէ չորս-հինգ քլմ. հեռու, համանուն գետակի շուրջը բարձրացող լեռներէն մէկուն ստորոտը, քարածայռի մը կատարին: Ֆրանսացի այցելուներ զայն կը նմանցնեն Սէն Միշէլ Կիւլ կոչուած լեռան: Այս լեռան ստորոտն էր համանուն գիւղը:

Մեր պատմագիրներէն այս բերդի մասին յիշատակութիւններ չունինք. 1338ին գրուած Մաշտոցի մը յիշատակարանին մէջ կը յիշուի Պուտրում բերդը, որ կը գտնուէր Ս. Ռոմանոս կոչուած անապատին մօտ: Բերդը եւ համանուն գիւղը այսօր աւերակ է, անոր ասերակներուն մէջ կը տեսնուին բազմաթիւ հնութիւններու մնացորդներ, գերեզմաններ, սիւնազարդ կամարներ, նման Իսաւրիոյ գերեզմաններուն:

Գիւղին մէջ կանգուն մնացած շէնքերը շատ կը նմանին Պոմպէոպոլսոյ շինուածքներու ոճին, ինչ որ ցոյց կու տան թէ անոնք Քրիստոսի Բ. դարուն կառուցուած են, յետոյ քրիստոնեաներէն վերանորոգուած:

Քարարվուրին ստորոտէն երկու կարգ սիւներ կ'երկարին մինչեւ բերդին ստորոտը, ուր տակաւին վանդուն են երկու հսկայ սիւներ եւ հինգ ուրիշներ ալ կէսէն կտրած. հոս ու հոն կէս հողին մէջ թաղուած կը տեսնուին խորտակուած խոյակներ:

Բերդը տակաւին ամբողջութեամբ պեղուած չէ: Ինչ որ Տէվիս ուղեգիրը կրցած է քննել անոր հնութիւնները, կ'ըսէ թէ այս բերդը շինուած է Յուստինիանոս կայսրէն, եւ ոչ թէ Հայերէն:

Բերդին սիւնազարդ կամարներուն քով կը բարձրանայ կլոր աշտարակ մը, ուսկից ճամբան կ'երթար դէպի բերդին գուռը¹:

1. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիւուած, էջ 202:

ՋԼԿԱՆՈՑ ԲԵՐԴ

Դաշտային Կիլիկիոյ բերդերէն էր Ջիկանոցի բերդը, անոր տեղը եւ դիրքը անձանօթ վը մնայ, զախ կը յիշէ անցողակի կերպով՝ Հեթում պատմիչ, ըսելով թէ երբ 1322ին Եգիպտացիները Կիլիկիոյ վրայ կ'արշաւեն եւ կը գրաւեն Այասը, հուսկ կու գան կը պաշարեն Ջիկանոցի բերդը, որ հաւանաբար անկէ շատ հեռու չէր: Բերդին իջխանն էր Հեթում անունով մէկը, որ իր սակաւաթիւ զինուորներով դուրս վը խոյանայ բերդէն, օգնական ունենալով ուրիշ քանի մը հայ իջխաններ, կեանքի եւ մահու կռիւ կը մղէ Եգիպտացիներուն դէմ: Այս անհաւասար կռիւին մէջ՝ զժգրախտաբար Հեթում կ'իյնայ հերոսաբար դաշտին վրայ եւ Եգիպտացիները կը գրաւեն Ջիկանոցի բերդը¹:

Այլիչան կը համարի թէ Ջիկանոցի բերդը հաւանաբար կը գտնուէր Սեաւ լեռներու արեւելեան մէկ ճիւղին վրայ, ուր այժմ կը գտնուի Զիլ-Խամն անունով գիւղ մը²:

1. Սիսուամ, էջ 244:

2. Անդ:

ԿՈՎԱՌԱ ԲԵՐԴ

Կովառա՝ Դաշտային Կիլիկիոյ բերդերէն էր, հաւանաբար կը գտնուէր Ջիհուն գետի ափին:

Այլիչան կը համարի որ այս բերդը նոյն է Հեթում Ա.ի պարզեւագրին մէջ յիշուած Կովայրիա = Gouvaira բերդին հետ, զոր 1233ին Կոստանդին՝ Լամբրոնի տէրը, Ս. Ներսէս Լամբրոնացիի եղբորորդին՝ Հիւանդանոցի Ասպետներուն նուէր տուաւ:

Այս պարզեւագրին պատճէնը, կ'ըսէ Այլիչան, երբեմն վը պահուէր նոյն հիւանդանոցի Ասպետներուն վանքին դիւաններուն մէջ, սակայն վերջերս կորսուած է: Կովառա բերդը շատ հեռու պէտք չէր ըլլալ Լամբրոնէն. հաւանաբար Կոստանդին զախ ժառանգած էր իր նախնիքներէն³:

Կովառա Կիլիկիոյ ամէնէն լաւ մնացած բերդերէն մէկն է. ան կանգուն էր մինչեւ 1467 թուականներուն, երբ Շահսուար կու գայ ևւ կը գրաւէ, ինչպէս կը գրէ յիշատակագիր մը. «Ի մեծի թուին Հայոց ԶԺԶ (1467) ի րազմանալ մեղաց մարդկան... ոմն Շահսուար շատ աւեր էած աշխարհին... էառ նա եւ զԱնարզարա, զԿովառա բերդն եւ զամենայն դաշտսն»²:

Այս թուականէն քսան տարի վերջ Կովառա բերդը վարձեալ վը գրաւուի 1488ին Ռումելայի մեծ կուսակալ՝ Ալի փաշայէն³:

Կովառա բերդի շրջանը տակաւին լաւ կերպով քննուած չէ, ապահով նորութիւններ մէջտեղ պիտի ելլեն, եթէ լաւ կերպով խուզարկուի:

1. Հմմտ. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսուամ, էջ 538:

2. Հայապատում, Գ., էջ 242-243:

3. Սիսուամ, էջ 210:

Ա Յ Լ Բ Ե Ր Դ Ե Ր

ԿՈՒՊԱ ԲԵՐԴ

Դիրքով եւ յիշատակով, Կիլիկիոյ անծանօթ բերդերէն մէկն է. Սմբատ Սպարապետ անոր իշխան կը ներկայացնէ Պաղտին, որ տէր էր նաեւ Անդոշ-ծիի բերդին. «Իշխանն Անդոշծիին եւ Կուպային՝ Պաղտին»¹: Պաղտին ապրած է ԺԲ. դարու վերջերքը եւ ներկայ եղած է Լեւոն Թագաւորի Թագադրութեան հանդէսին:

Կուպա բերդը, Ալիշանի համաձայն, հաւանաբար կը գտնուէր Կալիւկադնոսի գետահովիտին մէջ²:

- 1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգիրք, էջ 210:
- 2. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսուամ, էջ 328:

ՍՈՒՐԲ ՍՈՓԷ ԲԵՐԴ

Անունով եւ տեղով անծանօթ կիլիկեան բերդերէն մէկն է Ս. Սոփէ բերդը. դայն կը յիշէ մէկ անգամ Սմբատ Սպարապետ. «Իշխանն Կալանօնօսոսոյ, Այժուտապին, սուրբ Սոփէ եւ Նաղյօնին՝ Կեռվարդն»¹:

Ինչ որ կ'երեւի պատմիչին տուեալէն, Կեռվարդ, Կիլիկիոյ ազդեցիկ եւ մեծ իշխաններէն մէկն էր, եւ կը տիրէր քանի մը բերդերու. Կեռվարդ 1198ին ներկայ եղած է Լեւոնի Թագադրութեան հանդէսին:

Կեռվարդի բերդերը եւ իշխանութեան սահմանները մեզի անծանօթ կը մնան. Ալիշան կը համարի «ոչ հեռի ի սահմանաց եւ ի Կալանօնօսուէ»²:

- 1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:
- 2. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսուամ, էջ 317:

ՏՈՒՐԻԿ ԲԵՐԴ

Կիլիկեան անծանօթ բերդերէն մին է՝ որ կը յիշատակուի միայն 1194ին գրուած Աւետարանի մը յիշատակարանին մէջ. «Արդ եղեւ զրաւ գրութեանս Հայոց ՈՊԴ (1195), ի Հայրապետութեան Տեառն Գրիգորի Հայոց Կաթողիկոսի, ի մանկական տիոց Տղայ կոչեցեալ, յեպիսկոպոսութեան Տեառն Թէղոսի առ սահմանօք անմատոյց բերդիս որ կոչի Տուրիկ, ի գեաւղս որ կոչի Նեղկուկ...»¹: Հոս՝ ինչպէս վը տեսնուի յիշատակարանի խօսքերէն, Կիլիկիոյ մէկ կարեւոր բերդերէն էր Տուրիկ, եւ որ «անմատոյց» ալ կը կոչուի, կը գտնուէր հաւանաբար Նեղկուկ գիւղին մօտերը:

1. ՅՈՎԱՏՔԵՏԱՆ Գ. ԿԹՂ., Յիշատակարան ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 585:

ԱՆԷ ԲԵՐԴ

Անէ կիլիկեան անծանօթ բերդերէն մին է, հաւանաբար կը գտնուէր Ջահան գետի հովիտին մէջ: Ջայն կը յիշէ Սմբատ Սպարապետ. «Իշխանն Անէոյն՝ Հեռի»¹, որ 1198ին ներկայ եղած է Լեւոնի Թագադրութեան հանդէսին:

Հեռի կամ Հանուի, Փրանսական անուն է, հաւանաբար սա Փրանսացի իշխան մըն էր, Պաշակիրներու հետ Արեւելք եկած եւ հաստատուած Կիլիկիոյ մէջ, եւ ապա Լեւոն Ա. ի իշխանութեան շրջանին՝ մտած անոր հովանիին տակ²:

Ալիշան կը համարի որ Անէ բերդը մինչեւ վերջերս տակաւին կանգուն էր:

- 1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 209:
- 2. Հայապատում, Բ., էջ 460:

ԶԱՐՏԱԳ ՔԱԼԷ

Ամանոսեան լեռներու ստորոտը կը գտնուի Զարտագ քաղաքը կոչուած բերդը, որ բլուրի մը կատարին վրայ շրջապատուած է մայրի ծառերով, որուն ստորոտը համանուն գիւղ մը նաև գոյութիւն ունի: Անոր մանրամասնութիւնները մեզի անծանօթ կը մնան:

Զարտագ բերդէն մէկ քրիմեղը հեռու, անոր արեւմտեան կողմին վրայ, կայ գիւղ մը որ Օսմանիէ կը կոչուի: Այս գիւղէն քիչ հեռու կայ բերդ մը եւս որ Թուրքերէն Քուփէկ քաղաքի (Շնաբերդ) կը կոչուի:

ՋՕՖՐԷԿԼԱՅ

Կիլիկեան անծանօթ բերդերէն մէկն էր Ջօֆրէկլայ, որուն տէր եւ իշխան կը յիշուի Թորոս անունով իշխան մը. «Պր. Թորոս Պոռկախմոս՝ տէրն Ջօֆրէկլային»¹: Թորոս Պոռկախմոս ներկայ եղած է Ատանայի ժողովին, զոր գումարած է Կոստանդին կաթողիկոս՝ 1316ին:

1. Սիսուամ, էջ 258:

ՄՕՏՐԻԿ, ԼԱԼԵԱՆ, ՍԵԻ ԱԻԵՐԱԿ ԲԵՐԴԵՐ

Ջահան գետի հովիտին մէջ կը յիշուին երեք բերդեր՝ Մօտրիկ, Լալեան, եւ Սեւ Աւերակ կոչուած: Այս բերդերուն շուրջ կամ ստորոտը կը գտնուին համանուն գիւղերը: Այս երեք բերդերն ալ ստիպուեցան մեր Կիլիկիոյ իշխանները յանձնել Եգիպտոսի սուլթաններուն, խաղաղութեամբ ապրելու համար անոնց հետ այդ շրջաններուն մէջ¹:

1. Սիսուամ, էջ 205:

ԾՈՎԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱ

Փոքր Ասիոյ հարաւ-արեւելեան ծովեզերեայ ափերէն մաս մը, ինչպէս նաեւ Միջերկրական ծովուն հարաւային ափերէն մասեր մը, շուրջ 260 քլմ. ցամաքէն եւ ծովեզերքներէն 350 քլմ. հողամասեր, իրենց ծովախորշերով, Կիլիկեան հայ թագաւորութեան հողային տիրապետութեան մաս կազմած են:

Սկիզբը, երբ անոնք կ'իջխէին լեռնային Կիլիկիոյ վրայ, կը կարծուէր թէ անոնք պիտի չկարենային իջնել ծովափ, այլ պիտի մնային կողիացած լեռներու կատարներուն վրայ. սակայն, ինչպէս պիտի տեսնենք, կը հասնին ծովեզերք, տիրելով դաշտային եւ ծովային Կիլիկիոյ ընդարձակ տարածութեան, մինչեւ Հայոց ծոցը, կիսակամար ծովեզերքի մը, մէջը առնելով հարաւային կողմը գտնուող Քարային Կիլիկիան, որ ծովուն մէջ կ'երկարի, կազմելով երկու ընդարձակ ծովախորշեր. արեւմուտքէն՝ Պամփիլիոյ կամ Ատալիոյ ծոցը, արեւելքէն՝ Տարսոնի ծոցը:

«Հայոց ծոց» կամ «Ռսոսի ծոց», որ է Աղեքսանդրեակի ծոցը՝ կարելի է կոչել նաեւ Այասի Հայոց ծոց:

Այս ընդարձակ ծովեզերքին միայն արեւելեան մասն է որ մնայուն կերպով Կիլիկիոյ հայ իշխանութեան սեփականութիւն եղած է. արեւմտեան մասին ստէպ տիրած են հայ իշխաններ, բայց դժբախտաբար կը պակսին մեղի ազգային յիշատակարաններ ու պատմական տուեալներ: Այսքանը սակայն որոշ է որ արեւելեան մասին մէջ կը գտնուին բազմաթիւ բերդեր, որոնց տիրած են Մեծն Լեւոնի հպատակ իշխաններ, որոնցմէ ոմանք հպատակ մնացին Հեթում Ա. թագաւորութեան օրերուն եւ գուցէ նաեւ անոր որդւոյն Լեւոնի տիրապետութեան առաջին շրջանին:

Մեզի համար մեծ ուրախութիւն եւ հրճուանք է՝ անցնիլ քալել այդ ծովեզերքներէն, ուր երբեմն կը բարձրանային բերդեր, բերդաքաղաքներ, որոնց կը տիրէին հայ թագաւորներ, հայ իշխաններ: Այդ ծովեզերքներուն վրայ կային անառիկ բերդեր, վաճառականական հարուստ կեդրոններ եւ բանուկ նաւահանգիստներ, ուր Եւրոպայէն եւ ուրիշ կողմերէ կու գային նաւեր՝ իրենց բեռները վը թափէին, կ'առնէին կիլիկեան ապրանքներ եւ կը մեկնէին: Այս նաւահանգիստներն էին՝ Այաս, Տարսոն, Մերսին, Կոռիկոս, Կոռակեսիոն-Ալարա, Ատալիա եւ ուրիշներ:

Մենք պիտի նկատենք թէ ինչպէս մեր նախնիքները երեք դար ամբողջ տիրել էին այդ բերդերուն եւ քաղաքներուն, ջանալով ստեղծել խաղաղ կեանք մը, թողլով մեզի փառաւոր յիշատակներ ու պատմութեան փառաւոր էջեր:

ՊԱՏՄԱԿԱՆ

Ճկեր բերդը Ամանոսեան լեռներու շրջանի համանուն գաւառի բերդերէն մէկն էր. դայն կը յիշէ 1216-7ի յիշատակարան մը եւ անոր անունով ամբողջ գաւառը Ճկեր կը կոչէ, «ի գաւառին որ Ճկեր անուանի»: Ո՛ւր կը գտնուէին Ճկեր բերդը եւ համանուն գաւառը. նոյն յիշատակագիրը վը գրէ թէ կը գըտնուէին «ի ծովեզերս ովկիանոսի» որուն քով գիւղ մ'ալ կար որ Պայաս կը կոչուէր. «ի գետու որ Պայաս կոչի»²: Հոս յիշատակագիրը «ի ծովեզերս ովկիանոսի» ըսելով վը հասկնայ Միջերկրական ծովուն եզերքը, ուր կար Պայաս գիւղը. այսօր մեզի ծանօթ է Պայասը, Աղեքսանդրեակէն քիչ մը վեր՝ ծովեզերքին վրայ. հետեւաբար Աղեքսանդրեակէն վեր եղող շրջանը Ճկերի գաւառ կը կոչուէր, եւ հոն էր նաեւ Ճկեր բերդը որ իր անունը տուեր է հաւանաբար գաւառին: Այս անունին մերձաւոր անուն մը՝ Ճաւէր՝ տակաւին կը լսուի Աղեքսանդրեակի հիւսիսը:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Սմբատ Սպարապետ կը գրէ թէ 1185ի ժամանակները Մեծն Լեւոնի եղբայրը Ռուբէն (Բ.), խառնակ կեանք մը անցընելու նպատակով՝ Անտիոք կ'երթայ. Անտիոքի Պեմունդ իշխանը այս տեսնելով՝ կը բռնէ զինքը եւ բանտ կը նետէ. Ռուբէն (Բ.) վը ստիպուի իր Բակուրան քեռիին գրել, որ պատանդներ զրկէ Պեմունդին, որպէսզի ինքը ազատի գերութենէն. «յղել պանդանտ զի գիցէ փոխանակ իւր՝ առ բրինձն, եւ ինքն ելեալ տացէ պղին սնձին իւրոյ»: Բակուրան կը ստիպուի իր քոյրը եւ Ռուբէնի մայրը եւ ուրիշ սիրելիներ պատանդ զրկել. «եւ կտրեաց Ռուբէն գին անձին իւրոյ զՍարվանդիքարն, զԹիլն եւ զՃկերն, եւ Ռ. (1000) դահեկան». Պեմունդ այս պատանդները առնելով ազատ վարձակէ Ռուբէնը³:

Հոս պէտք է նկատի առնենք թէ առաջին անգամ է որ կը յիշուի Ճկեր,

1. Հայագատում, Բ. 8Ը, էջ 457:
2. Անգ:
3. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 194:

որ իբրև բերդ փրկագին կը տրուի Սարվանդիքարի եւ Թիլի հետ. շատ հաւանական է որ այդ բերդերն ալ, ինչպէս ձկերը, գտնուէին Անտիոքի շրջանին մէջ. ծանօթ են Սարվանդիքարի եւ Թիլի տեղերը, ձկեր ալ պէտք է որ անոնց մօտերը ըլլար, հաւանաբար կը գտնուէր Աղեքսանդրեակի եւ Պայասի հիւսիսը, դէպի Խոսսի դաշտը երկարող ծովեզերքին վրայ: Այլիչան Աղեքսանդրեակի եւ Պայասի հիւսիսը ձկեր գաւառ կ'անուանէ եւ կ'ըսէ թէ հոն բազմաթիւ բերդեր կային, որոնցմէ շատեր քանդուեր եւ լքուեր են, շատեր ալ իրենց հին անունը փոխեր են նորով: Nazim Tarhanի վերջերս հրատարակած քարտէսը կը դնէ կիսաւեր բերդ մը ծովեզերքին աւելի մօտ եւ զայն կը կոչէ Kizlar Kalesi. այս բերդը կրնայ համապատասխանել մեր հին ձկեր բերդին, որ այսօր աննշան բերդ մըն է:

Լեւոն Մեծի Թագադրութեան հանդէսին՝ 1198ին, ներկայ գտնուեր է ձկեր բերդի իշխանը, ինչպէս կը գրէ պատմիչը, «Իշխանն ձկերոյն Օստն»⁴:

Այս Օստն իշխանը մեզի ծանօթ Աւստոմ իշխանն է, որ Տիբերիացի ալ կոչուած է մեր պատմութեան մէջ, հաւանաբար ծագումով Փրանսացի մը:

1214ին կ'երեւի թէ ձկեր արքունիքէն գրաւուած է, որովհետեւ ամբողջ ձկեր գաւառը Լեւոն Ա. գրաւի կը դնէ Երկու տարուան համար Հիւրանոցի ասպետներուն, եւ փոխարէն 20.000 բիզանդական սառակին կը ստանայ իր Ռիթա աղջկան օժիտ տալու համար, զոր պիտի հարսնացնէր Երուսաղէմի Յովհաննէս Պրիենի⁵:

4. Անդ, էջ 209:

5. LANGLOIS, Cartulaire, էջ 124-125:

ՆՂՐՈՑ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Ծովային Կիլիկիոյ քաղաքի բերդերէն մէկն էր՝ Նզիր կամ Նզրոյ բերդը: Մեր պատմիչները չեն խօսիր անոր մասին. հաւանաբար կը գտնուէր ձկեր գաւառին մէջ, ուր այսօր ալ կը գտնուին երկու բերդերու աւերակներ, Չարտաֆ Գալա եւ Ֆրէմիլ Գալա, որոնցմէ մէկը պէտք է եղած ըլլայ Նզրոյ բերդը, ու հաւանաբար Չարտաք Գալան, որ կը գտնուի այսօրուան Օսմանիէ աւանին մէջ, Աղասու Սու կոչուած գետակի ափին, որ կը թափի Ճիհուն գետը¹:

Մեծն Լեւոնի Թագադրութեան հանդէսին ներկայ գտնուող իշխաններու անունները թուարկուած ատեն՝ չի յիշուիր Նզրոյ բերդէն եկող իշխանի մը անունը, որովհետեւ բերդը Թագաւորական արքունիքին սեփականութիւն էր. կը յիշուի սակայն Նզրոյ անունը՝ Լեւոնի պայմանագրին մէջ, ոչ իբրև բերդ՝ այլ իբր գիւղ կամ աւան:

Վիլլէպրանտ ուղեգիրը, որ Լեւոնի Թագաւորութեան 12րդ տարին անցած է Կիլիկիոյ սահմաններէն, տեսած է զայն եւ կը կոչէ Castrum Regis Nigrum:

Յայտնի չէ ո՛չ շինութեան թուականը եւ ոչ անունին ծագումը. կարելի ալ չէ գուշակել թէ «հայերէնէ՞ լատիներէնի թէ լատիներէնէ հայերէնի թարգմանուած է անոր անունը. լատիներէն Նիգրում (Nigrum) հայցականն է Նիգէր (Niger) բառին, որ սեւ կը նշանակէ, ու կը համապատասխանէ Սեալեոներու անունին, որոնց ստորոտը կը գտնուի Նզրոյ բերդը: Ասկից է որ Արարները Նուզէիր կոչած են զայն: Այս բերդը առաջին անգամ Արարներու թով յիշուած է 1274ին, երբ Պիպարս սուլթանը կ'արշաւէ ու կ'անցնի Սիսէն եւ Մսիսէն, Թլի Համալընի վրայով. արաբ պատմիչը զայն կը կոչէ՝ Քաթալ Նուզէիր, այսինքն Բերդ Նզրոյ²:

1. Սիսուս, էջ 411-413:

2. Անդ:

ՊԱՏՄԱԿԱՆ

Կը յիշուի որ Նղրոյ բերդի առաջին սեփականատէրը եղած է Կոստանդին († 1308), «որդի կարծեցեալ մեծի թագաւորահօրն Կոստանդեայ. քանզի որդի նորա Պաղտին՝ ասի թոռն գոլ թագաւորահօրն, ի բարձրագոյն տոհմէ, զի է ի թագաւորական ազգէ, մերձաւոր բարեպաշտին մերոյ քրիստոսասէր արքային Հայոց Աւչնի. որդի գոլով փառաւոր իշխանին տիրոջն Նարիմ, եւ թոռն իմաստնոն եւ հանճարեղին Կոստանդեայ՝ աւագ Պարոնին. զի այս Կոստանդին տէր Նարիմ՝ երիս որդիս ունելով, որ են այժմ (1319ին) ի յիշխանութեան պատիւ, փառաւորագոյնք եւ հաւատարիմք. եւ ի յերից որդւոցն մին է սա, Պաղտին, որ եւ այժմ մարաջախտ հայոց ըստ պատուոյ»³:

Ասոր մայրը կը կարծուի ըլլալ Կիպրոսի Հիւկ թագաւորին աղջիկը: Կոստանդինի երկրորդ որդին Վասակն էր, որ մեռած է 1328ին. երէց որդին էր Հեթումը, որ է Նղրոյ բերդին տէրն ու ժառանգը:

Հեթում թագաւորի վաւերական մէկ ձեռագիրը կը պահուի Մոնթէլիէի դիւանը. հրամանագիր մըն է, յանուն Լեւոն Դ. տղայ թագաւորին, գրուած 1331ին, ուր կը ստորագրէ ուրիշ համանունի մը հետ. «Մենք Հեթում Զամպլայն ու Հեթում Սիւնիջալս, հասկցուցաք զայսոր բանն թագաւորին. Հեթում»⁴:

Հեթումի մահուան թուականը որոշ չէ, բայց կը կարծուի՝ Վասակի մահէն յետոյ, եւ իր կրտսեր եղբոր Պաղտինի մահէն առաջ: Պաղտին, ուրիշ քանի մը անձերու հետ, 1307ին դեսպան կը ղրկուի Անգլիա, Եդուարդ Ա. թագաւորին, որ կը վախճանի դեսպաններուն հասնելէն առաջ: Նմանապէս դեսպաններու վերադարձէն առաջ կը սպաննուին Հայոց թագաւորն ու թագաւորահայրը: Անգլիոյ Եդուարդ Բ. թագաւորը Հայոց թագաւորին ուղղած նամակին մէջ կը գրէ թէ ընդունեցայ ձեր դեսպանները, որոնց շարքին Պաղտինը, Նղրոյ բերդին տիրոջ որդին:

Լեւոնի թագաւորութեան շրջանին Պաղտին անոր առաջնակարգ պարոններէն մէկը եղաւ, մանաւանդ Օշիւնի եւ Կոստանդինի սպանութենէն վերջ, ամբողջապէս մարաջախտութեան պատիւը ինքը առաւ:

Հեթում Դ. շատ մը գործեր կ'ընէ «ի նշանաւոր քաղաքն Տարսոն, յորում էր կայանք բնակութեան իւրոյ. ետ շինել ի սմա տուն եւ տաճար յանուն սուրբ եւ երանելի Առաքելոցն»⁵. Իսկ Կիլիկիոյ բերդերէն ունէր Բարձրաբերդը:

1335ին Հալէպի ամիրան՝ Ալթունպուղայ, կ'արշաւէ Կիլիկիոյ վրայ եւ աւարի կու տայ Ատանայի եւ Մոլեւոնի շրջանները: Լեւոն Դ. թագաւոր Եգիպտոսի սուլթանին դեսպաններ ու նամակ կը ղրկէ Վասիլ քարտուղարին եւ մարաջախտ Պաղտինի հետ, յիշեցնելով հին դաշինքը. եւ որովհետեւ դեսպանները Եգիպտոս երթալու համար կ'անցնին Հալէպէն, տեղւոյն սուլթանը

3. Աճգ:
4. Աճգ:
5. Աճգ:

կը բռնէ զանոնք եւ բանտ կը նետէ, կասկածելով անոնց դեսպանութեան վրայ: Պաղտին Հալէպի բանտին մէջ տաժանակիր տառապանքներ կրելէ յետոյ, եօթը ամիս վերջ կը վախճանի: Տեղւոյն հայերը կ'առնեն անոր մարմինը եւ կը փոխադրեն Կիլիկիա, ու կը թաղեն Ակներ վանքին մէջ, իր հայրենական դամբանը⁶:

Եգիպտացիները երկար պաշարումէ յետոյ վը գրաւեն Նղրոյ բերդը: Բերդին գրաւումէն տարի մը յետոյ, 1336ին, Սարգիս քահանայ իր օրինակած Աւետարանին յիշատակարանին մէջ մանրամասն կերպով կը գրէ թէ Եգիպտացին «արշաւեաց զաւրաւք եւ էառ զամենագարդ եւ զաստուածապահ բերդն զՆարի, նստելով ի վերայ նորա բազում ժամ. եւ աւերեաց, եւ ապա եմուտ յերկիրս, եւ ոչ քաղաք եւ ոչ բերդ եւ զեղ լեռնային եւ դաշտային... եւ ոչ մնաց տեղ յերկիրս, որ անաւրէնքն թողին որ չմտան, եւ յոյժ զարս բազումս սրով սպանին եւ եկեղեցականս յոլովս»⁷:

Յիշատակարանի այս խօսքերէն կ'երեւի որ Եգիպտացիները Նղրի բերդը ոչ թէ յարձակումով, այլ պաշարումով գրաւած են. Հայերը երկար դիմադրութիւն ցոյց տուած են. սակայն տառապելով սովէն եւ անօգնական մնալով, մանաւանդ Պաղտինի մահը լսելով, ստիպուած վար դըրած են զէնքերը եւ անձնատուր եղած:

Թագաւորական Յայսմաւուրքի մը մէջ Պաղտինի մահը կը նշանակուի 1336ի Դեկտեմբեր 12ին, ինչ որ Նղրոյ բերդին գրաւումի թուականն է:

1344ին Լուսինեան Կիտ թագաւորի սպանութենէն յետոյ, Պաղտինի եղբայրը Կոստանդին Բ., Նղրոյ տոհմէն, կ'ըլլայ Կիլիկիոյ Հայոց թագաւորը. Դարդէլ պատմիչ զայն «բռնաւոր» կ'անուանէ. սակայն չի պատմեր անոր թագաւորելու եղանակին մասին, բռնութեամբ թէ ընտրութեամբ. կ'ըսէ միայն թէ ան կը հալածէր Կիտի եղբորորդիները եւ անոնց մայրը: Սակայն Կոստանդին Բ. գովասանքով կը յիշուի մեր պատմիչներէն, քանի 19 տարի թագաւորած է խաղաղ կերպով⁸:

Պաղտինի մահէն յետոյ Նղրոյ բերդը կ'երլէ Հայոց ձեռքէն. Ալթունպուղայ տէր կը դառնայ ոչ միայն բերդին, այլ նաեւ ձիհուն գետի ամբողջ ձախափին, ուր վը գտնուէին Նղրի, ձկերի եւ Այասի նահանգները:

6. Աճգ:
7. ԽԱՉԻԿԵԱՆ Լ., Յիշատակարաններ ժԴ. դարի, Երևան, 1950, էջ 283-284:
8. Սիսուան, էջ 413:

ՊԱՅԱՍ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Աղեքսանդրեակի ծոցին արեւելեան ափին, դէպի Ատանա գացող ասուար-թապատ ճամբուն եզերքին, Աղեքսանդրեակէն 25 հազարամետր հեռու, կը գտնուի գիւղաւան մը, որ Պայաս կը կոչուի. հին ձկեր գաւառին մաս կը կազմէր: Գիւղը կը տարածուի մօտակայ լեռներէն իջնող Պայաս-սուի կոչուած գետակի ափին: Յոյները եւ Հռոմէացիները կը կոչէին Պայէ (Baie, Baiae), Թուրքերը այսօր կը կոչեն Պայաս (Payas):

Պայաս իբրեւ գիւղաւան չի յիշուիր մեր հին մատենագրութեան մէջ, սակայն անոր առջեւէն շատ անգամներ անցած են Մեծն Լեւոն եւ Հեթում Բ. իրենց բանակներով, Անտիոք երթալու համար: ԺԲ. դարու վերջերը շինուած ըլլալու է Պայասի բերդը. Լեւոն իր պայմանագրին մէջ, տրուած Պաշակիրներուն 1214ին, կը յիշէ զայն իբր որեւէ տեղ մը (Abaessa):

Պաշակիրներու պատմիչները, սակայն, կը յիշեն զայն (Baïesses) իբր բերդաւան, ըսելով թէ Պայաս ունէր երկու բերդ: Առաջինը կը կոչեն Աղջկամ բերդ (Castrum Puellarum) եւ երկրորդը Երիտասարդաց բերդ (Castrum Adolescentium): Սա վերջինս կը գտնուի Դրուսի Կիլիկիոյ կոչուած անցքին վրայ: Երրորդ բերդ մըն ալ, գոր պատմիչները չեն յիշեր, կը կոչուի Հովիւներու բերդ (Castrum Pastorum), զոր 1097ին Տանգրէտ կը գրաւէ Թուրքերու ձեռքէն, ուրիշ քանի մը բերդերու հետ¹:

Մաշտոցի մը Յիշատակարանին մէջ, գրուած Լեւոնի պարգեւագիրէն երկու տարի յետոյ, այն է 1216-1217ին, կը յիշուի Պայաս իբր գիւղ: Յիշատակագիրը կու տայ անոր մասին մանրամասնութիւններ, եւ կ'որոշէ անոր դիրքը եւ գաւառը. «Ս ծովեզերս Ուլկիանոսի, ի գաւառս որ ձկեր անուանի, ի գեղոս որ Պայաս կոչի, ընդ հովանեաւ ամէնօրհնեալ Մօր Լուսոյ Աստուածածնի»²: «Ս ծովեզերս Ուլկիանոսի» ըսելով կը հասկնայ Միջերկրական ծովը:

1. Սիսուան, էջ 414:

2. Հայագատում, Բ. էջ 457:



Պայաս բերդի
ներքին մէկ անցքը:

Payas: bedestin
couvert (Denöel).

ՊԱՏՄԱԿԱՆ

Պայասի բերդը այսօր մեծ մասով կանգուն է ծովեզերքին վրայ. թէեւ փոքրիկ՝ սակայն անառիկ է, հզոր պարիսպներով եւ բազմանկիւն աշտարակներով շրջապատուած, ծովուն վրայ գեղեցիկ տեսք ունի: Այսօր լքուած եւ կիսաւեր է: Կ'ըսուի թէ ԺՁ. դարուն զայն վերաշինած է Պանդատէ Սազալը Մէհմէտ փաշան:

Պայասի նաւահանգիստէն կէս հազարամետր հեռու կը գտնուի ուրիշ բերդ մը՝ որ հիմա Թուրքերը կը կոչեն Սալան Գալեսի (Salan Kalesi): Նախեան Պատրիարք անցեալ դարուն վերջերը կը գրէ. «Փայաս է Ատանայու ծովեզերեայ քաղաք մի, դէպ հարաւ, շէն, հարուստ եւ բերդաւոր. ունի եւ մզկիթս եւ պանդոկս վաճառականաց»³: ԺԸ. դարուն վերջերը Պայաս չէն եւ ծաղկեալ քաղաք մըն էր. հոն կային բաւական մեծ թիւով հայեր. սակայն 1800ական թուականներուն հոն հաստատուեցաւ Քիւչիւք Ալի կոչուած լեռներու բռնաւորը, որ կողոպուտով կը գրաւէր: Թուրք կառավարութիւնը շատ անգամներ գինուորական արշաւախումբեր ղրկած է անոր դէմ, եւ վերջապէս գրաւած քաղաքը: Քիւչիւք Ալի սակայն աւելի մեծ ուժով կու գայ Պայասի վրայ եւ կրկին կը գրաւէ քաղաքը. ու հոն կը մեռնի 1808ին:

Այսօր Պայաս ծովուն եզերքը փոքրիկ եւ աննշան գիւղ մըն է. ունի իր մէջ քանի մը պատմական յիշատակարաններ, ծովուն ափին իր աւերակ բերդը, գեղեցիկ մզկիթ մը, բաղնիք եւ գոց շուկայ: Ամէնէն աւելի հետաքրքրական է իր փոքրիկ բայց ամուր եւ անառիկ բերդը, որուն մնացորդներէն պարիսպներ եւ բարձր աշտարակներ տակաւին կանգուն կը մնան ծովուն ափին:

3. Սիսուան, էջ 415:

ԱՅԱՍ - ԵԳԻԱՍ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Փոքրիկ նաւահանգիստով, ծովեզերեայ աւան մըն էր Այաս, Աղեքսանդրեակի ծովածոցին արեւմտեան ափին վրայ. հին ատեն այս աւանը կը կոչուէր Եգեա կամ Եգեաս: Այս անունը մինչեւ վերջերս պահուած էր. այսօր սակայն թուրքերը այս անունը կու տան խեղճ գիւղակի մը, շինուած Այաս դղեակի աւերակներուն վրայ, ինչ որ կը կոչեն նաեւ Եոււուրթալըզ, որ է Ձոււանոց: Ատանայէն շուրջ 50 հազարամեղր, իսկ Ճիւհուէն 22 հազարամեղր հեռու է, աւազուտ ծովափին վրայ:

Այասի հիմնարկութեան թուականը եւ հիմնադիրին անունը անծանօթ է. գուցէ յոյն գաղութ մը եղած ըլլայ անոր հիմնադիրը, որովհետեւ անոր անունով յունարէն գիրերով դրամ ալ գտնուած է:


Այաս իբրեւ ծովային քաղաք, ծովախորշին վրայ ունէր իր փոքրիկ բայց գեղեցիկ նաւահանգիստը, լուսնածեւ գոգով, արաբերէն Միմա, իսկ հայերէն Մանեակ նաւահանգիստ կոչուած:

Այաս երկու բերդեր ունէր, ցամաքային ու ծովային: Յամաքային բերդը ծովափին բարձրացող քարաժայռին վրայ շինուած էր, ծովէն եւ ցամաքէն շրջապատուած հզօր պարիսպներով, որոնցմէ այսօր, հոս ու հոն ցրուած հետքեր եւ կտորներ կը տեսնուին: Ծովափին քարաժայռին վրայ Այաս քաղաքը ունէր իր դղեակը, բարձր դիրքով կը հսկէր ծովուն վրայ, շրջապատուած պարիսպներով եւ անառիկ աշտարակներով:

Յամաքէն մէկ հազարամեղր հեռու, ցամաքի փերդին դիմաց, կը գտնուէր փոքրիկ կղզեակ մը. ասիկա Այասի ծովային բերդն էր, շրջապատուած պարիսպներով եւ ամուր աշտարակներով: Ծովային բերդն ալ ունէր իր առանձին դղեակը, կղզեակին մէկ հրուանդանին վրայ: Այասի ծովային բերդը շատ նման էր Կոռիկոսի ծովային բերդին:

Յամաքային բերդը մարդոցմէ շինուած էր, իսկ ծովային բերդը՝ բնութենէն. պաշտպանուած ծովուն ալիքներէն, խոր վիհերէն եւ ջուրերէն դուրս ցցուած խարակներէն, որոնց վրայ մարդիկ արուեստով շինած էին Այասի ծովային դղեակը:


Ժամանակին Այասի ծովային բերդը, նեղ ամբարտակով մը կը միանար ցամաքին. սակայն դարերու ընթացքին մնացած է անխնամ ու լքուած, դառնալով կեր ծովու կատաղի ալիքներուն, որոնք զշեր տարեր են ամէն բան,



Այաս, բերդաւանը եւ նաւահանգիստը հիւսիսէն դիտուած (Հելլենկեմպեր):
Ayas (Lajazzo), la forteresse et le port vus du nord (Hellenkemper).



Այաս, բերդաւանը՝ հարաւէն դիտուած (Հելլենկեմպեր):
Ayas (Lajazzo), la forteresse et la ville vus du sud (Hellenkemper).



Այաս. բերդին արեւմտեան կողմը (Հելլենիստիկ):
Ayas (Lajazzo), côté occidental de la forteresse (Hellenkemper).


եւ այսօր անկէ հազիւ քանի մը կտորներ կը տեսնուին՝ շուրերէն դուրս ցըցուած:

Այասի այս երկու բերդերը, դէմ դիմաց, կը պաշտպանէին նաւահանգիստի մուտքը՝ Քչնամի նաւերուն դէմ եւ կ'արգելէին հոն խարխախ նետել:

Այասի ցամաքային բերդի եւ քաղաքի աւերակները բաւական ընդարձակ տարածութեան մը վրայ ցրուած են:

Այասի ծովային եւ ցամաքային դղեակները հին չեն, շինուած են Ռուբինեան հայ թագաւորներէն. պարիսպներուն եւ աշտարակներուն պատերուն մէջ ազուցուած եւ օգտագործուած են հինէն մնացած սիւներու եւ խոյակներու մնացորդներ:

Այասի բերդերու կարեւորութիւնը նկատի առնելով՝ Սուրթան Սուլէյման վանոնք նորոգած է, եւ ցամաքային բերդին շուրջն ալ խոր խրամներ փորել տուած է: Ծամաքային բերդը երկու շրջապարիսպներ ունէր, ներքին պարիսպները աւելի բարձր էին, եւ իրարու կապուած՝ մէջ ընդ մէջ, կտր աշտարակներով. իսկ արտաքին պարիսպները աւելի ցած էին, եւ մեծ մասով քանդուած եւ քարերը տարուած հեռու տեղեր ցրուած: Այս պարիսպներուն հիմերը միայն տեղ տեղ տակաւին կը տեսնուին: Դղեակին ստորոտը Լանկլուա տեսած է քաղմաթիւ հոս ու հոն ցրուած քարէ գնդակներ, որոնք հաւանաբար Քչնամիներուն դէմ գործածուած են պատերազմի ընթացքին:



Այասի բերդը ծովափին:
La forteresse d' Ayas au bord de la mer.

Ծովային բերդը, որ ցամաքային բերդին արեւելեան կողմը կը գտնուէր, ունէր բարձր աշտարակ մը, որուն մէջ կար կամարակապ սրահ մը, քառակուսի պատուհաններով. այս կամարակապ սրահը, գուտ հարկական շինութիւն կը համարի Լանկլուա:

Իսկ ցամաքային դղեակի արեւելեան կողին վրայ կար մեծղի աշտարակ մը, շինուած Սուրթան Սուլէյմանէն, քաղաքի փլատակներու քարերով, որուն վրայ արաբերէն արձանագրութիւն մը եւս կար:

Հ. Ղուկաս Ինճիճեան իր «Նոր Հայաստան» գրքին մէջ 1802ին կը գրէ Այասի մասին. «Այաս անկանի առ ծոցով Միջերկրական ծովուն՝ որ այժմ յանուն սորա անուանի. իսկ նախնումն կոչէր յանուն Իսսոս քաղաքին, եւ ի ժամանակս Ռուբինեանց կոչէր Մոց Հայոց, ունի աղէհանքս՝ ուստի սփոփ ի շրջակայ սահմանս: Բերդաքաղաք սորա է բրդանման ամբարձեալ առ ծովեզերք, միով օթեւանաւ հեռի է Թէլիհամտունէ, հանդէպ Կիպրոս կղզոյն, բազում երթեւեկութիւն վաճառականաց գոյ աստէն. գրեթէ սորա նորոգեալ ասեն Սուրթան Սիւլէյմանայ, յորում են պահնակ փորականք, այլ եւ իջեւան լինել ի նմայ»²:

1. Սիսուան, էջ 356-360:

2. Ինճիճեան Հ. Ղ., Նոր Հայաստան, Վենետիկ, 1906, էջ 367:

ՊԱՏՄԱԿԱՆ

Այս կամ Այուս, ինչպէս ըսինք, հին ատեն Եգեա կը կոչուէր, թէեւ անուանի քաղաք մը չէր, բայց ոչ ալ բոլորովին աննշան: Ք. Ա. 55 թուականին՝ երբ Կորնուլոն հռոմէացի զօրավարը դէպի Արեւելք եւ Հայաստան կ'երթար, որոշ ատեն մը մնացած է Եգեայի նաւահանգիստը:

Բ. դարու սկիզբը, ի պատիւ Ադրիանոս կայսեր, Եգեա քաղաքը կոչուած է Ադրիանա (Hadriana): Ասկէ առաջ սակայն՝ Եգեա Ազատ քաղաքի պատիւը ատեն է, ինչպէս կը պրէ Պլինիոս. «Oppidum Aegae liberum»:

Քրիստոնէութեան շրջանին Եգեա եպիսկոպոսական թեմ եղեր է՝ Երկրորդ մասին Կիլիկիոյ, եւ 303ին անոր առաջին եպիսկոպոսը եղած է Ս. Ջենորիոս, որ հոն ալ նահատակուած է: Հոս նահատակուած են նաեւ Անարծաթ քօիչիք Կողմաս եւ Դամիանոս եղբայրները եւ ուրիշ բազմաթիւ նահատակներ, ինչ որ նշան է թէ այս քաղաքին մէջ հոծ քրիստոնէութիւն մը կ'ապրէր եւ քաղաքը փայլուն վիճակ մը ունէր:


Այսա եօթը դարերու լուսթեանէ մը վերջ՝ յանկարծ կը յայտնուի լուսաւոր պայծառութեամբ, Ռուբինեանց իշխանութեան օրերուն, ամբողջ դար մը բարդաւաճ շքեղ կեանքի շրջան մը կը բոլորէ, վաճառականութեամբ եւ առուտուրով: Փրապէս Այաս կ'ըլլայ Ռուբինեանց երկրին սիրտը, ինչպէս Սիսը՝ գլուխն էր. սակայն Այաս կը գերազանցէ պայծառութեամբ՝ իր գլուխը, հոչակաւոր կ'ըլլայ եւ առաջնութիւնը կը շահի՝ մանաւանդ ԺԳ. դարու կէսին, 1268ին, երբ կը ջնջուի Անտիօքի իշխանութիւնը:

ԺԳ. դարուն Այաս կ'ըլլայ փոքր Ասիոյ ամէնէն բանուկ վաճառականական նաւահանգիստը, աշխարհի ամէն կողմերէն հոն կը հասնին նաւեր, եւ բեռնարարձ ետ կը վերադառնան: Ռուբինեանց իշխանութեան հոն հաստատուելուն՝ Այասի նաւահանգիստը սկսան գալ նաեւ արեւմտեան շատ մը երկիրներէ նաւեր, այսպէս Այասը եղաւ Արեւմուտքի ամէնէն ծանօթ նաւահանգիստը:

Ի՞նչ էին այս քաղաքին առաւելութիւնները. առաջին՝ անոր դիրքը, դէպի Ասիա դացող ճամբուն սկիզբն էր, երկրորդ՝ անոր նաւահանգիստը հովերուն դէմ քնական պաշտպանութիւն ունէր, երրորդ՝ Կիլիկիոյ քանի մը մեծ քաղաքներուն՝ Ատանայի, Տարսոնի, Մսիսի, Սիսի, Անարգաբայի եւ ամբողջ Վեոնային Կիլիկիոյ դէպի ծով՝ դուռն էր. ուրիշ յարմար նաւահանգիստներ գոյութիւն չունէին այն ժամանակները:

Ո՞ր հանճարեղ մարդը եղաւ որ առաջին անգամ նկատի առաւ այս ծովային քաղաքին վարեւոր դիրքը եւ գայն օժտեց նաւակայքով, ամբացուց ամբարտակներով, շինեց անոր փին ծովային եւ ցամաքային բերդերը, քաղաքին մէջ հաստատեց բազմաթիւ մթերանոցներ, մաքսատուններ, ինչ որ կարեւոր էր պետութեան մը համար, նաւակայան ըլլալու եւ ընդունելու իր նաւահանգիստին մէջ բազմաթիւ նաւեր:

Մինչեւ այսօրս տակաւին մեր պատմութիւնը այս հեռատես, կորովի եւ հանճարեղ մարդը մատնանիշ ըրած չէ, որպէսզի անոր արձանը կանգնենք այդ ծովափին վրայ եւ արձանագրենք անոր անունը կոթողի մը վրայ: Այլ-



Այասի ծովային բերդը: La forteresse maritime d'Ayas.


շան իր յատուկ հեռատեսութեամբ եւ պատմական հմտութեամբ կը համարի թէ Լեոն Ա. էն վերջ այդ մեծ մարդը եղած ըլլայ Կոստանդին Պայլ Թագաւորահայրը, որ պայծառացուց Կիլիկեան թագաւորութիւնը:

Ստուգիւ Այաս իբր վաճառականական քաղաք կը յայտնուի Հեթում Ա. ի օրով. ան իր պարզեւազրին մէջ, տրուած Վենետիկցիներուն 1261ին, կը յիշէ Այասը, եւ անոնց թոյլ կու տայ որ ազատ մտնեն եւ ելլեն անոր նաւահանգիստը, հիմնելով վաճառականական տուններ: Հեթում Ա. որ 1245ին արտօնագիր մը տուած էր Վենետիկցիներուն՝ Մսիսի մէջ վաճառատուն հիմներու, ցոյց կու տայ թէ Այաս դեռ այդ թուականին յարմար նաւահանգիստ չէր: Կիլիկեան մեր պատմիչները կը յիշեն Սիս, Տարսոն, Ատանա, Անարգաբայ, բայց ոչ Այասը, նշան՝ թէ ան ճամբէ դուրս, աննշան աւան մըն էր՝ մինչեւ 1260 թուականը:

Եւ ստուգիւ 80-90 տարուան ընթացքին այնքան մեծցաւ, համբաւ ստացաւ եւ հարստացաւ Այաս քաղաքը, որ օտար աշխարհակալներու նախանձր շարժեց, մանաւանդ Եգիպտացիներուն, որոնք չկարենալով անոր վաճառականական փառքին եւ փայլին հասնիլ, ուղեցին գայն նսեմացնել, պատերազմի ելլելով անոր դէմ:


Մարքոյ Փոլոյ, վենետիկցի ճանապարհորդը, որուն հայրը եւ հօրեղբայրը 1269ին հեռաւոր Արեւելքէն կու գային, կանգ առին իրենց նաւերով

Այսօր նաև հանդիսանում է Նոյն ինքն Մարթոյ Փոլոյ, 1271ին իր առաջին ճանապարհորդութիւնը սկսաւ Այասէն, դէպի Թաթարիստան, Հնդկաստան եւ Չինաստան. ճամբու ընթացքին հայկական նաւերով ան դնաց Պողոմայիս. այնպէս որ իր գրքին մէջ կ'ըսէ թէ «ով որ կ'ուզէ հեռաւոր Ասիա ճամբորդել՝ պէտք է սկսի իր ճամբորդութիւնը Այասէն»: Իր գրքին մէջ կը գրէ. «Sopra il mare è una città detta Giazza, terra di gran traffico. Al suo porto vengono molti mercanti da Venezia, da Genova, et da molti altri regioni con molte mercantie di diverse speciarie, panni di seta et di lana, et di altre pretiose ricchezze, et anche quelli che vogliono intrare più dentro nelle terre di Levante, vanno primieramente al detto porto della Giazza»³.



Այաս քաղաքը եւ իր պարիսպները ծովու մոտ:
 Ville d'AYAS et ses murails au bord de la mer (Sissouan).


3. Սիսուան, էջ 356-360:



Այասի եին պարիսպներէն մաս մը:
 Une partie des vieux murs d'AYAS.

Ներսէս Պալիենց կը պատմէ մեզի Այաս քերդի առումը Եգիպտացիներէն, կ'ըսէ. «Յաման Տեառն 1321, անօրէն քոնաւորն Թաթարաց Դամուրտաշն՝ որ էր պարոն Հոռոմոց երկրին», սա Թաթարներու տէրութեան կողմէն Փոքր Ասիոյ կուսակալ դրուած էր: Օչին բարեպաշտ թագաւոր մեռնելով «եթող զորդին իւր Լեւոն տղայ ամաց, եւ զի իշխանքն կառավարէին զթագաւորութիւնն՝ մինչ տղայն ի հասակ գայցէր»:

Լեւոն Դ.ի թագաւորութեան սկիզբներն էր որ Դամուրտաշ 30.000 հեծեալ եւ հետեւակ բանակով «բազում հեծելօք... յակամայ եւ քոնութեամբ ի յաշխարհն Հայոց ի Կիլիկիա մտաւ», ամէն կողմ կը քանդէ, «եւ բազում աւեր արար, սպանութիւն եւ աւար»: Հոս չէր վերջանար Դամուրտաշի նպատակը, ան եկած էր տիրելու Կիլիկիոյ քոնութեամբ, «եւ բազում ջան եղ եթէ ամրոց ինչ կարիցէր առնուլ, բայց ոչ կարաց»: ան կ'ուզէր ոտքի կայան մը ունենալ եւ հաստատուիլ Կիլիկիոյ գեղեցիկ լեռներուն վրայ: Հայրկական քանակը Լեւոն Դ.ի իշխաններու առաջնորդութեամբ, դէմ կեցան Դամուրտաշի բանակներուն, բռնեցին Տաւրոսի լեռներու կիրճերը եւ չթողուցին որ անոնք յառաջանան երկրին ներսերը, «այլ եւ ի նոյն Հայերոյն՝ Թաթարնին՝ բազում պակասութիւն եւ կորուստ յոմանս անցս եւ ի կիրճս ընկալան»:



Յատակագիծ Այաս

Այասի նաւահանգիստիմ յատակագիծը եւ ձեռնակացիներու բերդը:
Plan du port d' Ayas et de la forteresse génoise (Denoël).


Դամուրտաչ տեսնելով որ մեծ կորուստներու կ'ենթարկուի եւ պիտի չկարենայ բռնութեամբ եւ ուժով Հայերը ծոնկի բերել, կը փոխէ իր վարուելակերպը, սուտ բարեկամութիւն եւ կեղծիք կը ձեւացնէ, ըսելով թէ «եթէ սիրելարար եւ ի տեսութիւն եմ եկեալ, եւ վասն այն զի երկնչէին Հայերն յայտնի վնասել թաթարին, թէ չիք՝ զամենայն կոտորեալ էին եւ սպառել»:

Հայերը միամտաբար կը խարուին եւ թոյլ կու տան որ թաթարներու քանակները մտնեն Կիլիկիա, եւ որովհետեւ ձմեռ էր՝ անոնք կ'իջնեն լեռներէն եւ կը հաստատուին գաշտային Կիլիկիոյ տաք շրջաններուն մէջ:

Ձմեռը հազիւ անցած, Դամուրտաչ 40.000 «հեծեալս եւ այլ անչափ հետեւակս եկին ի նոյն երկիրն Հայոց, եւ եկեալ ի քաղաքն Եգէրոյ, որ է Այաս, յերկրորդ օրն յօր սօնի Սրբոյն Գէորգայ, 23 ապրիլէլի, առին զՄինային բերդն, զի ծովն ցամաքեցաւ եւ ի ներս գնաց. եւ տաճկնին ի ծովէն եկին եւ կտրեցին զճանապարհն որ ի ներսի բերդն, եւ ի ծովն չկարէր ոք գնալ»:

Այասի ծովային բերդը ինկած էր թաթարներու ձեռքը, ցամաքէն ոչ ոք կրնար ծովու ճամբով փախչիլ. ուստի անոնք անմիջապէս յարձակման կ'անցնին ներքին բերդին դէմ, «եւ ապա նստան սղարելով ի վերայ ներսի բերդին»: Կ'երեւի պատմիչին ըսածներէն, որ ներսի բերդը աւելի լաւ պաշտպանուած եւ անառիկ էր, ամուր պարիսպներով, ուստի սովորական միջոցներով չէին կրնար անոր տիրել, «եղին բարան եւ զամենայն ի փուլ ածին, եւ զամենայն դրունան... քաղաքին բերեալ՝ կարմունճ կապեցին ընդ ծովն ի ներս՝ մինչ եկին մօտ պարսպի բերդին, եւ նետախորով առնէին զմարդիկն՝ որ փայլէին ի դրանն կողմն դղեկին, որով յամենայն կողմանց սաստկացաւ մարտն»:

Ներքին բերդին մէջ ապաստանած զինուորականներն ու ժողովուրդը կեանքի եւ մահու պայքար կը մղեն թշնամիին դէմ, ու չեն թողուր որ թըշնամին բերդ բարձրանայ: Կոխը կ'երկարի, երկու կողմէն հազարաւորներ կ'իյնան եւ պաշարուածները նեղ կացութեան մը առջեւ կը գտնուին, կը սկսի պակսիլ սնունդը. այն ատեն անոնք մարդիկ կը զրկեն գիշերանց զաղտնի ճամբաներով, դէպի Կիպրոս, եւ Կիպրոսի թագաւորէն օգնութիւն կը խնդրեն: Կիպրոսի թագաւորը անմիջապէս ինը զինուորական նաւեր կը դրկէ քրիստոնեաներու օգնութեան. սակայն այս նաւերը «կորստեան եղեն պատճառ քան թէ փրկութեան». Կիպրոսի թագաւորին նաւերը ծովուն քացերը կեցած՝ անմիջապէս չէին կրնար քաղաքին մէջ պաշարուածներուն օգնել, չէին կրնար մօտենալ պարիսպներուն, որովհետեւ անոնց վրայէն թշնամին կրնար զիրենք հարուածել: Բերդին մէջ սովը կը սաստկանար, եւ ներսը պաշարուածները գիշերանց զաղտնի ճամբաներով, մակոյկներու միջոցով կը փախչէին քաղաքէն եւ նաւ կ'ապաստանէին, «բանդի ամենայն ոք որ փախչէին ի բերդէն՝ ընդունէին եւ առնուին, եւ զամենայն ինչս եւս»: Այսպէս օրէ օր քաղաքի բնակիչները փախչելով նաւ կ'ապաստանէին, քաղաքի պաշտպանութիւնը կը տկարանար, եւ ինչպէս պատմիչը լաւ կ'ըսէ, «որ լինէր իսկ զի ոչ ոք մնաց ի բերդն ի քաղաքացեաց, այլ իւրեանց ընչիւքն վնացին ի ձալէքն»: Այսս իր փառքի վերջին օրերը կ'ապրէր, քաղաքը պարպուեր էր, կը մնային քանի մը զինուորականներ, որոնք յուսահատ, Մերջին գիշերը, «հուր արկին ի



Յառաջագիծ Այասի եւ իր երկու բերդերուն - Plan d' Ayas et de ses deux forteresses (Sissouan).

բերդն, եւ թողեալ ի բաց գնացին ընդ ծովն: Այսպէս կորեաւ Այաս երկրքին բերդովն իւր գերեալ ի տաճկացն»:

Թաթարները կողոպտելով եւ քարուքանդ ընելէ վերջ Այաս իր շրջանով, ժամանակ մը վերջ կը թողուն եւ կը հեռանան: Հայերը՝ որոնք հոս ու հոն ցրուած էին եւ կիպրոս ապաստանած, կը վերադառնան իրենց տուները: Այստեղ աղէտի լուրը կը հասնի հեռուները. «զայս աղէտ կսկծանաց իբրեւ լսէր պապն ճօհաննէս (ԻԲ) առաքեաց 30.000 Փրօռինս ոսկոյ, զի դարձեալ շինեցեն զբերդն Այասոյ»: Հայերը այս փոքրիկ օգնութիւնը ստանալով Պապէն, «եւ բազում յոյժ յաւելին ի վերայ եւ շինեցին զբերդսն զաճոսիկ՝ առաւել յոյժ ամրագոյն եւ քարճրագոյն» եւ հոն կ'ապրին տակաւին 16 տարիներ եւս: Սակայն Բենետիկոսոս ԺԲ. պապի շրջանին, Տաճիկները դարձեալ կու գան Այասի վրայ. Հայերը տեսնելով որ պիտի չկարենան երկար դիմադրել, Եւրոպայէն ալ որեւէ յոյս չկար օգնութեան, «երկուցեալ Հայերուն կամաւ ետուն զԱյաս եւ զայլ ամենախ բերդս». եւ կը քաշուին Ջիհուն գետէն անդին⁴:

4. Անդ: ՏՎ՝՝ ՆԵՐՍԷՍ ՊԱՆՆԵՑ, Հայագատում, Գ. էջ 130-132:

ՄՍԻՍ - ՄԱՄԵՍՏԻԱ - ՄՈՊՍՈՒԵՍՏԻԱ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Դաշտային Կիլիկիոյ երեք գլխաւոր քաղաքներէն մէկն էր Մսիս կամ Մամեստիա, որ կը գտնուի Ճիհուն գետի արեւմտեան ափին վրայ. իր հիւսիսը ունի Անարզարայի գաւառը, իսկ արեւմուտքէն՝ Ատանայի գաւառը: Ճիհուն եւ Սիհուն գետերուն միջեւ ընդարձակ դաշտազետին մը կը տարածուի եւ կը հասնի մինչեւ Այասի ծովափը:


Հիւսիսէն եւ արեւելքէն լեռներ զինք կը շրջապատեն եւ կ'երթան մինչեւ Աղեքսանդրեակի ծոցը. այս լեռները կը կոչուին՝ Մսիսի լեռներ կամ Ճէպէլ Մսիս:

Հ. Ղ. Ինճիճեան կը նկարագրէ Մսիսը՝ ինչպէս որ էր 1800ական թուականներուն, գրելով թէ Մսիս հին ատեն Մամեստիա եւ Մօպսուեստիա կը կոչուէր, փոքր քաղաք մըն էր, պարսպապատ, ունէր նաեւ քարճր դիրքի մը վրայ իր փոքրիկ բայց ամուր բերդը: Ատանայէն 18 հազարամեր հեռու էր, Ճիհուն գետը քաղաքը երկու մասի կը բաժնէր, որուն մէկ մասը Մսիսի կը կոչուէր, իսկ միւս մասը՝ Քէփէրպիմա: Գետին վրայ քարաշէն կամուրջ մը կար, որուն մուտքին վաճառականներէն շինուած իջեւանատուն մը կար, շինուած հիւսիսէն 949ին, մեր թուականով 1542ին. անոնք որ կամուրջէն պիտի անցնէին՝ պէտք էին որոշեալ տուրք մը վճարել: Մսիսի դաշտազետինը հարուստ բերք ունէր, հոն կ'աճէին ամէն տեսակի արմատիքներ եւ պլուտոններ, ինչպէս կը վկայէ Քէաթիպ Չէքէպի:

Մսիս քաղաքին մօտ լեռ մը կայ որ Ճէպէլ-մուր կը կոչուի, որ կը թարգմանուի Լեռան լուսոյ կամ Լոյսի լեռ. այս լեռան վրայ Ղիւմպիլ կոչուած ծաղիկ մը կը բուսնի՝ որ շատ օգտակար է¹:

ՊԱՏՄԱԿԱՆ

Մսիս Կիլիկիոյ հնագոյն քաղաքներէն մէկն է, ունի պատմական բազմաթիւ յիշատակներ: Ք. Ա. 94 թուականին հոն եկած է Սելեւկիոս՝ Եւսեբիա Կիլիկեցիէն յաղթուելէն վերջ: Ան տիրելով Մսիսի, ծանր հարկեր դնե-



Մսիս կամ Մամեստիա քաղաքը:
La ville de Mesis - Mamestia (Sissouan).

լով ժողովուրդին վրայ, եղաւ բռնաւոր մը, նեղեց եւ չարչարեց ժողովուրդը, որոնք չհանդուրժելով անոր բռնակալութեան, համբրութիւններն հատաւ եւ օր մըն ալ յեղափոխութիւն հանեցին եւ կրակ տուին անոր պալատին, եւ զինքն ալ այրեցին անոր հետ:

Քրիստոնէութեան առաջին դարերուն, Մսիս քրիստոնէութեան կեդրոն եղաւ եւ եպիսկոպոսական աթոռ, որ յետոյ եղաւ ինքնապաշտօն մետրոպոլիտական աթոռ: Այս շրջանիս է որ Մսիսի առաջին եպիսկոպոսներէն մէկն եղաւ Ս. Աքսենտ, որ 316ին հոն նահատակուեցաւ:

Մսիս նշանաւոր եղած է Ե. դարուն իբրեւ իմաստասիրութեան կեդրոն եւ նաեւ սխալ ու մոլար վարդապետութեան բոց. այս սխալ վարդապետութիւններու առաջնորդը եղաւ Թէոդորոս եպիսկոպոս Մոպսուեստացի, որուն աշակերտած է Նեստոր, սա իր վարդապետը աւելի մեծ սխալի մէջ ձգեց, եւ երեւան բերաւ նեստորական աղանդը: Մեր առաջին թարգմանիչները մտերիմ յարաբերութեան մէջ էին Թէոդորոսի հետ, երբ դեռ անոր գէշ աղանդը մէջտեղ ելած չէր. անոնք թղթակցութեան մէջ էին անոր հետ:

Եօթներորդ դարուն Մսիս Կիլիկիոյ ուրիշ քաղաքներու նման՝ Բիւզանդացիներուն եւ Արաբներուն միջեւ կռուանքներ կ'ըլլայ, մինչեւ որ Արաբները վերջնականապէս կը տիրեն անոր, ինչպէս կը գրէ Մամուէլ Անեցի. 692ին «Շինեաց Մայիմն զՄամեստիա, որ է Մսիս, բարձր պարսպօք»²: Անոր

1. Ինճիճեան Հ. Ղ., Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 360:

2. ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, Ժամանակագրութիւնք, Վաղարշապատ, 1893, էջ 84:

կառավարիչ եւ կուսակալ կ'ըլլայ Ագղլուահիմ: Մսիս մինչեւ Ժ. դարուն կէսերը Արարներուն ձեռքը կը մնայ, մինչեւ որ 962-965ի ժամանակները, Նիկոփոր վայսրը Կիլիկիա կու գայ եւ յաղթելով Արարներուն՝ Մսիսը կը գրաւէ. այս մասին կը գրէ Սմբատ Սպարապետ. «Սորա ժողով արարեալ եկն յաշխարհն Կիլիկեցոց, ի վերայ զօրացն Տաճկաց, եւ էառ զմայրաքաղաքն Տարսոն, զԱտանա եւ զՄսիս եւ զԱնաւարզա, եւ կոտորեալ զզօրսն մինչեւ ի դուռն մեծին Անտիոքու»³:

Ռուբրիկաններու Կիլիկիոյ տիրապետութեան առաջին շրջանին, Մսիսի կառավարիչ գրուած էր Բիւզանդացի կայսրներէն՝ Ապղլարիբ քաջ իշխանը, Նաչիկ Արծրունիի որդին, ինչպէս կը գրէ Սամուէլ Սկեւոացի. «Այր ոմն յիշխանացն Հայոց Ապղիսարիբ անուն՝ որ էր ի տանէն Վասպուրականի, իբրեւ զմտերիմ եւ զխոհեմ եւ զարի ի գործ պատերազմի, առաքեցաւ յինքնակալէն Ալեքսէ (1081-1118) ի գաւառս Կիլիկեցոց՝ իշխել մայրաքաղաքին Տարսոնի եւ Մամեստիոյ. որ եւ եկեալ տիրէր սոցա հայրենի կարգօք եւ մընայր ի հաւատարմութիւն Յունաց»⁴:

Երբ Նաչակիւրները Կիլիկիա մտան, լատին բանակին առաջնորդը՝ Տանգրէտ, գրաւեց Մսիսը. սակայն Պաղտին պահասամիտ իշխանը, ինչպէս գրուած էր Տարսոնը՝ ուղեց գրաւել նաեւ Մսիսը: Երկու լատին իշխանները մեծ բանակներով իրարու զարնուեցան, շատ կորուստներ տուին իրարու, շատեր մեռան, եւ մեծ վնաս ալ հասցուցին տեղացի ժողովուրդին. երկու ոխերիմ թշնամիները հուսկ՝ հաշտուեցան իրարու հետ, եւ Մսիսը մնաց Պաղտինի, որ զայն Անտիոքի կոմսութեան միացուց: Այս շրջանին, խաչակիր պատմիչներու համաձայն, Մսիս Կիլիկիոյ ամէնէն գեղեցիկ քաղաքն էր, բազմամարդութեամբ, բարգաւաճումով եւ ամրութեամբ⁵:

1106ին Տանգրէտ դարձեալ գրաւեց Մսիսը՝ երբ քաղաքապետ էր Ասպետ անունով հայ մը, որուն համար կ'ըսեն թէ անուանի էր իր քաջութեամբ եւ կորովով. սակայն սա եւս իր ճոխութեան մէջ, ինքզինքը շուայտութեան տուած եւ տկարացուցած էր իր իշխանութիւնը, որուն վրայ գալով Տանգրէտ 10.000 հայ եւ Փռանկ բանակով, ցամաքէն ու ծովէն՝ պաշարեց քաղաքը եւ գրաւեց: 1114ին սաստիկ երկրաշարժ մը սակայն քարուքանդ ըրաւ Կիլիկիոյ շատ մը քաղաքները, որոնց վարդին նաեւ Մսիսը, ինչպէս կը գրէ Սմբատ Սպարապետ. «Եւ բազում քաղաքք կործանեցաւ թրիստոնէից, փյաւ Անտիոք, Մսիս, Հարսնմսուր... եւ Մարաշ հիմն ի վեր շրջեցաւ...»⁶:


Պեմունդ՝ Անտիոքի իշխանը՝ 1136ին կը գրաւէ Մսիսը, գերի բռնելով Լեւոն եւ պատանդ առնելով անոր որդիները՝ զայն ազատ կ'արձակէ:

Ռուբրիկաններու զօրանալով, Մսիսը վէճի եւ կռիւի առիթ կ'ըլլայ Հայոց եւ Անտիոքի իշխաններուն միջեւ: Թորոս Բ. երբ Կիլիկիոյ մեծ մասը կը



Կոռիկոսի ծովային բերդը:
La forteresse maritime de Korikos (CEDCAM).

3. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 2:
4. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Հայապատում, Հտ. Բ., 1901, էջ 402:
5. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Անդ, էջ 130:
6. Անդ, էջ 143:



Մսիսի կամուրջը
Le pont de Msis (Sissouan).

դրաւէ, առաջին գրաւումներէն մէկն էր Մսիսը, ինչպէս վը գրէ Սամուէլ Սկեւոացի. «Իսկ յետ ամաց ինչ անցելոց զօրանայր արեան հարազատ սոցա Ռուբէն (Բ., որդի Ստեփանէի), եւ յինքն նուաճէր՝ յետ մահուանն Մանուէլի արքայի զՄամեստիա եւ զՏարսոն»⁷: Հոն Ռուբէն (Բ.) գերի կը բռնէ նաեւ քաղաքին դուքսը՝ Թոմաս. «Ի սոյն ամի (1151) Թորոս (Բ.), որդին Լեւոնի (Իշխանին), էառ ի Հօռմէն զՄսիս եւ զԹիւն, եւ կալաւ զտուկն Թոմաս. եւ զդուքսն Անդրոնիկէ՝ որ ունէր զպահպանութիւն Կիլիկեցոց աշխարհիս, հրամանաւ Քաղաւորին Յունաց, եկն ԺԲԹ (12.000) հեծլով ի վերայ Թորոսի ի քաղաքն Մսիս, եւ նախատանօք աղաղակէր առ Թորոս՝ թէ ահա վապանքն երկաթի հօրն քո, սովաւ տարցուք զքեզ ծառայ ի Կոստանդնուպոլիս, որպէս հայրն քո: Եւ լուեալ զայս քաջն Թորոս՝ ոչ կարաց տանել նախատանացն, այլ յուսացեալ յԱստուած՝ ժողովեաց զգօրս իւր եւ պատանեաց զպարիսպն Մսսայ ի գիշերի եւ յարձակեալ առիւծարար ի վերայ նոցա եւ ի սուր սուսերի մաշէր զնոսա: Ընդ որս եւ ի մեծ մարտին մեռաւ առաջի դրան քաղաքին տէրն Պապեոսնին՝ Սմբատ: Եւ կալան զտէրն Լամբրունին՝

7. Հայապատում, Հա. Բ., էջ 410:

զՕչինն, եւ զտէրն Բարձրբերդոյ՝ զՎաթիւն, եւ զտէրն Պոականու՝ զՏիգրանն, որք էին սոքա ի կողմն Յունաց թագաւորին, եւ զթուլամորթ Յոյնն կալեալ մերկացուցանէին եւ արձակէին. եւ տիրեաց Թորոս Մսսայ անհոգութեամբ, եւ ամենայն դաւառացն զոր ունէր»⁸: Այս զէպքը աւելի մանրամասն եւ ազգաշունչ ոգիով կը պատմէ նաեւ Մ. Ուռնայեցի, ուր կը տեսնուի Ռուբինեանց հերոսական ոգին եւ այն զժուարթիւնները՝ որով կըրցան յաղթահարել եւ տիրանալ Կիլիկիոյ՝:

Թորոս Բ. իր հօրը վրէժը առած էր Յոյներէն, եւ վերջնականապէս քշած էր զանոնք Մսիսի սահմաններէն անդին: Օչին՝ Լամբրոնի տէրը՝ իր անձին գինը վճարելով կ'ազատի՝ իր Հեթում որդին պատանդ տալով Թորոսի. «Հեթում եկաց առ Թորոս, եւ յոյժ սիրեաց զնա Թորոս, զի էր տեսակաւ գեղեցիկ եւ զգօն եւ հանդարտ»⁹: Թորոս սիրելով Հեթումը՝ անոր կու տայ իր աղջիկը կնութեան, եւ ասով Ռուբինեաները բարեկամ վը դառնան Հեթումեաններուն:

Թորոս Բ. էն վերջ Մսիսի կը տիրէ իր եղբայրը Միւհ, որ պահուրտելով քաղաքին մօտակայ կիրճերուն մէջ, բռնեց եւ կողոպտեց Ստեփանոս կոմսը՝ որ Երուսաղէմի թագաւորին կողմէ գեապան կ'երթար Մանուէլ վայսեր:

Լեւոն Ա. (1188) իր իշխանութեան առաջին օրերուն, Մսիսը տուաւ Հեթումի՝ Սասունցի Չորտուանելի որդիին, փեսայացնելով զայն իր եղբոր Ռուբին Բ. ի աղջկան՝ Ալիծի հետ, ինչպէս որ անոր եղբոր Շահնշահին տուած էր Սելեւկիան: Այս մասին կը գրէ Սմբատ Սպարապետ. «Ձայսու ժամանակաւ (1188) որդիքն Չորտուանելի Սասնցոյ, որդիք քուեր տէր Գրիգորոյ Կաթողիկոսին Հայոց առ Լեւոն կային, արք բարետեսիլք, որոյ երիցագունին Հեթմոյ՝ ետ Լեւոն զաւազ դուստր եղբոր իւրոյ Ռուբինի՝ զանուանեալն Ալիծ, եւ ետ նոցա զքաղաքն Մսիս, եւ Շահնշահին զՍելեւկիա»¹⁰:

Մսիս իր ամէնէն փայլուն շրջանը կ'անցընէ Հեթում Ա. ի թագաւորութեան շրջանին. հոն էր որ իր անդրանիկ որդին Լեւոն Գ.՝ մեծ հանդէսով ստացաւ ձիաւոր ըլլալու պատիւը: Այս հանդէսին շատ շատերէ զատ՝ ներկայ էին նաեւ իր երկու փեսաները, Անտիոքի Պեմունդ բրինձը եւ Սիդոնի տէր Ճուլիան, իրենց կիներով եւ աղջիկներով (Սիպիլ եւ Փիմի), եւ իր քոյրը Մարիամ՝ Յուպէի կոմսուհին: Այս մասին կը գրէ Սմբատ Սպարապետ. «Ի սոյն ամի (1236) կամեցաւ թագաւորն Հեթում (Ա.) ձիաւորեցուցնել զանդրանիկ որդին իւր Լեւոն: Եւ եկն ի մայրաքաղաքն Մսիս եւ առաքեաց յԱնտիոք եւ կոչեաց զփեսայն իւր զՊեմունտ բրինձն Անտիոքայ, եւ կոմսն Տրապոյսոյ՝ զալ առ ինքն հանդերձ կենակցաւն իւրով: Եւ նոյն օրինակաւ յղեաց եւ առ Ճուլիան տէրն Սայիտոյ զալ հանդերձ կենակցաւն իւրով. նա եւ ըզդունիթէս ճաֆուն»¹²:

8. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, ԱՅԳ, էջ 170:
 9. ՀՄՄ. ՄԱՏԹԷՈՍ ՌԻՒՆԱՅԵՏԻ, Պատմութիւն, Երուսաղէմ, 1800, էջ 507-508:
 10. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, ԱՅԳ, էջ 171:
 11. ԱՅԳ, էջ 201:
 12. ԱՅԳ, էջ 231:

Որքան որ Հեթում Ա. մեծ ուրախութիւններ ունեցաւ Մսիսի մէջ, իր որդւոյն ձիաւոր ընելով, այնքան ալ տխուր օրեր ունեցաւ 1266ին, լսելով Լեւոնի գերութիւնը եւ անոր եղբոր Թորոսի մահը՝ Մառի պատերազմին մէջ, ինչպէս որ կը գրէ պատմիչը. «Եւ որդիք թագաւորին, պարոնն Հայոց Լեւոն եւ եղբայրն իւր Թորոս, դարձան ի գօրաց եւ գնացին ընդդէմ անօրինացն պատերազմել ընդ նոսա, որ եւ զԹորոս սպանին ի նոյն մարտ պատերազմի, եւ զպարոնն Հայոց զԼեւոն ընդ ձեռամբ ածեալ կալան...»¹³:

Այս պատերազմէն վերջ Եգիպտացիները կը գրաւեն Մսիսը: Այս մասին կը վարդանք.

«Այրեաց ըզՄիս եւ ըզՄսիս,
 Եւ գինչ որ չէն կայր ի միջի»¹⁴:


Սակայն ինչ որ կ'երեւի՝ քաղաքը բոլորովին չքանդուեցաւ, ասպէս որ 1267ին հոն դարձեալ Մկրտուածեան եւ ջրօրհնէքի հանդէսը կը կատարուի, եւ այս շրջանին Մսիս այնքան նշանաւոր կ'ըլլայ՝ որ պատմիչները Ատանան եւ Մսիսը Դաշտային Կիլիկիոյ մայրաքաղաքը կը կոչեն՝ «ի մայրաքաղաքն Մսիս»¹⁵: Այս առթիւ կը յիշուի նաեւ Մսիսի Ս. Սարգիս եկեղեցին, ուր կատարուեցաւ կաթողիկոսական օծումը:

Մսիս ժամանակ մը եւս շարունակեց լաւ օրեր անցընել, որովհետեւ քաղաքը ծովուն մօտ ըլլալով՝ վաճառականութեան կեդրոն դարձած էր, մանաւանդ որ Ճիհուն գետին հունը խոր ըլլալով, նաեւրը մինչեւ Մսիս մեծ դիւրութեամբ կրնային հասնիլ՝ եւ հոն թափել իրենց ապրանքները. ասոր համար ալ վենետիկեցի եւ ճենովացի վաճառականներ Լեւոն մեծագործէն մեծ նաչորհ ստացած էին Մսիսի մէջ վաճառականական տուներ բանալու: Այսպէս ահա քաղաքը բարգաւաճած եւ շէնցած էր 1211-1212ին, երբ Վիլլիպրանտ ուղեգիրը կը նկարագրէ թէ քաղաքը շատ բազմամարդ էր, ամուր պարիսպներով շրջապատուած, բազմաթիւ աշտարակներով զօրացուած, ինչ որ նշան է թէ 1114ի երկրաշարժէն վերջ դարձեալ վերաշինուած էր Մսիս:

Իբրեւ նշանաւոր շինութիւն՝ կը յիշուի Մսիսի կամուրջը, զոր շինած էր Մեծն Կոստանդիանոսի որդին Կոստանդ կայսրը, վերանորոգուած Յուստինիանոս կայսրէ, այնքան ամուր հիմքով, որ մինչեւ այսօր, կ'ըսեն ուղեգիրները, տակաւին կանգուն կը մնայ:

Մսիս իր ամուր պարիսպներուն ջնորհիւ կըրցաւ երկար ժամանակ որէմ գնել Եգիպտացիներու յարձակումներուն, որոնցմէ մեծագոյնը եղաւ 1322ին. Հայերը հերոսաբար դիմադրեցին եւ շատ մը իշխաններ ինկան անոր պարիսպներուն տակ, ինչպէս Հեթում Ջիլանոցի տէրը եւ իշխանը:

13. ԱՅԳ, էջ 247:
 14. Սիսուած, էջ 249:
 15. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, ԱՅԳ, էջ 231:



Մամեստիայ քաղաքի յառակագիծը:
Plan de la ville de Mamestia (Sissouan).

Շահսուար ամիրան, երբ 1467ին Կիլիկիոյ վրայ արշաւեց՝ չի յիշեր իր գրաւած քաղաքներու կարգին Մսիսը. ինչ որ կ'երեւի 1432էն վերջ՝ լքուած գտեր է Պետրանդ Փոանկը¹⁶:

Մսիսի մասին Լանկլուա կը գրէ իր Կիլիկեան տեղագրութեան մէջ¹⁷, որմէ մասեր վը մէջբերենք հոս՝ ինչ որ շահեկան են եւ կարելոր:

Աւանդութեան համաձայն, Մսիս հիմնուած է Մոփսուս անունով անձէ մը, Տրոյիոյ պատերազմէն վերջ, ուսկից կը հետեւի որ յունական գաղութէ մը հիմնուած է քաղաքը: Մսիս կամ Մոփսուսէստ կը նշանակէ «կեդրոն Մոփսուսի»․ աստուածութիւն մը՝ որ շատ յարգուած էր Կիլիկիոյ մէջ, եւ նշանաւոր էր իր պատգամներով․ այս անունով գրամ ալ կոխուած է Մսիսի մէջ:

16. Սիսուան, էջ 245-251:

17. LANGLOIS V., Voyages dans la Cilicie, Paris, 1861, 446-462.

Բիւզանդական տիրապետութեան շրջանին, Յուստինոս վայսրը կը նորոգէ Ճիհուն գետի վրայ եղած կամուրջը, որ վտանգի մէջ էր․ այս նշանաւոր կամուրջը 9 կամարներ ունէր, 1737ին անոր 5 կամարները Ճիհուն գետի կատաղի ջուրերը քշեցին տարին:

Միջին դարուն յոյն, արաբ եւ հայ պատմիչները կը խօսին Մսիսի մասին եւ անոր անունը զանազան ձեւերով ու հնչումով կը գրեն․ Mopsistea, Mampsista, Mamya, Mamistra, Mamista եւ Missis․ վերջին կոչումը՝ Մսիս, Արարներէն մնացած է՝ եւ կը մնայ մինչեւ այսօր:

Մսիս շատ կռիւներ տեսած է, Նիկոփոր կայսրը զայն գրաւելով, անոր երկաթէ դռները հաներ եւ Պոլիս դրկեր է, ի յիշատակ իր յաղթանակին: Կիլիկիւմոս Տիւրացի կ'ըսէ, թէ Մսիս իր ժամանակ Կիլիկիոյ կարելոր քաղաքներէն մէկն էր, շրջապատուած հզօր պարիսպներով: Անոր պարիսպներուն տակ տեղի ունեցեր են, Ճիհուն գետի ափին, Պաշակիրներու Պաղտինի եւ Տանգրէտի եղբայրասպան կռիւները՝ անոր տիրանալու: Մսիս իր յառաջադիր դիրքին համար շատ վնասուած է Պաշակիրներու եւ Հայերու տիրապետութեան շրջանին․ Արարները շարունակ յարձակած են անոր վրայ եւ շարունակ քանդուած եւ վերաշինուած է:

Վիլլէպրանտ կ'ըսէ թէ Մսիս՝ Ճիհուն գետի ափին լաւագոյն քաղաքներէն էր, պարիսպներով եւ աշտարակներով պաշտպանուած, եւ իր ժամանակ բնակուած էր հայերէ, որոնք թիւով քիչ էին: Քաղաքին մօտիկ, կ'ըսէ տեղագիրը, գոյեակ մը կար՝ որ Ս․ Պողոսի հայրենական կալուածն էր:

ԿՈՌԻԿՈՍ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Ծովային Կիլիկիոյ պարսպապատ բերդաքաղաքներէն մէկն էր Կորիկոս. ունէր իր միջնաբերդը՝ բարձր դիրքով՝ ծովափի մէկ ժայռոտ հրուանդանին վրայ: Քաղաքը կը տարածուէր Փաթլը-Սու կոչուած գետակի ծովախառնուրդէն մէկ հազարամեղր հեռու: Կորիկոս ծովուն ափին պաշտպանուած էր Զուրերէն դուրս ցցուած խարակներէ, բնութենէն քաշուած պարիսպներէ, որոնք անմերձենալի կը դարձնէին զինքը՝ ծովէն եկող թշնամիին. իսկ ցամաքէն պաշտպանուած էր Տաւրոսեան լեռներէն:

Կորիկոսի շինութեան թուականը անորոշ է, Յոյները զայն Կորսոս կը կոչէին, իսկ լատին ուղեգիրները՝ Curicus, Culcus, Corcé, իսկ թուրքերը հիմա զայն Korkos կը կոչեն, որ փոքրիկ աւան մըն է ծովու ափին. իսկ հին քաղաքը կը տարածուէր անոր երկու կողմերուն վրայ:

Կորիկոս յունարէն բառ մըն է՝ որ կը նշանակէ փոքր տեղ, փոքր եւ կամ անօթ, ինչ որ ցոյց կու տայ թէ հին ժամանակներու մէջ՝ յունական դաղութէ մը շինուած է:

Կորիկոս քաղաքը կը գտնուի Կիպրոսի դիմացը. անոր քարձր աշտարակէն, պայծառ օրերուն, կը տեսնուին Կիպրոսի լեռներուն գագաթները: Սէն Մարթինի համաձայն՝ Կորիկոս իր անունը առեր է իր մերձակայ լեռներէն՝ որոնք Կորիկոս կը կոչուէին եւ կը գտնուէին Տաւրոսի լեռներուն հիւսիս-հարաւային մասին վրայ:

Հինէն ի վեր նշանաւոր էին Կորիկոսի մօտ եղող քաղմաթիւ բնական քարայրները, որոնք Կորիկոսեաց կը կոչուէին. կը գտնուէին ծովուն մօտերը՝ Կորիկոսի հրուանդանէն մէկ հազարամեղր հեռու: Այս քարայրներէն մէկուն մէջ կար բիւզանդական ոճով շինուած եւ նկարներով զարդարուած եկեղեցի մը: Քարայրներէն մէկ ժամ հեռու՝ ծովու ափին՝ կը բարձրանային Կորիկոսի զոյգ քերդերը, կոչուած Ցամաքայիմ Կորիկոս եւ Ծովայիմ Կորիկոս:

1. Աիսուս, էջ 331-334:



Կորիկոս. ընդհանուր տեսք (Միւլլեր-Վիներ):
Corycos, vue générale (Müller-Wiener).

Ծովային Կոռիկոսի բերդը շինուած էր ծովուն մէջ եղող փոքրիկ կղզի-
 վեակի մը վրայ, ցամաքէն մօտաւորապէս մէկ հազարամեղր հեռու. ժամա-
 նակին այս կղզի բերդը ամբարտակով մը կը միանար ցամաքային բերդին,
 սակայն դարերու ընթացքին, ծովու ալիքներու հարուածներուն առջեւ, կա-
 մաց կամաց քանդուեր է ամբարտակը, ծովուն ալիքները քչեր տարեր են
 անոր քարերը, եւ ծովային Կոռիկոսի բերդը կղզիացեր է, եւ այժմ հոն միայն
 նաւակով կարելի է երթալ, ան ալ մեծ դժուարութեամբ եւ վտանգներով,
 որովհետեւ կղզին չըջապատուած է խարակներով եւ ծովային թանձր խո-
 տերով:

Ծովային Կոռիկոսը այժմ Թուրքերը Քըզ-քալէսի (Kız-kalesi) Աղջկայ
 բերդ կը կոչեն. բերդը եռանկիւնաձեւ է եւ ամէն մէկ անկիւնին վրայ կը
 բարձրանան հսկայ քառակուսի եւ կլորակ աշտարակներ, ընդմիջուած աւելի
 փոքրիկ աշտարակներով:

Ծովային Կոռիկոսի բերդը պրեթէ ամբողջութեամբ աներդ մնացեր է,
 ցամաքէն հեռու եւ ծովու ալիքներէն պաշտպանուած ըլլալով՝ աւարառու-
 ները դիւրաւ չեն կրցած հոն մտնել եւ քանդել:

Ծովային Կոռիկոսի գլխաւոր դուռը, որ հիւսիս-արեւմտեան կողմը կը
 բացուէր, կլորաձեւ էր հրաշալի գարդերով չըջապատուած, այս դռնէն վեր-
 թըցուէր մեծ սրահը, որ շատ աւելի հին ժամանակներու շինութիւն ըլլալ
 կը թուէր:

Ծովային Կոռիկոսի ծայրը կը բարձրանար քառակուսի աշտարակ մը, որ
 իր մեծութեամբ եւ կառուցուածքով վիշխէր միւս մասերուն վրայ, այս աշ-
 տարակի դրան վրայ կայ հայերէն արձանագրութիւն մը, գեղեցիկ չըջապար-
 դով, որուն մէկ մասը կոտորած ինկած է, սակայն գաղափար մը կու տար
 բերդին շինութեան մասին:

Ահա այդ արձանագրութիւնները.


Ի թուա(կա)նիս Հայոց Չ ամին. եւ եւթն...թիուն
 ի բարեպա(շտ) թագաւորին Հեթմ...թաջդէ..
 ամրոցս ..Ալթանին շինել...
 Մեծ իշխան Հեթմոյ:

Այս արձանագրութիւնը պրուած է Հայոց Չ. թուականին, որ է Քս. 1251ին.
 կը համապատասխանէ Հեթում Ա.ի թագաւորութեան տարիին:

Կղզիին կեդրոնը ջրհոր մը կար, անձրեւներու ջուրով լեցուած, քանի որ
 կղզին վաղուկ ջուրի սփեր չունէր. զղեակին մէջ ալ չկային հետքեր, որով
 հետեւցնէինք թէ խողովակներով ջուր կը բերէին ցամաքէն կղզին:

Անոր մէջ կարեւոր ջէնքեր չկան. պատերուն վրայ կը տեսնուին յունա-
 րէն եւ լատիներէն տառեր: Բերդին մէջտեղը կան երկու ջրամբարներ՝ քա-
 րերու մէջ փորուած: Բերդին աւագ դրան վրայ քանդակուած է խաչարձան
 մը, որուն վրայ կը կարդացուի Մեծն Լեւոնի անունը:

Ծովային Կոռիկոսի գլխաց կը բարձրանայ Յամաֆային Կոռիկոսի բերդը՝
 Château de Korykos կոչուած: Քաղաքը կրկին պարիսպներով չըջապատ-



Կոռիկոսի ծովային բերդը Մերսինի ցամաքէն տեսնուած:
 La forteresse de Corycos vue de Mersin.



Կոռիկոս (Ֆրանցոյ Մարրա):
Corycos (Franco Marra).

ուած էր, շուրջը կային խոր խրամներ, պատերազմի շրջանին զայն ծովու ջուրով կը լեցնէին եւ շարժական կամուրջներով միայն կարելի էր միջնաբերդ մտնել: Քաղաքին հսկայ պարիսպները ընդմիջուած էին մեծղի եւ քառակուսի աշտարակներով, որոնց մէջ սանդուխներ կային, պարիսպներուն վրայ ելլելու համար: Քաղաքին պարիսպներուն վրայ կային երկու դռներ, մէկը՝ հիւսիսային կողմը, ուսկից կարելի էր ապաստանել մերձակայ լեռներուն վրայ՝ պատերազմի մը ընթացքին, իսկ երկրորդ դուռը՝ արեւելեան կողմի պարիսպներուն վրայ կը բացուէր, որուն վրայ փորագրուած էր հայերէն յիշատակարան մը:

Բերդին մէջ հասարակաց ջրհորներ կային՝ որոնք մեծ քաղաքի մը համար իսկ քաւարար ջուր կը պարունակէին: Նոյն դարուն եւրոպացի ճանապարհորդները գմայլումով կը նկարագրեն Կոռիկոսի բերդը. այսօր անոր պարիսպներէն մեծ մաս մը տակաւին կանգուն է, հոս ու հոն ցրուած կը տեսնուին պատերու կիսաքանդ մնացորդներ. եթէ հոն լուրջ պեղումներ կատարուին՝ վստահ պատմական շատ յուշարձաններ ու քանդակներ պիտի յայտնուին եւ լուսաբանեն անոր փառաւոր անցեալը:



Կոռիկոս (Ֆրանցոյ Մարրա):
Corycos (Franco Marra).



Կոռիկոս (Հերման Վահրամեան):
Corycos (Herman Vahramian).

ՊԱՏՄԱԿԱՆ

Ինչպէս տեսանք, Կոռիկոս իբրեւ բերդաքաղաք, հին ժամանակներէ ի վեր արդէն գոյութիւն ունէր. վաճառաշահ քաղաք մըն էր ծովուն ափին եւ Սելեւկիոյ նաւահանգիստը: Յոյն պատմիչներու համաձայն՝ Կոռիկոս քաղաքը Հերմէս աստուծոյն նուիրուած էր եւ անոր անունով ու պատկերով ալ դրամ կոխուած: Ժամանակներու ընթացքին այս քաղաքն ալ ելուզակներու որջ կ'ըլլայ: Բիւզանդական կայսրութեան շրջանին՝ Կոռիկոս եպիսկոպոսական թեմ կ'ըլլայ եւ Տարսոսի նահանգին մաս կը կազմէ: Արաբներու արշաւանքներու շրջանին՝ Կոռիկոս չի յիշուիր, ինչ որ կը նշանակէ թէ ան երկրորդական քաղաք մըն էր: Սաշակիրներու Կիլիկիա գալուստով՝ Կոռիկոս նոր կեանք կ'առնէ, կը նորոգուին անոր պարիսպները, քաղաքը կը շէնայ, վաճառականութեան կեդրոն կ'ըլլայ. եւ մինչ Պեմուդ Անտիոքի իշխանը կը ծրագրէր զայն գրաւել, ահա Ալէքս կայսրը Արեւելք կը զրկէ իր Եւստաթ քորավարը մեծ բանակով եւ բազմաթիւ զինուորական նաւերով: Բիւզանդական նաւերը խարխիւ կը նետեն անոր նաւահանգստին մէջ եւ առանց զրթ-



Կոուկոս, խաչքար (Ֆ. Մարրա):
Corycos, khatchkar (F. Marra).

Կոուկոս
Corycos, détail.

ուարութեան ու դիմադրութեան՝ ցամաք կ'ելլեն. ժողովուրդը մեծ խանդավառութեամբ զիրենք կ'ընդունի: Եւստաթ կը նորոգէ անոր նաւահանգիստը եւ կը զօրացնէ քաղաքին պաշտպանութիւնները:

Կիլիկիոյ մէջ հայ իշխանները զօրանալով, իրենց լեռնային բերդերէն վար կ'իջնեն եւ գրաւելով գաղտային Կիլիկիոյ քանի մը քաղաքներ՝ կը հասնին Կոուկոսի առջեւ, զայն կը գրաւեն եւ կը պահեն իրենց իշխանութեան տակ՝ մինչեւ Կիլիկիոյ իշխանութեան վերջը: Երբայցի ուղեւոր Դուսէլ Բենիամին 1163ին Կիպրոսէն գալով, ցամաք կ'ելլէ Կոուկոս եւ կը գրէ իր տպաւորութիւնները՝ ըսելով թէ Կոուկոս Արամիներու (այսինքն Հայերուն) երկրին սահմանադրուիւն էր, եւ յանուանէ կը յիշէ անոր իշխանը Թորոս (Բ.), զայն «Թագաւոր լեռանց» կոչելով: Ռուբինեանները տիրելով Կոուկոսի՝ զայն կը շէնցեն, կը մեծցնեն, կը զօրացնեն, եւ զայն իշխանական բերդաքաղաքի մը կը վերածեն, Թագաւորական իշխաններ հաստատելով հոն՝ իբրեւ պաշտպաններ իրենց երկրի սահմաններուն: Այնպէս որ ԺԲ. դարու վերջերը Կոուկոսի բերդին իշխանն էր Պարոն Սիմոն, զոր կը յիշէ Սմբատ Սպարապետ՝

«Իշխանն Կոուկոսոյ Սիմոնն»²: Սա հաւանաբար յոյն իշխան մըն էր, կամ յունացած հայ իշխան մը: Այս ժամանակները, այն է 1190ին՝ Գերմանիոյ Ծրեմտերիկոս կայսեր քանակէն մաս մը Կոուկոսի նաւահանգիստին մէջ կանգ կ'առնեն (կայսրի փեղդուելէն հինգ օր առաջ), եւ ապա անկից կը շարունակեն իրենց ճամբան դէպի Անտիոք, ինչ որ ցոյց կու տայ թէ Կոուկոս նոյն ժամանակները կարեւոր զինուորական նաւահանգիստ մըն էր:


Ասկէ քանի մը տարի վերջ, 1195ին, Կիպրոսի Ամալրի Թագաւորը Կոուկոս կու գայ, հոն ընտանեկան ընդունելութիւն մը ընելու իր կնոջը եւ զաւակներուն, զոր գերի տարած էր Գանաքի ելուզակը: Կիո Սակ (Սահակ) որ ասոր ձեռնտու էր եւ քաջազերող, Լեւոն Ա. երբ այս կ'իմանայ, խիստ հրաման կը դրոկէ Կիո Սակին եւ կը հրամայէ որ զանոնք ետ վերադարձնէ: Կիո Սակ կը կատարէ Լեւոնի հրամանը. անոնք Կոուկոս կու գան. կու գայ նաեւ Լեւոն եւ մեծ պատիւով կ'ընդունի զանոնք, եւ հոն կը կատարուին մեծ խրախճանքներ:

Լեւոն Ա. Մեծի ժամանակ Կոուկոս կարեւոր կեդրոն մը կ'ըլլայ. ան կը նորոգէ Ծովային Կոուկոսի բերդը, որուն մէկ դրան վերեւ Ժողկազարդ շրջանակի մէջ արձանագրութիւն մը կը զետեղէ, որ մինչեւ այսօր տակաւին կիսով չափ կը կարգացուի, ուր կ'ըսուի թէ ինքը շինած է անոր մեծ աշտարակը, իր բառերով՝ «Գուրճն մեծ»։ սակից կ'երեւի նաեւ որ Կոուկոսի բերդին մէկ մասը արդէն առաջուց ուրիշներէ շինուած էր: Վիլլեպրանտ ուղեգիրը 1212ին Տարսնէն Կոուկոս կու գայ եւ կը գրէ իր տպաւորութիւնները, չի յիշեր Ծովային բերդը, այլ միայն ցամաքի Կոուկոսը, եւ կ'ըսէ թէ ան գեղեցիկ նաւահանգիստ մը ունէր, իսկ քաղաքի շրջակայքը տեսեր է բազմաթիւ աւերակներու մնացորդներ, շատ նման հռոմէական շինութիւններու:

1210-1212 տարիներու ընթացքին, Կոուկոսի բերդին տէր կը յիշուի՝ Վախրամ մարազախտ, ինչպէս որ Մեծն Լեւոն կը յարտարարէ ձեռնօգտինքուն տուած մէկ պարգեւագրին մէջ, ըսելով թէ իրենց նաւերը կրնան Կոուկոսի նաւահանգիստը մտնել, վաճառականութիւն ընել ու ելլել, սակայն անոնք պէտք էին տեղւոյն իշխանին վճարել իրենց մաքուր: Այս վահրամը որ տէր կը կոչուի Կոուկոսի, տէր էր նաեւ ուրիշ քանի մը բերդերու. սա Լեւոն Մեծի մահէն վերջ (1219ին) կ'ուզէ անոր եղբոր աղջիկը՝ Ալիծը կին առնել. սակայն Կոստանդին Պալլ արգելք կ'ըլլայ եւ իր ճարտարութեամբ եւ ուժով զայն կը բռնէ ու բանտ կը նետէր, ուր քանի մը տարի վերջ կը վախճանի³:

Կոստանդին Պալլ, որուն ձեռքն էր երկրին ղեկը, երբ Լեւոն Մեծէն վերջ իր Հեթում Ա. որդին Թագաւորական գահին վրայ կը բարձրանայ, իր միւս որդիներուն ալ պատիւ եւ ստացուածքներ կու տայ. Կոուկոսի բերդը իր Օշին որդիին կ'ուզէ տալ, սակայն անոր Սմբատ եղբայրը կ'ընդդիմանայ եւ կը

2. ՄՐԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:
3. Սիմոն, էջ 333-334:



Մովային Կորիկոս - Corycos maritime.



Մովային Կորիկոսի երկու կլորակ մեծղի աշտարակները :

Corycos maritime avec ses deux tours rondes.

բողոքէ, ըսելով՝ թէ ինքն էր անդրանիկ որդին, իրեն իրաւունքն է անոր տէր ըլլալ: Հարցը իրաւաբաններու վը տարուի, որոնք նկատած որ Կորիկոսը հայրենի կալուած չէր՝ այլ գրաւուած երկիր մը, ուստի իրաւական արգելք մը չեն գտներ. այդ օրէն Օշին տէր եւ ժառանգ կ'ըլլայ Կորիկոսի:

Կորիկոս պատերազմներէն քանդուած էր, Օշին զայն կը վերաշինէ, ասոր համար է որ ան կը կոչուի «Տէր վերագոյն դղեկին Կորիկոսի»⁴:

1255ին՝ երբ Հեթում Ա. կը վերագաւառնայ Թաթարներու երկրէն, Կոստանդին Պայլ խրախճանքի կը հրաւիրէ իր ընտանեկան պարագաները եւ իշխանները. այս խրախճանքին ներկայ չէր Օշին Պարոն, որովհետեւ՝ կ'ըսէ պատմիչը, թէ «չինէր բերդ մի»: Ալիշան կը համարի որ հոս խօսքը Կորիկոսի բերդի շինութեան մասին է, զոր հիմա Թուրքերը Քորքոս քաղաքի կը կոչեն:

4. ՍՄԲԱՆ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 244:



Ծովային Կորիկոս - Corycos maritime.


Օչին, կ'ըսէ Սմբատ Սպարապետ, թէ «տէր գոլով գերագոյն գղեկին Կորիկոսի, Միգիտոնին, Կանչոյն եւ այլ փոքրագոյն ամրոցաց»․ ասիկա ցոյց կու տայ թէ Օչին ազդեցիկ իշխան մըն էր եւ բաղմաթիւ բերդերու տէր։ Օչին, Կորիկոսի տէրը, կը վախճանի 1265ին, ինչպէս կը գրէ պատմագիրը․ «Եղբայր արքային Հեթմոյ (Ա․) Օչին տէրն Կորիկոսի փոխեցաւ առ Քրիստոս ի մայրաքաղաքն Տարսոն... եւ թաղեցին առ պատուանդանի հօր իւրոյ...»⁵։

Օչինի կը յաջորդէ եւ տէր կ'ըլլայ Կորիկոսի՝ իր որդին Գրիգոր, որ Գրիգոր Պայլ ալ կոչուած է։ Ասոր կը յաջորդէ 1280ին, անոր եղբայրը՝ Հեթում պատմիչ եւ սպարապետ, եւ ապա միանձն եւ կանոնիկոս։ Սա իր քաջութեամբ կը վռուի իր սեղանը կողքին եւ անուանի կ'ըլլայ իր քաջութեամբ, գրասիրութեամբ եւ կրօնասիրութեամբ։ Գրած է «Պատմութիւն ինքնակալին Թաթարոց» եւ կամ «Ծաղիկը արեւելեան պատմութեան», որուն հայերէն ընագիրը կորսուած է կամ տակաւին մեր ձեռքը հասած չէ։


5. Անդ, էջ 245։



Կորիկոսի ծովային բերդը ցամաքէն տեսնուած։
Vue terrestre de la forteresse maritime di Korikos (CEDCAM).



Մովսյիմ Կորիկոս - Corycos maritime.



Կորիկոս, ներքին տեսք:
Vue intérieure de Corycos.

Հեթում պատմիչի վր յաջորդէ, իբրեւ տէր Կորիկոսի, իր անդրանիկ որդին Օշին, կոչուած իր մեծ հօր անունով: Սա եղած է մեծահոգի եւ մեծաշէն անձ մը, սակայն շատ ալ փառասէր, որով շատ ալ սխալներ վը գործէ, եւ իր երկրին տուժել կու տայ: Երբ տակաւին կը թագաւորէր Հեթում Բ. Օշին եղբայրը, սա 1318ին հաւատարմութեամբ կը ծառայէ անոր, կոռելով անոր կողքին 300 քաջ զինուորներով, Պոմպէոպոլիսի մօտ, կը զարնէ ու կը խորտակէ Գարամաններու մեծ քանակը եւ փախուստի կը մատնէ:

Օշին թագաւոր իր մահէն առաջ, 1320ին, այս Կորիկոսի տէր Օշին իշխանին կը յանձնէ իր տասը տարեկան Լեւոն (Դ.) որդիին խնամակալութիւնը. ասոր համար ալ Օշին «Պայլ» կը կոչուի, եւ նոյն ժամանակի նշանաւոր դէմքերէն մէկը կ'ըլլայ: Լեւոն Դ. անշահախոս ըլլալով՝ սա էր որ անոր հրովարտականքը եւ դաշինքները կը ստորագրէր:

Օշին Պայլ իր Զապէլ աղջիկը կը յաջողի կնութեան տալ Լեւոն Դ.ի եւ ինքն ալ թագաւորահայր կ'ըլլայ: Օշին Պայլ, սակայն, տխուր վերջաւորութիւն մը կ'ունենայ: Երբ Լեւոն Դ. չափահաս կ'ըլլայ, Օշին Պայլի հակա-



Կորիկոս, ներքը՝ արեւմուտէն դիտուած:
Corycos, l'intérieur vu de l'ouest.

ռակորդները՝ Լեւոն Դ.ը կը զրգոեն Օշինի դէմ. Լեւոն խաբուած այս չարամիտ մարդերէն՝ 1319 Յունուար 26ին գուճոյ մը կը ղրկէ Կորիկոս, որոնք կու գան եւ կը պաշարեն թագաւորական պալատը եւ Օշինը յանկարծակիի բերելով՝ կը քանեն իր Կոստանդին եղբոր հետ, վը տանին Ատանա, ուր մահուան դատաւարտելով՝ կը սպաննեն:

Օշին Պայլի սպանութենէն վերջ Կորիկոսը արքունի կալուած կը դառնայ:

Լեւոն Դ. Կորիկոսը կը յանձնէ Լուսինեան Պեմուզ իշխանին, որ հօր կողմէն Փռանկ էր՝ իսկ մօր կողմէ՝ հայ, եւ եղբայրը՝ Կիտ թագաւորին, որուն հետ ինքն ալ 1344ին կը սպաննուի: Ասոնց յաջորդներէն Կոստանդին, կը փախչի Կիպրոս եւ իբրեւ իրաւատէր, Կիպրոսի Պետրոս թագաւորին կու տայ Կորիկոսը:

1360ին Կորիկոսի կը տիրէ Կիպրոսի Պետրոս Ա. թագաւորը:

1361ին Կորիկոսի ցամաքային եւ ծովային բերդերուն տէրերն էին Լուսինեանները, որոնք Կիպրոսի Լուսինեաններուն ազգականներ էին:



Կոռիկոս, մերփին մատուռներէն մէկը
(Փաւլոյ Գուէնայ):
Corycos, une des chapelles intérieures
(Paolo Cuneo).



Կոռիկոս, մերփին մատուռներէն մէկը
(Հելլենեմպեր):
Corycos, une des chapelles intérieures
(Hellenkemper).



Կոռիկոս:
Corycos.



Կոռիկոս, գրքանց (Ֆ. Մարրա):
Corycos, couloir (F. Marra).



Յամաֆայիմ կոռիկոսէմ՝ ծովայիմ կոռիկոսի սեւֆը:
Corycos maritime vue de Corycos terrestre.

1361ին Քարամանները միանալով ծովեզերեայ իշխաններուն հետ, կուզան եւ կ'աւերեն Կոռիկոսի շրջակայ գեղերն ու ականները: Երջանի բնակիչները կը փախչին եւ կ'ամրանան Կոռիկոսի եւ շրջակայ բերդերուն մէջ, ու լուր կը ղրկեն Կիպրոսի Պետրոս թագաւորին որ իրենց օգնութեան հասնի: Սա մեծ նաւատորմիղով մը կը հասնի Կոռիկոսի առջեւ, ցամաք կը հանէ իր զորքերը եւ կը քչէ թուրք ցեղերը գէպի լեռները, իրենց սահմաններուն մէջ, եւ կ'ազատէ Կոռիկոսը:

Քարամանները սակայն 1367ին դարձեալ կուզան Կոռիկոսի վրայ 45.000 զօրքով եւ նաւատորմիղով մը, Կոռիկոսը ցամաքէն եւ ծովէն կը պաշարեն: Պետրոս Ա. թագաւորը երբ այս կ'իմանայ, իր Յակոբ եղբայրը կը ղրկէ Կիլիկիա, բազմաթիւ զինուորական նաւերով, 600 թեթեւզէն զինուորներով, 300 աղեղնաւորներով եւ ձիաւոր բանակով: Քարամանները այս հսկայ բանակին ոյժը նկատի առնելով, իրենց բանակէն մաս մը բերդին եւ լեռներուն մէջ եղող թաքստոցներու մէջ կը պահեն: Կռիւր շուտով կը սկսի, երկու կողմերէն ալ շատ զոհեր կ'իյնան եւ Կիպրացիք կը տանին յաղթանակը. Կոռիկոսէն դուրս կը քչեն Քարամանները, կը գրաւեն անոնց բանակատեղին եւ

անթիւ անհամար գերի եւ աւար կ'առնեն: Յակոբ՝ Կոռիկոսի բերդին վրայ պահապան զինուորներ դնելով, յաղթական կը վերադառնայ Կիպրոս:

1371ին Կոռիկոս կը հասնի Լեւոն Ե.՝ հայ իշխաններու հրաւէրով, որպէսզի Կիլիկիոյ թագաւոր ըլլայ: Սա երբ Կոռիկոս կը հասնի, իր մօր եւ կնոջը հետ, Կոռիկոսի բերդին պահապանն էր Կոստանդին անունով մէկը, Պոսկանայի բերդին տէրը, որ զայն մեծ պատիւով կ'ընդունի, մինչ Լեւոն Ե. զայն բռնելով՝ կ'ուզէ Քարամաններուն յանձնել: Այս որ կ'իմանայ Կիպրոսի Պետրոս թագաւորը, զինեալ նաւ մը կը ղրկէ, որպէսզի երթան Կոռիկոս եւ նենգութեամբ քանեն Լեւոնը եւ Կիպրոս վերադարձնեն: Նաւատիները կը հասնին Կոռիկոս, եւ տեսնելով որ Լեւոնի հետ էին բազմաթիւ զինուորականներ եւ ժողովուրդը, ետ կը վերադառնան, որպէսզի աւելի մեծ ուժերով գան: Անոնք Կիպրոսէն տակաւին ճամբայ չելած, Լեւոն երբ կ'իմանայ անոնց դիտաւորութիւնը, բերդապահէն կը խնդրէ նաւ մը՝ մեկնելու համար Կոռիկոսէն: Երբ բերդապահը կը մերժէ, Լեւոն՝ միջնորդութեամբ տեղւոյն եպիսկոպոսին եւ ուրիշ մեծամեծներու՝ կը ստանայ նաւ մը, ու գիշերանց նաւ մտնելով կը փախչի: Դժուարին նաւարկութենէ մը վերջ՝ կը հասնի Սարոսի



Յամաֆայիմ կոռիկոսի մասեր:
Corycos terrestre.



Կորիկոս, անբխն մատուռ (Ֆ. Մարրա):
Corycos, la chapelle (F. Marra).

դետարերանը եւ ցամաք վ'եւլէ, անկից ալ թշնամիներուն մէջէն ձիավարելով կը հասնի Սիս:

Այս առթիւ կը պատմէ Յովհաննէս Դարդէլ, թէ նոյն ժամանակ մեծ թիւով զօրքեր վային Կորիկոսի բերդին մէջ, բերդապահներ, աղեղնաւորներ եւ սուսերաւորներ:

Լեւոն Ն. գերի կը տարուի Եգիպտոս եւ անկից ալ Փարիզ. հոն իրեն կը հարցնեն Կորիկոսի բերդի մասին, ան կը պատասխանէ թէ բերդը շատ ամուր եւ անառիկ էր, զայն կարելի չէր որեւէ կերպով գրաւել՝ եթէ ոչ մատնութեամբ եւ վամ սովով:

Կիլիկիոյ թագաւորութեան վերջանալուն, Կորիկոս տակաւին Կիպրացիներուն ձեռքն էր: 1448-1454ին անոր բերդապահն էր Փիլիպպոս Ադդար անունով մէկը, որ վատարար Կորիկոսը Քարամաններու Իպրահիմ խանին կը յանձնէ, և արդարացեալու համար ինքզինքը՝ կ'ըսէ թէ մահուան սպառնալիքի եւ գերութենէ ազատելու համար այնպէս գործած է եւ փախած Կորի-

կոսէն՝ ապաստանելու Կիպրոս: Սակայն մատնիչ իշխանին խօսքերուն ոչ ոք կը հաւատայ. շղթայի վը զարնեն եւ զինուորական ատեսանի առջեւ դատելով՝ մահուան կը դատապարտեն եւ կը գլխատեն. իր հետ նոյն պատիժին կ'ենթարկուին հայ թէ օտար իշխաններ:

Քարամանները՝ ժամանակ մը իրենց ձեռքը կը պահեն Կորիկոսը, սակայն երբ կը հասնին Եգիպտացիները՝ կը թողուն եւ կը փախչին լեռները: Եգիպտացիները առանց մեծ դժուարութեան՝ կը գրաւեն Կորիկոսը եւ զինուորական կեդրոն վ'ընեն, մինչեւ որ կը զօրանան օսմանցի Թուրքերը, վուզան եւ բերդը կը գրաւեն վերջնականապէս:

Մինչեւ ժէ. դար Կորիկոս քաղաքը բնակուած էր, ևս եպիսկոպոսանիստ էր, ինչ որ ցոյց կու տայ թէ կարեւոր կեդրոն մըն էր այդ դարուն եւ հոծ հայութիւն մը վ'ապրէր հոն:

Այսօր աւերակ է Կորիկոս քաղաքը, անոր պարիսպներէն մեծ մաս մը տակաւին կը դիմադրեն դարերու փոթորիկներուն դէմ, կանգուն է իր միջնաբերդը՝ հսկայ աշտարակներով, վանդուն է ծովային Կորիկոսը եւ դէմ կը դնէ ծովու ալիքներու սպառնալիքներուն, տխուր եւ մենաւոր՝:


* * *

Վ. Լանկուա 1851ին կը գրէ Կորիկոսի զոյգ բերդերու մասին: Ան կ'ըսէ. Կորիկոս Սելեւկիայէն մէկ օրուան ճամբով հեռու է (չուրջ 50 քմ.), Թուրքերը զայն կորիկոս = Korkos կը կոչեն: Իր անունը յունական ծագում ունի եւ ցոյց կու տայ որ Կորիկոս քաղաքը շինուած է հին վաղուցէ մը:

Երբ Հռոմէացիները կը գրաւեն Կիլիկիան եւ զայն հռոմէական նահանգի մը կը վերածեն, Կորիկոսը անոնց զինուորական կարեւոր կեդրոններէն մէկը կ'ըլլայ, քանի որ կարեւոր նաւահանգիստ մը ունէր, կը զօրացնեն զայն, կը վերաշինեն անոր քայքայուած պարիսպները, հոն պահակազուններ կը հաստատեն եւ անոր նահանգին եւ քաղաքին կառավարիչ կը դնեն նշանաւոր հռոմէացի ճարտասան Կիկերոնը:

Տիտոս Լիվիոս եւ Պլինիոս հռոմէացի պատմիչները եւս կը խօսին Կորիկոս քաղաքի մասին, անոնք կ'ըսեն՝ թէ երբ Սելեւկեան իշխանութիւնը կը զօրանայ եւ կը գրաւէ ամբողջ Կիլիկիան, Կորիկոսի կարեւորութիւնը անոնց աչքէն չի խուսափիր, անոնք Միջերկրական ծովուն կարեւոր մէկ նաւահանգիստը կ'ընեն զայն: Ինչ որ կ'երեւի՝ Սելեւկեան իշխանութեան օրով ծովային Կորիկոսի բերդը տակաւին շինուած չէր, ատոր համար նոյն պատմիչները զայն կը յիշեն իբրեւ կղզի, ոչ իբրեւ բերդ, ըսելով՝ Կորիկոս իր դիմացը ունէր փոքրիկ կղզի մը, որ վերջը կարեւոր դղեակի մը պիտի վերածուէր:

6. Սիսուս, էջ 332-343:



Կոռիկոս
Corycos



Կոռիկոս, գարդաֆանդակներ:
Corycos, motifs décoratifs.

Կոռիկոս Բիզանդացիներու եւ մանաւանդ Հայերու տիրապետութեան շրջանին, կարեւոր բերդաքաղաք մը կ'ըլլայ, եւ միջին դարուն Տարսոնի հետ կը մրցի իր վաճառականութեամբ, գինուորական կարեւոր դիրքով եւ ընդարձակութեամբ:



Հայկական տիրապետութեան շրջանին՝ հոս կը հաստատուին Սիսի շքանէն հայ իշխաններ, Ռուբինեանները իբրեւ ազգականներ անոնց կը վրտասահին իրենց արեւմտեան Կիլիկիոյ սահմաններու պաշտպանութիւնը:

Վ. Լանկլուա կ'ըսէ թէ Կոռիկոսէն քիչ մը հեռու, ծովեզերքին վրայ, տեսեր է երկու հայկական դղեակներու աւերակները:

ԺԳ. դարուն բազմաթիւ եւրոպացիներ կ'այցելեն Կոռիկոսի հնութիւններուն եւ կ'ըսեն թէ ան գեղեցիկ նաւահանգիստ մը ունէր, որուն պահապան կեցեր էին երկու գեղակերտ բերդեր, մէկը ծովուն կողմէն կը պաշտպանէր նաւահանգիստը եւ քաղաքը, իսկ միւսը՝ ցամաքային կողմէն կը հսկէր հեռուէն եկող նաւերուն վրայ:

Վենետիկցի Ֆրէտրիկ Գարպարոյ եւս այցելած է Կոռիկոսի եւ զմայլանքով կը գրէ անոր նաւահանգիստին եւ բերդերու մասին. Կոռիկոս ծովուն ափին հրաշալի դիրք մը ունէր, իր բերդը ծովուն մէջ յառաջացած հրուանդանի մը վրայ կը բարձրանար, շատ ազդեցիկ կերպով, իսկ ծովային Կոռիկոսը, ծովուն ալիքներէն պաշտպանուած, զմայլելի տեսարան մը կը պարզէր երեկոյեան՝ արեւմուտքի ոսկեղէն ճառագայթներուն տակ: Այս կողմին դրան վրայ արձանագրութիւն մը կար, հայերէն ըլլալ կը թուէր, սակայն հետս եղող հայ առաջնորդն անգամ չկրցաւ կարդալ:

Ցամաքային Կոռիկոսի բերդը նաւահանգիստ գացող ճամբուն վրայ կը բարձրանար, շինուած ժայռի մը վրայ. ժայռը սուր կերպով կտրուած էր, սրուն առջեւ կը բացուէր խոր անդունդ մը, ուր կարելի էր նաւերուն դիրութեամբ մօտենալ:



Կոռիկոսի ցամաքային եւ ծովային բերդերը եւ անոնց յատակագիծերը:
Les fortresse maritime et terrestre de Corycos et leurs plans.



Կոռիկոսի ցամաքային բերդին մասեր:
 Une partie des ruines de la forteresse terrestre de Corycos.

Յամաքային բերդին բարձր մէկ դիրքին վրայ կը գտնուէր ներքնաբերդ զղեակը, շրջապատուած բարձր աշտարակներով եւ հզօր պարիսպներով. քաղաքը երկու դռներ ունէր, որոնցմէ մէկուն վրայ, հազիւ ընթեռնի, հայերէն արձանագրութիւն մը կար:

1448ին մատուցեամբ՝ Գարամանները զայն կը գրաւեն եւ անոնց ձեռքը կը մնայ մինչեւ օսմանեան Թուրքերու գալուստը:

Կոռիկոսի մէջ կան շատ մը յիշատակարաններ, հայկական եւ բիւզանդական, բիւզանդականները շատ են, սակայն հայկականները աւելի արժէքաւոր:

Բիւզանդական շրջանէն կը մնան բազմաթիւ դամբարաններ, ժայռերու մէջ փորուած քարայրներ, յունարէն արձանագրութիւններով:

Իսկ հայկական յիշատակարանները, ինչպէս ըսինք, թէեւ քիչ են՝ բայց շատ աւելի արժէքաւոր, այս վարեւոր յիշատակարաններն են՝ Կոռիկոսի ցամաքային եւ ծովային զղեակները, որոնք Միջին դարուն անմերձեմալի նկատուած էին եւ անառիկ՝ իրենց պարիսպներու հաստութեամբ եւ բարձրութեամբ, մանաւանդ իրենց զօրաւոր աշտարակներու պաշտպանութեամբ:

Կոռիկոս իբրեւ զինուորական դիրք եւ շինութիւն՝ մեծ արժէք կը ներկայացնէր, իսկ իբրեւ ճարտարապետական գործ՝ անոնք Հայերու արդիւնք են, Հայերէն շինուած, Ռուբինեան իշխանութեան շրջանին:

Հայ Թագաւորները, ինչպէս վերեւ ըսինք, Կոռիկոսը իր ցամաքային եւ

ծովային բերդերով յանձնած էին Քաղաւորական տունէն իշխաններու, Կիլիկիան պաշտպանելու համար Գոնիայի սուլթանութեան դէմ:

Սիսի անկումէն վերջ, Կոռիկոս միակ ամրոցը եղաւ որ կրցաւ երկար դիմադրել իսլամներու յարձակումներուն, որոնք արդէն տէրերն էին Կիլիկիոյ մեծ մասին, Կոռիկոս մինչեւ 1448 մնաց հայ իշխաններու ձեռքը:



Կոռիկոսի ցամաքային եւ ծովային բերդերուն յատկագիծը:
 Plan des forteresses terrestre et maritime de Corycos (Denoël).

ներով չըջապատուած էր, մեծաշէն եւ գեղեցիկ դուռ մը կը բացուէր ծովուն վրայ, ուսկից ժամանակին վարելի էր ամբարտակներու վրայէն քալելով երթալ ծովային Կորիկոս: Ուրիշ դուռ մը վը բացուէր դէպի հիւսիս, ուսկից շարժական կամուրջով մը վարելի էր անցնիլ քաղաքին հրապարակը:

Պարիսպները մեծղի աշտարակներով ընդմիջուած էին, որոնց մէջ սանդուխներ վային ելլել իջնելու համար եւ զինուորական գործողութիւններ կատարելու. հետեւաբար վային նաեւ աշտարակներուն մէջ զինուորներու համար յատուկ բնակարաններ, մատուռ, ամբարանոց եւ բանտ:

Այս մատուռներուն մէջ վային պատերուն վրայ գծուած հայ եկեղեցւոյ սուրբերու նկարներ. սիւներն ալ նկարազարդ էին եւ շատ նման էին հայկական մանրանկարչութեան նկարներուն, որոց վը հաղիպիք ԺԳ, ԺԴ. եւ ԺԵ. դարերուն:

Իսկ ծովային Կորիկոսը, իբրեւ պարզ կղզի կը յիշուի հիներէն, սակայն անոր վրայ շինուած դղեակը իր հսկայ բուրգով եւ պարիսպներով, զուտ հայկական է, Հայերէն կառուցուած, անոր նկարագրութիւնը տեսանք արդէն: Ծովային Կորիկոսը ցամաքային Կորիկոսի ամբարտակը այսօր դոյութիւն չունի եւ առանց նաւակի վարելի չէ մօտենալ կղզին, դժուար է նոյնիսկ նաւակով մօտենալ դղեակին, որովհետեւ կղզին մեծղի ժայռերով եւ ծովային բոյսերով չըջապատուած է, այնպէս որ մեզի ալ շատ դժուարին եղաւ ցամաք՝ կղզին ելլել:



Կորիկոսի ծովային բերդէն քանի մը աշտարակներ:
Les tours de la forteresse maritime de Korikos (CEDCAM).

ԼԱՄՈՍԻ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Լամոս ծովային Կիլիկիոյ բերդերէն էր, համանուն գիւղով: Կը գտնուի Սելեւկիոյ հիւսիսը, ծովեզերքին վրայ, Մերսինէն 22 քմ. հեռու՝ դէպի արեւմուտք, Երեսա նշանաւոր քաղաքին մօտերը: Լամոս փոքրիկ աւան մըն էր, ինչպէս է նաեւ այսօր, ծառուտ եւ աւազուտ հովիտի մը մէջ, որմէ քիչ հեռու անջատ վերպով կը բարձրանայ Լամոսի աւերակ բերդը, որուն պարիսպներէն մաս մը տակաւին կանգուն են:

Հին ատեն այս աւանը կը կոչուէր Լամուս կամ Լամաս, Թուրքերէն կոչուած՝ Լամաս Քարէսի: Հնապէսները կ'ըսեն թէ Լամուս փրենիկերէն բառ է, լահամա բառէն առաջ եկած է եւ կը նշանակէ ուտել, վերջացնել. աւանդութեան համաձայն հոն կ'ապրէր մարդակեր հրէշ մը, որ մարդիկ կ'ուտէր: Պոֆորդ անգլիացին 1812ին կ'այցելէ այս տեղը, սակայն կարեւոր բան մը չի գտներ:

ՊԱՏՄԱԿԱՆ

945ին Կուրկուսս յոյն քաջ զօրավարը, Կոստանդին Պերպուռոսէն կայսրին հրամանով կու գայ Լամոս, Արարներու հետ դաշինք վը դնէ եւ անոր մէջէն անցնող Լամուս չայ (Lamas Çay) կոչուած գետակի կամուրջին վրայ գերիներու փոխանակութիւն կ'ընեն:

Լամոսի բերդը հաւանաբար Յոյներէն շինուած է. ԺԲ. դարու կէսին է որ մեր հայ իշխանները կը հասնին հոն եւ վը գրաւեն: Այս լսելով Մանուէլ կայսրը, մեծ քանակով մը կու գայ եւ կը գրաւէ զայն. Հայերը վը հեռանան անկէ, սակայն ժամանակ մը վերջ, երբ կայսրը Պոլիս վը վերադառնայ՝ Հայերը դարձեալ զայն կը գրաւեն: Մտրատ Սպարապետ վը գրէ թէ այս շրջանին Լամոս կ'ըլլայ Կոստանդին Թագաւորահօր, Վասակի կալուածը, եւ որով կը թուի թէ յետոյ զայն ժառանգած է անոր հարազատը՝ Հալկամ, որ 1197ին տէր կը կոչուի Լամոսի. «Իշխանն Մանիօսին եւ Լամուսին Հալկամ»¹:

1. ՍՄՐԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210: Սիսուան, էջ 347:

1199ին Հարկամ ներկայ եղած է Լեւոն Ա.ի թագադրութեան հանդէսին, եւ ինչ որ կ'երեւի՝ ան աւագ իշխաններէն մէկն էր: Լեւոն Ա. զայն Ս. Ներսէս Լամբրոնեցիի հետ դեսպան կը ղրկէ Պոլիս 1197ին, ինչպէս կը գրէ Սըմբատ. «Առաքէ Լեւոն (Ա.) ի Կոստանդնուպոլիս զարքեպիսկոպոսն տէր Ներսէս, զորդի Օշնին, եւ մեծազարմ իշխանն զՀալկամ, զեղբայր Բակուրանայ՝ զքեռին իւր»²:

Հալկամ, ինչպէս կը գրէ Սմբատ, Վասակ մեծ իշխանին եւ Բակուրան իշխանին եղբայրն էր. «Բակուրանայ եւ Վասակայ եղբայր մի այլ կայր՝ Հալկամ անուն, եւ Վասակն էր հայրն աւագ պարոնին»³: Հեթում Ա. Հալկամ անունով իշխան մը Իսաւրիոյ եւ Սելեւկիոյ շրջանին կողմնակալ կամ կողմնապահ կը կարգէ 1263ին: Հալկամ Քարամաններու դէմ մղուած պատերազմին՝ կը վախճանի:

Հալկամի հողերուն եւ բերքերուն տէր կ'ըլլայ նախ իր Բակուրան եղբայրը, որուն մասին Սմբատ Սպարապետ մեծ գովեստով կը խօսի. «Եւ Բակուրան տէրն Պապեոսին՝ էր բարի եւ առատ եւ բարեբար առ ամենայն ոք, եւ սիրելի Աստուծոյ եւ մարդկան...»⁴:

Այս երեք եղբայրները իրենց քաջութեամբ եւ քարի կենցաղավարութեամբ կը քրտնաբերեն երկար ատեն իշխել Իսաւրիոյ եւ Սելեւկիոյ շրջաններուն, պաշտպանելով Կիլիկիոյ կեդրոնական իշխանութեան սահմանները:

Վ. Լանկլուա կու տայ ծանօթութիւններ Լամոսի մասին, ըսելով թէ «Ծովեզերքին վրայ, Պոմպէուպոլսէն մինչեւ Լամոս՝ բազմաթիւ բերդեր կան, ամէնքն ալ աւերակ: Լամոս, որ լաւագոյններէն է, հին ատեն Կիլիկեցիներու սահմանազուլին էր. Լամոս գետակը իր ստորոտէն կ'անցնի եւ կ'երթայ կը թափի ծով:

«Լամոս հիմա թրքական փոքրիկ գիւղ մըն է, ծովեզերքի երկայնքին բարձրացող բլուրներէն մէկուն կողքին՝ հոռոմէական ամփիթատրոնի ձեւով: Երջակայ ժայռոտ բլուրներու մէջէն անցնելով Լամոսի գետակը՝ հրաշալի ջրվէժներ կը ձեւացնէ: Այս ժայռերուն վրայ է որ կը բարձրանայ Լամոսի բերդը, զոր թուրքերը Թիւֆէնկ գալչսի (Tufeng kalesi) կը կոչեն, հրացանի ձեւ ունենալուն համար»⁵:

2. Անդ, էջ 207: Սիսուս, էջ 347:
 3. Անդ, էջ 187:
 4. Անդ:
 5. V. LANGLOIS, Voyages dans la Cilicie, Paris, 1861, p. 105.

ԱՆԱՄՈՒՌ ԿԱՄ ԱՆԵՄՈՒՌ

ՏՆՂԱԳՐԱԿԱՆ

Ծովային Կիլիկիոյ արեւմտեան մասին նշանաւոր բերդաքաղաքներէն մէկն էր Անամուր կամ Անմուր, Յոյներէն կոչուած՝ Անմուրիոն = Ανεμούριον, իսկ Հայերը զայն կը կոչեն՝ Անմուր:

Անեմուր կը գտնուի Սելեւկիայէն 150 քլմ., Մերսինէն 250 քլմ., իսկ Տարսոնէն շուրջ 300 քլմ. հեռու, ծովափին վրայ. հին հելլէն-հռոմէական բերդաքաղաք էր: Քաղաքը կը տարածուի Անեմուր կոչուած հրուանդանին վրայ, որ դէպի ծով կ'երկարի եւ Կիպրոս կղզիին ամէնէն մօտ հողաշերտն է: Քաղաքը ծովափին երկարութեամբ շրջապատուած է հզօր պարիսպներով եւ հակախական աշտարակներով, մանաւանդ ցամաքին նայող կողմերը: Պարիսպները սրածեւ ատամներով կը վերջանան, որոնք մեծ մասով տակաւին կանգուն կը մնան ընդարձակ տարածութեան մը վրայ եւ շատ ազդեցիկ տեսք ունին:

Բերդաքաղաքին ընդարձակութիւնը մէկ քառակուսի քիլոմետրէն աւելի է. պարիսպները երկրին կազմին համաձայն՝ բլուրներու վրայէն վեր վար իջնելով կ'երթան կը միանան քարաբլուրի մը վրայ եղող միջնաբերդին, որոնք ամրացած են 36 հսկայ եւ հզօր քառակուսի աշտարակներով, նման Տիգրանակերտի աշտարակներուն. շինուած են տաշուած քարերով:

Պարիսպները ունին ստորերկրեայ անցքեր, իսկ պարիսպներուն արտաքին կողմերը ունին խոր խրամներ, որ հաւանօրէն պատերազմի շրջանին ծովուն ջուրով կը լեցնէին: Այս խրամները կը շրջապատեն բերդաքաղաքին երեք չորրորդ մասը, իսկ չորրորդ մասը ծովապատ է եւ անմերձենալի:

Յամաքէն քարաշէն կամուրջով մը միայն կարելի է մօտենալ բերդաքաղաքին, շարժական կամուրջ մը՝ որ պատերազմի պարագային վեր կը քաշէին: Կամուրջին երկու կողմերը կան երկու քառակուսի հսկայ աշտարակներ, որոնք կը պաշտպանէին կամուրջը եւ մուտքը: Բերդաքաղաքը ունէր նաեւ ուրիշ երկու շարժական կամուրջներ, պարիսպներուն վրայ բացուող երկու կամարածեւ դռներուն առջեւ. այս կամուրջները աւելի փոքր էին, որոնց մնացորդները մինչեւ այսօրս մասամբ կը մնան:

Բերդաքաղաքը իր մէջ ներքին բաժանումներ ունէր, կատարուած ստուար պարիսպներով, եւ մէջ ընդ մէջ աշտարակներով, որոնք թշնամիին մուտքը




Անամուր բերդին տպաստիչ տեսքը արևելքից :
 Vue impressionnante de la forteresse d'Anamour, du côté est.




Անամուր բերդը :
 Forteresse d'Anamour (Denoël).



Անամուր ցամաքային բերդը ծովու ափին, դաշտագետինը եւ հեռու Տաւրոսեան լեռները :
 La forteresse d'Anamour baignée par la mer et au loin les montagnes du Taurus.



Անամուռ - Anamour



Անամուռ ցամաքէն դիտուած :

La forteresse d'Anamoud vue de la plaine.


քաղաքին կեդրոնը կը դժուարացնէին: Հարաւային կողմին վրայ, քարա-
ժայռի մը կատարին կը բարձրանար քաղաքին միջնաբերդը կամ դղեակը,
դարձեալ չըջապատուած վրկին պարիսպներով եւ բազմաթիւ աշտարակնե-
րով, որոնցմէ մէկը կիսով չափ խորտակուեր էր:

Բերդաքաղաքին մէջ քնակութեան համար շէնքերու հետքեր չեն երեւիր,
երբեմն հոս ու հոն կը տեսնուին ջրամբարներ, որոնց ջուրը հաւանաբար մօ-
տակայ լեռներէն կը բերէին ազուզաներով:

Անեմուռի արեւելեան կողմին վրայ կը բարձրանայ իր նշանաւոր դղեակը,
որ հիմա Թուրքերը Մէմուրիէի գալէսի կը կոչեն: Ներքին բերդը շատ հին
չէ, եւ շինուած է 1230ին Գարամանի էմիրներէն, հոսմէական հին բերդի մը
աւերակներուն վրայ:

Դղեակը չըջապատուած է բարձր պարիսպներով եւ պաշտպանուած զա-
նազան ձեւի աշտարակներով. դղեակը մեծ մասով վանդուն է, բացի ծովա-
հայեաց մէկ ճակատէն:

Այս դղեակը ընդարձակ քառակուսի շինութիւն մըն է. չըջապատի պա-
րիսպները վեց մեդրէն աւելի հաստ են, երեք կամարակապ դռներով: Մեծ




Անամուր - Anamour.

դուռը արեւելեան կողմին վրայ վը բացուի, մեծ աշտարակին ներքեւ, որուն վրայ արաբերէն արձանագրութիւն մը կայ, ուր կը վարդացուի՝ թէ Ալահէտ-տին սուլթանը նուաճած է բերդը եւ բերդաքաղաքը՝ Թումճի-Շէրիֆի ձեռքով, եւ անոր պահպանութիւնը յանձնած է Էսմէր Մուսթաֆայի:

Բերդաքաղաքէն դուրս վը տարածուին ընդարձակ գերեզմաններու մնացորդներ, որոնք, ինչպէս կը տեսնուի, բացուած են եւ կողոպտուած: Այս գերեզմաններուն վից կը տեսնուին նաեւ հին Անեմուր քաղաքին աւերակներէն մասեր, հրուանդանին վերջաւորութեան վրայ, որ Թուրքերը Էսքի Անամուր վը կոչեն: Բերդին ստորտուր, ծովուն մէջ, փոքրիկ վրդի մը կայ, որուն մէջ հին շինութիւններու աւերակներ կը տեսնուին եւ քարերու մէջ փորուած ջրամբարներ²:

2. Ս. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՅ, Կիւիկիա, 1894, էջ 245-255:



Անամուր - Anamour.

ՊԱՏՄԱԿԱՆ


Ե՞րբ եւ ո՞վ շինած է այս նշանաւոր բերդաքաղաքը իր պարիսպներով եւ բուրգերով: Ձարմանալի կերպով պատմութիւնը վը լռէ. ոմանք կը խորհին թէ շինուած է Մեծն Արեքսանդրէն, անոր դռներէն մէկուն վրայ յունարէն անլուծանելի արձանագրութիւն մը գտնուած ըլլալուն համար: Ստկայն ճարտարապետական տեսակէտով եթէ դիտենք գայն, անոր պարիսպներու եւ աշտարակներու շինութեան ոճը ցոյց կու տան՝ որ այն Պաշակիրներու շրջանին շինուած է, ապա անցած Հայերու ձեռքը, որոնք վերաշինած ու յարմարցուցած են իրենց պատերազմական արուեստին:

Թէ ո՞ր թուականին Անեմուր Հայոց ձեռքը անցեր է: Այս հարցումին ալ պատմագիրները որոշ պատասխան մը չեն տար. սակայն որոշ է որ Լեւոն Ա. Մեծագործի իշխանութեան օրերուն՝ անոր սահմանները Անեմուրէն անդին կ'անցնէին, եւ Անեմուրը իր զինուորական վարեւոր մէկ բերդաքաղաքն էր: Սմբատ Մպարապետ կը յիշէ անոր առաջին հայ իշխանը՝ Հալկամ, Բակուրանի եւ Վասակի եղբայրը, որ ներկայ եղած է Լեւոնի Թազադրութեան հան-

դէսին. «Մշխանն Մանիօնին, Լամօսոյ, Ժեռմանկանն եւ Անամուռին՝ Հարկամ»³ :

Լեւոն Ա.ի մահէն քիչ վերջ, Ալաշտտին սուլթան կը գրաւէ Անեմուռ եւ Ալաշա, սահայն անմիջապէս յետոյ, 1284ին, պէտք է կրկին Հայերու ձեռքը անցած ըլլայ Լեւոն Բ.ի օրերուն, որովհետեւ նոյն ժամանակին գրուած յիշատակարան մը կ'ըսէ. «Եւ թափումն Անամուռին՝ ի Թուրքաց»⁴, բայց թէ ի՞նչ եղած են պատմական մանրամասնութիւնները՝ անծանօթ կը մնան մեզի :


Եզխպտացիները զօրանալով՝ տիրեցին Կիլիկիոյ շատ մը ծովային քաղաքներուն եւ Անեմուռ վերջնականապէս ինկաւ անոնց ձեռքը. Հայերը այդ թուականէն վերջ չկրցան հոն հասնիլ: Անեմուռ երկար տարիներ մնաց Ե-




Անամուռ, ներքին տեսք:
Anamour, vue de l'intérieur.

3. ՄՄԲԱՆ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

4. Սիսուան, էջ 322:



Անամուռ - Anamour.




Անամուռ - Anamour.



Անամուրի գրեհար
ճեքսէն դիտումք:

La forteresse
d'Anamour vue
de l'intérieur.




Անամուր բերդին տեսքը ծովու ափին:
Forteresse d'Anamour au bord de la mer.

Կիւրտացիներու ձեռքը, մինչեւ որ զօրացան օսմանցի Թուրքերը եւ գրաւեցին զայն: 1840ին անոնք հոն բաւական մեծ նորոգութիւններ կ'ընեն. Պոլսոյ սուրբաճանները հոն շինել կու տան մեծ մզկիթ մը՝ բարձր աշտարակներով, եւ հոն կը հաստատեն պահակազօրք մը:

Ասկէ 40 տարի վերջ Զօլազի իշխանութիւնը կ'ուզէ օգտագործել այս ամրոցը, եւ որովհետեւ պատերազմներէն քայքայուած էր եւ կէս լքուած, հոն բաւական մեծ նորոգութիւններ կ'ընեն, պարիսպներէն մաս մը անպործածելի դարձած էին ու զանոնք կը վերաշինեն. բայց տարի մը վերջ անոր աշտարակներէն մէկը փուկ կու գայ, եւ ժողովուրդը կամաց կամաց կը թողու եւ կը հեռանայ, աջապէս որ Անեմուր կը լքուի եւ անմարդաբնակ կը դառնայ. հիմա վայրի աղաւնիներ միայն կ'ապրին անոր պարիսպներու խորշերուն մէջ⁵:

5. Բնաշխարհիկ Բաւարան, էջ 195-161:



Անամուր իր
պարիսպներով
ծովու ափին:

La forteresse
d'Anamour au
bord de la mer.



Անամուր քրդի յասակափծը:
Plan de la forteresse d'Anamour (Denoël).



Կորիկոսի քերդին երկու կլորակ աշտարակները:
Les deux tours rondes de la forteresse de Korikos (CEDCAM).

ԱԼԱՅԱ - ԿՈՈՒԿԵՍԻՈՆ ԿԱՄ ԱԼԱՆԻԱ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Ալայա ծովային Կիլիկիոյ հին եւ նշանաւոր բերդաքաղաքներէն մէկն էր, շինուած՝ ծովուն մէջ երկարած թերակղզիի մը վրայ, հրաշալի դիրքով ապահով նաւահանգիստ մը, Կիպրոս կղզիին դիմաց: Այսօր վը կոչուի Ալանիա. Միջերկրականի վրայ եղող բանուկ նաւահանգիստներէն մէկն է՝ Թուրքիոյ հողամասին վրայ:

Պոֆորտ անգլիացի ծովագետը, իր նաւերով այս նաւահանգիստը կանգ առնելով՝ կը նկարագրէ այսպէս. «Ալայեա ծովուն ափին՝ բնական ամրոց մըն է, շրջապատուած հաստ պարիսպներով եւ ամրացուած հզօր աշտարակներով, որոնք ցոյց կու տան թէ անոր առաջին տիրողները ուզած են հոն ամուր եւ անառիկ ամրոց մը շինել»:

Ալայա հիւսիսէն զատուած է մօտակայ լեռներէն ընդարձակ դաշտով մը, եւ ապա շրջապատուած ցած եւ աւազուտ բլուրներով:

Քաղաքին երկու կողմերը կը բարձրանային երկու քարաժայռեր. արեւելեան կողմը՝ ուր կը տարածուէր քաղաքը, այնպէս սուր կտրուած էր՝ որ վերէն նայողին վրայ անկիւղ կ'ազդէր: Տուները քովէ քով շարուած էին եւ ամփիթատրոնի պէս ետեւէ ետեւ վեր վը բարձրանային, կարծել տալով թէ անոնք իրարու կպած են: Իսկ եթէ ծովուն կողմը մէկը նայէր, ծովուն երեսէն անթիւ խարակներ կը լարձրանային եւ երթալով հեռու հեռու, կ'անհետանային ջուրերուն մէջ:

Ո՞վ եղած է՝ որ այս հրաշալի դիրքը ընտրեր եւ հոն ուզեր է շինել բերդաքաղաք մը, բնութեան բնական պաշտպանութիւններուն վրայ աւելցընելով արուեստական ամրութիւններ:

Քարաբլուրին վրայ կ'երեւին վիկլուպեան հսկայ քարերու եւ սիւներու մնացորդներ. սակայն ուղեգիրը հոն ոչ մէկ յունական արձանագրութիւն կրցած է գտնել:

ՊԱՏՄԱԿԱՆ


Կը պատմուի թէ Ասորիքի Անտիոքոս Թագաւորը փկած եւ պաշարած է քաղաքը, բայց չէ կրցած դրաւել, որովհետեւ Հոռոզոսի բնակիչները իրեն հակառակ ելած են:

Դարձեալ կ'ըսեն թէ 144ին Ն. Ք. Թուսկանը, Կիլիկիոյ ծովահէնները հոս կը պահէին իրենց նաւերը եւ ասկից է որ կը յարձակէին ծովերու մէջ եղող նաւերուն եւ նաւավարներուն վրայ, կը կողոպտէին եւ գերի կը բռնէին:


Հոռոմ այս ծովահէններու դէմ կը դրկէ Պոմպէոս գորավարը, որ 65ին (Ք. Ա.) Կեռակեսիոնի խարակներուն առջեւ կը զարնէ եւ կը խորտակէ անոնց ոյժը, 1000 հոգի կը սպաննէ, 2000 հոգի ալ գերի կը բռնէ, կը խորտակէ անոնց 1200 նաւերը: Հոռոմէացիները 50 օրուան շրջանին կը տիրանան անոնց 120 նաւակայքներուն:



Ալանիա քաղաքին ընդհանուր տեսքը եւ իր ութանկին կարմիր գշտնաւոր աշտարակը:
Alanya: vue générale de la ville et de sa célèbre tour octogonale.



Ալանիա քաղաքին ընդհանուր տեսքը եւ ծովու ափին իր գշտնաւոր ութանկին աշտարակը:
Alanya: vue générale donnant sur la mer et sa célèbre tour octogonale.



Ալանիա քաղաքին բերդը եւ իր մշակաւոր ութանկիւն կարմիր աշտարակը ծովու ափին:
Alanya: la forteresse et sa célèbre tour rouge au bord de la mer.


Յամարին վրայ ծովահէնները 400ի չափ ամրոցներ ունէին. անոնցմէ ոմանք Սերվիլիոս-Պոպիոս կը գրաւէ, մաս մը Պոմպէոս եւ ապա Կիլիկերոն: Անոնցմէ մի քանիներն ալ կ'անցնին բարբարոսներու ձեռքը³:

Հին ասոնն այս բերդաքաղաքը Կոռակեսիոն կը կոչուէր: Յոյները գայն Κορακησιον կը կոչէին, իսկ Լատիները՝ Coracesium:

Երկար տարիներ Ալայա հռոմէական կայսրութեան մաս կը կազմէ եւ կ'ըլլայ կայսրութեան վանառաչահ քաղաքներէն մէկը, ապա անոնցմէ կ'անցնի Բիւզանդացիներուն եւ կը մնայ անոնց ձեռքը, մինչեւ որ Կիլիկիոյ թատերաբեմին վրայ կու գայ ուրիշ ժողովուրդ մը՝ Հայերը:

Շատ հետաքրքրական է գիտնալ թէ Հայերը ե՞րբ եւ ի՞նչպէս հասեր են այս կողմերը. Լեւոն Ա.ի իշխանութեան օրով՝ ո՞վ կը տիրէր ամբողջ Կի-


3. Հմմտ. Անդ, էջ 313-6:



Ալանիա բերդը:
La forteresse d'Alanya (Sissouan).

լիկիոյ ծովեզերքին՝ մինչեւ Ատալիա. որո՞ւն ձեռքն էր այս գորաւոր բերդաքաղաքը. որովհետեւ Լեւոնի թագադրութեան հանդէսին (1198) ներկայ եղող իշխաններու եւ բերդատէրերու ցանկին մէջ յիշուած չէ Ալայայի իշխանին կամ տիրոջ անունը:

Ալիշան կը համարի որ այս քաղաքը Լեւոնի թագաւորութեան չըջանին Կալօնօնու կը կոչուէր, անուն մը որ կը յիշուի Լեւոնի թագադրութեան հանդէսին ներկայ եղող իշխաններու բերդերու ցանկին մէջ, եւ որուն իշխանն էր Սիր Ատան: Սա Մեծն Լեւոնի թագաւորութեան չըջանի՝ ամէնէն հօր, մեծ եւ ազդեցիկ մարդը եղած է, Լեւոն Ա. ալ գաջն իր մեանքի վերջին օրերուն Պայլ կ'անուանէ, եւ իր աղջկան Չապէլի ալ դաստիարակը. իսկ իր մահուան ժամուն, անոր յաջորդ կ'անուանէ՝ իր սննդակից Կոստանդին Պայլը: Իր պատուոյ եւ աւագութեան համաձայն՝ Սիր Ատան սրէտք էր ընդարձակ երկիրներու եւ բերդերու տէր ըլլալ՝ քան ուրիշ պարսններ, ժառանգութիւն ստացած իր նախնիքներէն, անոնք ալ Բիւզանդիոյ կայսրներէն: Ասիկա որոչ



Ալանիա ծովու ափին:
Alanya au bord de la mer.

Կերպով կը հաստատէ Սմբատ Սպարապետ երբ կը գրէ, Լեւոն (Ա.) «զնէր եւ դաստիարակս տղային իւրոյ՝ զմեծ իշխանն Սիր Ատան, որ էր տէր բազում բերդից եւ գաւառաց, ի Սելեւկիոյ մինչեւ մերձ ի Կալսոնոս, որ անուամբ նորա կոչի մինչեւ ցայսօր Աշխարհ Սիր Ատանայ: Եւ էր սա աստիճանաւ սենեկալ Հայոց»⁴:

«Մինչեւ մերձ ի Կալսոնոս» բացատրութիւնը չի հաստատեր թէ Կալսոնոս քաղաքը անոր ձեռքն էր, եւ ոչ ալ կը հաւատէ թէ ուրիշի մը ձեռքն էր: Սմբատ պատմիչ՝ որ ժամանակակից էր, կը հաստատէ թէ Կալսոնոսին եւ ուրիշ բերդերու տէր էր՝ Կիո Վարդ, որդին կամ թոռ Ատանի. այս վերջինս իր կենդանութեան զինքը աջ հողերուն եւ բերդերուն ժառանգ կարգած էր: Ասոր մահէն վերջ, երբ Կիլիկիա խառնակ վիճակ մը կ'ունենայ, Հեթում Ա. ի թագաւորութենէն առաջ, Մկոնիոյ Ալահէտտին սուլթանը յարմար առիթ համարելով՝ կը յարձակի Կիլիկիոյ վրայ եւ կ'ըսէ պատմիչը թէ «էսառ յԱտոմայ թոռնէն՝ ի Կիո Վարդէն՝ գրեթէ Կալսոնոսս եւ զըռւստր նորա ի կնութիւն՝ յոչ կամաց»⁵:

4. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 222:

5. ՍԻՍՈՒԱՄ, էջ 313:



Ալանիա քաղաքին անձայրածիր պարիսպները:
Les gigantesques enceintes d'Alanya (Denoël).


Շատ հետաքրքրական է գիտնալ թէ երբ Ալահէտտին կը գրաւէ Կալոնոսը, ի՞նչ վիճակի մէջ էր այս բերդաքաղաքը, ի՞նչ ամրութիւններ ունէր, ի՞նչպէս էր նաւահանգիստը եւ ի՞նչ շէնքեր վային քաղաքին մէջ. որովհետեւ Կալոնոսոս քաղը յունարէն է եւ Գեղեցիկ կամ Բարի լեռ կը նշանակէ: Արար եւ թուրք պատմիչները կ'ըսեն թէ Ալահէտտին հոն քաղաք մը կը շինէ եւ իր անունով (կրճատելով վերջին էտտին մասնիկը) Ալայա կը կոչէ, եւ հոն կը հաւաքէ իր ամբողջ հարստութիւնը ու գանձերը: Ան ներքեմն կու գայ եւ հոն ալ կը բնակի. իր Ղիյաթէտտին որդին ալ 1246ին հոն կը մեռնի, ինչպէս կը գրէ Սմբատ Սպարապետ, «որ նստեալ էր սուլտանն Յիւսթատինն՝ յիւր բերդն ի Կալոնոսոսն, ու կու խմէր, լոկ ասաց քովս քովս ու մեռաւ»⁶: Եւ որովհետեւ անոր իշխանութեան, ի կոնիոյ գահին, տիրած էր իր եղբայրը, եւ իր որդին իբրեւ ժառանգորդ՝ դեռ փոքր էր, սա Ալայայի սուլտանը կ'ըլլայ. անոր յաջորդները կը շինեն, կը զարդարեն Ալայա քաղաքը եւ իրենց նաւային զօրութեան կեդրոն կ'ընեն⁷:

Սակայն մենք թողլով օտար պատմիչներու գրածները Ալայայի մասին, գտնուեալ մեր ազգային պատմութեան: Երանի թէ գիտնայինք թէ Հայերը ե՞րբ տիրած են այսպիսի ամուր եւ նշանաւոր քաղաքի մը, եւ թէ ո՞վ էր Սիր Ատան, որուն անունով ամբողջ այդ շրջանը Սիրատնան կը կոչուէր:

Հայագէտ եւրոպացիներ եւ պատմագէտներ կը կարծեն թէ Սիր Ատան Փոանկ մըն էր, Եւրոպայէն Պալատիոններուն հետ Արեւելք եկած եւ հաստատուած նախ Ասորիք, ապա անցած այս կողմերը՝ Բիզանդիոնի կայսրին հրաւէրով եւ եղած է անոր հաւատարիմ ծառայողներէն մէկը: Սակայն Կիրակոս պատմիչ կը գրէ անոր մասին եւ կ'ըսէ «որ էր հոռոմ դաւանութեամբ»⁸: Այս տողերը ցոյց կու տան թէ Սիր Ատան ո՛չ լատին էր եւ ոչ ալ յոյն, այլ յունածէս հայ. տեսանք արդէն որ Սմբատ Սպարապետ կու տայ անոր իրական անունը՝ Ատով:

Սիր Ատան ծովեզերքի երկարութեան ընդարձակ երկիրներու եւ բերդերու տէր էր, եւ զանոնք, ինչպէս ըսինք, ժառանգած էր իր նախնիքներէն, այսինքն Բիզանդացիներէն: Թէ որ ո՞նք էին Սիր Ատանի նախնիքները. Ալիշանի համաձայն՝ «Թագաւորազարմն պայազատք Արծրունուոյն Սենեքերիմայ, պաղթեալքն ի Վասպուրականէ եւ տիրացեալք կողմանցն Սեբաստիոյ»⁹: Ուրեմն հոս կրնանք եզրակացնել ըսելով. Ատովեանները՝ ազգով եւ ծէսով հայ էին: Անոնք Սեբաստիա գաղթելով՝ Յոյներուն մէջ իբրեւ օտարածէս՝ անոնցմէ կը հալածուին, ու ի սէր խաղաղութեան՝ կ'ընդունին յոյն ծէսը, ինչպէս կը հաստատէ Կիրակոս պատմիչ: Հաւանաբար Կիլիկիոյ ծովեզերքին եւ անոր շրջաններուն եւ բերդերուն, Ռուբինեաններէն առաջ կ'իջնէին Ատովեանները, որոնք ունէին հայ արիւն եւ ցեղակից էին Ապղարիպեաններուն,

6. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 227:
 7. Սիսուամ, էջ 315-316:
 8. ԿԻՐԱԿՈՍ, Պատմութիւն, էջ 94:
 9. Սիսուամ, էջ 315:




Անպիսա քաղաքին տեսքը միջօրեային տեսանում:
 La ville d'Alanya vue de la citadelle.

Հեթումեաններուն եւ Նաթանայելեաններուն, ամէնքն ալ իրարու մերձաւոր ազգականներ եւ նաեւ դաշնակիցներ:

Ատովեանները ե՞րբ տիրեր են այս կողմերուն. հաւանաբար անոնք Սենեքերիմ Թագաւորին հետ 1102ին գաղթելով են Սեբաստիա եւ անկից ալ հարաւ իջնելով՝ հասեր են ծովեզերք եւ տիրած են այս կողմերուն ու մտած Բիզանդական կայսրներուն հովանիին տակ եւ դարձած անոնց ճորտերը, կըրուած անոնց բանակներու մէջ՝ նոյնիսկ Հայոց դէմ: Այնպէս որ Ատովեանները, բացի Ալայայէն, Կիր Վարդի օրով կը տիրէին Ս. Սովէի, Յուսապէի, Նաղլօնի, Կոտրատի եւ ուրիշ բերդերու¹⁰:

Ալիշան դարձեալ կը գրէ Ատովեաններու եւ Սենեքերիմեաններու մասին յուզումնալից տողերով. «Սիրալի իմն ի նկատել զսեբաստիա Սենեքերիմայ նշրհհացեալս ի հայրենարոյն Ոստանէն իւրեանց եւ յԱղթամարայ հրաշա-

10. Անգ, էջ 315:



Ալայա-կոսակեպոն հրուանդանը եւ քաղաքի յատկագիծը:
 La presqu'île de Alaya-Goregosion et le plan de la ville (Sissouan).

կերտիցն, եւ փոխանակ ընդ Վան եւ Վարազ եւ ընդ կապուտակ ալիս լեռնապարոյր ծովուն Բզնունեաց՝ զաչան բաժանելոյ, աստ ի կարկառակոյս զաղաթանց կոռակիսեանն Կարծօոոսի՝ ծաւալել զաչս եւ զմիտս ընդ համատարած ոլորտս Միջերկրականին. — որպէսզի՝ տեսութեամբք, որպիսի՝ ըզձիւք...»¹¹:

Ռուբրիկեան իշխանութեան վերջանալէն քիչ առաջ, 1340ի ժամանակները, իսկ Պաղուդա արար ուղեգիրը Ալայա զարով՝ հիացումով կը խօսի անոր մասին եւ զայն կը կոչէ «Սկիզբն աշխարհին Յունաց», աշխարհիս գեղեցկագոյն տեղերէն մէկը համարելով զայն. քաղաքին վերեւ բարձունքին վրայ, կ'ըսէ նոյն պատմիչը, կար իր անտիրի բերդը, շինուած Սուլտան Ալահէտտինէ կը—Ռուսիէ:

Ալայա վաճառաչահ քաղաք կ'ըլլայ, ուր կու գային վենետիկացի, ճենովացի եւ լոմպարտացի վաճառականներ. այս վերջիններու անունով կը համարուի թէ այս տեղը կոչուած է Լոմպարտիոյ բերդ (Castrum Lombardum, Castello Lombardo): Ասոնք երբեմն գրաւած են այս շրջանները եւ հոն մնացած մինչեւ ԺԵ. զարու վերջերը: Ասոնց վերջին ճիւղը կ'ըլլայ 1471-

11. Աճ, էջ 315:

1483ին, գրաւել ամբողջ ծովեզերքը եւ զօրացնել Գարամանները եւ զանոնք հանել Օսմանցիներուն ղէմ. սակայն Օսմանցիները երբ կը յաղթեն Պարսիկներուն եւ Գարամաններուն, անոնց եւրոպացի դաշնակիցները տեղիք կու տան եւ կը քաշուին: Այն ատեն 1471ին Օսմանցիները Ալայայի վրայ կը ղրկեն նշանաւոր Կէտիկ Ահմէտ փաշան. սա կու գայ եւ կը պաշարէ Ալայան. նոյն ատեն քաղաքին կառավարիչն էր Թիւոնիոյ սուլթաններու տոհմէն՝ Գլըն-Աւրան, որ շուտով անձնատուր կ'ըլլայ:

Ալայա քաղաքին դիրքը հրաշալի է եւ տուներու շինուածքը տարօրինակ. անոնք կտրոզ կտրոզ կը բարձրանան քարալուրէն վեր, կարծես իրարու վայեր են. ամառը հոն սաստիկ տաք կ'ընէ, իսկ ձմեռները՝ ցուրտ, քաղաքը շարունակ ենթակայ է մրրիկներու:

Ներկայիս քաղաքին մէջ նշանաւոր բան մը չկայ, բերդը գրեթէ ամայի է, քաղաքին պարիսպները խարխրած են: Նաւահանդիստին մօտ կայ լայն կողերով ութանկիւն հսկայ աշտարակ մը՝ Գղըլ-Գուլէ կոչուած, որու մասին 1973ին ուղեգիր մը կը նկարագրէ ըսելով թէ աշտարակը դարերէ ի վեր տակաւին հաստատուն ու կանգուն է, 36 մեդր բարձրութեամբ. ութանկիւն աշտարակ մըն է հինգ յարկարաժիններով, շինուած 1228ին՝ Հալէպցի ճարտարպետէ մը: Այս աշտարակը Ալայա քաղաքին նախապահպանն է: Ալայա քաղաքին պարիսպները 1455 ասելի աշտարակներ ունին, եւ երեք բարձր բերդեր: Պարիսպներէն ներս քաղաքը քաժնուած է վեց մասերու. ամէնէն կարեւոր մասը զինուորական նաւաշինարանն էր (Arsenal maritime), փորուած քարածայրի մը մէջ, շուրջ 87 մեդր խորութեամբ եւ 106 մեդր լայնութեամբ, ուր կրնային պատերազմական ամէնէն մեծ նաւերն անգամ խարխիս նետել:

1220ին սերճուր Թուրքերը Ատալիան գրաւելէ երեք տարի վերջ՝ գրաւեցին Ալայան: Տեսնելով որ Ատալիոյ նաւահանդիստը իրենց մեծ շահ կը բերէ, որովհետեւ բազմաթիւ նաւեր հոն կը մտնէին ու կ'ելլէին, որոնցմէ տուրք կը գանձէին, ուղեցին Միջերկրականին մէջ Ատալիոյ նման ուրիշ նաւահանդիստ մը եւս ունենալ, իրենց շահը կրկնապատկելու նպատակով. ուստի ընտրեցին Կարծօոոսը եւ զայն նոր անունով Ալայիէ կոչեցին:

Անմիջապէս հոն եկան հաստատուեցան Արեւելքի վաճառական ժողովուրդները, յոյներ, հրեաներ, Փիլիպինցիներ, ճենովացիներ եւ վենետիկացիներ, բազմացան եւ հոն կազմեցին առանձին հասարակութիւններ, առանձին թաղամասերով: Այս վաճառականները Թիւոնիոյ սուլթանին որոշ տուրք մը կը վճարէին՝ ամէն անգամ որ իրենց նաւերը նաւահանդիստ կը մտնէին եւ կ'ելլէին. նոյնպէս ամէն ներածուծի եւ արտածուծի ատեն¹²:

12. DENOEL, *Turquie, Guide-Atlas, Voyages et civilisations*, Paris, 1973, p. 161-2.

ԿԱՍՏԻՍ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Կաստիմ կամ Կաստոն, Անտիոքի շրջանի բերդերէն մէկն էր. բուն տեղը անորոշ է: Մօտ ժամանակներու Փրանսացի ուղեւոր մը կ'ըսէ թէ Կաստիմ բերդը կը գտնուէր Պէյլանի արեւմտեան կողմը, բերան մը կատարին, եւ զայն նոյն կը համարի Կոփրետոս կոչուած բերդին հետ: Մեր պատմիչները այս բերդը չեն յիշեր, բերդ մը որ տասը տարիներ եւ աւելի, խռովութեան պատճառ կ'ըլլայ Լեւոն Մեծին եւ Տաճարական ասպետներուն միջեւ:

Կաստիմ բերդն է որ Լատինները Gastim կամ Gaston կը կոչեն: Վիլլէ-պրանտ ուղեգիրը Հալէպէն մեկնելով կ'երթար Կիլիկիա, անցնելով Հարէֆկ կոչուած բերդաւանին մօտէն, որ Անտիոքի լճակին հարաւ-արեւելքը կը գտնուէր, կը հասնի Կաստիմ բերդը, ուր կը նկարագրէ լսելով թէ Անտիոքէն միայն չորս քիլոմետր հեռու է, ամուր եւ ւերեք կարգ պարիսպներով շրջապատուած բերդ մըն է, պարիսպներուն վրայ կան հաւասար հեռաւորութեամբ՝ զօրաւոր բուրգեր: Բերդը կը գտնուէր Հայոց սահմանազուխին ծայրը եւ կը պաշտպանէր Երկրին ելքն ու մուտքը:

ՊԱՏՄԱԿԱՆ

Բերդը հաւանաբար շինուած էր Յոյներէն, 1061ի ժամանակները: Առաջին Պաշակիրները գալով՝ զայն կը գրաւեն. Տանգրէտ, անոնց առաջնորդը՝ զայն իր բանակատեղին կ'ընէ:

Ասկէ ետք չի գիտցուիր թէ ինչպէս Կաստիմ այլադպիսիներու ձեռքը անցեր է: 1142ին Յովհաննէս կայսրը այս կողմերը կու գայ եւ իր բանակը կը դնէ Կաստիմ բերդին առջեւ, եւ լուր կը դրկէ Անտիոքի Ռեմունդ բրինձին, ստիպելով՝ որ գայ եւ իրեն հնազանդի: Երբ Ռեմունդ կ'արհամարհէ կայսրին հրամանը, կայսրը աւերելով եւ կողոպտելով բերդին շրջակայ գիւղերը եւ աւանները՝ կը հեռանայ Կիլիկիայէն:

Յաջորդաբար Մլեհ, Լեւոն Ա.ի զօրեղբայրը, կը գրաւէ բերդը, սակայն ժամանակ մը վերջ, կամ Հայերը եւ կամ Անտիոքացիները՝ զայն դարձեալ Ասպետներուն կը թողուն:

Երբ Սալահատին սուլթանը կու գայ այս կողմերը, կը գրաւէ Գարպասի հետ նաեւ Կաստիմ բերդը, զոր ըթած էին Սարակինոսները, լսելով

Ճրետերիկ Շիկամօրուս կայսրին դէպի Արեւելք գալը. այսպէս՝ Կաստիմ բերդը շուրջ 20 տարիներ կը մնայ Լեւոն Ա.ի իշխանութեան տակ:

Տաճարական ասպետները կը խնդրեն Լեւոնէն որ իրենց վերադարձնէ զայն. Լեւոն կը խոստանայ, պայմանով որ Անտիոքի ժառանգութեան հարցը կարգադրուի. երբ հարցը քաղցրութեամբ չի կարգադրուիր, Լեւոն Ա. բանակով մը կը մտնէ Անտիոք եւ քաղաքին պատրիարքը իրենց իրաւարար կը կարգէ: Տաճարական ասպետները ուղեւոր առիթէն օգտուելի, երբ Լեւոն Ա. երկրէն հեռու էր, փոխանակ երախտագէտ ըլլալու որ իրենց օգնած էր Գարպասի բերդին տիրանալու, կը յարձակին Կաստիմ բերդին վրայ, կը գրաւեն եւ իրենց գրոշակը կը պարզեն հոն, եւ որպէսզի ապահով ըլլան իրենց կատարած ապօրինի գործին՝ Հալէպի սուլթանը իրենց օգնութեան կը կանչեն: Այս լսելով Լեւոն Ա. կը վաչրանայ, թողալով Անտիոքը՝ կու գայ եւ կը յարձակի բերդին վրայ, կը գրաւէ եւ Տաճարական ասպետներն ալ իր սահմաններէն դուրս կը քշէ:

Տաճարական ասպետները տեսնելով որ Լեւոնի հետ պլուխ պիտի չկարենան ելլել գէնքով, կը դիմեն Հոռմի Իննովկէնտիանոս Գ. Պապին, որմէ Լեւոն Ս. Պետրոսի դրօշակը ստացեր էր: Պապը կը յորդորէ Լեւոնը որ ետ վերադարձնէ: Լեւոն նկատի կ'առնէ Պապին խնդիրքը եւ կը խոստանայ տալ՝ պայմանով որ Անտիոքացիները իրբեւ Բրինձ (իշխան) Անտիոքի ընդունէին զինքը:

Երկար թղթակցութիւններ կը կատարուին Լեւոնի եւ Հոռմի միջեւ, մինչեւ որ Անտիոքացիները կ'ընդունին Լեւոնի առաջարկները, եւ Լեւոն խաղաղութեամբ բերդը կը վերադարձնէ Տաճարականներուն:

Սակայն երբ Տրիպոլոսոյ կոմսը բռնի կերպով կը գրաւէ Անտիոքը, Տաճարականները անոր կ'օգնեն, հակառակ Լեւոնի. Լեւոն դարձեալ կ'երթայ եւ Կաստիմ բերդը կը գրաւէ եւ զայն իր իշխանութեան տակ կը պահէ՝ մինչեւ 1213 թուականը:

Անտիոքացիները կը ստիպուին հաշտուիլ Լեւոնի հետ. սա հաւատարիմ իր խոստումին՝ զայն կրկին կը վերադարձնէ անոնց:

1268ին, Պիպարս սուլթանը փոթորիկի մը պէս կու գայ եւ կը գրաւէ Կիլիկիան շատ մը բերդեր, Կաստիմ ալ անոր առջեւ կը բանայ իր դռները:

Քանի մը տարի յետոյ, 1272ին, Քաթարները կ'արշաւեն Կիլիկիոյ վրայ. այդ խառնակ շրջանին այլեւս չի յիշուիր թէ ինչ կ'ըլլայ Կաստիմ բերդի վիճակը, եւ թէ ե՞րբ լքուեր եւ աւերակ դարձեր է:

Կաստիմ բերդին մօտ նշանաւոր աղբիւր մը կար, ուր, կ'ըսէ պատմագիր մը, թէ 1193ին Լեւոն Ա. հոն ճաշի կը հրաւիրէ Անտիոքի բրինձը, բայց երբ կը տեսնէ որ ան կը հասնի քաղմութեամբ եւ զինուորական ուժերով, զայն կը հրաւիրէ Կաստիմ բերդ, եւ հոն խաթուութեամբ զայն կը ձերբակալէ: Կան պատմիչներ՝ որոնք կ'ըսեն թէ այս դէպքը Պաղրաս բերդին մէջ պատահեր է, ինչ որ ցոյց կու տայ թէ Կաստիմ եւ Պաղրաս իրարու մօտիկ բերդեր էին՝:

1. Հմմտ. Արսուան, էջ 427-428:

ԿԻՍՏՈՒԱՍ ԲԵՐԴ

Մովսիսյն Կիլիկիոյ բերդերէն մէկն էր Կիստուամ բերդը, Յոյներէն կոչուած է Κιστραμον: Շինութեան թուականը անծանօթ է. հաւանաբար Յոյներէն շինուած է:

Կը վստուէր Լամոս բերդին արեւմտեան կողմը եղող լեռներէն մէկուն վրայ, սօսիի ծառերով շրջապատուած:

Կիստուամ չի յիշուիր մեր պատմիչներէն, զայն կը յիշէ բիզանդացի Կիլիկիոյ պատմիչը որ կ'ըսէ՝ թէ Մանուէլ կայսրը Լամոսը գրաւելէն վերջ կու գայ եւ կը գրաւէ նաեւ Կիստուամ բերդը եւ ապա Անարզարան:

Կիստուամ, ինչ որ կ'երեւի, հօրք եւ պարսպապատ բերդաւան մըն էր, երբ Մանուէլ կայսրը կը հեռանայ Կիլիկիայէն, Փ. Դարու կէսին, հայ իշխանները զարձեայ կը գրաւեն եւ կ'ըլլայ կալուածը Վասակի՝ հօր թագաւորահօր Կոստանդինի. եւ կ'երեւի թէ անկէ՝ զայն կը ժառանգէ իր հարազատը Հալկամ, որ տէր կը կոչուի նաեւ ուրիշ բերդերու: Հալկամ 1197ին Ս. Ներսէս Լամբրունեցիին հետ, մասնաւոր առաքելութեամբ մը Լեւոն թագաւորէն Պոլիս կը դրկուի:

Հալկամ, իբր տէր Կիստուամ բերդին, 1198ին ներկայ եղած է Լեւոնի թագաւորութեան հանդէսին. Սմբատ պատմիչ զայն կը կոչէ «Մեծազարմ իշխան»², իսկ ուրիշ առթիւ՝ «Ամենազովելին Հալկամ»³:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

2. Անգ, էջ 238:

3. Անգ, էջ 207 եւ 238: Հմմտ. նաեւ Սիսուան, էջ 347:

ՄԻՏԻՋՈՆԻ ԲԵՐԴ

Մովսիսյն Կիլիկիոյ բերդերէն մէկն էր Միտիգոնի բերդը, սակայն ծովեզերքի ո՞ր մասին վրայ կը գտնուէր՝ չենք գիտեր. զայն իր պատմութեան մէջ կը յիշէ Սմբատ Սպարապետ: Անոր օտարահնչուն անունը ենթադրել կու տայ՝ որ Յոյներէն շինուած ամրոց մըն էր, որ ապա անցած է Հայերու ձեռքը:

1265ին Միտիգոնի բերդին տէր եւ իշխան կը յիշուի՝ Օշիւն, որ տէր էր նաեւ ուրիշ քանի մը նշանաւոր բերդերու, ինչպէս կը գրէ Սմբատ. «եւ Օշինիւ՝ որ եւ նա տէր գոլով գերագոյն զղեկին Կուռիկոսոյ, Միտիգոնին, Մանիօնին, Կանչոյն եւ այլ փոքրագոյն ամրոցաց»¹:

Օշին իշխան Կիլիկիոյ հանրածանօթ եւ անուանի իշխաններէն էր. եղբայրն էր Հեթում Ա. թագաւորին, հետեւաբար արքունիքի մէջ բարձր դիրք ունէր եւ տէր էր ընդարձակ կալուածներու եւ բերդերու:

1265ին Եգիպտոսի Պեկապոս սուլթանը՝ «զայր յերկիրն Կիլիկիոյ գերել եւ աւերել: Իսկ թագաւորն Հայոց Հեթում՝ հանդերձ հարազատօք իւրովք Սմբատիւ... եւ Օշինիւ՝ որ եւ նա տէր գոլով գերագոյն զղեկին Կուռիկոսոյ, Միտիգոնին, Մանիօնին, Կանչոյն եւ այլ փոքրագոյն ամրոցաց, եւ այլ մեծամեծօք իւրովք եւ ուսկօք աշխարհաժողով արարեալ, եւ գնացեալ եհաս մինչեւ ի տեղի ինչ որ կոչի Դուռն Անտիօքայ, եւ անդ փոսղի կալեալ մնայր անօրէնին»²:

Պատմիչին «մինչեւ... Դուռն Անտիօքայ» ըսելով կը հասկնայ մինչեւ Պէյլանի անցքը, ուսկից վար կը տարածուի Անտիօքի դաշտագետինը:

Եգիպտոսի սուլթանն ալ իր կարգին մեծ պատրաստութեամբ կու գայ մինչեւ Անտիօքի մօտերը եղող Սեւ գետին եզերքը, եւ հոն բանակ կը դնէ. լրտեսներ կը դրկէ՝ իմանալու համար Հայոց ոյժը եւ զինուորական պատրաստութիւնները. «նոքա եկեալ տեսին, կ'ըսէ նոյն պատմիչը, զայնքան բազմութիւն հաւատացելոցն ժողովեալ եւ սպասէին սուլտանին՝ եթէ գայցէ»: Լրտեսները կը վերադառնան «եւ պատմեցին սուլտանին զոր տեսին»: Ի՞նչ տեսած էին. կազմ եւ զօրաւոր բանակ մը. սուլթանը «երկեաւ մտանել յաշխարհ Կիլիկիոյ, այլ դարձեալ գնաց յԵգիպտոս»³:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 244:

2. Անգ, էջ 244-245:

Հեթում թագաւոր, իր Օշին եղբոր հետ շնորհակալ կ'ըլլայ Աստուծոյ, որ զիրենք ազատած էր մեծ արիւնահեղութենէ մը, ու Կիլիկիա վը վերադառնան «եւ թագաւորն եւ ամենայն զօրքն դարձան ի շէնս եւ յաւանս իւրեանց՝ դոհանալով զՏեառնէ»⁴ Այս դէպքը ցոյց կու տայ թէ Օշին իր եղբոր թեւ թիկունք էր եւ Կիլիկիոյ մեծագոյն իշխաններէն մէկը:

Օշին իր եղբայրներուն հետ Տարսոն դառնալէն վերջ, դժբախտաբար երկար չ'ապրիր ու նոյն տարին կը վախճանի, որուն մասին կը գրէ պատմիչը. «Ի սոյն ամի (1265) յամսեանն Դեկտեմբերի՝ որ օր ԻԶ էր, եղբայրն արքային Հեթմոյ, Օշին, տէրն Կուռիկոսոյ փոխեցաւ առ Քրիստոս ի մայրաքաղաքն Տարսոն, եւ առեալ տարան զնա ի մայրաքաղաքն Սիս եւ թաղեցին առ պատուանդանի հօր իւրոյ»⁵:

Այս դէպքերէն վերջ Միտիզոնի բերդը չի յիշուիր մեր պատմութեան մէջ, հաւանաբար եզրիպտական արշաւանքներու շրջանին քանդուեր եւ լքուեր է: Այսօր անոր որոշ տեղն անգամ չենք գիտեր:

3. Անդ, էջ 245:

4. Անդ, էջ 245:

5. Անդ: Հմմտ. նաեւ Սիսուան, էջ 328:



Անամուր բերդին մուտքը:
Entrée principale de la forteresse d'Anamour (CEDCAM).

ՊՌԱԿԱՆԱ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Պռականա ծովային Կիլիկիոյ բերդերէն էր, զայն կը յիշեն հայ թէ օտար պատմիչներ, եւ կը կոչեն Պռականա Παρακανα: Համանուն գիւղով կը դըտնուէր Սերեւկիոյ հիւսիսային կողմերը, հաւանաբար շինուած Յոյներէն, Բիւզանդական կայսրութեան շրջանին: Այիշան կ'ըսէ թէ «կարեւոր տեղի մի, շէն մեծ եւ բերդ հզօր»: Չայն կը յիշէ Նիկեոսս պատմիչը եւ կը կոչէ Պռակա կամ Պռական, եւ կ'ըսէ թէ Սերեւկիոյ քաղաքներէն էր. իսկ Կիրնամոս կ'ըսէ թէ Իսաւրիոյ քաղաքներէն էր¹:

Բերդը կը բարձրանար լեռան մը քարուտ բարձունքին վրայ, որովհետեւ պատմիչը կ'ըսէ թէ՝ թշնամին զայն գրաւելու համար կը ստիպուի մեծ դըժուարութեամբ լեռ բարձրանալ, «հնարիւք քարազնաց քարամուտ արամբ՝ մտին կալան գրեթէ»: Բերդը բարձր դիրքի մը վրայ էր եւ մասնաւոր քարազնաց զինուորներով է որ հոն կը հասնին եւ կը գրաւեն:

ՊԱՏՄԱԿԱՆ

Պռականա բերդը առաջին անգամ կը յիշէ Կիրնամոս պատմիչ: 1143ին Մանուէլ կայսրը Կիլիկիայէն Իսաւրիա դացած ատեն՝ Պռականա բերդը Թուրքերու ձեռքէն կը դրաւ առանց մեծ դիմադրութեան. Թուրքերը երկու տարի վերջ դարձեալ կու գան Պռականայի վրայ եւ կը վերագրաւեն, ու Իկոնիոյ Մասուտ սուլթանը յաղթանակով Պռականա կը մտնէ: Մանուէլ կայսրը այս որ կը լսէ, մեծ բանակով ճամբայ կ'ելլէ դէպի Կիլիկիա. Իկոնիոյ սուլթանը իմանալով կայսեր գալուստը, կ'ուզէ հարցը խաղաղութեամբ կարգադրել. հոն չհասած՝ մարդ կը դրկէ եւ Սիւլէյման անունով զօրավարին դըլխաւորութեամբ՝ կ'առաջարկէ վերադարձնել բերդը. կայսրը կ'ընդունի եւ յաղթական կը մտնէ Պռականա²:

Որոշ չէ թէ կայսեր Պռականան գրաւելէ վերջ՝ որո՞ւն յանձնած է անոր պահպանութիւնը: 1151ին Պռականայի բերդին տէր եւ իշխանն էր՝ կայսեր

1. Հմմտ. Սիսուամ, էջ 330:

2. Հմմտ. Անգ, էջ 330-1:

հաւատարիմ Տիգրան անունով հայ իշխան մը. սա՛ր կայսեր կողքին կը մասնակցի Մսիսի պատերազմին, ուրիշ հայ Հեթումեան եւ Նաթանայէլեան իշխաններուն հետ, Թորոս Բ-ի դէմ, եւ գերի կ'իյնայ, ինչպէս կը գրէ պատմիչը. «եւ կալան գտէրն Լամբրունի գՕչին, եւ գտէրն Բարձրբերդոյ զՎասիլն, եւ գտէրն Պոականու զՏիգրանն, որք էին ի կողմն Յունաց թագաւորին»³: Մանուէլ կայսրը այս գերիները ազատելու համար Թորոսի մեծ գումարներ կը վճարէ, որոնց մէջ էր Տիգրան, որ գլուխը կախ՝ Պոլիս կը վերադառնայ:

1188ին, Լեւոն Ա.ի թագադրութեան հանդէսէն տասը տարի առաջ, Պոականա բերդը Տիգրիի ամիրային ձեռքն էր. թէ ինչպէս ան գրաւած էր զայն՝ պատմիչը ոչինչ կը յիշատակէ: Պաղտին Գունդուստապլը, անշուշտ Լեւոնի թելադրութեամբ՝ կ'երթայ Պոականայի վրայ, սակայն ոչ միայն չի կրնար զայն գրաւել՝ այլ եւ կեանքը վրայ կու տայ. «Սպանաւ մեծագգի իշխանն Սիր Պաղտին Գունդուստապլն ի բերդն Պոական, որ գնացեալ էր գողանալ զբերդն»⁴: Զախող արշաւանք մը կ'ըլլայ, որուն վրէժը կը լուծէ Լեւոն Ա., ինչպէս կը գրէ պատմիչը. «Թսկ զկնի երկուց ամսոց հառ գողութեամբ զՊոականա Լեւոն եւ հսպան զբերդաւագն զՏիգրի ամիրա, որ սպանեալ էր զՊաղտինն եւ ոգի բճ (200) թուրք»⁵:

Հեթում Ա.ի թագաւորութեան շրջանին (1224-1269) Պոականա Հայոց ձեռքն էր, երբ Իկոնիայ Խիյաթէտտին սուլթանը կու գայ եւ կը պաշարէ, բայց կուրի ընթացքին կը մեռնի: Իր զօրականները առանց իմացնելու անոր մահը, մարտ կը զրկեն Հեթումի եւ կը խնդրեն որ Պոականա բերդը իրենց յանձնէ, որպէսզի սիրով ելլեն, երթան. «Ուզեցին զՊոականա որ սիրով ի տուն երթային, նա թագաւորն երես, որ ելան ու գնացին»⁶: Սակայն Հայերը արք կ'իմանան անոնց խարդախութիւնը, յարմար առիթով մը կու գան եւ զարձեալ կը գրաւեն բերդը:

Հաւանաբար Պոականա ասկէ վերջ երկար տարիներ Հայոց ձեռքը մնացած է, որովհետեւ Կիլիկիոյ թագաւորութեան վերջին օրերը, 1324ին Կոստանոսի բերդին տէր կը յիշուի Կոստանդին Պոականացի, որ անշուշտ ոչ թէ միայն հոն ծնած ըլլալուն Պոականացի կոչուած է, այլ եւ նոյն շրջանին Պոականայի տէրն էր⁷:

3. ՄՐԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 170-171:
 4. ԱՅՊ, էջ 200:
 5. ԱՅՊ, էջ 200-1:
 6. ԱՅՊ, էջ 227-8:
 7. ՀՄՄ. Սիսուան, էջ 331:

ՍԻԿՈՅ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Կիլիկեան բազմաթիւ բերդերէն մէկն էր Սիկոյ բերդը, կը գտնուէր ծովային Կիլիկիոյ լեռնային մէկ շրջանին մէջ, Անամուռէն ոչ շատ հեռու: Ներկայիս մասամբ տակաւին կանգուն է, որուն մասին արդի երկրախոյզ եւ ուղեգիր Տընօէլ կը գրէ 1973ին. «Անամուռէն 15 քլմ. հեռու, դէպի Սերեկիա դացող ասվալտ ծովեզերեայ ճամբուն ձախ կողմը կը բարձրանան Սիկ = Սօփա Գալէսի կոչուած բերդին աւերակները. այս բերդը Միջին դարուն ծովահաններու կեդրոն եղած է»¹:

Սիկոյ բերդի շինութեան ոճը կը տարբերի շրջակայ բերդերու շինութեան ոճէն. պոթական է՝ սրակամար դռներով եւ սրածայր հինգ աշտարակներով: Զի գիտցուիր թէ ո՞վ եւ ե՞րբ շինուած է այս բերդը, որ անցեալին կոչուած է Syce կամ Sycae, իսկ Միջին դարուն Իտալացիներէ կոչուած՝ Sequino, Sequin կամ Sigi²:

ՊԱՏՄԱԿԱՆ

Սիկոյ բերդը 1198ին՝ Լեւոն Ա.ի թագաւորութեան շրջանին՝ շէն էր եւ բնակուած. Սմբատ Պատմիչ անոր տէր եւ իշխան կը յիշէ Կեռ-Սակ անունով իշխան մը, որ տէր էր նաեւ ուրիշ քանի մը բերդերու. «Իշխանն Մաղվալոյ եւ Սիկոյ եւ Պալապոլին՝ Կեռսակն»³: Կեռ կամ Կեռ Սակ կոչուած իշխանը, յոյն իշխան մըն էր, Լեւոնի թագադրութեան հանդէսին ներկայ գտնուած է, ինչ որ ցոյց կու տայ թէ անոր անթակայ իշխան մըն էր. մասնակցած է նաեւ Լեւոնի մղած պատերազմներուն: 1216ին Կապանի շուրջ մղուած պատերազմի ընթացքին՝ սա գերի կը բռնուի եւ կը տարուի Իկոնիա. «Քայքառու սուլտանն յիկոնիոյ՝ խառվեցաւ ընդ նմա (Լեւոնի), եւ եկն բազում զօրօք ի վերայ Կապնուն, նեղեաց զնա եւ ոչինչ կարաց առնել. ապա յազգմանէ չարին կալան զգունդուստապլն Հայոց Կոստանդին զորդի քեռոյն թագաւորին Լե-

1. DENOEL, *Turquie, Guide-Atlas, Voyages et civilisations*, Paris, 1973.
 2. ՀՄՄ. Սիսուան, էջ 322-323:
 3. ՄՐԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

ւոնի, եւ գնոստանդին որդի Հեթմոյ եւ գլխուսակ, տէրն Մաղվայոյ»⁴: Սա-
կայն Լեւոն 1219ին կ'ազատէ զանոնք գերութենէն. «ետ թագաւորն Լեւոն
զբերդն Լուլուա եւ զԼօղասի եւ ազատեաց զկալանաւոր իշխանսն»⁵:

Թորոս Թոսլին, 1262ին օրինակած ձեռագիր Աւետարանին Յիշատակա-
րանին մէջ կը գրէ թէ Լեւոն Բ. «բազում անգամ յաղթեալ սուրտանին Հո-
ռոմոց, եւ առեալ զամուրս նորա՝ զանմատչելին Մունտասս եւ զՄանիաւնն,
զՍիկի եւ զայլս բազում»⁶:

1264ին, Հեթում Ա. թագաւորի գահակալութեան վերջին շրջանին, Սի-
կոյ բերդին տէր կը յիշուի Սմբատ Գուռքստապլը, Հեթում թագաւորին եզ-
բայրը, որ տէր եւ իշխան էր ոչ միայն Սիկ բերդին, այլ եւ անոր շրջակայ
բազմաթիւ բերդերու:

Ալիշան կը համարի որ այս՝ այն բերդն է որ Nessekim անուանով կը յի-
շատակուի Անգլիոյ Հենրիկոս Բ. թագաւորին վարքին մէջ. ուսկից կ'անցնի
ու կ'երթայ Սելեուկիայէն դէպի Ատալիա՝ Զրանկներու Փիլիպ Օգոստոս թա-
գաւորը⁷:

Այս բերդը նշանաւոր կ'ըլլայ Կիլիկիոյ թագաւորութեան անկումէն հա-
րիւր տարի վերջ, երբ Վենետկեցիները Գարամաններուն հետ միացած՝ մեծ
բանակով մը կու գան Օսմանցիներուն վրայ եւ կը պաշարեն Կոստիկոսի բեր-
դին հետ նսեւ Սիկոյ բերդը:

Վենետկեցիները վաթաւուն նաւերով ծովեզերք մօտենարով՝ ցամաք կը
հանեն 440 ձիաւորներ, իրենց զէնքերով եւ օտանդակ գունդերով: Անոնք,
կ'ըսէ պատմիչը, շատ ամուր կը գտնեն Սիկոյ բերդը, որ քաղաքի մը կատա-
րին վրայ կը քարձրանար, հզօր պարիսպներով եւ աշտարակներով. սակայն
ներսը շատ քիչ պահակազօրք մնացած էին:

Բերդապահը՝ Մուսթաֆա, որ բնիկ Գարամանցի էր, կ'ուզէ անձնատուր
ըլլալ, քան թէ կռուիլ այսպիսի հզօր բանակի մը դէմ: Վենետկեցիներու
կողմէ Յովսակատ Պարպարոյ նշանաւոր զեսպանը կ'երթայ մինչեւ բերդին
դուռը, որու վրայ քառակուսի պատուհան մը կար, եւ անկից կը խօսի.
բերդապահը երբ կը տեսնէ որ Պարպարոյ կ'ընդունի իրենց պայմանները,
այն է՝ ազատ թողուլ ներսիները որ ելլեն երթան բերդէն, իրենց հետ տա-
նելով ինչ որ կ'ուզեն, կը քանան բերդին գունդը եւ շուրջ 150 հոգի, իրենց
կահկարասիներով եւ ամէն ունեցածներով՝ կը հեռանան բերդէն. Վենետ-
կեցի ազահ եւ անհնազանդ զօրականները կը յարձակին բերդականներուն
վրայ եւ կը կողոպտեն զանոնք. սակայն իրենց մեծերը կը նեղուին եւ կո-
ղոպուտը ետ առնելով իրենց տէրերուն կը վերադարձնեն, ու զիրենք իրենց
նաւերուն մէջ առնելով՝ կը տանին՝ ուր որ կ'ուզեն⁸:

4. Աճդ, էջ 221:
5. Աճդ, էջ 222:
6. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ Ա. Ս., Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ. դար, Երևան, 1984,
էջ 317:
7. Սիսուան, էջ 323:
8. Աճդ, էջ 323:

ՆԱԶՆՈՆ ԲԵՐԴ

Մովսէսի Կիլիկիոյ Պամփիլիոյ շրջանի բերդերէն էր Նաղլուն, համանուն
աւանով՝ կը գտնուէր Լայերտայ եւ Սեւեղրայ քաղաքաւաններուն միջեւ եղող
գետակի մը ափին. այժմ եւս այս գետաբերանին մօտիկ կը գտնուի աւան
մը կամ գիւղ մը, որ Նաւլէ կը կոչուի. Ալիշան կը համարի որ այդ աւանը
նոյն է Նաղլուն բերդին հետ:

1198ին Նաղլուն բերդին տէր ու իշխան կը յիշուի Կեռ Վարդ, որ ներկայ
եղած է Լեւոն Ա.ի թագադրութեան հանդէսին: Սմբատ պատմիչ կ'ըսէ.
«իշխանն Կալանօսոսոյ, Այծուտապին, Ս. Սօփէ եւ Նաղլօնին՝ Կեռ Վարդ»¹:

Կեռ Վարդ ծանօթ հայ իշխաններէն էր, Սիր Ատանի թուր, որ կը տի-
րէր ամբողջ արեւմտեան Կիլիկիոյ ծովեզերքին²:

1. ՄԱԹԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210: Հմմտ. նսեւ Սիսուան, էջ 316:
2. Կեռ Վարդի մասին՝ սե'ս Կալանօսոսի մասին մեր գրածը:

ՄԱՆԱԻՂԱՏ ԲԵՐԴ

Մանաւղատ Կիլիկիոյ ծովային բերդաքաղաքներէն էր, ծովեզերքէն քիչ հեռու, Ալանիայէն Անթալիա գացող ասֆալտապատ ճամբուն վրայ, Մելաս գետի ափին վրայ, որուն եզերքներուն վրայ տակաւին կը տեսնուին անոր ականքներու մնացորդները, կիսակործան պարիսպներու մնացորդներ եւ աշտարակներ:

Մանաւղատ անունով այսօր իսկ փոքրիկ աւան մը գոյութիւն ունի ծովեզերքին վրայ, զոր Թուրքերը Manavgat = Մամաւկաթ կը կոչեն. գետին հարաւային ափին վրայ կը բարձրանայ իր հին բերդը, անկանոն ձեւով, զոր Մէնուկատ գալէսի կը կոչեն:

Աւանը հին ատեն շրջապատուած էր հզօր պարիսպներով եւ զանազան ձեւի աշտարակներով: Պարիսպներուն մէկուն վրայ հնագէտները արտբերէն արձանագրութիւն մը գտնել են՝ որ կ'ըսէ. «Մի՛ պարծիք ընդ շքեղ երեւոյթ. անցի եւ ես ընդ փորձ պատրանացդ. աշխարհս բաց եւ համարձակ է առ ամենայն դաս մարդկան»¹:

Անշուշտ շատ աւելի փափաքելի էր, կ'ըսէ Ալիշան, եթէ այդ բերդին մէջ հայկական արձանագրութիւն մը գտնուէր. որովհետեւ Մանաւղատ բերդը, որչափ որ Կիլիկիոյ սահմանային բերդերէն էր, սակայն ժամանակ մը մաս կազմած է Լեւոնի Թագաւորութեան. Սմրատ Սպարապետ կը յիշէ անոր մէկ իշխանը՝ որ նեփկայ եղած է 1198ին Լեւոնի Թագաւորութեան հանդէսին. «Իշխանն Մանովղատին եւ Ալարոյ՝ Միխայլն»²:

Մանաւղատ բերդէն քիչ հեռու կը գտնուին Մանաւղատի ջրվէժները. շուրջ 6 մետր բարձրութենէն վար կը թափի գետը՝ հրաշալի տեսարան մը պարզելով:



Մանաւղատ կամ Մագուայ քարաքարտէր:
La forteresse de Magua (Sissouan).

1. Հմմտ. Սիսուամ, էջ 309:

2. ՍՄՐԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:

ԱԼԱՐԱ ԲԵՐԴ

Ալարա ծովային կիրիկիոյ քերդերէն էր, Թուրքերը զայն կը կոչեն Ալարա-
ֆալէսի, Հայերը սովորաբար Ալարոյ քերդ կը կոչեն, իսկ եւրոպացի ուղե-
գիրները Ալլար կը գրեն: Ալարա քերդը կը գտնուէր Թէօք Տաղի լեռներէն
իջնող գետակի մը արեւմտեան ափին վրայ, Ալանիայէն Մանովղատ գացող
ճամբուն վրայ:

Այս գետակին վրայ կամուրջ մը կար՝ դէպի Ալարա հին գիւղաւանը:
Գիւղէն քիչ անդին քարաժայռի մը գագաթին կը քարձրանար Ալարա քալէսի
կոչուած քերդը, չըջապատուած կանաչագեղ պուրակներով:

Սմբատ Սպարապետ իր պատմութեան մէջ կը յիշէ Ալարոյ քերդը եւ ա-
նոր մէկ իշխանը՝ Միխայլ՝, որ տէր էր նաեւ ուրիշ քանի մը քերդերու.
1198ին Միխայլ ներկայ եղած է Լեւոնի Թագադրութեան հանդէսին. նա հա-
ւանաբար յոյն էր կամ յունածէս հայ մը, եւ Լեւոնի ճորտ իշխաններէն՝
որոնք իր հետաւոր սահմանները կը պաշտպանէին:

Մէկ անգամ կը յիշուի այս քերդը մեր պատմութեան մէջ եւ ապա ան-
ծանօթ կը մնան այդ քերդին յարող տէրերը եւ անոնց պատմութիւնը:

Թուրքերու համաձայն Ալահէտտին սուլթանը շինած է Ալարա քերդը.
Ալիշանի համաձայն՝ Թուրքերը կը շփոթին Ալայա քերդին հետ:

Ալարա քերդի շրջակայքը բարեբեր գաւտեր եղած են, ուր կ'աճէին ար-
մաւենիներ եւ սոճիի վեղեցիկ ծառեր եւ առատ բամպակ²:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՍՊԵՏ, էջ 210:
2. Սիսուամ, էջ 310:

ԲԵՐԴԻԿ ԲԵՐԴ

Բերդիկ ամրոց քերդը կը գտնուէր ծովային կիրիկիոյ շրջանին մէջ, Սե-
լեւկիոյ մօտերը. Ալիշանի համաձայն՝ «Ոչ հեռի ի սահմանացս (Պոսկանայի)
խնդրելի է եւ Բերդիկ ամրոց»: Սմբատ Սպարապետ զայն կը յիշէ. «Իշխան
Բերդկանն Միխայլն»¹, դասելով զայն Պոսկանայէն առաջ եւ Մանաչէն վերջ:

Միխայլ անունէն կը գուշակուի որ յոյն էր կամ յունածէս հայ մը: Այս
Միխայլ իշխանը նոյն չէ Միխայլ իշխանին հետ՝ որ տէր էր Մոնովղատի եւ
Ալարոյ քերդերուն, որովհետեւ այս Միխայլը առանձին կը յիշուի եւ սա
եւս ներկայ եղած է Լեւոնի Թագադրութեան հանդէսին:

Ալիշան կը համարի որ այս քերդը գուցէ նոյն քերդն է զոր կը յիշէ ա-
րար պատմիչ մը, եւ զայն Berin (Բերին) կը կոչէ, որու վրայ 1274ին կը
յարձակի Պեկպարս սուլթանը եւ կը գրաւէ²:

Միխայլ իշխանէն վերջ Բերդիկ քերդին տէր եւ իշխան կը յիշուի Լեւոն,
որուն քոյրը կնութեան առած էր Վահրամ մարաջախտ, յետոյ սակայն ար-
ձակած՝ որպէսզի ամուսնանայ Ռուբէն Բ.ի Ալիծ աղջկան հետ, որ մայր ե-
ղաւ Բրինձ Ռուբէնին (1220): Լեւոն տէր էր նաեւ Մոխրոտ քերդին, ինչ որ
ցոյց կու տայ թէ այս քերդն ալ անոր մօտ էր³:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՍՊԵՏ, էջ 210:
2. Սիսուամ, էջ 331:
3. Աճգ, էջ 547:

ԱԳ ՔԱԼԷ ԿԱՍ ԳՈՒՍ ՔԱԼԷ

Ծովային Կիլիկիոյ բերդերէն էր Ագ Քալէ = Սպիտակ բերդ, Կոռիկոսէն 10 քլմ. հեռու: Իր հին անունը մեզի անձանօթ կը մնայ: Այսօր իսկ անոր աւերակներէն մաս մը տակաւին կանգուն կը մնան. անոր շուրջ պեղումներ կատարուած չեն: Ալիշան անոր մասին քանի մը հակիրճ ծանօթութիւններ կու տայ, ըսելով թէ Ագ զալէ կը գտնուէր Լամոսի հարաւը, ծովեզերքէն երկու մղոն հեռու, երկու հսկայ ժայռերու գագաթին, քարակերտ պարիսպներով:

1. Հմմտ. Սիսուան, էջ 347:

ԿՈՎԱՍ ԲԵՐԴ

Ծովային Կիլիկիոյ բերդերէն էր Կովաս բերդը, Ալիշան կը համարի թէ կը գտնուէր Կալիւկաղնոսի գետահովիտին մէջ:

Կովաս բերդը կը յիշէ Սմբատ Սպարապետ, եւ որուն իշխանը՝ Ռոմանոս՝ ներկայ եղած է 1198ին Լեւոնի թագադրութեան հանդէսին. «Իշխանն Սինիտու եւ Կովասայ՝ Ռոմանոս»: Ռոմանոս հաւանաբար յոյն մըն էր եւ կ'ապրէր Կովաս բերդին մէջ՝ իբրեւ հպատակ իշխան մը Լեւոնի իշխանութեան:

1. Սիսուան, էջ 328:

2. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:



Սպիտակ բերդ - Ագ-ֆալէ
La forteresse Blanche (Ak-kale).

ՖԱՐՆՆՈՒՑ ԲԵՐԴ

Ֆարինուց կամ Ֆարինիք՝ բերդը կիլիկեան բերդերէն մէկն էր եւ հաւանաբար կը գտնուէր ծովեզերքի մօտերը. որոշ տեղը կը մնայ անծանօթ: Մմբատ Սպարապետ կը յիշէ անոր իշխանները՝ Մմբատ եւ Օշին, որոնք Հեթում Ա. Թագաւորին փոքայրներն էին, եւ տէր էին ուրիշ քանի մը բերդերու. «Անմատչելի դղեկին Պապեոսին, Մմբատայ կլային, Աստուայ, Ֆարխընուցին, Պապատուլին, Սիկոյ եւ Մուռանդնին»²:

1. Հմմտ. Սիսուան, էջ 64:
2. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 244:

ՍԻՒԼ ԲԵՐԴ

Մովային Կիլիկիոյ բերդերէն էր Սիւլ բերդը, որուն տէրն էր ԺԲ. դարուն վերջերքը՝ Օշին. «Իշխանն Սիւլիոյ Օշին»¹: Օշին ծանօթ Թագաւորական տան իշխաններէն էր, այս բերդը հետեւաբար կը գտնուէր Թագաւորական կալուածներու շրջանին մէջ, Պտականայի եւ Կոռիկոսի բերդերուն շարքին²:

1. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 210:
2. Սիսուան, էջ 332:

ԱՅԺՈՒՏԱՊԻ ԲԵՐԴ

Մովային Կիլիկիոյ բերդերէն էր Այժուտայ բերդը, որուն տեղը անծանօթ կը մնայ: 1198 անոր տէր եւ իշխան կը յիշուի Կեռ Վարդ, զոր կը յիշատակէ կիլիկեան պատմիչը. «Իշխանն Կալանօսօսոյ, Այժուտային, Ս. Սոփէ եւ Նաղլօնին՝ Կեռ Վարդն»¹:

1. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 219: Հմմտ. նաեւ Սիսուան, էջ 316:

ԱՏԱԼԻԱ ԿԱՄ ԱՆՔԱԼԻԱ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Ատալիա հին եւ նշանաւոր բերդաքաղաք մ'էր Կիլիկիոյ արեւմուտքը, Պամփիլիոյ ծովափոցին մէջ, որ Մոց Ատալիոյ կը կոչուի: Քաղաքը հիմնուած է ծովախորշին վրայ, եւ մաս կը կազմէ Քարային Կիլիկիոյ՝:

Ատալիա քաղաքը հիմնուած է Ատալիոս Պերպամի Թագաւորին, Քրիստոսէ երկու դար առաջ: Յայնեանց կոչուած է Ատալիա, Իտալիայի նման միջին դարուն կոչուած է Մատալիա, Satalia կամ Satalion, իսկ Թուրքերն ու Արաբները Անթալիէ կը կոչէին:

Քաղաքը հսկայ պարիսպներով շրջապատուած է Ալքիանոս կայսրէն՝ 135ին՝ Ք. Ա., որոնք Ժ. դարուն ամբողջուած են Արաբներու յարձակումներու դէմ: Քաղաքը իր պարիսպներուն վրայ ունէր երկու զանաւոր, որոնցմէ մէկը Արիանոսի դուռ կը կոչուի, ուր դեռ մինչեւ այսօր կանգուն է հսկայ քառակուսի աշտարակ մը, մէջը ունենալով քաղաքի սենեակներ, պահակներուն համար: Իուր երեք մուտք ունի, զարդարուած կոթական երեք սիւներով. դրան տեքը շատ գեղեցիկ է: Իսկ երկրորդ դուռը, որ պարիսպներուն արեւելեան կողմին վրայ կը գտնուի, զարդարուած է, քաղաքի առիւծաքանդակներով եւ ասպետական նշաններով:

Քաղաքէն վէս ժամ հեռու հրաշալի ջրվէժ մը կ'իջնէ՝ 100 մետր բարձրութենէ, եւ սնցնելով քաղաքին մէջէն՝ կ'երթայ կը Մատիի ծով:

ՊԱՏՄԱԿԱՆ

Ատալիա սպաստանած է Պոմպիլոս իրինոջ հետ, Ն. Ք. 48 թուականին, յետ պարտուելու Փարսալիոյ պատերազմին: 132ին Ն. Ք դարն ամբողջովին կը գրաւեն Հռոմէացիները եւ իրենց տէրութեան մարդ կ'ընեն, եւ Պամփիլիոյ մայր քաղաքը կը հռչակեն, եւ իրենց գլխաւոր նաւահանգիստը կ'ընեն:

Ժ. դարուն Պաշակիւնները երբ արեւելք վրե գան, Ատալիան նոյնպէս կը գրաւեն եւ իրենց նաւերուն նաւահանգիստը կ'ընեն, դէպքի Պարեատին երթալու համար: Սակայն սեպտեմբ Թուրքերը Գլըն Արսլանի առաջնորդութեամբ

1. Ատալիոյ մասին տես՝ Սիսուան, էջ 302-311:



Անթալիա քաղաքին Ադրիանոսի դրամ մուտքը եւ իր աշտարակը:
Antalya: Portail d'Hadrianus et sa tour.

1207ին կը գրաւեն: ԺԴ. դարուն Ատալիա Օսմանեան կայսրութեան մաս կը կազմէ²:

1471ին Ատալիան Վենետիկցիները կը գրաւեն, տւթսունհինգ նաւերով, անոնք կու գան իրենց հրետանիով՝ կը խորտակեն նաւահանդիստին շղթաները եւ կը տիրեն քաղաքին, աւարի կու տան քաղաքը եւ կը քանդեն քաղաքին արուարձաններն ու արտաքին պարիսպները, սակայն չեն կրնար գրաւել քաղաքին միջնաբերդը: Երբ կը դառնան՝ իրենց հետ կը տանին նաւահանդիստին շղթաները՝ նուէր Հռոմի Սուրբ Պետրոս եկեղեցիին:

Ատալիոյ հին լինակիչները յոյներ եղած են, մօտակայ կղզիներէն եկած եւ հոն հաստատուած՝ ԺԲ. դարուն: Երբ հոս կը հասնին Արաբները, Յոյները կը փախչին մօտակայ կղզիները: Այս մասին կը գրէ Միխայիլ Ասորի. «Եկեալ թուրքացն եւ պտեալ գերկիրն Ատալիոյ... լինակութիւն առեալ դադարեցին ի տեղւոջն»³:

ԺԱ. դարուն Հայերն ալ գաղթելով, մանաւանդ Անիէն, կու գան եւ կը հաստատուին Ատալիոյ մէջ, այնպէս որ Սաչակիրներու ժամանակ Կապա-

2. DENOEL, p. 150.

3. ՄԻՆԱՑԷԼ ԱՍՈՐԻ, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870, էջ 403:



Անամուր բերդը իր աշտարակներով:
La forteresse d'Anamour et ses tours (CEDCAM).




Անթալիա քաղաքի հնագույն դռները:

Antalya: les portes les plus anciennes de la ville.

դովերա գարտի մեծ համայնք մը կը կազմեն: Անարգարայի դղերակին մէջ գտնուած մէկ արձանագրութեան կ'երևի որ Մեծն Լեւոն ծովեզերքէն յառաջանալով տիրած է Ատալիոյ գոնէ ժամանակ մը:

Մեր պատմիչները, սակայն, չեն յիշատակեր Ատալիոյ գրաւումը Մեծն Լեւոնէն, եւ ոչ ալ անոր կորուստը: Քաղաքին պարիսպներէն մէկուն վրայ գտնուած է ատիւձաքանդակ մը, նման Լեւոնի առիւծին, սակայն առանց թագի. ուստի Մեծն Լեւոնի բանակները կրնանք ըսել թէ հասեր են անոր պարիսպներուն տակ. բայց որոշ ջենք կրնար ըսել թէ Ատալիա Լեւոնի թագին մաս կազմած չլլայ, մինչեւ որ չքննուին քաղաքին յիշատակարանները:


Սակայն Լեւոնի յաջորդները կ'իշխէին այս կողմերուն, ինչպէս կ'ըսեն արեւմտեան պատմիչները. անոնք կ'ըսեն թէ Հելթուս Բ. հինգ մեծ յաղթանակներ տարած է Պամփիլիոյ մէջ:




Անթալիա քաղաքի բարձրագույն մուտքը:
Antalya: entrée du théâtre.



Անթալիա եւ իր հին Հայր Մեռուդի եկեղեցին:
Antalya: la vieille église du Père Noël.



Անթալիա քաղաքը եւ իր ամփիթատրոնը:
Ville d'Antalya: son théâtre.



Անթալիոյ նաւահանգիստին ընդհանուր տեսարանը:
Vue générale du port d'Antalya.




Հիմ վերնապիտակի քարտեզը:
Plan de la vieille ville d'Antalya (Denoeil).

ՍԻԴԷ

Սիդէ Պամփիւլիոյ ծովախորշին վրայ շինուած բերդաքաղաքներէն մէկն է, կանգնած թերակղզիի մը վրայ: Շինութեան պատմութիւնը հին է եւ առասպելախառն: Սիդէի մէջ հայկական ոչ մէկ հետք կամ արձանագրութիւն գոյութիւն ունի, հետեւաբար դժուար է հաւատալ որ հայկական ըլլայ անոր պարիսպներուն եւ միջնաբերդի շինութիւնը: Քաղաքը ունի փոքր դռներ, մէկը ծովուն առջեւ եւ երկուքը ցամաքին վրայ կը բացուին: Յամաքին վրայ գտնուած պարիսպները աւելի հաստատուն շինուածք ունին, քան թէ ծովային կողմինները. պարիսպներու բարձրութիւնը կը հասնի 12 մեզրի: Պարիսպները բազմաթիւ աշտարակներով զօրացուած են, 65 մեզր իրարմէ հեռաւորութեամբ, եւ ամէնքն ալ երկյարկանի են ու ատամնաւոր: Յամաքի դուռը, որ ներկայիս քանդուած է, կ'առաջնորդէ քաղաքին մեծ հրապարակը: Քաղաքը ունի մեծ թատրոն մը, որ կրնայ 15·000 հանդիսականներ ընդունիլ¹:

1. Հմմտ. Սիսուան, էջ 308-310:



Յստակագիծ Սիդէ քաղաքին:
Plan de la ville de Sidé.

ՍՈԼԷ - ՊՈՍՊՈԼԻՍ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Ծովային Կիլիկիոյ բերդաքաղաքներէն մէկն էր Սոլէ կամ Սոլի, Յոյներէն կոչուած Σόλος, Σωλοι, Եւրոպացիներէն՝ Soli - Solopolis: Քաղաքը շինուած էր Միզիսլի կոչուած գետաբերանին մօտ, գեղեցիկ ծովախորշի մը առջեւ: Սոլէ Կիլիկիոյ հնագոյն քաղաքներէն մէկն էր:

ՊԱՏՄԱԿԱՆ

Երբ 333ին Մեծն Աղեքսանդր կը մտնէ Կիլիկիա, Սոլէ Պարսիկներու Դարեհ թագաւորի ձեռքն էր: Քաղաքին բնակիչները, որ յոյն գաղթականներ էին՝ եկած Հոռոսէն եւ հոն հաստատուած, Դարեհի կողմը կը բռնեն: Դարեհ կը յաղթուի. Աղեքսանդր կը գրաւէ քաղաքը եւ մեծ տուրքեր կը դնէ տեղացիներուն վրայ, ինչ որ նշան էր թէ քաղաքը հարուստ էր: Աղեքսանդր իր յաղթական ընթացքը շարունակելով՝ Իսոսի գաշտին մէջ կը հանդիպի Դարեհի բանակներուն. փառաւոր յաղթանակ մը կը տանի եւ Դարեհը կը քշէ հեռուները: Աղեքսանդր կը վերադառնայ Սոլէ եւ հոն աստուածներու զոհ կը մատուցանէ: Սոլէ նոյն չրջանին շատ զարգացած քաղաք մըն էր եւ գիտութեան կեդրոն, անկից ելած են գիտնականներ եւ շատ մը իմաստասէրներ:


Ք. Ա. 69ին, Պոնտոսի թագաւորը՝ Միհրդատ, Հոռոսէացիներուն դէմ պատերազմ կը մղէ, աջակից ունենալով Մեծն Տիգրան, որ իր ազգականն էր: Հոռոսէացիները կը պարտուին, իսկ Միհրդատ եւ Տիգրան կը հասնին մինչեւ Սոլէ, որ քարուքանդ կ'ընեն քաղաքը ու կը հեռանան: Երկու տարի յետոյ, Պոմպէոս կրկին կը գրաւէ քաղաքը, կ'ամրացնէ անոր քանդուած պարիսպները եւ բազմաթիւ աշտարակներով անառիկ կը դարձնէ. կը վերաշինէ քաղաքը եւ իր անունով կը կոչէ Պոմպէոպոլիս: Կը շինէ նաեւ անոր նաւահանգիստը, ձուածեւ, կանգնելով պատուանդան մը, որուն վրայ հաւանաբար կար իր արձանը եւ կամ շաստուածուհիի մը:

525-6ին սաստիկ երկրաշարժ մը քարուքանդ կ'ընէ Սոլէ քաղաքը, ու այնուհետեւ ասերակներու կոյտի մը կը վերածուի. կը մնան կանգուն 40ի չափ սիւներ, որոնք կ'երկարին նաւահանգիստէն մինչեւ քաղաքին հիւսիսային պարիսպները, անցնելով քաղաքին մէջէն: Այսօր իսկ տակաւին կանգուն

են անոր պարիսպներէն մասեր եւ բազմաթիւ աշտարակներ: Քաղաքէն դուրս կան բազմաթիւ գերեզմաններու մնացորդներ, ինչ որ ցոյց կու տան թէ քաղաքը բազմամարդ էր: Քաղաքին շրջակայքը հողաբլուրներու վրայ կան բազմաթիւ բերդերու մնացորդներ:

Զարմանալի է որ մեր Կիլիկեան թագաւորութեան շրջանին չի յիշուիր այս նշանաւոր հին քաղաքը եւ ոչ ալ անոր իշխանները, ինչ որ նշան է թէ աւերակ էր եւ զուրկ պատմական արժէքէ:

Սուրէ կամ Պոմպէուպոլսոյ մասին Ալիշան հաւաքած է զանազան մանր տեղեկութիւններ՝:



Յատակագիծ Պոմպէուպոլսոյ:
Plan de la ville de Pompeupolis (Sissouan).

ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱԿ - ԻՍԿԵՆՏԵՐՈՒՆ

Սեաւ կամ Ամանոտեան լեռներուն մէջ, Դրունք Կիլիկիոյ եւ կամ Ասորոց կոչուած լեռնանցքին հարաւը, ծովեզերքին ափին շինուած էր Աղեքսանդրոսեակ փոքրիկ քաղաքը, Իսոսի դաշտէն եւ Պաղլաս բերդէն 16 քմ. հեռու:

Սա Մեծն Աղեքսանդրի շինած քաղաքներէն մէկն է, 331ի Իսոսի պատերազմին Պարսիկներուն վրայ տարած փառաւոր յաղթանակին առթիւ, եւ իր անունով կոչած է՝ Աղեքսանդրիա. եւ որպէսզի զանազանուի Աղեքսանդրիա միւս շինած քաղաքներէն, զայն կոչած են՝ «Աղեքսանդրիա առ Իսոսի» կամ «Աղեքսանդրիա Կիլիկիոյ»:

Միջին դարուն ընդհանրապէս ուղեգիրները «Փոքր Աղեքսանդրիա» (Alexandria Minor) կը կոչէին, զանազանելու համար մեծ Աղեքսանդրիայէն, իսկ նուազական մասնիկով՝ «Ալէքսանդրէթթա» (Alexandretta): Ալիշան զայն կը կոչէ «Աղեքսանդրեակ», իսկ թուրքերը՝ «Ժակէնտէրուն»: Այսօր Իսկէնտէրուն 70.000 բնակիչ ունի, որոնք կը զբաղին վաճառականութեամբ:

Աղեքսանդրեակ որքան որ հին քաղաք էր, սակայն պատմութեան մէջ նշանաւոր քաղաք մը եղած չէ, այնպէս որ հիները չեն յիշեր անոր անունը: Կիլիկիոյ հայ իշխանութեան օրով, կապ մը ունեցած չէ մեր իշխաններուն եւ թագաւորներուն հետ, մեր պատմիչներն ալ չեն յիշեր զայն:

1097ին, երբ Պաշակուրտներու առաջին խումբը կը հասնի Կիլիկիա Տանգրէտի առաջնորդութեամբ, կը յիշուի թէ Աղեքսանդրեակ կը գրաւեն Արարներու ձեռքէն: Մերձակայ լեռնաքնակ գիւղերու հայ եւ թուրք ժողովուրդը երբ կ'իմանայ այս եղելութիւնը՝ կ'ուրախանան, եւ նուէրներով կը դիմաւորեն Տանգրէտը:

Հայկական Կիլիկեան իշխանութեան վերջին շրջանին, այն է 1347ին, մեր Կոստանդին Բ. թագաւորը Հոռոսի ասպետներու օգնութեամբ՝ կը յարձակի Աղեքսանդրեակի վրայ ու կը գրաւէ քաղաքը Եզիպտացիներու ձեռքէն:

Այսօր Աղեքսանդրեակ նորաչին քաղաքին հարաւը, քառորդ ժամ հեռու՝ կը գտնուի հին Աղեքսանդրեակ քաղաքը, ուր կը տեսնուին բազմաթիւ աւերակոյտեր եւ պարիսպներու մնացորդներ: Այս աւերակոյտերուն մէջ կիսականգուն կը մնան բերդի մը մնացորդները, պարիսպներ, աշտարակներ, զոր տեղացիները կոփրէտի բերդ կը կոչեն, հաւանաբար Պաշակուրտներու առաջնորդ Կոֆրէտէն շինուած ըլլալուն համար:

1. Սիսուան, էջ 348-350:

**ԵՓՐԱՏԱԿԱՆ ԲԵՐԴԵՐ
ԵՒ ԲԵՐԴԱՔԱՂԱՔՆԵՐ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Եփրատ՝ Բարձր Հայքի Կարնոյ քաղաքի հիւսիսային լեռներէն բխելով, կ'իջնէ Կարնոյ դաշտը, եւ հոս Սեւ ջուր կը վոչուի. ապա դառնալով դէպի արեւմուտք՝ կը կտրէ Տաւրոսեան լեռներու վերջին մասերը, եւ հարաւ դառնալով՝ կ'իջնէ Ծաղկանց լեռներու խոր ձորերը, կը դառնայ դէպի արեւմուտք, ապա դէպի հարաւ, եւ հոն կ'ընդունի իր մէջ Արածանի գետը. Խարբերդի շուրջը շրջան ընելով՝ կը շեղի Միջագետքի դաշտերը, կը մօտենայ Պաղտատի, ուր միանալով Տիգրիսի՝ կը կոչուի Եւֆրատ-Տիգրիս, որ կը թափի Պարսից ծոցը, շուրջ 200 քիլոմետր ճամբայ կտրելով:

Եփրատի ոլորտապտոյտ ընթացքին վրայ կը բարձրանան քաղամթիւ քաղաքներ եւ բերդաքաղաքներ, որոնք Հայկական Կիլիկիոյ մաս չեն կազմած, սակայն ժամանակ մը անոնք հայ իշխաններու պատկանած են: Դարերու ընթացքին՝ Վասպուրականէն, Անիէն փախչելով սելճուք թուրքերէ՝ իջած են հարաւ եւ Եփրատ գետի ափին եղող քաղաքներուն տիրելով՝ իշխեր են անկախ, ձեւացնելով հայկական քաղաքներ. այսպէս՝ Մալաթիա, Ծովք, Խարբերդ, Մարաշ, Պիրէճիկ, Սամուսատ, Այնթապ, Կառկառ, Քեսուն եւայլն, որոնք եղած են հայաբնակ քաղաքներ, կառավարուած հայ իշխաններէն: Արդ, մենք պիտի խօսինք Եփրատի ափերուն եղած քաղաքներու մասին:

Անիի թագաւորութեան կործանումէն վերջ, հայ ժողովուրդը անտէր ու անտիրական, ձգեց իր գեղեցիկ քաղաքը Անին ու գաղթեց մաս մը արեւմուտք, մաս մը դէպի հարաւ, առաջնորդութեամբ հայ իշխաններու, որոնք եկան եւ տիրացան Եփրատի ափին եղող քաղաքներուն, շինեցին բերդեր եւ գոնէ ժամանակ մը կրցան պաշտպանել իրենք զիրենք եւ ազատ անկախ ապրիլ. այսպէս՝ Փիլարտոս նշանաւոր հայ իշխանը՝ իրեն կեդրոն ըրաւ Մալաթիան, Ապիրատ՝ Ծովք դեակը, Գող Վասիլ՝ Քեսունը եւ Թորոս՝ Ռապանը:

Իսկ ժամանակ մը վերջ Եփրատի ափին բարձրացաւ Հայոց կաթողիկոսարանի բերդը՝ Հոռմկլայ եւ ուրիշ քաղաքներ: Ռուբէն հայ իշխանը Կիլիկիոյ բնակներուն վրայ հիմ դրաւ Ռուբինեան իշխանութեան, եւ քրք Արեւմուտքէն Ուստիկիները հասան, հայ իշխանները անոնց թեւ թիկունք եղան, փառաւոր անուն մը թողով մեր պատմութեան մէջ: Ռուբինեան իշխանութիւնը զօրանալով՝ հայ իշխանները իր հովանիին տակ առաւ եւ տիրեց մինչեւ Եփրատի ափերուն եղող հայկական քաղաքներուն: Հայ ժողովուրդը շարունակեց ապրիլ այդ եփրատական քաղաքներուն՝ մինչեւ 1915 թուականը: Ահա թէ մենք ինչո՞ւ կը ստորագրենք Եփրատեան բերդերն ու բերդաքաղաքները:

ՀՈՌՄԿԼԱՅ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Հոռմկլայ Կիլիկիոյ արեւելեան տահմանին վրայ, Եփրատական հողամասին նշանաւոր բերդերէն մէկն էր, կը բարձրանար Եփրատի ափին եղող ապառաժ բլուրի մը կատարին: Ունէր անառիկ դիրք, շրջապատուած՝ մէկ կողմէն Եփրատի եւ միւս կողմերէն՝ Մարզման կամ Մէրզմէն գետակի ջուրերով:

Հոռմկլայ, ինչպէս անունը ցոյց կու տայ, հոռմէական կամ բիւզանդական կայսրութեան շրջանին կառուցուած բերդերէն մէկն էր. այսօր իսկ անոր ակերակները կը տեսնուին Եփրատի ափի ժայռերուն վրայ եւ թուրքերը զայն Ռուսզալէ կը կոչեն: Անոր անցեալը մութ կը մնայ եւ շինութեան թուականին մասին պատմութեան մէջ տուեալներ չունինք. հետեւաբար պիտի գոհանանք այն համառօտ ծանօթութիւններով՝ որ մեզի կ'աւանդեն հայ թէ օտար ճանապարհորդներ:

Մխիթարեան աշխարհագիր վարդապետներէն Հ. Ղուկաս Ինճիճեան կը գրէ Հոռմկլայի մասին.

«Ռուսզալէ, հին ատեն Հոռմկլայ, ԺԲ. դարուն անուանի բերդ մըն էր, մէկ օրուան ճամբով հեռու էր Պիրէճիկէն, եւ գրեթէ երկու օրուան ճամբով՝ Ուրֆայէն. շինուած էր ապառաժի մը դազաթին վրայ, կատարեալ թերակողմ մըն էր, երեք կողմերէն շրջապատուած ըլլալով Եփրատի եւ Մարզման գետակի ջուրերով: Եփրատ կ'անցնի անոր ստորոտէն, իսկ հիւսիսէն եւ արեւմուտքէն ալ շրջապատուած է Մէրզմէն կամ Մարզման Եփրատի օժանդակ վտակով:

«Յամաքի կողմէն բերդը ապառաժ լեռ մըն է, ուղղաձիգ եւ ողորկ կողերով, կարծես մուրճով տաշուած է, անմերձենալի է մարդոց: Բերդ բարձրանալու միակ ճամբան Մարզման գետակի կողմէն է, որուն վրայ քարաշէն կամուրջ մը կայ. այս կամուրջէն մինչեւ բերդ՝ միայն անցք մը կայ, խիստ զառիվեր, որ դէպի բերդ կը տանի: Այս անցքին վրայ եօթը տեղէ քարին մէջ փորուած եօթը դռներ կը տեսնուին, մէկը միւսին ետեւէն, եօթներորդն է նոյն ինքն բերդին դուռը, որ շրջապատուած է քարաշէն ամրակուռ պարիսպներով: Ժայռերուն վրայ բարձրացող պարիսպները ամրացուած են ուղղանկիւն կտրուած աշտարակներով:



Հռոմկլայ, հիւսիս-արեւմուտէն (Հելլենէմպեր):
Rumkale, vu du nord-ouest (Hellenkemper).

«Բերդին մէջ կան աւերակ եւ անրնակ շէնքերու մնացորդներ: Բերդին մէջ ինքնարուխ աղբիւր չկայ, կը խմեն անձրեւներէն ձեւացած ջուրերը. սակայն մեր նախնիքները իրենց համբերութեամբ եւ ճարտար արուեստով՝ բնական աղբիւրին սրակասը լրացուցեր են, բերդին վատարէն մինչեւ խորը, մուրճով փորեր են գուրեր եւ ընդերկրեայ ճամբայ մը բացեր են, քառակուսի ձեւով, 360 աստիճաններով, ուսկից վար կ'իջնեն մինչեւ Եփրատի եզերքը, եւ պատերազմի ժամանակ ջուրի պակասը կը լրացնեն, առանց թշնամիէն նշմարուելու: Դէպի գետ փորուած ճամբու կէսին, մեր նախնիքները փորած են Վոզմնակի մութ սենեակ մը, որ սրբատեղի էր հայ ժողովուրդին, եւ այս պատճառով այդ սանդուխները կոչած են Սուրբ սանդուխներ: Աւանդութեան մը համաձայն, Ս. Ներսէս Շնորհալիի ժամանակ այդ սենեակը սուրբ ճղնաւորի մը բնակարանն էր, Ս. Ներսէս Շնորհալիի հոգեւոր հայրութեան խրանամբին ներքեւ ապրած:

«Բերդին մէջ երեք մեծ քարաշէն եկեղեցիներ կան, որոնք մինչեւ այսօրս տակաւին կանգուն կը մնան. Ս. Սարգիս, Ս. Գէորգ եւ Ս. Ներսէս Շնորհալի:



Անամուր քերդը ծովափին:
Vue générale de la plage de la forteresse d'Anamour (CEDCAM).




Հռոմկլայ, արեւմտեան կողմը (Հելլենեմփեր):
Rumkale, le côté ouest (Hellenkemper).

Բերդին ամէնէն բարձր մէկ դիրքին վրայ շինուած է Ս. Ներսէս Ծնորհալիի եկեղեցին, որ թագ մը կը կազմէ բերդին գլուխին, հիմէն մինչեւ գմբէթ ամբողջապէս քարաշէն, յօրինուած է հին կոթական ոճով, ներսէն մասամբ դրուագուած եւ զարդարուած քարաքանդակներով: Եկեղեցիին մէջ ծակ մը կայ, ուսկից կը նշմարուի մթին վաջր մը. կ'ըսեն թէ հոն կը գտնուի Ս. Ներսէսի մարմինը: Ամէն տարի շրջակայ գիւղերէն եւ մասնաւորապէս Ուրֆայէն՝ հազարաւոր ուխտաւորներ հոս կը հաւաքուին՝ իրենց քահանաներուն հետ, մեծ հանդէսով պատարագ կը մատուցանեն, իւրաքանչիւր անձ եկեղեցիին դրան առջեւ նստող բերդակալ պաշտօնեային կը վճարէ գումար մը:

«Ս. Ներսէս Ծնորհալիի անունը շատ յարգուած է նոյնիսկ այլազգիներէն, այնպէս որ շատեր անոր անունին վրայ երդում կ'ընեն: Այս եկեղեցիին կից կը բարձրանայ մեծակառոյց հին կաթողիկոսարանը, որ թէեւ մեծ մասով աւերակ է, սակայն այն վիճակին մէջ ալ կ'երեւի անոր սրահներուն եւ սենեակներուն մեծութիւնը:

«Հռոմկլայ բերդին մէջ կայ նաեւ մեծաշէն մզկիթ մը, որ ժամանակին




Հոռմկլայ, հայրապետական տաճարի խարխիւը (Հելլենեմփեր):
Rumkale, la base de l'église patriarcale (Hellenkemper).

Հայոց եկեղեցիներէն մէկն էր: Բերդին շուրջը վը տարածուին ընդարձակ պարտէզներ, այգիներ, որոնք Սիսի կաթողիկոսարանին մաս կը կաղմեն: Մէզմէն գետէն անդին քանի մը տուններ կան, որոնք հին քաղաքի մը մնացորդները կը համարուին եւ ցոյց կու տան թէ հոն ժամանակին քաղաք մը գոյութիւն ունէր»¹:

Սէն Մարթէն իր ճանապարհորդութեան գրքին մէջ վը գրէ. «Հայերը այս բերդը կը կոչեն Հոռմկլայ կամ Կլայ հոռմէական, Ասորիները՝ Kalaah-Roumitha, Արաբները՝ Kalaah-erroum. այս նմանօրինակ եւ նմանաձայն կոչումները ցոյց կու տան թէ բերդը հոռմէական շինութիւն մըն է»²:

1. ԻնձիճնԱն Հ. Ղ., Աշխարհացոյց երկր մասաց աշխարհի, ԱՍԻԱ, Հա. Ա., Վենետիկ, 1906, էջ 330-341:
2. SAINT MARTIN, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, Tome I, Paris, 1818, p. 186-197.




Հոռմկլայ, ջրամբար (Հելլենեմփեր):
Rumkale, la citerne (Hellenkemper).

ՊԱՏՄԱԿԱՆ

Բազրատունեաց թագաւորութեան կործանումէն վերջ, շատ մը հայ իշխաններ թողլով Անին եւ Շիրակի գեղեցիկ դաշտը, իբրեւ ապահով տեղ՝ եկան հաստատուեցան Տարսուսի բարձունքներուն վրայ, Կիլիկիոյ մէջ: Այս հայ իշխաններէն մէկն էր՝ Գոդ Վասիլ, որ իր սխրագործութիւններով՝ անուանի եղած էր եւ Բիւզանդացիներու ձեռքէն խլած էր շատ մը բերդեր եւ աւաններ, ինչպէս՝ Սարբերդի մօտ Կէօլճիւք լճակին մէջ եղող Մովք դղեակը եւ Հոռմկլա նշանաւոր բերդը: Այդ շրջանին կէս անկախ փոքրիկ իշխանութիւն մը հիմնելով՝ իր ազդեցութիւնը տարածած էր շրջակայ հայ եւ օտար իշխաններուն վրայ:

Իր ժամանակ Կիլիկիոյ արեւելեան մասին եւ Եփրատէն անդին՝ կ'իջխէին լատին իշխաններ, որոնցմէ գլխաւորն էր Եղեսիոյ Պաղատին դուքսը, որ լաւ աչքով շէր նայեր Գոդ Վասիլի գործանալուն եւ բերդերու տիրելուն. ուստի սկսաւ դաւադրութիւններով այդ հայ իշխանները մի առ մի մէջտեղէն վեր-



Հռոմկլայ, հիւսիսային կողմը (Հելլենեմֆեր):
Rumkale, le côté nord (Hellenkemper).

ցընել: Պաղտինի վատ դաւաճանութեան առաջին զոհը եղաւ՝ Կոստանդին Հայ իշխանը, ապա Բագարատ, եւ հուսկ Գող Վասիլը: Այսպէս Պաղտին եւ իր յաջորդը Ճոսիին՝ կը տիրանային Հայ իշխաններու քաղաքներուն եւ բերդերուն, որոնցմէ էր անառիկ Հռոմկլան, որ 1116էն Գող Վասիլի հողերուն մաս կը կազմէր³:

Հայոց Գրիգորիս Գ. կաթողիկոսը կը նստէր Մովք դղեակը, որ այնքան ալ ապահովութիւն չէր տար իրեն, եւ ինչ որ կ'երեւէ՝ այնքան ալ անառիկ չէր, ուստի կը մտածէ թողուլ Մովքը եւ երթալ Անի, որ նոյն ատենները գրաւած էին Վրացիները, եւ իբրեւ ապահով տեղ մը՝ հոն հաստատուիլ, ինչպէս կը պատմէ Սմբատ Սպարապետ: Գրիգորիս Գ. Կթղ. ճամբայ կ'ելլէ գէպի Անի 1150ին. այդ թուականին Եղեսիոյ կոմսն էր Պաղտինի որդին՝ Ճոսիին. ահա թէ ի՞նչ վը պրէ պատմիչը. «Տեսեալ սուրբ Հայրապետն Հայոց Տէր Գրի-

3. Հմմտ. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 226-229:



Հռոմկլայ, հիւսիսային աշտարակներէն մէկը (Հելլենեմֆեր),
Rumkale, une des tours du côté nord (Hellenkemper).

գորիս, զի այնչափ տկարացաւ զօրութիւն քրիստոնէից, եւ ինքեանք ոչ ունէին ամբողջ ապաստանի եւ ի Մովք բերդն փւրեանց երկնչէին դադարել, ապա խորհեցան գնալ յարեւելս առ Թազաւորն Վրաց, զի Անի ի ձեռս նորա էր, թերեւս անդ գտանիցեն անդորրութիւն եւ տեղի ապաստանի անկասկած ի թշնամեաց»⁴:

Գրիգոր Կաթողիկոս Անի կ'երթար՝ քննելու տեղւոյն քաղաքական կացութիւնը եւ ապահովութիւնը, հոն փոխադրելու համար վերջնականապէս Հայոց Հայրապետական Աթոռը, ուստի «Թողեալ զեղբայրն իւր զՏէր Ներսէս անդ, մինչեւ ինքն գնասցէ եւ դարձցի, եւ ապա ամենայն տոհմիւքն եւ ընչիւք գնասցեն»⁵:

Այս էր սուրբ Հայրապետին ծրագիրը, ազատել Հայրապետական Աթոռը

4. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգիրք, էջ 168:
5. ԱՅդ, էջ 168:



Հոռմկլայ, Եփրատի ափունքը:
Rumkale et le cours de l'Euphrate.

մօտալուռ վտանգէ մը եւ ապահով տեղ մը հաստատել, սակայն զէպքերը՝ իր ծրագրին ուրիշ ուղղութիւն կու տան: Երբ կը հասնի Եդեսիա, կ'անցնի Թլպաչարէն եւ կ'իջեւանի Ճոսլին կոմսին զղեակը, եւ ժամանակ մը հոն կը հանդատանայ, ճամբան շարունակելու համար զէպի Անի: Ճոսլինի կինը՝ Պէթրիս, կը հետաքրքրուի Հայրապետին ճամբորդութեան մասին, եւ երբ կ'իմանայ որ Անի կ'երթար, հայրապետական Աթոռը հոն փոխադրելու համար, որովհետեւ Մովսէս զղեակը ապահով չէր եւ թշնամիներէ շրջապատուած եւ շարունակ առաջդիներուն արշաւանքներուն ենթակայ էր, կը հանդարտեցնէ Հայրապետը՝ քաջալերելով եւ խոստանալով անոր տրամադրութեան զինել Հոռմկլայ՝ իր անառիկ բերդը, որ Թլպաչարէն շատ ալ հեռու չէր, որպէսզի նեղ պարագային՝ կարենային իրեն օգնութեան համար իրենց զինուորներով: Սմբատ Սպարապետ կը գրէ այս մասին. «Իսկ ի գնայն Տէր Գրիգորի՝ պատահեաց զի գնաց ի Թլպաչար եւ տիկինն Ճոսլինն անդ էր, եւ հարցանէր ընդ սուրբ Հայրապետն զպատճառս գնալոյ... արգել գնա... տալով նմա զանձատչելի բերդն Հոռմկլայ ի բնակութիւն»⁶:

6. Անդ:



Rumkale, le paysage.
Հոռմկլայի բնութիւնը:

Հոս պատմիչը ուրիշ մանրամասնութիւններ չի տար, Գրիգոր Կաթողիկոս տիկինը խօսքերէն համոզուած՝ կը փերադառնայ Մովսէս եւ իր եղբոր կը պատմէ Թլպաչար հասնելը եւ Ճոսլինի կնոջ խոստումը՝ իրենց տալու Հոռմկլայ բերդը՝ իբրեւ ապահով ապաստանարան եւ կաթողիկոսորան⁷:

1150-1151ին ժամանակները Հայոց հայրապետական Աթոռը Մովսէս կը փոխադրուի Հոռմկլայ. կան պատմիչներ՝ որոնք այս փոխադրութիւնը կը դնեն 1147ին, իսկ Ալիշան՝ 1151ին:

Շնորհալին «Բան Հաւատոյ» քերթուածին յիշատակարանին մէջ ոչ միայն այս կը յիշէ, այլ եւ գեղեցիկ կերպով նկարագրութիւն մըն ալ կ'ընէ Հոռմկլային.

«Ի յանառիկս ամրոց հասեալ,
Հոռմկական կլայն յորջորջեալ,
Յորմէ նախնի տերանցն ելեալ
Յահէ նեղչացն փախուցեալ.

7. Անդ, էջ 168-169:




Եփրատ գետը:

Le fleuve Euphrate
serpentant entre
les montagnes.

Ըզսա կամաւ սրմին տուեալ
Լինել յաւէտ սեփականեալ:
Արդ յայսպիսում ժամանակի
Դառնն եւ դրժնեայ եւ անբարի
Յորում քնակեմք յայսմ ամբողջի
Ի քետապատ քարանձաւի,
Ի յեփրատայ պարագրելի
Որ յԱրքենայ քառորդ հոսի
Յելից կուսէ հեղիկ շարժի,
Եւ ի միւս փոքուէ մըտիւք պատի.
Ինքս ամբարձեալ իբր Ըգիտի
Յալեաց ծովուց ոչ երկնչի,


Ի մարդկանէ ոչ զարհուրի,
Ձի է հնարից անյաղթելի.
Ձոր տնօրիչն ամենայնի
Տեղ պատրաստեաց ապաւինի,
Սուրբ աթոռոյս ըսքանչելի
Ի բարկութեան ժամանակի.
Յորում նեղիմք յանօրինաց
Ի յարտաքին չար դազանաց,
Եւ ոչ նըւազ ի դըրժանաց
Ի սուտանուն քրիստոնէաց.
Յորոց փրկիչն մեր կենաց
Մինչեւ ցայսօր ամբողջ պահեաց,
Որք եւ յապայն ժամանակաց
Յանձն եղիցուք նորին կամաց՝:



Հռոմկլայ Եփրատի ափին՝ իր աշտարակով:

La forteresse de Rumkale au bord de l'Euphrate et sa tour.

8. ՇՆՈՐՀԱԼԻ Ն., Բամբ չափաւ, Վենետիկ, 1830, էջ 224:



Հռոմկլայ բերդին մուտքը:
La porte de Rumkale.

Գրիգորիս Կաթողիկոս ժամանակ մը Հռոմկլայ նստելէ վերջ՝ երբ կը տեսնէ որ բերդը ամուր, անառիկ եւ ապահով է, 1150ին զայն կը գնէ Ճոսլինէն եւ այդ թուականէն՝ պաշտօնական կաթողիկոսարանը կ'ըլլայ Հռոմկլայ բերդը: Գրիգորիս Գ. Կթղ. հոն կը շինէ փառաւոր տաճար մը, զոր Կիրակոս պատմիչ զմայլանքով կը նկարագրէ ու կ'անուանէ «եկեղեցի հրաշագարդ դժբեթաւոր»:

Հռոմկլայ այդ թուականէն յետոյ կարեւոր կեդրոն մը կ'ըլլայ եկեղեցական ու զրական տեսակէտով, հոն կը ծաղկին հայ գիրն ու գրականութիւնը, մանրանկարչութիւնը, հոն կը ծաղկանկարուին բազմաթիւ ձեռագիր Աւետարաններ եւ կրօնական գիրքեր:

Ներսէս Շնորհալի հայրապետը կեանքին մեծ մասը Հռոմկլայի մէջ կ'ապրի եւ հոն ալ կը վախճանի 1172ին. այս պատճառով ան «Կլայեցի» ալ կոչուած է:

9. ԿԻՐԱԿՈՍ, էջ 83:



Հռոմկլայի տեսարան մը Եփրատի ափին:
Une vue de Rumkale donnant sur l'Euphrate.

Հռոմկլայի մէջ գոռմարուած են երկու եկեղեցական ժողովներ, 1178ին եւ 1179ին, Յոյն Եկեղեցւոյ հետ միութեան հարցը քննելու. Ներսէս Եպս. Լամբրոնացի այս վերջին ժողովին մէջ կարեւոր ճառ մը խօսեց է:

1292ին Սուլթան Աչրաֆի առաջնորդութեամբ՝ Արաբները Կիլիկիա կ'արշաւեն. կը պաշարեն Հռոմկլայ բերդը, ուր մեծ բազմութիւն մը ապաստանած էր շրջակայ գիւղերէն:

Հեթում Բ. Թազաւորին քեռի՝ Ռէյմունդի հրամանատարութեան տակ, բերդը 33 օր քաջութեամբ կը դիմադրէ, բայց Թաթարներէն ակնկալուած օգնութիւնը չհասնելով, եւ սովէն նեղուած, կը ստիպուին անձնատուր ըլլալ: Գալաւուն խան թէեւ շատ զայրացած էր բերդին իր դէմ ցոյց տուած յամառ դիմադրութեան, մտադրած էր առնել բերդը ի գին ամէն գոհողութեան եւ բնակիչները սուրէ անցընել. սակայն Կաթողիկոսին եւ ուրիշ երեւելիներու խնդրանքին վրայ՝ կը խնայէ բնակիչներու կեանքին. կը կողպատէ բերդը, իսկ Ստեփանոս Կաթողիկոսն ու բազմաթիւ հայեր, որոնց թիւը կ'ըսեն թէ կը հասնէր Երեսուն հազարի, կը տանի Եգիպտոս, անոնց հետ նաեւ Ս. Լուսաւորիչի Աջը: Այս մասին կը գրէ ժամանակագիր մը. «1292ին Աչրաֆ սուլ-



Եփրատ գետին անցք դէպի Հռոմկլայ
Passage sur l'Euphrate vers Rumkale.

Թանն էառ գհայրապետական ղղեակն զՀռոմկլայն եւ գերեաց զկաթողիկոսն Տէր Ստեփաննոս»¹⁰ :

Ուրիշ Ժամանակադիր մը կու տայ Հռոմկլայ բերդի գրաւման մանրամասնութիւններ. «Բերդը պաշարողները Համացի արարներ էին, որոնք բերդին մօտիկ բարձրացող լեռան կատարէն յարմար դիրքով կը հարուածեն բերդը. բերդին մէջ եղողները խուճապի կը մատնուին, կը յուսահատին եւ կը ստիպուին անձնատուր ըլլալ. կը ներկայանան Աշրաֆին եւ հաշտութեան պայմաններ կ'առաջարկեն: Սուլթանը կ'ընդունի անոնց պայմանները եւ կը խոստանայ խնայել ներսիներու կեանքին. կը բանան դռները, եւ ժողովուրդը առանց արիւնահեղութեան կը թողու բերդը եւ կը հեռանայ. Հռոմկլայ կը զրաւուի: Հռոմկլայի բերդին պաշարման եւ գրաւումին ներկայ եղած է Ապուլֆէտայ պատմիչը»¹¹ :

Աւելի ուշ Հռոմկլայ կ'առնեն Արարներու ձեռքէն օսմանցի Թուրքերը, եւ այդ օրէն Հռոմկլայ մաս կը կազմէ Օսմանեան կայսրութեան:

10. ՅԱԿՈՒԲԱՆ Վ. Ա., Մամր ժամանակագրութիւն, Հտ. Ա., Երևան, 1951, էջ 86-92:
11. Անդ, էջ 181:

Ժամանակի ընթացքին անոր բնակիչները կամաց կամաց կը գաղթեն անլի ապահով շրջաններ, Հռոմկլայ կը լքուի եւ աւերակ կը դառնայ»¹² :

Հռոմկլայի յիշատակը հայ Ժողովուրդի սրտէն կը մնայ անջնջելի. Այնթապ քաղաքի մօտիկ ըլլալով՝ շրջանի հայութիւնը մեծ հաւատքով եւ կրօնական խոր զգացումով կապուած կը մնայ Հռոմկլայի բերդին, ուր շուրջ 150 տարիներ, նստեր են Հայոց լուսազարդ կաթողիկոսները եւ հոն ծաղկեցուցեր են հայ գիրն ու գրականութիւնը, եւ լուսաւոր պահեր են հայ հասարակութեան: Տարւոյն մէջ օր մը անոնք հոն կ'անցընէին, ուխտի կու գային մոմեր կը վառէին, մատաղներ վ'ընէին, խունկ եւ աղօթք կը բարձրացնէին անոր աւերակներուն մէջէն երկինք. եւ այսպէս գոնէ միսիթարուած՝ տուն կը վերադառնային: Այնթապի հայութիւնը Հռոմկլայն կ'անուանէր «Տէր Երսէսի բերդ»:



Եփրատ գետը:
Le fleuve Euphrate (Denoël).

12. ԶԱՄԶԵԱՆ Հ. Մ., Պատմ. Հայոց, Հտ. Գ., էջ 71-72:

ԾՈՎՔ ԴՂԵԱԿ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Մեր պատմութիւնը եւ յիշատակարանները երկու Ծովք զղեակներ կը մատնանշեն, երկու զանազան տեղերու մէջ, առաջինը՝ Չորրորդ Հայքի Մոփաց աշխարհին մէջ, Պարբերդէն շուրջ 25 քմ. հեռու, Մաստառ եւ Հագար Պապա լեռներու գոգին մէջ ձեւացած, Ծովք լճակի մէջ եղող կղզիին վրայ. Թուրքերը այսօր զայն Կէօլճիւք կը կոչեն. իսկ երկրորդ Ծովք զղեակը՝ աշխարհագէտները եւ երկրախոյրները կը դնեն Անտիոքի իշխանութեան տակ եղող Տլուք գաւառին մէջ: Այս երկու ենթադրութիւններու պաշտպանները, իրենց պատմական եւ տրամաբանական փաստերը կը բերեն, հաստատելու համար որ Ս. Ներսէս Ծնորհալի իրենց երկրին մէջ եղող Ծովք զղեակին մէջ ծնած է:

Արդ հարց է թէ այս երկու կարծիքներէն ո՛րն է ճիշտը, Ս. Ներսէս ո՞ր Ծովքի մէջ ծնած եւ ապրած է:

Նախ տեսնենք թէ ո՞ւր կը գտնուէր Պարբերդի Ծովք զղեակը, եւ թէ ինչո՞ւ Ծովք կը կոչուէր:

Պարբերդի կամ Չորրորդ Հայքի մէջ եղող Ծովք զղեակը իր անունը առած է Ծովք լճակէն:

Ծովք լճակի մէջ եղող Ծովք զղեակին անունին առաջին անգամ կը հանդիպինք Պորենացիի ընծայուած աշխարհագրութեան մէջ, ուր հեղինակը կը գրէ. «Բալահովիտ գաւառ, եւ ի մտից նոցա՝ Ծովք, եւ Անձիթ գաւառ ի հարաւ, յորում Ծովք եւ Հոռէ բերդ»¹: Հոս աշխարհագրութեան հեղինակը կը խօսի նախ լճակին անունով Ծովք կոչուած գաւառի մասին. եւ ապա կ'անդրադառնայ մասնաւորապէս այդ շրջանին մէջ եղող բերդերու մասին, որոնցմէ երկուքը կը յիշատակէ, Ծովք եւ Հոռէ բերդերը:

Երկրորդ յիշատակութեան մը Ծովք զղեակի մասին՝ կը հանդիպինք ԺԲ. դարուն գրուած յիշատակարանի մը մէջ, ուր կը կարդանք. «Ի Թուականիս Հայոց ՇԾԵ (1106) ի դառն եւ նեղ ժամանակին, յորում տարամերժեալ էր սուրբ Հայրապետն Տէր Բարսեղ փ բուն աշխարհէն եւ յԱթոռոյն իւրոյ սե-



Եփրատ գետի վրայ ձգուած Յար կամուրջը եւ մամբան որ դէպի Խարպուդ կ'երկարի, դէպի Ծովք դղեակը:
 Vue du pont sur l'Euphrate et de la route vers Kharpout et vers la forteresse de Zovk.

փական, եւ իջեալ բնակէր ի սահմանս Չորրորդ Հայոց ի դղեակն Ծովք անուն»²:

Այս երկու պատմական յիշատակութիւնները վերլուծելով, կը տեսնենք որ պատմագիրները Չորրորդ Հայքի մէջ կը դնեն Ծովք դղեակը, եւ կրնանք ըսել թէ հոս կասկած չկայ՝ որ խօսքը Ծովք լճակին մասին է, որ հիմա Թուրքերը Կէօլճիւք կը կոչեն: Նմանապէս այս վկայութեան մէջ զղեակ մը կը յիշուի Ծովք անունով, որ հաւանաբար լճակին մէջ երկարող հրուանդանին վրայ կը գտնուէր (Թերակղզի մը), ուր Անիէն կու գայ Տէր Բարսեղ Կաթողիկոս եւ հոն կ'ապաստանի, քանի կային շատ մը հայ իշխաններ: Բարսեղ Կաթողիկոս Անիի Սերճուքներէն գրաւուելէն ետք կ'երթայ կ'ապաստանի Աղթա-

1. ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Աշխարհացոյց, Վենետիկ, 1881, էջ 30:

2. ՅՈՎՍԷՓԵԱՆ Գ., Յիշատակարան Չնուարաց, էջ 303:



Ծովք լճակը:
Le lac de Zovk (Denoël).

մար, ուր տարի մը կեննալէն վերջ՝ կ'անցնի «յԱթախ եւ Հէնի, յԱկլ եւ յԱրդնի, զի վային անդ հայ իշխանք»³:

Հոս յիշուած Արզն՝ Խարրեբրդի շրջանին մէջ եղող Արզն է, որ հիմա Արզանա ալ կը կոչուի, շատ մօտիկ Ծովքի. պատմութեան մէջ Ծովք լճակը՝ Ծովք Արզնի կամ Արզնի կը կոչուի:

ՊԱՏՄԱԿԱՆ

1106ին Բարսեղ Կաթողիկոս կու գայ Ծովք, իբր աւելի ապահով տեղ, որովհետեւ բնակուած եւ վառավարուած էր հայ իշխաններէ, իշխաններ՝ որոնք անշուշտ Բարսեղ հայրապետին ծանօթ էին, կամ ազդականներ՝ որոնք կրնային զինքը ընդունիլ, ապա թէ ոչ ինչո՞ւ դիմէր անոնց պաշտպանութեան:

Բարսեղ հայրապետ Ծովք գլխաւոր ապաւինելով, Աղթամարցիներէն կը պահանջէ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջը, քօղը եւ գաւազանը, որոնք կ'ենթադրենք թէ Անիէն իր հետը բերած էր: Աղթամարցիները կը մերժեն: Բարսեղ Կաթողիկոս առանց Ս. Աջին եւ գաւազանին, Ծովք գլխաւոր կը հովուէ իր հօտը: Ծովք գլխաւոր կ'ըլլայ կերպով մը Հայոց Կաթողիկոսարանը, մինչեւ որ Բարսեղ Կաթողիկոս դժբախտ պատահարով մը կը վախճանի: Բարսեղ իր մահէն առաջ, ժամանակ կ'ունենայ իրեն յաջորդ կարգելու 15ամեայ Ա-

3. Անդ, էջ 420:



Անամուր բերդին ընդհանուր տեսարանը:
Vue générale de la forteresse Anamour (CEDCAM).

պիրատի որդին եւ Ս. Ներսէս Ծնորհալիի եղբայրը՝ Գրիգորիս Կաթողիկոսը: Յիշատակարանը ուրիշ մանրամասնութիւններ չի տար, սակայն որոշ է գրուածն էն որ Գրիգորիս կը նստի իբրեւ Կաթողիկոս Մովք զղեակին մէջ, ուր էր Բարսեղ Կաթողիկոսի ժամանակ Հայոց Հայրապետական աթոռը, թէ ո՞րքան ժամանակ Մովք զղեակը կաթողիկոսարան եղած է եւ Գրիգորիս յաջորդը հոն նստած է իբրեւ կաթողիկոս՝ որոշ քան մը ջենք կրնար լսել, քայց որոշ է որ Գրիգորիս Կաթողիկոս բաւական երկար ժամանակ նստած է Խարբերդի Մովք զղեակին մէջ, որովհետեւ կը գրէ յիշատակագիրը՝ թէ «յետ ամաց զԱջն սուրբ եւ զթողն եւ զգաւազանն գողացան յԱղթամարայ եւ ապա փոխեցան ի Հոտմկլայն»⁴:

Ինչպէս վերեւ ըսինք, Ծովքն Արգնու ըսելով յիշատակագիրը կը հասկնայ Խարբերդի Մովք լճակի զղեակը, որուն մօտ էին Ակլ, Հէնի, Արդնի կամ Արդնի հարկական կեդրոնները, ամէնքն ալ քնակուած հայ իշխաններէ:

Ո՞վ էր այդ ժամանակ Խարբերդի Մովք զղեակի տէրը կամ իշխանը, որուն քով կ'ապաստանի Տէր Բարսեղ Կաթողիկոսը: Պատմիչները կ'ըսեն թէ Մովք զղեակի եւ իր շրջանի գիւղերուն եւ աւաններուն վը տիրէր՝ Ապիրատ Պահլաւունի, որուն ազգական էր Տէր Բարսեղ, անոնք երկու քոյրերու որդիներ էին, ուստի շատ բնական էր որ ան իր նեղ օրերուն ապաստանէր իր ազգականին մօտ, անոր Մովք զղեակը, իբրեւ ապահով վայր մը:

Թէ ե՞րբ Ապիրատ թողած է իր հայրենական Բջնի ամրոցը եւ ապաստանած Մովք, ջենք գիտեր, հաւանաբար սելճուք Թուրքերու արշաւանքի շրջանին, միւս շատ մը հայ իշխաններու հետ:

Սելճուք Թուրքերը, սակայն, գրաւելով Արեւելեան Հայաստանը, շուտով կը հասնին Մոսկաց աշխարհը: Հայ իշխանները ժամանակ մը լեզու վը գտնեն եւ կրնան անոնց կողքին խողաղ ապրիլ. սակայն մէջ ընդ մէջ հոն ալ կոխները անպակաս էին, այնպէս որ անգամ մը խումբ մը թուրքեր կու գան եւ կը պաշարեն Մովք զղեակը՝ ծովէն ու ցամաքէն: Ապիրատ իշխանը Մովք զղեակի պարիսպներուն վրայ ելած կը գննէ շուրջը, առանց վահանի եւ առանց ինքնապաշտպանութեան. յանկարծակի ծովէն, թուրք մը նետահար գայն կը վիրաւորէ եւ երեք օր վերջ կը վախճանի:

Այս մասին Ս. Ներսէս Ծնորհալի կը գրէ իր Վիպասանութեան մէջ.

«Յորժամ ետես ունայնացեալ,
 Ի վահանէն որով ծածկեալ,
 Երեքթեւեան եռաթունեալ
 Յանկարծակի զնա հարեալ,
 Որ ի ծովին յայն պատահեալ,
 յԱշտարակէն յոր վերելեալ,
 Ի բախմանէն ստորակայեալ,
 Եւ գյաղթանդամըն ջախջախեալ:

4. Աճգ, էջ 422:




Ծովք լճակը և համանուն գիւղը:
Le lac de Dzovk et le village homonyme.

Յորմէ այլովք վերամբարձեալ,
...
Ոոցմամբ վիրացըն տազնապեալ,
Եւ յետ փոքու վերափոխեալ⁵:

Գրիգորիս Կաթողիկոս իր Ներսէս եղբօր հետ կը հովուեն իրենց ցրուած հօտը՝ Ծովք գոթակին մէջ նստած: Ժամանակ մը վերջ, երկու եղբայրները իրենք զիրենք ապահով չգտալով՝ կը թողուն զայն, եւ երթալով դէպի արեւմուտք՝ կ'ապաստանին նոյն ժամանակի նշանաւոր Գող Վասիլի հողերուն մէջ: Գող Վասիլ կ'ուրախանայ եւ իրենց հողեր կու տայ Տլուքի շրջանին մէջ, ուր կը շինեն իրենց յարմար փոքրիկ բերդ գոթակ մը եւ իրենց հին Ծովք գոթակի անունով զայն կը կոչեն Ծովք գոթակ: Այս գոթակը ծովուն հետ կապ չունէր, ցամաքին վրայ էր, սակայն կը կրէր իրենց հին գոթակին անունը: Գրիգորիս այս ցամաքային Ծովք գոթակին մէջ կը բնակի իր եղբօր հետ շուրջ երեսուն տարիներ:

5. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Վիպասանութիւն, էջ 602-603:



Ծովք լճակի մէկ մասը, իսկ հեռուն՝ Հազար Պապայի ձիւնապատ գագաթը:
Lac de Dzovk: Vue partielle donnant au loin sur les sommets enneigés de Hazar Papa.


Ծովքի՝ Ծովք գոթակը ժամանակի ընթացքին, լճակի ջուրերուն բարձրանալով, մեծ մասով քանդուեց եւ ջուրերուն տակ մնացեր է, սակայն մինչեւ 1800ական թուականները, կը գրեն ճանապարհորդները՝ թէ երբ լճակին ջուրերը կը քաշուէին, կ'երեւէին պարիսպներու եւ ապարանքներու մնացորդներ: Պարբերով Ծովք գոթակը դարերով իբրեւ Ս. Ներսէս Շնորհալիի ծնընդավայր՝ ուխտատեղի եղած է Պարբերովի եւ Ծովքի շրջակայ գիւղերու հայ ժողովուրդին:

Այս մեր պատմական տուեալները կու գան հաստատել շատ մը ճանապարհորդներ, որոնք ականատես եղած են եւ այցելած Ծովք լճակը. այսպէս Սրուանձտեանց Գ. Վ., որուն գրած տողերը Ծովք գոթակի մասին՝ շատ յուզիչ են եւ կը հաստատեն մեր բաժնեկրները:


Ան կը գրէ. «Մեծին Հայաստանի Չորրորդ Հայք նահանգին գաւառներէն մին է Ծովք աշխարհը, Ծովք Մեծ, գրուած նաեւ Ծովք, անուանի եղած է Շնորհալիի հօր տոհմին եւ անոր եղբայրներուն բնակավայր եւ կաթողիկոսարան: Իսկապէս Ծով կամ Ծովք մը կայ Պարբերովի Արդնու եւ Մալաթիոյ լեռանց միջեւ, բայց Պարբերովի կը վերաբերի եւ աւելի անոր մօտիկ է՝ իբրեւ 6 ժամ:

«Ես կը կարծեմ թէ Ծովք կամ Ծովք՝ է Ծովիկ բառը, սա իր մէջ ունէր դղեակ մը, ուստի եւ անուանուած է Ծովք դղեակ: Հոս Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ ազգին շնորհքն ծագած է: Հոն ծնած, շնչած, լացած, երգած եւ աղօթած է Ներսէս Շնորհալի. ուստի եւ իմ այս անգամին ուղեւորութեանս ամենամեծ շահս եղաւ հանդիպելու, երկրպագելու այս ծովակին եւ դղեկին ջրոց եւ տաճարին աւերակներուն, ուր ամէն ինչ շնորհալի է»⁶: Այսչափ Խարբերդի մօտիկ եկող Ծովք լճակի ափին եղող Ծովք դղեակի մասին: Սակայն մեր պատմութեան մէջ կը յիշուի ուրիշ Ծովք դղեակ մը եւս:

6. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ Գ. Վ., Քորոս Ազար, 1879, էջ 96-98:



Խարբերդի Ծովքը, կզգին եւ անոր վրայ շինուած Ս. Նշան եկեղեցիին աւերակները:
Dzovk, Lac de Kharberd, l'île et les ruines de son église.



Ծովք լճակը եւ Անտիտի լեռները:
Le lac de Dzovk et les montagnes d'Antzit.

ԾՈՎԲ ԴՂԵԱԿ ՏԼՈՒՔԻ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Այս դղեակի մասին կը հանդիպինք Գրիգոր Երեցի, Մատթէոս Ռուհա-
յեցիի Պատմութեան շարունակողին քով, որ կը յիշէ Ծովք դղեակ մը եւ
զայն կը դնէ Ալեքսայ երկրին մէջ. «Յայսմ ամի (1161) տէրն Անտիոքու...
եկն յաւուրս աշնանային, և և յանհոգս եղեալ իջանէր Ալեքսայ երկիրն, ի
բերդն կաթողիկոսին՝ որ կոչի Ծովք»⁷:

Դարձեալ, աւելի ուշ, 1173ին գրուած յիշատակարանի մը մէջ կը կար-
դանք. «Բայց այնու ժամանակաւ, զետեղեալ ունէին զկայանս բնակութեան
տեառն Գրիգորիսի տիեզերալոյս կաթողիկոսի եղբարքն Ներսէսիւ յերկիրն
Անտիոքայ, ի գաւառին Սղբոյ, ի փոքր դղեակն Ծով կոչեցեալ...»⁸: Ասոր
նման վկայութիւն մը ևս կը գտնենք Սոփեբքի մէջ, ուր Ծովք մը կը յիշուի
Տլուքի շրջանին մէջ⁹:

Շնորհալին ալ «Բանք հաւատոյ»ի յիշատակարանին մէջ կը գրէ Ծովք
դղեակի մը մասին.

«Ս Ծով անուն դղեակն ելեալ
Ձոր սեփական ինքեան շինեալ,
ի յանառիկս ամրոց հասեալ,
Հռոմէական կլայ յորջորջեալ»¹⁰:

ՊԱՏՄԱԿԱՆ

Վերեւ մէջբերուած քանի մը Յիշատակարանները աչքի առջեւ ունենա-
լով, կարգ մը բանասէրներ, Ծովք դղեակ մը եւս կը դնեն Տլուք գաւառին
մէջ: Այիշան երկու Ծովք դղեակներու մասին կը գրէ. «Գրիգորիս եւ Ներսէս
երբ լսեցին Անոյ նորէն նուաճելն ի Փատլուսէ, յամին 1125, ելան եկան իրենց

7. Մ. ՌԻՌԶԱՅԵՏԻ, էջ 544:
8. ՅՈՎԱԿԻՄԻԱՆ Գ. Վ., Յիշատակարան Ձեռագրաց, էջ 428:
9. Սոփեբք Հայկականմբ, ԺԴ, էջ 45-46,
10. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Բամբ Հաւատոյ, Վենետիկ, 1928, էջ 241:

Ճանդեան տեղը եւ հայրենի տունը ի Ծով, զոր հայրերնին Ապիրատ ամրա-
ցուցեր էր. իրենք ալ նորէն նորոգելով՝ հոն հաստատեցին քառորդ դարու
մ'ալ Հայաստանեայց տապանակը. որով հարկ է մեր եկեղեցական աշխարհ-
հազրութեան մէջ նշանաւոր կէտ մը սեպել զայս, եւ սրբազան յիշատակներ
ալ փնտոել հոն: Այլ դժբախտաբար եւ ոչ իսկ տեղն որոշակի կրնանք նշմա-
րել. վասնզի թէ ինչուան հիմա կը կարծուէր թէ այս տեղս պիտի ըլլայ Պար-
բերդի եւ Արդնոյ միջոց եղած Ծովք լճին մէջ, որ հիմա Կէօլճիւկ կ'ըսուի
յայլազգեաց, սակայն հին պատմչաց կարճ յիշատակներն եւ քաղաքական
վարչութիւնք ժամանակին՝ չեն ներեր այսքան հեռու տեղ փոխադրել մեր
հայրապետները եւ իրենց Աթոռը. վասնզի եթէ այն (Պարբերդու) կողմերն
ազատ ու հանգիստ ըլլային Թուրքաց ձեռքէն՝ աւելի յարմար եւ աւելի կե-
դրոնագոյն հայկական տեղ մ'ալ կրնային երթալ մեր հայրապետք, ինչպէս
որ փափագէին իսկ. իսկ եթէ Թուրքաց իշխանութեան տակ էին (եւ էին հա-
ւաստեալ) չէին կրնար հոն երթալ: Արդէն այն սակաւ պատմական յիշա-
տակքն, եւ նոյն իսկ Շնորհալին թէ՛ վիպասանութեան մէջ, թէ՛ 30 տարի
ետեւ Հաւատոյ բանին յիշատակին մէջ՝ զԾով միշտ դղեակ կ'ըսէ, եւ ոչ
երբեք լճի նկարագիր կու տայ: Ուրեմն այս տեղս իրենց առջի բնակած տե-
ղէն՝ Սեաւ լեռանց վանքերէն՝ շատ հեռու չէր: Աթոռն քիչ քիչ կամ իբր ոտն
առ ոտն կը տեղափոխէր. հաւանօրէն Մարաշու և Անթապու միջոց տեղ մ'էր.
վասնզի հաստատութեամբ կ'ըսուի որ Անտիոքայ Լատին իշխանութեան սահ-
մանն էր, ևս յատուկ պաւստն Տլուք կ'ըսուէր, եւ տաքարիւն ձօսէին փոսնկ
իշխանին կալուած էր. գուցէ ուրիշ Կէօլճիւկ լճի մը մօտ (Կեալուր Կէօլ-
ճիւկ), ուր եւ հնախօս աշխարհագիրք դնեն զՏլուք աւանն: Թէպէտ բաւա-
կան ամուր էր տեղն, այլ ոչ շատ եւ ոչ ալ ընդարձակ, վասն զի Փռք դղեակ
կոչուի, այլ այն ատեն իրենց համար յարմար ևս չափաւոր երեցաւ. իսկ
մեզ համար շատ ցանկալի է հետաքննութիւն թէ՛ այս տեղուոյս եւ թէ՛ բոլոր
Սեաւ Լեռանց քաղմաթիւ վանորէից, որք ԺԱ-ԺԳ. դարուց Հայոց ամէնէն
սրբազան եւ դիտնական դարդարքն էին. եւ որոց վրայ այսօր Թանճր վարա-
դոյր մը քաշուած՝ կը ծածկէ, ո՞ գիտէ որպիսի եկեղեցեաց եւ շինուածոց
նշխարքներ...»¹¹:

Այիշանի Ծովքի դղեակի մասին այս տողերը քննութեան արժանի են.
ինքը ևս կասկածով կը մօտենայ այս հարցին, քանի որ երկուքին ալ նպաս-
տաւոր եւ աննպաստ փաստեր կը գտնուին պատմութեան յիշատակարանե-
րու մէջ: Բարգէն Կաթողիկոս Կիւլէսէրեան, Այիշանի հետեւերով՝ Ծովք դը-
ղեակը կը դնէ Այնթապի հիւսիսը, Սօֆ կոչուած լեռներուն ստորոտը: Կիւ-
լէսէրեանի կարծիքին եւ տեղագրութեան հակառակ կը գրէ Տոքթ Թ. Տէր
Ղազարեան իր «Հայկական Կիրիլիոյ տեղագրութիւն»ը գործին մէջ, փաստօ-
րէն ցուցնելով որ Ծովք դղեակը՝ ոչ թէ Սօֆ լեռներու ստորոտը կը գըտ-
նուէր՝ այլ Մարաշի հիւսիսը՝ Կէօլ Պաշի կոչուած լճակի ափին¹²:

11. ՇՆՈՐՀԱԼԻ ևս քաղաքայ իւր, էջ 95-97:
12. Հմմտ. Տէր ՂԱԶԱՐԵԱՆ Թ., Հայկական Կիրիլիա, էջ 97-100:

Այս Ծովք գղեակը կը գտնուէր, ըստ պատմագիրներուն, Գող Վասիլի հոգեբուն մէջ, ուր բնակեր են Գրիգոր Կաթողիկոս եւ Ս. Ներսէս Ծնորհալի՝ պրեթէ երեսուն տարիներ, Պարբերդի Ծովք գղեակէն հոն փոխադրուելէն ետք:

Արդ, մեր կարծիքով, Տլուքի Ծովք գղեակը ժամանակագրական տեսակետով ուշ շրջանի շինութիւն է, որովհետեւ, ինչպէս տեսանք, Բարսեղ Կաթողիկոս Ախթամարէն նախ կու գայ Պարբերդի Ծովք գղեակը 1125ին, ուր կային հայ իշխաններ, եւ Ծովքի իշխանն էր Ապիրատ Պահլաւունի: Իրենց հօր մահէն վերջ է որ Գրիգորիս եւ Ներսէս կը փոխադրուին Գող Վասիլի հողերուն մէջ, եւ անկէ հող ստանալով, նոր «տեփական» գղեակ մը կը շինեն, ի յիշատակ իրենց Պարբերդի Ծովք գղեակին՝ կը կոչեն Ծովք, թէեւ այս Ծովքը ջուրէ հեռու էր, ցամաքային գղեակ մըն էր: Այս ցամաքային Ծովք գղեակին մէջ կ'ապրին անոնք մինչեւ կաթողիկոսարանին Հոռմկլայ փոխադրուելը:

Այս Տլուքի Ծովք գղեակը պատմական եւ աւանդական անցեալ մը ունեցած չէ, այլ յիշուած եւ մոռցուած է. սակայն Ծովքաց Աշխարհի Կէօլճիւկի Ծովք գղեակը դարերով ապրեր է ժողովուրդին սրտին եւ յիշողութեան մէջ. ստիկա նշան է թէ յիշատակագրին աւանդածը հիմ ունի: Աւանդութիւնը զօրաւոր փաստ մըն է: Մինչեւ 1915ի օրերուն Ծովքի շրջանին մէջ ապրող հայ ժողովուրդը այսպէս կը հաւատար, այսպէս ընդունած էր փրենց նախնիքներէն՝ թէ Ս. Ներսէս Ծնորհալիի ծննդավայրը եղած է Ծովք գղեակը. անոնց համար այդ գղեակը իր Ս. Նշան եկեղեցիով՝ սրբատեղի մըն էր. մինչդեռ Տլուքի կամ Կէօլ Պաշիի Ծովք գղեակը՝ շարունակ չէ ապրած ժողովուրդին սրտին մէջ. ինչ որ նշան է՝ թէ այդ տեղերը կարեւոր կայան եղած չեն մեր սուրբ Հայրերուն եւ հայրապետներուն:

Արդ եղբակացնելով կրնանք ըսել թէ պատմութեան համաձայն Չորրորդ Հայքի, Ծովքաց Աշխարհի, Պարբերդի մօտ եղող Ծովք գղեակը՝ եղած է Ս. Ներսէս Ծնորհալիի ծննդավայրը: Իրենց հօր Ապիրատի մահէն վերջ, անոնք անապահով զգալով իրենք զիրենք, պաշարուած եւ նեղուած թուրքերէն, կը թողուն զայն եւ կ'երթան դէպի արեւմուտք, Գող Վասիլի, որմէ ասպնջականութիւն կը գտնեն: Գրիգորիս Կաթողիկոս հոն կը շինէ ուրիշ գղեակ մը եւ զայն Ծովք կը կոչէ, ի յիշատակ իրենց պատմական Պարբերդի Ծովք գղեակին:

Հոն կ'ապրին որոշ ժամանակ մը, մինչեւ որ դարձեալ նեղուած շրջակայ թուրքերէն, Գրիգորիս կ'որոչէ փոխադրել իր Աթուր Անի. սակայն բախտի բերումով, կը հանդիպի Ճօալինի կնոջ՝ որ կաթողիկոսին միտքը կը փոխէ, խոստանարով իրեն տալ հօր եւ ապահով Հոռմկլայ ամրոցը, ուր կը փոխադրուին 1150ին:

Այսօր Պարբերդի Ծովք գղեակէն ոչ մէկ հետք կամ աւերակ մնացեր է, լճակի ջուրերը ծածկեր են այդ փառաւոր անցեալով յիշատակարանը¹³:

ՄԱՐԱԷ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Հալէպէն 220 քլմ., Այնթապէն 85 քլմ. հեռու, Տաւրոսեան լեռներու ծոցին մէջ կը գտնուի Մարաշ, լեռնային Կիլիկիոյ նշանաւոր բերդաքաղաքներէն մէկն էր, պատմական փառաւոր անցեալով եւ ճոխ յիշատակներով:

Մարաշ կոչուած է նաեւ Գերմանիկ, ի պատիւ հռոմէացի զօրավար Գերմանիկոսի, որ հռոմէական կայսրութեան շրջանին՝ այս հողամասին կառավարիչը եղած է, քաղաքը վերանորոգած, շէնցուցած եւ իր անունով Գերմանիկ կոչած է:

Զարմանալի է որ մեր պատմիչները քիչ կը խօսին Մարաշի նման քաղաքի մը մասին. իսկ թէ քաղաքը պարսպապատ էր եւ իր ներքնաբերդն ալ ունէր՝ հազիւ խօսք կ'ընեն: Ականատես անձ մը՝ հետեւեալ կերպով կը նկարագրէ ներկայ վիճակը. «Մարաշի կեդրոնը բլուրի մը վրայ կը բարձրանայ հնադարեան Մարաշի բերդը, որ կը կարծուէր թէ բիւզանդական շինութիւն է. քառակուսի ձեւով, եւ քաղաքը շրջապատուած էր հզօր պարիսպներով եւ քառակուսի աշտարակներով: Բերդին վրայ դարերով խնամք տարուած չէր, վայրի խոտեր եւ թուփեր ծածկեր էին ամբողջ բերդին մակերեսը: Ներսի հարթ մակերեսը երբեմն գործածուեր էր իբրեւ զինուորական զինավարժութեան տեղ: Հարաւարեւելեան կողմը ունէր դուռ մը, որուն վրայ կար բարձրաքանդակ առիւծ մը»: Մեծն Լեւոնի վերջին յիշատակն էր որ դարեր վերջ տակաւին կը մնար այդ պարիսպին վրայ:

1800ական թուականներուն, Հ. Ղ. Ինճիճեան կու տայ Մարաշի նկարագրութիւնը հետեւեալ կերպով. «Մարաշ շինուած է Ախրրտաղի կոչուած լեռան հարաւային կողին վրայ, ձիհուն գետէն 3 ժամ հեռու, Այնթապէն՝ 12 ժամ, իսկ Ուրֆայէն՝ 48 ժամ: Մարաշ բերդաւոր քաղաք մըն էր, որուն բերդը կը բարձրանար բլուրի մը կատարին վրայ: Մարաշ աշխարհի ամէնէն առատ ջուր ունեցող քաղաքներէն մէկն է, քաղաքին ամէն անկիւնին վրայ աղբիւրներ կան, ամէն տուն իր առատ եւ համեղ ջուրը ունի, եւ քաղաքին մէջ ալ մշտահոս աղբիւրները շատ են: Քաղաքին մէջէն գետակ մը կ'անցնի, որուն վրայ կան քանի մը կամուրջներ. գետակը քաղաքը երկուքի կը բաժնէ,

13. Հմմտ. ՍՄՐԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 107-108: ԶԱՄՁԵԱՆ, Պատմ. Հայոց, Հտ. Գ., էջ 72:

1. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ ԳՐ. Հ., Մարաշ, Նիւ Եօրք, 1934, էջ 230:

մէկ կողմը կը կոչուի Տուլ Ղատըլի, իսկ միւս կողմը՝ Պայազուլի: Մարաշի մէջ շատ հայեր կ'ապրին, շուրջ 2000 տուն, նոյնքան ալ թուրքեր, 30-40 տուն ալ հրեայ: Մարաշ քաղաքը իր բերդէն զատ մասնաւոր հնութիւն չունի, նշանաւոր է իր էսքի սերայը, տւր փաշան կը նստի. ասոր մօտ է Եէնի սերայը, զոր շինած է Օմար փաշան, Տուլ Ղատըլի թաղին մէջ:

Նշանաւոր է Մարաշի շուկան իր առատութեամբ, վաճառքի ճոխութեամբ. մարդիկ հոն կը գրադին ներկարարութեամբ եւ կտաւագործութեամբ. ամէն տուն իր շուկանոցը ունի, սանտրագործներ ալ պակաս չեն: Բաղէչէն եւ Տիարպեքիւրէն վերջ նշանաւոր է Մարաշի կտաւ ներկելու գործը, մանաւանդ վարմիր մանածը:

«Հայերը վեց եկեղեցիներ ունին. Ս. Աստուածածին՝ Հայոց թաղին մէջ, Ս. Գէորգ՝ Եէքէր տէրէի մէջ, Ս. Սարգիս՝ Բիւմպէթի մէջ, Գառասուն Մանուկ՝ Պաղչաճուխի մէջ, Ս. Ստեփանոս՝ Պանդարմայի մէջ, Ս. Կարապետ՝ Աղտէրէնի մէջ: Մարաշ՝ առաջ Ձէյթունի մաս կը կազմէր, բայց վերջը անցած է Սիսի եւ ունի իր առաջնորդը՝ որ Մարաշի մէջ կը նստի»²:

Հետաքրքրական է հարցնել թէ ի՞նչ կը մնայ այսօր հին Մարաշէն. այս հարցումին կը պատասխանէ ամէնէն վերջին ճամբորդը՝ Denoël Փրանսացի ուղեգիրը՝ որ կը գրէ. «Մարաշ պղծիկ քաղաք մըն է 65-000 բնակիչով, Անդիտարոսի լեռներուն ստորոտը. ունի ներքին բերդ մը՝ որ կը տիրէ քաղաքին վրայ. բերդը բոլորովին քայքայուած է այսօր, շատ խեղճ պանդոկներ ունի, իր փառաւոր անցեալէն շատ քիչ բան մնացեր է: Բերդին մէջ փոքրիկ հնադիտական թանգարան մը կայ (հիթիթեան արձաններու), քանի մը իսլամական յուշարձաններ՝ ոչինչ արժէքով: Նշանաւոր է իր Ուլու ճամին (ԺԵ. դար) փայտէ զարդերով, Պաթուհիէ ճամի եւ Լա Թաշ Մէտրէսի»³:

1915-1918ի պատերազմին Ֆրանսացիները գրաւեցին Մարաշը, սակայն վատարար ձգեցին ու հեռացան, հայ փողովուրդը թողլով ահաւոր աղէտի մը առջեւ, որ հազարաւոր զոհեր խղեց:

ՊԱՏՄԱԿԱՆ

Մարաշ իրրեւ քաղաք շատ հին է, մեր թուականէն 1400 տարիներ առաջ՝ եղած է Հիթիթներու մայրաքաղաքը, եւ արձանագրութիւններուն մէջ կոչուած է Կուրկում: Հիթիթները Փոքր Ասիոյ բնիկներն էին եւ մեծ կայսրութիւն մը հիմնած, Կուրկումը իրենց իշխանութեան կարեւոր կեդրոններէն մէկն էր եւ հաւանաբար շինուած է Ք. Ա. ԺԳ. դարուն:

Նինուէի կործանումէն վերջ, Ք. Ա. 607ին այս կողմերուն կը տիրեն Պարսիկները եւ Մարաշը կ'ըլլայ իրենց գինուորական կեդրոններէն մէկը:

Մեծն Արեքսանդրի արշաւանքով դէպի Արեւելք, Փոքր Ասիոյ վրայէն, Մարաշ եւ ուրիշ քաղաքիւր քաղաքներ կ'իյնան անոր իշխանութեան տակ:

2. Ինձիձեւն Ն. Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Մասն Ա., Հա. Ա. Ասիա, Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 372:
3. DENOEL, Turquie, Guide-Atlas, էջ 197-198:



Մարաշ եւ իր սիջնաքերը:
Maraş et sa citadelle.

Մակեդոնական իշխանութեան գաւառներէն մէկը կ'ըլլայ Մարաշ: Արեքսանդրի մահէն վերջ, 323ին, Մարաշ իր շրջանով մաս կը կազմէ Սելեւկեան իշխանութեան. Միխայէլ Ասորի պատմագիրը կը գրէ թէ Սելեւկիոս Նիկանոր զօրավարը շինած է շատ մը քաղաքներ եւ բերդեր, եւ անոր կը վերագրէ նաեւ Մարաշի շինութիւնը. «Եւ սա կատարեաց զշինուածն Անտիոքու, եւ շինեաց զՍելեւկիա, զԲերիա՝ որ է Հալք, զԲալու, զՄարաշ, եւ քնակեցոյց ի նոսա հրեայս...»⁴: Սելեւկիոս Նիկանոր հաւանաբար նորոգողը եղած է Մարաշի եւ ուրիշ քաղաքներու. Սելեւկեան իշխանութեան օրով Մարաշ բարգաւաճ քաղաք մը եղած է եւ գինուորական կեդրոն:

Սելեւկեան իշխանութեան քայքայումէն վերջ, Ք. Ա. 100ին, Մարաշի շրջանին մէջ կը կազմուի Կուսմազդինեան իշխանութիւն մը եւ Մարաշը կ'ըլլայ այս իշխանութեան գաւառի կեդրոնական քաղաքը, մինչեւ 73 Ք. Վ.: Երբ Հռոմէական արծիւները իրենց ճիրաններուն տակ կ'առնեն Փոքր Ասիան, Մարաշ եւս կ'ըլլայ Հռոմէական կայսրութեան գաւառային քաղաքներէն մէկը եւ գինուորական կեդրոն՝ դէպի Արաքսի հովիտը տանող Հռոմէական լեզէոններուն ճամբուն:

4. Միեւսեւ ԱՍՈՐԻ, էջ 73-74:

Հոռոմէական կայսրութեան բաժանումով, Փոքր Ասիա կ'իյնայ Բիզանդական կայսրութեան ձեռքը: Այս շրջանին Մարաշի մէջ կը տարածուին քրիստոնէական զանազան աղանդներ, այնպէս որ կ'ըսեն թէ Նեստոր Մարաշի եպիսկոպոսն էր, նախ քան Պոլսոյ պատրիարք ըլլալը:

779ին Մարակինոսները կ'ողողեն եւ կ'անցնին Բիզանդական կայսրութեան սահմաններէն ներս եւ կը տիրեն ընդարձակ շրջաններու, ամբողջ Փոքր Ասիա գրեթէ իրենց ճանկերուն մէջ կ'իյնայ, վը պրասեն բազմաթիւ քաղաքներ ու բերդեր, որոնց մէջ նաեւ Մարաշը:

Մարաշ 100 տարի կը մնայ Արաբներու ձեռքը. 877ին Վասիլ Մակեդոնացի կայսրը փորձ մը կ'ընէ գրաւելու Մարաշը. կու գայ մեծ բանակով մը եւ զայն կը պաշարէ, արիւնյալի կռիւներ վը մղուին Մարաշի շուրջը. Վասիլ սակայն չի կրնար Մարաշը գրաւել եւ կը վերադառնայ Պոլիս: 967ին Կոստանդին Պոսիլոստէն կայսրը գարձեալ կու գայ Փոքր Ասիա եւ կը պաշարէ Մարաշը, քարընկէց մեքենաներով կը հարուածէ քաղաքին հօր պարիսպները, եւ անձրեւոտ գիշեր մը սանդուխներ զնելով՝ անոր զօրքերը կը յաջողին բարձրանալ պարիսպներուն վրայ եւ գիրկընդիտան կռիւէ մը վերջ Արաբներուն հետ, կը գրաւեն քաղաքը. անհամար գերի եւ աւար թողոյով՝ Արաբները վը քաշուին դէպի Միջագետք եւ հոն պատնէշներ վը բարձրացնեն կայսեր յաղթական ընթացքը կեցնելու համար:

Արաբներու կատարած արշաւանքի պատմութիւնը Կիլիկիոյ վրայ եւ անոնց մղած պատերազմներու նկարագրութիւնը՝ մեզի տուած է արաբ պատմագիր Պէլլատհոր, որ անձամբ այս կռիւներուն մասնակցած է եւ ազանատես եղած:

Պէլլատհոր իր պատմութեան գրքին մէջ կը խօսի Մարաշ, Հատաթ եւ Կիլիկիոյ սահմանագլուխի ուրիշ քաղաքներու մասին. իր շահեկանութեան համար զայն հոս կը մէջբերենք.

«Վը պատմուի թէ Ապու Ռւպայտա իսին ալ-Ճաուհ, մինչ Մանպըճ կը գտնուէր, ուղարկեց Սալլուտ իսին ալ-Ռուպիտը Մարաշի վրայ տու գրաւեց բերդը, անոր բնակիչները հեռացան, ու կործանեց քաղաքը:

«Մոֆիան իսին Աուֆ ալ-Ղամըտի երբ 30ին (650) արշաւեց Յոյներուն վրայ, մեկնեցաւ Մարաշի կողմէն ու շրջեցաւ Յոյներու երկրին (Փոքր Ասիա) մէջ:

«Մուլավիէ շինեց Մարաշ քաղաքը ու զայն զինուորներով լեցուց: Երբ մեռաւ Եզիտ իսին Մուլավիէ՝ Յոյներու արշաւանքները բազմացան Մարաշի վրայ: Այն ատեն զինուորները ուրիշ տեղ գացին»⁵:

Պէլլատհոր ցոյց կու տայ թէ Մարաշ շարունակ ձեռքէ ձեռք անցած է եւ թէ կարեւոր քաղաք մըն էր Անդիտաւրոսի լեռներուն ստորտը եւ զինուորական կեդրոն:

Երբ 967ին Կոստանդին Պոսիլոստէն կայսրը Մարաշը վերջնականապէս կը գրաւէ, հիւսիսային Հայաստանէն հայ իշխաններ փրենց ընտանիքներով

5. Բազմավեպ, 1963, էջ 153-154:

եւ զինուորական ուժերով կու գան եւ կը հաստատուին Կիլիկիոյ մէջ, ու իբրեւ քաջ զինուորականներ՝ կայսեր համակրանքը կը շահին եւ հոն կը ստանան հողեր ու բերդեր: Ռոմանոս Դիոգինէս կայսրը 1071ին պատերազմի կ'երթայ Մանազկերտի վրայ, զոր եկած եւ պաշարած էր Ալփասլան. Դիոգինէս կայսրը սարսափելի պարտութիւն մը վը կրէ Մանազկերտի առջեւ եւ գերի կը բռնուի:

Քիչ վերջ Մարաշ եկաւ ու պաշարեց դարձեալ Տուղրիլ պէյ: Կայսեր բանակին մէջ կը կռուէին հայ զինուորականներ, որոնցմէ նշանաւոր էր Փիլարտոս, որ յունական բանակի զօրավարներէն էր, եւ Չորրորդ Հայքի ալ ընդհանուր կառավարիչ եւ հրամանատարը: Երբ կայսերական բանակները պարտուած ետ քաշուեցան Մանազկերտէն, Փիլարտոս եկաւ Մարաշ եւ յարմար առիթ գտնելով, ինքզինքը ազատ հռչակեց եւ Մարաշի շրջանին մէջ հիմնեց հայկական փոքրիկ անկախ իշխանութիւն մը, 1071ին Մարաշը ընտրելով իրեն իբրեւ կեդրոն եւ մայրաքաղաք:

Կայսրը աչք գոցեց այս արարքին վրայ, մանաւանդ թէ գովեց Փիլարտոսի ըրած կայսեր ծառայութիւնները եւ զինք Սելաստոս անուանեց:

Փիլարտոս այնքան զօրացաւ եւ ազդեցիկ դարձաւ իր շրջակայ հողերուն մէջ, որ փորձեց Մարաշի մէջ անկախ կաթողիկոսութիւն մը ստեղծել: Այս մասին կը գրէ Սմբատ Սպարապետ, թէ 1084ին Պօլտաճի անունով իշխան մը Փիլարտոսի ձեռքէն կը խլէ Ջահան գետի շրջակայ դաւառները, ուր վը նստէր նաեւ Հայոց Թէոդորոս Կաթողիկոսը. Փիլարտոս «կոչեաց զնա գալ ի Մարաշ, եւ նա ոչ կամեցաւ»: Այն ատեն Փիլարտոս կը կանչէ Յովհաննէս եպիսկոպոսը, որ նոյնպէս յանձն չ'առնէր Մարաշ գալ: Հուսկ՝ «առաքեաց եւ կոչեաց զհայր Վարազայ զՊօղոս, եւ արարին զնա կաթողիկոս Հայոց» . սակայն սա անդրադառնալով իր ապօրինի կաթողիկոսութեան վրայ, «ղկնի սակաւ աւուրց Եթող զկաթողիկոսութիւնն եւ գնաց ի վանս իւր»⁶:

Փիլարտոս, հայ իշխաններու աջակցութեամբ, ընդարձակեց իր հողային սահմանները, տիրեց Սարբերդի, Ուրհայի եւ հասաւ մինչեւ Տարօնի սահմանները, ուր կ'իջխէր Թոռնիկ՝ Մամիկոնեան իշխանը: Փիլարտոս, ընդարձակ հայկական իշխանութիւն մը հիմնելու մտադրութեամբ, Թոռնիկի առաջարկեց եւ հրաւիրեց միանալ եւ անկախ թագաւորութիւն մը հիմնել՝ Կիլիկիայէն մինչեւ Տարօն: Թոռնիկ իշխան մերժեց առաջարկը եւ պատրաստուեցաւ պատերազմի Փիլարտոսի դէմ. պատերազմը տեղի ունեցաւ Սարբերդի Ալեյուա դաշտին մէջ եւ վերջացաւ Փիլարտոսի պարտութեամբ: Թոռնիկ իշխան երբ յաղթական Մուշ վը վերադառնար՝ դաւաճան ձեռքէ մը սպանուեցաւ, սուզի մատնելով ամբողջ Տարօնը:

Փիլարտոս ձախողած իր փառասէր ծրագրին մէջ, քաշուեցաւ Սարբերդ եւ անկից ալ Մարաշ, եւ ջանաց հոն գորանալ:

Սելճուք Թուրքերը երբ Անին գրաւեցին, անկից բազմաթիւ հայ իշխան-

6. ՄՐԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգիրք, էջ 92:

7. Հմմտ. Մ. ՈՒՌԱՍԵՅԻ, էջ 248-251:

ներ փախան եւ եկան հաստատուեցան Կիլիկիոյ շրջանին մէջ. Փիլարտոս զանոնք ընդունեցաւ, Ռուբէն, Գոռ Վասիլ, Կոստանդին եւ ուրիշներ, անոնց հողեր եւ բերդեր տուաւ, եւ երբ Գաղիկ, Անիի վերջին թագաւորը, ողբերգական մահով կը մեռնէր Կիլիկիոյ բերդին մէջ, Փիլարտոս թիկունք կեցաւ Ռուբէնի եւ գովեց անոր տիրասիրութիւնը եւ Յոյներուն դէմ առած վրէժի քայլը:

Յոյները երբ փոխադարձ սպաննեցին Վասակ Պաշլուանի, որ Անտիոքի դուքսն էր, Անտիոքի հայ ազատագրուող կանչեցին Փիլարտոսը եւ անոր յանձնեցին Անտիոքի իշխանութիւնը⁸: Փիլարտոս 1083ին անցնելով Եփրատ գետը, յաղթական բանակներով գրաւեց Եդեսիան եւ հոն կառավարիչ դրաւ Պարսամ իշխանը⁹:

Միջայէլ Ասորի՝ գեղեցիկ կերպով կը նկարագրէ Փիլարտոսի եւ առաջին հայ իշխաններու կատարած քաջագործութիւնը. «Ելին ոմանք ի Հայոց արք թիւով յիսուն, և բնակէին յանապատս եւ ծեծէին զթուրքն, և առնուին ի նոցանէ ինչս ի պէտս իւրեանց: Եւ եկին յերկիրն Մարաշայ, եւ գտին անդ այր մի հայ արգաւ՝ Փիլարտոս անուն, այր անձնեայ եւ գեղեցիկ, եւ եղև նոցա գլուխ. եւ մտին յերկիրն Կիլիկիոյ: Եւ տիրեալ էր թուրքն երկրին, եւ առին ի նոցանէ բերդ մի եւ ամրացան ի նմա, եւ անտի առին զամենայն երկիրն քաղաքօք եւ բերդօք, եւ առին շուրջանակի Կիլիկիոյ աշխարհս բազումս, զՄարաշ, զՔեսուն, զԱպլաթայն եւ զՄլտնի եւ զՈւրհա՝ յայնկոյս զետոյն Եփրատայ, և զայլս բազումս»¹⁰: Պատմիչը գեղեցիկ կերպով կը պատկերացնէ եւ կու տայ հայ իշխաններուն սկզբնական կատարած դերը Կիլիկիոյ երկրին մէջ, մանաւանդ Փիլարտոսի դերը, որ գլուխ կը կանգնէ հայ իշխաններուն, Գոռ Վասիլի, Թորոսի, Ռուբէնի, Կոստանդինի եւ հողը կը պատրաստեն Ռուբինեանց իշխանութեան:

1098ին Կիլիկիա կը հասնին Սաչակիրները, որոնք երկար եւ տաժանելի ճամբորդութենէ մը վերջ կը հասնին Մարաշ, ուր զիրենք կը հիւրասիրէ թաթուլ հայ իշխանը: Ասկէ վերջ Մարաշ թատր կ'ըլլայ երկար կռիւներու, Սաչակիրներու, Իկոնիոյ սուլթանին եւ Հայոց միջեւ: Թորոս Ա. իշխանը կու գայ Մարաշի վրայ, ուր էր Իկոնիոյ սուլթանը, կը յաղթէ անոր եւ սուլթանը կը ստիպուի ընդունել Թորոսի խաղաղութեան պայմանները եւ բարեկամ ըլլալ, քաշուիլ Մարաշի շրջանէն:

1100ին դարձեալ Մարաշի մէջ կը գտնենք թաթուլ իշխանը, որ միանգամայն տեղւոյն յունական բանակին հրամանատարն էր: Անտիոքի Պեմունդ իշխանը իր բնորդի Ռուճառին հետ միացած՝ Մարաշի վրայ կու գայ. «Գնացին առնուլ զՄարաշ», կ'ըսէ պատմիչը. «եւ ոչ կարացին առնուլ ըր Մարաշ ի քաջէն թաթուլայ, որ էր հայ արգաւ»¹¹:

8. Աճդ, էջ 256:
9. Աճդ, էջ §§1-282:
10. ՄԻՆԱՍԷՆ ԱՍՈՐԻ, էջ 390:
11. ՍՄԲԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 144:

Պեմունդի Մարաշի վրայ յարձակելուն մասին աւելի մանրամասն կը գրէ Մ. Ուռհայեցի երբ կ'ըսէ. «Եւ յարուցեալ մեծ կոմսն Տոանկաց Պեմունդ եւ Ռիջարդն, ջուրորդի նորա արար ժողով գգորսն Տոանկաց եւ գային ի վերայ քաղաքին Մարաշայ, եւ պատերազմեալ ի վերայ իշխանաց իշխանին, որ սսէին նմա թաթուլ, և ինչոքէր ի նմանէ զքաղաքն Մարաշ եւ բանակեալ բազում պատերազմաւ ի վերայ նորա: Իսկ իշխանաց իշխանն առ ոչինչ համարելով զամենայն պատերազմն նորա, զի էր այր քաջ եւ պատերազմող, եւ էր բազում ազատօքն ի քաղաքն Մարաշ, եւ Պեմունդն կայր բանակեալ ի դաշտն Մարաշայ, եւ հաւանեցոյց զգաւառն իւր»¹²:

Ամբատ Սպարապետ եւս կը գրէ թաթուլի մասին. «Ի սոյն ժամանակի էր զօրասիտ մի ի Յունաց ի Մարաշ, որ էր իշխանաց իշխան, թաթուլ անուն, ընդ հրամանաւ Յունաց թագաւորին Ալէքսին, Պեմունդն... եւ Ռիջարդն, գնացին առնուլ զՄարաշ... եւ պատերազմեալ ոչ կարացին առնուլ ի քաջէն թաթուլայ, որ էր հայ արգաւ»¹³:

1115ին տեղի կ'ունենայ Կիլիկիոյ շրջանին մէջ ահաւոր եւ աղէտալի երկրաշարժ մը, զիսաւորապէս Սեաւ լեռներու շրջանին մէջ. կը քանդուին քաղաքներ, գիւղեր, վանքեր եւ քերդեր. «Փլաւ Անտիոք, Մսիս, Հարանսուր, Ապլասթայն, Ռապան, Սամուսատ եւ Մարաշ հիմն ի վեր շրջեցաւ, եւ կորեան որդիք ՍՈ (40.000)»¹⁴:

Մ. Ուռհայեցի Մարաշ քաղաքի կրած աւերումի մասին աւելի մանրամասն կը գրէ. «Կործանեցաւ... եւ Մարաշ քաղաք ահաւոր եւ կործանեցան ողիք իրբեւ քառասուն հարար, զի էր քաղաքսի քաղաք, եւ ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ մի»¹⁵:

Այս աղէտէն վերջ Մարաշ դարձեալ վերաշինուած կը գտնենք, եւ 1136ին՝ Մարաշի տէր եւ իշխան կը յիշուի Պաղտիմ, որ տէրն էր ուրիշ շատ մը բերդերու. «Եւ էր Պաղտիմ տէր Քեսնոյ, եւ Մարաշայ եւ բազում գաւառաց ի սահմանացն Մելիտիոյ մինչեւ ի դուռն Անտիոքայ»¹⁶: Պաղտիմ 1147ին Ուռհայի պատերազմին մէջ կը սպաննուի. «Ժողովեցան անորէնքն ի վերայ, եւ պատերազմաւ առին զքաղաքն, եւ սպանին զՊաղտիմ, տէրն Մարաշայ»¹⁷:

1149ին Իկոնիոյ Մաքսուտ սուլթանը Մարաշի վրայ կու գայ, երբ անոր կ'իշխէր Ճօսիմ, սա չի յանդգնիր սուլթանին դէմ ելլել, կը թողու քաղաքը պահապաններուն եւ կը փախչի. սուլթանը առանց դիմադրութեան կու գայ եւ կը գրաւէ քաղաքը. «Եկն Սուլթանն յիկոնիոյ Մասուտն ի վերայ քաղաքին Մարաշայ... և կտեալ ունայն էառ զնա»¹⁸: Մ. Ուռհայեցի Մարաշի ա-

12. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 332:
13. ՍՄԲԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 114:
14. Աճդ, էջ 143: Տես նաեւ Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 412-416:
15. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 416:
16. ՍՄԲԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 163:
17. Աճդ, էջ 165:
18. Աճդ, էջ 166:

ուումին մանրամասնութիւն մ'ալ կու տայ ըսելով. «ոչ երկարեալ ի վերայ քաղաքին Մարաշայ՝ էառ գնա, քանզի ոչ գոյին գորք ի բերդին»¹⁹:

Շնորհալի Մարաշի այս գրաւումը չափաւոր սողերով կու տայ մեզի.

«Ի ժամանակի յոյժ անբարի,
Մինչ Գերմանիկն առեալ լինի,
Ժամանեցին աշխարհի գոյժ,
Քրիստոնէից գոլով անոյժ.
Թուական Հայոց հինգ հարիւր լութ,
Նաեւ ութսուն սերկուք եւ ութ»²⁰:

Սամուէլ Անեցի վը գրէ թէ 1148ին Թորոս Բ. կը դառնայ Պոլսոյ գերու-
թենէն, եւ «Ստեփանէ ձեռնառութեամբ եղբոր իւրոյ (Թորոսի) գնաց ի Սեաւ
լեառն եւ տիրեաց ամենայն կողմանցն այնոցիկ, այլ եւ կալաւ Գերմանիկէ եւ
զՊեհեանի»²¹: Դժբախտաբար Ստեփանէ երկար չի վայելեր Մարաշի գրա-
ւումի ուրախութիւնը, Յոյները խարդախութեամբ մը կը բռնեն զինքը²²:

Հեթում Ա. 1224-1269ի ժամանակները, Թաթարներու օգնութեամբ տէր
կը դառնայ իր նախնիքներու հողերուն. «ձեռնառութեամբ Մուղալ զօրուն
էառ գերմանիկէ եւ զՊեհեանի, Թափեաց եւ զնախնեացն իւրոց զաշխարհն
զյարչտակեարն յայոց»²³:

Կիլիկիան թագաւորութեան շրջանին Մարաշ երկար տարիներ Հայոց
ձեռքը կը մնայ, Իկոնիոյ սուլթանութիւնը զօրանալով, երբ արդէն Հայոց
Կիլիկիան թագաւորութեան վախճանն էր, Մարաշ կ'անցնի սուլթաններու
ձեռքը, եւ հուսկ կ'իյնայ Օսմանեան կայսրութեան ձեռքը, եւ անոր նահան-
գային քաղաքներէն մէկը կը դառնայ: Հայերը կը շարունակեն Օսմանցիներու
ժամանակ եւս ապրիլ Մարաշի մէջ, մինչեւ վերջին աղէտը:

19. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 501:

20. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Բամբ չափաւ, Վենետիկ, 1830, էջ 361:

21. ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ, էջ 217:

22. ԱճԳ, էջ 217:

23. ԱճԳ, էջ 221:

ՔԵՍՈՒՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Քեսուն, որ կ'ըսուի նաեւ Կիսուն, Գրիգոր Երէցի համաձայն կը նշանակէ
«Վայելուչ», այսինքն է՝ «եղեցիկ քաղաք»: Լատինները զայն Ձէսում (Cen-
sum) կը կոչէին: Կը գտնուէր Ռապան գետին սեղերէն, Եփրատէն քիչ հեռու,
ուսկից ալ ջուր կ'առնէին:

Քեսուն Եփրատի արեւմտեան ափին կարեւոր բերդաքաղաքներէն մէկն
էր, եւ զինուորական կարեւոր գիրքի մը վրայ. զայն ստէպ կը յիշէ Սմբատ
Սպարապետ, ինչպէս նաեւ Մ. Ուռհայեցի: Սմբատ Սպարապետ անոր տեղն
ալ կ'որոշէ, ըսելով թէ կը գտնուէր Կարմիր վանքին մօտերը. Կարմիր վանքը
Մարաշի մօտերը կը գտնուէր, հետեւաբար Քեսուն ալ կը գտնուէր Մարաշի
արեւելեան կողմի ընդհարուն վրայ, Պեհեանի մօտ²: Քաղաքը շրջապատուած
էր այգեստաններով եւ հրաշալի դիրք մ'ունէր, առողջ օդ եւ զովարար
ջուր:

ՊԱՏՄԱԿԱՆ

Քեսուն՝ իբրեւ քաղաք, առաջին անգամ կը յիշուի 1104ին՝ Սմբատ Սպա-
րապետէն: Քեսուն՝ Գող Վասիլ հայ իշխանին քաղաքն էր, եւ պատմութենէն
գիտենք թէ ինչ գլուխաւորութիւններով եւ կռիւներով տիրած էր անոր եւ շրո-
ջակայ հողերուն: Գող Վասիլ տէր էր նաեւ «Քեսունի, Պեհեանոյ, Ռապանայ,
Փարզմանայ եւ Հոռմկլային»³, որոնք ստացած էր իր քաջութեամբ՝ նոյն
ժամանակները հոն տիրող Պարսիկներէն, եւ հզօր իշխանութիւն մը հաստա-
տած էր իր քաղաքին մէջ, այնպէս որ իր անունը ամէն կողմ տարածուած
էր, եւ իրեն կը դիմէին շատեր ու իր հովանիին տակ կ'ուզէին ապրիլ:

1107ին Պարսիկները 12.000 բանակով կը յարձակին Գող Վասիլի երկրին
վրայ. պատմիչը կ'ըսէ. «Գող Վասիլ լուեալ՝ ժողովեաց զզօրս իւր, եւ իբրեւ

1. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 524:

2. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 126:

3. ԱճԳ, էջ 122:

կորիւն առիւծու յարձակեցաւ ի վերայ նոցա, և ի սուր սուսերի մաշեցին զնոսա... և զարձան մեծաւ յաղթութեամբ ի Քեսուն»⁴: Քեսուն Գող Վասիլի մայրաքաղաքն էր:

Գող Վասիլի միայն պարսիկ ամիրաները չէ որ իրեն թշնամի ունէր, այլ նաև Անտիոքի Տանկրի կոմսը: Այս մասին վր գրեն Մ. Ուռհայեցի և Սմբատ Սպարապետ, թէ «Կոման Անտիոքոյ Տանկրի գնացին ի վերայ Գող Վասիլին, և նստեալ ի վերայ Ռապնայ էառ զնա, և գնաց ի վերայ Քեսուն»⁵: Ռապնայ ալ Գող Վասիլի քաղաքներէն մէկն էր, զոր վր կորսնցնէ, սակայն Գող Վասիլ շուտով կը ժողվէ իր ուժերը, մանաւանդ թէ՛ Պարսիկներն ալ իրեն օգնութեան վր կանչէ, և միացեալ քանակով մը Տանկրիի դէմ կ'ելլեն: Տանկրի տեսնելով Գող Վասիլի բանակը, խոհեմութիւն վր համարի ջգարնուիլ անոր հետ, ուստի խաղաղութիւն կ'առաջարկէ, և վերստանալով Գող Վասիլէն քանի մը քաղաքներ՝ կը վերադառնայ իր երկիրը⁶:

Գող Վասիլի 1112ի մահէն վերջ, այն է 1114-1115ին, տեղի կ'ունենայ աննախընթաց երկրաշարժ մը. վր քանդուին Կիլիկիոյ շատ մը քաղաքներ, աւաններ, գիւղեր և վանքեր: Քեսուն մեծ քաղաքը ևս կը կործանի, ինչպէս կը գրէ Մ. Ուռհայեցիի շարունակողը. «և յայնմ գիշերի կործանեցաւ Սամուսատ քաղաք, և Հասան-Մանսուր, Քեսուն, և Ռապնայ, և Մարաշ քաղաք ահաւոր»⁷:

Գող Վասիլի զրեթէ 50 տարիներ, փառաւոր և հզօր իշխանութիւն մը ստեղծելով, կը կառավարէ իր երկիրը, վախ և յարգանք պարտադրելով իր շրջակայ վաստին թէ թուրք իշխաններուն, Քեսունը ունենալով իրենց անառիկ մայրաքաղաք: Ան կրնար տակաւին երկար իշխել այս շրջաններուն մէջ, և հայ ժողովուրդը խաղաղ և բարգաւաճ պահել՝ եթէ ձօսիլն և Պաղտին կոմսերը զինքը հանգիստ թողուին:

Դժբախտաբար ան կը վախճանի 1112ին. մեր պատմիչները տխուր շեշտով մը կը նկարագրեն անոր մահը, և եղած մեծ կորուստը՝ հայ ազգին համար: Հոս համառօտիւ կը մէջընդմէջ ինչ ինչ մասեր, ցոյց տալու համար թէ ո՞վ էր Գող Վասիլ, ի՞նչպիսի ազդեցիկ դէմք մը դարձած էր Քեսունի տէրը:

Մ. Ուռհայեցի կը գրէ. «Յայնմ ամի յարեզ ամսոյ քսան և չորս մեռանէր մեծ իշխանն Հայոց որ կոչեցաւ Գող Վասիլ, և եղև սուգ սաստիկ ամենայն Հայոց, վասնզի առ նա էին ժողովեալ մնացեալ զօրքն Հայոց, և ամենայն օրքն Բաղրատունեաց և Պահլավունեացն, և որդիք թագաւորացն Հայոց, հանդերձ ազատագունդ օրօքն առ նա վային հանդուցեալ մեծաւ փառաւորութեամբ, և աթոռ հայրապետութեանն Հայոց աշխարհին աստ և դաւ, վասնզի տիրեալ էր բազում գաւառաց իւրով զօրութեամբն, և ամե-

4. Անդ, էջ 129:
5. Անդ, էջ 138:
6. Անդ, էջ 138-139: Տե՛ս նաև Մ. Ուռհայեցի, էջ 403:
7. Մ. Ուռհայեցի, էջ 416:

նայն երամք կրօնաւորաց, եպիսկոպոսաց, հարց և վարդապետաց առ սա ժողովեցան և առ հասարակ կային մեծաւ ուրախութեամբ: Մեռաւ իշխանն Հայոց և թաղեցաւ ի Կարմիր վանքն. և էր հոգեբարձու նորա և հայր խոստովանութեան տէր Բարսեղ կաթողիկոսն Հայոց. և տուաւ հողադրամ հազար դահնկան, և պատարագուց հարիւր և յիսուն դահնկան աւելի և ոչ պակաս, և մատող անթիւ: Եւ տարան Տանգրէի բաղում տուրս ի տանէն Վասիլի բազում գանձս և զիպակս, ձիս և ջորիս, տարան և զՔազն կնոջ Վասիլին առ կինն Տանգրէի, և այլ իշխանաց թագաւորացն տուաւ քաղում ընծայս, և աղքատաց բազում ինչս»⁸:

Սմբատ Սպարապետ ևս նոյն շեշտով և տխուր զգացումներով կը գրէ. «ի սոյն ամի մեռաւ Գող Վասիլ և եթող սուգ մեծ ամենայն Հայոց. քանզի մնացեալ իշխանքն Հայոց առ նա էին ժողովեալ»⁹: Ասիկա ցոյց կու տայ թէ Վասիլ կեղծական կառավարութիւն մը վրցած էր հիմնել և իր շուրջ հաւաքել ամբողջ հայութեան ուժերը, զինուորականներ, իշխաններ և հասարակ ժողովուրդը:

Ինչ որ չէր վրցած Փիլարտոս ընել՝ Գող Վասիլ իր քաջութեամբ, ազգասիրութեամբ և բարեպաշտութեամբ ըրած էր, իրեն միացած պահելով ամբողջ հայ ժողովուրդը, ոչ միայն աշխարհական տարրը՝ այլ և կրօնականները: Գող Վասիլ իր կրօնասիրութեամբ, բացառիկ քաջութեամբ և ազդեցիկ անունով, կրցած էր կրօնականներու վստահութիւնը շահիլ և իր հողին մէջ փոխադրել Հայրապետական աթոռը, որ է Հռոմկլայ. սրովհետեւ այդ ժամանակ Հռոմկլայ իր իշխանութեան հողերուն մէջ կը գրտնուէր:

Գող Վասիլի իմաստուն իշխանը կանխատես եղած էր, և իր մահէն առաջ նշանակած էր իր յաջորդը՝ Տղայ Վասիլը, և իր այս վտակի գործադրութիւնը յանձնած էր Բարսեղ կաթողիկոսին:

Ո՞վ էր Տղայ Վասիլ: Այս հարցումին վր պատասխանեն զրեթէ նոյն բաներով Սմբատ Սպարապետ և Մ. Ուռհայեցի պատմիչները: Աւերի խանդավառ են Մ. Ուռհայեցիի տողերը. «և տան զիշխանութիւն Վասիլն՝ տղայ Վասիլին, որ է մայրենեօք յազգէ կամսարական, սնեալ և զարգացեալ ի տան Վասիլն՝ որպէս զորդի ի ծոց հօր իւրոյ»¹⁰: Հոս պատմիչը կու տայ տղայ Վասիլի ծագումը, ըսելով թէ մօր կողմէ հաւանաբար կամսարական ցեղէն էր, մանկութեան վր կորսնցնէ ծնողքը և կու գայ Գող Վասիլի արքունիքը և վճրլայ անոր որդեգիրը. անկարելի չէ որ ազգակից ըլլայ Գող Վասիլի: Տղայ Վասիլ կը մեծնայ Գող Վասիլի պալատին մէջ, իբրև գաւազ մը. իսկ արտաքինով՝ էր «գեղեցկատեսիլ և առիւծադէմ, յաջողական և սրագլուխ, այր քաջ և պատերազմող, ամաց քսան և հնգից»¹¹:

8. Մ. Ուռհայեցի, էջ 404-405:
9. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 139:
10. Մ. Ուռհայեցի, էջ 405:
11. Անդ:

Գող Վասիլի Թագաւորական Թաղում մը կ'ընեն. «Եւ արարին զօր Թաղման նորա Թագաւորական հանդիսիւ ի վանքն Կարմիր»: Սուգի օրերը կը վերջանան եւ կու գայ վարդը Գող Վասիլի աթոռին վրայ նստեցնել իր իսկ նշանակած յաջորդը, Տղայ Վասիլը. Բարսեղ հայրապետ, որ Գող Վասիլի խոստովանահայրն ալ էր եւ անոր կտակին գործադրողը, կը կանչէ Տղայ Վասիլը. «Չնա նստուցին յաթոռ մեծ իշխանին Վասիլի եւ նմա հնազանդեցան ամենայն զօրքն»: Սմբատ Սպարապետ կ'ըսէ. «Տէր Բարսեղ հաստատեաց յաթոռն զՏղայ Վասիլն, եւ ուրախացան առ հասարակ»:

Տէր Բարսեղ Կաթողիկոս Գող Վասիլի մահէն յետոյ՝ Տղայ Վասիլը կը հաստատէ գահին վրայ: Մ. Ուռհայեցի հետեւեալը կը գրէ. «Եւ տայ զիշխանութիւն ամենայն Տղայ Վասիլն, ... եւ նմա հնազանդեցան ամենայն զօրք, վասնզի յոյժ առատաձեռն եւ մեծատուր եղեւ, սիրեցեալ յաչս ամենեցուն եւ զօրացն: Եւ արար միաբան ժողով Տէր Բարսեղ, եւ տայ զամենայն իշխանութիւն ի Տղայ Վասիլն, եւ եղեւ տւրախութիւն ի վերայ տանն Հայոց»¹²:

Թէ ո՛րքան իշխած է Տղայ Վասիլը եւ առաջնորդած հայ ժողովուրդը դէպի յաղթանակ, պատմիչները կը լռեն: Այսքան փառք, սակայն, կ'ունենայ տխուր վերջալոյս:

Տղայ Վասիլ՝ Լեւոն իշխանին աղջիկը կնութեան առած էր: Այս ամուսնութիւնը կ'ընդհատուի հաճեցի անցած չէր Լեւոնի եղբոր՝ Թորոս Ա.ի, ուստի «Թորոս, եղբայր Լեւոնի, կոչեաց զտղայ Վասիլն եւ նեղութեամբ կարաւ զնա, եւ տայր ի յՈւռհայոյ Պաղտինն կոման»¹³: Թէ ի՞նչ էր Թորոսի վատարած այս նեղութեան պատճառը. պատմիչը կը լռէ: Պաղտին կոմսը բանտարկելով Տղայ Վասիլը՝ կ'ենթարկէ քաղմաթիւ նեղացուցիչ արարքներու, առնելու համար անկէ խոստում մը, յանձնելու իրեն Գող Վասիլի ամբողջ հողերը: Թորոս ըրաւ այս գէշ արարքը՝ հաւանաբար որպէսզի Ռուբինեանց նորահաստատ իշխանութեան դէմ արգելք մը վերցնեն. երկու հայ իշխանութիւն կարելի չէր ենթադրել մէկ երկրի մէջ: Այլիչան կը գրէ այս մասին. «Վասնզի յետ մահուան մեծ իշխանին Գող Վասիլի՝ իւր քեռորդին Տղայ Վասիլն իշխեց Քեսնոյ եւ սահմանաց. բայց ոչ երկար, իրմէ զօրաւորները կոխեցին իր սահմանները, խոյս տուաւ զնաց առ աներ իւր Լեւոն՝ Թոռն Ռուբինի... այն ալ չափէն աւելի ուժով մը բռնեց զինքը եւ արգելեց»¹⁴: Իսկ Պաղտին գրեւորութեամբ առեալ ի նմանէ զամենայն պաւառն եւ խափանեաց զիշխանութիւն Հայոց ի յայնմ աշխարհէ»¹⁵:

Տղայ Վասիլը ամէն ինչ տալով՝ կ'ազատի գերութենէն եւ կ'ապաստանի իր աներոջ Լեւոնի քով, եւ անկից ալ կ'անցնի Պոլիս: Այս կերպով կը փակուի Գող Վասիլի պատմութեան փառաւոր էջը, ինչպէս կը գրէ պատմիչը. «Սա

12. ԱՅԳ:
13. ԱՅԳ, էջ 421-422:
14. ԱԼԻՇԱՆ Է. Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 97:
15. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 422:

(Պաղտին) մեծաւ նեղութեամբ տարագիր արար զամենեւեան, եւ քակեաց զամենայն իշխանութիւն Գող Վասիլն, եւ փախտական արար զամենայն դասս ազատացն նորա ի Կոստանդնուպօլիս»¹⁶:

Պաղտին ընդարձակ հողերու եւ քերդերու տէր կ'ըլլայ 1119էն սկսեալ. կը գրէ պատմիչը. «Եւ էր Պաղտին տէր Քեսնոյ եւ Մարաշայ եւ բազում գաւառաց»¹⁷:

Պաղտին մէջտեղէն վերցնելով քաջ իշխան մը՝ Տղայ Վասիլը, որքան որ տէր եղաւ Եփրատի շրջանի քերդերուն եւ քերդաքաղաքներուն, Հոռմկլայի, Ռապանի, Մարաշի, սակայն իր փառքն ալ երկար չտեսց, չկրցաւ իր անօրէն եւ անգութ արարքին պտուղը վայելիլ: Իկոնիոյ սուլթանը Մասուն՝ կը գրէ պատմիչը. «Եւ էր Պաղտին տէր Քեսնոյ եւ Մարաշայ եւ բազում գաւառաց»¹⁷:

Այս մասին կը գրէ Մ. Ուռհայեցի. «Յորժամ ամենայն ոք ակն տնէր գալստեան Հոգւոյն Աստուծոյ, եկն յառաջասացեալ Սուլտանն Մասուտ անուն, անհնարին բազմութեամբ, եւ ի ծայն հնչման զանգակացն եւ ի հրածգութենէ սուսերացն, եւ ի ճօճել քաղմաթիւնն նիզակացն զմեզ զամենեւեան զտեսողս որք էաք ի քաղաքն Քեսնոյ... առհասարակ զողացոյց, որ ահաբեկ եղեալ առժամայն ետուն զքաղաքն Քեսուն, քրդումն առեալ ի նմանէ եւ յորդուոյ նորա»¹⁸:

Մասուտ սուլթան ժամանակ մը կը մնայ Քեսունի մէջ, սակայն հիւանդանալով կը ատիպուի վերադառնալ իր երկիրը՝ իր իշխանութիւնը յանձնելով իր որդւոյն Սիւրհ-Արալանի, եւ կը վախճանի: Այս ուր կը լսէ Մահմուտ սուլթանը, պատմիչը կը գրէ 1136-1137ին. «Եկն Մահմուտ սուրտանն որդի Ամր-Սազէի՝ որդւոյն Դանիշմանին. սա եկեալ զօրօք յաշխարհն Մարաշայ, եւ եկեալ իջաւ ի վերայ Քեսուն քաղաքին, եւ այրեաց զչինս գեղիցն եւ վանորէիցն...»: Մահմուտ վեց օր կը պաշարէ քաղաքը, սակայն պատնէչներ եւ մեքենաներ չի կանգնեց անոր պարիսպներուն դէմ, այլ՝ կ'ըսէ պատմիչը, «այլ լռելով նստեալ, հատանելով զլուր գետոյն եւ կոտորելով զքուրաստանն, այսր եւ անոր ասպատակելով, եւ զառ փկասրուտ յինքեանս կուտելով»: Մահմուտ ամէնէն աւելի իր զայրոյթը կը թափէ Կարմիր վանքի գլխուն. «Եւ այրեաց փկարմիր վանքն՝ զտունն աղօթից, փխրճիթս միանձանց, զնշանս մանրեալ տէրունական փայտին եւ քարանց, գերի վարեալ, եւ գերկաթեղէնս եւ զպղնձեղէնս յերկիր կործանեալ, գսեղանս սրբութեան հացի փշրեալ, եւ զդուռն գեղեցկահիւս յօրինուածոյ եւ զայն ընդ ինքն բարձեալ տանելով յաշխարհն իւրեանց ի տես հարճից եւ ոսակաց»¹⁹: Մահմուտ վրձնած էր զբաւել Քեսուն եւ քարուքանդ ընել, ուստի կը շարունակէ անոր դէմ իր պաշարումը:

16. ԱՅԳ, էջ 423:
17. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 163:
18. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 504-505:
19. ԱՅԳ, էջ 463:

Քեսուն պաշարուած՝ շուտով նեղութեան վը մատնուի, մանաւանդ որ օրէ օր ա՛լ աւելի վը սաստկանար պաշարումը, բարանները աւելի սաստիկ կը հարուածէին քաղաքին պարիսպները: Պաշարուածները ահ ու դողի մէջ՝ օրէ օր վը սպասէին որ քաղաքը իյնար, բանար իր դռները թշնամիին առջեւ. այնպէս որ քաղաքին մէջ մնացողները քաղաքին արտաքին պարիսպներուն պաշտպանութիւնը լքելով, ներքին բերդ կը բարձրանան:

Բարերախտարար նոյն օրերուն Պոլսէն Պոռփիւռոժէն կայսրը ճամբայ կ'ելլէ դէպի Կիլիկիա եւ շուտով կը հասնի Եփրատի շրջանները: Մահմուտ սուլթանը լսելով ասիկա եւ շուքելով կռուիլ կայսեր հզօր բանակներուն դէմ, կը ստանայ քաղաքին դուրսի մասերը քարուքանդ ընել եւ կողոպտել, մանաւանդ Կարմիր վանքը, եւ կը հետանայ Քեսունէն: Քեսուն կ'ազատի ահաւոր աղէտէ մը, ինչպէս կը գրէ պատմիչը. «Եւ Մահմուտ գնաց փութանակի յաւուր ուրբաթու՝ որպէս ասացաք, քանզի համբաւ եհաս ի լսելիս նորայ յաղաքս թագաւորին Հոռոմոց, թէ դիմեալ գայ յօգնութիւն պաշարեալ քաղաքին Քեսնոյ, եւ մերոյ իշխանին կոչեցելոյ Պաղտին: ... Զի յաւուրսն յայնոսիկ մերձ էր թագաւորն Յունաց յԱնտիոք աւերելով զՏաճկաստան...»²⁰:

1137-1138ին Պոռփիւռոժէն Անտիոք կը հասնի. այս շրջանիս, ինչպէս ըսինք, Անտիոքի եւ Քեսունի եւ անոնց շրջաններուն կ'իշխէր Պաղտին, որ երկար դիմադրած էր Արարներու եւ Համտունի արշաւանքներուն. կ'ուրախանայ երբ կը լսէ կայսեր հասնելը՝ Անտիոք: Պաղտին կը դիմաւորէ գայն, ընդ առաջ կ'ելլէ կայսեր, եւ Անտիոքի մէջ անոր բանակներուն միացնելով իր բանակները, մեծ ուժով կ'երթան եւ կը պաշարեն Պղահ բերդը, որ տաճիկներու ձեռքն էր եւ անոնց զօրաւոր ամրոցը, բայց ասով ուրիշ անպատեհութիւն մը մէջտեղ կ'ելլէ. Քեսուն քաղաքը զինուորականներէն պարպուելով, անպաշտպան կը մնայ, եւ հոն մնացող բնակիչները վախնալով, իրենք ալ կը թողուն Քեսուն քաղաքը եւ կ'ապաստանին շրջակայ քաղաքները. «Եւ բնակիչք քաղաքիս եւս գնացին, եւ թափուր մնաց քաղաքն ի յարանց, երկեան եւ ելին ի քաղաքէս տունորդօք եւ գնացին ոմանք ի Պեհեսնի եւ ոմանք ի Ռապան, ոմանք ի Հոռովկայն, եւ մնաց Քեսուն անմարդ, սակաւ իշխանք մնացին, տեղապահն հետեւաօք եւ տունկ քաղաքիս»: Նոյն օրերուն հոն էր նաեւ Գրիգոր Երէց, Մ. Ուռհայեցիի պատմութեան շարունակողը, «որ սըրտապնդեալ գնոսա ժիրանալ, ի պահպանութիւն քաղաքիս, զի մի՛ գուցէ եկեալ այրեացեն զքաղաքն մեր որ եւ եղեւ իսկ»²¹:

Յունաց կայսրը յաղթական՝ փախուստի վը մատնէ Մահմուտի զինուորները, եւ կարգի դնելով ու ապահովեցնելով Եփրատի շրջանի քաղաքներուն բնակիչները՝ կը վերադառնայ Պոլիս: Սակայն հարցը հոս չէր վերջանար. «Զի ի դառնալ թագաւորին Յունաց, որդի Տաւուտին, որոյ անուն Պար-Ասլան Կոչի, 1138ին դարձեալ ի Տաճկաստանէ քաղում գօրօք, եւ եկեալ ի թագաւորէն իբրեւ փախստական եկն ի քաղաքն Ռապան»: Անոնք որ տա-

20. Անդ, էջ 464:
21. Անդ, էջ 466-467:

կաւին Քեսունի մէջ կը մնային, վախնալով որ Պար-Ասլան պիտի գայ եւ զրաւէ նաեւ Քեսունը, «Թողին զքաղաքն եւ ելան երեկոյէն»: Այս մասին դարձեալ վը գրէ Գրիգոր Երէց. «Իսկ արքն որք էին ի քաղաքն Քեսուն, պարհուրեալ կարծէին եթէ Մելիք Մահմատն փցէ, թողին զքաղաքն եւ ելան երեկոյէն»: Թուրքերը իմանալով որ Քեսուն լքուեր է, զինուորներ, պաշտպաններ չկան հոն, «իսկ վաղիւն եկեալ սակաւ թուրքաց անցանէին ընդ լեառնկողմն եւ ըմբռնեցին զայր ոմն, եւ տեղեկացն ի նմանէ եթէ ոչ ոք կայ ի քաղաքին, ապա եկեալ արանց իբրեւ երեսնից՝ մտին եւ այրեցին զքաղաքն Քեսուն, եւ զգրուես քաղաքին, եւ զքարձրայարկ ապարանան զոր շինեալ էր մեծ իշխանն Հայոց Գող Վասիլն եւ զայլ շէնս բարձրագոյն տեսին. եւ ինքեանք գնացին փախստական՝ հասին այլոց ընկերացն իւրեանց: Իսկ մարդիկ քաղաքին դարձան ի միւս օրն իւրաքանչիւր ի տունս իւրեանց»²²:

Քեսուն՝ Կիլիկեան շրջանին Հայոց կարեւոր քաղաքական կեդրոններէն մէկը լեղած է, եւ Հայերը շարունակած են հոն ապրիլ մինչեւ որ վերջնականապէս վը լքուի եւ կը քանդուի:

22. Անդ, Երազարդ Գրիգոր Երէց, էջ 466-467:

ԱՅՆԹԱԳ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ


Եփրատ գետին շուրջ 50 քլմ., Մարաշին 82 քլմ., իսկ Ուրֆային 145 քլմ. հեռու կը գտնուի Այնթապ: Թուրքիոյ եւ Սուրիոյ սահմանամերձ քաղաքներէն է եւ վաճառաչահ կեդրոն: Թուրքերը զայն կը կոչեն Ղազիանթէպ: Քաղաքը շրջապատուած է ցած քրտւորներով եւ ընդարձակ դաշտերով:

Հ. Ղ. Ինճիճեան «Նոր Հայաստան» գրքին մէջ կու տայ անոր նկարագրականը, զոր հոս կը մէջբերենք. «Այնթապ կը գտնուի Կիլիկիայէն դէպի Միջագետք գացող ճամբուն վրայ. միջին դարուն նշանաւոր ռազմագիտական կեդրոն եղած է, որուն շուրջ բազմաթիւ պատերազմներ մղուած են: Այնթապ պարսպապատ քաղաք մըն է. հին ատեն կը կոչուէր Անտիոք առ Տորոսի կոմաց նահանգին մէջ. զայն կը յիշեն Պտղոմէոս եւ Պլինիոս: Քաղաքը շինուած է հովիտի մը մէջ, շուրջը կը բարձրանան միջին բարձրութեամբ լեռներ, տրոնց մէջէն կ'անցնի գետակ մը: Քաղաքին կեդրոնը քարաբլուրի մը վրայ կը բարձրանայ իր հին ամուր եւ անառիկ բերդը, որուն շուրջ խոր խրամներ փորած էին ապառաժները կտրելով»:

Մ. Ուռհայեցի, Սմբատ Սպարապետ եւ Միքայէլ Ասորի կը յիշեն եւ զայն կը կոչեն Հանթապ, Անթափ, եւ անոր անուան կը կցեն «Մեծն», «Անուանի» եւ «Անառիկ» տիտղոսները, ինչ որ ցոյց կու տայ անոր նշանաւոր անուանի եւ անառիկ ըլլալը²:

ՊԱՏՄԱԿԱՆ

Այնթապ հին քաղաք է, ան գոյութիւն ունեցեր է Քրիստոսէ երեքհազար տարի առաջ, բայց կը բարգաւաճի ու կը զարգանայ՝ Հիթիթեան եւ Ասորեստանեան տիրապետութեան շրջանին: Այս երկու հօր իշխանութիւններու տիրապետութեան շրջանէն վերջ, անցած է Յոյներու, Հռոմէացիներու եւ Բիզանդացիներու ձեռքը, ու անոնց զինուորական շարժումներուն զլխաւոր մէկ կեդրոնը եղած է: Ապա զայն կը գրաւեն Արաբները, յետոյ սելճուք Թուր-



Այնթապի բերդը:
La forteresse d'Aintab.

քերը եւ հուսկ՝ 1089ին զայն կը գրաւեն Պաշակիրները: Մարաշի նման ան ալ մաս կը կազմէ Եգեսիոյ կոմսութեան, մինչեւ 1144 թուականը:

Այնթապ Պաշակիրներու կարեւոր մէկ կեդրոնը կ'ըլլայ Տիւլիքի, Հոռոմկլայի, Պիրէճիկի եւ Ուրֆայի հետ: Քաղաքին ամէնէն շքեղ մասը իր Ղալան է, որ հերոսաբար դիմադրած է բազմաթիւ անգամներ թշնամիներուն զոհներուն: Ան ձեռքէ ձեռք անցած է, քանդուած եւ վերաշինուած: Պաշակիրներու շրջանին է որ կը վերանորոգուին անոր պարիսպներն ու աշտարակները³:

Հայերը շատ հին ժամանակներէ ի վեր եկած եւ հոն հաստատուած էին, եւ քաղաքին գործունեայ ու զօրաւոր տարրը կը կազմէին, այնպէս որ Պաշակիրները հոն գտան հայկական կազմակերպուած զաղութ մը:

Այնթապի կը տիրէ նախ Փիլարտոս հայը, ապա Գող Վասիլ, որ այս բերդաքաղաքը իր զինուորական մէկ կեդրոնը կ'ընէ եւ անկից կը տիրէ շրջակայ հողերուն եւ բերդերուն: Սակայն յոյն կայսրները եւ Պաշակիրները մէկիկ մէկիկ կը ջնջեն Եփրատի շրջանին մէջ հաստատուած հայ փոքրիկ իշխանութիւնները. Գող Վասիլ եւս անոնց ընչաքաղցութեան զոհ կ'ըլլայ:

Պաշակիրները կը գրաւեն Եփրատի շրջանի շատ մը քաղաքներ, ինչպէս նաեւ Այնթապը, սակայն իրենք ալ Երկար չեն վայելեր իրենց այս ապօրինի եւ անզուժ տիրակալութեան պտուղը:

Այնթապ 1140ին լատին ձօսիին իշխանին ձեռքն էր, որուն վրայ 1152ին կը յարձակի Հալէպի Նուրէտտին սուլթանը, եւ առանց մեծ դժուարութեան զայն կը գրաւէ: Այս մասին կը գրէ Մ. Ուռհայեցի. «Եւ էառ զոր կարաց՝

1. Ինճիճեան Հ. Ղ., Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 377:
2. Հմմտ. Մ. Ուռհայեցի, էջ 526 եւ 529:

3. ՍԱՐԱՑԵԱՆ ԳԵՈՐԳ Ա., Պատմութիւն Այնթապի Հայոց, Լոս Անճելոս, 1963, էջ 25:

զանազին Անթափ եւ զՓարզման, եւ զգեղս ամենայն»: Հոն վը բունէ նաեւ ճօսիներ եւ շղթայակալ բանտ կը նետէ, «իննամեայ ժամանակօք կապեալ ի շղթայս, յետոյ խաւարեցոյց զաչս այնպիսի առն մեծի եւ յալթողի բազում պատերազմաց՝ որ էր տէր աշխարհաց»⁴: Երկար ժամանակ Այնթապ կը մնայ նորկատիին ձեռքը եւ Հայերը ժամանակ մը խաղալ կ'ապրին:

1264ին Հեթում Ա. Թաղաւորը երկու անգամ կ'երթայ Այնթապի վրայ. առաջին արշաւանքը անյաջող կ'անցնի, ուստի երկրորդ անգամ եւս կը փորձէ զայն գրաւել: Այս մասին կը գրէ պատմիչը. «Ի սոյն ամի դարձեալ ժողով արար Հեթում եւ գնաց ի վերայ բերդին Անթափայ, եւ ոչինչ կարաց առնել նոցա, եւ դարձեալ եկն յաշխարհ իւր»: Այս առաջին անյաջող արշաւանքէն յետոյ նոյն տարին երկրորդ արշաւանք մըն ալ կ'ընէ՝ աւելի մեծ եւ պատրաստուած բանակով, սակայն այս անգամ եւս բախտը իրեն չի ժպտիր: Պատմիչը կ'ըսէ. «Եւ յետ սակաւ աւուրց, ի ժամանակս ձմեռային, խորհեցաւ արքայն Հեթում գնալ ի նոյն բերդն Անթափ, եւ գնացեալ մինչեւ ի գեղաքաղաքն պուրճ Ըռասաս, եւ անդ գտեղի կայաւ»⁵:

Ի՞նչ էր Հեթումի հոս կանգ առնելու պատճառը: Գարձեալ վը գրէ պատմիչը. «Կի արեւական մթացեալ յամբոյ եւ ոչ երեւեցաւ զաւուրս հինգ, եւ ի սաստկութենէ հոգմոյն եւ անձրեացն, ոչ կարէին ելանել ի խորանացն, եւ տառապէին սպասուորքն եւ ուսմիկ հետեւակքն»: Այս սարսափելի դէպքերուն կը յաջորդէ արեւու խաւարում. Հեթում գէշ գուշակութիւն վը համարի եւ կ'որոշէ վերադառնալ իր երկիրը. «Եւ ապա խորհեցան յետս դառնալ, աւելով՝ թէ Աստուած ոչ կամի զգնայն մեր անդ»⁶:

1404ին Լէնկթիմուր փոթորիկի նման կ'անցնի Փոքր Ասիոյ եւ Կիլիկիոյ քաղաքներուն վրայէն, կը գրաւէ նաեւ Այնթապը, եւ մեծապէս կը մնասէ քաղաքին, անոր պարիսպներէն մաս մը կը քանդուին, եւ ժամանակ մը բերդը լքուած կը մնայ:

1480ին սուլթան Գատտիպա կը տիրէ եւ կը նորոգէ անոր պարիսպները, որոնց վրայ կը թողու իր անունով արձանագրութիւն մը:

1822ի մեծ երկրաշարժէն՝ Այնթապի բերդը մեծ մասով կը փլչի եւ կը լքուի:

Եւրոպացի ճանապարհորդ մը այսպէս կը նկարագրէ. «Այնթապ բերդ մը ունի քաղաքին հիւսիսակողմը բլուրի մը վրայ, ճիշտ Հայկազի բերդին նման, թէեւ անկէ շատ փոքրիկ է տարածութեամբ. բերդը՝ բոլորովին փոսեր ունի, որ պատերազմի ժամանակ ջուրով կը լեցնէին: Պարիսպներուն վրայ տակաւին կը տեսնուին թնդանօթներու տեղեր. ամբողջ բերդը քարով ու կիրով շինուած է, մանաւանդ այն մասերը՝ որոնք բաւականաչափ ամրութիւններ չունին»⁷:

4. Մ. ՈՒՌՀԱՅՆՅԻ, էջ 526-527:
5. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգիրք, էջ 242-243:
6. Անգ, էջ 243:
7. Պատմութիւն Այնթապի Հայոց, էջ 71: Հմմտ. ԷՓՐԻԿԵԱՆ Հ. Ս., Բնաշխարհիկ բառարան, էջ 137-140:

ԿԱՐԿԱՌ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Եփրատ գետի արեւմտեան ափին վրայ կը գտնուէր Կարկառ բերդաւանը, որուն մօտիկ՝ ժայռոտ քարաբլուրի մը վրայ կը բարձրանար Կարկառ բերդը, զոր Թուրքերը այսօր Կէրկէր քալէսի (Gerger kalesi) կը կոչեն. հին ատեն այս բերդաւանը Արզամիա (Arzamia) կը կոչուէր:

Հ. Ղ. Ինճիճեան իր «Նոր Հայաստան» գրքին մէջ, 1806ին կը գրէր Կարկառի մասին. «Գիւղաքաղաք յարեւմտեան եզր Եփրատայ, գրեթէ երկու աւուրը եւ կիսով հեռի ի Մալաթիոյ եւ նոյնքան յԱւրֆայէ (չուրջ քառասուն քմ. հեռու երկու քաղաքներէն)»: Ան կը շարունակէ, «ի դուրս բարձր լեռին ունի բերդ քարաչէն»¹:

Գրիգոր Երէց, Մ. Ուսահայեցիի շարունակողը զայն կը կոչէ «Մեծ դըրեակ». «Տարեալ առաջի մեծի զղեկին Կառկառայ»²:

Կարկառ հինէն ի վեր ծանօթ գիւղաւան մըն էր, եւ ժամանակ մը հայկական իշխանութեան ենթակայ եղած է: Ալիշան կը գրէ անոր մասին. «Այս ամբողջ էր Կարկառ բերդաւան Եփրատ գետոյ ձախակողմը (արեւմտեան), թէ՛ ժայռերով եւ թէ՛ յորձանահոս ջրերով՝ անկասկած եւ անառիկ տեղ մը»³: Իսկ Ալպոյաճեան կը գրէ. «Սամուսատի մօտ՝ Կառկառի մէջ, Փիլարտոս հայր ժի. դարուն հողատիրութիւն մը հաստատած էր»⁴:

ՊԱՏՄԱԿԱՆ

Կարկառ Եփրատի ափին՝ ռազմական կարեւոր արժէք ներկայացնող բերդաւան մըն էր, անոր առջեւէն կ'անցնէր Եփրատ, որուն վրայ ռազմական կամուրջ մը կար, ուսկից Հոռմի բանակները կ'անցնէին դէպի Արեւելք եւ Միջագետք երթալու: Հոռմէական իշխանութիւնը լաւ գիտած էր այս շրջանը եւ պաշտպանած այդ անցքը, եւ կը ջանար զայն իր հսկողութեան եւ ձեռքին տակ պահել: Բիւզանդացիները եւս, որոնց սահմանները Եփրատէն անդին

1. Ինճիճեան Հ. Ղ., Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 323:
2. Մ. ՈՒՌՀԱՅՆՅԻ, Ծար. ԳՐԻԳՈՐ ԵՐԷՑ, էջ 502:
3. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 221:
4. ԱԼՊՅԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ, Պատմական Հայաստանի սահմանները, Գահրէ, 1955, էջ 104-5:

կ'երկարէին, Չանացին իրենց ձեռքը պահել այս կամուրջը եւ Կարկառի բերդը, զայն պաշտպանելով եւ կառավարելով հայ իշխաններով, որոնք այդ շրջաններուն կ'իշխէին: Այս իշխաններէն մէկն էր Կոստանդին, որ ուրիշ քանի մը իշխաններու հետ Արեւելքէն եկած էր եւ հոն հաստատուած, Կայսեր հովանիին տակ. ասոր մասին վը գրէ Սմբատ Սպարապետ. «Եկն եւ Կոստանդին իշխանն Հայոց ի Կառկոայ յիսուն հեռելով...»⁵: Ինչ որ ցոյց կու տայ թէ 1098-1099ին Կոստանդին իշխան արդէն կ'իշխէր այդ շրջաններուն եւ Կարկառ բերդի:

Կոստանդին հայ իշխանը, սակայն, մեծ սխալ մը կը գործէ, միաբանելով Անտիոքի Պաղտին կոմսին հետ, սպաննելով Եղեւսիոյ Թորոս Կիւրապաղատը, «եւ միաբանեցուցին զիշխանն Հայոց զԿոստանդին եւ սպանին զնա»⁶: Սակայն Կոստանդին ալ իր կարգին զոհ քնաց Պաղտին կոմսի, ինչպէս կը գրէ պատմիչը. «Անցոյց եւ զԿոստանդին տէրն Կառկոայ, որ եւ ի կապանս մեռանէր չարաչար նեղութեամբ ի բերդն Սամուսատ. եւ ի գիշերի շարժին գտին զնա յեզր Եփրատ գետոյն, վերուստ ի վայր հոսեալ խոզակ Մնջնկին կայր բեւեռեալ (որպէս) ի բանտի, եւ այնիւ եկն ի վայր, եւ այնպէս մեռաւ»⁷:

Կոստանդինի ողորդական մահէն վերջ, 1125ին Կարկառ բերդին եւ անոր շրջանին վրայ կ'իշխէ իր որդին Միխայէլ, որ քերթաքաղաքը իր ձեռքը պահելու համար՝ կը ստիպուի երկար կռիւներ մղել թէ՛ արաբ եւ թէ՛ լատին իշխաններուն եւ կոմսութիւններուն դէմ, որոնցմէ գլխաւորը եւ ամէնէն վտանգաւորն էր՝ Եղեւսիոյ ձօսլին կոմսը: Սա մեծ քանակներով կու գայ եւ կը պաշարէ Կարկառը: Միքայէլ, անգոր լատին կոմսի բանակներուն առջեւ, կը ստիպուի գիշերանց թողուլ բերդը եւ ապաստանիլ Գետուն: ձօսլին կը գրաւէ Կարկառը, առանց կաթիլ մ'արիւն թափելու, սակայն ինքն ալ երկար չի կրնար պահել զայն փր ձեռքը, որովհետեւ երբ Խարբերդի թուրք Պալակ ամիրան կ'իմանայ՝ որ Միքայէլ Կարկառէ փախեր է, իսկ ձօսլին ճրի յաղթանակով Կարկառ մտեր է, քանակով մը անոր վրայ կու գայ ու կը պաշարէ զայն, մեծ նեղութեան մատնելով քաղաքին բնակիչները: Սով եւ հիւանդութիւն կ'իյնայ բերդէն ներս եւ ձօսլին կը ստիպուի պարիսպներէն դուրս ելլել եւ ուղղակի կռուիլ Պալակի դէմ, բայց կը յաղթուի եւ գերի կը բռնուի:

Պալակ զայն չլթայի կը զարնէ եւ վը տանի բերդի պարիսպներուն առջեւ եւ բերդի իշխաններուն եւ անոր ընտանեկան պարագաներուն ցոյց կու տայ, ստիպելու համար որ բանան բերդին դռները: Սմբատ Սպարապետ սեղմ ոճով մը կ'անդրադառնայ այս դէպքին՝ երբ կ'ըսէ. «Եւ տարաւ Պալակն զթագաւորն (ձօսլին) ի դուռն Կառկոայ եւ էառ զԿառկառ ի նմանէ»⁸: Գրեթէ նոյն բառերով Մատթէոս Ուռհայեցի եւս կը խտացնէ այս դժբախտ եղելու-

5. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 105: Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 316: Կոստանդին տէր Կարկառայ կամ Կարկառեցի ալ կոչուած, Անիէն զաղթող հայ իշխաններէն մէկն էր, որ իր քաղութեամբ տիրած էր Կարկառ բերդին:
6. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 317-319:
7. Անդ, էջ 423-424:
8. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 152:

թիւնը. «Եւ տարաւ Պալակն զթագաւորն ի դուռն Կառկառայ, եւ նա տայր զԿառկառ ի ձեռս Պալակին»⁹:

Միքայէլ, Կոստանդին իշխանին որդին, երկար տարիներ իր հայրենիքէն հեռու մնալէն վերջ, կը մտածէ հնարք մը գտնել եւ ազատել իր հայրենի քաղաքը. ուստի շրջելով քաղաքէ քաղաք, իր շուրջ կը հաւաքէ յիսունի չափ քաջ կռուողներ եւ օր մը յանկարծակի կու գայ Կարկառի վրայ ու զայն կը պաշարէ. բերդին թուրք պահապանները կը ստիպուին անձնատուր ըլլալ եւ Միքայէլի առջեւ բանալ բերդին դռները: Միքայէլ իր երազը իրականացուցած էր, յաղթանակով եւ արցունքով բերդ կը մտնէ եւ գերի կը բռնէ բերդին պահակազուռը:

Կարկառի այս վերագրաւումը մեծ խանդավառութեամբ կը նկարագրէ Մ. Ուռհայեցի. «Ենայմ ամի օգնականութեամբն Աստուծոյ առաւ կառկառ ի Թուրքաց. վասնզի Միխայլ իշխանն՝ տէրն Կառկոայ, որդի Կոստանդնոյ, ժողովեաց արս յիսուն եւ կացեալ ի վերայ մեծաւ աշխատութեամբ՝ եւ նեղեաց զթուրքն որ ի բերդն էր, եւ ոչ գտաւ ոք օգնական բերդին, անճարեալ գային ի հաւանութիւն եւ տան զԿառկառ ի Միխայլն»¹⁰:

Միքայէլ իր հօրը վրէժը լուծած էր Թուրքերէն, որոնք այլեւս չհամարձակեցան անոր ողջութեան՝ վերադառնալ Կարկառ. ան շուրջ քսանըհինգ տարիներ հոն խաղաղ օրեր անցուց, մինչեւ իր մահը: Անձանօթ կը մնայ անոր մահուան թուականը եւ պարագաները:

1149ին Կարկառ բերդին իշխան եւ տէր կը յիշուի Վասիլ, Գրիգոր Կաթողիկոսի եւ Ս. Ներսէս Ծնորհալիի եղբայրը. Վասիլ ընտանիքով հոն կը կենար: Վասիլ եւս անբախտ կ'ըլլայ. ան վը ստիպուի պատերազմիլ իր երկրին մօտիկ եղող գօրաւոր եւ հօր քանակներու տէր՝ թուրք ամիրաններուն դէմ, եւ մանաւանդ Խարբերդի Խարա Ասլան սուլթանին դէմ. սա աւելի խորամանկ քան թէ քաջ, Վասիլը յանկարծակիի կը բերէ եւ զայն գերի կը բռնէ, երբ Կարկառէն հեռու տեղ մը դացած էր: Խարա Ասլան Վասիլը չլթայի զարկած՝ կը բերէ Կարկառ բերդին առջեւ եւ զայն կը ցուցադրէ զաւակներուն եւ կնոջը, որոնք բերդին մէջ էին եւ կը սպասէին Վասիլի գալստեան: Այս անակնկալին առջեւ բերդին պահակազօրքը կը ստիպուի դեսպաններ ղրկել սուլթանին եւ անկէ խոստում առնել որ զիրենք ազատ պիտի թողու: Խարա Ասլան կ'ընդունի պայմանները եւ իր խոստումը կը յարգէ: Բերդապահները կը բանան բերդին դռները եւ իրենց պարագաներով եւ ունեցածներով կը մեկնին Կարկառէն: Իսկ Վասիլ կը մնայ Խարա Ասլանին մօտ եւ ժամանակ մը անոր քանակին մէջ կը ծառայէ ու մեծ պատիւներու կ'արժանանայ, ինչպէս կը գրէ Գրիգոր Արէջ, Մ. Ուռհայեցիի շարունակողը. «Եւ զիշխան զՎասիլ՝ ընդ իւր տարեալ յերկիր իւր մեծաւ փառաւորութեամբ, եւ տուեալ երկիր՝ որպէս սիրելի եղբոր իւր»¹¹:

9. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 443:
10. Անդ, էջ 451: ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 155:
11. Անդ, էջ 501-502: ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 166-167:

Ալիշան կը գրէ Վասիլի Կարկառ բերդին մէջ անցուցած վերջին օրերուն մասին. «Վասիլ ապահով կարծելով գործը, կամ մեծ անձնանուիրութեամբ թշնամեաց բանակը ճղքելով՝ կ'ուզէր բերդին օգնել. քայց հետը միայն 400 կտրիճ ունէր, որոնք յանկարծ պաշարուեցան բազմախումբ բանակէ մը. եւ կռուիլն անօգուտ եւ վնասակար ըլլալով՝ անձնատուր եղան: Վասիլ բռնուիլն շատ մեծ յաղթանակ էր Մասուտեանց, վասնզի ոչ միայն անձին այլ եւ անոր ամբողջին պիտի տիրէին: Այս ամբողջ էր Կարկառ բերդաւանն Եփրատ գետոյ ձախակողմը... ուր էր Վասիլ տունն, կիներն եւ որդիքն: Սորասան հոն տանելով զՎասիլ իրբեւ գերի՝ իմացուց տիկնոջը (որ էր Հեթմեանց ցեղէն) որ եթէ չհաւանի բերդը տալ՝ պիտի սպաննէ զէրիկը: Այրասէր եւ խոհեմ տիկինն անգամաբ խնդրեց ի բռնաւորէն տր ոչ միայն իր տէրը՝ այլ եւ ուրիշ բռնած գերիները անվնաս թողու. եւ երբ նա երդուաւ յօժարութեամբ ու գերիները արձակեց տանելու Մամուսատ, Կարկառայ դռներն ալ բացուեցան եւ յանձնուեցան Սորասանայ. սա հաւատարիմ կարով խոստմանը՝ մարդու վնաս չբրաւ. եւ զՎասիլ ալ պատուով պահելով տարաւ առ տէր իւր Մասուտ սուլտան. սա ալ ըստ արժանեաց բռնուողին՝ մեծարանօք ընդունեցաւ, եւ փոխանակ Կարկառայ՝ իր սուլտանութեան մէջ ի կոնիոյ կողմերը ուրիշ անդիներ տուաւ անոր. ուր եւ թուի անկէ վերջը ապրած եւ մեռած, վասնզի պատմութիւնն ասկէ ետեւ լուի անոր անունը, այլ միայն դեռ քանի մը տարի վերջ ալ Շնորհալի եղբայրը՝ իր յիշատակարանաց մէջ մէկալ եղբարց հետ յիշէ զնա (յարմս 1151-1152), առանց այս բռնուելուն զիպուածն ակնարկելու, որով կրնայ կարծուիլ թէ քիչ ժամանակ վերջ Մասուտ ազատութիւն տուած ըլլայ Վասիլ՝ ուղած կողմը երթալու, պայման դնելով որ իր թշնամեաց ձեռնառու ըլլայ»¹²:

12. Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 221-222:

ՊԻՐ ԿԱՍ ՊԻՐԵՃԻԿ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Պիր կամ Պիրեճիկ գեղեցիկ տեսարանով Եփրատի արեւելեան ափին վրայ զօրաւոր բերդաւան մըն էր, անոր զիրքին մասին կը գրէր Մ. Ուռհայեցի. «Պիր յեզր Եփրատ գետոյ»¹: Նախապատմական շրջանի իր անունը Պիրթա եղած է, սակայն հին պատմագիրներու քով սովորաբար Զիւզվա կը կոչուէր: Հռոմէացիները զայն Պիրպոսում կոչած են, իսկ արաբ պատմագիրները Պիրէ-էլ-Ֆրաթ: Սելեւկիոս Նիկանոր զայն նորոգելով եւ վերաշինելով կոչած է Ապամէա:

Հ. Ղուկաս Ինճիճեան կը գրէ իր «Նոր Հայաստան» գրքին մէջ՝ թէ Պիր կը գտնուէր ընդ մէջ Ուրֆայի եւ Մարաշի, պարսպապատ եւ բերդաւոր քաղաք էր. Հռոմկլայէն 15 քրմ., Ուրֆայէն 80 քրմ., իսկ Այնթապէն 60 քրմ. հեռու: Քաղաքը կը բարձրանար ապառաժոտ լեռան մը գառիթափին վրայ սանդղածեւ: Գետի ափին ունէր հին բերդ մը աշտարակներով, քարաբլուրին պառաթին վրայ ունէր ուրիշ բերդ մը եւս, շինուած ամբողջապէս տաշուած քարերով, զորս կը հանէին մօտակայ լեռներէն: Բերդին մէջ էր փաշային պալատը, հոն պահուած էին նաեւ պատերազմական հնաւանդ զէնքեր եւ գործիքներ, սուր, նետ, աղեղ, վահան, սաղաւարտ, զրահներ եւ ձիու թամբեր: Քաղաքին եւ բերդին պարիսպները մեծ մասով քայքայուած են այժմ²:

Նոյն իմաստով աւելի ուշ կը գրէ նաեւ Գէորգ Ա. Սարաֆեան. «Եփրատ գետին վրայ գլխաւոր անցման տեղերէն մին, Իսկէնտէրունէն ալ Միջագետք տանող ճամբուն վրայ: Քաղաքը շինուած է գրեթէ 400 ոտք բարձր կրաքարէ ապառաժի մը վրայ, որով փողոցները նեղ եւ ցից են: Հին քաղաքի պարիսպներէն բաւական մնացորդներ կան, եւ միջնաբերդը գետի անցքին կ'իջիտէ: Շրջակայ ժայռերուն մէջ բազմաթիւ քարայրներ կան, որոնք ջորեպաններուն իբր իջեւան կը ծառայէին:

«Եփրատ յորդած ժամանակը շողենաւեր կրնան Պարսից ծոցէն գետն ի վեր նաւարկել մինչեւ Պիրեճիկ: Այս տեղուան գետանցքը Եփրատի ամենակարե-

1. Մ. Ուրհայեցի, Ժամանակագրութիւմ, Երուսաղէմ, 1860, էջ 413:
 2. Ինճիճեան Հ. Ղ., Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 339:

ուր անցքերէն մէկն էր անցեալին մէջ ալ, ուր հին ժամանակ նաւակամուրջ (Zeugma) մը կար, եւ քաղաքը հին պատմագիրներուն քով սովորաբար Զիւգմա կը կոչուէր:

«Հանրի Մունտրէլ, անգլիական գաղութին երէցը, 1697ին Պիրեճիկ կը հանդիպի եւ հետեւեալ կերպով կը նկարագրէ վայն. Պիրի միջնաբերդը խոշոր հին շինութիւն մըն է, մեծ ու երկայն ապառաժի մը վազաթը, ետեւի ցամաքէն մեծ կտրուածքով մը կամ բնական ցածութեամբ մը զատուած: Մեր առաջին մտնելուն դռնէն ներս, որոնք երկաթէ էին, տեսանք քարէ քանի մը խոշոր դռնակներ, շուրջ 20 մատնաչափ տրամագծով, եւ երկաթէ մեծ լիսեռներ՝ անխնայով, որոնք լիսրածակներուն քովը երկու ոտնաչափ հաստութեամբ միակտուր փայտէ շինուած էին, եւ պտուտակներ՝ աղեղներ կամ մեքենաները ծռելու համար, ինչպէս նաեւ քանի մը դաշտային պղինձէ թնդանոթներ:

«Ապառաժին կողերուն վրայ շեղակի փորուած ճամբայէ մը մագրցելով կ'ելլենք բերդը: Առաջին մուտքիդ կը գտնես դէպի գետը ստորերկրեայ փորուած ճամբայ մը: Բերդին մէջ մեր տեսած գլխաւոր բաներն էին, նախ՝ մեծ սենեակ մը, հին գէնքերով լեցուն: Հոն տեսայ ապակիէ շիշեր՝ նետերու ծայրը դնելով արձակելու համար, անոնցմէ մէկը դեռ փակած էր նետի մը ծայրը, զայն ամուր բռնելու համար կողերէն ունէր չորս անագեայ կտորներ: Կային ահագին լայնալիճ աղեղներ եւ հեծաններ, յարսնապէս քարաններու մէջ գործածուելու համար, եւ հոռմէական համէտներ ու ձիու գլխանոցներ խոշոր մեծութեամբ, անոնցմէ ոմանք ներկուած էին: Կային նաեւ քանի մը խոշոր լարեր աղեղներու համար, եւ քարեր՝ նետելու սողարակներով»³:

Պիր կամ Պիրեճիկ Եփրատ գետի ափին վրայ ըլլալով, շատ անառիկ գիրք մը ունէր. ան պարսպապատ ըլլալէ զատ, խոր խրամներ զինքը կը բաժնէին ցամաքին կողմէն: Զուրը Եփրատէն առնելով, պատերազմի պարագային, կը լեցնէին խրամները եւ քաղաքը կատարեալ կղզիի մը կը փերածէին, ցամաքէն բոլորովին բաժնուելով: Պարիսպներուն վրայ կային հաւասար հեռաւորութեամբ մեծղի աշտարակներ. բայց քաղաքին ամէնէն նշանաւոր հնութիւնը իր միջնաբերդն էր:

ՊԱՏՄԱԿԱՆ

Պիր իբրեւ պարսպապատ քաղաք, իր ամուր զոյգ բերդերով, կտրեւոր դեր մը կատարած է ժ-ժի. դարուն: Պիր, մեր պատմութեան մէջ առաջին անգամ կը յիշուի 1110-1111ի շրջանին, երբ Պաղտին Եդեսիոյ կոմսը, իրեն օգնութեան կը կանչէ հայ իշխանները, որոնց մէջ նշանաւոր էր Պահլաւունի՝ Ապրղարիպ անունով հայ իշխանը, որ «նստէր ի քաղաքն անուանի որ կոչի Պիր»⁴: Ապրղարիպ ե՞րբ եկած եւ հոն հաստատուած էր, որոչ չենք գիտեր:

3. ՍԱՐԱՅԵԱՆ Ա. ԳԷՈՐԳ, Պատմութիւն Այճքապի Հայոց, Լոս Անճելոս, 1933, էջ 69-70:
4. Մ. ՌԻՒՀԱՅԵՏԻ, էջ 391:

Մ. Ուռհայեցի կ'ըսէ. «Որ ի Պարսից առեալ էին զբազում տեղիս քաջութեամբ իւրեանց, եւ ուժգին զօրութեամբ առին զքաղաքն զՊիրն»⁵: Ապրղարիպ Պիրի շրջանին մէջ զօրաւոր իշխանութիւն մը հիմնած էր, այնքան զօրաւոր, որ իր բանակներով կրնար Արարներու հօր զօրութեան դէմ դնել եւ պարտադրել ինքզինքը: Ապրղարիպ ինքզինքը այնքան զօրաւոր կը զգար՝ որ քաջութիւն կ'ունենար օգնութեան երթալու նաեւ Պաղտին Եդեսիոյ կոմսին:

Պարսից Բուրսուխ ամիրան 1114ին մեծ քանակով մը վու գայ եւ կը պաշարէ Պիրը. «Եւ գայր իջանէր ի վերայ քաղաքին՝ որ կոչէր Պիր՝ յեզր Եփրատ գետոյ»⁶:

Ապրղարիպ չվստահելով իր ուժերուն վրայ, օգնութեան կը կանչէ իրեն բարեկամ եւ դրացի Ուարբերդի Պալակ իշխանը, որ կայծակի արագութեամբ կը հասնի Պիրի մօտերը եւ կռիւի կը բռնուի պարսիկ սուլթանին հետ: Կատաղի կռիւներ կը մղուին Եփրատի ափերուն վրայ, Ապրղարիպ դուրս գալով Պիրէն, կը մասնակցի այս կռիւներուն, եւ միացեալ բանակները փառաւոր յաղթանակ մը կը տանին պարսկական բանակներուն վրայ: Բուրսուխ սարսափահար խոյս կու տայ հայկական զօրութեան առջեւէն, եւ իր զօրքերը խուճարկաբար կը ցրուին անապատներու մէջ»⁷:

Ապրղարիպեան եղբայրները՝ հազիւ ազատած Պիրը պարսկական ոտնձգութեանէն, ձեռք կը զարնեն զայն անառիկ դարձնելու, ուստի ամբողջ քաղաքը կրկին պարիսպներով կը չրջապատեն, խոր խրամներ կը բանան անոր շուրջը եւ ցամաքէն զայն անմերձեանի կը դարձնեն: Միջնաբերդին մէջ իրենց յարմար բնակարաններ կը շինեն եւ քաղաքին ապահովութեան համար ալ պահականոցներ կը շինեն անոր շրջակայքը: Անոնք իրենց տրամադրութեան տակ ունէին, ըստ պատմիչին, հազար զինուորներ:

Եդեսիոյ Պաղտին կոմսը տեսնելով որ Ապրղարիպեանները կը զօրանան՝ չի հանդուրժեր անոնց. «Եւ յորժամ տեսանէր կոմսն զբաւառն նոցա՝ կարի յոյժ մախայր ի սիրտն, եւ ոչ կարաց ծածկել զնա նախանձ շարին»⁸: Պաղտին կը ծրագրէ զանոնք մէջտեղէն վերցնել, գրաւելով անոնց քաղաքները, ուստի մեծ բանակի մը գլուխը անցած, զարնան կու գայ եւ կը պաշարէ Պիրը. «Զօրածողով արար եւ գնաց ի վերայ Պիրին»⁹: Պատմիչը կ'ըսէ թէ Թուրքէն աւելի գէշ վարուեցաւ քրիստոնեաներուն հետ: Պաղտին տարի մը ամբողջ կը պաշարէ քաղաքը եւ շատ նեղութիւններ կը հասցնէ քաղաքին. «Եւ գտարի մը խսար արկեալ զիշխանն Հայոց զԱպրղարիպն շարաչար եւ ազգի ազգի նեղութեամբ»¹⁰:

5. ԱՌՂ, էջ 422-423: ՍՄԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 142:
6. ԱՌՂ, էջ 413:
7. ԱՌՂ, էջ 413, 422-423: ՍՄԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 142:
8. ԱՌՂ, էջ 422:
9. ԱՌՂ:
10. ԱՌՂ:

Ի՞նչ էր այս տուած նեղութիւնը: Պաղտին տեսներով որ քաղաքին դէմ նետ արձակելով պիտի ջկարենայ ծունկի բերել անոր պաշտպանները, կը կտրէ քաղաքին ջուրերը, եւ երբ պաշարումը կ'երկարի, ներսը սով եւ ջուրի նեղութիւնը կը սաստկանայ եւ ժողովուրդը մեծ նեղութեան մէջ կ'իյնայ, Ապրղարիպեան եղբայրներու կացութիւնը կը վատթարանայ, քաղաքին բնակիչները սովէն նեղուած՝ կ'ապստամբին Ապրղարիպեան եղբայրներուն դէմ, եւ դաւ մը կը պատրաստեն զանոնք սպաննելու համար:

Երբ Ապրղարիպեանները այս կ'իմանան՝ կը ստիպուին ժողովուրդին կամքը կատարել, կը բանան քաղաքին դռները, կ'իջնեն ներքնաբերդէն եւ անձնատուր կ'ըլլան Պաղտինի: Այս մասին կը գրէ պատմիչը. «Եւ յայնժամ առ վտանգին եւ առ վշտացն անճարեալ լինէր Ապրղարիպն, եւ տայր զՊիրն եւ զամենայն գաւառն ի Պաղտինն»¹¹:

Պաղտին հակառակ իր տուած խոստումին, գէշ կը վարուի Ապրղարիպեան եղբայրներուն հետ, զանոնք բանտ կը նետէ. սակայն անոնք բարեկամանալով բանտապահին հետ՝ գիշերանց կը փախչին բանտէն եւ կ'ապաստանին Հոռմկլայ, Թորոս իշխանին քով, որ զանոնք սիրով կ'ընդունի եւ կը քաջաբերէ զանոնք: Այս մասին կը գրէ պատմիչը. «Եւ ինքն զնաց առ իշխանն Հայոց առ Թորոս եւ Ռուբենայ որդին՝ յԱնաւարգա»¹²: Թորոս Եփրատի արեւմտեան ափին վրայ հողեր կու տայ անոնց, անոնք Թորոսի հետ շատ մը պատերազմներու կը մասնակցին եւ շատ քաջութիւններ կ'ընեն¹³:

Պիր վերջնականապէս կ'անցնի անհետատես Պաղտինի ձեռքը, ու իր կարգին կը յանձնէ Գարբրան իշխանին. «Եւ կոմսն տայր զՊիրն եւ զամենայն գաւառն ի Գարբրան իշխանն Ծռանկաց ահաւոր»¹⁴: Այս անդիւանագէտ արարքով՝ Պաղտին եւ Ճօսլին նոյն սխալին մէջ կ'իյնան, ինչպէս Բիւզանդիոնի կայսրները, որոնք հայ իշխանները մէջտեղէն վերցնելով՝ անպաշտպան Թողուցին իրենց արեւելեան սահմանները՝ սելճուք Թուրքերու արշաւանքներուն առջեւ, որոնք շատ դիւրութեամբ կրցան դէպի արեւմուտք յառաջանալ, եւ մէկիկ մէկիկ քանդել հայ իշխաններու բերդերը: Ապրղարիպեաններէն վերջ՝ յաղթեցին միւս հայ իշխաններուն, Գող Վասիլի, Կոստանդինի եւ Բագրատի, որոնք կ'իշխէին Թլպաշարի ու Կարկառի շրջաններուն: Մ. Ուռհայեցի շատ տխուր շեշտով կը պատմէ այս դէպքերը¹⁵:

Ահա տխուր վերջաւորութիւնը հայ քաջարի իշխաններուն, որոնք հրապարակէ հեռանալէ ետքը, Բիւզանդացիները եւ լատին իշխանները իրենք իրենց ձեռքով բացին Այսրութեան ճամբաները թշնամիներուն առջեւ: Պաղտին կոմսի մահով՝ Պիր կ'անցնի Ճօսլինի եւ ապա սելճուք Թուրքերու ձեռքը, մինչեւ Թաթարներու գալուստը Կիլիկիա:

11. Անդ, էջ 423:
 12. Անդ:
 13. ԱԼՊՕՅԱՃԵԱՆ ԱՐՇԱԿ, Պատմ. Հայաստանի սահմաններում, Գահրէ, 1955, էջ 104:
 14. Մ. ՈՒՌ-ՀԱՅԵՑԻ, էջ 423:
 15. Հմտ. Անդ:

1264ին Հեթում Ա.ի Թազաւորութեան վերջին տարիներուն, Պիր ըստ Սմբատ պատմիչին՝ այլազգիներուն ձեռքն էր: Հուլաւուն խան՝ Տուրպա անունով մէկ հազարապետը կը շրկէ Պիրի վրայ, սա կու գայ եւ «եղեալ պատնէշս եւ քաղում նեղութիւն էս՝ բերդին, եւ փոյց զպատանս պարսպին հանդերձ պրճօքն»¹⁶: Տուրպա չի կրնար առնել քաղաքը, ուստի իրեն օգնութեան կը կանչէ մեր Հեթում Թազաւորը, սա ալ «գկնի աւուրց ինչ Թազաւորն Հեթում առեալ զգորս իւր գնայր առ Տուրպան»¹⁷, սակայն Տուրպան երբ կ'իմանայ որ Եգիպտոսի սուլթանը իր վրայ կու գայ, կը թողու Պիրը եւ կը հեռանայ: Ասկից վերջ Պիր չի յիշուիր մեր պատմութեան մէջ:



Եփրատի ափին Պիրեճիկ եւ իր միջնաբերդը:
 L'Euphrate à Birecik et sa citadelle (Denoël).

16. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 243:
 17. Անդ, էջ 243-244:

ԱՐԵՒԸՆԴԱՆ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Արեւընդան կամ Ռաւընդան, Եփրատի մերձակայ բերդաւաններէն մէկն էր. այսօր Թուրքերը կը կոչեն Ravanta kalesi: Անոր դիրքին եւ տեղւոյն մասին որոշ ծանօթութիւններ չունինք. այսօր այս նշանաւոր բերդաւանը աւերակ է: Մ. Ուռնայեցիի համաձայն, ան կը գտնուէր Կուրիս քաղաքին մօտերը, Այնթապի եւ Քիլիսի մերձակայ շրջաններուն մէջ. «... յԱրեւընդան՝ մերձ ի Կուրիս»: Այլիչան իր աշխարհացուցին մէջ կը գրէ Ռաւընդան, եւ կը դնէ Այնթապի եւ Քիլիսի մօտերը, հին Ուփրինոս գետի ափին:

ՊԱՏՄԱԿԱՆ

Այս ամրոցը հաւանաբար Ապլղարիպեան ծանօթ ընտանիքին կը պատկանէր՝ 1035էն առաջ, որոնք Վասպուրականէն գաղթած եւ հաստատուած էին Եփրատի շրջակայքը, եւ իրենց քաջութեամբ տիրած էին քաղմաթիւ բերդերու, եւ բաւական հզօր իշխանութիւն մը կազմած, իրենց կեդրոն ունենալով Պիր քաղաքը: Այս մասին կը գրէ Մ. Ուռնայեցի. «Բնակալեալ էին... եւ ի Պարսից առեալ էին քաղում տեղիս քաջութեամբ իւրեանց, եւ ուժգին զօրութեամբ առին զքաղաքն զՊիրն, եւ շինեցին իւրեանց բնակարան»¹:

Մ. Ուռնայեցի դարձեալ կը պատմէ թէ Ապլղարիպեան իշխաններէն զատ (բայց անոնց կողքին) այդ շրջաններուն վրայ կ'իշխէին ուրիշ հայ իշխաններ, Գող Վասիլ եւ Բագրատ. վերջինս Ուռնայեցիի համաձայն՝ տէր էր Արեւընդան բերդին, ինչպէս պիտի տեսնենք: Շատ հետաքրքրական է Մ. Ուռնայեցիի յիշատակութիւնը Գող Վասիլի եղբոր Բագրատի մասին, սակայն ան չ'ըսեր թէ Բագրատ եղբայրն էր Գող Վասիլի. ուրիշ աղբիւրներէ կ'իմանանք թէ Բագրատ Գող Վասիլի եղբայրն էր, զոր եւրոպացիները Պանկլաս կ'անուանեն. սա գրեթէ քսան տարի Պոլիս տարուած եւ քանտ նետուած էր, մինչեւ Պաշակիրներու հոն հասնիլը. նա կերպը գտեր է բանտէն ճողոպրելու եւ Պաշակիրներուն խառնուելով՝ Փոքր Ասիա անցած է եւ անոնց ուղեցոյց եղած է մինչեւ Մարաշ:

1. Մ. ՈՒՌՆԱՅԵՑԻ, էջ 423:
2. ԱՅՁ, էջ 422:

Պաշակիրներու բանակը դեռ Մարաշ չհասած՝ Բագրատ կ'առաջարկէ Պաղտինի Եփրատի հիւսիսէն անցնելով մտնել բուն Հայաստան, եւ կամ Միջագետքի ճամբով՝ ուղղակի քալել Պաղտատի վրայ:

Պաղտին հակառակ Կոնդֆրէտ եղբոր եւ եպիսկոպոսներու խորհուրդին, իսկոյն կ'որոշէ քաժնուիլ ընդհանուր բանակէն եւ հետեւիլ Բագրատի:

Կը գտնէ հազար հոգի իր ծրագրին համակրողներ եւ անոնց զլուխը անցած, առաջնորդութեամբ Բագրատի՝ կը սկսի արշաւանքը դէպի Եփրատացւոյ գաւառները, զոր Պաշակիրները Հայաստան կը կոչէին: Թուրքերը այս արշաւանքին լուրը առնելով՝ կը սարսափին, իսկ քրիստոնեաները կ'ուրախանան ու ամէն կերպով կ'օգնեն անոր, խորհելով թէ Մահմետականներու լուծէն պիտի ազատին:

Բայց շատ շանցած՝ կը տեսնեն որ խարուած եւ սխալած էին: Պաղտին կը յաջողի գրաւել քանի մը բերդեր եւ քաղաքներ եւ հասնիլ մինչեւ Եփրատի ափերը: Կը գրաւէ Տլուքը, Այնթապը եւ շատ կարեւոր մէկ կեդրոնը՝ Արեւընդան կամ Ռաւընդան, եւ անկից ալ կ'անցնի Կուրիս եւ կը գրաւէ այս նշանաւոր եւ հին բերդաքաղաքը:

Պաղտին կը գրաւէ նաեւ Թլպաշարը եւ շատ գէշ կը վարուի քրիստոնեաներուն հետ, որոնք խրաչելով կը սկսին հակառակիլ անոր:

Քիչ ետք Բագրատ ալ, որ այնքան հաւատարմութեամբ ծառայած եւ օգնած էր անոր, կը բաժնուի: Ճշմանկ պատմիչները այնպէս կը ներկայացնեն՝ թէ Բագրատ կ'ուզէր անմիջապէս իրեն սեփականել միասնաբար գրաւուած երկրին մէկ մասը, բայց Պաղտին ասոր կ'ընդդիմանայ եւ այս պատճառով Բագրատ կը թողու եւ կը հեռանայ³:

Պաղտին Թլպաշարը գրաւելէ վերջ՝ զայն իր նորակազմ կոմսութեան կեդրոն կ'ընէ, եւ անցնելով Եփրատ գետը՝ կը գրաւէ նաեւ Սրուճ քաղաքը: Ուռնայի Թորոս կոմսը մարդ կը դրկէ, իրեն կը կանչէ Պաղտինը եւ անոր կը յանձնէ Ուռնայի կոմսութիւնը: Հայերը կ'երեւի թէ կ'ակնկալէին որ Պաղտին Ուռնայի դքսութիւնը ստանալէ յետոյ՝ Թլպաշարը իրենց ձգէ, այսպէս կ'ակնկալէին մանաւանդ Վասակի որդիները, Ապլղարիպ եւ Լիկոս. բայց Պաղտին կը նախընտրէ Թլպաշարն ալ իր ձեռքը պահել: Ասով Բագրատ իրեն սահմանակից եւ դրացի կ'ունենար լատին այս անխիղճ իշխանը, որ իր կեղծ դիմակին տակ հայասէր կը ցուցնէր ինքզինքը, բայց սրտանց կ'ատէր Հայերը, ու հետեւաբար ծածկուած թշնամութիւն մ'ունէր անոնց դէմ, մանաւանդ երբ կը տեսնէր որ անոնք իրենց փէնքերով եւ քաջութեամբ կը տիրանային ամբողջ Եփրատի շրջանին. ուստի իր կեղծ դիմակը վար առնելով կը սկսի ուղղակի կռուիլ անոր դէմ, փոքր յարձակումներով անոր ոյժը փորձել, ջանալով տկարացնել զայն, ու կը ծրագրէ Ապլղարիպեան Բագրատը մէջտեղէն վերցնել:

Այսպէս Պաղտին 1117ին Սրուճէն մեկնելով կը քալէ ուղղակի Բագրատի

3. ՍԱՐԱՅԵԱՆ ԳԵՈՐԳ Ա., Պատմութիւն Այնթապի Հայոց, էջ 222-223: Հմտ նաեւ Համդէս Ամսօրեայ, 1934, էջ 265:

դէմ: Տարի մը կը պաշարէ քաղաքը եւ շատ նեղութիւններ կու տայ ներսի բնակիչներուն, անոնք տեսնելով որ պիտի չկարենան երկար դիմանալ՝ կը ստիպուին բանալ քաղաքին դռները. «Երբեք առ վտանգին եւ առ վշտացն անճարեալ լինէր Ապլղարիպն, եւ տայլ զՊիրն եւ զամենայն գաւառն ի Պաղտինն, եւ ինքն գնաց առ իշխանն Հայոց առ Թորոս եւ Ռուբենայ որդի՝ յԱնաւարգա»⁴:

Պաղտին Ապլղարիպեանները մէջտեղէն վերցնելէ վերջ, իր զէնքերը կը դարձնէ Գող Վասիլի դէմ, եւ կը սկսի ասորիների պահանջներ ներկայացնել անոր եւ զբողոքի զայն, նեղութիւններ պատճառելով. եւ օր մըն ալ մեծ բանակով մը կը քալէ անոր հողերէն ներս:

Գող Վասիլ չի կրնար Պաղտինի զօրաւոր բանակին դիմադրել, կը պարտուի եւ կը ստիպուի Թողուլ իր երկիրը եւ քաջուիլ ուրիշ տեղեր: Այս մասին կը գրէ պատմիչը. «Սա մեծաւ նեղութեամբ տարազիր արար զամենեւեան, եւ քակեաց զամենայն իշխանութիւն Գող Վասիլն, եւ փախստական արար զամենայն դասս ազատաց նորա ի Կոստանդնուպօլիս»⁵:

Պաղտին Գող Վասիլի եւ բերդերուն տիրանալէ վերջ, տակաւին յագեցած չէր, աչք ունէր նաեւ անոր եղբոր Բագրատի հողերուն եւ բերդերուն վրայ, եւ մասնաւորապէս կ'ուզէր տիրանալ անոր Արեւընդան բերդին, որ կարեւոր դիրքի մը վրայ էր. ուստի սուտ պատճառներով, զայլի եւ գառնուկի առածին նման, «Չուրս կը պղտորես» ըսելով՝ կը յարձակի անոր վրայ: Բագրատ առանձին չէր կրնար Պաղտինի հզօր բանակին դիմանալ, որ «աւարեաց եւ զմիւս իշխանն Հայոց զԲագրատ» զայր քաջ, եւ յափշտակեաց զամենայն գաւառն նորա որ բնակեալ էր յԱրեւընդան մերձ ի Կուրիս»⁶:

Պաղտին՝ հայ իշխանները մէջտեղէն վերցնելէ վերջ, շուտով կոխի կը բռնուի լատին Տանգրէտ իշխանին հետ, որոնք երկար եւ արիւնալի կռիւներ կը մղեն Եփրատի շրջանին մէջ: Պաղտին կը յաղթուի եւ կ'ապաստանի Արեւընդան բերդը, զոր յափշտակած էր Բագրատէն: Այս մասին կը գրէ պատմիչը. «Եւ Պաղտին լինէր փախստական եւ անկանէր ի բերդն որ ասի Արեւընդան»⁷: Վրայ կը հասնի Նուբէտտին սուլթանը եւ լատին կոմսութիւններ մէկիկ մէկիկ կ'իյնան անոր ճիրաններուն տակ եւ կը հեռանան հրապարակէն. Նուբէտտին Արեւընդան բերդն ալ կը գրաւէ, զայն կը յանձնէ Մճմատին իշխանին, որ իր երկրորդն էր Միջագետքի մէջ. Սմբատ կը գրէ. «Մճմատինն, տէրն Արեւընդոյն, որ երկրորդն էր Նուբէտտին... դարանամուտ եղեալ նոցա, յարեան ի վերայ եւ կոտորեցին զամենեւեան եւ կալան դրիննն եւ երեսուն ձիաւոր, եւ տարան ածին ի Հայկ քաղով նախատանօք»⁸:

ԺԲ. զարուն պատմագիր Կիւլիէլմոս Տիւրացի, որ Սուրիա ծնած է եւ հոն ապրած երկար տարիներ, Սուրիոյ եւ Եփրատի շրջանի լատին կոմսերու եւ իշխաններու պատմութիւնը գրի առած է. իր գրքին մէջ կը խօսի նաեւ

4. Ս. ՌՈՒՀԱՅԵՑԻ, էջ 423:
 5. ԱՅԴ:
 6. ԱՅԴ:
 7. ԱՅԴ, էջ 383:
 8. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 185:

Բագրատ եւ Գող Վասիլ իշխաններու մասին, որոնք 1107ին կ'իշխէին այդ շրջաններուն. իր շահեկանութեան համար ամփոփելով հոս կը մէջընթաց.

«Բագրատ 1107ին Եփրատի շրջանի շատ մը բերդերու իշխանն էր. երբ Կոտրֆրէ (Godefroid) դուքսը Եփրատացւոց երկրին վրայ կու գայ, ուր կային երեք բերդեր, մէկուն անունն էր Թլպաշար, երկրորդինը՝ Այնթապ, եւ երրորդինը՝ Արեւընդան, Կոտրֆրէ դուքսը այս շրջանին մէջ բանակ կը գարնէ եւ կը նստի: Երկրին բնակիչները կը քոնքով խլամ էին ու իրենց ներկայանալով կը զանգատին երկու հայերու մասին, որոնք երկու եղբայրներ էին, մէկուն անունն էր Բագրատ (Pancrace) իսկ միւսինը՝ Գող Վասիլ (Covesiles):

«Այս երկու եղբայրները տերութիւն ունէին այդ շրջանին մէջ եւ երկրին մեծ մարդիկն էին, բայց իրենց մէջ պարկեշտութիւն բնաւ չկար: Անոնք իրենց բանակին մէջ կ'ընդունէին ամէն տեսակի մարդիկ, գողեր, աւազակներ, եւ անոնցմով՝ ամէն տեսակի զէչութիւններ կ'ընէին: Անոնք այդ աւազակներուն գլուխը անցած՝ կը յարձակէին իրենց շուրջը եղող գիւղերուն եւ բերդերուն վրայ, կը կողոպտէին եւ ապա իրենց բերդերը կը քաշուէին:

«Միեւեւ անգամ կը յարձակէին Եփրատի երկուսը վրայ եւ կը կողոպտէին: Երբ Կոտրֆրէ դուքսը այս բնիկներուն գանգատը լսեց, յիսուն ձիաւորներ զրկեց իր մարդոցմէ, եւ երկրին մարդիկը, որպէսզի երթան այդ հայերուն բերդերը գրաւեն եւ հիմնայատակ կործանեն»⁹:

Կուլիէլմոս Կիւրացիի այս պատմածները որքան որ չափազանցուած ըլլան, անոնց պատմական ստուգութիւնը չենք կրնար երաշխաւորել, քանի որ մեր պատմութեան եւ պատմիչներու՝ Մ. Ուուհայեցիի եւ Շնորհալիի հակառակ կը համեմատին: Ան գրի առած է այս պատմութիւնը իր աւանդած Եփրատեաններէն երկու հարիւր տարի վերջ, հետեւաբար ակնհաստես չէ եւ ոչ վաւերական: Սակայն մեզի կու տայ հոն կարեւոր փաստաթուղթ մը եւ թանկագին յայտնութիւն մը. այսինքն թէ Գող Վասիլ եւ Բագրատ՝ եղբայրներ էին. այս մասին որչափ որ կը գրէ Մ. Ուուհայեցի, սակայն անոնց եղբայր ըլլալուն մասին ոչինչ կ'ըսէ: Երկրորդ՝ թէ անոնք իրենց քաջութիւններով եւ կռիւներով էր որ տիրացած էին այդ հողերուն: Երրորդ՝ թէ անոնք մեծ ազդեցութիւն թողուցած էին իրենց շրջակայ ժողովուրդներուն եւ իշխաններուն վրայ, այնքան քաջ էին որ կրնային անոնց բանակներուն դէմ դնել:

Ի՞նչ կարելի է հետեւեցնել Կ. Տիւրացիի այս տուեալներէն. եթէ չըլլային Պաղտին եւ Ճօպին անհեռատես կոմսերը, ինչպէս նաեւ կարճամիտ բիւզանդացի կայսրերը, անոնք կրնային երկար ատեն դէմ դնել եւ իշխել հոն, եւ կեցնել Թուրքերու արշաւանքը դէպի արեւմուտք, փրկելով Կիլիկիան:

Բիւզանդացիները եւ լատին իշխաններ այս հայ իշխանները մէջտեղէն վերցնելով, քանդեցին իրենց երկրին նախապարիսպները, ճամբայ բացին որ իրենց թշնամիները դիւրութեամբ եւ առանց մեծ կորուստի մտնեն Կիլիկիա եւ անկից յառաջանալ Փոքր Ասիոյ խորերը¹⁰:

9. ՍԱՐԱՅԵԱՆ ԳԵՈՐԳ Ա., Պատմութիւն Այնթապի Հայոց, էջ 221:
 10. Հմմտ. ԱՅԴ, էջ 222-225:

ՀԱՐԹԱՆ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Հարքան եփրատական երկրի ամուր բերդերէն մէկն էր, կը գտնուէր Ջիհուն գետի հովիտին մէջ, Հասան Մանսուրի մօտերը, Եփրատ գետի արեւմտեան ափին վրայ: Անոր շինութեան թուականին մասին բան մը չենք գիտեր:

ՊԱՏՄԱԿԱՆ

Մեր պատմիչներէն Սմրատ Սպարապետ եւ Մ. Ուռհայեցի կը յիշեն Հարթան բերդը պատմական նոյն պարագաներու առթիւ, երբ 1107 թուականին, Պարսիկները 120.000 բանակով կ'անցնին Տաւրոսի լեռներէն եւ կը մտնեն Կիլիկիա. «եւ աւերեցին զաշխարհն Անարզարոյ, եւ անթիւ գերութեամբ եւ աւարաւ զնացեալ անցին ընդ դաշտն Մարշայ եւ ելին յերկիրն Գող Վասիլին, ի սահմանս Նուկրականն»¹: Գող Վասիլ լսելով Պարսիկներու յարձակումը իր երկրին վրայ, կը հաւաքէ իր զօրքը եւ «իբրեւ կորիւն առիւծու յարձակեցան ի վերայ նոցա, եւ ի սուր սուսերի մաշեցին զնոսա առհասարակ, առին զաւար եւ զգերի նոցա եւ կալան ի նոցանէ զլիաւորս հինգ եւ դարձան մեծաւ յաղթութեամբ ի Քեսուն»²: Քեսուն՝ Գող Վասիլի գլխաւոր քաղաքն էր եւ կեդրոնը իր իշխանութեան: Պարսիկները շուտով չեն համակերպիր այս ամօթալի պարտութեան. 1108ի դարնան, կ'ըսէ պատմիչը, «քինախնդիր լեալ Գող Վասիլին այլազգիքն, եւ ժողովեցան իբրեւ արսեօթն հազար եւ յաւուրս հեծոցն հասին ի վերայ, եւ սուր ի վերայ եղեալ կոտորեցին զհնձողան, եւ բազում գերութեամբ իջին ի վերայ բերդին որ կոչի Հարքան»³: Ասկից կ'երևի որ Հարթան Գող Վասիլի բերդերէն մէկն էր, բայց թէ ինչպէս զայն ձեռք ձգած էր՝ պատմիչները ոչինչ կ'ըսեն. հաւանաբար տուցած էր 1104ին՝ կռուելով լատին Պեմունդ իշխանին կողքին. «օգնութեամբ մեծ իշխանին Հա-

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 128-129:
2. Անգ, էջ 129:
3. Անգ:

յոց որ ասի Գող Վասիլ, եւ սորա տուեալ տանն հազար դահեկան ի գինսն նորա»⁴:

Գող Վասիլ տեսնելով Պարսիկներու շարժումը, «պատրաստեցաւ զօրօք ի պատերազմ հինգ հարիւր ձիաւորով եւ հազար հետեւակով, եւ արիարար մարտեան զօրքն Հայոց եւ քաջապէս մղէին զբանակս այլազգեացն, եւ զմիմեանս յորդորէին անպարտելի զօրականքն Քրիստոսի»⁵: Որո՞նք էին այս անպարտելի զօրականները. «Պետրոս քեռի Գող Վասիլին, եւ Տղայ Վասիլին, յազատ ազգէ՝ իւրով գնդիւն, եւ Ապլասաթ եւ Տիգրան իւրեանց զօրօքն հեղուին զբարկութիւն Աստուծոյ ի վերայ այլազգեացն»⁶:

Գող Վասիլ իր քաջ օգնականներով փառաւոր յաղթանակ մը կը տանէր այլազգիներուն վրայ, եւ ինչպէս կ'ըսէ պատմիչը՝ «յաղթեալ կոտորեցին զնոսա, եւ կալան զսուլտանն նոցա, եւ բազում ամիրայս, եւ վարեցին առաջի իւրեանց ի գերութիւն. եւ փրկեցան ամենայն գերիքն, եւ ուրախութեամբ դարձան եւ գոհացան զՏեառնէ»⁷:

Այսպէս Գող Վասիլ յաղթական Հարթան բերդ կը վերադառնար, ետ առնելով այլազգիներէն ինչ որ կողոպտած էին եւ գերի առած:

4. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 363:
5. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 129:
6. Անգ:
7. Անգ:

ՀԱՍԱՆ ՄԱՆՍՈՒՐ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Հասան Մանսուր Եփրատի շրջանի բերդերէն մէկն էր, իր իսկական հըն- շումն էր՝ Հիսն-Մանսուր, Հիսն կը նշանակէ բերդ, եւ Հիսն Մանսուր՝ Ման- սուրի պարիսպ, որ աղաւաղուելով ժողովուրդէն եղած է Հասան Մանսուր՝ որ կը նշանակէ նաեւ Գեղեցիկ Մանսուր: Բերդը համանուն քաղաքով կը դըս- նուէր Եփրատ գետի արեւմտեան ափին վըրայ, Մամուսատի հիւսիսակողմը, եւ Մալաթիոյ հարաւ-արեւմուտքը՝: Մամուսատի դիմացի ափը կը տարած- ուէր համանուն Հասան Մանսուր գաւառը. իսկ անցնելով Մամուսատի գի- մաց եղող հունէն, կարելի էր հասնիլ Հասան Մանսուր բերդաքաղաքը, «յայն- ժամ անցանէին ընդ հուն Եփրատ գետոյն, եւ սրով յարձակեցաւ ի վերայ Հասան Մսրոյ գաւառին»²:

ՊԱՏՄԱԿԱՆ

Ո՞վ շինած էր այս նշանաւոր բերդը իր համանուն գիւղով: Արար պատ- միչները անոր շինութիւնը կ'ընծայեն Մանսուր անուանով անձի մը, որ ա- պրած է Ռմատեան վերջին խալիֆային՝ Մրվանի օրով³, 758ի շրջանին. իսկ Հասան Մանսուր բերդի շինութիւնը պէտք է որ եղած ըլլայ 745-750ի ժա- մանակները, ինչպէս պիտի տեսնենք ստորեւ:

Արար պատմագիր Պէլլատուր, որ նոյնպէս ապրած է Մրվանի օրով, եւ մասնակցած է անոր մղած պատերազմներուն, կը գրէ Հասան Մանսուր բերդի մասին, որ իր շահեկանութեան համար հոս կը մէջբերենք.

«Ինձի պատմեց Ապուլ Ամր ալ-Պահըլի եւ տրիչներ՝ թէ Հըսըն Մանսուր կը վերադրուի Քայս ցեղէն Մանսուր իպն Ճաուանա իպն ալ Հարըթ հալ- Ամըրիի: Ինքը ստանձնած էր անոր շինութիւնն ու նորոգութիւնը, եւ հոն էր Մրուանի օրերուն (745-750)»⁴:

1. Ինձիճեմալ 2. Ղ., Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 324.
 2. Մ. Ռիֆ-ՀԱՅԵՑԻ, էջ 224-225:
 3. Անդ, էջ 558, Ժանոթ. Թիւ 110:
 4. Բագմալիւպ, 1963, էջ 196:

Արարները 300 տարուան ընթացքին կամաց կամաց տիրացեր են Եփրատի շրջաններուն, Բիւզանդական կայսրութեան ձեռքէն խլելով քաղաքներ, գիւղ- ղեր եւ բազմաթիւ բերդեր. արիւնայի կռիւներ մղելով տեղացի քրիստոնեայ ժողովուրդին եւ իշխաններուն դէմ, ջարդելով ու կողոպտելով տեղացիները: Մատթէոս Ռուհայեցիի համաձայն, 1062-1063ին պարսիկ Սլար Խորասան կը յարձակի Պաղտինի վրայ եւ ապա Թլխամոյ գաւառին վրայ. «եւ էր երկիրն ամենայն բոլոր շէն՝ լծած մարդով եւ անասնով, եւ էր բազում ամբոխ յա- մենայն գաւառսն»⁵. այս փառաւոր երկիրը Արարները արիւնով կ'ողողեն, գրաւելով Ամիթ, Կարկառ, Թլխամ քրիստոնեաբնակ քաղաքները, ինչպէս նաեւ Հասան Մանսուր:

Այս տեսնելով Բիւզանդիոնի Տուկիծ կայսրը Արեւելք կը ղրկէ Ֆրանգա- պոյ, «եւ գային հասանէին ի Թլխամ մեծաւ զօրութեամբ: Եւ արար զօրա- ժողով Ռուհայոյ տուկն, որոյ անուն ասէին Դաւաւաւնոս, այր քաջ եւ հզօր ի պատերազմի եւ անուանի ի վերայ երկրի, որոյ զօրաժողով արարեալ զՍու- հայ եւ գկարկառ եւ գՀասան Մսուր, եւ խաղայր զօրօք ի վերայ Տաճկաց»⁶: Ասիկա ցոյց կու տայ թէ այս շրջանիս Հասան Մանսուր քրիստոնեաներուն ձեռքն էր: Սակայն 1067ի ատենները Արարները դարձեալ կը գրաւեն Հասան Մանսուրը. Արփասլանի իշխաններէն՝ Գոմշտիկին, մեծ քանակով մը կը հա- նի Ռուհայ եւ գայն կը գրաւէ: Ապա կը պաշարէ Նսեպինը ու չկարենալով գրաւել՝ յուսահատ ետ կը քաշուի, եւ անցնելով Եփրատի հունէն՝ կ'երթայ Հասան Մանսուր բերդի վրայ. «յայնժամ անցանէր ընդ հուն Եփրատ գե- տոյն, եւ սրով յարձակեցաւ ի վերայ Հասան-Մսրոյ գաւառին, եւ աստուա- ծասաստ բարկութեամբ ի բերան սրոյ մաշեաց գայն քաջ վայելուչ գաւառն եւ զամենայն իշխանսն գաւառին Հասան Մսրոյ սրով եւ մահու խոցմամբ սատակէին»⁷:

Եղեսիոյ կոմսը ասիկա լսելով՝ Նսեպինի կոմսին, Արվանդանոսի լուր կը ղրկէ՝ որ շուտով օգնութեան հասնի: Արվանդանոս կ'ուշանայ. Գոմշտիկին ժամանակ կ'ունենայ Հասան Մանսուրէն իրեն օգնական զօրք բերելու:

Արվանդանոսի բանակին մէջ մեծ թիւով վարձկան յոյն զինուորներ կա- յին, որոնք կաշառուած թշնամիէն, կռիւի ամէնէն տաք պահուն կը լքեն ճակատը եւ կը փախչին, ինչպէս կը գրէ պատմիչը. «եւ ոչ էին ի մի խոր- հուրդ այլ զօրքն Արվանդանոսի, որ էին Յոյնք, Թողեալ զԱրվանդանոս փա- խեան: Եւ եղեւ յաւուր յայնմիկ կոտորած եւ բարկութիւն մեծ ի վերայ հա- ւատացելոցն. զի էր թիւ կոտորածին տասն հազար»⁸:

Արվանդանոս գերի կը բռնուի, իսկ մնացած զօրքերը սարսափահար կը փախչին եւ կ'ապաստանին Օշին բերդը: Այս մասին կը գրէ պատմիչը. «Եւ եղեալ անօրէն ամիրայն լուծ ի պարանոցին Արվանդանոսի՝ այնիւ վարէր

5. Մ. Ռիֆ-ՀԱՅԵՑԻ, էջ 68:
 6. Անդ, էջ 170:
 7. Անդ, էջ 224-225: ՍՄԲԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 67-68:
 8. ՍՄԲԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 68:

գերի, եւ բերեալ զնա ի քաղաքն Ուռհա եւ անդ վաճառեաց զնա քառասուն հազար դահեկանի. եւ ընդ քսան հազար դահեկանէ եղ զորդին իւր պատանտ եւ մնաց անթափելի ի Պարս»⁹: Այս տխուր էջերը կը գրէ նոյն իմաստով նաեւ Մ. Ուռհայեցի¹⁰:

Հասան Մանսուր բերդը կը մնայ Պարսիկներու ձեռքը, մինչեւ որ Կիլիկիոյ մէջ կը զօրանան հայ քանի մը իշխաններ եւ կոռուելով Պարսիկներու դէմ՝ անոնցմէ կը խլեն բերդեր եւ քաղաքներ: Այս իշխաններէն ամէնէն նշանաւոր ու քաջը եղած է Փիլարտոս հայը, որ ծնունդով Հասան Մանսուրէն էր¹¹. ան 1072ին Եփրատի շրջաններէն կը գրաւէ շատ մը բերդեր եւ քաղաքներ, եւ ժամանակ մը հոն անկախ կ'իշխէ, մինչեւ իր մահը: Իր մահէն վերջ, հաւանաբար Հասան Մանսուր կ'անցնի Գող Վասիլ իշխանին ձեռքը, որովհետեւ երբ 1112ին Անտիոքի Տանգրի կոմսը Գող Վասիլին վրայ կու գայ, Գող Վասիլ, կ'ըսէ պատմիչը, «ժողովեաց զգօրս իւր, եւ երբ այլ գօրս ի Պարսից յօգնականութիւն իւր, եւ բանակեցաւ ընդդէմ նորա, եւ ապա արարին սէր, եւ դարձուցին ի միմիանս զոր ինչ առեալ էին բերդ. Գող Վասիլ զարձոյց զՀարսնմսուր, զԹաւրէշ եւ զՈւրեմն»¹²:

1115ին տեղի կ'ունենայ Կիլիկիոյ շրջանի արեւտալի երկրաշարժը եւ քարուքանդ կ'ըլլան հազարաւոր քաղաքներ, եկեղեցիներ եւ վանքեր, այս առթիւ կը կործանի նաեւ Հասանմանսուր, ինչպէս կը գրէ պատմիչը. «Եւ յայսմ պիշերի կործանեցաւ Սամուսատ քաղաք եւ Հասան-Մսուր...»¹³:

Այսօր Սամուսատի շրջանին մէջ շատ մը աւերակ բերդերու մնացորդներ կը տեսնուին, բայց թէ որն է հին Հասանմանսուրը, հնագէտները չեն կրցած անոր տեղը որոշել:

9. Աճղ, էջ 68-69:

10. Հմմտ. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 226:

11. Հմմտ. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 248:

12. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 138-139:

13. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 138: ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 418:

ԿՈՐԻՍ ԿԱՄ ԿՈՒՐԻՍ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Կորիս կամ Կուրիս Եփրատի շրջանին բերդաւաններէն մէկն էր, որուն մասին շատ քիչ ծանօթութիւններ ունինք: Մ. Ուռհայեցիի հրատարակիչը կը գրէ անոր մասին. «Կուրիս բերդաքաղաք է յԱսորիս, ի հիւսիսոյ Հալէպու՝ ի լեռնամէջս, մերձ յամուրն Արեւընդան, եւ այժմ կոչի Խօրօզ»¹:

Հին ժամանակներ Կուրիս քաղաքական բերդաքաղաքներէն մէկը եղած է եւ հաւանաբար Բիւզանդիոնի կայսրները 1102էն վերջ զայն Անիէն կամ Վասպուրականէն եկող հայ իշխաններու յանձնած ըլլան: Անոնք իբրեւ ճորտներ՝ կը կառավարէին այդ շրջանները, կայսրին հովանիին տակ:

ՊԱՏՄԱԿԱՆ

Ժ. դարուն, Արարներու արչաւանքի ընթացքին, Կուրիս անոնց ձեռքը կ'իյնայ: 1030-1031 տարուան ընթացքին Ռոմանոս կայսրը Ազազի վրայ կու գայ, զայն Թուրքերու ձեռքէն ազատելու համար. սակայն չկարենալով գրաւել, չարաչար պարտուած՝ կը թողու Ազազի պաշարումը եւ կ'ուղղուի դէպի Կուրիս, որ դեռ քրիստոնեաներու ձեռքը կը մնար: Թուրքերը կայսրին ետեւէն կ'իյնան եւ կը հարածեն զայն, ճամբու ընթացքին ջարդելով 30.000 զինուորներէ աւելի: Ռոմանոս կայսրն ալ վիրաւոր կ'իյնայ ճամբու եզերքի թուփերուն մէջ կիսամահ, եւ 14 օր հոն մնալէ վերջ, պատահաբար Կուրիսէն եկող զիւղացի մը զայն կը տեսնէ, եւ մեղքնալով անոր վրայ, կը վերցնէ եւ կը տանի Կուրիս՝ իր տունը, կը խնամէ, կ'առողջացնէ եւ ապա ազատ կ'արձակէ, առանց գիտնարու որ Ռոմանոս կայսրն է: Կայսրը Պորիս հասնելով՝ իր քով կը կանչէ Կուրիսցի զիւղացին եւ կը վարձատրէ. «Եւ արար զնա տէր սմենայն զաւառին Կուրիսոյ. մեծաւ պարգեւօք յուղարկեաց զնա ի տուն իւր՝ մեծաւ գոհուլեամբ»²:

Պաղտին Ուռհայի կոմսը, 1117-1118ին՝ մէկիկ մէկիկ մէջտեղէն կը վերջընէ Եփրատի շրջաններուն հայ իշխանները. ու Գող Վասիլէն վերջ՝ կարգը

1. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 554, Ժանօթ թիւ 65:

2. Աճղ, էջ 65:

եկած էր Բագրատ Հայ իշխանին, որ կը տիրէր Արեւընդան բերդի շրջանին, ինչպէս նաեւ Կուրիսի: Ուռհայեցի «այր քաջ» կը կոչէ Բագրատը, եւ որու վրայ կը յարձակի Պաղտին վաստ Փռանկը, որ «յափշտակեաց զամենայն դաւառն նորա, որ բնակեալ էր յԱրեւընդան՝ մերձ ի Կուրիս»³: Այս դէպքը ցոյց կու տայ թէ այս ժամանակները Կուրիս Բագրատ Հայ իշխանի հողերուն եւ բերդերուն մաս կը կազմէր:

Կուրիս լեռնային շրջանի մը բերդերէն ըլլալով՝ կարեւոր դիրք ունէր, հետեւաբար զինուորական կեդրոն էր. անկից կը մեկնէին զինուորական ճամբաները դէպի Եփրատի կողմերը: 1125ին Երուսաղէմի Թագաւորը 30.000 զօրքով կու գայ Եփրատի շրջանը, եւ պատմիչը կ'ըսէ թէ «իջանէր ի Կուրիս», եւ անկից կը շարունակէ Արագի վրայ՝ որ Պարսից Բրզուէս ամիրային ձեռքն էր: Երուսաղէմի Թագաւորը չկարենալով Ազազը գրաւել, սուտ փախուստ կը կեղծէ. Թուրքերը դէպի Կուրիս փախչողներու ետեւէն կ'իջնան եւ կը հալածեն. բայց քրիստոնէայ բանակը ետ կը դառնայ, «եւ դարձուցեալ զնոսա ի փախուստ եւ յարձակեցան զհետ, եւ կոտորեցին երեսուն եւ հինգ հազար այր, եւ մեծաւ յաղթութեամբ դարձան ի Կուրիս»⁴:

Այս թուականներուն Կիլիկիոյ շրջանին մէջ զօրացած էին Հայ իշխաններ եւ շատ մը տեղեր գրաւած: 1157ին երբ Մլեհի եղբայրը Թորոս կը վախճանի, իր հողերէն ոչինչ կը թողու իր եղբոր Մլեհի, որ նեղուած՝ կը թողու Կիլիկիան եւ կ'երթայ Հայկազի Նուրէտտին սուլտանին հետ դաշինք կը դնէ եւ անոր ծառայութեան մէջ կը մտնէ: Ասիկա ցոյց կու տայ որ այս թուականին Կուրիս Հայկազի Նուրէտտին սուլթանին ձեռքն էր եւ կը փնտռէր մէկը՝ որ այդ շրջանին կառավարիչ դնէր: Ատիժը եկած էր. Նուրէտտին, կ'ըսէ պատմիչը, «ետ նմա զԿուրիս եւ զգաւառն իւր»⁵: Մլեհ անհամար շարիքներ կը հասցնէ տեղացի Հայ ժողովուրդին գլխուն, անխնայ ջարդելով եւ իբրեւ գերի ծախելով գանոնք հրապարակներու վրայ, ինչպէս կը գրէ դարձեալ պատմիչը. «Եւ քինախնդի լեալ հակառակացն իւրոց եւ գերդեալ տառապեցոյց զնոսա եւ մատնեաց քանտից եւ կապանաց, եւ ձեռնարկեալ յեպիսկոպոսունս՝ ատամնաթափ առնէր... զկանայս պարկեշտս եւ համեստս խայտառակէր եւ աղտեղի պոռնկութեամբ եւ անամօթ լրբութեամբ ապականէր»⁶: Մլեհ կը սպաննուի իր ժողովուրդէն, թողլով Կորիսը դարձեալ այլազգիներուն ձեռքը: Ու այնուհետեւ Կորիս չի յիշուիր մեր պատմութեան մէջ:

3. ԱՅՊ, էջ 423:
4. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 157:
5. ԱՅՊ, էջ 187: Սմբատ Սպարապետ փոխանակ Կուրիսի կը գրէ Կիւրոս:
6. ԱՅՊ, էջ 189:

ԹԼՊԱՇԱՐ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Թլպաշար Եփրատի շրջանի բերդաքաղաքներէն էր, կը գտնուէր Այնթապի հարաւ-արեւելքը, Եփրատի արեւմտեան ափէն քիչ հեռու: Այլշան զայն կը դնէ Մարաշի եւ Եփրատ գետի միջեւ եւ կ'ըսէ թէ բաւական ամուր էր դիրքով եւ շէնքերով: Իսկ Վարդանի մէջ իբրեւ ծանօթութիւն կը դնէ ըսելով՝ «Ներայրն Կոտրֆրուայ է առող Թլպաշարայ. սա նշանակէ Թիլ Աւետեաց եւ է բերդաքաղաք յարեւմտից հարաւոյ Հոռմկլայի եւ Պիրէճիկի, կայ յաջմէ Եփրատայ»¹:

Մ. Ուռհայեցի՝ Թլպաշարը երբեմն քաղաք կը կոչէ, երբեմն բերդ, ինչ որ կը նշանակէ թէ պարսպապատ քաղաք էր եւ ունէր նաեւ իր միջնաբերդը²:

Արար պատմագիրները զայն կը յիշեն եւ կը կոչեն Թէլ-Պաշար, որ կը նշանակէ Աւետման բլուր, Հայերը զայն իր հին անունով կ'անուանեն Թիլ Աւետեաց³:

Թլպաշար, ինչպէս որ կ'երեւի, Միջագետքի հայկական անուանի բերդաքաղաքներէն էր, ամուր պարիսպներով շրջապատուած, հզօր աշտարակներով պաշտպանուած, կը քարձրանար քարաժայռի մը կատարին վրայ. պարիսպներէն ներս ունէր իր անառիկ կոչուած միջնաբերդը, ուր կը նստէին իշխանական ընտանիքի անդամները:

Թլպաշար բերդաքաղաքը որչափ որ այսօր աւերակ է, սակայն անոր միջնաբերդը կանգուն է եւ թուրքերը զայն կը կոչեն Tellbaser kalesi = Թէլպաշար գայէսի:

ՊԱՏՄԱԿԱՆ

Թլպաշար հին քաղաք է, այսօր իր հնուկներէն ոչ մէկ հետք մնացեր է, բացի իր բերդէն: Ո՞վ հիմը դրեր է այս նշանաւոր բերդաքաղաքին, պատ-

1. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 220: Տես նաեւ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, Պատմութիւն, Վենետիկ, 1862, էջ 111, ծանօթ. 2:
2. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 395:
3. ԳՐԻԳՈՐ ԵՐԷՅ, շարունակող Մ. Ուռհայեցիի, էջ 501:

մուծելը կը լռէ. հաւանաբար Բիւզանդական իշխանութեան շրջանին շինուած է: Վարդան պատմիչ կ'ըսէ թէ այս քաղաքը հնուց ի վեր Ապրղարիպեան հայ իշխանական տան կը պատկանէր, եւ թէ այս շրջանի ուրիշ քանի մը քաղաքներու ալ տէր էին. «Եւ ի միւս այլ ամին գնայ Պաղտնոյն ի Նղէսն (Նիսիս) ի վերայ Ապրղարիպին Հայոց իշխանին, որդւոյ Վասակայ, եղբոր Լիկոսի՝ որ էին տեարք հազար զօրականի, որ յառաջ ունէին գթլպաչար եւ գթիր, առեալ ի Թրքաց մեծաւ քաջութեամբ»⁴: Թէ ինչպէս Ապրղարիպեանները տէր դարձած էին այս շրջանի բերդերուն եւ հողերուն, Մ. Ուռհայեցի քիչ մը աւելի կը լուսարանէ մեզ՝ ըսելով. «Արք քաջ եւ պատերազմողք, որ բռնակարեալ էին գեպիսկոպոսն առաջին տէրն Թլպաչարայ, ի Պարսից առեալ էին բազում տեղիս քաջութեամբ իւրեանց. եւ ուժգին զօրութեամբ առին զքաղաքն գթիրն, եւ շինեցին իւրեանց զբնակարան, վասն զի էին քաջ եւ անուանի պատերազմողք, ունէին զօրականս իւրեանց արս հազար»⁵: Հոս պատմիչը կ'ուզէ ցոյց տալ Ապրղարիպեաններու արժանիքները, եւ թէ ի՞նչպէս կրցած էին տիրանալ այսքան հողերու եւ քաղաքներու, եւ որոնցմէ՞ իւրած էին այդ հողերը եւ բերդերը. Պատմիչին խօսքերէն կ'երեւի որ Թլպաչարի՝ Պարսիկները (Թուրքերը ըսել կ'ուզէ) տէր էին այդ շրջանին, եւ անոնք ալ հաւանաբար իւրած էին Բիւզանդացիներէն: Ապրղարիպեանները Արեւելքէն գալով, կամաց կամաց իրենց քաջութեամբ կրցած էին գուրս քշել Պարսիկները եւ գրաւել անոնց բերդերը եւ տէր դառնալ Պիրի, Թլպաչարի եւ ուրիշ քաղաքներու:

Վրայ կը հասնին Պաշակիրները, հայ իշխանները կ'օգնեն անոնց եւ անոնք կը տիրեն շատ մը բերդերու եւ քաղաքներու, Ուռհայի, Պիրի եւ Թլպաչարի: Հայերը կը յուսային եւ կ'ակնկալէին որ Պաղտին Ուռհայի դըքսութեան տիրանալէ վերջ՝ Թլպաչարը իրենց կը ձգէր: Այսպէս կ'ակնկալէին մանաւանդ Վասակի որդիները Ապրղարիպ եւ Լիկոս, որոնք Պաղտինի օգներ էին Թլպաչարը գրաւելու: Բայց Պաղտին նախընտրեց Թլպաչարը իր ձեռքը պահել: Երբ Թուրքերը Պաղտինի ձեռքէն կը խլեն Թլպաչարը, Ապրղարիպեան եղբայրները գլուխ անցած բանակի մը՝ կը յարձակին Թլպաչարի վրայ եւ գայն կը գրաւեն, ինչպէս կ'ըսէ պատմիչը. «որ յառաջ ունէին գթլպաչարն եւ գթիր, առեալ ի Թուրքաց մեծաւ քաջութեամբ»⁷: Ապրղարիպ եւ Լիկոս եղբայրները խնդիրներ կ'ունենան Եգիպտոյ Պաղտին կոմսին հետ. Պաղտին 1098ին՝ հարիւր ձիաւորներու գլուխը անցած՝ կու գայ եւ կը գրաւէ Թլպաչարը. «... Պաղտին եւ հարիւր ձիաւորով էառ զքաղաքն որ կոչի Թլպաչար»⁸:

4. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, Պատմութիւն, էջ 117-118: Ապրղարիպ իշխանը, զոր յիշեցինք, Ապրղարիպ իշխանը չէր, այլ Ս. Ներսէս Ենորհալիի հօրեղբոր Վասակ Պահլաւունիի որդին (1089), որուն մէկ եղբայրն էր Լիկոս: Այս Ապրղարիպեանները կ'իշխէին Եգիպտոսի շրջաններուն, Պիրի, Թապանի, Ուռհայի, ինչպէս նաեւ Հոռոմկայի: Տես Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 422: ՎԱՐԴԱՆ, էջ 117-118:
 5. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 422-423:
 6. ՍԱՐԱՅԵԱՆ ԳԵՈՐԳ Ա., Պատմութիւն ԱՅրեւելի Հայոց, Լոս Անճելոս, 1953, էջ 223-224:
 7. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, էջ 117: Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 422:

չար»⁹: Հայ իշխանները Վասակ եւ Լիկոս՝ կը ստիպուին երկար կռիւներ մղել Պաղտինի դէմ. «յորժամ տեսանէր կոմսն զգաւառն նոցա, կարի յոյժ մտխայր ի սիրտն, եւ ոչ կարաց ծածկել զնախանձ չարին, զօրաժողով արար եւ գնաց ի վերայ Պիրին... Եւ գտարի մի ի խսար արկեալ զիշխանն Հայոց զԱպրղարիպն չարաչար եւ ազդի ազդի նեղութեամբ. եւ յայնժամ առ վտանգին եւ առ վշտացն անճարեալ լինէր Ապրղարիպն, եւ տայր գթիրն եւ զամենայն գաւառն ի Պաղտինն, եւ ինքն գնաց առ իշխանն Հայոց առ Թորոս եւ Ռուբենեայ որդին յԱնաւարզա»⁹:

Պաղտին գրաւելով Պիրը եւ Թլպաչարը՝ կը միացնէ Եգիպտոյ կոմսութեան. Ապրղարիպեան իշխանները կը հեռանան ասպարէզէն, եւ կ'երթան կ'ապաստանին Ռուբինեան Թորոսի քով, կը խառնուին անոնց ուժերուն եւ կը ծառայեն Ռուբինեան իշխանութեան:

Պաղտին սակայն երկար չի վայելեր իր ապօրինի աւարը, 1111ին Թլպաչարի վրայ կու գայ Պարսից Ահմատիլ ամիրան անհամար զօրքերով. «Եւ անցանէին ընդ մեծ գետն Եգիպտոս, եւ գային միաբան ի վերայ ամուր բերդին Թլպաչար»¹⁰: Պաղտին վախճաններ էր եւ իրեն յաջորդած էր Ճօսլին, որու մասին կ'ըսէ պատմիչը. «Որ էր այր քաջ եւ հօր պատերազմող», սակայն մեծ ուժերով թշնամին կու գար, «իսկ բազմութիւն տօրացն Թուրքաց բազում». Ճօսլին չի յուսահատիր, քաջութեամբ կը դիմադրէ եւ ամէն յարձակում բերդին դէմ՝ ետ կը մղէ, Պարսիկները, կ'ըսէ պատմիչը, «բազում վրտանդս պատերազմաւ արկանէին ի վերայ բերդին եւ ոչ ինչ կարացին առնել»¹¹:

Պարսից ամիրան տեսնելով Ճօսլինի քաջութիւնները՝ ետ կը կենայ իր ծրագիրներէն, եւ խաղաղութեան առաջարկ կ'ընէ. Ճօսլին կ'ընդունի. «Եւ արար սէր միաբանութիւն ընդ նմա եւ եղեն նոցայր միմեանց»¹²:

Սակայն սիրոյ եւ եղբայրութեան այս դաշինքը երկար չի տևեր, 1120ին Պարսից Պաղտի ամիրան մեծ բանակով կու գայ եւ կը պաշարէ Թլպաչարը. պատմիչը կը գրէ. «Պաղտի էառ զգորս իւր եւ գնաց էանց ընդ Եգիպտոս եւ ի Թլպաչարայ մինչեւ ի Գետուն գերեաց եւ այրեաց անողորմաբար սպանմամբ»¹³: Ճօսլին այս շրջանիս Թլպաչար չէր, եւ երբ կ'իմանայ անոր պաշարումը, շուտով կը վերադառնայ իր քաղաքը, եւ տեսնելով որ քաղաքը պաշարուած է եւ դժուարին կացութեան մէջ է, գիշերանց գաղտնաբար կը բանան քաղաքին դռները եւ ինքը կ'երթայ մօտակայ գիւղերը, եւ մեծ թիւով զօրք հաւաքելով ու գինելով, յանկարծակի յարձակումի կ'անցնի եւ Թլպաչարի պաշարման շրթան կտրելով, կը մտնէ քաղաք: Բերդին պաշտպանները քաջաբերուած այս անակնկալ յաջողութենէն, կը գինուին եւ միացած Ճօս-

8. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 316:
 9. ԱՅՊ, էջ 422-423:
 10. ԱՅՊ, էջ 395-396: ՍՄՐԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 145: ՎԱՐԴԱՆ, էջ 111:
 11. ԱՅՊ, էջ 395-396:
 12. ԱՅՊ, էջ 396:
 13. ՍՄՐԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 149:

լինի, բերդի պարիսպներէն դուրս կու գան եւ կատաղի առիւծներու նման կ'իյնան թշնամիին վրայ, եւ անոնց շարքերուն մէջ շփոթութիւն ձգելով՝ փախուստի կը մատնեն. այդ օրը Թլպաշարի պարիսպներուն տակ կ'իյնան 4000 պարսիկներ:

Այս յաղթանակէն վերջ, ձօսլին՝ Ուռհայի եւ Թլպաշարի իշխանը, այնքան ազդեցիկ եւ գորաւոր կը դառնայ, որ 1124ին միացեալ բանակով մը կը քալէ Մնպիճ քաղաքին վրայ, որ Թուրքերու ձեռքն էր: Բերդին իշխանը՝ Պալակ, դուրս գարով բերդի պարիսպներէն, կը զարնուի ձօսլինի բանակին հետ: Դժբախտաբար ձօսլին կը պարտուի եւ հրաման կու տայ իր զօրքերուն քաշուիլ իրենց նախկին դիրքերուն վրայ, իսկ ինքը կ'ապաստանի Թլպաշար. «Եւ կոմսերն փախեան եւ անկան ի Թլպաշար»¹⁴:

Թլպաշար մինչեւ 1143 թուականը՝ ձօսլինի ձեռքը կը մնայ, ինչպէս նաեւ Ուռհայ, Հռոմկլայ եւ Նաեպին: 1150ին Թլպաշարի վրայ կու գայ Մասուտ՝ Իկոնիոյ սուլթանը. «սակայն ոչինչ կարաց առնել»¹⁵, որովհետեւ թէ՛ պաշտպանուած էր եւ թէ՛ զօրքը ներսէն կը դիմադրէր:

1151ին Հալէպի Նուրլտին սուլթանը կը պաշարէ Թլպաշար. ձօսլին հերոսաբար կը դիմադրէ սուլթանին եւ թշնամին ետ կը մղէ, սակայն երկար չի դիմանար, որովհետեւ անօգնական մնացած էր իր զբաղի լատին իշխաններէն. «եւ զի ոչ ունէին յոյս օգնականութեան ուստեք՝ առեալ երդումն ի նմանէ, զի անվնաս գնացեն յԱնտիօք եւ տուեալ զԹլպաշար ի Նուրլտինն, ինքեանք գնացին Անտիօք խաղաղութեամբ»¹⁶:

1218ին Թլպաշարը կը գրաւուի Իկոնիոյ սուլթանէն՝ տասը օր պաշարուած վերջ: Ասոր կը յաջորդէ եգիպտական արշաւանքը Կիլիկիոյ եւ Եփրատի շրջաններուն վրայ, Թլպաշար ալ կ'իյնայ անոնց ձեռքը: Ասկէ վերջ Թլպաշար չի յիշուիր մեր պատմութեան մէջ:

14. Աճռ, էջ 154-155:
15. Աճռ, 168:
16. Աճռ, էջ 170: Հմմտ. նաեւ Սիսուան, էջ 46:

ՍԱՄՈՒՍԱՏ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Սամուսատ հին եւ պատմական բերդաքաղաք մըն է, կը գտնուի Ուռհային 30 քլմ. հեռու՝ դէպի հիւսիս: Եինուած է Եփրատի մօտիկ բարձրաւանդակի մը վրայ. քաղաքին հարաւը կը բարձրանային լեռներու շարք մը, ուսկից կը բխէին բազմաթիւ գետակներ եւ կ'ոռոգէին շրջակայ պարտէզները¹:

Մ. Ուռհայեցի կը գրէ թէ Արարները Ուռհային գալով «ահագին բաղմութեամբ, անցեալ ընդ մեծ գետն Եփրատ եւ Եկեալ ի վերայ ամուր քաղաքին որ կոչի Սամուսատ»². այս բացատրութենէն կարելի է եզրակացնել թէ Սամուսատ Եփրատի արեւմտեան ափին վրայ էր:

Քաղաքը հրաշալի դիրքով լաւ պաշտպանուած ըլլալու էր, որ պատմիչը գայն կ'անուանէ «ամուր քաղաք»: Երջապատուած էր բարձր լեռներով, խիտ առջիներ գայն կը շրջապատէին, ծառազարդ արօտավայրներով, այնպէս որ ուղեգիրները կը հաւաստեն թէ Սամուսատ դրախտին մէկ անկիւնն էր³:

ՊԱՏՄԱԿԱՆ

Սամուսատ շատ հին քաղաք է, գուցէ հիթիթեան քաղաքներէն մէկը, որ կը կոչուէր Սամուսատա (Samousata). իբրեւ քաղաք ներկայիս ալ գոյութիւն ունի, եւ կը կոչուի Սամսատ (Samsat): Հռոմէական կայսրութեան եւ տիրապետութեան շրջանին, Արեւելքի ճամբուն վրայ գլխաւոր քաղաքներէն մէկն էր. քաղաքը հուսկ անցաւ Բիւզանդացիներու եւ երկար տարիներ մնաց անոնց իշխանութեան սահմաններուն մէջ:

Քաղաքին իրական պատմութիւնը մեզի անծանօթ կը մնայ, անոր հիմնարկումը եւ շինութիւնը անյիշատակ դարերու կը պատկանի: Սամուսատ

1. Ինձիձեւն 2. Ղ., նոր Հայաստան, էջ 323:
2. ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 2:
3. Ինձիձեւն 2. Ղ., էջ 323:

ամէնէն աւելի կը յիշուի հռոմէական տիրապետութեան շրջանին, հռոմէացի պատմիչներէ, քանի քաղաքը եղած է լեգէոններու դէպի Արեւելք գլխաւոր կայանը. անոնք Հայաստան երթալու համար նախ կու գային Սամուսատ, եւ ապա Արածանիի հովիտէն կը բարձրանային դէպի Արտաշատ:

Սամուսատ իր դիրքին կարեւորութեան համար՝ լաւ ամրացուած էք, հսկայ պարիսպներ զինքը անմերձենալի կը դարձնէին: Շուրջը ունէր խրամներ, որոնք պատերազմի ժամանակ ջուրով կը լեցնէին, շրջակայ լեռներէն իջնող գետակներու ջուրերով: Այս նշանաւոր հին քաղաքէն գրեթէ ոչինչ մնացեր է, Եփրատի աւելի մօտ շինուած է նոր Սամուսատ աւանը, եւ քիչ հեռու կը քարձրանան անոր բերդին մնացորդները, զորս Թուրքերը Սամսատ պալէսի (Samset kalesi) կը կոչեն:

Սամուսատ Ե. դարուն գիտութեան եւ արուեստի կեդրոնն ալ կը դառնայ, ուր կը դիմէին ամէն կողմերէ գիտութեան ծարաւի անձեր. մեր Թարգմանիչներու խումբն ալ հոն գացած է ուսումնական նպատակով:

958-959ի ժամանակները արաբական բանակները փոթորիկի մը պէս կը հասնին Եփրատի ափերուն վրայ, եւ պատերազմներու ընթացքին կը պաշարեն եւ կը գրաւեն Սամուսատը: Այս մասին կը գրէ Մ. Ուռհայեցի. «Ի թուականութեանս Հայոց ի նէ (958-959) ամին զօրաժողով լինէր ազգն Արարկաց յՈւռհա եւ յամենայն Եդեսացոց աշխարհն, ահագին բազմութեամբ անցեալ ընդ մեծ գետն Եփրատ, եւ անկեալ ի վերայ ամուր քաղաքին որ կոչի Սամուսատ»⁴:

Նոյն թուականներուն քիւզանդական քանակին զօրապետն էր Պառակամանոս (ուղիղ ձևով Փարաքամոմենոս), որ իր գունդերով մեծ քաջութեամբ կը դիմադրէ եւ չի թողուր Արարներուն մօտենալ քաղաքին պարիսպներուն. սակայն արաբական անհամար ուժին առջեւ հուսկ կը ստիպուի տեղիք տալ. «հարին տաճկունք զօրսն Հոռոմոց եւ արարին կոտորած մեծ առ դրան քաղաքին. եւ յետ աւուրց ինչ առաւ քաղաքն Սամուսատ, որ է մերձ ի քաղաքն Ուռհայ»⁵:

1098ին Թորոս Կիւրապաղատ, Կոստանդին՝ Կարկառի տէրը եւ Պաղտին՝ լատին իշխանը, միացեալ բանակով Սամուսատի վրայ կը յարձակին ու կը գրաւեն կարճատեւեան մը համար: Բայց յետոյ Արարները զօրանալով, դարձեալ կը գրաւեն Սամուսատը, իսկ Թորոս Կիւրապաղատ Կոստանդին եւ Պաղտին՝ կ'ապաստանին Ուռհա. այս մասին կը գրէ Մ. Ուռհայեցի. «յայնժամ միարան յարափ մտեալ ամենայն զօրքն քրիստոնէից. եւ տեսեալ զօրացն Թուրքաց՝ ելեալ երեք հարիւր ձիաւոր ի վերայ նոցա, եւ յաղթեցին ամենայն զօրացն, եւ արարին զՓռանկն փախստականս եւ զամենայն գաւառացիքն. եւ ի Սամուսատայ մինչեւ ի Թիւն եղեւ սաստիկ կոտորածս՝ իբրեւ արս հագար: Եւ Կոստանդին եւ կոմսն հասան ի քաղաքն Ուռհայ առ Թորոս

4. ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 2:
5. ԱՅԳ:

Կուրապաղատն»⁶: 1118ին Սամուսատի բերդին մէջ կը վախճանի Կոստանդին՝ Կարկառի տէրը, չարաչար մահով:

1115ին սաստիկ երկրաշարժ մը քարուքանդ կ'ընէ Միջագետքի շատ մը քաղաքներ, որոնց մէջ նաեւ Սամուսատ, կ'ըսէ Մ. Ուռհայեցի. «Եւ յայտ գիչերի կործանեցաւ Սամուսատ քաղաք եւ Հասան-Մսուր, Քեսուն եւ Ռապան եւ Մարաշ քաղաք»⁷:

6. ԱՅԳ, էջ 317: ՍՄԲԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 105:
7. ԱՅԳ, էջ 416: ՍՄԲԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 134:

ՊԵՊՈՒ ԲԵՐԴ

Եփրատի շրջանի բերդերէն էր Պեպու բերդը, կը գտնուէր հաւանաբար Կարկառի մօտերը:

Այս բերդը Մ. Ուռհայեցի եւ Սմբատ Սպարապետ պատմիչները կը յիշեն նոյն պարագաներու մէջ. «Ի սոյն ամի (1124) ի շխանն Հայոց Միխայլն նեղեաց զԿարկառ պատերազմաւ եւ հառ զնա, հառ եւ զՊեպուլա»¹:

Միքայէլ ի շխանը ոչ միայն Պեպուլա բերդին տէրն էր, այլ եւ Կարկառի թէ ո՞վ էր Միխայլի ի շխանը, ստորեւ պիտի տեսնենք:

Պալակ թուրք ամիրան 1124ին մեծ բանակով մը կու գայ Եփրատի շրջանի քաղաքներուն վրայ եւ կը զրաւէ Կարկառը, որուն տէրը Միքայէլ ի շխանն էր: Սա անմիջապէս մեծ բանակով մը անոր դէմ կ'ելլէ, կ'երթայ կը պաշարէ Կարկառը, եւ ինչպէս կ'ըսէ Մ. Ուռհայեցի. «Եւ կացեալ ի վերայ մեծաւ աշխատութեամբ եւ նեղեաց զթուրքն որ ի բերդն էր, եւ ոչ գտաւ օգնական բերդին, անճարեալ գային ի հաւանութիւն, եւ տան զԿարկառ ի Միխայլին»²: Թուրքերը միայն Կարկառը չէ որ զրաւած էին, այլ նաեւ Պեպու բերդը, որ նոյն շրջանին մէջ կը գտնուէր. ուստի Միխայլ, նոյն բանակով անմիջապէս կը յարձակի այդ բերդին վրայ եւ մասնաւոր հնարքով մը կը զրաւէ, ինչպէս կը գրէ պատմիչը. «Եւ այսպիսի օրինակաւս եւ հնարաւորութեամբ առին զՊեպուլայ բերդն ի թուրքաց, եւ եղեւ ուրախութիւն հաւատացելոց Քրիստոսի»³:

Միխայլի հայ ի շխանի մասին մեզի տեղեկութիւններ կու տայ Հ. Աճառեան իր «Անճնանուններու բառարան»ին մէջ, ըսելով թէ՛ Միխայլի հայ ի շխանը որդին էր Կոստանդինի, եւ եղբայր Գրիգոր Կաթողիկոսի⁴: Այս մասին կը գրէ Մ. Ուռհայեցի ըսելով. «Միխայլ ի շխանն տէրն Կառկառայ՝ որդի Կոստանդեայ»⁵:

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 153:

2. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 451:

3. ԱՅՊ:

4. ԱՃԱՌԵԱՆ Հ., ԱՅՁ, ԲԱՍՏՐԱՄԻ, Հատ. Գ., էջ 331:

5. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 451:

ՕՇԻՆ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Օշին բերդը Եփրատի շրջանի բերդերէն մէկն էր եւ հաւանաբար կը գտնուէր Եփրատի ափին տարածուող Հասան Մսուր գաւառին մէջ, Մալաթիոյ եւ Սամուսատի միջեւ: Անոր դիրքին մասին որոշ տուեալներ չունինք: Մ. Ուռհայեցի կը գրէ թէ Օշին բերդը կը բարձրանար քարուտ եւ դժուարին բարձունքի մը վրայ. «Եւ էր տեղին գծար եւ կտուր»¹: Մ. Ուռհայեցի Օշին բերդը կը կոչէ «անուանի բերդ», ինչ որ ցոյց կու տայ թէ ծանօթ եւ կարեւոր բերդ մըն էր եւ անառիկ դիրք մը տուէր: Կը պատկանէր Եղեւսիոյ Արուանդանոս զուգարին²: Անճանօթ են Օշին բերդին շինողը եւ շինութեան ժամանակը: Օշին անունը մեզի բոլորովին օտար անուն մը չըլլալուն եւ շատ ընդհանրացած Ապլղարիական ընտանիքին մէջ, կ'ենթադրենք թէ այս ընտանիքին պատկանող ի շխաններէն ըլլայ հիմնադիրը, քանի որ Ապլղարիական Շիրակացի ի շխանները այս շրջանին մէջ հողատիրութիւն մը հաստատած են եւ ժամանակ մը ի շխած, իրենց սահմաններուն մէջ ունենալով Պիրէճիք, Հոռուկլայ, Քեսուն եւ ուրիշ քանի մը քաղաքներ. հետեւաբար Օշին բերդը կոչուած է այդ տան ի շխաններէն մէկուն անունով, թէեւ այդ անձին մասին պատմական տուեալներ չունինք:

ՊԱՏՄԱԿԱՆ

Օշին բերդը առաջին անգամ մեր պատմութեան մէջ կը յիշուի 1066ին, իբր Ուռհայի Արուանդանոս զուգարին սեփական բերդերէն մէկը:

Արիասլանի տունէն՝ պարսիկ ամիրայ մը, Գոմէշ Տիկին (կամ Գիւմիշ Դէկին) անունով, մեծ բանակով մը կը մտնէ Միջագետք եւ իր առաջին թրախը կ'ըլլայ Նեպին (Մծրին): Սմբատ Սպարապետ կ'ըսէ թէ «Եւ աւուրս ինչ պատերազմեալ ի վերայ նորա ոչ կարացեալ առնուլ, ապա անցանէր ընդ Եփրատ եւ յարձակէր ի վերայ գաւառին Հարանմարոյ»³. այս շրջանին մէջ էր նաեւ Օշին բերդը:

1. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 226:

2. ԱՅՊ:

3. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 68:

Նսեպինի բերդին իշխաններէն մէկը լուր կը զրկէ Ուռհայի Արուանդանոս դուքսին՝ ըսելով. «Ահաւասիկ Գոմշտիկին նստեալ կայ սակաւ արամբք յեզր դետոյն, եկեալ հասիր ի վերայ նորա եւ արա զնա ձերբակալ»⁴: Արուանդանոս սակայն կ'ուշանայ Նսեպին օգնութեան գալու, որով Գոմէշ Տիկինը ժամանակ կը շահի, եւ Հասան Մսուրէն օգնութեան ուժեր կը ստանայ, եւ թողլով Նսեպինի պաշարումը, կը յառաջանայ դէպի Եփրատ, Արուանդանոսի բանակը անշարժութեան մատնելու համար:

Արուանդանոս տեսնելով որ իր ճամբան կտրուեր է դէպի Նսեպին երթալու, ճամբան կը փոխէ եւ կ'երթայ կ'ամբանայ Օշին բերդին մէջ. «Իսկ Արուանդանոսն հասանէր զօրօքն իւրովք յանուանի բերդն որ ասի Օշին, հազար եւ հինգ հարիւր ձիաւորով եւ քսան հազար հետեակով»⁵: Արուանդանոս պատկառելի բանակ մը ունէր, որուն մեծ մասը վարձկան յոյներ էին:

Արուանդանոս իր այս հզօր բանակով, Օշին բերդէն դուրս կու գայ եւ Հասան Մսուրի մօտերը երկու բանակները իրարու կը հանդիպին. «եւ դիպեալ միմեանց պատերազմաւ յարձակեցան ի վերայ Արուանդանոսն իրրեւ զառիւծ, զի էր այր քաջ եւ պատերազմօղ. էր տեղի մացառոտ եւ դժուար»⁶: Երկու կողմէն ալ բազմաթիւ մեռեալներ կ'ըլլան, սակայն թուրքերը հոս կը սկսին զօրանալ եւ Արուանդանոսը դժուարին կացութեան առջեւ դնել: Արուանդանոսին պարտութիւնը որոշ էր, որովհետեւ իր զօրքերը սկսած էին տկարանալ եւ ետ քաշուիլ. ուստի Արուանդանոս զինուորական ուղղափոխման մը գործադրելու համար, հրաման կու տայ իր զօրքերուն՝ որ ետ քաշուին, թուրքերու բանակը ցրուելու եւ դժուարին անցքերու մէջ ձգելու համար, որով անոնք փախուստ մը կը ձեւացնեն. սակայն իր այս խաղը իրեն սուղի կը նստի, որովհետեւ բանակին մեծ մասը վարձկան յոյներ ըլլալով, Արուանդանոսի ետ քաշուելու հրամանը՝ իրական կ'առնեն եւ ճակատը թողած կը փախչին: Արուանդանոս այս աղէտին առջեւ չի կրնար առնել. «եւ եղեւ օրն այն մեծ եւ սոսկալի, եւ ահաւոր կորուստ քրիստոնէիցն, որ եւ լցուաւ ամենայն դաշտն արեամբք եւ գերութեամբ»⁷: Արուանդանոս մինակ մնացած՝ կը պաշարուի եւ գերի կը բռնուի, իսկ իր զօրականներէն շատեր կը փախչին եւ կ'ապաստանին Օշին բերդը, որ տակաւին իրենց ձեռքն էր, «եւ մնացեալքն փախստական լեալք մտանէին ի բերդն, որ ասի Օշին եւ փրկեցան»⁸:

Արուանդանոս դաշտին վրայ 11.000 մեռեալ կը թողու եւ անբաւ աւար եւ դերի, ինքն ալ շղթայի զարնուած՝ Ուռհա կը տարուի եւ հոն քառասուն հազար դահեկանի կը վաճառուի, իր որդին ալ պատանդ տալով կ'ազատի. իսկ Գոմշտիկն ալ ճրագում աւարաւ գնաց ի Պարս»⁹:

4. ԱՅդ:
5. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 226:
6. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 68:
7. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 226-227:
8. ԱՅդ, էջ 227:
9. ԱՅդ:

ՊԵՆԵՍՆԻ

Պեհեսնի Եփրատի շրջանի նշանաւոր բերդաքաղաքներէն էր. կը գտնուի Սալբուն կոչուած գետակի ափին, Քեսունի եւ Հոռմկլայի հիւսիսը:

Արաբները գայն Պէյթ Հասան կը կոչէին, որ պարսպապատ քաղաք մըն էր եւ ունէր նաեւ իր ներքին ամուր բերդը, որ Մատթէոս Ուռհայեցիէ կոչուած է «Անմատոյց եւ անառիկ»¹:

Անիի թագաւորութեան անկումէն վերջ, շատ մը հայ իշխաններ, 1104ին, իրենց ընտանիքներով եւ բանակներով կը գաղթեն դէպի հարաւ եւ կու գան կը հաստատուին Պեհեսնի, Քեսունի, Ռապանի եւ Հոռմկլայի շրջակայ հողերուն մէջ, որոնք Խաչակիրներու ձեռքն էին:

1151-2 տարիներուն, Մասուտ սուլթան Քեսունը գրաւելէ յետոյ, կը պաշարէ «գանձատոյցն եւ գանառիկն զՊեհեսնի»²: Պեհեսնի շուտով կը բանայ իր դռները յաղթականին դիմաց. Մասուտ Պեհեսնիի փոխանորդ կը դնէ իր Ուլիճ-Ասլան որդին եւ կը հեռանայ³:

Այս շրջանիս թորոս Բ. Պոլիսէն փախչելով կը հասնի Կիլիկիա, եւ իր Ստեփան եղբոր հետ՝ քաջութեամբ կը տիրէ շատ մը շրջաններու: Սակայն անոնք հաւանաբար երրորդ եղբայր մըն ալ ունէին, որ Ուռհայեցիէ կոչուած է «բռնաւոր», եւ «զորոյ անունն անպատեհ վարկայ ընդ գրով արկանել»⁴: Այս բռնաւորը հաւանաբար ըլլայ Մլեհ, որ քրիստոնէութիւնը ուրանալուն համար՝ սուլթանէն կարգուած էր իշխան եւ ասէր Պեհեսնիի: Մլեհ՝ հակառակ իր եղբայրներուն, սաստիկ ատելութիւն ունէր քրիստոնեաներուն հանդէպ, եւ հակառակ որ սուլթանը իրեն յանձնարարած էր «քաղցր կամօք նախելոյ ի քրիստոնեայս, նա առաւել եղեւ ի պատուհաս արկանել՝ նախ զպատուական քահանայս եւ սարկաւազունս, եւ զպիտանի տանուտեարս՝ եւ զայլ հասարակաց քրիստոնեայս, միապէս չարչարէր եւ ծանրացուցանէր զհարկակից բնակչաց անուանին Պեհեսնոյ»⁵:

1. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 504, 522, 524:
2. ԱՅդ, էջ 504:
3. ԱՅդ, էջ 504-506:
4. ԱՅդ, էջ 522:
5. ԱՅդ:



Պեհեսնի քաղաքը Եփրատ գետի ափին, հեռու՝ իր բերդը:
Ville de Behesni sur la rive de l'Euphrate et plus loin sa forteresse.

Սմբատ Սպարապետ կը շարունակէ պատմութիւնը, տալով աւելի մանրամասնութիւն մը. «Եւ կայր ի Պեհեսնի քրիստոնէատեայ գլխաւոր մի, որ յոյժ նեղէր զքրիստոնեայն, վասն որոյ նեղեալք ի նմանէ՝ կամեցան միաբանութեամբ քաղմաց սպանանել զնա ի քաղանիսն, եւ տալ զբերդն ի Ստեֆանէ. եւ Ստեֆանէ զօրօք թազուցեալ կայր ի սահմանս քերդին եւ մնայր ժամու»⁶:

Սակայն այս ծրագիրը չ'իրականանար, որովհետեւ խորհրդականներէն մէկը «նենդեալ ի քրիստոնէից, ստեաց քրդման ուխտին՝ զոր ունէին առ իրեարս, երթեալ զգուշացոյց զանիրաւն այն մի՛ ելանել երթալ ի քաղանիսն, ուր մահն պատրաստ էր»⁷:

Պեհեսնիի բռնաւոր իշխանը Մլեհ զայրացած՝ «հրամայեաց կապել ոտիւք եւ ձեռիւք, եւ ի բարձր քարէն ի վայր ձգել»⁸ քրիստոնեաները, որոնք սար-

6. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՍՊԵՏ, էջ 175:
7. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 523:
8. ԱՅԳ:

սափահար, մասամբ կը յաջողին ազատիլ բռնաւորին ճիրաններէն եւ կ'ապաւինին Ստեփանի, որ «տարեալ (գոփողովուրդն) վախճանեցան ի շողոյն»⁹:

Երբ սուլթանը կ'իմանայ որ Պեհեսնի իր ժողովուրդէն պարպուեր է, եւ անոր բերդն ալ բոլորովին քանդուեր է, «զմտաւ ածեալ սուլթանին զաւերումն աստուածապահ բերդին Պեհեսնոյ, զտառապանս քրիստոնէից, ըստ իմաստութեան իւրոյ», կը հետաքննէ բռնաւորը Պեհեսնիէն, եւ հրաման կու տայ որ փախչողները վերադառնան իրենց տուները, ստահովցնելով անոնց կեանքը եւ ստացուածքները. «եւ լցաւ քաղաքն ամենայն՝ որ թափուր եւ ունայն էր ի գոյից իւրոց»¹⁰:

9. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՍՊԵՏ, էջ 175:
10. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 523-524: Տե՛ս նաեւ ՉԱՄՉԵԱՆ, Գ., էջ 140:


ՊԷՅԼԱՆ

Պէյլան հայարնակ գիւղաւան մըն էր, Սեաւ կամ Ամանոսեան լեռներու կողքին, դէպի Աղեքսանդրեակ ճամբուն վրայ, որ «Կապան Պէյլանայ» ալ կը կոչուի: Պէյլան Աղեքսանդրեակէն 8 քմ. է, իսկ Պաղրաս նշանաւոր բերդէն՝ 10 քմ. հեռու է: Գեղեցիկ աւան մըն է լեռան կողքին, ուր տուները աստիճանով վարէն վեր կը բարձրանան իրարու կից, ամփիթատրոնի պէս. տուներու բարձունքէն գեղեցիկ տեսարաններ կը պարզուին: Քաղաքին ստորոտէն կը հոսի Պէյլանի գետակը. օդը շատ առողջարար է, առատ պտուղներ ունի եւ ամարանոց է Աղեքսանդրեակի հայ ժողովուրդին: Քաղաքը կը գրտնուի շուրջ 1000 մեղր բարձրութեան վրայ:


Քաղաքը մասնաւոր հնութիւններ չունի, նշանաւոր է հինէն շինուած ջրատարը՝ երեք կարգ կամուրջով, որոնք իբրեւ կամուրջ ալ կը ծառայեն մէկ թաղէն միւսը անցնելու համար: Քաղաքին շուրջ առատ է, որով բարձրէն հոսելով, կ'իջնէ դէպի գիւղ եւ կը ջրէ անոր դաշտերն ու պարտէզները:

Ալիշանի համաձայն, Պէյլանի հիւսիսը կը գտնուի «Պէյլան Գոստանդէ» կամ «Պուստանդա» անունով բերդ մը, որու սենեակներէն մէկուն մէջ կայ շիրիմ մը եւ հին նետերու խուրձեր՝:

1. Հմտ. ԱԼԻՇԱՆ Է. Ղ., Սիսուան, էջ 421:



Պէյլանի կապանը ծովուն կողմէն:
La vallée de Beylan vue du côté de la mer.



Պէյլան եւ Սեաւ լեռները:
Beylan et les monts Noirs (Sissouan).

ՆՇԵՆԻԿ ԲԵՐԴ

Ամանոսեան լեռներու կատարներուն վրայ քարձրացող բարձրագույն լեռնաշղթաներէն էր Նշենիկ, որուն բուն տեղագրութիւնը մեզի անծանօթ կը մնայ, հաւանաբար Անտիոքի շրջանին մէջ կը գտնուէր: Այս գուտ հայկական անունով բերդը կը յիշէ Մ. Ուռհայեցի եւ զայն կ'անուանէ «չափաւոր բերդ»¹, այսինքն է՝ փոքր բերդ. անունը ցոյց կու տայ որ շինուած էր հայ իշխանէ մը, եւ ապա անցած Յոյներու ձեռքը: Այսօր իսկ այս անունով գիւղական մը գոյութիւն ունի Ամանոսեան լեռներու ստորոտը՝ դէպի Լաթաքիա երկարող ճամբուն վրայ. այս գիւղը գուցէ կը յիշեցնէ մեր հին Նշենիկ բերդը:

ԺԱ. դարուն է որ կը յիշուի Նշենիկ բերդը. 1065ին սելճուք թուրքերը կու գան եւ զայն կը պաշարեն եւ կը գրաւեն Յոյներու ձեռքէն: Յունաց կայսրը կը վճռէ ազատել զայն, ուստի Ուռհայի քաջ առաջնորդներէն՝ Պաշատուր իշխանը, որ Անեցի էր, եւ Պեխտ (Վեստ) ալ կը կոչուէր եւ Անտիոքի դուքս նշանակուած էր կայսրէն, իր բազմաթիւ ծառայութիւններուն եւ քաջութիւններուն փոխարէն, հրաման կը ստանայ երթալու եւ ազատելու Նշենիկ բերդը²:

Վեստ Պաշտուր կը հաւաքէ իր ուժերը եւ բանակով մը Նշենիկի վրայ կը յարձակի. իր բանակին մաս կը կազմէին նաեւ յունական զօրքեր, իրենց Պոքսիմոս զօրավարին առաջնորդութեամբ: Վեստի Նշենիկի առջեւ մղած պատերազմին մանրամասնութիւնները կու տայ Մ. Ուռհայեցի, ակնարկելով նաեւ Յոյներու վստուութեան եւ դաւաճանութեան. «եւ մի ոմն ի Հայոց քաջ զօրականացն յայնժամ ի յՈւռհայ հանդիպեցաւ՝ Պեխտ անուն, եւ էր տուկ (դուքս) Անտիոքայ քաղաքին. եւ սորա ձայն տուեալ զօրացն իւրոց՝ յարձակեալ զնաց ի վերայ թուրքին. եւ քաղաքին տուկն որ կոչէր Պիղաւնիտ տայր զզօրս քաղաքին ի Պոքսիմոսն իւր, եւ պատուէր տայր զկնի վասն կորստեան Պեխտին, վասնզի մի՛ արասցէ քաջութիւնս եւ ելցէ անուն զօրութեան նորա...»³:

Այս տեղաբեր ցոյց կու տայ թէ Յոյները որքան նախանձ եւ ատելութիւն ունէին հայ իշխաններու հանդէպ, եւ չէին թաղեր անոնց յաջողութիւնները, ուստի կը ջանային ամէն միջոցներով վարկաբեկել զանոնք եւ ձախողեցնել անոնց ծրագիրները:

Վեստ Պաշտուր մեծ յաջողութիւններ կ'արձանագրէ Նշենիկի առջեւ մղուած պատերազմի ընթացքին, վասնզի մինչ ինքը կը պատերազմէր թուրքերուն դէմ, իր բանակէն մաս մը դադարնի ճամբաներով կը ղրկէ Նշենիկի վրայ. «եւ կէս զօրացն իջաւ ի վերայ չափաւոր բերդին՝ որ կոչէր Նշենիկ, եւ սաստիկ պատերազմաւ ի յառ ամին գրեցին»⁴:

Այս յանդուգն ծրագիրն եւ յաջողութեան վրայ կ'ապշի յոյն դաւաճան զօրավարը եւ ամէն ջանք կը թափէ որ ձախողեցնէ Պեխտին ծրագիրները, ինչպէս կ'ըսէ պատմիչը. «ուսէր ի սրտին գնենդութիւն վասն կորստեանն Պեխտին. ի հեռաստանէ զփող պատերազմին հարկանէր, եւ ազդ արարեալ թուրքին՝ եւ ինքն յայլ կողմն գնաց զօրքն: Եւ յայնժամ իշխանն Հայոց գիտացեալ զնենդութիւն ազգին Հոռոմոց, ձայն տուեալ ազատաց իւրոց եւ յարձակեցաւ ի վերայ թուրքին, եւ ի հասանելն արար քաղում կոտորածս, եւ զայն արար փախստական, եւ գրեցին (այսինքն Նշենիկը) եհան այլ ամբութիւն (այսինքն կոչեց օգնութիւն ամբոցին զօրքերը) եւ ի բազմանալն անօրինացն ի վերայ՝ մտանէր անպնաս ի բերդն որ մերձ կայր ի Մուլման»⁵:

Հայկական բանակը կը կորսնցնէ Նշենիկի պատերազմը: Պեխտ (Վեստ Պաշատուր) կը ստիպուի թողուլ ճակատը եւ քաշուիլ մօտակայ մէկ բերդը, ուր երկար չի կրնար մնալ եւ ոչ ալ վերակազմել իր ուժերը: Տեսնելով որ բերդին յոյն իշխանները կը նախանձին իր քաջութիւններուն վրայ եւ կը ծրագրեն զինքը մատնել թուրքերուն, յարմար առիթով, իր հաւատարիմներով կը քաշուի Անտիոք եւ լուր կը ղրկէ կայսեր (Տուկին), ըսելով թէ Պոքսիմոս պատերազմի ժամանակ մատնած եւ դաւաճանած էր իրեն, եւ թէ հայ բազմաթիւ զինուորներու կորուստին պատճառ եղած էր Նշենիկի բերդին առջեւ:

Կայսրը յանցաւոր գտնելով Պոքսիմոսը, մորթագերծ ընել կու տայ մարմինը եւ յարդով լեցուցած՝ Ուռհայ կը ղրկէ, իսկ Ուռհայի Պեխտը (քաղաքին Պիղաւնիտ դուքսը) պաշտօնանկ կ'ընէ⁶:

Իսկ մեր Անեցի Պեխտ (Վեստ Պաշատուր) իշխանը տխուր վախճան մը կ'ունենայ: Վերոյիշեալ կայսեր աղաչանքով յունադաւան եղած էր, բայց որովհետեւ համոզումով չէր ընդգրկած արդ դաւանութիւնը, այլ փառքէ մղուած, շատ կարեւորութիւն չէր տար յունադաւանութեան օրէնքներուն, ծէսին եւ արարողութիւններուն, եւ մտիկ չէր ըներ նաեւ իր խոստովանահօր խորհուրդներուն, որ յոյն արեղայ մըն էր: Այս հրէշ արեղան մոլեգնտած, որ մը երբ Պեխտ կը քնանար, զայն անկողինին մէջ կը խեղդէ, իր Անդրիուն բերդին մէջ, 1076ին⁷:

4. ԱՅԳ, էջ 188:

5. ԱՅԳ, էջ 189-190:

6. ԱՅԳ:

7. ԱՅԳ, էջ 257:

1. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 188:

2. ԱՃԱՌԵԱՆ Հ., Հայոց ամսագրութեան քառաբան, 1944, էջ 468: Հմմտ. նաեւ ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիսուամ, էջ 46-47:

3. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 188-189:

ՄԻՋԱԳԵՏՔԻ ՀԱՅՈՑԻ ԲԵՐԴԵՐ

ԵՂԵՍԻԱ ԿԱՄ ՈՒՐՖԱ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Եղեսիա, Ուռհա կամ Ուրֆա, Հայկական Միջագետքի հին եւ անուանի բերդաքաղաքն էր: Պատմութեան մէջ ան փառաւոր տեղ մը կը գրաւէ իր բազմաթիւ պատմական անցքերով, յիշատակարաններով, արքայական պալատով եւ մանաւանդ քաղաքին կեդրոնը բարձրացող իր հնամենի բերդով:

Այսօր առ պատմական քաղաքին հին պարիսպները մեծ մասով գոյութիւն չունին. անոր շուրջ այնքան արիւն թափուած է, եւ այսօր կը մնան իր միջնաբերդի պարիսպներէն աննշան մասեր եւ քանի մը աշտարակներ:

Բերդին մէջ հին օրերէն իբրեւ յիշատակ կը մնան երկու սիւներ: Բերդին քարձուռնքէն կարելի է տեսնել հեռաւոր ճամբաներէն անցնող քանակները, այնպէս որ Եղեսիա պատերազմական տեսակէտով՝ ճամբաներու կարեւոր մէկ հանգույցին վրայ կը գտնուէր, եւ կը պաշտպանէր հարաւէն եկող ամէն յարձակում:

1915ին այս բերդին մէջ ապաստանած բոլոր մը Եղեսիացի քաջեր, առաջնորդութեամբ Մկրտիչ Եօթնեղբայրեաններու, Ուրֆայի ծանօթ փառաւոր հերոսամարտը իրականացուցին: Անոնք ամիսներով քաղաքը պաշտպանեցին՝ թուրք ներխուժումներուն դէմ, եւ իրենց քաջութեամբ փառաւոր անուն մը թողուցին մեր պատմութեան մէջ:

Հ. Ղուկաս Ինճիճեան 1806ին տպուած «Նոր Հայաստան» հատորին մէջ կու տայ նկարագրութիւնը Ուրֆայի, որմէ կը քաղենք քանի մը կարեւոր կէտեր:

Ուրֆա անուանի բերդաքաղաքը ունէր ճերմակ որձաքարերով պարիսպներ, գրեթէ հաւասար բարձրութեամբ Ամիթի պարիսպներուն: Անոր շուրջ, ապառաժին մէջ փորուած են խոր խրամներ, որուն շրջապատը երկու ժամէն հազիւ կարելի է հասնիլ:

Ունի չորս դռներ. 1. Սամսադ գափուսի, 2. Պէկ գափուսի, 3. Խարան գափուսի, 4. Ասլան գափուսի. Վերջինս այսպէս կոչուած է՝ երկու կողմերը երկու առիւծներ քանդակուած ըլլալուն: Քաղաքին հարաւային կողմը, սե-

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Միջագետքի Հայոցի բերդերը տեղագրականօրէն ճշտել դիւրին չէ. անոնք սահմանագլուխներու վրայ կառուցուած, հայերէ կամ լատին իշխաններէն, հաւասարապէս գործածուած են թուրք, պարսիկ եւ արաբ արշաւանքներու ժամանակ, եւ համաձայն ֆազաֆական ու զինուորական գործողութիւններու՝ անոնք պատկանած են թէ՛ հայ իշխաններու եւ թէ՛ լատին կոմսութեանց: Բազմաթիւ են անունները, գոթ կը յիշատակեն մեր պատմիչները, Մ. Ուռ-հայեցի, Վարդան, Սմբատ Սպարապետ:

1. Հմտ. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ, Գիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Պէյրուս, 1965, էջ 831-835:




Եդեսիա կամ Ուրֆա քաղաքի տեսքը միջնաբերդէն:
Ville d'Edesse ou de Ourfa: vue générale de la citadelle.

պաճեւ կը բարձրանայ իր ամուր բերդը, որուն շուրջ եւս խոր խրամներ փորուած են ապառաժին մէջ. ունի չորս մուտքեր: Բերդին մէջ կային բերդակալին ապարանքը, ուրիշ վաթսունի չափ տուններ եւ քարաշէն մեծ մզկիթ մը, որ հին ատեն Ս. Սարգիսի նուիրուած եկեղեցի մըն էր, երկու կողմերը ունենալով՝ տակաւին կանգուն, երկու բարձր ու քարաշէն զանգակատուններ. բերդին դիրքը հրաշալի է: Անոր քարձուռքէն առջեւ կը պարզուի ամբողջ քաղաքին տեսարանը, իր ծովակները, քաղաքին մէջ եւ դուրսը տարածուած պարտէզները եւ հիւսիսային կողմի դաշտավայրը²:

ՊԱՏՄԱԿԱՆ

Ե՞րբ եւ որմէ՞ շինուած է այս նշանաւոր, աշխարհիս հնագոյն քաղաքներէն մէկը: Հնագէտները պեղումներ կատարեցին ստորին Քաղդէա-Վարքա անունով ընդարձակ աւերակներուն վրայ, եւ հոն գտան բազմաթիւ հին արձանիկներ, բեւեռազիր արձանագրութիւններ, որոնք եկան հաստատելու ի-

2. ԻնձիճնԱՆ 4. Դ., Խոր Հայաստան, էջ 331-332:



Եդեսիայ կամ Ուրֆայի բերդին երկու նշանաւոր սիւները:
Les deux célèbres colonnes d'Edesse ou de Ourfa.

րենց այն կարծիքը, թէ Ուրֆա հին ՈՒՐ քաղաքն էր. եւ ասոր ամէնէն մեծ ապացոյցը այն եղաւ՝ որ հոն գտնուեցաւ թարայի մէկ արձանը, քաղաքին արեւելեան պարիսպներէն մէկուն մէջ, որուն վրայ հին քաղդէական գրերով գրուած էր թԱՐԱ անունը: Եւ որովհետեւ Աստուածաշունչը Քաղդէացոց ՈՒՐ քաղաքը «Երկիր Թարայի» կ'անուանէ, հնագէտները եզրակացուցին թէ Եդեսիա հին ՈՒՐն է:

Ըստ Միքայէլ Ասորիի տուած աւանդութեան, ՈՒՌՀԱ մէկն է Աստուածաշունչի մէջ յիշուած Ներբովթէն շինուած երեք քաղաքներէն. Արեգ, Ուռհա եւ Մծրին³: Ներբովթ զայն շինած է ջրհեղեղէն ետքը եւ անուանած Ուռհաւի, Ուր, որ կը նշանակէ գիւղ, եւ հաւի՝ Քաղդէացոց, այսինքն գիւղ Քաղդէացոց:

Ներբովթի շինած քաղաքը տեւած է երկար դարեր, բայց յետոյ կորձանելով Աթուրացոց Սենեքերիմ թագաւորէն՝ մնացած է աւերակ վիճակի մէջ, մինչեւ որ Մեծն Աղեքսանդր այնտեղէն անցած ատեն, հաւնած ըլլալով դիրքին՝ ըսած ըլլայ Սելեւկոսին. «Շինեա՛լ զսա քաղաք»: Աղեքսանդրի մա-

3. ՄԻՔԱՅԷԼ ԱՍՈՐԻ, Ժամանակագրութիւն, էջ 15, 50:



Եդեսիայ կամ Ուրֆայի բերդը իր երկու հիմ սիւներով եւ միջնաբերդի պարիսպները:
Edesse ou Ourfa et sa citadelle et ses deux célèbres colonnes.

հին յետոյ՝ իր զօրավարը կը կատարէ անոր հրամանը եւ կը կոչէ զայն Եդեսիա, որ մակեդոնական լեզուով կը նշանակէ «Սիրեմ զսա», ինչպէս Աղեքսանդր ըսած էր Սելեւկոսի⁴ :

Աւանդութեան կը ձայնակցի նաեւ պատմութիւնը. Սելեւկոս քաղաքը շրջապատած է հօր պարիսպներով եւ անառիկ աշտարակներով, որպէսզի անխոցելի դարձնէ զայն որեւէ յարձակման դէմ: Սելեւկոս անոր շուրջը, բլուրներու վրայ, շինելու տայ նաեւ ուրիշ շորս բերդեր, եւ հիւսիսային կողմէն ներքնուղիով մը, լեռներէն ջուր բերելու կու տայ, մինչեւ քաղաքին կեդրոնը եւ ճիւղաւորումներով կը բաժնէ քաղաքին զանազան թաղերուն մէջ: Սելեւկոսի այս բերած ջուրի աղը՝ Թըլփըտուր կը կոչուի⁵ :

Ուրիշ աւանդութեան մը համաձայն, Պարթեւներու Արշակ Թագաւորին եղբայրը՝ Վաղարշակ, կը տիրէ ՈՒՐ քաղաքին, որուն կառավարիչ կը զնէ ՈՒՌՆԷ՛՛ զօրավարը. ասոր անունով քաղաքը կը կոչուի ՈՒՐՆԱ՛՛⁶ :

Ուրհա քաղաքին վրայ կ'իջիէ յետոյ Արշակ Հայոց Թագաւորը, ասոր կը

4. Անդ, էջ 420:

5. ՍԱՀԱԿԻԱՆ ԱՐԱՄ, Անդ, էջ 38:

6. Անդ, էջ 36-37:

յաջորդէ իր Աբգար որդին, որ զայն կը կոչէ՝ «Մայրաքաղաք Հայոց», Միջագետքի Արշակունի թագաւորներուն:

Աբգար Թագաւոր Մծրինի արքայական գահը Եդեսիա կը փոխադրէ եւ մեծամեծ շինութիւններ կը կատարէ հոն. քանազ կու տայ տիեզերական դիւան մը, որ է մեծ գրատուն մը, հոն փոխադրել տալով Մծրինի ամբողջ դիւանական թուղթերը եւ պատմական գրքերը՝:

Մեծն Տիգրան Միջագետքի տիրելով 89ին Ք. Ա., կը տիրէ նաեւ Եդեսիոյ, եւ որովհետեւ քաղաքին պարիսպները պատերազմներէն քանդուած էին, զանոնք ամբողջութեամբ կը վերաշինէ, եւ քաղաքը գեղեցիկ պալատներով կը զարդարէ, ինչպէս որ կը պատմէ Պլուտարքոս: Կը շինէ մանաւանդ իր Տիգրանակերտ մայրաքաղաքը, «Անդր խաղացոյց Տիգրան ի սոն նուիրաց Թատրոնին՝ զոր ինքնին Տիգրան կանգնեաց»: Քաղաքի մասին դարձեալ կը գրէ. «Եւ էր քաղաքն ընչաւէտ յոյժ եւ զեղուն ի զարդս զարդս ձօնից. քանզի եւ այր այր սոսկական եւ որ միանգամ ի նախարարաց՝ սատար էին ի շուք



Եդեսիայ կամ Ուրֆայի միջնաբերդը:
Edesse ou Ourfa: sa citadelle.

7. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, էջ 232:



Եդեսիայ կամ Ուրֆայի պարիսպները:
Edesse ou Ourfa: Les remparts de la ville.

մրցանաւոր ընդ արքային՝ բարգաւաճ եւ հոյակապ յարգարեղ զքաղաքն զայն՝:

Մեծն Տիգրանի պարտութեամբ՝ Հռոմէացիները ոտք կը դնեն Փոքր Ասիա եւ կը տիրեն նաեւ Միջագետքի, կը գրաւեն Եդեսիան ալ եւ իրենց զըլխաւոր քաղաքներէն մէկը կը դարձնեն: Անոնցմէ ետքը Եդեսիա իր շրջանով կ'անցնի Բիւզանդացիներու ձեռքը, որոնք երկար դարեր կ'իշխեն այս կողմերուն եւ Եդեսիա յունական քաղաքակրթութեան եւ դպրութեան կեդրոն կը դառնայ:

Արաբներու երեւումով՝ Փոքր Ասիոյ քաղաքական վիճակն ալ կը փոխուի եւ Եդեսիա կռուախնձոր կ'ըլլայ Բիւզանդացիներուն եւ Արաբներուն միջեւ (638), մինչեւ որ արեւմուտքէն կը հասնին Պաշակիրները, եւ տիրելով Եդեսիոյ եւ Միջագետքի շատ մը քաղաքներուն, հոն զանազան կոմսութիւններ կը հաստատեն: Մեր պատմութեան համաձայն՝ Եդեսիոյ նշանաւոր կոմսերը եղած են Պաղտին եւ Ճօւլին, որոնք երկար տարիներ կռիւներ կը մղեն շրջակայ արաբ սուլթաններուն դէմ, եւ դժբախտաբար անոնք ոխերիմ թըլ-

8. ՊԼՈՒՏԱՐԿՈՍ, Զուլեպչիոֆ, Հա. Գ., Վենետիկ, 1833, էջ 566 եւ 575:

նամիներ կը դառնան նաեւ կիլիկիոյ մէջ բոյն գրած հայ իշխաններուն, Գող Վասիլի, Բաղարատի, Կոստանդինի, Սենեքերիմեան եւ Ապրդարիսեան հայ իշխաններուն, եւ պատճառ կ'ըլլան անոնց տկարացումին եւ հուսկ անկումին:

Պաղտին պատերազմի կը բռնուի Պարբերդի Պալակ սուլթանին հետ, եւ գերի ինչալով կը բանտարկուի Պարբերդի մէջ: Ազատ արձակուած՝ կը վերագառնայ իր երկիրը, մինչեւ որ 1031ին Եդեսիոյ վրայ կը խուժեն Շէլպ եւ Ուտայի ամիրաները, գրաւելով անոր բերդերը ու հոն կը հաստատուին երկար ատեն:

Ժամանակ մը Եդեսիոյ վրայ կ'իշխէ նաեւ Մանեակ անունով լատին իշխան մը, որ մեծ նեղութիւններ կու տայ Եդեսիոյ թէ՛ հայ եւ թէ՛ քրիստոնեայ ժողովուրդներուն, որոնց համբերութիւնը հատած, կ'ապստամբին անոր դէմ եւ քաղաքէն դուրս կը քշեն զայն: Մանեակ կազմակերպելով իր բանակները՝ կու գայ եւ բռնի ուժով կը տիրանայ քաղաքին, եւ որպէսզի ապահով ըլլայ դուրսէն գալիք որեւէ յարձակումէ, ձեռք կը դարնէ եւ ամ-



Եդեսիայ կամ Ուրֆայի լճակը:
Edesse ou Ourfa: sa lagune, vue de l'est.



Եգիպտոսի կամ Ուրֆայի Աբրահամու կոչուած լճակը:
Edesse ou Ourfa: sa lagune (appelée la lagune d'Abraham).

բողջութեամբ կը վերանորոգէ քաղաքին պարիսպները, որոնք պատերազմներու պատճառով քայքայուած էին: Ներքին բերդը, որ բոլորովին աւերակ էր եւ լքուած, զայն հիմնովին կը նորոգէ եւ իր անունով ՄԱՆՆԱԿԻ բերդ կը կոչէ:

Դամասկոսի Դոդուշ սուլթանը մեծ բանակով մը կու գայ Եդեսիոյ վրայ, կը գրաւէ զայն, եւ մեր Հեթում թագաւորին որդին Թորոս կոմս՝ կառավարիչ կարգելով անոր վրայ, ինքը մեծ քանակով մը Պարսիկներուն դէմ պատերազմի կ'երթայ:

Թորոս իշխան տեսնելով որ Դոդուշ պատերազմի բռնուած է, յարմար առիթ կը նկատէ Եդեսիան ազատել քանաւորին ձեռքէն: Քաղաքը ծովու դռնէն մինչեւ Ս. Սարգիս Եկեղեցին պարիսպով մը կը շրջապատէ եւ անոր շուրջը 25 նոր բուրգեր կը կանգնէ. կը նորոգէ նաեւ ներքին կլայն, եւ Արաբներու դէմ կատաղի կռիւէ մը ետք՝ կ'ազատէ Մանեկայ քերդը, եւ հոն կ'ամբարնայ իր պահապան քորբերով: Այս լսելով Դամասկոսի ամիրան, մեծ բանակով մը կը հասնի եւ կը պաշարէ Մանեկայ բերդը: Թորոս հերոսաբար

կը գիմազրէ եւ Արաբներու բոլոր յարձակումները ետ կը մղէ, եւ չի թողուր որ անոնք բերդ մտնեն: Ամիրան յուսահատած, մեծ կորուստներով կը թողու պաշարուածը եւ կ'երթայ Հալէպ:

Թորոս, որ մեր պատմիչներէն Կիւրապաղատ ալ կոչուած է, ժամանակ մը կ'իջիւէ Եդեսիոյ վրայ: Իր իշխանութեան օրով Եւրոպայէն կը հասնի երկրորդ խաչակրութիւնը, որոնց գալուստով՝ բոլորովին կը փոխուի Միջագետքի հայ իշխաններուն վիճակը:

Պաշակիրներու մէջ նշանաւոր կ'ըլլան Պաղտին եւ Ճօսլին կոմսերը, որոնք կու գան կառուելու Արաբներու դէմ եւ Երուսաղէմը ազատելու: Արաբները անոնց գալուստով աւելի կը կատարին, եւ յարձակումներ կը գործեն Եդեսիոյ Թորոս Կիւրապաղատին վրայ: Այն ատեն, կ'ըսեն պատմիչները, Թորոս մեծ սխալ մը կը գործէ, այսինքն՝ լատին Պաղտին կոմսը իրեն օգնութեան կը կանչէ 1098ին: Պաղտին առիթէն օգտուելով՝ կը ծրագրէ գրաւել նաեւ Եդեսիան եւ հոն հաստատել հայ լատին միութիւն մը, որպէսզի կարենան դէմ դնել Արաբներուն:

Կէս դար Եդեսիա կարեւոր դեր կը խաղայ Արեւելքի եւ Կիլիկիոյ պաշտպանութեան համար: Սակայն լատին իշխանները, Պաղտին եւ Ճօսլին, մաքուր դիտաւորութեամբ չեն գործեր, կ'ուզեն Եդեսիան իրենց իշխանութեան կցել, մէջտեղէն վերցնելով Թորոսը: Այս նպատակին հասնելու համար՝ անոնք լրտեսներու միջոցով Եդեսիոյ մէջ խռովութիւն կը առեղծեն եւ ապրատամբութեան կը գրգռեն ժողովուրդը Թորոսի դէմ: Սոսովութիւններու շըրջանին՝ Թորոս կը սպաննուի խռովարարներէն:

Պաղտին եւ Ճօսլին իրենց նպատակին հասած էին, անմիջապէս բանակներով Եդեսիա կը մտնեն, խռովութիւնները հանդարտեցնելու պատրուակով, եւ կը տիրանան քաղաքին:

Այսպէս ժամանակ մը Եդեսիոյ կ'իշխեն Պաղտին, Ճօսլին եւ Տանգրէտ լատին իշխանները: Ասոնց օրով Եդեսիոյ վրայ կու գայ Մամտուն ամիրան, եւ մատնիչներու օժանդակութեամբ՝ մէկիկ մէկիկ կը գրաւէ Եդեսիոյ շըրջակայ բերդերը: Պաղտին եւ Ճօսլին հեռու էին Եդեսիայէն. երբ կը լսեն որ Մամտուն Եդեսիա մտեր է, բանակով մը կու գան անոր դէմ: Մամտուն քաղաքը կրակի տալով՝ կը քաշուի Հալէպ:

Եդեսիա, լատին կոմսերու իշխանութեան չըջանին, երկար պատերազմներու թատր կ'ըլլայ, մինչեւ որ կը դորանան Եգիպտոսի Սուլթանները, կու գան եւ կը գրաւեն Եդեսիան, եւ ոչ միայն Եդեսիան՝ այլ նաեւ ամբողջ Միջագետքը եւ պատճառ կը դառնան Կիլիկեան թագաւորութեան կործանումին⁹:

1144ին Հալէպի Չանգի ամիրան կը յարձակի եւ կը տիրէ Եդեսիոյ, շատ արիւն թափել տալով անոր պարիսպներուն տակ: Քաղաքի պաշտպաններու առաջին շարքերուն վրայ հայերն էին որ կը կռուէին, որոնց քաջութիւնը Ներսէս Ենտրհայի կը համեմատէ Վարդանանց նահատակներուն մղած կռիւին, եւ Եդեսիոյ աւերումը մեծ դժբախտութիւն կը համարի, ինչպէս Անիի

9. ԷՓՐԻԿԵԱՆ 2. Ս., ԲՅԱշխարհիկ բառարան, էջ 623.



Ուրֆայի կամ Եգեսիոյ յատակագիծը:
Plan d'Ourfa (Denoël).

կործանումը: Այս առթիւ է որ Ս. Ներսէս Ենոբրնայի գրած է իր «Ողբ Եգեսիոյ» պատմական չափական քերթուածը, ողբալով քաղաքին կորուստը:

1393ին քաղաքը աւարի կը մատնուի Լէնկ թիմուրի ձեռքով, ու անկէ վերջ, ժամանակ մը Պարսկաստանի կցուած է:

Եգեսիա հայրենիքը կը համարուի ԺԲ. դարուն ապրող մեր պատմագիրներէն՝ Մատթէոս Ուռհայեցիի, որ գրած է ժամանակագրական պատմութիւն մը՝ որ կը սկսի 952էն՝ կը հասցնէ մինչեւ 1136 թուականը: Ասոր շարունակութիւնն ալ յօրինած է Գրիգոր Երէց, հասցնելով մինչեւ 1162 տարին: Այս գրքի պատմութեան նիւթն է պիտաւորապէս նոյն ժամանակաշրջանին տեղի ունեցած պատմական կարեւոր պատահարները՝ ժամանակագրական կարգով, առանց մեծ մասնաւորումներու:

ՄԵՐՏԻՆ ՔԱՂԱՔԸ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Միջագետքի տափաստաններու աւարտին՝ կը սկսի բարձրանալ լեռներու շարք մը, Թուրքերէն կոչուած «Մարտին Տաղլարի», որոնց բարձրագոյն կատարներէն մէկուն վրայ կը բացուի Մերտին քաղաքը՝ իր դարաւոր բերդով:

Մերտին շատ հին քաղաք է: Հին աստին կոչուած է Մարտէ, իսկ Արարները կոչած են՝ Մարտուն: Գէորգ Կիպրացի որ 604ին ապրած է եւ գրած է հռոմէական արեւելեան դաւառներու տեղագրութիւնը, կը յիշէ քաղաքիս բերդը «Քասթրօն Մարտէս» կոչելով¹: Հ. Ղուկաս Ինճիճեան իր Հայաստան աշխարհացոյցին մէջ կը գրէ. «Անունս Մերտին կամ Մարտին է մերձաւորագոյն նախնի անուանս Մարտէ, որ յառաջագոյն էր մի ի սանճագացն Տիարպէրոյ, այլ յամին իբրեւ 1730 կամ 35, ի խնդրոյ բնակչաց էանց ընդ տէրութեամբ փաշային Պաղտատի: Ի հիւսիսոյ կողմանէ սորա են լերինք բարձրաբերձ ապառաժուտք, որք են աւարտք լեռանցն կոչեցելոց Գարաճա տաղլարի, իսկ ի հարաւոյ գաւառին է դաշտավայր անապատ»²:

Քաղաքին տուները կը սկսին դաշտագետինէն ու աստիճանաւոր կերպով կը բարձրանան գէպի բերդ, որ քաղաքին գլուխին դրուած թագի մը կը նմանի: Տուներու տանիքները ընդհանրապէս հողէ են եւ տափարակ, շինուած սպիտակ քարերով, որոնք առատօրէն կը գտնուին շրջակայ բարձունքներու վրայ: Տուներու կարգով եւ նուրբ շինուածքը՝ քաղաքին ազնուական երեւոյթ մը կու տան, որու նմանը չի գտնուիր Արեւելքի մէջ: Ճամբաները նեղ են ու մաքուր, սալաշատակ քարերով: Քաղաքին կեդրոնէն կ'անցնի բաւական լայն ճամբայ մը, որ Տիարպէրէն գալով՝ կը կտրէ քաղաքը ու կ'անցնի: Ճամբուն եզերքին կը գտնուին դիտաւոր խանութները: Քաղաքէն քիչ հեռու կ'անցնի Պապուր գետը, որ երթալով օձապտոյտ կը կորսուի հորիզոնին մէջ: Քաղաքը իր բացառիկ գիրքով եւ մաքուր օդով՝ դարերու ընթացքին բազմաթիւ ժողովուրդներ հաւաքած է իր շուրջ:

1. Մերտին քաղաքին եւ բերդին համար մեր օգտագործած գլխաւոր աղբիւրն է՝ ALBERT GABRIEL, Voyages archéologiques dans la Turquie Orientale, Paris, 1940.

2. Ինճիճեան Հ. Ղ., Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 353-354:



Մարտին քաղաքը եւ իր բերդը՝ հարաւ-արեւմուտէն տեսնուած :
La ville de Mardin et sa forteresse vue du sud-ouest.



Մարտին քաղաքը եւ բերդը՝ հարաւ-արեւելէն տեսնուած :
Ville de Mardin: sa forteresse vue du sud-est.



Մարտին քաղաքը եւ իր բերդը՝ հարաւ-արեւմուտէն տեսնուած :
Mardin: vue générale de la ville du sud-ouest.



Մարտինի բերդը եւ իր նշանաւոր մզկիթը :
La forteresse de Mardin et sa célèbre mosquée.



Մարտինի բերդը և քաղաքը հեռուէն տեսնուած
Mardin: la ville et la forteresse vues de la terrasse du firdaws.

Իր ռազմական դիրքին համար՝ Արեւելքի կարեւոր քաղաքներէն մէկը նկատուած է: Քաղաքը գրաւողը տէր կրնար ըլլալ ընդարձակ շրջաններու, իր հակահլոխն տակ պահելով չորս կողմէն եկող ու անցնող ուղիները:

Մերտին շատ մը երկիրներու սահմանին մօտիկ ըլլալով, դարերու ընթացքին եղած է վաճառականութեան կեդրոն:


Հակառակ քաղաքին բնական գեղեցկութեան, սրբալի և հոն ջուրի պակասը: Հին ժամանակ ունեցած է շատ աղբիւրներ: Իպն Սատտատ արար ուղեգիրը կ'ըսէ թէ շատ հին ժամանակներէ ի վեր քաղաքը ունեցած է երեք աղբիւրներ. Այն էլ ձուգա, Այն էլ Հարպիաթ և Այն էլ հառնուպ անուններով: Այս ակերը այսօր գոյութիւն չունին. ամառ ատեն կը չորնայ գլխաւոր աղբիւրն ալ, ու ժողովուրդը կը ստիպուի օգտագործել անձրեւներու ջուրերը:

Հին ատեն քաղաքը շրջապատուած էր պարիսպներով, որ կը սկսէր բերդէն, ու շրջապատելով ամբողջ քաղաքը՝ կը բարձրանար դարձեալ բերդ:


Այսօր այդ պարիսպները մեծ մասով անհետացած են, հազիւ քանի մը նմոյշ մնացած են քաղաքին զանազան կողմերուն վրայ: Կան սակայն զանազան դժագրութիւններ, ուր կը տեսնուի Մերտին քաղաքը շրջապատուած պարիսպներով: Մինչև 1880 թուականը պարիսպներու մեծամասնութիւնը դեռ կանգուն ըլլալը կը վկայեն շատ մը թուրք պատմիչներ, բայց որովհետեւ այսօր գրեթէ ոչինչ մնացած է անոնցմէ, չէ կարելի ճշգրիտ պաշտօնաբար մը կազմել անոնց մասին:

Իպն Սատտատ պատմիչին համաձայն, պարիսպը ունեցած է վեց դռներ, որոնց անուններն են. Պապ Ազօր, Պապ Քասիս, Պապ Սահվաթ, Պապ էլ ձափիտ, որոնք միշտ քաց էին. ընդհակառակը փակ կը մնային երկուքը, այսինքն Պապ էլ Քամարա և Պապ էլ Զէյթուն: 1801ին Տիւրքէ անունով ճանապարհորդի մը համաձայն՝ դեռ կը պորձածուէին երեք դռներ, Մուշ Քափուսի, Վայիբի Քափուսի և Սօր Քափուսի անուններով:

Մերտինէն անցած են Մարեր, Պարսիկներ, Հոռմէացիներ, Արաբներ, Յոյներ, Սերճուքներ և հուսկ փուզանդական հօգոր քանակներ: Ը. դարէն սկսեալ Մերտին եղած է նեստորականներու կեդրոն, բազմաթիւ վանքերով, որոնցմէ նշանաւորն է Տայր Զափարան, շինուած քաղաքէն 5 քիլոմետր հեռու, լեռներու ստորոտը, գետակի մը ափին, ուր անձամբ այցելեցի: Վանքը բնակուած Յակոբիկեաններէ և կենսունակ է իր ժամերգութիւններով և աղօթքի կեանքով: Ատեւօք եղած է քրիստոնէութեան կեդրոն, բնակուած նաեւ բազմաթիւ հայերէ, սակայն 1915ի ջարդերէն յետոյ քաղաքը ամայացած է և շատ քիչ Յակոբիկեան քրիստոնեաներ մնացած են հոն:



Մերտին քաղաքին յատկագիծը:
Plan de Mardin (Denoël).



Մերտինի քաղաքի և բերդի կազմակերպման պրոֆիլը:
 Profils de la ville de Mardin et de sa forteresse.


ՊԱՏՄԱԿԱՆ

Մերտինի իբր պատմական քաղաք՝ շատ հին է: Ան գոյութիւն ունեցած է Ասորեստանցիներու և Բաբելոնացիներու տիրապետութեան շրջանին, և երկար դարեր մնացած է Պարսիկ տիրապետութեան տակ:

333ին (Ք. Ա.) Մեծն Ալեքսանդր գրաւած է քաղաքը. ապա անցած է Հռոմի ձեռքը, դառնալով կարեւոր կեդրոն մը՝ դէպի Պարսկաստան արշաւանքներու շրջանին Պարսկա-Հռոմէական պատերազմներու շրջանին, Մերտին անցած է զանազան ձեռքերէ, ու ամէնքը իրենց հետքը թողուցած են քաղաքին վրայ, նորոգութիւններով և նոր շինութիւններով:

Թաթարները արշաւելով Փոքր Ասիա, կատաղի կռիւներ մղելով հանդերձ՝ չեն յաջողիր գրաւել Մերտինը: Անոնց հեռանալուն, Ղարա Եուսուֆ կը պաշարէ, ու շատ զոհեր տալէ յետոյ՝ վերջապէս տէր կը դառնայ քաղաքին և անառիկ բերդին: 500ին Օրթոքեաններ կը գրաւեն քաղաքը, ու շուրջ երեք դար կը մնայ իրենց տիրապետութեան տակ: 638ին Հուլիոս Սանի որդին՝ Եահմուտ, ութը ամիս կը պաշարէ քաղաքը, սակայն անկարող կ'ըլլայ գրաւելու քաղաքն ու անոր անառիկ բերդը:

1393ին, երբ Լէնկթիմուր Նինուէէն մեծ բանակով մը կու գայ Մերտինի վրայ, Մերտինի թագաւորը, Մելիք Չահար, խորհրդակցելով իր իշխաններուն հետ, կ'որոշէ ընդառաջ երթալ Թիմուրին ու ներկայացնել պայմաններ, որոնք եթէ ընդունուելու ըլլային՝ Թիմուրի դիմաց պիտի բացուէին Մերտինի դռները, հակառակ պարագային պիտի դիմադրէին անոր:




Մերտինի քաղաքի շարքի պարիսպներն ու բերդերը:
 Les remparts de Mardin et le château (Denoël).

Լէնկթիմուր կ'արհամարհէ եղած առաջարկը ու դերի կը բռնէ Մելիք Չահարը, որ անձամբ ներկայացած էր Թիմուրի: Մերտինի իշխանները տեսնելով որ իրենց թագաւորը չարչարանքներու կ'ենթարկուի, տեղիք չեն տար, այլ կ'անցնին ինքնապաշտպանութեան: Թիմուրի բանակը կը թափանցէ քաղաքէն ներս, ու կը սկսի սուրէ անցընել քնակիչները, որոնք մասամբ միայն կը յաջողին ապաստանիլ բերդը: Թիմուր երբ առաջարկ կ'ընէ բերդի բնակիչներուն, խաղաղութեամբ յանձնել բերդը, ու կը մերժուի իր առաջարկը, անձամբ կ'անցնի բանակին գլուխ ու կը շրջապատէ բերդը:

Կը սկսի սարսափելի յարձակում մը, մինչեւ բերդի քնակիչները կը զըլջան՝ Թիմուրի առաջարկը ընդունած չըլլալուն համար: Երբ պատգամաւորներ կու գան և խաղաղութիւն կը խնդրեն, Թիմուր կը խոստանայ ոչ մէկուն վնասել՝ եթէ բերդին տոնները իր դիմաց բացուէին: Ան յաղթական ներս կը մտնէ ու խոստումին հակառակ՝ կը ջարդէ բոլոր բնակիչները, իսկ մնացածները՝ շղթայի գարնելով կը տանի գերի:

Յաջորդաբար Մերտինի բերդը գրաւեալ կը կազմակերպուի ու կ'ամրանայ ու Թիմուր կրկին անգամ կու գայ գրաւելու գայն, սակայն այս անգամ չի յաջողիր ոչ մէկ կերպով ստիպել բերդը, ու քաշուելէն առաջ քար ու քանդ կ'ընէ Մերտին քաղաքը³:

3. Հմտ. Պատմութիւն Լեմկ Ռիմուրայ, Երուսաղէմ, 1887, էջ 63-65:




Մերտին 18րդ դարում:
Mardin au XVIII^e siècle.

ՄԵՐՏԻՆԻ ԲԵՐԴԸ

Մերտինի բերդը Միջագետքի ամենէն նշանաւոր բերդերէն մէկն է: Առաջին անգամ զայն կը յիշատակէ Ամիանոս լատին պատմագիրը, բաւելով թէ այդ շրջանակին մէջ կային երկու բերդեր, Մարտին եւ Լօրն անուններով: Մարտինը մեղի ծանօթ Մերտինի բերդն է, իսկ Լօրն անոր մերձակայ բլուրներէն մէկուն վրայ շինուած է, որ ներկայիս անհետացած է ու հաղիւ թէ պարիսպներուն հետքերը մնացած են: Ամիանոսի համաձայն, Գրակոսի կինը պատգամաւորներ կը ղրկէ Ամիտէն Նիսիպ. պատգամաւորները կ'անցնին Մերտինի եւ Լօրնի բերդերու մօտէն:

Մերտինի բերդը կոչուած է «ղղեակ» կամ «ղղեակներու թագուհի»: Ժ. դարուն կոչուած է Բաղէի բերդ (Ալ Պազ), ԺԴ. դարուն կը կոչէին Լերան բերդ (Գալ Աղի Քում): Բերդը կը քարձրանայ քաղաքին վերեւ քարաժայռի մը կատարին, ծովէն 1200 մեղր բարձրութեան վրայ: Հիւսիսային կողմէն ունի ժայռոտ սուր էջք մը, իսկ չորս կողմէն շրջապատուած է սուր ժայռերով, դարձնելով բերդը անմատչելի: Բերդին մակերեսը բաւական տարածուն է, ցորենի դաշտերով: Բերդը ունեցած է առատ ջուրի աղբիւր մը, որ պաշարումներու համար ինքնաբաւ կ'ընէր բերդին բնակիչները:




Մերտինի բերդը ինչպէս որ է այսօր:
Etat actuel du château de Mardin (Denoël).

Բերդին արեւմտեան մասը հին ժամանակներէ ի վեր բնակելի եղած է, սակայն ժամանակի ընթացքին, մանաւանդ երբ պատերազմները տարած են եւ ժողովուրդը ապահով զգացած է, քանզեւ իրենց բնակարանները իջած են բերդէն վար, իրենց հետ բերելով տուներու քարերը, որոնց կտորները տակաւին կը տեսնուին պատերուն վրայ:

Բերդին մէջ գտնուող կառավարական շէնքը վաղուց քանդուած է, իսկ գորանոցը եւ մզկիթը կիսակործան վիճակի մէջ կը գտնուին:

Բերդը հարաւային կողմէն ունի միայն մէկ դուռ, արուեստական սանդուխէ մը միայն կարելի է հասնիլ անոր: Զարմանալի է որ այսպիսի հզոր բերդ մը միայն մէկ դուռ ունի. հնագէտներու համաձայն դեռ պէտք է գոյութիւն ունենան նաեւ ծածուկ տրոներ, պաշարումի շրջանին անոնցմէ դուրս գալու եւ օգնութիւն ստանալու համար:

Մուտքի դրան երկու կողմերը կը բարձրանան երկու բոյրածեւ հսկայ բուրգեր, որոնք բերդի մուտքը կը պաշտպանեն: Նեղ եւ քարուտ ճամբայ մը քաղաքէն դէպի բերդին դուռը կը բարձրանայ: Դուռը պարիսպին վրայ շեշտակի կը բացուի, ու կարելի չէ ճակատէն հարուածել զայն քարերով կամ բարաններով: Դրան վերեւ կը գտնուին յատուկ քացուած խորշեր, ուսկից կրակ կամ հալած ձէթ կը թափէին դրան մօտեցողներուն վրայ:



Մերսիմի բերդին աշտարակի յատակագիծը:
Plan de la tour du château (Denoël).



Քափր-էլ-Զաֆարանի վանքին մօտիկ գեղեցիկ կամարակապ աղբիւրը:
Le monastère de Kafr-el-deir-Za'faran et sa belle fontaine en arcade.


Այս դուռը այսօր ալ կը մնայ հին շինութեամբ, չնորհիւ անոր ամուր յօրինուածքին: Վրան չեն տեսնուիր նորոգութեան հետքեր. քարերը հին են եւ տաշուած: Դրան վրայ չկան գարդեր կամ կենդանակերպներ, բայց երկու կողմերուն վրայ կան բարձրաքանդակ երկու առիւծներ, վեց տող արձանագրութեամբ, առանց յատուկ թուականի մը:

Պուսոյ Զինիլի Բուշք թանգարանին մէջ կը պահուի Մերսինի բերդին դրան երկաթէ սողնակներէն մէկը, 6 քիլոյ կշիռքով, ճոխ գարդերով, վրան կան շատ մը փորագրութիւններ, որոնցմէ գլխաւորը կը բռնէ երկու տող ու կը յիշուի Օսման Պահատուրի անունը, որ Ազգայունեաններու ընտանիքին հիմնադիրն է. կը յիշուի նաեւ անոր Համզա Պահատուր որդին, որու հրամանով շինուած է այս սողնակը: Արձանագրութեան վրայ թէեւ թուական չի յիշուիր, սակայն ժՆ. դարուն առաջին կէսին շինուած ըլլալու է, քանի այդ թուականներուն է որ կը յայտնուին Ազգայունեանները. այդ շրջանի ճարտարապետութեան նշանները կը տեսնուին նաեւ դրան վրայ:



Զափարանի վանքի եկեղեցիի գմբեթը և զանգակատունը:

Coupole et clocher de l'église du monastère de Deir-Za'faran (Denoël).




Զափարանի վանքը:
Le monastère de Deir-Za'faran (Denoël).

Մերտինի բերդը ոչ միայն իր բնական պաշտպանութեան ժայռերը ունէր, այլ և ամբողջ բերդին շրջապատին քաշուած վէին պարիսպներ և ամրացած հզօր քառակուսի և բոլորածեւ բուրգերով: Հիւսիսային կողմի պարիսպները աւելի խնամքով և պատերազմական արուեստին պահանջներուն համեմատ շինուած էին, նկատի առնելով այդ կողմերէն հաւանական յարձակումները, այս կողմին վրայ կը բարձրանայ հսկայ աշտարակ մը, ուսկից բերդ բարձրանալը գրեթէ անկարելի էր: Հարաւային կողմի ցից ժայռերն ալ հզօր պաշտպանութեան գիծ մը կը կազմէին, ուր կար դարձեալ քառակուսի աշտարակ մը, որ կը պաշտպանէր այդ կողմէն ելքը: Արեւելեան կողմի պարիսպներուն վրայ կայ նոյնպէս աշտարակ մը, ցարդ լաւ վիճակի մէջ մնացած. այս աշտարակը լայն և ընդարձակ ըլլալով՝ մէջը ունէր ընդարձակ սենեակ մը, կրակարան մը՝ աղիւսէ շինուած:

Աղիւսներուն վրայ կ'երեւին կնիքներ. հնագէտներու համաձայն անոնք Ապգոյունեաններուն նշաններն են. հաւանաբար ժ.Յ. դարուն: Այս աշտարակին ստորոտը, տասը մեդր վար, կը տեսնուին պաշտպանութեան պարիսպներու մնացորդներ, որոնց համար աւանդութիւնը կ'ըսէ թէ ասիկա աշտարակ մըն էր՝ որ կը կոչուէր Գոզի աշտարակ:



Մերտինի մօտ եզոզ Լօրն բերդը:
La forteresse de Loren près de Mardin.



Սուրիայէն դէպի Մերսին գացող երկաթուղին:
 La voie ferrée provenant de Syrie en direction de Mardin (Denoël).

ՄՐՈՒՃԻ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Մրուճ Հայկական Միջագետքի բերդաւաններէն է: Կը գտնուի Ուրֆայի հարաւ-արեւմուտքը, Պիրէճիկի հիւսիսակողմը, Հոռմկլայի արեւելքը: Հին ատեն կը կոչուէր Սէրուճ, Սիւրուճ, ձէգգայա: Ջրարբի շրջան մըն է անոր ամբողջ գաւառը, եւ շատ բերրի: Այսօր կը կոչուի Suruç: Ունի նաեւ բերդ մը՝ որ կը կոչուի Suruç Kalesi: Հին ատենէ ի վեր քաղաքը ամուր պարիսպներով շրջապատուած էր, իսկ իր բերդը կը բարձրանայ անոր մօտ, ժայռուտ բլուրի մը կատարին, բաւական անառիկ: Մեր պատմիչները գայն կը կոչեն «Մրուճի կլայ»: Սմբատ Սպարապետի տուեալներէն կ'երեւի թէ Մրուճի բերդը քաղաքէն դուրս կը գտնուէր, եւ ոչ թէ քաղաքի պարիսպներէն ներս, որովհետեւ պատմիչին նկարագրութեան համաձայն, պատերազմի մը պարագային, քաղաքին ժողովուրդը, իբրեւ ապահով տեղ, քաղաքէն դուրս կ'ելլէր եւ կ'ապաստանէր իր կլային մէջ:

ՊԱՏՄԱԿԱՆ

Մրուճի քաղաքին եւ բերդի շինութեան մասին մեր պատմիչները որեւէ ծանօթութիւն չեն տար: 1100ի ժամանակները կը յիշուի անունը, երբ Միջագետքի շատ մը քաղաքներու կը տիրէին լատին իշխաններ: Նոյն թուականին անոր կոմսն էր Փուլէր (Փուլլէր ըստ Մ. Ուռհայեցիի): Երբ Պարսից Սուլթան ամիրան մեծ բանակով մը Մրուճի վրայ կու գայ 1100ին, Փուլէրի օգնութեան կը հասնի Եդեսիոյ Պաղտին Տրպորգի, եւ միացեալ բանակով մը թշնամիին դէմ կ'ելլեն: Փուլլէր եւ Պաղտին աճապարանքով դաշտ կ'իջնեն, ու պատերազմի պէտք եղած պատրաստութիւնները չունենալով՝ սաստիկ պարտութիւն մը կը կրեն, եւ անթիւ գերի եւ աւար թողլով դաշտին վրայ՝ կը փախչին եւ կ'ապաստանին Անտիոք: Պատմիչը սրտի ցաւով կ'աւելցնէ՝ «կոտորեցան զօրքն Յրանկաց եւ Հայոց»: Այս անփառունակ պատերազմին մէջ կը մեռնի Փուլլէր, Մրուճի կոմսը: Սուլթան յաղթանակով կը յառաջանայ բուն Մրուճի վրայ եւ կը պաշարէ անոր բերդը, ուր ապաստանած էին

1. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 116: Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 336-337:

անհամար ժողովուրդ ու եկեղեցականներ, ինչպէս նաեւ Ուսնայի եպիսկոպոսը: Պարսից Սուլթան ամիրան կը պաշարէ զայն եւ չորս կողմէն կը սկսի հարուածել անոր պարիսպները մեծղի բարաններով, պահելով բերդը շարունակական նետերու կարկուտի մը տակ: Շուտով բերդի պահապաններուն մէջ անհամաձայնութիւն կ'իյնայ: Պաղտին կը սկսի բերդին մէջ եղող հայերը նեղել, անոնց վերագրելով Սրուճի դաշտին մէջ կրած պարտութիւնը: Այն ատեն հայերը ու նաեւ ուրիշ քրիստոնեայ ժողովուրդներ, գաղտնի՝ համաձայնութիւն մը կը կնքեն պարսիկ ամիրային հետ. «Իսկ այլ քրիստոնեայք, որք էին ի քաղաքին՝ միարանեցան ընդ Թուրքն»²:

Ապստամբութիւնը շուտով ծայր կու տայ բերդին մէջ: Պաղտին կը ստիպուի դիշերանց թողուլ բերդը եւ Անտիոք ապաստանիլ: Ապստամբները Սրուճի բերդը կը յանձնեն Սուլթանին:

Պաղտին սակայն կարճ ժամանակի մէջ Անտիոքէն օգնութիւն առնելով՝ կրկին կու գայ ու կը պաշարէ Սրուճի բերդը, եւ առանց երկար դիմադրութեան ու կռիւի՝ կը դրաւէ զայն, եւ անհամար գերի առնելով՝ Անտիոք կը վերադառնայ. եւ որպէսզի Հայերը նորէն չխմբուին Սրուճի պարիսպներէն ներս՝ քանդել կու տայ զայն. «Եւ աներեցաւ Սրուճ յազգէն Փրանկաց»³:

Մ. Ուսնայեցի Սրուճի աներման պատճառ կը համարի քրիստոնեաներու անմիարանութիւնը: Պատմութենէն գիտենք որ Հայերը միշտ հակառակ եղած են լատին իշխանութեան, որոնք իրենց սխալ քաղաքականութեամբ՝ մեծ վնասներ հասցուցեր են Հայերուն:

2. Անդ:
3. Անդ:

ՍԵՒԵՐԷԿԻ ԲԵՐԴ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Կը գտնուի Ուսնայի հիւսիսը, Ծէնկիպար Չայ կոչուած գետակի ակնաղբիւրին վրայ: Հ. Ղ. Ինձիճեանի համաձայն, հին ատեն Սեւերէկը՝ կը կոչուէր Սեւաւերակ, իր հողը եւ քարերը սեւ ըլլալուն համար: Հաւանաբար հրաբխային շրջան մը ըլլալով, քաղաքն ալ շինուած է հրաբխային լաւաներով:

Ամրոյշ գաւառը ապառաժուտ է. իր արեւմուտքէն կ'անցնի Եփրատ գետը, իսկ արեւելեան կողմին վրայ կը գտնուին Սեւա կոչուած լեռները, զոր Թուրքերը Գարաճայ տաղ կ'անուանեն¹:

Սեւերէկ հզօր պարիսպներով չրջապատուած էր, եւ իր մէջ ունէր նաեւ միջնաբերդը: Ան շատ ամուր եւ քարձր աշտարակներով պաշտպանուած էր եւ պարիսպներուն շուրջն ալ խոր խրամներ փորուած էին, որոնք ջուրով կը լեցնէին պատերազմի ժամանակ, ջուրը առնելով Ծէնկիպար գետակէն:

ՊԱՏՄԱԿԱՆ

Սեւերէկ Բիւզանդական կայսրութեան արեւելեան սահմանի բերդաքաղաքն էր, որուն տիրացած էին Ապրղարիպեան հայ իշխանները, եւ հոն փոքրիկ հողատիրութիւն մը հիմնած՝ բիւզանդական կայսրներու հովանիին տակ:

Եդեսիոյ ճօսլին կոմսը, միացած Երուսաղէմի Պաղտին թագաւորին, ամէն ջանք կը թափեն՝ Սեւերէկը հայ իշխաններու ձեռքէն առնելու. սակայն իրենք ալ երկար չեն կրնար զայն պահել, որովհետեւ 1080ին հասնելով Արարները՝ կը տիրեն այս շրջաններուն, ինչպէս նաեւ Սեւերէկի:

Միջայէլ Մոնոմախոս կայսրը տեսնելով որ Արարները կամաց կամաց բիւզանդական հողերէն ներս կը թափանցեն, եւ Միջագետքի շրջանին մէջ՝ շատ մը բերդեր եւ քաղաքներ կը գրաւեն, 1035ին մեծ բանակով անցնելով Մալաթիայէն՝ Միջագետք կ'իջնէ: Արարները երբ կը զսն թէ կայսրը կու

1. Հ. Ղ. Ինձիճեան, Նոր Հայաստան, էջ 227-228:

գայ, Եփրատը կ'անցնին եւ կը կողոպտեն Սեւերէկի շրջանը, կ'աւերեն, կը քանդեն գիւղեր ու կը քաշուին Խառան:

Մ. Ուռհայեցի այս կողոպուտին մանրամասնութիւնները մեզի կու տայ՝ ըսելով. «Կոտորեցին զԱլլարն եւ զՍեւաւերակքն եւ զամենայն աղբերակունքն եւ զՂրազնացան նորա լցին արեամբ...»²: Միքայէլ Մոնոմախոս կայսրը երբ Սեւերէկ կը հասնի, իր բանակին առջեւ ամէն ինչ քանդուած, այրած եւ աւերակ կը գտնէ, մեծ նեղութիւններ կը քաշէ՝ բանակը պարենաւորելու համար: Կը ստիպուի մեծ զօրուարութեամբ, հեռու տեղերէ ուտելիք հասցնել իր զօրքերուն, եւ մեծ ծախսերով՝ դարձեալ զայն կը վերաշինէ, եւ հոն պահպան զօրքեր տնելով կը վերադառնայ Պոլիս:

1063ին Սեւերէկի վրայ 5.000 հոգինոց բանակի գլուխ անցած՝ կու գայ Յեհնուկ անունով թուրք սուլթանը: Սեւերէկի կոմսերը անակնկալի կու գան եւ ժամանակ չեն ունենար քաղաքը պարենաւորելու եւ զինուորական հարկաւոր պատրաստութիւնները տեսնելու. ու նկատելով որ պիտի չկարենան պաշտպանուիլ թուրք անագին ուժին դէմ, անպաշտպան թողած՝ գիշերանց կը լքեն քաղաքը եւ Ուռհա կը քաշուին: Յեհնուկ առանց մեծ զօրուարութեան՝ յաղթական կը մտնէ քաղաք եւ զայն կը գրաւէ. ինչ որ հոն կը գտնէ՝ կը կողոպտէ եւ անբաւ աւարի տէր կը դառնայ:

Երբ Յեհնուկ Սեւերէկի աւարը իր զօրքերուն բաժնելու վրայ էր, անհարաւէն ուրիշ քիւրտ իշխան մը, Խարդ անունով, կու գայ Սեւերէկի վրայ. կը զարնուի Յեհնուկի հետ եւ զայն պարտութեան կը մատնէ եւ յաղթանակով Սեւերէկ կը մտնէ. «առեալ բազում անթիւ աւարս, ոչխարս... եւ այլ բազում աւարս, եւ գայր ի քերզն՝ որ կոչի Սեւերէկ»³:

Երկու տարի յետոյ պարսիկ իշխան Սլար-Սորասան, մեծ բանակով մը նախ կը յարձակի թիւսոյ բերդին վրայ, բայց չկարենալով զայն գրաւել՝ կու գայ «եւ հաստատէր ի բերդն որ կոչէր Սեւերակս»⁴: Բերդին Փրանկ իշխանները զուրս կը խոյանան, եւ երկու հարիւր ձիաւոր խումբով՝ կը զարնուին թուրք բանակին հետ. եւ առաջին յարձակումին կը ջախջախեն թրքական բանակը եւ փախուստի կը մատնեն, սակայն այլազգիները օգնական ուժեր առած՝ կրկին կու գան Փրանկներուն վրայ, եւ այս անգամ կը տիրապետեն բերդին եւ յետոյ՝ «յարձակեցան ի գաւառն Սեւաւերակայ եւ Նիսեպնայ... եւ անողորմ ի բերան սրոյ կոտորեցին եւ արեամբ լցին գերկիրն»⁵:

Թուրքերը չեն կրնար երկար պահել իրենց ձեռքը Սեւերէկը, կրկին զայն կը գրաւեն յատին իշխանները, եւ այնուհետեւ երկար ատեն հայեր եւ լատին իշխաններ փոխն ի փոխ տէր կը դառնան Սեւերէկի:

2. Մ. ՈՒՌ-ՀԱՅՈՑԻ, էջ 74:
3. Անդ, էջ 172:
4. Անդ, էջ 187:
5. Անդ, էջ 188:

ԹԼԿՈՒՐԱՆ ԲԵՐԴ

Թլկուրան Հայկական Միջագետքի մէջ հին աւան մըն էր, Ուրֆայէն մօտաւորապէս 25-30 քիլոմետր հեռու, հիւսիս արեւելքը, ուր կը նստէր Հայոց Առիւծ իշխանը: Այս աւանէն էր նաեւ Սիսի Կրդի Յովհաննէս Բ. Կաթողիկոսը (1489-1545), որ Թլկուրանցի կոչուած է:

Մեր աշխարհագիրները Թլկուրան աւանը կը համարին Ս. Գիրքի Աւսիդ կոչուած երկիրը, ուսկից էր Յոբ երանելին:

Մամտուտ սուլթանը 1112ին մեծ բանակով մը կու գայ Թլկուրանի վրայ, ինչպէս կը գրէ պատմիչը. «Բագմութեամբ զօրքն Թուրքաց, եւ հասանէր ի վերայ բերդին որ կոչէր Թլկուրան, եւ արար պատերազմ ի վերայ նորա, եւ բերդացիքն ետուն առ փտանդին զբերդն՝ ի ձեռս Մամտուտին»²: Ուռհայեցիի այս խօսքերը ցոյց կու տան որ Թլկուրան անառիկ բերդերէն մէկն էր, եւ երբ Մամտուտ կը յարձակի անոր վրայ, բերդը փր շրջակայ հողերով՝ լատին իշխաններու ձեռքն էր, որոնք չունենալով պէտք եղած պաշտպանութեան միջոցները, մանաւանդ պէտք եղած պաշարը եւ անկարող երկար պաշարումի մը դիմանալու, առաջին յարձակումին իսկ՝ կը քանան դռները եւ անձնատուր կ'ըլլան: Մամտուտ հակառակ իր տուած խոստումին՝ պաշտպանող 40 լատին իշխանները սուրէ վ'անցընէ, ինչպէս որ կը գրէ պատմիչը. «Եւ կային ի բերդն քառասուն Փրանկ, առեալ զնոսա եւ կոտորեաց զամենայն սրով»³:

Այս անպատի աւազներուն մէջ ծլած աւանը, ինչ որ կ'երեւի, շատ հին ժամանակներէ ի վեր նշանաւոր եղած է, իր կղմիւտրէ պարիսպներով եւ իր մերձակայ բլուրին կատարին բարձրացող համանուն քերդով:

Այս բերդը կարեւոր դեր մը կատարած է բարբարոսներու արշաւանքի շրջանին, որոնք Ուրֆա հասնելէ առաջ՝ պէտք էին քանդել Թլկուրանի պաշտպանութեան գիծերը, ազատորէն յառաջանալու համար Ռուֆա առաջնորդող ճամբէն: Հիմա Թլկուրան հեռուոր անպատիւն մէջ մոռցուած գիւղ մըն է, կարեւոր ճամբաներէ հեռու, սակայն մինչեւ մեր օրերը տակաւին կանգուն են անոր հնամենի պարիսպներէն մասեր:

1. ԷՓՐԻԿԵԱՆ Հ. Ս., Բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903, էջ 41:
2. Մ. ՈՒՌ-ՀԱՅՈՑԻ, էջ 396:
3. Անդ: ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 134-135:

ՏԷՊ ԲԵՐԴ

Այս օտարահնչուն անունով բերդը, Տէպ, Հայկական Միջագետքի բերդերէն մէկն էր, որ կը յիշէ մէկ անգամ Մ. Ուռհայեցի: Կը գտնուէր Եղեւսիոյ մօտերը, եւ կը պատկանէր Փրանկ կոմսերու, որոնք կ'իշխէին Եղեւսիոյ ամբողջ գաւառին:

Տէպ բերդը մեզ կը հետաքրքրէ, որովհետեւ կապ մը ունի Հայերու հետ: Երբ 1065ին Պարսիկ Սլար-Պորասան ամիրան մեծ բանակով մը Եղեւսիոյ վերայ կու գայ, պատմիչը կ'ըսէ թէ «եւ արար անդ սաստիկ կոտորածս ի բերան սրոյ ի բազում տեղիս... եւ բազում գերութեամբ իջաւ ի վերայ բերդին որ կոչի Տէպ, եւ առ հասարակ կոտորեաց զամենեսեան»¹:

Եղեւսիոյ լատին իշխանները անմիջապէս վրէժի պատերազմի կը դիմեն. հետեւակ ու հեծեալ բանակներով, որոնց մէջ հայեր կային, կը յարձակին Սլար-Պորասանի բանակին վրայ:

Սլար-Պորասան հակադարձակման կ'անցնի. «ձայն տուեալ զօրաց իւրոց՝ յարձակեցաւ ի պատերազմ, եւ յառաջ քան քաղաքագմն՝ փախեան հոռոմոց զօրքն, եւ ի Հայոց հետեւակաց երկու եղբայր՝ կալան զկամուրջն, եւ զամենայն թուրքն արգելական արարին առ վայր մի՝ մինչեւ ընկալան քմահ սաստիկ պատերազմաւ»²:

Կ'ազատին լատին բանակի զօրքերը կոտորածէ մը, սակայն երկու ճգրայրները շատ երկար չեն կրնար դիմադրել թուրք խուժանին, անվահեր քաջութեամբ կը կռուին եւ հուսկ կ'իյնան վամուրջին վրայ, հազարաւորներ մահէ ազատելէ վերջ:

1. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 180:

2. ԱՅՊ:

ԹՐՍԻՃ ԲԵՐԴ

Թրսիճ Ուրֆայի շրջանի բերդերէն մէկն էր, անոր մասին կը գրէ Մ. Ուռհայեցի եւ զայն Ուռհայի բերդ կը կոչէ, «ի բերդն Ուռհայոց՝ որ կոչի Թրսիճ»¹: Իբրեւ ճշտում անոր տեղագրական դիրքին, պէտք է ղենել զայն Ուռհայի մօտերը:

1095ին Ուռհայի կը տիրէր Թորոս Կիւրապաղատ: Երբ Սուլթան Քուրք ամիրան եւ Պալտուխ, Սամուսատի ամիրան, պատրաստութիւններ կը տեսնեն Ուռհայի վրայ գալու, «Թորոս Կիւրապաղատն՝ տէր Ուռհայոյ, եղև լցեալ ամենայն իմաստութեամբ, եւ յամենայն կողմանց սկսաւ ամրացուցանել զքաղաքն եւ կանգնեաց բարանս եւ փիլիպանս»: Թորոս հազիւ լրացուցեր էր իր պատրաստութիւնները, ահա վրայ կը հասնի թրքական բանակը, որոնք բարաններ կը գետեղեն անոր պարիսպներուն առջեւ եւ կը հարուածեն քաղաքը, սակայն «կացեալ յաւուրս բազումս անդադար պատերազմաւ՝ եւ ոչինչ կարաց առնել քաղաքին»²:

Թորոս Կիւրապաղատ այս պատերազմին ամբողջ ծանրութիւնը անձամբ կը վերցնէ, կը քաջարեւէ քաղաքին քնակիչները: Թշնամիները չեն յաջողիր քաղաքը գրաւել, ամօթով կը վերցնեն պաշարումը՝ եւ կը քաշուին իրենց տեղերը:

Թորոս այս յաղթանակէն քաջաբերուած՝ կը յարձակի Թրսիճ բերդին վրայ, զոր աջազգիները գրաւած էին. զայն չորս կողմէն կը պաշարէ: Ասիկա իմանալով Սամուսատի Պալտուխ ամիրան՝ Թրսիճի օգնութեան կու գայ, եւ բերդին ստորոտը երկու բանակները իրարու կը զարնուին: Թորոս իր անխոհեմութեան պտուղը կը քաղէ. կը յաղթուի եւ փախուստի ճամբան կը բռնէ:

1. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 304:

2. ԱՅՊ, էջ 303:

ԱԼԱՄՈՒԴ ԲԵՐԴ

Ալամուղ Հայկական Միջազգային անժանօթ բերդերէն մէկն է: Հաւանաբար կը գտնուէր Միջազգային սահմանին վրայ, ուր կ'ապրէին թափառաշրջիկ, Մերձեղջ կոչուած աւազակ ցեղեր:

Արփասլան մեծ բանակով մը կու գայ եւ կը պաշարէ աւազակներու այս ամրոց-բերդը, որուն շուրջը բնակուած բաւական մեծ աւան մըն ալ կը գտնուէր:

Վարդան պատմիչը չ'ըսեր թէ ի՛նչ էր անունը Ալամուղ բերդի գլխաւորին, որ ճարտար անձ կ'երեւի եւ կը յաջողի առանց մեծ արիւնահեղութեան՝ իր բերդը եւ բերդին շուրջ խմբուած ժողովուրդը ազատել կոտորածէ: Պատմիչը կ'ըսէ. «Արփասլան գնացեալ ի յԱլամուղ՝ պաշարեաց զբերդն մի ամուր, եւ տէր բերդին արար խնդութիւն մեծ ի տան իւրում, եւ զկնի՝ սուգ մեծ եւ ապա իջեալ առ սուրտանն, որպէս թէ ի Հնազանդութիւն, եւ ի համբուրելն զոտս նորա՝ փողոտեաց զգազանն արթեալ արեամբ անմեղաց, եւ բարձաւ չարն ի միջոյ՝: Այս դէպքը հաւանաբար տեղի ունեցած է 1072ի ժամանակները, Արփասլանի զօրքը տեղւոյն վրայ կը խողխողեն աւազակներու պետը, սակայն իրենք ալ մեծ կորուստի մը առջեւ գտնուելով՝ կը վերցնեն Ալամուղ բերդի պաշարումը եւ կը քաշուին դէպի Պարսկաստան:

1255ին, Հուլաւու խան կը պաշարէ Ալամուղ բերդը. երկար կռիւներ կը մղէ, մինչեւ որ բերդին մէջ սով կ'իյնայ եւ աւազակները կը ստիպուին անձնատուր ըլլալ: Անոնց մեծը, որ Իսաւուր Նուին կը կոչուէր, Հուլաւու խան՝ բերդին դրան առջեւ գլխատել կու տայ եւ փր յաղթական դրօշը կը բարձրացընէ Ալամուղ բերդին վրայ՝:

Հուլաւու խան, վերջնականապէս այս աւազակներու տաղտուկէն ազատելու համար, կը գրէ Կիրակոս, «հրաման ետ քակել զամենայն բերդորայսն ամուր՝ որ կային յԱլամուղն»¹:

1. ՎԱՐԳԱՆ ՊԱՏՄԻՉ, էջ 97, 104:

2. ԱՅԳ, էջ 149:

3. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, էջ 219-220:

ՇԷՆԱԻ ԲԵՐԴ

Շենաւ կամ Շինաւ Հայկական Միջազգային բերդերէն մէկն էր, կը գտնուէր Պառանի հիւսիս-արեւելքը:

Մուսուլի Մամուլուտ ամիրան, 1110ի ժամանակները իր քանակներով կը հասնի մինչեւ Պառան եւ կը սպառնայ Ուռհայի: Լատին իշխանները իսկոյն դաշնակցութիւն մը կը կազմեն եւ կ'որոշեն յարձակիլ Մամուլուտի վրայ, որ արդէն հասեր էր Ուռհայի պարիսպներուն առջեւ: Ճօսիւն եւ Պաղտին, իրենց միացնելով նաեւ Անտիոքի Տանդրէտ կոմսը, Պիրի Ապրղարիպ հայ իշխանը եւ Գեսուէի Գող Վասիլ իշխանը, կը խմբուին Մամուլուտ, անկից Ուռհայի վրայ քալելու համար:

Երբ Մամուլուտ կ'իմանայ թէ քրիստոնեայ իշխանները արդէն Եփրատը անցեր են եւ Ուռհայի կը մօտենան, զանոնք թակարդի մէջ ձգելու համար, իր բանակէն մաս մը պահելով Ուռհայի շրջանին մէջ, ինքը կը քաշուի Պառան: Հայ իշխանները շուտով կը հասկնան Մամուլուտի ծրագիրը եւ փոխանակ Պառանի վրայ արշաւելու, ճամբանին կը փոխեն եւ կ'երթան կը պաշարեն Շենաւ բերդը, որ Մամուլուտի ձեռքն էր. «դարձան բանակեցան ի վերայ ամուր բերդին՝ որ կոչի Շենաւ, ի տաճկաց սահմանին, եւ արարին ի վերայ նորա սաստիկ պատերազմ»¹: Պատմիչը չի շարունակեր խօսիլ Շենաւ բերդին շուրջ մղուած պատերազմի արդիւնքի մասին, սակայն լատին իշխանները կը դրանեն Շենաւը: Տանդրէտ այս պատերազմին մէջ մեծ քաջութիւններ կ'ընէ, Ճօսիւն եւ Պաղտին կոմսերուն նախանձը շարժելով, որոնք Տանդրէտի դէմ դաւադրութիւն մը կը կազմակերպեն՝ զայն հրապարակէն վերցնելու համար: Տանդրէտ երբ կ'իմանայ դաւադրութեան մանրամասնութիւնները, նոյն պիչերը առնելով իր քանակը՝ կը քաշուի դէպի Եփրատ. իրեն կը հետեւին նաեւ Ապրղարիպի եւ Գող Վասիլի զօրքերը:

Երկու մասնիչ քրիստոնեաներ, կ'ըսէ պատմիչը, իրենց հաւատքը ուրանալով, կ'երթան Մամուլուտի բանակը եւ լուր կու տան: Երբ կը լսէ Մամուլուտ այս ամէնը, ժամանակ չի կորսնցնէր, կը հասնի Տանդրէտի ետեւէն, արիւն եւ կրակ սփռելով ճամբու ընթացքին:

Մամուլուտ կը հասնի Եփրատի ափը, ուր հաւաքուած էին անթիւ ժողո-

1. ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 391-393:

վուրդ եւ կը տպասէին իրենց կարգին՝ նաւերով դետը անցնելու համար: Այս անաւոր խուճապի միջոց՝ հաղարաւորներ գետամոյն կ'ըլլան, իսկ մնացածները կը ջարդուին, այնպէս որ պատմիչը կ'ըսէ. «Եփրատն իսկ ի յարիւն զարձաւ, եւ շատ այն էին որ խեղդեցան ի ջուրն, ուր մտանէին լուղորդքն եւ ջանային անցուցանել, եւ ոչ կարէին. եւ առաւել մտանէին ի նաւն, եւ հինգ վեց նաւ ընկղմեցաւ լի մարդով, զի ամենայն ոք ջանայր մտանել»²: Տանգրէտ Եփրատի միւս ափը ապաստանած, պաղ սրտով կը տեսնէ քրիստոնեաներու ջարդուիլը եւ ոչ մէկ շարժում կ'ընէ՝ կոտորածին առջեւը առնելու³:

Մամտուտ յաղթական կը վերադառնայ Շէնաւ քերդը: Այս դէպքերէն վերջ Շէնաւ այլեւս չի յիշուիր մեր պատմութեան մէջ:

2. Աճղ, էջ 392-393:
3. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 133-134:

ՊԶԱԼ ԲԵՐԴ

Հայկական Միջագետքի սահմանային բերդերէն մէկն էր Պզահ քերդը, Հալէպէն մէկ օրուան ճամբով հեռու, անոր հիւսիս արեւելեան կողմը: Չայն կը յիշեն Մ. Ուռհայեցի եւ նաեւ Սմբատ Սպարապետ: Մ. Ուռհայեցի զայն առաջին անգամ կը յիշէ իբրեւ աւան կամ քաղաք. «Սուլիման ամիրան Անտիոքայ գայր ընդդէմ նորա քաղում զօրօք ի տեղին որ կոչի Պզահ»¹: իսկ երկրորդ անգամ՝ իբրեւ բերդ. «եկն ի բերդն Պզահ եւ էառ բռնութեամբ»²: Սմբատ զայն կը յիշէ՝ առանց որոշելու անոր ինչ ըլլալը, քաղաք կամ բերդ, «եւ անտի եկեալ ի Պզահն»³:

1085ին, Արարներու Շէրէփն-աօլ ամիրան մեծ բանակով մը Միջագետքէն գալով, նախ կը գրաւէ Հալէպ, եւ ապա կ'երթայ Անտիոքի վրայ: Անտիոքի Սուլիման ամիրան «գայր ընդդէմ նորա քաղում զօրօք ի տեղին որ կոչի Պզահ, եւ յայնմ տեղուջ արարին սաստիկ պատերազմ յերկոցունց կողմանց»⁴: Այս պատերազմին մէջ կը մեռնի Շէրէփն-աօլ ամիրան, եւ Սուլիման յաղթական Անտիոք կը վերադառնայ:

Ասկից շուրջ 35 տարիներ յետոյ, Պզահ քերդը անցած է Պաշակիւրներու ձեռքը եւ Ռօճէր էր անոր իշխանը: 1119ին Արարներու Պազի ամիրան մեծ բանակով Ռօճէրի վրայ կու գայ. Ուռհան գրաւելէ յետոյ՝ «եկեալ ի Պզահն, եւ անդ քանակ հարկանէր»:

Ռօճէր իր ուժերուն վրայ վստահացած, անհոգ կը կենայ եւ պատրաստութիւններ չի տեսներ. իր հետ առնելով 1000 Փրանկ ձիաւորներ եւ 500 ալ հայ ձիաւորներ՝ Պազի ամիրային դէմ կ'ելլէ: Ռօճէր կը յաղթուի եւ կը մեռնի դաշտին վրայ: Պազի կը գրաւէ Պզահ քերդը եւ անոր զաւառը ամբողջութեամբ:

Այս դէպքերէն 18 տարի յետոյ, 1138ին, Պեոպեոսօփէն կայսրը մեծ բանակով Կիլիկիա կու գայ եւ կը պաշարէ Անարզաքան: Լեւոն Ա. իշխան՝ չկարենալով դիմադրել՝ անձնատուր կ'ըլլայ եւ գերի կը տարուի իր որդիներուն

1. Մ. ՌԻՌՀԱՅԵՑԻ, էջ 274:
2. Աճղ, էջ 465-466:
3. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, էջ 148:
4. Մ. ՌԻՌՀԱՅԵՑԻ, էջ 274, 430-432:

հետ Պօլիս: Իսկ կայսրը շարունակելով իր յաղթական ընթացքը՝ «եկն ի բերդն Պզահն, եւ հառ քունութեամբ»⁵:

Այնուհետեւ Պզահ բերդը չի յիշուիր մեր պատմութեան մէջ:

5. ԱՅԳ, էջ 465-466:

ԹԼԹՈՎՐԱԼ ԲԵՐԴ

Հայկական Միջագետքի բերդերէն մէկն էր Թլթովրաւ բերդը, որ կը գտնուէր Եփրատի եզերքը, Սեւերէկի մօտ: Մ. Ուռհայեցի «անուանի բերդ» կոչած է, հաւանաբար իր կարեւորութեան համար¹:

Թլթովրաւ բերդը իր շուրջը ունէր նաեւ համանուն քաղաք մը, ամուր պարիսպներով, եւ յատին իշխաններու կարեւոր մէկ կեդրոններէն էր:

1070ին Ալիասրան, եղբայր Տուղրիլի, «քանակ հարկանէր ի վերայ անուանի բերդին» որ կոչի Թլթովրաւ, մերձ ի Սեւաւերակքն»: Ալիասրան սաստիկ դիմադրութեան մը կը հանդիպի բերդին առջեւ, եւ երկու կողմերէն ալ բազմաթիւ զոհեր կ'իյնան անոր պարիսպներուն տակ. բայց վերջապէս Ալիասրան կը շահի յաղթանակը ու կը գրաւէ բերդը, եւ ներս մտնելով՝ աւարի կու տայ քաղաքը:

Թլթովրաւ բերդն ալ իր շուրջի բերդերուն նման ինկած է Թուրքերու ձեռքը եւ քանդուած ժամանակի ընթացքին: Այսօր անոր տեղն անգամ անյայտ կը մնայ:

1. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 234:

ԹՂԵԹՈՒՆ ԲԵՐԴ

Թլթովրաւ Հայկական Միջագետքի բերդերէն մէկն էր, յիշուած՝ Մ. Ուռհայեցիէ: Կը գտնուէր Թլիսումի գաւառին մէջ: Այս բերդին մասին ունինք միայն Մ. Ուռհայեցիի վկայութիւնը՝ որ կ'ըսէ. «(1067ին) Գոմէշ Տիկիին յարուցեալ զայր մեծաւ ահարկութեամբ... ի վերայ գաւառին Թլիսոյ որպէս գաղան, եւ արար սաստիկ կոտորածս... եւ մեծաւ պատերազմաւ հառ գրեզն որ կոչի Թլթովրաւ, եւ անողորմ զամենեսեան սրով կոտորեցին»:

1. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 224:

ԹՈՌԻՃ ԲԵՐԴ

Թոռիճ Հայկական Միջագետքի բերդերէն մէկն էր եւ կը գտնուէր Եդեսիոյ գաւառին մէջ: Մ. Ուռհայեցի կը յիշէ զայն եւ կը կոչէ՝ «հռչակաւոր բերդ»¹: Մէկ անգամ կը յիշուի այս բերդը. հաւանաբար նախապէս հայ իշխաններու կը պատկանէր ու յետոյ յափշտակուած վ լատին իշխաններէն:

1065ին Թոռիճ բերդին վրայ կու գայ Պարսիկ Սլար-Պորասան ամիրան. «եւ յետ սակաւ աւուրց հասանէր ի գաւառն Ուռհայոյ եւ քանակ հարկանէր ի վերայ հռչակաւոր բերդին Թոռիճայ»²: Սակայն Թոռիճ շաւ պաշտպանուած ըլլալով՝ Սլար-Պորասան չի կրնար շուտով գրաւել. իր բանակէն մաս մը հոն թողլով՝ կ'երթայ եւ կը պաշարէ Նշենիկ բերդը:

Մ. Ուռհայեցիի Պատմութենէն կ'երեւի որ Սլար-Պորասան չկարենալով գրաւել Թոռիճը, կողոպուտի կը մատնէ անոր շրջակայ գաւառը եւ ապա կը հեռանայ:

1. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 188:

2. ԱՅԳ:

ԼՏԱՐ ԲԵՐԴ

Լտար բերդը, Մ. Ուռհայեցի կը յիշէ իր Պատմութեան մէջ, երբ կը խօսի Պարսիկներու արշաւանքին մասին, այդ խօսքերէն կը հասկցուի որ բերդը կը գտնուէր Եփրատ գետի վրայ եւ կամ մօտերը. «եղեւ պատերազմ ի վերայ Եփրատ գետոյ, ի տեղին որ ասի Մկնիկ՝ մերձ ի բերդն որ կոչի Լտար»¹:

Լտար Եդեսիոյ գաւառին մէջ կը գտնուէր եւ մաս կը կազմէր Եդեսիոյ կոմսութեան:

1082ին Պարսիկներու Պոսրով ամիրան մեծ բանակով մը «հասանէր ի գաւառն Ուռհայոյ, եւ արարեալ աւերս ի տեղիս տեղիս»²: Երբ Լտար բերդին եւ գաւառին բնակիչները կը լսեն պարսիկ ամիրային գալուստը, «ժողովեցան բերդացիք գաւառին ընդ առաջ նորա ի պատերազմ, եւ յայնմ աւուր յաղթեաց Թուրքն եւ արար բազում կոտորածս քրիստոնէից»³:

Պարսիկները երկար չեն կրնար իրենց ձեռքը պահել Լտարը եւ անոր շրջակայքը. անոնց դէմ կ'ելլեն Թուրք սաստակներ, կը յաղթեն Պարսիկներուն, գերի եւ աւար առնելով, կը քշեն զանոնք իրենց երկիրը:

Ասկէ վերջ չի յիշուիր Լտար բերդը մեր պատմիչներէն:

1. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 287:

2. ԱՅԳ:

3. ԱՅԳ:

ՋՈՒՄԱՆ ԲԵՐԴ

Եղեսիոյ նահանգին բերդերէն մէկն էր Ջոլման բերդը. անոր որոշ տեղը չենք գիտեր, հաւանաբար կը գտնուէր Եղեսիոյ արեւմուտքը, Եփրատ գետի մօտերը:

Ջայն կը յիշէ Մ. Ուռհայեցի: 1112ին Մամտուտ ամիրան Քլկուրան բերդը գրաւելէ յետոյ՝ «յարուցեալ իջանէր ի պաւսոն Ուռհայոյ, ի բերդն որ կոչի Ջոլման»:

Ասկէ վերջ Ջոլման բերդը չի յիշուիր մեր պատմութեան մէջ:

1. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, էջ 395:

RÉSUMÉ
DES PRINCIPAUX CHÂTEAUX
ET PLACES-FORTES
DE LA CILICIE ARMÉNIENNE

AVANT-PROPOS

Dans notre ouvrage sur «Les Châteaux d'Arménie», nous avons promis de présenter aussi une topographie historique des châteaux et des places-fortes de la Cilicie arménienne, d'après les données de notre histoire, ainsi que des géographes modernes. Nos chroniqueurs ont très peu écrit et parlé au sujet des châteaux de la Cilicie, ceux-ci sont aujourd'hui en ruines ou à moitié détruits, néanmoins ils ont eu une grande importance pour la Cilicie, d'un point de vue stratégique ou défensif.

Depuis les années 1800, on a écrit sur la Cilicie et Alishan a réalisé une grande œuvre avec son «Sissouan», mais depuis ce temps-là, bien des années ont passé, beaucoup de nouveaux colophons, de nouvelles topographies, et de nouvelles chroniques mineures ont vu le jour, qui répandent une lumière nouvelle sur la topographie historique de la Cilicie, et dont Alishan n'a pu prendre connaissance à son époque. Le «Sissouan» d'Alishan est écrit en arménien classique et reste inaccessible au public; de plus, il est épuisé et introuvable. Enfin, les sources n'y sont pas indiquées, comme l'exige la science moderne.

Nous nous sommes efforcés, pour notre part, de combler cette lacune, en indiquant les sources et en suivant les suggestions des chroniqueurs nationaux ou étrangers. Nous avons eu sous les yeux les dernières topographies et études des archéologues et des voyageurs récents. Nous avons adjoint à la topographie de la Cilicie deux cartes topographiques sur lesquelles nous avons soigneusement indiqué, en étudiant les dernières cartes turques, le site des châteaux et des places-fortes. En visitant nous-même la plus grande partie de la Cilicie, nous avons pu disposer de nombreuses photographies en couleur et en noir et blanc, pour lesquels nous donnons à chaque page les explications adéquates.

Enfin, nous avons adjoint à notre topographie historique de la Cilicie la topographie historique des châteaux et des places-fortes de la région euphratéenne et de la Mésopotamie arménienne, dont les villes, depuis longtemps, ont été construites et habitées par des arméniens et ont joué un grand rôle dans l'ascension de la principauté arménienne de Cilicie et dans sa transformation en royaume.

En prenant tout cela en considération, nous espérons que notre travail sur les châteaux et les places-fortes de la Cilicie arménienne, édité conformément aux exigences modernes, sera utile à nos compatriotes et trouvera la place qu'il mérite dans les études historiques arméniennes.

LA CILICIE ARMÉNIENNE

INTRODUCTION

1 – Situation et limites géographiques

La portion de territoire située sur les bords de la Méditerranée et s'étendant depuis la baie d'Alexandrette jusqu'au golfe de Pamphylie, était appelée depuis longtemps la Cilicie par les géographes grecs et latins.

La Cilicie est un pays d'une grande beauté naturelle, avec les monts de Taurus couverts de neige et ses plaines fertiles, bordant la Méditerranée.

Depuis longtemps et plus particulièrement au XI^e siècle, les Arméniens étaient venus s'y installer. Leur puissance s'accroissant petit à petit, ils devinrent les maîtres du pays. C'est sous Léon I^{er} le grand que la Cilicie arménienne atteint sa plus grande étendue, au dire de nos chroniqueurs. Néanmoins, les successeurs de ce monarque ne purent toujours conserver ces limites à la Cilicie.

2 – Les anciens habitants de la Cilicie

La Cilicie était connue des anciens géographes. Les Ecritures la mentionnent, de même que les traditions légendaires grecques. Ce furent d'abord les Hittites qui régnèrent sur la Cilicie, ensuite les Assyriens et les Egyptiens, mille ans avant le Christ. En 103 avant J. C., les Romains s'emparèrent du pays qui leur fut, pour quelque temps, enlevé, en 69 avant J. C., par Tigrane le grand. Des Romains, la Cilicie passa aux Byzantins, aux Perses et enfin, aux Arabes, au IX^e siècle. Ce n'est qu'au prix d'une longue lutte que les Byzantins purent expulser les Arabes.

En 1097, les Croisés pénètrent en Cilicie et s'emparent de nombreuses villes; c'est à cette époque que se manifeste dans ce pays un nouveau peuple: les Arméniens.

Ceux-ci y étaient établis depuis longtemps et avaient fondé, dans la région euphratésienne des principautés à moitié indépendantes. En 1080, grâce à un prince d'ascendance royale, Roupén, est fondée la dynastie arménienne des Roupéniens, qui accède à la royauté cent ans après par l'entremise du vaillant Léon le grand.

3 – *Les Arméniens en Cilicie avant les Roupéniens*

Au X^e siècle, la Cilicie n'avait pas encore de maître défini, les Byzantins et les Arabes se la disputant entre eux. Au XI^e siècle, les Arméniens viennent s'y installer et se rendent maîtres de plusieurs régions. Il y avait déjà des Arméniens en Cilicie à l'époque de Julien l'Apostat; on trouvait également des princes qui y étaient vassaux des empereurs; de la sorte il y avait déjà beaucoup d'arméniens, vivant dans les différentes villes de la Cilicie, avant la venue des Roupéniens.

Le nombre des arméniens de Cilicie s'accrut lorsque les Turcs Seldjocides pénétrèrent en Cilicie, particulièrement lorsqu'ils conquièrent Ani. Les Arméniens se réfugièrent alors en territoire impérial; il y avait parmi les immigrants des seigneurs d'ascendance royale ou princière, avec leurs troupes particulières et leurs familles. Les plus anciens de ces princes arméniens de Cilicie sont Mleh et Philarète, Cogh Vasil, le maître de Kessoun, qui régnait sur la rive occidentale de l'Euphrate, le prince Abelgharib, et d'autres, comme Oshine, seigneur de Lampron, et Apirat, seigneur de Dzovk.

Philarète, après la bataille de Manazkert, en 1071, organisa la résistance contre les Turcs et fonda une principauté à moitié indépendante s'étendant de Kharpert à Antioche. Mais les circonstances ne permirent pas aux uns, et aux autres de régner longtemps, les comtes latins d'Edesse supprimant l'un après l'autre les princes arméniens de la région d'Edesse. A l'autre extrémité, les Arméniens réfugiés dans les montagnes du Taurus, se regroupant autour du prince Roupen, posèrent les fondements d'une principauté arménienne indépendante dans les années 1080. Les princes arméniens, unis à leur peuple, mirent la main à cette tâche si dure, si dangereuse et si incertaine, sachant parfaitement qu'ils avaient devant eux les armées impériales et les Turcs Seldjocides.

Les raisons de cette tâche périlleuse étaient politiques et religieuses: les Grecs détestaient les Arméniens et s'efforçaient de les soumettre politiquement et religieusement. Il y eut des princes arméniens, comme les Abelgharibiens, les Lamproniens, qui restèrent fidèles à l'empereur; néanmoins Roupen, de la famille royale d'Ani, leva l'étendard de la révolte contre les Byzantins, et conquit la forteresse de Vahka, dont il fit sa résidence; puis ses successeurs vinrent à Bartzrberd et peu à peu soumièrent tout le territoire, en établissant leur domination sur la Cilicie montagneuse et la Cilicie des plaines.

A Roupen succéda Constantin I^{er}, à l'époque duquel les croisés arrivèrent en Cilicie. Puis vinrent Thoros I^{er}, le prince Léon, Thoros II, Mleh et Roupen II. Léon, fils de Stépané éleva la principauté au rang de royaume et étendit ses frontières, entrant même triomphalement à Antioche.

A Roupen succéda Constantin I^{er}, à l'époque duquel les croisés arrivèrent en Cilicie. Puis vinrent Thoros I^{er}, le prince Léon, Thoros II, Mleh et Roupen II. Léon, fils de Stépané éleva la principauté au rang de royaume et étendit ses frontières, entrant même triomphalement à Antioche.

Ce grand roi, qui fut aussi un constructeur, mourut en 1219.

Léon I^{er} n'ayant pas d'enfant mâle, c'est sa fille Isabelle qui fut élevée au trône. Elle fut à l'origine d'une suite glorieuse de rois: Léon II, Héthoum I^{er}, Héthoum II, Ochine. En dernier lieu, ce furent les Lusignan de Chypre qui montèrent sur le trône de Cilicie; Léon V, le dernier roi, cédant Sis aux Egyptiens en 1375, fut emmené en captivité au Caire, et c'est ainsi que prit fin le glorieux royaume de Cilicie, trois fois centenaire.

SIS

Sis fut la capitale prestigieuse du royaume arménien de Cilicie. La ville se trouvait au pied des monts Taurus, sur un affluent du Djihoun, dans une position élevée. Les princes et les rois arméniens l'embellirent par de nombreuses constructions et y construisirent des églises et des palais de toute beauté. Sis est mentionnée pour la première fois au V^e siècle, sous le nom de Sisan. Les Arabes la conquièrent au VII^e siècle et en chassent les habitants arméniens. Thoros I^{er} fut le premier maître de Sis, Thoros II lui succéda. Néanmoins le vrai constructeur en fut le roi Léon I^{er} qui l'entoura de puissantes murailles. En 1114, un violent tremblement de terre fait de Sis, en même temps que beaucoup de villes de Cilicie, un morceau de pierres, mais les Arméniens la reconstruisent rapidement. En 1187 le Turc Rostom vient l'assiéger; mais Léon I^{er}, avec une troupe de braves, les contraint à battre en retraite et les talonne, en les taillant en pièces, jusqu'aux abords de Marache. Vingt ans après ces événements l'Allemand Willebrand d'Oldembourg visite Sis et parle avec admiration de son château.

Sis, au cours de son histoire trois fois centenaire, fut bien souvent assiégée et fut le théâtre de bien de combats. En 1193, Léon y empoisonna le prince d'Antioche. Sis joua le rôle de centre politique de la Cilicie et vit se dérouler les plus splendides fêtes. C'est là qu'au XII^e siècle fut scellé un pacte d'union et d'amitié avec l'église romaine.

Après Léon I^{er}, Héthoum I^{er} embellit aussi Sis de beaux bâtiments et de puissantes tours.

Pourtant, les sultans d'Egypte ne laissèrent pas la ville tranquille. En 1266, ils vinrent assiéger la citadelle de Sis, sans pouvoir s'en emparer.

Pour souligner le caractère imprenable de la citadelle, le roi Constantin II fit frapper une monnaie avec la légende: «La citadelle de Sis est le roi»¹.

Aux derniers jours de la royauté cilicienne, sous Léon V, Sis offrit une résistance héroïque; cela n'empêcha pas que les Egyptiens purent s'en emparer en 1375, à la faveur des dissensions de ses occupants, mettant ainsi fin à la monarchie arménienne. Des Egyptiens, Sis passa à l'empire ottoman.

Encore aujourd'hui, Sis est une assez grande ville que les Turcs appellent Kozan.

1. C. à. d.: «celui qui tient la citadelle est le roi».

LE CHÂTEAU DE HAROUN

Situé sur la rive occidentale du Djihoun, il voyait s'étendre à ses pieds le bourg de Haroun. Notre histoire ne mentionne le château de Haroun qu'au XII^e siècle: son seigneur le prince Léon, est cité lors de la cérémonie du couronnement de Léon le Grand, en 1198. Après, c'est un certain Gofred (Godefroy) qui en est le maître.

Puis la forteresse, rattachée au domaine royal, fut offerte en 1236 par Hethoum I^{er} et Zabel, son épouse, aux Chevaliers Teutoniques, avec les villages y attachés, en signe de gratitude pour les services rendus; en retour, les Chevaliers Teutoniques s'engageaient à défendre la Cilicie. Ils gardèrent la place vraisemblablement pendant un siècle, puisque c'est seulement en 1337 que les Egyptiens s'en emparèrent.

LE CHÂTEAU DE MOLÉVON

Le château de Molévon se trouvait dans la Cilicie montagneuse, dans le district du même nom (appelé «district du château de Molévon»), au nord de Lampron et de Babéron.

La position en est précisée par une liste ecclésiastique où Jean, le frère du roi est appelé évêque d'«un district de la forteresse de Molévon, gardée par Dieu, et d'une partie de Bartzert».

Parmi les princes présents au couronnement de Léon le Grand, on mentionne le seigneur de Molévon, Ajaros, sans doute un Grec. Parmi ses successeurs, on connaît Sire Léon qui, au début du règne de Léon II fomenta une révolte contre son souverain, de concert avec le prince Abelgharib; l'un et l'autre furent jetés en prison. Il est probable qu'après ces événements Molévon fut rattaché au domaine royal. De fait, au début du XIV^e siècle, le frère du roi Oshin, Alinakh est appelé «seigneur de Molévon, de Lambron et de Gouglag».

Sous Léon IV, un scribe, reclus dans la forteresse, recopia de nombreux manuscrits.

LE CHÂTEAU DE NEGHIR

Le château de Neghir n'est pas identifié. Selon Alishan, il se serait trouvé dans la province de Djeguer, où l'on connaît actuellement deux forteresses, Tchardak Kalé et Frenk Kalé, dont l'une des deux pourrait être Neghir. Neghir se serait donc trouvé près de l'actuel bourg d'Osmaniyé. Le château est mentionné dans un privilège de Léon I^{er}; on l'appelait «castrum regis nigrum» («le château royal noir»). Ni la forteresse, ni son seigneur ne sont cités dans la liste du sacre de Léon I^{er}, sans doute à cause de son caractère de propriété royale.

Le premier seigneur de la place à être mentionné est Constantin (vraisemblablement le fils du «père du roi Constantin), en 1308, sous le règne de Léon III. De ses trois fils, l'un, Baudoin, est appelé «le maréchal des Arméniens», l'autre, Vasak, mourut en 1328, tandis que l'aîné, Héthoum fut régent pendant la minorité de Léon IV.

En 1335, le sultan d'Alep, Altoun Bougha, ayant brusquement attaqué la Cilicie, Léon IV envoya des ambassadeurs au sultan d'Egypte pour dénoncer cette violation du traité; mais ceux-ci, durant leur traversée d'Alep, furent capturés par Altoun Bougha et jetés en prison, tandis que l'armée alépine allait assiéger la forteresse de Neghir; celle-ci tomba aux mains des Musulmans et son seigneur, Baudoin, fut incarcéré en la citadelle d'Alep, où il mourut au bout de sept mois. Une coalition de princes arméniens permit ensuite la reprise de Neghir.

En 1358, les Egyptiens se lancent à l'assaut de la Cilicie, alors dans une situation désespérée. Constantin II, de la maison de Neghir, tente de résister, mais il est assassiné au cours d'une révolte, ce qui permet aux Egyptiens de mettre sous leur coupe, outre Neghir, une grande partie de la Cilicie.

LE CHÂTEAU DE HARTHAN

Harthan, l'un des châteaux de la région euphratéenne, se trouvait dans la vallée supérieure du Djihoun, non loin de Hassan Mansour, et appartient à Kogh Vasil qui siègeait à Kessoun. En 1107, les Musulmans, au cours d'une incursion dans le territoire de Kogh Vasil, vinrent assiéger Harthan, qui fut dégagé par ce dernier, secondé par d'autres princes arméniens.

Kogh Vasil était en butte également, en raison de ses succès militaires, à la jalousie et aux attaques des princes latins. C'est ainsi que le comte d'Edesse Baudoin et Josselin de Courtenay, alliés à Tancrede, prince d'Antioche, lancèrent sur son territoire des expéditions sans lendemain.

Mais après sa mort, Baudoin et Josselin contraignirent par la force son successeur Vasil Dgha à leur céder de nombreuses forteresses, parmi lesquelles Harthan.

GORIS OU GOURIS

Gouris, bourg fortifié de la région euphratéenne, fut conquis par les Arabes au X^e siècle.

En 1030, l'empereur Romain Argyre, ne pouvant conquérir Azaz, se dirigea vers Gouris, où, près de succomber à ses blessures, il fut sauvé par les habitants du lieu.

En 1102, Alexis Comnène confie la place à des princes arméniens émigrés d'Ani. Baudoin, comte d'Edesse, compléta la conquête de Ravandan par celle de

Gouris dont le prince, Pakrad, était d'origine arménienne. Gouris, par sa situation dans une région montagneuse, joua un rôle militaire important et fut âprement défendu par les Latins.

Tombée aux mains des Musulmans, la place fut confiée par Noureddin à son allié, le Rupénien Mleh qui causa les plus grands maux, à la population arménienne de l'endroit. Après cela, nos historiens cessent de mentionner Gouris.

LARANDA

Laranda était la ville la plus importante (appelée également Karaman) de la province de Lycaonie. Elle se trouvait dans la vallée de Calycadnus, à l'est du fleuve.

Les Roupéniens conquièrent un temps ces confins de la Cilicie: Léon le Grand confia la ville aux chevaliers de l'Hôpital. Selon nos historiens, Léon, enleva Héraclée et Laranda au sultan Kaykaouz, qui ne songea qu'à se venger: c'est ainsi que lorsque Léon fut vieux et malade, Kaykaouz marcha sur Laranda et Léon, en dépit de sa santé, se mit en campagne avec ses deux généraux Constantin et Adam; les Arméniens furent vaincus et les généraux emmenés en captivité. Pour prix de leur liberté, Léon fut forcé de livrer de nombreuses places au sultan, entre autres Laranda, et se retira en deçà du fleuve d'Isaurie. Laranda possédait une citadelle intérieure, protégée par de puissantes murailles; la ville ayant elle-même une enceinte, était ainsi imprenable.

LE CHÂTEAU DE KYZISTRA

Kyzistra, considéré comme une des forteresses de la Cilicie montagneuse, appartenait en fait à la Cappadoce. Selon Matthieu d'Edesse elle se trouvait dans la plaine d'Ardjias, selon Sempad, dans le district de Kamirk, rattaché à la Cappadoce. Kyzistra, autrement appelée Guentrogavi, était à l'origine un château grec. Ce furent des Grecs, les frères Mandalian, maîtres de la place, qui tuèrent Gagik II, roi d'Ani. On sait comment Thoros II, après avoir échappé à sa captivité à Constantinople, vint dans ces parages, réussit à s'emparer des frères Mandalian et prit le château de Kyzistra. Il en transféra les trésors de Gagik au château de Vahka, ce qui montre la proximité des deux places.

LE CHÂTEAU D'ANAMUR OU D'ANÉMUR

Anamur (Anémourion pour les Grecs) est l'une des places célèbres de la Cilicie maritime, située sur le cap du même nom, à l'extrémité d'une presqu'île; elle était entourée d'une vaste et impressionnante enceinte, défendue par de

nombreuses tours carrées. La plupart des fortifications sont encore debout, mais à l'intérieur de l'enceinte, tout est détruit.

La place était entourée de profonds fossés, remplis d'eau en temps de guerre, ce qui en interdisait l'accès, si ce n'est par un pont-levis.

L'enceinte renfermait une citadelle, dotée d'énormes tours et d'une forte muraille que les turcs appellent Memouriek Kalesi. La construction de cette immense place-forte est attribuée par les uns aux Grecs, par les autres aux Croisés (pour un guide de voyages français, elle serait d'origine arménienne). Léon le Grand en était déjà le maître avant son couronnement, et parmi ceux qui assistaient à son couronnement, le Sparabed Sempad en mentionne le seigneur, Halgam.

A cette place, qui resta aux mains de Léon durant tout son règne, venaient aborder les navires marchands européens.

Les Arméniens se virent enlever Anamur vers 1230 par le sultan Alaeddin, jusqu'en 1284 (selon un colophon, «sous Léon III, les Arméniens reprirent Anamur aux Turcs»).

Sous Léon IV, les Arméniens perdirent toutes les forteresses du littoral, y compris Anamur, de manière définitive.

ADANA

Depuis les temps les plus reculés, Adana était un centre commercial réputé de la Cilicie des plaines, situé sur les deux rives du Sihoun à 28 km de Msis et à 38 km de Tarse. La ville, productrice de coton, était habitée en grande partie par des Arméniens s'adonnant au commerce.

Il y avait anciennement une enceinte, ainsi qu'une petite citadelle au sommet d'une colline. Le nom de cette très ancienne ville vient du mot «adan» qui signifie «saule», arbre qui croît abondamment sur les rives du Sihoun. Un demi-siècle avant le Christ, Adana est mentionnée à l'occasion de la guerre opposant les Romains à Mithridate. Pompée, ayant conquis la ville, la repeupla avec d'anciens pirates qui s'adonnèrent à l'agriculture. Au VI^e siècle après J. C., l'empereur Justinien y installa de nouveaux habitants et construisit sur le fleuve un pont de pierre porté par de nombreuses arches. Adana devient vite une pomme de discorde entre les Byzantins et les Arabes. Haroun al-Rachid la conquiert et en rebâtit les remparts (elle avait alors huit portes).

A l'arrivée des Croisés, en 1097, Adana tombe, pour quelque temps, aux mains de princes latins qui accroissent sa capacité défensive en dotant ses remparts de nombreuses tours. Auparavant, le maître d'Adana était un certain prince Oshine, vraisemblablement le même qu'Oshine de Lampron.

Tancrede lui enlève Adana qu'il conserve jusqu'à sa mort. Ses successeurs étant plus faibles, le prince Léon vient leur enlever Adana avec ses troupes, mais il est, par la suite, emmené en captivité à Constantinople; son fils Thoros II,

s'étant échappé de la capitale byzantine, s'en empare à nouveau. A l'époque de Léon le Grand, Adana, perdant sa primauté, devient une ville de second ordre. Les Egyptiens livrent aux Arméniens d'interminables combats aux portes de la ville dont ils finissent par se rendre maîtres; l'arrivée des Mongols lui permet d'échapper à la destruction.

C'est à Adana que fut conclu, en 1310, en présence du légat pontifical, un traité entre Henri, roi de Chypre et son frère Amaury, en présence du roi d'Arménie, Oshine, beau-frère du second.

Sous le règne de Léon IV, Adana connaît une période assez florissante, mais qui se clôt malheureusement par une nouvelle occupation de la ville par les Egyptiens en 1322, comme écrit le continuateur de Samuel d'Ani.

Trois ans après la disparition du royaume arménien de Cilicie, les tribus de Ramazan Oghlou s'emparent de toute la Cilicie, y compris Adana. En 1469, c'est Chahsouar qui conquiert Adana, laquelle passa ensuite aux mains des Egyptiens.

Ceux-ci, entrés en conflit avec les Ottomans, sont vaincus et concluent un traité cédant la Cilicie à ces derniers. En 1909, les Turcs massacrèrent à Adana 30.000 Arméniens innocents.

LE CHÂTEAU DE HAMDOUN OU DE TIL HAMDOUN

Le château de Hamdoun est également un des châteaux les plus importants de la Cilicie champêtre, située, selon Alishan, vers l'est, à la frontière du territoire syrien, sur les rives d'un des affluents du Djihoun, à l'est d'Anazarba. Il se signale par d'épaisses murailles et de hautes tours. Notre histoire mentionne que c'est Thoros II qui, en 1151, conquiert pour la première fois Hamdoun, où il enferme Thomas, le commandant de la place. Le duc Androvic, à la tête d'une forte armée, tente en vain de le délivrer. Manuel Comnène excita alors contre les Arméniens le sultan d'Iconium, Kilidj Arslan, dont les efforts furent également inutiles.

En 1155, s'étant allié au sultan d'Iconium, Maksoud, Manuel vint mettre le siège devant le château de Hamdoun, mais accablées par la violence des vents et des pluies, les troupes durent battre en retraite, laissant Thoros II contrôler en toute tranquillité Hamdoun, pendant une trentaine d'années.

Sous Léon I^{er} le Grand, Til Hamdoun appartenait au prince latin Robert; c'est peut-être le fils de ce dernier, Josselin qui fut envoyé par Léon, en 1218, au roi André de Hongrie, afin de négocier le mariage du fils de ce dernier avec Zabel, l'héritière de Léon, projet qui, d'ailleurs, n'aboutit pas.

En 1265, le roi Héthoum fêta l'Épiphanie à Til Hamdoun, et c'est de là qu'il partit pour rejoindre les Tartares.

Les Egyptiens s'emparèrent de Hamdoun. Après la bataille de Homs, les Arméniens s'en rendirent de nouveau maîtres, avec l'aide des Tartares. Mais lorsque ces derniers quittèrent la Cilicie, les Egyptiens reprirent la place.

Léon IV conclut un traité de quinze ans avec les Egyptiens, puis un second (1337); il est probable qu'en cette occasion les Egyptiens réclamèrent Til Hamdoun et que les Arméniens, contraints de se retirer à l'ouest du Djihoun et d'évacuer Ayas, abandonnèrent aussi Til Hamdoun aux Musulmans.

Jusqu'au XVII^e siècle, Til Hamdoun resta habité; il y avait au pied du château un village du même nom entouré de murailles et de beaux jardins.

EDESSE OU OURFA

Edesse ou Ourfa est l'une des villes les plus anciennes et les plus célèbres de la Mésopotamie arménienne. Les archéologues l'identifient à Ur, l'ancienne ville des Chaldéens. On y a trouvé de nombreuses statuettes et inscriptions.

